ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1990-1991

Ամարաս

9(47.925)
Ս-25
հշ

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1990-1991

6256

ՀՀ Գ.Ա. Ազգային գրքի պալատի
ինագրքի գրադարանի
Աղյուսակ Ա. Սարգսյան
11.02.2021թ.

ԱՆՏԱՐԵՍ
ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ս 259

ASHOT SARGSYAN

RESTORATION OF ARMENIA'S INDEPENDENCE

1990-1991

Erevan 2020

Մեկենաս՝ «Ապավեն» ՍՊԸ հիմնադիրներ
Արսեն Ղազարյան, Գագիկ Աղաջանյան

Խմբագիր՝ Արման Մուսինյան
Սրբագրիչ խմբագիր՝ Սեդա Մեսրոպյան

Սարգսյան Ա.
Ս 259 Հայաստանի անկախության վերականգնումը 1990–1991/ Աշոտ Սարգսյան:– Եր., Անտարես., 2020. 576 էջ:

Գիրքը շարունակությունն է, 2-րդ հատորը՝ «Ղարաբաղյան շարժման պայքարություն 1988-1989» վերնագրով 2018թ. հրատարակված աշխատության: Այն ամփոփում է Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման պատմության՝ կոմունիստական դարաշրջանի ավարտի եւ Հայաստանի անկախ պետականության հիմնարկեքի փուլերը: Հայաստանը շարունակում է իր առաջատար դերակատարությունը միջազգային նշանակություն ունեցող ժողովրդավարական գործընթացներում, որպես անկախ պետություն մուտք է գործում միջազգային հանրության ընտանիք ամենաբարձր վարկանիշով՝ ներսում ունենալով ամենածանր խնդիրներ եւ մարտահրավերներ:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ) 0

ISBN 978-9939-76-572-3

© Սարգսյան Ա., 2020

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի անհնազանդության համարձակ գործողությունը ոգեշնչեց նաեւ Կենտրոնական Եւրոպայի գերեվարված ազգերին՝ հարատացնելով «Սոլիդարնոստի» փորձառությունը եւ ի վերջո հանգեցնելով 1989թ. նրանց խաղաղ հեղափոխությունների ռակետարի բարձրակետին
(**Ստանիսլավ Շուշկեվիչ** Բելառուսի ԳԽ նախագահ,
Ֆիլիպ Դիմիտրով Բուլղարիայի վարչապետ):

Այդ հանրաքվեն կարծես քաղաքական արվեստի փոքրիկ գլուխգործոց լինի. այն առաջինն է, որ անցկացվելու է խորհրդային սահմանադրության պահանջներին համաձայն... Հետեւաբար, օրենքների դիկտատի մեջ հմտացած Կրեմլի ստրատեգների համար շատ ավելի դժվար է այն հաշվի չառնել
(«The New York Times», 15.04.1991):

Սույն աշխատությունը շարունակությունն է **«Ղարաբաղյան շարժման պատմություն. 1988-1989»** ուսումնասիրության[1]: Վերջինիս ընդարձակ «Առաջաբանը», որպես ընթերցման համար անհրաժեշտ նախապատրաստություն, ամբողջությամբ վերաբերում է նաեւ այս հատորին: Ուստիեւ՝ այստեղ միայն կարճառոտ նշելով կարեւորը, ի հավելումն դրա, կներկայացնենք ներածական բնույթի մի քանի այլ անհրաժեշտ արձանագրումներ եւ դիտարկումներ:

Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման քառամյա (1988-1991թթ.) շրջանի իրադարձությունները, ըստ իրենց քաղաքական բովանդակության եւ բնութագրի, բաժանվում են հինգ փուլի: **Առաջին երեք փուլերը** (1988-1989թթ.) ներկայացված են մեր վերոհիշյալ աշխատության **Առաջին, Երկրորդ եւ Երրորդ** բաժիններում: 1990-1991թթ. իրադարձությունները, որոնք ներկայացված են սույն աշխատության **Առաջին եւ Երկրորդ** բաժիններում, կազմում են, համապատասխա-

---

[1] *Տե՛ս Սարգսյան Ա., Ղարաբաղյան շարժման պատմություն, 1988-1989, Երեւան, Անտարես, 2018:*

նաբար, Շարժման **չորրորդ եւ հինգերորդ փուլերը**, ինչպես եւ կոչվում են այդ բաժիններն ամփոփող գլուխներում:

Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժմամբ սկսվող Հայաստանի նորագույն պատմությունը **քաղաքական արժեհամակարգի եւ քաղաքական բովանդակության առումով նախորդ 70-ամյա կոմունիստական-խորհրդային շրջանի հակոտնյան է** եւ նրանից բաժանվում է հստակ սահմանագծով:

Ժամանակագրական առումով այդ ներքին ջրբաժան-սահմանագիծը որոշելիս, սակայն, չպետք է առաջնորդվել ձեւական մոտեցմամբ: Այն պետք է տեղադրել ոչ թե 1991-ի վերջում, երբ փաստացի եւ իրավական առումով դադարեց գոյություն ունենալ Խորհրդային Միությունը, եւ սկսվեց Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը, ոչ՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին, երբ համաժողովրդական հանրաքվեով Հայաստանն անկախ հռչակվեց, եւ ոչ էլ՝ 1990թ. կեսերին, երբ հերթական ընտրությունների միջոցով Հայաստանում տապալվեց կոմունիստական իշխանությունը, եւ Համաժողովրդական շարժման քաղաքական կառույցը հանդիսացող Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) գլխավորությամբ հաստատվեց ժողովրդավար իշխանություն՝ քիչ անց իր ընդունած «Անկախության հռչակագրով: Պատմական, քաղաքական ու բովանդակային առումով այդ ջրբաժանը 1988-ի փետրվարն է, փետրվարի 20-ից ծայր առած Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժումը:

Նկատի ունենք հետեւյալը.

Շարժումը տրամագծորեն հակադրվում էր ոչ միայն պաշտոնական կոմունիստական գաղափարախոսությանն ու իրականությանը, այլ նաեւ՝ հայ ավանդական քաղաքական մտքի ու հասարակական պատկերացումների արժեհամակարգին: Այդ պահից դրանով սկսեց լցվել Հայաստանի ողջ քաղաքական մթնոլորտը: Հասնելով երկիշխանական դրության հաստատման՝ Շարժումն էր գերակշիռ մասով ձեւակերպում եւ թելադրում երկրի ներքաղաքական կյանքի օրակարգի հարցերը: Ավելին՝ այդ պահից սկսած եւ հետագա տարիներին, մեծապես ազդելով ԽՍՀՄ եւ նրա ազդեցության ոլորտ հանդիսացող Արեւելյան Եւրոպայի ժողովրդավարական քաղաքական գործընթացների առաջացման եւ ծավալման վրա, այն յուրատեսակ մի ջրբաժան-սահմանագիծ է նաեւ համաշխարհային պատմության մասշտաբով՝ սկիզբն այն շրջադարձի, որն ավարտվեց ԽՍՀՄ եւ «սոցիալիստական ճամբարի» փլուզմամբ եւ բոլորովին նոր աշխարհաքաղաքական իրավիճակի հաստատմամբ:

Եթե 1988թ. փետրվարը Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման ժամանակագրորեն ներքին սահմանն է, ապա նրա վերին սահմանագիծը 1998-ն է, երբ հեղաշրջման ճանապարհով իշխանության եկան ուժեր եւ մարդիկ, որոնք պետք է առաջնորդվեին ոչ թե Շարժման որդեգրած (եւ առաջադեմ աշխարհում ընդունված) քաղաքական արժեհամակարգով, այլ պետության եւ իշխանության մասին բոլորովին այլ պատկերացումներով, այլ արժեհամակարգով, եւ ստեղծեին պետական եւ իշխանական բոլորովին այլ մի համակարգ: Ցուրատեսակ մի «անցման շրջան» դիտելով դրան հաջորդած մեկուկես-երկու տարին (ներառյալ՝ Հոկտեմբերի 27-ի հետեւանքով առաջացած մի քանի ամսվա իրավիճակը), **2000 թվականից Հայաստանում հաստատվեց պետական կամ իշխանական մի համակարգ, որն իր քաղաքական բովանդակությամբ նույնքան տարբեր էր նախորդ տասնամյա շրջանից, նույնքան նրա հակոտնյան էր**, որքան կոմունիստական-խորհրդայինը[2]:

Այսպիսով՝ Հայաստանի նորագույն պատմության մեջ, առաջին մակարդակի փուլային ստորաբաժանմամբ, իր քաղաքական արժեհամակարգով, քաղաքական բովանդակությամբ եւ էությամբ 1988-1998թթ. տասնամյակն առանձնանում է որպես մի ուրույն, նախորդ եւ հաջորդ քաղաքական համակարգերից շեշտակի տարբերվող պատմաշրջան: Վերջինս իր ներսում, նկատի ունենալով օրակարգային խնդիրների առաջնայնությունը, երկրորդ մակարդակով ստորաբաժանվում է երեք փուլի.

Ա) **1988թ. փետրվարյան հանրահավաքներից մինչեւ 1989թ. ավարտը**, երբ Շարժումը Լեռնային Ղարաբաղի խնդիրը հետապնդում էր որպես ինքնորոշման հարց՝ փորձելով այն լուծել գոյություն ունեցող խորհրդային համակարգի ներսում, ԽՍՀՄ իրավական ընթացակարգերով, մեխանիզմներով եւ ռեսուրսներով: Այս փուլն ավարտվեց, երբ 1989-ի վերջին աներկբա դարձավ, որ ԽՍՀՄ պայմաններում խնդիրը չի լուծվելու, եւ չի լուծվելու ոչ թե իրավական դաշտի անկատարության կամ հնարավորությունների անբավարարության, այլ կենտրոնական իշխանության

---

[2] *Անշուշտ, դա չի նշանակում, թե Շարժման բերած քաղաքական միտքը, արժեհամակարգն ու դրանով սնված հասարակական մտածելակերպը 1998 թվականի իշխանափոխությամբ դադարեցին գոյություն ունենալ: Հաջորդ տասնամյակում անթեղված, թե՝ 2007 թվականից տեւական համաժողովրդական հզոր շարժման վերածված՝ այն շարունակեց պայմանավորվել Հայաստանի հիմնական քաղաքական օրակարգը, ազդել գործընթացների վրա, վերջիվերջո հասցնելով նույն այդ ավազակապետական ռեժիմի տապալմանը:*

կամքի բացակայության պատճառով: Այս փուլում հայկական ժողովրդավարական շարժումը, որպես այդպիսին, ԽՍՀՄ-ում առաջինը լինելով, վճռորոշ ազդեցություն ունեցավ մյուս հանրապետություններում եւ Արեւելյան Եւրոպայում նույնպիսի շարժումների սկզբնավորման եւ ծավալման վրա[3] (այս երկու տարվա պատմությունը ներկայացված է մեր վերոհիշյալ գրքում):

Բ) **1990-1991թ.**, երբ Շարժումը, սպառված համարելով ԽՍՀՄ պայմաններում հիմնական խնդրի լուծման հնարավորությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով երկրի ներսում քաղաքական գործընթացների փոփոխվող բովանդակությունը եւ ուղղվածությունը, անկախության խնդիրը դարձրեց առաջնային եւ իշխանափոխության ընթացք որդեգրեց: Այս փուլն ավարտվեց 1991թ. դեկտեմբերին ԽՍՀՄ կոչվող կայսրության վերջնական փլուզմամբ եւ հանրապետությունների անկախության միջազգային ճանաչմամբ: Աշխարհաքաղաքական շրջադարձային նշանակություն ունեցող այս գործընթացներում Հայկական ժողովրդավարական շարժումը շարունակել է կարեւորագույն դեր խաղալ, մշտապես լինել դրա առաջամարտիկը, ուստի նաեւ սա է 1990-1991 թվականներն ամփոփող փուլի հիմնական քաղաքական բնութագրիչը: Սույն հատորը վերաբերում է երկրորդ այս շրջանին:

Գ) 1992-1998 թվականները Շարժման գաղափարական հիմքերի վրա անկախ պետականության կառուցման փուլն է: Այս շրջանում կատարված ամենաարմատական վերափոխումների շնորհիվ հաստատվեց ժողովրդավարություն, ստեղծվեց տնտեսական եւ քաղաքական նոր համակարգ: Նոր համակարգերի ու դրանց հիմքում դրված պետականության հիմնադրույթների կենսունակության ապացույցը դարձան անհաղթահարելի թվացող խնդիրների լուծումը, ծանրագույն մարտահրավերներին դիմակայելը, ժողովրդավարության հաստատումը, պետականության կառուցումը: Եռնորհիրդային հանրապետությունների մեջ ռեսուրսներով ամենանվազ, միաժամանակ նաեւ խուլ շրջափակմամբ կաշկանդված Հայաստանը կարողացավ պատվով դուրս գալ իր ունեցած, եռնորհիրդային բոլոր հանրապետությունների համեմատ ամենածանր խնդիրների տակից, հաղթել պարտադրված պատերազմում, Լեռնային Ղարաբաղի համար ապահովել փաստացի անկախություն եւ երբեւէ գոյություն չունեցած անվտանգության հուսալի երաշխիքներ:

* * *

Շարժման ու նրա ստեղծած պետականության տասնամյա պատմությունը ժամանակագրորեն ներքեւից եւ վերեւից սահմանազատող ջրբաժանները շեշտելը միայն պատմագիտական արձանագրման համար չէ: Դա հիմք է՝ հասկանալու եւ արժեւորելու համար Հայաստանի նորագույն շրջանի այս տասնամյակի պատմությունը: Ցավոք, այն համատարած կեղծվել է, եւ դա՝ ոչ միայն դպրոցական ու բուհական դասագրքերում, այլեւ ակադեմիական հետազոտություններում: Այս իրողությունը եթե չունի իր արդարացումը, ապա ունի իր բացատրությունը: Պատմագիտությունը (մյուս գիտությունների մեջ՝ առաջին հերթին) խորհրդային շրջանում ստիպված էր լինել գաղափարախոսականացված համակարգի առաջին սպասավորներից մեկը: Խորհրդային այդ «դպրոցի» պատմաբանների մեծ մասի համար դժվար պետք է լիներ հրաժարվել հին մտածելակերպի իներցիայից եւ վերանալ արդեն իրենց հարազատ դարձած այն արժեքներից, ինչի հակապատկերն էր նոր, ետկոմունիստական իրականությունը: Ինչ վերաբերում է հիշյալ տասնամյակին հաջորդած շրջանին, ապա այս

[3] *Ժամանակին այդ բանը արձանագրել են ոչ միայն քաղաքական վերլուծաբանները, այլեւ պետական-քաղաքական գործիչներ, օրինակ՝ ԱՄՆ Սենատի անդամ Ջոզեֆ Լիբերմանը. «...կոմունիզմի փլուզումը խորհրդային բլոկի ներսում սկսվեց ոչ թե Ռուսաստանի սրտում կամ Կենտրոնական Եւրոպայում, այլ Հայաստանում: 1988 թվականի փետրվարին հայ ժողովուրդը բոզոքի խիզախ ալիք բարձրացրեց կոռումպացված կոմունիստական վարչակարգի դեմ, որը նրան պարտադրվել էր Կրեմլի կողմից: Կոմունիստական տիրապետության դեմ այս ըմբոստությունը որպես մոդել եւ ոգեշնչման օրինակ ծառայեց նույն տարում ավելի ուշ Կենտրոնական Եւրոպայում տեղի ունեցած ապստամբությունների համար» (ՀՀԱՆԼ, թղթ. 13/12.11.1991): Հատկանշական է, որ նույն գնահատականն են տվել նաեւ ավելի ուշ, օրինակ՝ Բելգրադի Դեմ նախագահ Ստանիսլավ Շուշկեւիչը եւ Բուլգարիայի վարչապետ Ֆիլիպ Դիմիտրովը. «Ինչպես մի ֆրանսիացի սովետարան է գրել՝ «Բեռլինի պատը նախ սկսեց փլվել Հայաստանում», երբ այս փոքր խորհրդային հանրապետությունը Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ ճանապարհ հարթեց այն գաղափարների համար, որոնք հետագայում հաջողությամբ որդեգրեցին դեմոկրատական այլ շարժումներ եւ ժողովրդական ճակատներ՝ ներառյալ Բալթիկայում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ Ռուսաստանում: Հայաստանի անհնազանդության համարձակ գործողությունը ոգեշնչեց նաեւ Կենտրոնական Եւրոպայի գերեվարված ազգերին՝ հարստացնելով «Սոլիդարնոստի» փորձառությունը եւ ի վերջո հանգեցնելով 1989թ. նրանց խաղաղ հեղափոխությունների ոսկեդարի բարձրակետին» (Գիտնականը եւ Նախագահը. Լեւոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ, Անտարես, Երեւան, 2020, էջ 158-159):*

դեպքում էլ գործ ունենք Շարժման տասնամյա իշխանության մի այլ հակապատկերի՝ **ավազակապետական ռեժիմի** հետ, որին կենսականորեն անհրաժեշտ էր, որպես համեմատության եզր, հնարավորինս մրոտել, արժեզրկել նախորդ այդ շրջանը: Իսկ դրան ռեժիմը կարող էր հասնել թե՛ համապատասխան գիտական հիմնարկների վրա իշխանական լծակների գործադրմամբ, թե՛ պատվեր տալու, թե՛ այլ մեթոդներով[4]:

Ինչպես սույն աշխատության առաջին հատորում, այնպես էլ այստեղ, զերծ ենք մնացել յուրաքանչյուր դեպքում այդ կեղծիքներին, վերագրումներին, հերյուրանքներին եւ ուրացումներին անդրադառնալ[5]: Որպես դրանց հակակշիռ՝ պարզապես աշխատել ենք մեր շարադրանքը կառուցել միմիայն առաջնային սկզբնաղբյուրների, անվիճելի փաստաթղթերի հիման վրա: Կարեւոր ենք համարել այս տարիների այն հիմնական-բնութագրիչ քաղաքական իրողությունների մանրամասն ներկայացումը, որոնք կա՛մ կեղծվել, կա՛մ շրջանցվել, կա՛մ ուրացվել են պատմագրական աշխատություններում: Նկատի ունենք, մասնավորապես, հետեւյալը.

1. Շարժման քաղաքական օրակարգում 1989թ. վերջին, երբ վերջնականապես պարզ դարձավ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման անհնարինությունը ԽՍՀՄ պայմաններում, Շարժման օրակարգում անկախության խնդիրը դրվեց առաջին տեղում, եւ որդեգրվեց իշխանափոխության ուղի:
2. Անկախության ուղեգծի դեմ անմնացորդ պայքարի դուրս եկավ հայկական «ինտերֆրոնտը»[6]՝ Կոմկուսը, մտավորական նոմենկլատուրան, շուրջ չորս տասնյակ տարբեր անուններով մանր կազմակերպություններ, իշխանական վերահսկողությամբ գործող զինված ջոկատներ եւ այլն: «Հայկական ինտերֆրոնտի» խնդիրը Կոմկուսի իշխանությունը եւ Հայաստանը ԽՍՀՄ կազմում պահելն էր, գաղափարական հիմքը՝ «Հայ դատ»/պահանջատիրությունը[7]:
3. 1990թ. մայիսի 20-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ՀՀՇ-ն, ի հեճուկս իշխանության իրականացրած բազմաթիվ ընտրակեղծիքների, կարողացավ ակնհայտ առավելություն գրանցել:
4. Խափանելու համար Շարժման վերջնական հաղթանակը ընտրությունների հաջորդ փուլերում՝ իշխանությունը 1990թ. մայիսի 27-ին, բանակի ներգրավմամբ, կազմակերպեց արյունոտ սադրանք, որին զոհ գնաց 26 քաղաքացի: Հաղթահարելով նաեւ հետագա բազմազան այլ խոչընդոտները՝ ՀՀՇ-ն կարողացավ հասնել իշխանափոխության: Հականկախական ուժերի երկրորդ սադրանքը չեզոքացվեց նույն թվականի օգոստոսի վերջին՝ ՀԱԲ-ի լուծարմամբ:
5. Նոր իշխանությունը Ղարաբաղյան հակամարտության հարցում ի սկզբանե որդեգրեց առճակատումից հրաժարվելու եւ փոխզիջումնե-

---

[4] *Այս մասին ավելի մանրաման տե՛ս* ***Մարգսյան Ա.****, Ղարաբաղյան շարժման պատմություն, 1988-1989, էջ 7-9:*

[5] *Բավարարվել ենք «Հայոց պատմության» բուհական դասագրքի (Հայոց պատմություն, դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբագրությամբ Հր. Ռ. Միմոնյանի, Երեւան, 2002) համապատասխան բաժնի մասին հրապարակած մեր մի աշխատությամբ (****Մարգսյան Ա.****, Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը», Երեւան, 2015) ու գրանում տրված կոշտ գնահատականներով, ինչին դասագրքի հեղինակներից որեւէ մեկն այդպես էլ չարձագանքեց: Որքան էլ տարօրինակ, սակայն ավազակապետական ռեժիմին հաջորդած իշխանությունը նույնպես շարունակեց նույն դասագիրքը պահել շրջանառության մեջ:*

[6] *Այս բառը, չակերտած, հայ իրականության համար օգտագործում ենք պայմանական՝ նկատի ունենալով, մասնավորապես, Մերձբալթյան հանրապետություններում նույն անունով հայտնի կազմակերպությունները: Վերջիններս, որպես սոցիալական բազա ունենալով «հավատավոր» կոմունիստներին եւ ռուսալեզու բնակչություն, պայքարում էին անկախության ձգտող «ժողովրդական ճակատների» դեմ: Հայաստանում այս հիմքերից երկուսն էլ, ըստ էության, բացակայում էին, եւ անկախության դեմ պայքարի համար «գաղափարական» բոլորովին այլ հիմքեր էին ընտրվել (մանրամասները՝ ստորեւ, իր տեղում):*

[7] *«Հայ դատ» — միջազգային Cause Armeniane (Armenian Cause) տերմինի բառացի հայերեն թարգմանությունն է, որ նշանակում է «Հայկական հարց»: Ծագելով 1878թ. ռուս-թուրքական պատերազմից հետո որպես միջազգային հարցի անուն՝ այն նախապես բոլորովին այլ իմաստ է ունեցել, այն է՝ Օսմանյան կայսրության հոծ հայկական բնակչություն ունեցող նահանգներում եւրոպական գերտերությունների վերահսկողությամբ բարենորոգումներ անցկացնելու ծրագիրը: 1923թ. Լոզանի կոնֆերանսից հետո, երբ նշված ծրագիրը վերջնականապես թաղվեց, «Հայ դատ» տերմինը հայկական միջավայրում վերաիմաստավորվեց, եւ վաղուց դրա քաղաքական էությունն այլ բան չէ, քան* ***պահանջատիրությունը****, որի միջազգային մտավոր համարժեքը irredentism բառն է: Ուստիեւ՝ առաջիկա շարադրանքում մենք հնարավորինս կխուսափենք թյուրընկալումների տեղիք տվող* ***Հայ դատ, հայդատականություն*** *հասկացությունների օգտագործումից՝ դրանց փոխարեն կամ զուգահեռ, հարգիր գործածելով քաղաքական իմաստով լիովին համարժեք ու ամենքին հասկանալի՝* ***պահանջատիրություն եւ պահանջատիրականություն*** *բառերը:*

րով խաղաղության հասնելու քաղաքականություն, ինչին քիչ ուշացումով միացավ նաեւ Լեռնային Ղարաբաղը:

6. 1991թ. ապրիլ- հունիս ամիսներին, Կենտրոնի նախաձեռնած «Կոլցո» ռազմական գործողությունը, ըստ էության, պատերազմ էր Հայաստանի դեմ՝ խափանելու համար նրա անկախության օրինական գործընթացը եւ ստիպելու միանալ միութենական պայմանագրին:
7. Հայաստանը կարեւոր դեր խաղաց 1991թ. օգոստոսի 19-21-ը Մոսկվայում տեղի ունեցած հեղաշրջման տապալումից հետո Կենտրոնի վերակենդանացման փորձերը կանխելու եւ ԽՍՀՄ անվտանգ կազմաքանդման գործում:
8. Ինչպես նախորդ՝ 1988-89 թվականներին, այնպես էլ հաջորդած շրջանում, մինչեւ ԽՍՀՄ դե-յուրե կազմալուծումը, Հայաստանը մնաց ժողովրդավարական գործընթացների առաջատարի դիրքերում:

* * *

Որեւէ պատմաշրջան լավ հասկանալու համար ելակետային կամ ուղեցուցային պետք է դիտել դրա հիմքը՝ սկիզբը: 1988-1998թթ. քաղաքական առումով որակապես հստակ առանձնացող պատմական շրջանի համար նման սկիզբ ու հիմք են առաջին չորս տարիները՝ 1988-1991 թվականները: Այսինքն՝ նաեւ այս հատորում իրադարձությունների եւ ներքաղաքական պայքարի դերակատարներին վերաբերող փաստաթղթային բազայի վրա ծանրանալը, դրանցից կարեւորներն առավել մանրակրկիտ ներկայացնելը, ընդարձակ մեջբերումները եւ այլն, նպատակ ունեն ստեղծելու այն ապահով հիմքը, որը կդյուրացնի ու տրամաբանական կդարձնի պատմաշրջանի հաջորդ՝ քաղաքական իրադարձությունների եւ արդյունքների գրանցման առումով հիմնական մասի ներկայացումն ու ընկալումը: Հաջորդ ասելով՝ նկատի ունենք 1992 թվականից ի վեր իրադարձությունները, ներքաղաքական պայքարը, իշխանության առջեւ դրված հիմնական խնդիրները՝ համակարգային արմատական վերափոխումները, անկախ պետականության կառույցների ստեղծումը, պատերազմը, արտաքին քաղաքականությունը եւ այլն: Աշխատել ենք փաստաթղթային բազայի վրա հնարավորինս մանրամասն ու փաստարկված ներկայացնել նաեւ այս շրջանում որպես ընդդիմություն ձեւավորվող ուժերի իրական շարժառիթներն ու նրանց բնութագիրը, ինչը խիստ կարեւոր է ինչպես այս, բայց

հատկապես հետագա տարիների ներքաղաքական պայքարը ու դրա իրական բովանդակությունն ու նպատակները ճիշտ հասկանալու համար:

Հիմնական աղբյուրների խմբերն այս հատորում եւս նույնն են. առաջնայինը Շարժման, ապա նրա ձեւավորած իշխանության փաստաթղթերն են, կոմունիստական շրջանի վերջին կես տարվա փակ եւ բաց ախիվային փաստաթղթերը, ժամանակի մամուլը, Հայաստանի, ըստ անհրաժեշտության՝ նաեւ այլ հանրապետությունների եւ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության օրենսդրական ակտերը՝ հրապարակված նրանց պաշտոնական Տեղեկագրերում եւ այլն: Պատմության՝ առաջնային սկզբնաղբյուրների վրա կառուցված քաղաքական առանցքը, ողնաշարը, կարեւոր է, մի կողմից՝ հարակից, օժանդակ այլ փաստաթղթերն ու աղբյուրները ճիշտ ընկալելու եւ մեկնաբանելու, մյուս կողմից՝ ավանդաբար ներկայացվող այլ ոլորտների (մշակույթ, գրականություն, տնտեսություն, Սփյուռք եւ այլն) իրադարձությունների եւ իրողությունների ներկայացման ու գնահատման համար[8]: Այս տարիներին վերաբերող գիտական ուսումնասիրություններից մի քանիսն են օգտակար, հատկապես նրանք, որոնք հիմնականում վավերագրերի կամ փաստական նյութերի ժամանակագրական բնույթի ժողովածուներ են:

Թյուրընկալումներից խուսափելու եւ ամեն անգամ դա չշեշտելու համար, ավելացնենք եւս մի հանգամանք. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ նրա Նախագահության՝ սույն աշխատության մեջ վկայակոչված, 1990թ. առաջին կեսով թվագրվող բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղին, պաշտպանական խնդիրներին կամ իրավիճակի հետ կապված կարեւոր քաղաքական հարցերի, ինչպես մինչ այդ, հիմա էլ ընդունվում էին Շարժման ճնշման տակ, վերջինիս նախագծերով: Տարբերությունն այն էր, որ եթե 1988-1989-ին այդ ճնշումն իրականացվում էր դրսից՝ հզոր հանրահավաքներով, հիմա արդեն, հիմնականում՝ ՀԽՍՀ ԳԽ-ում ՀՀՇ-ից 1988 եւ 1989թթ. ընտրված մի քանի պատգամավորների միջոցով, որոնցից Լեւոն Տեր-Պետրոսյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Ռոբերտ Քոչարյանը 1990թ. փետրվարից նաեւ ԳԽ նախագահության անդամ, իսկ Ռաֆայել Ղազարյանը՝ ԳԽ նախագահի տեղակալ էին ընտրվել:

---

8 *Այս բնագավառներին անդրադարձել ենք այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել պատմության քաղաքական առանցքի լրացման եւ ամբողջացման համար:*

* * *

Իրերի բերմամբ մտերիմ ընկերական հարաբերություններ ունենալով «Ղարաբաղ» կոմիտեի, առաջին ժողովրդավար իշխանության բարձրաստիճան ղեկավարների հետ, հարյուրավոր զրույցների ընթացքում չիրապարակված եւ որեւէ փաստաթղթում չարձանագրված բազմաթիվ տեղեկություններ ենք ստացել տարբեր իրադարձությունների, դեպքերի, իրողությունների, մարդկանց մասին: Ձեռնպահ ենք մնացել այդօրինակ նյութերն օգտագործելուց, բացառությամբ եզակի դեպքերի, երբ դրանք խիստ կարեւոր են եղել այս կամ այն հարցի ամբողջացման կամ կարեւոր մի նրբերանգի արձանագրման համար: Նույն կերպ՝ որպես այս տարիների իրադարձությունների մասնակից եւ ականատես, 1990-1999թթ. Հայաստանի օրենսդիր մարմնի պատգամավոր եւ իշխող կուսակցության ղեկավար մարմնի անդամ, հիմնականում ձեռնպահ ենք մնացել «շահագործել» նաեւ մեր իմացությունները եւ հիշողությունը:

Սուբյեկտիվիզմը հատուկ է պատմաբանին, քանզի յուրաքանչյուրը նաեւ քաղաքական եւ այլ համակրություններ ունի, հատկապես, երբ խոսքը վերաբերում է իր շրջանի պատմությանը: Սակայն սա ամենեւին չի նշանակում, թե պատմությունը չի կարող մոտենալ օբյեկտիվ իրականությանը՝ նկատի ունենալով իրադարձություններին, դեպքերին եւ դեմքերին տրված գնահատականները կամ դրանց նկատմամբ այլ կերպ արտահայտված վերաբերմունքը: Ինչպես այլ բնագավառներում, այստեղ եւս կա **ընդունված չափորոշիչ**, որի կիրառմամբ պատմության շարադրանքը առավելագույնս դառնում է անաչառ, մոտենում օբյեկտիվ իրականությանը: Դա յուրաքանչյուր ավարտված պատմաշրջանի գրանցած **քաղաքական արդյունքն է կամ արդյունքները**՝ միակ վստահելի ելակետը, որից հետահայաց՝ այդ պատմաշրջանը կազմող տասնյակ իրադարձությունները, դեպքերն ու դեմքերը կարող են ստանալ իրենց արժեւորումը, օբյեկտիվ գնահատականը: Տվյալ դեպքում տասնամյա այդ շրջանի անվիճելի քաղաքական արդյունքներն են.

ա) *Հայաստանը վերականգնել է իր անկախությունը, կայացել որպես ինքնուրույն պետություն, դարձել միջազգային հանրության լիիրավ անդամ, ունեցել իր Սահմանադրությունը.*

բ) *Ստեղծել է իր ազգային բանակը, կտրել զինական հաղթանակներ եւ ազատագրել Լեռնային Ղարաբաղը.*

գ) *Հայաստանում դրվել են ժողովրդավարության հիմքերը.*

դ) *Հայաստանը որդեգրել է ազատ շուկայական հարաբերություններ.*

ե) *Հայ իրականության մեջ ներդրվել ու կենսագործվել է իրատես քաղաքականության սկզբունքը.*

զ) *Հայաստանը, առնվազն քառամյա մի շրջան, եղել է ԽՍՀՄ-ում եւ Արեւելաեւրոպական երկրներում ծավալված ժողովրդավարացման գործընթացների վրա որոշակի ազդեցություն ունեցող գործոն:*

Հեղինակի անցած վերոհիշյալ քաղաքական ճանապարհից ելնելով՝ կարող են վերապահումներ առաջանալ: Այս դեպքում, սակայն, «արջի ծառայություն» եւ խիստ վնասակար կլիներ ինչ-որ բան չափազանցելը՝ հօգուտ Հայկական ժողովրդավարական շարժման, ՀՀՇ-ի իշխանության շրջանի ու նրա ղեկավարների: Քանզի միայն փաստերի եւ իրողությունների օբյեկտիվ ներկայացումը՝ որպես դրանց գնահատման ելակետ ունենալով պատմաշրջանի վերոհիշյալ քաղաքական արդյունքները, ավելի քան բավարար է՝ այս տասնամյակը Հայոց պատմության նշանակալից եւ քաղաքական իմաստով ամենաարդյունավետ տասնամյակներից մեկը ճանաչելու համար: Որեւէ դեպքում իրողությունների չափազանցումը, գնահատականներում շռայլությունը միմիայն կարող էին վնասել նույն այդ պատմությանը, կասկածի տակ դնել շարադրանքի անաչառությունը, թերահավատություն առաջացնել օբյեկտիվորեն առարկայացված քաղաքական արդյունքների նկատմամբ: Համենայնդեպս, այս ելակետով գրված մեր վերոհիշյալ երկու աշխատությունները, մեկը՝ նվիրված պատմության այս շրջանի կեղծիքները մերկացնելուն, մյուսը՝ «պաշտոնական» պատմագրությունից բոլորովին տարբեր՝ 1988-1989 թվականների գիտական պատմությունը, որեւէ բացասական արձագանքի, հերքման չեն արժանացել:

Վերջում, որպես հավելված, դնում ենք մի շարք փաստաթղթեր, որոնք հատկապես բնութագրական են այս տարիների քաղաքական համապատկերի համար կամ վերաբերում են առավել կարեւոր իրադարձություններին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԻՄ — Ազգային Ինքնորոշում Միավորում
ԱԺՃ — Ադրբեջանի Ժողովրդական Ճակատ
ԱԺՄ — Ազգային Ժողովրդավարական Միություն
ԱՄՆ — Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ — Անկախ Պետությունների Համագործակցություն
ԳԽ — Գերագույն Խորհուրդ
ԳԿՉՊ — Государственный Комитет по Чрезвычайному Положению — Արտակարգ Դրության Պետական Կոմիտե
ԵԱՀԽ — Եվրոպայի Անվտանգության եւ Համագործակցության Խորհրդակցություն
Ժողճակատ — Ժողովրդական ճակատ
ԼՂԻՄ — Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ
ԼՂՀ — Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԽՄԿԿ — Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցություն
ԽՍՀ — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ԽՍՀՄ — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
Կենտկոմ — Կենտրոնական կոմիտե
ԿԸՀ — Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿ — Կենտրոնական կոմիտե
«Կոռունկ» (կոմիտե) — (ռուսերենից) «Комитет революционного управления Нагорного Карабаха»
Կոմկուս — Կոմունիստական Կուսակցություն
ՀԱԱ — Հայաստանի Ազգային Արխիվ
ՀԱԱԿ — Հայաստանի Ազգային Անկախական Կուսակցություն
ՀԱԲ — «Հայոց ազգային բանակ» (ռազմական կազմավորում)
ՀԽՍՀ — Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՀՀՇ — Հայոց Համազգային Շարժում
ՀՀԱՆԱ — ՀՀ Առաջին Նախագահի արխիվ
ՀԿԿ — Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն
ՀՀ — Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ — Հայաստանի Հանրապետական Կուսակցություն
ՀՅԴ — Հայ Յեղափոխական Դաշնակցություն

6256

ՀՌԱԿ — Հայաստանի Ռամկավար-ազատական Կուսակցություն
ՀՔԴՄ — Հայաստանի Քրիստոնեա-դեմոկրատական Միություն
ՄԱԿ — Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՆԳՆ (Մ) — Ներքին Գործերի Նախարարություն (Մինիստրություն)
ՊԱԿ — Պետական Անվտանգության Կոմիտե
ՊՆ — Պաշտպանության Նախարարություն
ՌԱԿ — Ռամկավար Ազատական Կուսակցություն
ՌԽՖՍՀ — Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն
ՌԿ(բ)Կ — Ռուսաստանի Կոմունիստական (բոլշեւիկյան) Կուսակցություն
ՌՍՖՍՀ — Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն
ՍԴՀԿ — Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան Կուսակցություն
ՍԻՄ — Սահմանադրական Իրավունք Միություն
ՕՄՕՆ — Отряд Милиции Особаго Назначения — Ոստիկանության հատուկ նշանակության ջոկատ
СССР — Союз Советских Социалистических Республик

Առաջին բաժին

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ, ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՎԱՐՏԸ

1. ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՀԱԳՆԱՑՈՂ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

ա) Խորհրդա-իրանական պետական սահմանի ավերումը

Մոսկվայի վերջնական պաշտոնական դիրքորոշումն արտահայտվել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոյեմբերի 28-ի որոշմամբ: Դրանով, մասնավորապես, վերացվում էր Մարզին մեկ տարի առաջ տրված հատուկ, այն է՝ Կենտրոնին ենթակա լինելու կարգավիճակը, եւ նրա վրա, ըստ էության, կրկին վերականգնվում էր Բաքվի իշխանությունը[9]: Այն բնական ոգեւորություն առաջացրեց Ադրբեջանում: Միաժամանակ, սակայն, Ադրբեջանի Ժողովրդական ճակատը դա էլ համարում էր անբավարար եւ հանրապետության ինքնիշխանության դեմ ոտնձգություն: Նա պարզ հասկանում էր, որ բռնությունների եւ անկանխատեսելիության «ադրբեջանական գործոնի» դեմ Կենտրոնը ոչ միայն հանդուրժողականություն է ցուցաբերում, այլեւ զիջումների է գնում, ուստիեւ այդօրինակ ճնշումները կարելի է մեծացնել: Դրա արդյունքն էր, կամ այդ գործոնը հզորացնելու նպատակին էր ուղղված, ԽՍՀՄ պետական սահմանի ավերման աննախադեպ գործողությունը, որը ձեռնարկվեց խորհրդա-իրանական սահմանի ողջ երկայնքով:

Դեպքերը սկսվեցին Նախիջեւանում, 1989թ. դեկտեմբերի 31-ին: Մինչ այդ, դեռ դեկտեմբերի 4-ին եւ 12-ին, պետական սահմանի Նախիջեւանի հատվածում հանրահավաք էր կազմակերպվել, խարույկներ էին վառել եւ բարձրախոսով դիմել սահմանի մյուս կողմի բնակչությանը՝ Հյուսիսային եւ Հարավային Ադրբեջանները միավորելու կոչով: Այս ամենին խորհրդային սահմանապահները տարօրինակ անտարբեր ու հանդուրժո-

---

[9] *Այս որոշման, դրա մանրամասների, արձագանքների ու հետեւած իրադարձությունների մասին տե՛ս* ***Մարգոյան Ա.,*** *Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 527-564:*

ղական վերաբերմունք էին ցույց տվել: Քիչ հետո խորհրդային սահմանապահ զորամասերի հրամանատարությունը Ադրբեջանի Ժողովրդական ճակատի անունից վերջնագիր էր ստացել՝ մինչեւ դեկտեմբերի 31-ը սահմանից հավաքել ամեն կարգի արգելափակոցները՝ սպառնալով հակառակ դեպքում ամեն ինչ ոչնչացնել: Այսինքն՝ վանդալիզմի նախապատրաստվող այս գործողությունների մասին Կենտրոնը տեղեկացված էր եւ այն կանխելու համար միջոցառումներ ձեռնարկելու համար ամբողջ մի ամիս ժամանակ ուներ:

Սահմանապահ զորքերի հրամանատարությունը բանակցություններ էր վարել Ադրբեջանի Ժողճակատի հետ, էական զիջումների գնացել, սակայն վերջինս հենց նրանց աչքի առջեւ, զանազան տեխնիկա կենտրոնացնելով՝ նախապատրաստվում էր սահմանային ամրություններն ավերելու գործողություններին: Դեկտեմբերի 31-ին, ինչպես եւ սպառնացել էին, սկսվեց սահմանային անվտանգության ապահովման միջոցների եւ կառույցների ավերումն ու ոչնչացումը: Քինվորականները հակազդելու, ավերածությունը կանխելու որեւէ գործողություն չձեռնարկեցին, բավարարվելով միայն «անօրինական գործողություններից» ձեռնպահ մնալու կոչերով: Մինչդեռ ջարդարարները, ոմանք նաեւ բացահայտ զինված, սպառնում էին ընդհուպ նրանց հետ ֆիզիկական հաշվեհարդար տեսնել եւ հրկիզել ուղեկալները:

Ավերումները շարունակվեցին նաեւ հետագա օրերին, եւ շուտով Նախիջեւանով անցնող ԽՍՀՄ ողջ պետական սահմանը՝ 164 կմ երկարությամբ, լրիվ ավերված էր: Իրանը, անակնկալի եկած այս երեւույթի դեմ, ստիպված էր մարտական պատրաստության բերել իր սահմանապահ զորքերը, պաշտպանական դիրքեր գրավել եւ պաշտոնական բողոք հայտնել սահմանային ռեժիմի մասին խորհրդա-իրանական պայմանագրի խախտման առիթով[10]: Ուշացումով, միայն հունվարի 5-ին Նախիջեւան ժամանեցին ԽՍՀՄ բարձրաստիճան պաշտոնյաներ[11]: Սակայն այս ամենի համար ոչ միայն որեւէ մեկը պատասխանատվության չենթարկվեց, այլեւ հանձնարարվեց Նախիջեւանի նախարարների խորհրդին՝ «անհապաղ քննարկել

[10] *Տե՛ս «Известия», 04.01.1990.*

[11] *ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ա. Գիրենկոն, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահ Ռ. Նիշանովը, Ադրբեջանի կոմկուսի 1-ին քարտուղար Ա. Վեզիրովը եւ այլն:*

սահմանամերձ շրջանի բնակչության պահանջները»[12]: Իսկ որպես կատարվածի դրդապատճառ եւ յուրատեսակ արդարացնող հանգամանք՝ շրջանառության մեջ դրվեցին «Ղարաբաղի չլուծված հարցը» եւ «Հայաստանից եկած փախստականները»: Ավելին՝ ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղարը հավաստում էր, որ Ղարաբաղի հարցն, ըստ էության, լուծված է, եւ որ որեւէ «ոտնձգություն» չի կարող լինել նրա նկատմամբ՝ «Ադրբեջանի սուվերեն իրավունքների» դեմ: Միաժամանակ, սակայն նա հասկացնում էր, որ Ադրբեջանին Կենտրոնը պատրաստ է ամեն ինչ ներել եւ արածն ընդունել, բայց ոչ մի կերպ չի ների «անջատողականությունը», ինչի դեմ «կուսակցությունը հանդես կգա վճռականորեն»[13]: Ըստ էության, նույնպիսի հանդուրժողական նոտայի վրա էր նաեւ այս հարցի առիթով ԽՍՀՄ ԳԽ նախագահության ընդունած որոշումը, որը, մասնավորապես, հանձնարարում էր՝ «միջոցներ ձեռնարկել սահմանամերձ (ադրբեջանական Ա. Ս.) բնակչության բարձրացրած կոնկրետ հարցերի լուծման ուղղությամբ»[14]:

Խորհրդային Միության պետական սահմանի ավերման այս արտառոց փաստը ու դրա նկատմամբ Մոսկվայի վերաբերմունքը նշանակում էին, որ, իրոք, Ադրբեջանին «անջատողական» ձգտումներից եւ գործողություններից հրաժարվելու դեպքում ամեն ինչ կարող է ներվել, այդ թվում նաեւ Ղարաբաղի հարցի յուրովի «լուծումը» հայ բնակչության բռնագաղթի միջոցով: Հաջորդող իրադարձությունները դա հաստատեցին:

բ) Պայքարն օրենսդրական դաշտում

ՀՀՇ վարչության կողմից ներկայացված՝ «Արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին» փաստաթղթի պատճառով[15] ՀԽՍՀ Գերագույն խորհրդի՝ 1989թ. դեկտեմբերի 6-ին ընդհատված նստաշրջանը վերսկսվեց միայն հունվարի 9-ին: Նիստին կրկին հրավիրված էին Ղարաբաղի Ազգային խորհրդի պատգամավորները: Դեկտեմբերի 1-ի՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման որոշումն անհրաժեշտ էր որոշակի բովանդակությամբ լցնել: Նախորդ նիստում՝ դեկտեմբերի 6-ին (որ տեղի էր ունեցել առանց Ղարաբաղի Ազգային խորհրդի մասնակցության), ընդունվել էր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման

[12] *«Известия», 08.01.1990.*

[13] *Նույնը, 10.01.1990.*

[14] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 34:*

[15] *Այս մասին տե՛ս **Մարգսյան Ա.**, Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 538-544:*

պետական պլանի մասին որոշումը եւ 1990թ. պետական բյուջեի մասին օրենքը, սակայն, առանց Լեռնային Ղարաբաղը դրանում ներառելու: Այժմ ընդունվեցին համատեղ որոշումներ, որոնցով նաեւ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման պետական պլանը եւ բյուջեն ներառվեցին այդ փաստաթղթերում[16]:

Ադրբեջանի Գերագույն խորհուրդը թեեւ ողջունել էր ԽՍՀՄ ԳԽ-ի նոյեմբերի 28-ի՝ Լեռնային Ղարաբաղի մասին որոշումը, սակայն մի քանի օր անց՝ դեկտեմբերի 4-ին, նրա նախագահությունը (թերեւս որպես պատասխան ՀԽՍՀ-ի եւ ԼՂԻՄ-ի՝ դեկտեմբերի 1-ի վերամիավորման որոշման) կասեցրել էր ԽՍՀՄ ԳԽ-ի այդ որոշման մի շարք դրույթների գործողությունը, որոնցով նախատեսվում էր մարզի «իրական» ինքնավարության բարձրացում, մարզային իշխանությունների վերականգնում, ժողովրդագրական իրավիճակի պահպանում եւ այլն: Մոսկվան չէր շտապել անդրադառնալ ո՛չ Հայաստանի, ո՛չ Ադրբեջանի օրենսդիր մարմինների որոշումներին: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի հունվարի 9-ի համատեղ որոշումներից անմիջապես հետո, հենց հաջորդ օրը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշեց միջամտել: ԽՍՀՄ Սահմանադրությանը չհամապատասխանող ու անիրավազոր հայտարարվեցին ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի օրենսդիր մարմինների վերոհիշյալ բոլոր որոշումները[17]:

ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն իր հերթին հաջորդ օրը, ՀՀՇ-ի նախաձեռնությամբ, փոփոխություն կատարեց հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածում: Ըստ այդ փոփոխության՝ ՀԽՍՀ տարածքում հանրապետության շահերին վերաբերող ԽՍՀՄ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը գործում են միայն ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից վավերացվելուց հետո[18]: Սա, փաստորեն, ընդամենը մեկ ամիս առաջ կտրականապես մերժված՝ «Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին հռչակագրի» հիմնական դրույթներից մեկն էր, որ այժմ դարձյալ դժվարությամբ, բայց հաջողվեց անցկացնել:

[16] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 1, հոդվ. 1, 2:*

[17] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 35 եւ 36:*

[18] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 1, հոդվ. 6:*

գ) Իրավիճակի սրումը Լեռնային Ղարաբաղում

Պայքարն, իհարկե, միայն օրենսդրական դաշտում չէր արվել, այլ նաեւ Լեռնային Ղարաբաղում: Հայ բնակչության տեղահանման ընդհանուր ծրագրի իրականացման համար որպես սկիզբ, բնականաբար, պետք է ընտրվեին ամենաթույլ կետերը: Դա Գետաշենի ենթաշրջանն էր, որտեղ մինչ այդ արդեն հայերից դատարկվել եւ ադրբեջանցիներով բնակեցվել էր Շահումյանի շրջանի հետ կապող կամրջի դեր խաղացող Կուշչի Արմավիր գյուղը: Հունվարի 2-ին լայնածավալ հարձակումներ կատարվեց Մարտունաշենի եւ այլ գյուղերի վրա, որոնք տեղական հայկական ուժերի կողմից հաջողությամբ ետ մղվեցին: Խորհրդային զինված ստորաբաժանումներից խնդրված օգնությունը մի փոքրիկ դասակի տեսքով տեղ հասավ միայն մի քանի օր անց: Նման վտանգի հանդիման ենթաշրջանի չորս գյուղերի 300 լիազոր ներկայացուցիչները համագումար հրավիրեցին, ընտրեցին իրենց Ազգային խորհուրդը եւ ենթաշրջանը հայտարարեցին միացված Շահումյանի շրջանին[19]:

Հունվարի 4-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրով Լեռնային Ղարաբաղում նշանակվեց նոր պաշտոնյա. Վ. Կ. Ֆոտեեւը հաստատվեց որպես ԼՂԻՄ միութենական վերահսկիչ դիտորդ հանձնաժողովի նախագահ[20]: Հունվարի 9-ին, արդեն երկրորդ անգամ մեկ շաբաթվա ընթացքում, Ստեփանակերտում ներքին զորքերի ստորաբաժանումները զենք գործադրեցին խաղաղ բնակչության նկատմամբ: Այդ օրը Մոսկվայի բարձրաստիճան ներկայացուցիչներ Ա. Գիրենկոյի եւ Ռ. Նիշանովի ուղեկցությամբ փորձեց Ստեփանակերտ մտնել Ադրբեջանի մի պատվիրակություն՝ Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Որպես բողոքի նշան, թողնելով աշխատանքը, բնակչությունը դուրս եկավ փողոց՝ թույլ չտալու նրանց մուտքը քաղաք: Զինվորականները, դարձյալ առանց անհրաժեշտության, ճանապարհի հատվածներից մեկում հրազեն գործադրեցին, որի հետեւանքով երեք հոգի ծանր վիրավորվեց: Դրանից հետո իրավիճակը, բնականաբար, ավելի սրվեց, այնքան, որ Մոսկվայի ներկայացուցիչները գերադասեցին օդանավակայանից անմիջապես վերադառնալ Բաքու, իսկ Պոլյանիչկոյի գլխավորած խումբը ուղղաթիռով ուղեւորվեց Շուշի: Նույն օրը Գետաշենից վերադառնալու ճանապարհին ադրբեջանցի զինյալները պա-

[19] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 11.01.1990:*

[20] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 2, հոդվ. 16:*

տանդ վերցրին Շահումյանի շրջանի ողջ ղեկավարությանը, թվով 19 հոգու՝ շրջկոմի առաջին քարտուղար Վալերի Աղաջանյանի հետ միասին[21]:

Հունվարի 11-ին Բաքվում կայացած հանրահավաքում Ադրբեջանի Ժողճակատը պահանջում էր հանրապետության կառավարության հրաժարականը՝ այն հիմնավորմամբ, որ վերջինս չի կարողանում արագ լուծել Ղարաբաղի հարցը, պահանջում էր նաեւ հայերին դուրս քշել Բաքվից, կոչ անում զանգվածային արշավանք ձեռնարկել դեպի Լեռնային Ղարաբաղ[22]: Ադրբեջանական զանգվածային լրատվության միջոցներն, իրենց հերթին, բորբոքում էին ծայր առած հիստերիան: Այսօրինակ գործողությունները մնում էին անհետեւանք եւ անպատիժ: Պետական սահմանի ավերման նկատմամբ բացահայտ հանդուրժողականությամբ, Կենտրոնն, ըստ էության, Ադրբեջանի Ժողովրդական ճակատի գործողությունների առջեւ կանաչ լույս էր վառել՝ հույս ունենալով, որ այսկերպ նրա ձեռքով կիրականացնի Ղարաբաղի հայության բռնագաղթը եւ դրանով իսկ նաեւ կլուծի Ղարաբաղի հարցը: Միաժամանակ, նույն օրերին սկսվեցին նոր հարձակումներ Գետաշենի ենթաշրջանի եւ Շահումյանի շրջանի գյուղերի վրա: ՀՀՇ վարչության տարածած տեղեկատվական թռուցիկը ներկայացնում է հունվարի 13-14-ի պատերազմական խրոնիկա հիշեցնող հետեւյալ հիմնական իրադարձությունները: Գետաշենի ենթաշրջանը եւ Շահումյանի շրջանը շարունակում են մնալ պաշարման մեջ: Գետաշենում իջել է խորհրդային զինվորներով մի ուղղաթիռ, որի վրա ադրբեջանցիները կրակ են բացել: Զինվորները պատասխանել են եւ նրանց պատճառել մարդկային կորուստներ: Կիրովաբադ է մտել է 800 հոգանոց խորհրդային զորամիավորում, որի մի մասը փորձել է անցնել Գետաշեն, սակայն Ադրբեջանի Ժողճակատի զինյալները դա թույլ չեն տվել: Ազատ եւ Մանաշիդ գյուղերը ինքնապաշտպանական մարտեր են մղում ադրբեջանական գրոհայինների դեմ: ՀՀՇ-ի պահանջով եւ ճնշմամբ վերականգնվել են Հայաստանից Գետաշեն ուղղաթիռային ընդհատված թռիչքները: Կարաչինար գյուղում վայրէջք կատարող ուղղաթիռը գնդակոծվել է եւ հետ է դարձել: Գետաշեն գյուղի վրա հունվարի 14-ին կրակել են թնդանոթներից[23]: Ընդ որում՝ հարձակումներն արդեն կատարվում էին ժամանակակից մարտական զենքերով բացահայտ զինված խմբերի կողմից, որոնք երբեմն իրենց տրամադրության տակ ունեին նաեւ զրահատեխնիկա եւ ուղղաթիռներ:

[21] *Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 3, январь-декабрь 1990 года, Ереван, 1993, с. 14-15.*

[22] *Տե՛ս «Известия», 13.01.1990.*

[23] *ՀՀԱՆԱ, թղթ. 15/15.01.90:*

Լեռնային Ղարաբաղի եւ հայաբնակ այլ բնակավայրերի ինքնապաշտպանական խնդրով Շարժումն զբաղվում էր ի սկզբանե, առանց այդ մասին բարձրաձայնելու: Այժմ, երբ վտանգվածության աստիճանը բարձրացել էր, հունվարի 14-ին Երեւանում կայացած հանրահավաքում արդեն բարձրաձայն խոսվեց ինքնապաշտպանական ջոկատներ կազմելու անհրաժեշտության մասին՝ պաշտպանելու Հայաստանի սահմանամերձ շրջանները, Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերը եւ Լեռնային Ղարաբաղը: Հաջորդ օրը ՀՀՇ վարչության տարածած պաշտոնական հայտարարությունը, դատապարտելով Կենտրոնի եւ Ադրբեջանի գործողությունները եւ բիրտ ուժի կիրառումը, այդ մասին հստակ ասում էր. «Մեր իսկ կամքից անկախ մեզ ներքաշում են կռվի մեջ: Մենք պետք է բոլոր ջանքերը գործադրենք՝ խուսափելու պատերազմից, բայց երբ վտանգ է սպառնում մեր հայրենակիցներին, պիտի կորով դրսեւորենք, ազգովի պատրաստ լինենք խիզախելու... Գիտակցելով պահի գերկարեւորությունը, Հայոց համազգային շարժման վարչությունը ստեղծել է Պաշտպանության խորհուրդ, որի նպատակն է կազմակերպել եւ ուղղորդել մեր ժողովրդի պայքարը հանուն նրա արժանապատիվ գոյատեւման»[24]:

Ադրբեջանական գրոհայինների թիվը հասնում էր մի քանի հազարի: Խորհրդային ներքին զորքերի ստորաբաժանումները եւ ինքնապաշտպանական ջոկատները հաջողությամբ հետ մղեցին նրանց առաջին գրոհները: Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամները ստիպված էին Երեւանում թողնել նստաշրջանը եւ վերադառնալ Լեռնային Ղարաբաղ: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանն, իր հերթին, Միխայիլ Գորբաչովին ուղղված մի դիմում ընդունելուց հետո[25], նույնպես հունվարի 13-ին ստիպված էր դադարեցնել աշխատանքը:

դ) Բաքվի հայ բնակչության ջարդերը եւ բռնագաղթը

Ծայրահեղ սրվում էր իրավիճակը հատկապես Բաքվում: Դեռ դեկտեմբերի 16-ին այստեղ ՊԱԿ-ի շենքի առջեւ տեղի ունեցած հանրահավաքը պահանջում էր բոլոր հայերին ազատել ադմինիստրատիվ պաշտոններից: Հետագա հանրահավաքներում հայերին արտաքսելու պահանջը

[24] *ՀՀԱՆԱ, թղթ. 15/15.01.90:*

[25] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 1, հոդվ. 8:*

դարձավ հիմնական, իսկ նրանց տների ավերումներն ու թալանը դարձան ավելի հաճախադեպ: Հունվարի 13-ից Բաքվում սկսվեցին գործողություններ, որոնց անմիջական հետեւանքը եղավ այստեղ դեռեւս մնացած հայ բնակչության ջարդը եւ տեղահանությունը: Այդ օրը բազմահազարանոց ամբոխը կառավարությունից պահանջում էր Լեռնային Ղարաբաղի հարցում արտակարգ միջոցառումներ ձեռնարկել կամ հրաժարական տալ: Նույն ժամերին հեռարձակվում էր Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովի մի հեռուստաելույթը, որում նա հայտարարում էր, որ լրիվ համաձայն է Ժողճակատի ծրագրին եւ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելու համար համախմբման կոչ էր անում[26]: Քիչ անց տարբեր խմբեր շարժվեցին դեպի քաղաքի հայկական թաղամասերը, սկսվեցին ջարդերը, կողոպուտն ու թալանը:

Կենտրոնական իշխանությունը դրան ոչինչ չհակադրեց, որեւէ միջոց չձեռնարկեց արյունահեղությունը, վանդալիզմը եւ զանգվածային բռնությունները կանխելու համար: Քաղաքում եղած խորհրդային զինվորական ստորաբաժանումները բավարարվում էին միայն հայերին ապաստան տալով եւ օժանդակում էին, որ նրանք հեռանան քաղաքից: Զինվորականները բողոքում էին, թե ոչ միայն զենք չգործադրելու, այլեւ նույնիսկ այն չկրելու խիստ հրաման ունեն: Ընդ որում՝ նրանք դա նորմալ չէին համարում՝ պնդելով, որ անզեն հնարավոր չէ հակահարված տալ ծայրահեղականներին[27]:

Բաքվում հայկական ջարդերը եւ բռնություններն անպատիժ շարունակվեցին մեկ շաբաթ: Սպանվեցին 60-ից ավելի հայեր, 112-ը ստացան ծանր մարմնական վնասվածքներ: Ամբողջ հայ բնակչությունը՝ լրիվ ունեզրկված եւ թալանված, դուրս քշվեց հանրապետությունից: Նրանցից 4000-ը հունվարի 18-ին արդեն հասել էին Երեւան, 5000-ը՝ սպասում էին Կրասնովոդսկում: Հայաստանում նրանց տեղավորման բավականին սուր պրոբլեմ էր ստեղծվել: Նախորդ շրջանում եկած ավելի քան 230.000 բռնագաղթվածներից 98 հազարը դեռ չէին տեղավորվել: Վիճակը բարդանում էր հատկապես նրանով, որ Բաքվից բռնագաղթվածները կտրականապես հրաժարվում էին բնակություն հաստատել Հայաստանի գյուղական շրջաններում, իսկ Երեւանում հնարավորությունները սուղ էին:

Ստեղծված չափազանց վտանգավոր իրավիճակին համարժեք քայլերի ձեռնարկումը Հայաստանում դարձել էր անխուսափելի: Բաքվում եւ

[26] ***Арутюнян В.Б.***, *События в Нагорном Карабахе, Хроника, часть 3, с, 26.*
[27] *Տե՛ս «Известия», 18,01,1990.*

Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերում կատարված բռնարարքների հետ կապված՝ ՀԽՍՀ դատախազությունը ստեղծեց հատուկ քննչական խումբ: Այդպիսի խմբեր ստեղծվեցին նաեւ բոլոր շրջանների, քաղաքների դատախազություններում, օդանավակայաններում եւ երկաթուղային կայարանում: Մոսկվայից Երեւան ժամանեցին ԽՄԿԿ ԿԿ-ի քաղբյուրոյի անդամ Ն. Սլյունկովը եւ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ի. Սիլաեւը, Բաքու մեկնեցին Գերագույն խորհրդի Միությունների խորհրդի նախագահ Ե. Պրիմակովը եւ ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ա. Գիրենկոն:

Կենտրոնական իշխանությունների արձագանքը եւ միջոցառումները հերթական անգամ խիստ անհամարժեք էին իրավիճակին եւ բխում էին Լեռնային Ղարաբաղի խնդրում նրանց՝ բազմիցս արդեն ցուցադրած դիրքորոշումից: Հունվարի 15-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի դիմումի հիման վրա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն արտակարգ դրություն հայտարարեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում եւ նրան հարակից շրջաններում[28]: Այդ շրջանների մեջ էր մտնում նաեւ Հայաստանի Գորիսի շրջանը, որտեղ որեւէ միջադեպ չէր գրանցվել, եւ դրա անհրաժեշտությունը բացարձակապես չկար: Արտակարգ դրությունը ուշացումով տարածվում էր նաեւ խորհրդա-իրանական սահմանի երկայնքով, որը, սակայն արդեն լրիվ ավերված էր: Եւ ընդհակառակը, արտակարգ դրություն չէր հայտարարվում Բաքվում, որտեղ կազմալուծված էին իշխանության մարմինները, տեղի էին ունենում ամենաողբերգական իրադարձությունները՝ հայերի զանգվածային ջարդ եւ բռնագաղթ:

Արտակարգ դրության հրամանագիրը, փաստորեն, այլ բան չէր, քան նոյեմբերի 28-ի որոշման տրամաբանական շարունակությունը, եւ պետք է ծառայեր որպես միջոց՝ հասնելու համար այդ որոշման իրական նպատակի իրագործմանը: Հրամանագրում ընդհանուր գծերով նկարագրվում էին Ադրբեջանում տիրող իրավիճակը եւ ապօրինությունները, բայց դրանց պատասխանատվությունը հավասարապես դրվում էր նաեւ Հայաստանի վրա: Ավելին, որպես ազգամիջյան հարաբերություններում իրավիճակի սրմանը նպաստող հանգամանք՝ հատուկ շեշտվում էին «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած՝ ԽՍՀՄ Սահմանադրությանը չհամապատասխանող ակտերը»: Չնայած արդեն հայտնի էր Բաքվում ծայր առած ու շարունակվող բռնությունների ու ջարդերի մասին, այնուամենայնիվ, հրամանագրում դա, ըստ էության,

[28] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 40:*

թաքցվում էր, ինչն այդ պահին, փաստորեն, այլ բան չէր, քան նույն այդ բռնությունների եւ ջարդերի քաջալերում:

Արտակարգ դրության հրամանագրի, թերեւս, ամենավտանգավոր կետը հետեւյալն էր. «Սահմանափակել քաղաքացիների մեկնումն ու ժամանումը, բնակության համար վտանգավոր շրջաններից ժամանակավորապես արտաբնակեցնել քաղաքացիներին... տվյալ վայրի բնակիչներ չհանդիսացող քաղաքացիներին պարտավորեցնել հեռանալ այդ վայրից»: Սա, նախ, նշանակում էր կանխել շրջափակումների մեջ գտնվող եւ հարձակումների թիրախ դարձած Լեռնային Ղարաբաղին, Շահումյանի շրջանին եւ Գետաշենի ենթաշրջանին Հայաստանից նյութական, բարոյական, պաշտպանական որեւէ օգնության ցուցաբերումը: Երկրորդ՝ արտակարգ իրավիճակը, կարծես թե, պետք է հաստատվեր վերացնելու եւ կանխելու համար բնակիչների եւ բնակավայրերի վտանգվածությունը: Մինչդեռ, «բնակության համար վտանգավոր շրջաններից բնակչության ժամանակավոր արտաբնակեցման» պահանջն, ըստ էության, լրացնում էր առաջինին եւ մատնում ողջ ծրագրի իրական նպատակը: Պլանն, ակնհայտորեն, այսպիսին էր. ադրբեջանական հարձակումները «վտանգավոր իրավիճակ» ստեղծեին հայկական բնակավայրերում, իսկ խորհրդային զորքերը ապահովեին նրանց բնակիչների «արտաբնակեցումը», այսինքն՝ բռնագաղթը: Եւ դա կարող էր իրականացվել ոչ միայն Գետաշենի ենթաշրջանի եւ Շահումյանի շրջանի գյուղերում, այլեւ ամբողջ Լեռնային Ղարաբաղում: Հետագայում հենց այս ծրագրի իրականացմամբ էլ դատարկվեց Գետաշենի ենթաշրջանը:

Ադրբեջանի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղում եւ հարակից շրջաններում հայտարարված արտակարգ իրավիճակն այն միջոցն էր, որով պետք է ապահովվեր հայաբնակ շրջանների մեկուսացումը, նրանց զրկեր որեւէ օգնությունից, ինքնապաշտպանության հնարավորությունից, եւ որպես միակ ելք՝ մնար արտագաղթը: Ընդ որում՝ արտակարգ իրավիճակը, հայտարարված լինելով առանց այն կանոնակարգող համապատասխան օրենքի, հիանալի պայմաններ էր ստեղծում ամեն տեսակի կամայականությունների համար[29]:

[29] *ԽՍՀՄ Գեն նախագահության այս հրամանագրին «Հայք» թերթում (28.01.1990) մանրամասն անդրադարձավ Լեւոն Տեր-Պետրոսյանը «Մոսկվան այլընտրանք չունի» վերնագրով հոդվածով (Տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 69-74:*

Բաքվում դեռեւս ընթացող հայկական ջարդերի, կողոպուտի եւ հայ բնակչության զանգվածային վտարման առիթով կենտրոնական իշխանությունների ցավակցական հայտարարությունն անգամ շատ հեռու էր այդպիսին լինելուց: Դա վերաբերում էր «վերջին օրերին Բաքվում, Ադրբեջանի մի քանի այլ բնակավայրերում, ինչպես նաեւ Հայաստանի մի շարք շրջաններում կատարված ողբերգական իրադարձություններին...», որոնց ընթացքում «արյուն հոսեց, կան մարդկային զոհեր հայ, ադրբեջանցի եւ այլ ազգություններից»[30]: Այդ օրերին Հայաստանում, իհարկե, ողբերգական որեւէ դեպք տեղի չէր ունեցել, եւ չէր զոհվել որեւէ ադրբեջանցի: Իսկ այն, ինչ տեղի էր ունենում Բաքվում, իր մասշտաբներով այնքան մեծ էր, այնքան արտառոց ու ողբերգական, որ պետք է կենտրոնական իշխանությունների համար արձագանքի առանձին «թեմա» դառնար: Սակայն Շարժման առաջին իսկ օրերից Կենտրոնի որդեգրած հավասարեցման ձգտումը հաճախ, եւ մասնավորապես՝ այս դեպքում, գերազանցում էր անմտության ու ցինիզմի ամեն մի սահման: Հազիվ թե դրա հեղինակները չէին հասկանում, որ նման արձագանքը կողմերից մեկի համար՝ գրգռիչ, մյուսի համար՝ խրախուսող ազդակ կարող է լինել:

Հանդուրժողականությունը, որ ցուցաբերվում էր Ադրբեջանի Ժողճակատի գործողությունների նկատմամբ, ըստ երեւույթին՝ ճիշտ չհասկացվեց վերջինիս կողմից, որքան էլ այդ մասին նրան հստակ ասվել էր: Այդ հանդուրժողականությունը պետք է գործեր այնքան ժամանակ, քանի դեռ Ժողճակատի գործողություններն ուղղված էին հայ բնակչության դեմ, եւ քանի դեռ հույս կար այն ուղղորդել Ղարաբաղի հարցը բռնագաղթի միջոցով «լուծելուն»: Սակայն Բաքվի հայ բնակչության նկատմամբ բռնություններից, ջարդերից եւ նրանց դուրս քշելուց հետո, ոգեւորված Ժողճակատն անմիջապես անցավ, մի կողմից՝ ռուս բնակչությանը քաղաքից արտաքսելու գործողությունների, մյուս կողմից՝ պարզապես իշխանությունը զավթելու փորձերի: Հունվարի 18-ին Ժողճակատը պաշտոնապես հայտարարեց, որ երկրում վերցրել է իշխանությունը[31]: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ հունվարի 19-ի դրությամբ նրանք հաջողությամբ կանխում էին զինվորական ստորաբաժանումների տեղաշարժերը, կանգնեցրել էին

[30] *«Известия», 19.01.1990.*

[31] *Տե՛ս Независимый Азербайджан: новые ориентиры, т. 1, Москва, 2000, с. 13.*

գնացքների, այդ թվում՝ նաեւ զինվորական, երթեւեկը[32]: Բազմահազարանոց հանրահավաքը պահանջում էր հանրապետության կառավարության հրաժարականը: Ադրբեջանի մի շարք քաղաքներում Ժողճակատը գրավել էր իշխանությունը, իսկ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունը հունվարի 17-ին նույնիսկ ԽՍՀՄ կազմից դուրս գալու որոշում էր կայացրել: Միայն խորհրդային իշխանության տապալման անմիջական վտանգի հանդիման՝ կենտրոնական իշխանությունը ստիպված էր միջամտել: Համապատասխան հրամանագրով հունվարի 20-ից Բաքվում արտակարգ դրություն հայտարարվեց, եւ այնտեղ զորքեր մտցվեցին: Ընդ որում՝ որպես այս քայլի հիմնավորում նշվում էր միայն մի բան՝ «օրինականորեն գործող պետական մարմիններին իշխանությունից հեռացնելու ծայրահեղական ուժերի հանցավոր փորձերը», իսկ հայկական ջարդերի մասին ոչ մի խոսք չկար: Անհասկանալի, եթե ոչ՝ զավեշտալի էր նաեւ, թե ինչպես պետք է արտակարգ դրության գործողությունը տարածվեր հետին թվով՝ հունվարի 15-ից, ինչպես նախատեսում էր հրամանագիրը[33]: Նույն օրը՝ հունվարի 20-ի, տեղի ունեցավ նաեւ Ադրբեջանի ղեկավարության փոփոխություն. պաշտոնազրկված Աբդուռահման Վեզիրովին փոխարինեց Այազ Մութալիբովը:

Ըստ ադրբեջանական մի աղբյուրի՝ խորհրդային զորքերը քաղաք մտան ծանր տեխնիկայով՝ գրոհելով իրենց ճանապարհները փակող բազմաթիվ բարիկադները: Մարտերը շարունակվեցին նաեւ հունվարի 21-ին: Այդ օրվա դրությամբ ներկայացվում է 300 սպանված եւ հազար վիրավոր: Զինվորական աղբյուրները պնդում էին, որ սպանվածների թիվը չի անցնում վեց տասնյակից[34]: Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հունվարի 22-ին վերջնագիր ներկայացրեց՝ մինչեւ հունվարի 24-ը Բաքվից դուրս հանել զորքերը եւ վերացնել արտակարգ դրությունը՝ հակառակ դեպքում սպառնալով հանրապետությունում ԽՍՀՄ կազմից դուրս գալու հանրաքվե անցկացնել[35]: Բաքվի ծովային նավատորմի անձնակազմն իր հերթին սպառ-

[32] *Տե՛ս «Известия», 20.01.1990.*

[33] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 4, հոդվ. 57:*

[34] *Տե՛ս «Հայք», 28.01.1990: Ըստ ավելի հավաստի աղբյուրի (ԽՍՀՄ ԳԽ մի հանձնաժողովի տեղեկանք), հունվարի 20-ից մինչեւ փետրվարի 1-ը զոհվել է 143 մարդ, որից՝ 109 քաղաքացիական անձ, ներքին զորքերից՝ 9, բանակի զինվորներից՝ 21, ՆԳ աշխատակիցներից՝ 5 մարդ, վիրավորվել էր 494 մարդ (տե՛ս ՀՀԱԱԿ, թղթ. 08/10.02.90, թ. 19):*

[35] *Տե՛ս «Комсомольская Правда», 23.01.1990.*

նում էր հրկիզել նավերը: Լուրեր էին տարածվում, թե զորքերը դուրս չբերելու դեպքում կսկսվի ռուսալեզու բնակչության կոտորածը[36]:

Ե) Հունվարյան իրադարձությունների արձագանքները

Հերթական անգամ Ադրբեջանում ծավալված հակահայկական իրադարձությունների դեմ միջազգային հակազդեցության հասնելու անհրաժեշտություն առաջացավ: Այդ նպատակին հասնելու միջոցառումներից մեկն էր Լեռնային Ղարաբաղի տարբեր մակարդակների 107 պատգամավորների ստորագրությամբ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի կառավարություններին Մոսկվայում նրանց դեսպանությունների միջոցով հղված՝ հունվարի 26-ի դիմումը[37]: Միջազգային արձագանքը տեղի ունեցող բռնությունների եւ Կենտրոնի գործողությունների նկատմամբ չափավոր էր եւ զգուշավոր: Կենտրոնական լրատվամիջոցները ներկայացնում են, մասնավորապես, այնպիսի արձագանքներ, որոնք չեզոք են կամ «ըմբռնումով» են մոտենում Մոսկվայի ձեռնարկած միջոցառումներին: ԱՄՆ Սպիտակ տան ներկայացուցիչը, համարելով հանդերձ, որ իրավիճակը Ադրբեջանում եւ Հայաստանում չափազանց բարդ է՝ «գիտակցում է կարգուկանոնի վերականգնման անհրաժեշտությունը», ճանաչում ամեն մի պետության՝ իր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու իրավունքը եւ հույս հայտնում, որ դա կարվի ուժի նվազագույն գործադրմամբ: Իր անհանգստությունն էր հայտնում Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ խնդրի լուծումը տեսնելով ժողովրդի կարծիքը հաշվի առնելու հիման վրա հարցի խաղաղ կարգավորման մեջ: Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հայտարարում էր, որ Թուրքիան դիմել է Խորհրդային Միության հետ իր սահմանների անվտանգությունն ամրապնդելու միջոցառումների: Նա տեղի ունեցող իրադարձությունները համարում էր «ԽՍՀՄ ներքին գործ»[38]:

Կային նաեւ այլ բնույթի միջազգային արձագանքներ եւ գնահատականներ: Բաքվում տեղի ունեցող բարբարոսությունների մասին տեղեկությունները Շարժման ջանքերով տարածվեցին աշխարհով մեկ: Միջազգային հանրությանը կատարվող իրադարձություններին տեղյակ պահելու եւ

[36] *Տե՛ս «Известия», 23.01.1990.*

[37] *Տե՛ս* ***Арутюнян В.Б.****, События в Нагорном Карабахе, Хроника, часть 3, с. 127-129.*

[38] *Տե՛ս «Известия», 23.01.1990.*

անհրաժեշտ արձագանքներ ապահովելու գործում Շարժմանը մեծապես շարունակում էր օգնել «Հայ-ֆրանսիական համերաշխություն» կազմակերպությունը: Ամերիկյան մի շարք սենատորների անունից բողոքի դիմում հղվեց Մ. Գորբաչովի հասցեով, որտեղ, մասնավորապես, շեշտվում էր, թե այն, ինչ տեղի է ունենում Ադրբեջանում, «ապացուցում եւ հաստատում է Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման անհրաժեշտությունը»[39]:

Պրահայում Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի գլխավորությամբ տեղի ունեցած՝ Արեւելյան Եւրոպայի երկրների մարդու իրավունքների լիգաների համաժողովի ընդունած բանաձեւը արձանագրում էր. «Բաքվի հայերի ջարդերն ու հալածանքները մարտահրավեր են մարդկային խղճին, ԼՂԻՄ-ին կից հայկական գյուղերի վրա շարունակական հարձակումները հղի են բնակչության ֆիզիկական բնաջնջման վտանգով...»: Համաժողովը խստորեն դատապարտում էր Բաքվի հայկական ջարդերը, հաստատակամորեն պահանջում էր, որ խորհրդային իշխանությունն անհապաղ ապահովի Ադրբեջանի եւ ԼՂԻՄ-ի հայերի անվտանգությունը, վերջ դնի Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի շրջափակմանը, առաջարկում էր խորհրդային իշխանությանը ԼՂԻՄ-ի հարցի քաղաքական ժողովրդավարական լուծում գտնել՝ տեղի բնակչության կամքին համապատասխան: Համաժողովը նաեւ որոշեց դիտորդների պատվիրակություն ուղարկել Հայաստանի, Ադրբեջանի հանրապետություններ եւ ԼՂԻՄ[40]: Նույն հարցը Ժնեւում քննարկում է նաեւ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովը՝ լսելով «Հայերի զանգվածային ջարդերը Ադրբեջանում եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը» զեկույցը: Ընդունված որոշմամբ, որպես հանգուցալուծում՝ առաջարկվում էր մարզը հանել Ադրբեջանի իրավասությունից եւ փոխել նրա կարգավիճակը[41]:

Եւրոպական խորհրդարանը հունվարի 18-ին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մասին միաձայն հերթական բանաձեւն էր ընդունել: Բանաձեւը խիստ քննադատում էր բռնությունների այն ուղին, որով գնում էր Ադրբեջանը: Այն Եւրոպական Ընկերակցության Հանձնաժողովի 12 երկրներին կոչ էր անում ճնշում գործադրել ԽՍՀՄ կառավարության վրա՝ Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի շրջափակումը դադարեցնելու նպատակով[42]: Եւրոպական Խորհրդարանի պատգամավորները պահանջում էին «հակահայկական ջարդերի մասին լիակատար տեղեկատվություն», դատապարտում էին ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ձգձգումը, ինչպես նաեւ Հատուկ կառավարման կոմիտեն լուծարելու՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը: Անհանգստություն էր հայտնվում Իրանից Ադրբեջան զենք տեղափոխելու մասին տարածված հաղորդագրությունների առիթով եւ կոչ էր արվում Հայաստանի եւ Ադրբեջանի հարեւան երկրներին՝ ձեռնպահ մնալ իրադարձություններին որեւէ միջամտությունից[43]:

Կատարված դեպքերին եւ ծավալվող իրադարձություններին համահունչ՝ շատ ավելի խիստ էր ռուսական ժողովրդավարների «Ապրիլ» շարժման եւ «Մոսկովսկայա տրիբունա» կազմակերպության ընդունած համատեղ դիմումը՝ ուղղված երկրի ղեկավարությանը, հասարակայնությանը եւ զանգվածային լրատվության միջոցներին: Բաքվում տեղի ունեցած ոճրագործություններն այստեղ հատակ բնորոշվում էր որպես ցեղասպանություն: Դա համարվում է հետեւանքն այն բանի, որ ժամանակին Սումգայիթում տեղի ունեցածը չորակվեց որպես այդպիսին, եւ մեղավորները համապատասխան պատիժ չստացան: Անհրաժեշտ էր համարվում՝ «ի հայտ բերել եւ պատասխանատվության ենթարկել ջարդերի բոլոր մասնակիցնե-

---

39 *ԱՄՆ-ի հինգ սենատորների (Փիթ Վիլսոն, Փոլ Սայմոն, Լարի Պրեսլեր, Ջոն Քերրի, Կլեյբորն Պել)՝ Գորբաչովին հղված նամակում, մասնավորապես, նշվում էր. «Ադրբեջանում բռնությունների սարսափելի պոռթկումը ապացուցում եւ հաստատում է Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորումը ապահովելու անհրաժեշտությունը: 70 տարվա ընթացքում ադրբեջանական իշխանությունները հաջողության են հասել միայն Ղարաբաղի եւ Հայաստանի մշակութային կապերին արգելք հանդիսանալու, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվող տնտեսական խտրականության ապարեզում, որը բնակչության 80 տոկոսն է կազմում: Մենք, այսպիսով, հաստատակամորեն խնդրում ենք Ձեզ լուծել այս ողբերգությունն այնպես, որ մարդիկ Լեռնային Ղարաբաղում ազատորեն կարողանան ընտրել իրենց քաղաքական եւ մշակութային ճակատագիրը» («Հայք», 28.01.1990):*

40 *Տե՛ս «Հայք», 28.01.1990:*

41 *Տե՛ս նույն տեղում:*

42 *Ադրբեջանի կողմից Հայաստանի եւ ԼՂ-ի շրջափակման մասին տե՛ս* **Մարգսյան Ա.,** *Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 458-466, ինչպես նաեւ Հարութ Ուլոյանի՝ 1988-1994թթ. Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումներին վերաբերող ընդարձակ ու շահեկան հոդվածը (***Ուլոյան Հ.,** *Հայաստանի շրջափակումը. քարոզչական ստի հետքերով, մաս 1, «iLur.am.», 10.01.2020 http://www.ilur.am/news/view/79708.html, մաս 2, «iLur.am.», 13.01.2020 http://www.ilur.am/news/view/79738.html):*

43 *ՀՀԱՆԱ, թղթ. 15/18.01.90: Տե՛ս նաեւ «Հայք», 11.02.1990:*

ին ու ղեկավարներին, հրապարակայնորեն դատապարտել Բաքվի ջարդերը՝ բնորոշելով այն որպես ցեղասպանություն, ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ Հայաստանի շրջափակումը վերացնելու համար, փախստականներին օգնելու համար ստեղծել կառավարական հանձնաժողով, գումարել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան՝ ընդունելու համար հատուկ հրամանագիր, որը պետք է դաժան պատժամիջոց նախատեսի՝ ցեղասպանության ցանկացած դրսեւորման, այդ թվում նաեւ՝ հակազգային քարոզչության, որեւէ ազգի հասցեին արվող վիրավորական եւ մեղադրական գործողությունները պատժելու համար»[44]: Նույնպիսի դատապարտող մի հայտարարությամբ հանդես եկավ «Ժողովրդավարական Ռուսաստանից» ՌՍՖՍՀ-ի ժողովրդական պատգամավորության թեկնածուների միավորման հիմնադիր կոնֆերանսը: Ամենասուր գնահատականներն ու որակումներն ուղղված էին ինչպես կենտրոնական իշխանությանը՝ նրա հանցավոր անգործության համար, այնպես էլ ջարդերի կազմակերպիչներին: Այն ԽՍՀՄ իշխանություններից պահանջում էր այդ առիթով սգո օր հայտարարել, վերացնել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, Գերագույն խորհրդի հանձնաժողով կազմել կատարվածն ուսումնասիրելու համար, պատժել կազմակերպիչներին եւ իրականացնողներին: Առաջարկվում էր Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծել ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքից ելնելով, իսկ եթե սեփական ուժերով ի վիճակի չէ լուծել հայ-ադրբեջանական հակամարտությունը, ապա այն կարգավորելու խնդրանքով դիմել ՄԱԿ-ի միջնորդությանը, քանի որ այդ հակամարտությունն արդեն միջազգային բնույթ է ձեռք բերել[45]:

Բավականին լայն արձագանք գտավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի անունից աշխարհի գիտնականներին արված մի կոչը, որին արձագանքեցին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Բելգիայից, Շվեդիայից, Ավստրիայից, Բուլղարիայից, ԽՍՀՄ մի շարք հանրապետություններից՝ Վրաստանից, Լատվիայից, Լիտվայից, Մոլդովայից եւ այն[46]:

Իրադարձություններին արձագանքեց նաեւ հայկական Սփյուռքը: Հայկական մի պատվիրակություն այս խնդրով հանդիպում ունեցավ Ֆրանսիայի խորհրդարանի նախագահ Լորան Ֆաբիուսի հետ: ԱՄՆ-ի հայությունը դիմեց պրեզիդենտ Բուշին եւ պետական քարտուղար Բեյքե-

[44] *«Հայք», 11.02.1990:*

[45] *ՏԵ՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 15/21.09.90:*

[46] *ՏԵ՛ս «Խորհրդային Հայաստան», 03.02.1990:*

րին՝ պահանջելով միջամտել՝ ջարդերը կանխելու, հայ բնակչության անվտանգությունն ապահովելու եւ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը պաշտպանելու համար: Բողոքի ցույցեր կազմակերպվեցին Վաշինգտոնում ԽՍՀՄ դեսպանատան առջեւ եւ այլն:

Այսօրինակ արձագանքները, սակայն, առաջացան Բաքվում կատարված ջարդերի եւ բռնագաղթի առիթով միայն: Բոլորովին այլ էր Սփյուռքի կազմակերպությունների վերաբերմունքը ԼՂԻՄ-ում եւ հարակից շրջաններում (այդ թվում նաեւ Հայաստանի Գորիսի շրջանում) արտակարգ իրավիճակ հայտարարելու՝ Մոսկվայի որոշմանը: Մի որոշում, որը բացահայտ ուղղված էր Ղարաբաղյան շարժման դեմ, նպատակ ուներ ամբողջովին կտրել մարզը Հայաստանի որեւէ օգնությունից եւ օժանդակությունից, պայմաններ ստեղծել նրա բնակչության բռնի տեղահանման համար: Իր հերթական զեկուցագրում Հայաստանի ՊԱԿ-ի նախագահը, «ըստ ստացված տեղեկությունների»՝ ներկայացնում է հետեւյալը. Ռամկավար եւ Դաշնակցություն կուսակցությունների ներկայացուցիչները գոհունակությամբ էին ընդունել արտակարգ իրավիճակի հայտարարման հրամանագիրը: Նրանք օրինաչափ են համարում ռազմական ուժի օգտագործումը, որպես արյունահեղության կանխման միակ հնարավոր միջոց, եւ համոզված են, որ այդ միջոցին Կենտրոնը պետք է դիմեր ավելի վաղ: Համարելով, որ քաղաքացիական իշխանությունները Հայաստանում եւ Ադրբեջանում կորցրել են վերահսկողությունը իրադարձությունների վրա, նրանք համարում են, որ բանակի վրա մեծ պատասխանատվություն է ընկնում, եւ նա պետք է ստեղծի այդ շրջանները ղեկավարող «զինվորական ադմինիստրացիա»: Կուսակցությունները վախեցած էին Ադրբեջանում ի հայտ եկած «պանիսլամական տրամադրություններից», ուստիեւ շեշտում էին «Հայաստանի պատմական միասնության կարեւորությունը Ռուսաստանի եւ դաշինքը Վրաստանի հետ՝ ԽՍՀՄ շրջանակներում»: Նրանք պատրաստվում էին Ղարաբաղում արտակարգ իրավիճակ հայտարարելու առիթով Մ. Գորբաչովին դիմում հղել, արտահայտել իրենց հավանությունը Ադրբեջան եւ Հայաստան զորք մտցնելու միջոցառմանը, ինչպես նաեւ առաջարկել Ղարաբաղում նախագահական կառավարում մտցնել[47]:

Դժվար չէ նկատել, որ այս կուսակցությունների գնահատականները եւ դիրքորոշումները տրամագծորեն հակադիր էին Շարժման՝ Հայաստանում եւ Ղարաբաղում տարածված պատկերացումներին եւ գնահատա-

[47] *ՏԵ՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 19-20:*

կաններին: Դրանք, օբյեկտիվորեն հակադիր լինելով նաեւ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի շահերին, Մոսկվայի համար, ըստ էության, ավելի խրախուսական էին, քան դրսից եկած պաշտոնական կամ ոչ պաշտոնական որեւէ արձագանք: Պատահական չէ, որ այս ամենը ՊԱԿ-ի նախագահը ներկայացնում է որպես դրական երեւույթ՝ համարելով, որ այն «տեղավորվում է» կենտրոնական կառավարության միջոցառումների մեջ:

Բայց սա միայն «կուսակցական» Սփյուռքի գնահատականն ու արձագանքն էր, ինչի մասին նրանք գուցե բարձրաձայն չէին էլ խոսում կամ բոլորովին այլ բան էին ասում[48]: Նույն փաստաթղթում ՊԱԿ-ի նախագահը ներկայացնում է նաեւ Սփյուռքից իր ունեցած «անհանգստացնող» տեղեկատվությունը. «Սրա հետ միասին հայ համայնքի առանձին ներկայացուցիչներ արտահայտվում են Հայաստանի պայքարող բնակչությանը օգնություն ցուցաբերելու համար վճռական միջոցների դիմելու օգտին: Քննարկվում են արտասահմանում բողոքի ակցիաներ կազմակերպելու, Հայաստան զենք եւ կամավորներ ուղարկելու առաջարկներ»: Ընդ որում՝ այսպիսի տրամադրություններն արտահայտվում են երիտասարդության եւ Հայաստանից վերջին շրջանում արտագաղթածների շրջանում, ինչը, սակայն, «քննադատաբար է ընդունվում հայ համայնքի հիմնական մասի կողմից»[49]:

զ) Ճնշումների հետագա սաստկացումը, Ղարաբաղն արտակարգ դրության պայմաններում

Ստեփանակերտի՝ հունվարի 9-ի միջադեպը ցույց տվեց, որ Լեռնային Ղարաբաղում դժվար կամ անհնար է լինելու ԽՍՀՄ ԳԽ-ի նոյեմբերի 28-ի որոշման իրագործումը, մասնավորապես՝ Բաքվում ձեւավորված «Կազմկոմիտեի» գործունեությունը: Թողնել, որ հարցը վճռվի հակամարտության խորացման եւ զինված բախումների ծավալման միջոցով՝ անցանկալի էր. ինքնահոսի թողնված իրադարձությունները միշտ չէ, որ ընթանում էին Մոսկվայի համար ցանկալի հունով: Հայկական բնակավայրերի առաջին հաջող ինքնապաշտպանական մարտերը, Հայաստանից օգնություն ստանալու չբացառված հնարավորությունը կարող էին իրադարձություններին չնախատեսված ընթացք տալ եւ Կենտրոնի համար անցանկալի արդյունքների հանգեցնել, խափանել նախատեսված բռնագաղթի՝ կենտրոնական եւ ադրբեջանական ծրագրի իրականացումը: Լեռնային Ղարաբաղում արտակարգ իրավիճակ մտցվեց այս խոչընդոտները վերացնելու համար: Իսկ ծրագիրը հստակ էր. ապահովել նոյեմբերի 28-ի որոշման կատարումը՝ Ադրբեջանի լիակատար իշխանության վերահաստատումը Լեռնային Ղարաբաղում: Դրա համար անհրաժեշտ էր՝ զինաթափել մարզի եւ հարակից հայկական բնակավայրերի բնակչությանը, թույլ չտալ Հայաստանի հետ որեւէ կապ, մասնավորապես՝ կանխել այստեղ շտապող կամավորական ջոկատների մուտքը, իսկ արդեն եկածներին էլ դուրս քշել: Այդ դեպքում, զրկվելով ինքնապաշտպանության համար Հայաստանից ստացվող օգնության հնարավորություններից՝ Ղարաբաղի հայ բնակչության համար կմնար երկու ելք: Առաջին՝ դադարեցնել պայքարը, համակերպվել մինչ այդ ունեցած բոլոր քաղաքական ձեռքբերումների կորստյան եւ Ադրբեջանի վերահաստատված լիակատար իշխանության հետ, ինչին կհաջորդեր անխուսափելի հուսալքություն, ծայր կառներ եւ կարճ ժամանակում կիրականանար ամբողջական արտագաղթ: Երկրորդ՝ չհամակերպվել բռնի միջոցներով իրեն պարտադրված վիճակի հետ եւ շարունակել պայքարը հնարավոր բոլոր միջոցներով: Այս դեպքում էլ արտակարգ ռեժիմ ապահովող ուժերը (խորհրդային բանակը), ապահովելով տեղի հայ բնակչության զինաթափումը եւ փակելով Հայաստանից օգնություն ստանալու հնարավորությունը, միաժամանակ կարող էր թույլ տալ ադրբեջանական զինված խմբավորումների հարձակումներ: Իսկ դրա հետեւանքով վտանգված բնակավայրերից, ինչպես եւ նախատեսվում էր հրամանագրով, կիրականացվեր բնակչության «ժամանակավոր վերաբնակեցում», որ այլ բան չէր լինելու, քան սովորական բռնագաղթ: Պարզապես հերթով «վտանգված» վիճակում կարող էին հայտնվել եւ «վերաբնակեցվել» բոլոր հայկական բնակավայրերը: Նման ծրագրի իրականացումը խափանելը կախված էր լինելու Ղարաբաղի բնակչության եւ Հայաստանում Ղարաբաղյան շարժման համառությունից, հաստատակամությունից եւ գրագետ քաղաքական քայլերից:

Զնայած կոտորածներն ու վայրագությունները տեղի էին ունենում Բաքվում, Ադրբեջանի ԳԽ-ի միջնորդության հիման վրա ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հունվարի 15-ից, ինչպես ասվեց, արտակարգ դրություն էր մտցրել Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաեւ ՀԽՍՀ-ի Գորիսի շրջանում: Այս հրամանագրով եւ դրա հիման վրա հունվարի 18-ին արտակարգ իրավիճակի շրջանի պարետ, գեներալ Կոսոլապովի եւ վերջինիս շուտով

[48] *Տե՛ս, օրինակ «Գրոշակ», 14.02.1990, էջ 2:*

[49] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1. ց. 87, գ.47, թ. 19-20:*

փոխարինած գեներալ Վ. Սաֆոնովի հրամաններով հստակ ուրվագծվում է դրված նպատակին հասնելու մանրամասն մեխանիզմը: Դրանցում հետապնդվում էր ոչ թե իրավիճակը վերահսկելու, այլ այն քաղաքական խնդիրները լուծելու նպատակ, որ Կենտրոնը դրել էր իր առջեւ: Արգելվում էին գործադուլները, ժողովները, հանրահավաքները, երթերը, ցույցերը, թատերական, սպորտային եւ այլ զանգվածային միջոցառումները, գրաքննություն էր հաստատվում զանգվածային տեղեկատվության միջոցների վրա: Ցրվում էին «Միացում» կազմակերպությունը, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը, բոլոր ոչ պաշտոնական կազմակերպությունները: Արգելվում էր նոր հասարակական եւ ոչ պաշտոնական կազմակերպությունների հիմնումը:

Մարզը ենթարկվեց խուլ տեղեկատվական շրջափակման. հունվարի 20-ից այն զրկվեց դրսի աշխարհի հետ հեռախոսային կապից, անջատվեց Ստեփանակերտի կապը շրջանների հետ, խզվեց նաեւ ռադիոհեռագրային կապը: Մարզային հեռուստատեսությանը եթեր չէր տրվում, փակ էր հայաստանյան հեռուստատեսության կապուղին, շուտով փակվեց նաեւ կենտրոնական հեռուստատեսության ծրագրերը դիտելու հնարավորությունը եւ այլն[50]: Պարետ Սաֆոնովի հրամանով «Խորհրդային Ղարաբաղ» թերթը պետք է ենթարկվեր պարետատանը[51], տպագրվեր միայն Ստեփանակերտում, տարածվեր միայն մարզի սահմաններում: Արգելվում էր թերթի համարների կամ շարվածքի դուրս բերումը մարզից:

Հայկական բնակավայրերը զրկվում էին ինքնապաշտպանության հնարավորությունից, մինչդեռ պահպանվում էր ադրբեջանական զինված խմբավորումների հարձակումների վտանգը: Դադարեցվում էր կամավոր ժողովրդական դրուժինաների եւ «ինքնապաշտպանության» պոստերի գործունեությունը: Բոլոր տեսակի օրինական եւ չգրանցված հրազենը, սառը զենքը եւ այլն, սահմանված կարճ ժամկետում (երկու-երեք օրում) բնակչությունը պարտավոր էր հանձնել, հակառակ դեպքում սպառնում էր վարչական կամ քրեական պատասխանատվություն: Խիստ սահմանափակվեց բնակչության տեղաշարժի հնարավորությունը, մտցվեց պարետային ժամ:

[50] ***Арутюнян В. Б.***, *События в Нагорном Карабахе, ч. 3, с.89-90.*

[51] *«Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1990թ. հունվարի 7-ից հրապարակվում էր որպես Ղարաբաղի Ազգային խորհրդի օրգան:*

Նախատեսվում էին անձնագրային ռեժիմի ստուգումներ: Տեղի գրանցում չունեցողներին պարտադրվում էր երեք օրվա ընթացքում հեռանալ արտակարգ իրավիճակի շրջանի տարածքից: Այս միջոցառումը, բնականաբար, ուղղված էր Հայաստանից եկած կամավորներին դուրս քշելուն եւ նոր եկողների մուտքը կանխելուն: Բոլոր բնակավայրերում պարբերաբար իրականացվող անձնագրային ռեժիմի ստուգումները, որ ավելի շատ օկուպացիոն բանակի գործողությունների էին նմանվում, ուղեկցվում էին բռնություններով, հաճախ՝ նաեւ թալանով: Այն ոչ միայն ինքնապաշտպանական հնարավորություններից զրկելուն էր նպատակաուղղված, այլեւ բնակչությանը ահաբեկելուն եւ հոգեբանորեն ջարդելուն:

Սաստկացավ քարոզչական տեռորը եւ հոգեբանական ճնշումը: Արդեն առաջին իսկ օրերից հստակ էր, որ կիրառվելու են երկակի ստանդարտներ, եւ արտակարգ իրավիճակի ռեժիմի պահանջները տարբեր չափերով եւ տարբեր խստությամբ են վերաբերվելու մարզի հայ եւ ադրբեջանցի բնակչությանը[52]: Այսպես, ի հեճուկս արտակարգ դրության՝ ադրբեջանցիները Շուշիում, Կուբաթլիում, Լաչինում ազատորեն հանրահավաքներ էին կազմակերպում, իսկ Շուշիի անօրինական հեռուստատեսությունը ոչ միայն գործում էր, այլեւ տեղեկություններ էր հաղորդում հանրահավաքներում հնչած ելույթների եւ կոչերի մասին: Ցուցադրվում էր, թե ինչպես են հանրահավաքի մասնակիցները Շուշիի քաղաքապետի կոչով երդվում «ամեն ինչ անել, որ ԼՂԻՄ-ում ոչ մի հայ չմնա»: Տեղեկատվական շրջափակման մեջ առնելով մարզը՝ հատուկ շրջանի պարետի եւ «Կազմկոմիտեի» անունից, ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով, իրական քարոզչական տեռոր էր իրականացվում հայ բնակչության նկատմամբ: Այսօրինակ երեւույթները,

[52] *1991թ. փետրվարին ԼՂԻՄ մարզգործկոմի կողմից կազմած մի տեղեկանք, բազմաթիվ տվյալների համեմատությամբ ակնհայտ ցույց է տալիս, որ արտակարգ դրությունը աշխատել է հօգուտ վիճակի ապակայունացման եւ ի վնաս հայ բնակչության: Այսպես, մինչեւ արտակարգ դրության ռեժիմի հաստատումը՝ նախորդ երկու տարվա ընթացքում սպանվել էր 6 մարդ՝ երեք ադրբեջանցի եւ երեք հայ, 1990թ. ընթացքում 58, որից՝ 41 հայ, 15 ադրբեջանցի եւ երկու զինծառայող: Կամ նախորդ երկու տարում հակամարտող կողմերը միմյանցից քշել էին 1230 գյուխ անասուն, իսկ միայն 1990-ի ընթացքում 5900 գյուխ, որից ավելի քան 4000 գյուխը ադրբեջանցիները քշել էին արդեն ավտոմատ զենքի օգտագործմամբ: 1990թ. արտակարգ դրության պայմաններում իրականացվել էր 160 օպերատիվ-զինվորական գործողություն, որից 156-ը՝ հայկական գյուղերում, եւ միայն 4-ը՝ ադրբեջանական (տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 08/15.02.919:*

զինվորական իշխանությունների բացահայտ խտրական քաղաքականությունը, բնականաբար, պետք է ոգեւորեր ադրբեջանցիներին, մյուս կողմից՝ նպատակ ուներ հոգեբանորեն ճնշել, ընկճել հայերին՝ մարզը լքելը թողնելով որպես միակ ելք: Քիչ ավելի ուշ այդ մասին ասվում էր նաեւ բացահայտ. ապրիլի 10-ից սկսած, ամեն օր, օրական մի քանի անգամ կրկնում էին, որ Ղարաբաղի հայերը կա՛մ պետք է ենթարկվեն Ադրբեջանին, կա՛մ պետք է հեռանան Լեռնային Ղարաբաղից[53] :

Կենտրոնի իրական նպատակներն էին մատնում այլ ակնառու փաստեր: Այսպես՝ հունվարի 26-ին Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը եւ ներքին գործերի նախարար Վ. Բակատինը: Շահումյանի շրջան եւ Գետաշեն նրանց այցից անմիջապես հետո դադարեցվեց այդ շրջանների ուղղաթիռային կապը Հայաստանի հետ, որը տեղի բնակիչների համար դրսի աշխարհից սննդամթերք եւ բուժօգնություն ստանալու միակ ճանապարհն էր: Նույն այդ այցից հետո արգելվեց Հայաստանի հեռուստատեսային հաղորդումների սփռումը Լեռնային Ղարաբաղի տարածքում[54]: Շարժման մասնակիցների նկատմամբ սկսվեցին հալածանքներ եւ ձերբակալություններ[55]:

Հունվարի 28-ին Բաքվից Ստեփանակերտ ժամանեց նաեւ հայտնի «Կազմկոմիտեն»՝ Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի 2-րդ քարտուղար Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Դրա մեջ մտնում էին եւս յոթ հոգի՝ հինգ ադրբեջանցի եւ երկու ռուս: Որպես բողոքի նշան՝ նորից սկսվեցին գործադուլներ, պահանջելով, որ նրանք հեռանան Լեռնային Ղարաբաղից: Զինվորական իշխանությունների օգնությամբ, սակայն, «Կազմկոմիտեն» հաստատվեց Ստեփանակերտում: Մարզային կուսկոմիտեի եւ մարզխորհրդի աշխատակազմերը հեռացան իրենց շենքերից, քանի որ դրանց վրա բարձրացվեց Ադրբեջանի դրոշը, եւ հրաժարվեցին «Կազմկոմիտեի» հետ որեւէ համագործակցությունից ու շփումից: Նույն կերպ վարվեց նաեւ ամբողջ բնակչությունը:

---

[53] *Տե՛ս* ***Арутюнян В.Б.****, События в Нагорном Карабахе, часть 3, с. 236.*

[54] *Տե՛ս Նույն տեղում, էջ 129-130.*

[55] *Ընդամենը երկու շաբաթվա ընթացքում ղարաբաղյան գործիչներից տարբեր առիթներով ձերբակալվեցին Վլադիմիր Սարգսյանը, Արկադի Ղուկասյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռուլես Ադաջանյանը, Ռաշիդ Մանգասարյանը, Թուդիկ Ազարյանը, Վիգեն Բաբայանը, Ռաշիդ Բաղդասարյանը, Ավետիք Գրիգորյանը, Ռոբերտ Պետրոսյանը եւ ուրիշներ (Տե՛ս նույն տեղում, էջ 150):*

Է) Գետաշենի ենթաշրջանի գյուղերի դատարկումը

Լեռնային Ղարաբաղում եւ հարակից շրջաններում արտակարգ դրության ռեժիմը, որ պետք է ծառայեր որպես միջոց նախ՝ ԼՂԻՄ-ից դուրս գտնվող հայկական բնակավայրերից, ապա նաեւ մարզից հայ բնակչության տեղահանման համար, տարբեր չափերով էր վերաբերում հայերին եւ ադրբեջանցիներին: Գետաշենի ենթաշրջանի հայկական բնակավայրերի բնակչության բռնի տեղահանման փորձեր արվել էին նաեւ 1989թ. նոյեմբերին: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա՝ 1990թ. հունվարի առաջին կեսին, կատարված հարձակումները հաջողությամբ ետ էին մղվել, սակայն գյուղերը դեռեւս գտնվում էին ադրբեջանական զինված ջոկատների շրջափակման մեջ: Խորհրդային զինվորների թիվը հայկական գյուղերում չնայած ավելացվել էր, սակայն նրանք որեւէ կանխարգելիչ միջոցի չէին դիմում, չէին արձագանքում անգամ ադրբեջանցիների հրետակոծումներին: Հրամանատարությունը հայտնել էր, որ իրենք կպատասխանեն միայն անմիջական հարձակման դեպքում: Ավելին, այստեղ գալով առանց պարենամթերքի եւ վառելանյութի պաշարների՝ խորհրդային զինվորներն այդ ամենը հափշտակում էին գյուղերից, որտեղ, Հայաստանի հետ օդային կապի խզման պատճառով, պաշարները խիստ սահմանափակ էին: Նրանք, միաժամանակ, որպես «միջնորդ», բանակցությունների մեջ էին մտնում ադրբեջանցիների հետ, գյուղերը դատարկելու նրանց պահանջը փոխանցում հայերին եւ իրենց կողմից փորձում բնակիչներին համոզել դրա անհրաժեշտությունը:

Հունվարի վերջին օրերից, ԽՍՀՄ երկու ուժային նախարարների՝ պաշտպանության նախարար Դ. Յազովի եւ ՆԳ նախարար Վ. Բակատինի այցից հետո, այստեղ ոչ միայն դադարեցին ուղղաթիռային թռիչքները Հայաստանից, այլեւ զինվորականները սկսեցին զինաթափել հայկական գյուղերի բնակիչներին: Ճիշտ է՝ նման գործողություններ նրանք փորձեցին ձեռնարկել նաեւ հակառակ կողմում, սակայն հայ բնակչությանը բացահայտ զգուշացնում էին, որ նրանց վրա հարձակման դեպքում իրենք որեւէ բան չեն կարող անել: Փետրվարի 3-ին արդեն Ազատ եւ Կամո գյուղեր էին եկել Խանլարի իշխանությունների ու Ադրբեջանի Ժողճակատի ներկայացուցիչները եւ զինվորականների հետ միասին գյուղացիներից պահանջում էին մինչեւ փետրվարի 15-ը վաճառել տները եւ հեռանալ: Փաստը ստուգելու եւ համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու համար ՀՀՇ վարչության պահանջով ՀԽՍՀ ԳԽ-ը ստեղծեց

հատուկ մի խումբ, որի կազմի մեջ մտնում էին ԽՍՀՄ ժող. պատգամավոր, գեներալ-մայոր Մ. Սուրկովը, ՀԿԿ ԿԿ-ի բաժնի վարիչ Հայկ Օհանյանը, ՀՀՇ վարչության անդամներ Բաբկեն Արարքցյանը եւ Վազգեն Մանուկյանը: Պարզվեց, որ ստացված լուրերն, իրոք, համապատասխանում են իրականությանը[56]: Բնակչության վրա համատեղ այս ճնշումները շարունակվեցին մեկ ամիս: Հայաստանի ԳԽ նախագահությունը ընդարձակ հայտարարություն հրապարակեց այդ առիթով՝ կատարվածի պատասխանատվությունը դնելով կենտրոնական իշխանության վրա եւ պահանջելով զորքերն անհապաղ դուրս բերել հյուսիսային Արցախից[57]: Մարտի 8-ին Ազատ գյուղում մնացել էր երկու ընտանիք, իսկ Կամոյում՝ 12 մարդ: Երբ համապատասխան դիմումներից ու բողոքներից հետո սպասվում էր, որ ԽՍՀՄ դատախազությունից պետք է ստուգվի տների առքուվաճառքի օրինականությունը, բազմաթիվ բեռնատարներով այստեղ բերվեցին ադրբեջանցիների ընտանիքներ: Ջինվորականներն ամուր փակեցին Գետաշենի ճանապարհը, որպեսզի վերջինիս բնակիչները չկարողանան միջամտել, եւ թույլ տվեցին ադրբեջանցիներին զբաղեցնել դատարկված գյուղերը[58]:

Սա բռնի տեղահանման այն ծրագրի իրականացման մոդելն էր, որը Կենտրոնը նախատեսել էր Գետաշենի ենթաշրջանի, ապա Շահումյանի շրջանի եւ ողջ Լեռնային Ղարաբաղի համար: Հայոց համազգային շարժման վարչության հայտարարության մեջ այն գնահատվում էր որպես կայսրության ղեկավարության կողմից ծրագրված գործողություն, մեղադրանք էր ներկայացվում ՀԽՍՀ իշխանություններին, որոնք չկարողացան ժամանակին անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել դրա դեմ, մեղադրվում էին նաեւ հիշյալ գյուղերի բնակիչները, որոնք ոչ միայն ընկրկեցին դժվարությունների առջեւ, այլեւ հրաժարվեցին ժամանակին իրենց տները վաճառել Գետաշենի բնակիչներին, որոնք պատրաստակամություն էին հայտնել դրանք գնել եւ գյուղերը պաշտպանել[59]:

Կենտրոնական իշխանության բացահայտ կողմնապահ քաղաքականությունը, մասնավորաբար՝ արտակարգ իրավիճակի պահպանումը եւ զորքերի գործողությունները Լեռնային Ղարաբաղում, նպաստում էին հակառուսական տրամադրությունների առաջացմանը: Այդ մասին իր ան-

[56] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 07.02.1990:*

[57] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 5-6, հոդվ. 67:*

[58] *Տե՛ս «Հայք», 18.03.1990:*

[59] *Տե՛ս «Հայք», 18.03.1990:*

հանգստությունն է հայտնում ՀԿԿ ԿԿ-ի երկրորդ քարտուղար Օլեգ Լոբովը՝ մայիսի 25-ին Գորբաչովին հղած իր զեկուցագրում: Այդ միտումը կասեցնելու համար նա, մասնավորաբար, առաջարկում է կատարել 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման այն կետը, ըստ որի՝ ԼՂԻՄ-ում պետք է վերականգնվեին մարզային իշխանության մարմինների իրավասությունները[60]:

ը) Քաղաքական երկխոսության նախաձեռնություններ

Հայաստանի սահմանամերձ շրջանների, ԼՂԻՄ-ի եւ Հյուսիսային Արցախի բնակչության ինքնապաշտպանության եւ անվտանգության գործնական խնդիրներին առավելագույնս օժանդակելուն զուգահեռ, ՀՀՇ ղեկավարությունն օգտագործում էր բոլոր հնարավոր միջոցները՝ նույն խնդիրները լուծել հակամարտության խորացումը կասեցնելու, քաղաքական լուծումներ գտնելու միջոցով: Հետագայում հենց սա էր լինելու ՀՀՇ-ի քաղաքական ուղեգծի առանցքը ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում: Ջինված առճակատման տեսքով հակամարտության խորացումը կարող էր լինել այն հարմար պատրվակը, որը կենտրոնական իշխանությունները կարող էին օգտագործել ռազմական ուժով միջամտելու եւ ըստ իրենց շահերի լուծելու ոչ միայն առաջացած որոշակի խնդիրները, այլեւ կանխելու, խոչընդոտելու ժողովրդավարական ներքաղաքական զարգացումների, հանրապետությունների՝ դեպի ինքնիշխանություն եւ անկախություն տանող ընթացքը: Թերեւս այս առումով որոշակի հետեւությունների էր հանգել նաեւ Ադրբեջանի Ժողովրդական ճակատը՝ Մոսկվայի կողմից Բաքու զորք մտցնելուց հետո: Այսինքն՝ ԼՂԻՄ-ի հիմնախնդրի հարթությունից դուրս կար մի կետ, որտեղ երկու երկրների ժողովրդավարական շարժումները, ունենալով ընդհանուր շահեր եւ ընդհանուր հակառակորդ՝ ի դեմս Կենտրոնի, կարող էին ինչ-ինչ համաձայնությունների գալ նաեւ ազգամիջյան՝ օրեցօր շիկացող հարաբերությունները կարգավորելու հարցերում:

Քաղաքական երկխոսության փորձերից մեկը Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովրդավարական շարժումների ներկայացուցիչների միջեւ կազմակերպվեց Բալթյան խորհրդի միջնորդությամբ եւ նախաձեռնու-

[60] *Լոբովն առաջարկում է նաեւ վերացնել արտակարգ դրության ռեժիմը, բացել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը, բարձրացնել մարզի ստատուսը (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 35, թ. 22-24):*

թյամբ՝ փետրվարի առաջին օրերին: Վտանգ տեսնելով այսօրինակ շփումների մեջ՝ կենտրոնական լրատվամիջոցներն իսկույն խեղաթյուրված տեղեկատվություն տարածեցին, ըստ որի, իբր, հանդիպումը նախատեսված է հատուկ համաձայնեցված օրակարգով, որի մեջ տեղ չի գտել Ղարաբաղի խնդիրը: Իրականում Բալթյան խորհուրդն ընդամենը նախաձեռնել էր քաղաքական կոնսուլտացիաներ: Հրավերը ՀՀՇ վարչությունն ընդունել էր, իսկ կոնսուլտացիաների շրջանակներում Ադրբեջանի Ժողճակատի հետ հնարավոր հանդիպման եւ քննարկման համար, առաջին հերթին, առաջարկել էր հենց Լեռնային Ղարաբաղի հարցը. «ՀՀՇ վարչությունը չի բացառում բանակցությունների մասնակիցների կազմի, ժամանակի, տեղի, օրակարգի համաձայնեցման համար ԱԺՃ-ի ներկայացուցիչների հետ հանդիպման հնարավորությունը: Այս առումով մենք առաջարկում ենք այլ հարցերի թվում քննարկել ստեղծված իրավիճակի պատճառները, առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման հարցը: Ակնհայտ է բանակցություններին ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների մասնակցության անհրաժեշտությունը»[61]:

Ռիգայում հայկական կողմը ներկայացնում էին ՀՀՇ վարչության անդամներ Աշոտ Մանուչարյանը, Աշոտ Բլեյանը, Դավիթ Վարդանյանը եւ Համբարձում Գալստյանը: Հանդիպման ժամանակ քննարկվեցին պատանդների վերադարձման եւ բանտարկյալների տեղափոխման հարցերը, կայացվեց որոշում, որ երկու կողմերն էլ իրենց գործողությունները ծավալեն՝ առաջնորդվելով միջազգային իրավունքի սկզբունքներով: Ղարաբաղի հարցը որոշվեց քննարկել հաջորդ հանդիպումներում, որոնց պետք է մասնակցեին նաեւ ԼՂԻՄ ներկայացուցիչները: Ընդ որում՝ նախապես Ադրբեջանի Ժողովրդական ճակատի ներկայացուցիչները հայտարարել էին, որ հայկական ջարդերը կազմակերպել է Կենտրոնը, եւ իրենց կառույցները դրան անմասն են մնացել: Ռիգայի բանակցությունները անավարտ մնացին: Հենց այդ օրերին սկսվեց ադրբեջանական իշխանությունների, Ժողճակատի եւ զինվորականների համատեղ ճնշումը Գետաշենի ենթաշրջանի գյուղերի վրա՝ բացահայտ պահանջելով բնակչությունից շտապ վաճառել տները եւ մինչեւ փետրվարի 15-ը հեռանալ[62]: Ստանալով այս տեղեկություններ՝ ՀՀՇ վարչությունը հետ կանչեց իր պատվիրակությանը հետեւյալ հեռագրով.

«Իրադրության կտրուկ փոփոխության պատճառով, որ հետեւանք է զինվորականների, Խանլարի շրջանի ղեկավարության եւ Ադրբեջանի Ժողճակատի՝ Գետաշենի ենթաշրջանի Կամո եւ Ազատ գյուղերի հայ բնակչության բռնի տեղահանությանն ուղղված գործողությունների, ՀՀՇ վարչությունը հնարավոր չի համարում Ռիգայում համատեղ կոնսուլտացիաների շարունակումը ՀՀՇ-ի եւ Ադրբեջանի Ժողճակատի ներկայացուցիչների միջեւ, որ տեղի է ունենում Բալթյան խորհրդի նախաձեռնությամբ: Կոնսուլտացիաների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունները, այդ թվում նաեւ համատեղ կոմյունիկեն ՀՀՇ վարչությունը չի հաստատում եւ չեղյալ է հայտարարում: Համատեղ կոնսուլտացիաները եւ բանակցությունները հնարավոր են միայն նման գործողությունների բացառման պայմաններում»[63]:

Բալթյան խորհրդի անունից Լիտվայի սեյմի նախագահ Լանդսբերգիսը, Լատվիայի Ժողճակատի ղեկավար Իվանսը եւ Էստոնիայի Ժողճակատի նախագահ Սավիսաարը հատուկ հեռագրով ՀՀՇ վարչությանը եւ Ադրբեջանի Ժողճակատի վարչությանը ափսոսանք հայտնեցին բանակցությունների ընդհատման առիթով եւ պատրաստակամություն՝ ծագած խնդիրները լուծելուց հետո կազմակերպել այդ հանդիպումների շարունակությունը: Հասկանալի էր նաեւ Մերձբալթյան երկրների ժողճակատների մտահոգությունը: Նրանց այսօրինակ նախաձեռնությունն, անշուշտ, օբյեկտիվորեն օգտակար էր եւ տեղին՝ բուն հարցի համար: Սակայն Բալթյան խորհուրդն էլ այս հարցում ուներ իր շարժառիթները: Մերձբալթյան հանրապետությունների հիմնական խնդիրը անկախության ձեռքբերման հարցում Կենտրոնի դիմադրության հաղթահարումն էր: Ազգամիջյան լարվածության մեղմացումը Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովրդավարական շարժումներին հնարավորություն կտար ուժերը եւ ուշադրությունը կենտրոնացնել ավելի շատ նույն այդ խնդիրների վրա՝ դրանով իսկ մեծացնելով անկախության ձգտող հանրապետությունների ռեսուրսը եւ հզորացնելով ընդհանուր ճակատը:

[61] *«Երեկոյան Երեւան», 02.02.1990, տե՛ս նաեւ «Խորհրդային Հայաստան», 04.02.1990:*

[62] *Տե՛ս «Հայք», 11.02.1990:*

[63] *«Հայք», 11.02.1990:*

թ) Կենտրոնի սադրանքները Հայաստանում

Եթե նախորդ շրջանում Հայաստանի նկատմամբ ադրբեջանական զինված խմբերի սադրանքները սահմանափակվում էին անասնագողությամբ, զանազան մանր միջադեպերով, ապա այժմ նրանք ձեռնարկեցին առաջին բացահայտ հարձակումները հանրապետության սահմանամերձ բնակավայրերի վրա: Հունվարի 18-ին անակնկալ հարձակում սկսվեց Արարատի շրջանի Երասխավան գյուղի ուղղությամբ: Անմիջապես տեղ հասան եղած եւ հանպատրաստից կազմավորված աշխարհազորային ջոկատները: Որպես «Ղարաբաղ» կոմիտեի ներկայացուցիչ՝ Երասխավանում գործողությունները համակարգում էր Բաբկեն Արարքցյանը: Մեկ շաբաթ տեւած կռիվներից հետո հայկական ջոկատները, Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ, կարողացան ետ մղել հարձակումը[64]: Ավարտից հետո նմանօրինակ միջադեպերը կանխելու համար նախիջեւանյան կողմի հետ տեղի ունեցան հանդիպում եւ բանակցություններ, որոնց պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցում էին, ՀՀՇ-ի կողմից՝ Բաբկեն Արարքցյանը, խորհրդային բանակից՝ գեներալ Սուրկովը, եւ ՀԿԿ ԿԿ-ի ներկայացուցիչ Մարատ Սերոբյանը:

Այնուհետեւ նմանօրինակ հարձակումներ արձանագրվեցին Եղեգնաձորի, Վայքի, Մեղրիի Նոյեմբերյանի, Շամշադինի եւ մյուս սահմանամերձ շրջանների բնակավայրերի վրա: Երասխավանի ճակատամարտում հայ աշխարհազորայինները տվեցին առաջին զոհերը. Մովսես Գորգիսյան, Երվանդ Սաղումյան, Ռուբիկ Բազիկյան, Գեւորգ Ջեյնալյան:

Կենտրոնական իշխանություններն առիթ էին փնտրում նաեւ Հայաստանում ուժ գործադրելու, գրգռիչ գործողությունների դիմելու համար: Հերթական նման դեպքը տեղի ունեցավ հունվարի 28-ին Երեւանում: Դեսանտային զորքերի 30 զրահապատ մեքենաներ շրջապատեցին ՀԱԲ-ի («Հայոց ազգային բանակ» կոչվող ջոկատ) շենքը, սկսեցին անկանոն հրաձգություն, որի հետեւանքով եղավ մարդկային զոհ: Նպատակն, իբր, այստեղ գտնվող մի զրահամեքենա առգրավելն էր: Ընդ որում՝ գործողությունը կատարելու օրը Երեւանում էին գտնվում նույն ՊՆ նախարար Ցագովը եւ ՆԳ նախարար Բակատինը, որոնք կա՛մ նախապես տեղյակ էին եղել, կա՛մ իրենք էին հրամայել դիմելու նման կոպիտ գործողության: Ռազմական տեխնիկան եւ զենքն առգրավելու պարտականությունն ու իրավասությունը հանրապետության ներքին գործերի կամ պետական անվտանգության մարմինների անելիքն էր: Ըստ այդմ՝ բանակի ստորաբաժանման կատարած քայլը հակաօրինական էր եւ նպատակ էր հետապնդում ապակայունացնել իրավիճակը: Վերջինս, իր հերթին, առիթ եւ հնարավորություն կտար նաեւ Երեւանում կամ ամբողջ հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարել՝ ապահովելու համար այն հավասարությունը Ադրբեջանի հետ, ինչին միշտ եւ բոլոր հարցերում հետեւողականորեն ձգտում էր Կենտրոնը: Շարժումը, որ ավելի քան զգույշ էր հատկապես նման սադրանքների նկատմամբ, այս անգամ էլ ժամանակին կանխեց դրա հնարավոր վտանգավոր ընթացքը: Պատասխան որեւէ գործողություն չհաջորդեց, իսկ ՀՀՇ վարչությունը դեպքի առիթով հանդես եկավ սուր հայտարարությամբ: Քաղաքական գնահատական տալով կատարվածին՝ դրանում միաժամանակ մեղադրվում էին Հայաստանի իշխանությունները. «Եթե Հայաստանի ղեկավարությունը տվել է իր համաձայնությունը նման գործողություն ձեռնարկելու համար, ապա նա հանցագործ է.... Իսկ եթե Հայաստանի ղեկավարությունը տեղյակ չի եղել այդ բանին.... ի նշան բողոքի նա պետք է հրաժարական տա»[65]: Գերագույն խորհրդի նախագահությունը եւս առանձին մի որոշմամբ դատապարտեց «առանց պետական իշխանության հանրապետական իշխանության համաձայնության.... զինվորական ստորաբաժանման՝ ռազմական տեխնիկայի առգրավման գործողությունը, որը հանգեցրել է ծանր հետեւանքի՝ մարդկային զոհի»[66]:

Նմանօրինակ եւ ավելի լկտի գործողություններ խորհրդային զորքերի կողմից ձեռնարկվում էին նաեւ սահմանամերձ շրջաններում: Ադրբեջանում տեղակայված ներքին զորքերը մտնում էին Հայաստանի տարածք, շրջապատում որեւէ բնակավայր, կատարում ապօրինի խուզարկություններ, ձերբակալում մարդկանց եւ իրենց հետ տանում Ադրբեջան: Նման դեպքեր տեղի ունեցան Շամշադինում, որտեղից տարան 23, եւ Գորիսի

---

[64] *Վազգեն Սարգսյանը Երասխավան մեկնած ջոկատներից մեկի՝ Արարատի ջոկատի հրամանատարն էր: Նկատի ունենալով նրա տեղացի լինելը եւ այստեղ գտնվող տարբեր ջոկատների գործողությունները համակարգելու անհրաժեշտությունը՝ «Ղարաբաղ» կոմիտեի՝ Երասխավանում գտնվող ներկայացուցիչներ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Բաբկեն Արարքցյանը Կոմիտեի անունից նրան նշանակեցին ընդհանուր հրամանատար:*

[65] *«Հայք», 11.02.1990:*

[66] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 2, հոդվ. 19:*

շրջանի Շուռնուխ գյուղում, որտեղից Կուբաթլի տարան 21 հոգու[67]: ՀՀՇ հանրահավաքից հետո դեպի Գերագույն խորհուրդ ուղղված հզոր երթի ճնշման տակ միայն ձերբակալվածներն ազատ արձակվեցին եւ վերադարձվեցին:

Շրջափակումը ծանր վիճակ էր ստեղծել երկրով մեկ, առավել եւս՝ Աղետի գոտում: Դրան գումարվում էր Կենտրոնի կողմից ճնշման լրացուցիչ լծակների օգտագործումը: Աշխարհի տարբեր ծայրերից դեռեւս շարունակվում էր զանազան բնույթի օգնությունների տրամադրումը, որոնք հանրապետություն էին տեղափոխվում օդային ճանապարհով: Ավիացիայի միութենական նախարարության մի ցուցումով որպես նվիրատվություն ուղարկվող բեռների համար սահմանվեց ինչ-որ մի նոր կարգ, որի հետեւանքով դրանց համար լրացուցիչ չպատճառաբանված դժվարություններ էին ստեղծվում: Շատ տեղերում արդեն բեռնավորված ինքնաթիռներին թռիչքի արտոնություն չէր տրվում[68]:

ժ) Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 3-րդ նստաշրջանում

1989թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ Մոսկվան Լեռնային Ղարաբաղի հարցում արդեն կայացրել էր իր վերջնական վճիռը եւ այն վերանայելու մտադրություն չուներ: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովը պարբերաբար պնդում էր, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի որեւէ լուծում հնարավոր է միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության սահմաններում[69]: Սակայն, նկատի ունենալով դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները, մի շարք պատգամավորների պնդմամբ Ղարաբաղի հարցը եւս մեկ անգամ մտավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի օրակարգ: Հարցը քննարկվեց փետրվարի 19-ին՝ փակ նիստում: Բուռն քննարկումների ընթացքում հնչած ելույթներից այնպիսի տպավորություն էր ստեղծվել, թե Գերագույն խորհուրդը կարող է նաեւ վերանայել նոյեմբերի 28-ի որոշումը, Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես հանել Ադրբեջանի կազմից եւ ենթարկել Կենտրոնին: Այդպիսին են եղել ելույթ ունեցողներից մեծ մասի առաջարկները: Որոշումը, սակայն, մի քանի անգամ հետաձգվելուց հետո, քվեարկվեց միայն մարտի 5-ին:

[67] *Տե՛ս «Հայք», 08.04.1990:*

[68] *Տե՛ս նույն տեղում:*

[69] *Տե՛ս «Правда» 15.02.1990.*

«Ադրբեջանական ԽՍՀ-ում եւ Հայկական ԽՍՀ-ում տիրող դրության եւ այդ ռեգիոնում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» վերնագիրը կրող հերթական այդ որոշումը[70], սակայն, որեւէ նոր արդյունք չտվեց: Այն ոմանց համար դարձավ նոր հուսախաբության պատճառ, իսկ ոմանց՝ ավելորդ անգամ ապացուցեց՝ իրավիճակին Հայոց համազգային շարժման տված գնահատականների իսկությունը եւ նրա որդեգրած՝ իշխանության հասնելու եւ անկախության գնալու քաղաքական ծրագրի այլընտրանք չունենալու իրողությունը:

Արտակարգ դրության շրջանի պարետի օժանդակությամբ Ստեփանակերտում հաստատված «Կազմկոմիտեն» աշխատում էր հաստատել իր իշխանությունը: Վերջինիս հետ որեւէ համագործակցությունից հրաժարվելը դեռեւս պասիվ քայլ էր՝ մարզում կանխելու համար հուսալքման այն մթնոլորտի ձեւավորումը, ինչին ձգտում էին «Կազմկոմիտեն» եւ զինվորական իշխանությունը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդում հարցի հերթական անպտուղ քննարկումից, Գետաշենի ենթաշրջանի մի քանի գյուղերի բռնի տեղահանումից հետո, խորացող ճնշումների պայմաններում անհրաժեշտ էին արդյունավետ քաղաքական քայլեր: Դրանցից էր մարզխորհրդի եւ նրա գործադիր կոմիտեի գործունեության վերականգնման նախաձեռնությունը: Շրջանի պարետը եւ «Կազմկոմիտեն» ամեն ինչ արեցին խափանելու համար մարզխորհրդի՝ այդ նպատակով մարտի 27-ին նախատեսված նստաշրջանը: Պարետի կողմից սպառնալիքներ եղան մարզգործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանի նկատմամբ, ավտոմատավորներով շրջափակվեցին մարզկոմի եւ մարզգործկոմի շենքերը: Այնուամենայնիվ նստաշրջանը հաջողվեց անցկացնել այլ տեղում եւ որոշում ընդունել մարզային իշխանության մարմնի իրավազորությունների եւ գործունեության վերականգնման մասին[71]:

Արեւմուտքը, որ շարունակում էր ուշադրության կենտրոնում պահել Խորհրդային Միությունում, այդ թվում նաեւ Հայաստանում ծավալված ժողովրդավարական գործընթացները, պարբերաբար արձագանքում էր դրանց: Մարտի 15-ին հերթական մի բանաձեւ ընդունեց Եւրոպական

[70] *«Խորհրդային Հայաստան», 07.03.1990:*

[71] *Հասկանալի է, որ այդ որոշումը իրավական ուժ չուներ, այն ընդամենը քաղաքական քայլ էր. քիչ անց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 12-րդ արտահերթ նստաշրջանն իր որոշումներից մեկում պահանջում էր ԽՍՀՄ Նախագահից վերականգնել ԼՂԻՄ մարզային իշխանության սահմանադրական մարմինների լիազորությունները (տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 113):*

Խորհրդարանը: Դրանում անհանգստություն էր հայտնվում Հայաստանում տիրող հումանիտար իրավիճակի առիթով՝ մասնավորապես շեշտելով հարյուրհազարավոր անօթեւանների, փախստականների, գործազուրկների գոյությունը, ինչպես նաեւ զարմանք հայտնվում, որ ուղարկված օգնության մեծագույն մասն այդպես էլ չի հասնում հասցեատերերին: Անհանգստություն էր հայտնվում նաեւ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ ադրբեջանական բռնությունների առիթով: Որոշում է կայացվում Եւրոպական Խորհրդարանի փոքր մի հանձնաժողով ուղարկել Հայաստան եւ Ադրբեջան, որը պարբերաբար կզեկուցի իրավիճակի մասին[72]:

Թե՛ հոգեբանական եւ թե՛ գործնական առումով շատ ավելի մեծ նշանակություն ունեցավ Հայաստանում կայացված որոշումը, ըստ որի՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա ընտրություններում ընդգրկվում էր նաեւ Լեռնային Ղարաբաղը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, Շարժման բուռն ճնշման տակ, ի կատարումն դեկտեմբերի 1-ի վերամիավորման որոշման, այստեղ եւս ձեւավորվեցին ընտրական տեղամասեր, եւ Ղարաբաղը շուտով պետք է պատգամավորներ ընտրեր Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմնի համար: Ճիշտ է՝ սրան անմիջապես հաջորդեց Ադրբեջանի ԳԽ նախագահության որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը ՀԽՍՀ ԳԽ ընտրություններին մասնակցելու անթույլատրելիության մասին, ինչպես նաեւ նույն մարմնի հրամանագրով ԼՂԻՄ-ը պետք է ենթարկվեր վարչա-տարածքային փոփոխությունների, սակայն դրանցից որեւէ մեկը գործնական նշանակություն կամ արդյունք չէին կարող ունենալ:

ժա) Պաշտպանական խնդիրները Շարժման օրակարգում, հանրապետության ինքնիշխանության խորացումը

Արդեն 1989թ. ամռանը Հայաստանի շրջափակման փաստը հուշում էր, որ շուտով կրկին անհրաժեշտ են դառնալու լուրջ պաշտպանական միջոցառումներ, ինչպես Արցախի ու Ադրբեջանի այլ հայկական բնակավայրերի, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջանների բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Այս վտանգին դիմակայելուն էր ուղղված

[72] *Տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 15/15.03.90:*

Շարժման կողմից իրականացված օրենսդրական եւ գործնական նախաձեռնությունների մի ամբողջ շարք:

Օրենսդրական նախաձեռնություններից առաջինն իրականացվել էր դեռ 1989-ի սեպտեմբերին՝ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված «Ադրբեջանական ԽՍՀ-ում, Հայկական ԽՍՀ սահմանային շրջաններում հայ ազգաբնակչության եւ խորհրդային բանակում հայազգի զինծառայողների անվտանգության ապահովման խնդիրների մասին» որոշմամբ: Այն դիմում էր հղում ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ պահանջելով հրավիրել ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար՝ քննարկելու համար Ադրբեջանի տարածքում հայ բնակչության նկատմամբ ծավալված եւ խորացող բռնությունների, հալածանքների եւ սպանությունների փաստերը եւ միջոցներ ձեռնարկել բնակչության կյանքի ապահովության համար: Սահմանամերձ շրջանների խորհուրդներին հանձնարարվում էր «հանրապետության վարչական մարմինների մասնակցությամբ» անցկացնել շրջանային խորհուրդների արտահերթ նստաշրջաններ եւ մշակել բնակչության կյանքն ու անվտանգությունն ապահովող համատեղ միջոցառումների ծրագիր: Եւ վերջապես՝ մտահոգության երրորդ առարկան խորհրդային բանակում ծառայող հայազգի զինվորներն էին, որոնց նկատմամբ, խորացող ազգային թշնամանքի հողի վրա, սկսվել էին ճնշումներ եւ բռնություններ: Այս հարցով էլ դիմում էր հղվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ նրանց կյանքի անվտանգության ապահովման պահանջով[73]:

Սահմանամերձ շրջանների եւ ԼՂԻՄ հայ բնակչության անվտանգության ապահովման խնդիրները ընդամենը մեկ ամիս հետո կրկին քննության առարկա դարձան ԳԽ-ի նիստում: Կայացված որոշումն այս դեպքում ընդամենը Նախարարների խորհրդին հանձնարարում է հարցն ուսումնասիրել եւ Գերագույն խորհրդին տեղեկատվություն հաղորդել հաջորդ նստաշրջանում[74]: Այդ տեղեկատվությունը լսվեց դեկտեմբերի 1-ի հայտնի նիստում[75]:

Հունվարյան իրադարձությունները՝ Բաքվում եւ Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերում տեղի ունեցած ջարդերը, խորհրդային զինված ուժերի աջակցությամբ Հյուսիսային Արցախի հայ բնակչության բռնի տեղահան-

[73] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 108:*
[74] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 19, հոդվ. 119:*
[75] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 23, հոդվ. 148:*

մանն ուղղված գործողությունները, ներքին զորքերի հստակ տարբերակված վերաբերմունքը եւ սադրիչ գործողությունները Ղարաբաղում, Հայաստանում եւ այլն, քայլ առ քայլ հաստատում էին Շարժման ղեկավարության՝ ժամանակին արտահայտած մտահոգություններն ու կանխատեսումները, համարժեք քայլերի ու գործողությունների ճշգրտությունը: Դա հասարակության մեջ բարձրացնում էր նրա հեղինակությունն ու կշիռը: Իշխանությունն ավելի ու ավելի էր ստիպված տեղի տալ: Դեկտեմբերի վերջերից խորհրդա-իրանական սահմանի տեւական եւ անպատիժ ավերման, Բաքվի ջարդերի եւ բռնի տեղահանման, Ղարաբաղում ճնշումների սաստկացման ֆոնին պարզ էր, որ հանրապետության սահմանների վրա առաջին հարձակումը պատահական դեպք չէր: Սահմանների վրա ուժերի անընդհատ կուտակումներ էին կատարվում: Երասխավանի դեպքերը ցույց տվեցին, որ ԽՍՀՄ ներքին զորքերի սակավաթիվ ստորաբաժանումները նման դեպքերում անվտանգության որեւէ երաշխիք լինել չէին կարող: Ջայրույթն ու վճռականությունը համընդհանուր էր: Շարժման ղեկավարներից իր էջերը հեռու պահող պաշտոնական մամուլում անգամ հայտնվեց «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ վարչության անդամ Համբարձում Գալստյանի խոսքը այդ օրերի իրադարձությունների մասին. «Ազգային ինքնագիտակցության նոր մակարդակի դրսեւորումը դարձավ աշխարհազորային ջոկատների կազմավորումը եւ ժողովրդի զանգվածային ինքնազինումը: Մի քանի օրվա ընթացքում հանրապետության տարածքում բռնագրավվեցին մի շարք զինապահեստներ, եւ ներկայումս Արցախի եւ Խորհրդային Հայաստանի պաշտպանության հարցը վճռում է ինքը՝ ժողովուրդը»[76]: ՀՀՇ-ի վերահսկողությամբ կամ նրա տեղական կառույցներում կազմված ջոկատները պետք է գործեին հանրապետության Ներքին գործերի նախարարության հետ համագործակցված եւ օժանդակեին նաեւ երկրի ներսում հասարակական կարգի պահպանմանը: Միաժամանակ նաեւ տեղեկացվում էր, որ արդեն իսկ, օգտվելով խառը իրավիճակից, կազմավորվում են նաեւ վերահսկողությունից դուրս գտնվող, այլ նպատակներ ունեցող զինված խմբեր՝ հաճախ օգտագործելով հենց ՀՀՇ-ի եւ «Ղարաբաղ» կոմիտեի անունը:

[76] *«Ավանգարդ», 27.01.1990: ԽՍՀՄ ՆԳՆ տվյալներով կարճ ժամանակում Հայաստանում զինապահեստների եւ այլ օբյեկտների վրա կատարվել էր 131 հարձակում, հափշտակվել 6179 միավոր հրազեն, զինամթերք, պայթուցիկ նյութեր եւ զրահապատ տեխնիկա (տե՛ս ՀՀԱՆԼ, թղթ. 08/10.02.90, թ. 16-17):*

Ճշգրիտ գնահատելով Ղարաբաղում եւ հարակից շրջաններում արտակարգ դրություն հաստատելու իրական նպատակները՝ Հայոց համազգային շարժումն, ըստ էության, ստանձնել էր պաշտպանական խնդիրների ողջ իրական ծանրությունը եւ համապատասխան քայլեր էր ձեռնարկում վերահաս վտանգին դիմակայելու համար: Իրավիճակի վերլուծության, գնահատման եւ անելիքների մասին ծրագրային հոդվածով («Մոսկվան այլընտրանք չունի» վերնագրով) հունվարի 28-ին հանդես եկավ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Այստեղ պահանջվում էր անհապաղ վերսկսել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդհատված նստաշրջանը՝ «առկա իրադրությանը քաղաքական գնահատական տալու եւ դրանից բխող հրատապ միջոցառումներ մշակելու համար»: Արձանագրվում էր, որ Խորհրդային Միությունը, փաստորեն, հրաժարվում էր իր քաղաքացիների կյանքի անվտանգությունը պաշտպանելու պայմանագրային պարտականությունից, ինչն առաջացնում էր ինքնապաշտպանության բնական գործողություն: Սակայն որպեսզի վերջինս չլինի տարերային, անկազմակերպ եւ անիշխանության պատճառ չդառնա՝ «հայ ժողովրդից պահանջվում են պետական մակարդակով իրականացվող գերճշգրիտ եւ սառը քաղաքական քայլեր, որոնց մշակումը կարող է ապահովել միայն Հայաստանի սուվերեն հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը»[77]:

Համարյա ամենուր ստեղծված իր կառույցների միջոցով գործնականում վերահսկելով իրավիճակը, Հայոց համազգային շարժումը շարունակում էր չգայթակղվել ինքնուրույն գործելու հնարավորությամբ եւ հավատարիմ մնալ սահմանադրական պայքարի իր սկզբունքներին: Համապատասխան փաստաթղթերի նախագծերը, որոնք դառնում էին Գերագույն խորհրդի որոշումներ, դիմումներ եւ հայտարարություններ, մշակվում էին ՀՀՇ վարչությունում կամ Գերագույն խորհրդի ՀՀՇ անդամ պատգամավորների կողմից: Իսկ հասարակական լայն պաշտպանությունն ապահովում էր, որ դրանք ընդունվեն օրենսդիր մարմնում:

Պաշտպանական հարցերին վերաբերող անհրաժեշտ որոշումների ընդունումը, իրադարձությունների քաղաքական գնահատականները հանրապետության պաշտոնական տեսակետի վերածելը Շարժումը կարողանում էր անել ոչ միայն Գերագույն խորհրդի նստաշրջանների, այլեւ նրա Նախագահության միջոցով, երբ 1990թ. փետրվարին դրա կազմի մեջ ընդգրկվեցին նաեւ Շարժման ներկայացուցիչները՝ Լեւոն Տեր-Պետրոսյա-

[77] *«Հայք», 28.01.1990: Տե՛ս նաեւ՝ **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, էջ 72:*

նը, Հրաչիկ Սիմոնյանը, Ռոբերտ Քոչարյանը, [78] իսկ Ռաֆայել Ղազարյանը՝ նաեւ ընտրվեց ԳԽ նախագահի տեղակալ[79]: Այդպիսին էր Գերագույն խորհրդի նախագահության մարտի 2-ի արձագանքը Գետաշենի ենթաշրջանի հայկական գյուղերի բնակչության բռնի տեղահանման փորձերի առիթով: Դրանում բռնի տեղահանման հեղինակներ են հայտարարվում Ադրբեջանի իշխանությունը եւ Ժողճակատը՝ «խորհրդային բանակի եւ ներքին զորքերի ստորաբաժանումների հովանավորությամբ»: Արձանագրվում էր, որ այս գյուղերի բնակիչները 1988-ի նոյեմբերին եւ 1989-ի դեկտեմբերին կարողացել էին հակահարված տալ ադրբեջանցիներին, քանի դեռ նրանց խորհրդային զորքերը չէին օգնում, իսկ տեղահանությունները հնարավոր են եղել միայն այն բանից հետո, երբ այստեղ տեղաբաշխվեցին խորհրդային բանակի եւ ներքին զորքերի ստորաբաժանումները: Այսինքն՝ պատասխանատվությունն ամբողջությամբ դրվում էր Կենտրոնի վրա. «Ակնհայտ է, որ այդ գործը խրախուսվում կամ նույնիսկ ղեկավարվում է կենտրոնական իշխանությունների կողմից: Դատելով ամեն ինչից, զորքերը Հյուսիսային Արցախ են ժամանել ոչ թե հայ բնակչության անվտանգությունն ապահովելու, այլ ընդհակառակը՝ նրա բնականոն կենսագործունեությունը խախտելու նպատակով: Մասնավորապես այդ են վկայում զինվորական ստորաբաժանումների ձեռնարկած գործողությունները հայկական գյուղերի ներքին հաղորդակցությունը խզելու, նրանց բնակիչներին կեղծ լուրերով ահաբեկելու, Հայաստանից պարենամթերքի առաքման եւ բուժօգնության կազմակերպման գործը խափանելու ուղղությամբ»: Պահանջվում էր զորքերն անմիջապես դուրս բերել Հյուսիսային Արցախից եւ տեղակայել հայկական եւ ադրբեջանական բնակավայրերի սահմանազատիչ գոտիներում[80]:

Սակայն այս եւ այլ ահազանգերն ու բողոքները վճռական նշանակություն չունեցան: Կենտրոնական իշխանություններն Ադրբեջանի հետ համատեղ շարունակում էին նախապես մշակված ծրագրի իրականացումը: Մի քանի օր անց՝ Կամո եւ Ազատ գյուղերի բռնի դատարկումից հետո, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված նույն բովանդակությամբ դիմում ընդունեց՝ կատարվածի համար կրկին հստակ մեղադրելով կենտրոնական իշխանություններին. «Զնայած գործող պարետային ժամին, հայերի ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ, ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի ստորաբաժանումների աջակցությամբ, նրանց ստիպում են ձեւակերպել տների առուծախ...»[81]:

Կենտրոնական իշխանության որդեգրած իրական նպատակների եւ գործողությունների ավելի համապարփակ, սկզբունքային եւ խիստ գնահատականներ են պարունակում հանրապետության Գերագույն խորհրդի մայիսի 3-ին հրավիրված արտահերթ 12-րդ նստաշրջանի ընդունած որոշումները: ՀՀՇ-ն այս հարցի եւ պաշտպանական խնդիրների հետ կապված, նստաշրջանի քննարկմանն էր ներկայացրել օրենսդրական նախաձեռնությունների մի ամբողջ փաթեթ: Դրանցից առաջինը կոչվում էր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ստեղծված իրադրության եւ այն կարգավորելու խնդիրների մասին», որի ընդարձակ նախաբանը նաեւ ստեղծված իրավիճակի փաստարկված վերլուծություն էր: Լարվածության նոր սանձազերծումը եւս մի անգամ համարվում է հետեւանքն այն բանի, որ Ադրբեջանը գործում է կենտրոնական իշխանության համաձայնությամբ եւ հավանությամբ՝ վստահ, որ ԼՂԻՄ-ի դեմ իր որեւէ նախաձեռնության եւ քայլի համար չի պատժվի: Կենտրոնական իշխանության դերակատարությունը գնահատվում է հետեւյալ կերպ. «Փաստորեն ռազմական դրության պայմաններում օկուպացնելով մարզը, ներքին ծառայության զորքերը ստանձնել են արցախահայության դեմ ուղղված պատժիչ ուժի դեր, որը կատարում է Ադրբեջանի իշխանությունների կամքը: Զորքի բռնի ուժով այսօր ԼՂԻՄ-ում, ըստ էության, վերացված են մարզի խորհրդային եւ կուսակցական իշխանությունները, բռնագրավված են մասսայական ինֆորմացիայի տեղական միջոցները, ռադիոն եւ հեռուստատեսությունը: Ամեն օր հեռարձակվում են հայ բնակչությանն ուղղված սպառնալից դիմումներ եւ կոչեր, որոնցով պահանջվում է ենթարկվել Ադրբեջանին կամ թողնել հարազատ օջախները եւ հեռանալ Արցախից: Խաղաղ բնակչության դեմ իրականացվում են անսքող բռնություններ եւ ահաբեկումներ, սպանվում, ձերբակալվում կամ առեւանգվում են անմեղ մարդիկ.... Զորամասերի օգնությամբ բացված են Արցախի ադրբեջանական բնակավայրերը եկող ճանապարհները, որոնցով անարգել անցնում են տարբեր բեռներով ավտոշարասյուններ, այդ նույն ժամանակ զինվորականները ամուր փակել են Խորհրդային Հայաստանից եւ Միության այլ վայրերից ԼՂԻՄ,

[78] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 33:*

[79] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 32:*

[80] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 5-6, հոդվ. 67:*

[81] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 5-6, հոդվ. 69:*

Շահումյանի շրջան եւ Գետաշենի ենթաշրջան տանող ուղիները, դաժան վերահսկողություն են հաստատել ճանապարհների վրա, լիովին խզել Հայաստան-Արցախ կապերը.... կրճատվում են օդային ուղերթերը, արգելվում բեռնատար ինքնաթիռների եւ ուղղաթիռների ընդունումը»[82]: Այսինքն՝ Հանրապետության իշխանության բարձրագույն մարմինը արդեն երրորդ անգամ պաշտոնապես արձանագրում եւ հաստատում էր Հայոց համազգային շարժման այն տեսակետը, որ Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները՝ Լեռնային Ղարաբաղում եւ այլ վայրերում հայ բնակչության նկատմամբ տեղի են ունենում նրանց բռնի տեղահանության նպատակով՝ կենտրոնական իշխանության համաձայնությամբ եւ անթաքույց օժանդակությամբ:

Իրադարձությունների այսօրինակ զարգացման հնարավորությունն արդեն հստակ կանխատեսվում էր նախորդ տարվա դեկտեմբերին, երբ ՀՀՇ-ն պահանջում էր կենտրոնական իշխանությունների ծրագրերին ու գործողություններին դիմակայելու համար կտրուկ՝ կանխարգելիչ գործողությունների դիմել եւ դրանց համարժեք կեցվածք ընդունել: Այն ժամանակ դա («Արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին հռչակագիրը») Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից մերժվեց: Այժմ՝ նորանոր փաստերի ճնշման տակ, անշուշտ՝ ուշացումով, իշխանության բարձրագույն մարմինը ստիպված էր ընդունել հանրապետության ինքնիշխանության հաստատմանն ուղղված համապատասխան որոշումներ: Գերագույն խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության խորհուրդ: Վերջինիս հանձնարարվեց անհետաձգելի միջոցառումներ իրականացնել հանրապետության սահմանների անձեռնմխելիության ապահովման եւ քաղաքացիների կյանքի պաշտպանության ուղղությամբ: Նախագահությանը հանձնարարվեց համապատասխան պետական եւ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ լուծել «ինքնապաշտպանության նպատակով ստեղծված ջոկատների միավորման, նրանց գործողությունների կարգավորման եւ կոորդինացման հարցերը»[83]: Այս որոշմամբ, փաստորեն, պաշտոնապես ճանաչվում էր հիմնականում ՀՀՇ-ի, նաեւ այլ կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ ինքնաբուխ ստեղծված ինքնապաշտպանական ջոկատների գոյության իրավունքը: Վերջիններս վաղուց արդեն արդյունավետ գործողություններով պաշտպանում էին ոչ միայն հանրապետության սահմանային բնակավայրերը, այլեւ, չնայած բարդ պայմաններին եւ բազմաթիվ խոչընդոտների, օգնության էին հասնում Լեռնային Ղարաբաղին եւ հարակից հայկական բնակավայրերին:

[82] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 113:*
[83] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 115:*

Ազգամիջյան հարաբերությունների սրումը տեղափոխվել էր նաեւ խորհրդային բանակ, որտեղ հաճախ հայ զինծառայողների նկատմամբ ճնշումներ եւ բռնություններ էին կիրառվում, լինում էին սպանությունների եւ խեղումների դեպքեր: Առավել անապահով զորամասերի զինվորներն իրենց կյանքն ու արժանապատվությունը պաշտպանելու համար պարզապես ստիպված էին վերադառնալ հանրապետություն: Այս պայմաններում վտանգավոր եւ անիմաստ էր խորհրդային բանակ նոր զորակոչիկներ ուղարկելը: Նրանց ֆիզիկական եւ իրավական պաշտպանության եւ այլ հարցերը կարգավորելու համար ՀՀՇ-ին կից ստեղծվեց հատուկ մի կառույց Երջանիկ Աբգարյանի ղեկավարությամբ: Վերջինիս տվյալներով՝ արդեն ապրիլի սկզբներին վերադարձած զինվորների թիվը անցնում էր հազարը[84]: Սակայն ՀՀՇ-ի կողմից պաշտպանությունը դեռեւս պաշտոնական իրավական երաշխիք չէր: Այդպիսին անհրաժեշտ էր ձեռքբերել հանրապետության օրենսդիր մարմնում: Գերագույն խորհուրդը ՀՀՇ-ի ներկայացրած նախագծով որոշում ընդունեց, որով Հայկական ԽՍՀ-ում կասեցվում էր գարնանային զորակոչը խորհրդային բանակ: Որոշման արձանագրային մասում ասվում էր, որ ԽՍՀՄ պաշտպանության ապարեզում Հայաստանն ի սկզբանե եւ մինչ այդ անթերի կատարել է իր պարտականությունները, սակայն դա այլեւս չի կարող անել, քանի որ կենտրոնական իշխանությունները չեն կատարում այս ասպարեզում իրենց ստանձնած փոխադարձ պարտականությունները, մասնավորապես՝ «վերջին երկու տարվա ընթացքում ԽՍՀՄ ղեկավար մարմիններն իրականացնում են հայ ժողովրդի օրինական շահերին բացահայտորեն անհարիր քաղաքականություն, որը հանգեցրել է նաեւ խորհրդային բանակում հայազգի զինծառայողների նկատմամբ բռնության եւ ըստ ազգային հատկանիշի՝ խտրականության ակնհայտ դրսեւորումների: Ջորամասերում ապահովված չեն նրանց կյանքի, առողջության եւ ազգային արժանապատվության հարգանքի երաշխիքները»[85]: Ընդ որում՝ որոշման համար որպես իրավական հիմք հղվում էր ՀԽՍՀ Սահմանադրության 75-րդ հոդվածում կատարված այն փոփոխությունը, ինչին դժվարությամբ կարողացել էր հաս-

[84] *Տե՛ս «Հայք», 08.04.1990:*
[85] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 116:*

նել Շարժումը նույն տարվա հունվարին: Այս որոշման կենսագործման համար ստեղծված հանձնաժողովը ղեկավարում էր Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանը, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկված էր ՀՀՇ վարչությունում զինակոչիկների եւ խորհրդային բանակի զորամասերը հարկադրաբար լքած զինծառայողների հարցերով զբաղվող կառույցի ղեկավար Երջանիկ Աբգարյանը[86]:

Գերագույն խորհրդի հաջորդ որոշումը վերաբերում էր խորհրդային բանակից ազգային հատկանիշի հիման վրա կատարված ճնշումների ու հալածանքների հետեւանքով զորամասերը հարկադրաբար լքած եւ հանրապետություն վերադարձած զինծառայողներին: Նկատի ունենալով, որ նրանք այդ քայլին դիմում են ստիպված՝ որոշվեց այդ արարքը չդիտել որպես քրեորեն պատժելի եւ նրանց թույլ տալ հետագա ծառայությունն անցկացնել խորհրդային բանակի՝ Հայաստանի տարածքում գտնվող զորամասերում[87]:

ՀՀՇ-ի օրենսդրական նախաձեռնությունների այս փաթեթը, որ հաջողվեց ամբողջությամբ վերածել Գերագույն խորհրդի որոշումների, խորհրդային կենտրոնի վարքագծի եւ ճնշումների դեմ ուղղված համարժեք քայլեր էին: Դրանցով հանրապետությունը շատ կարեւոր բնագավառներից մեկում հռչակում էր իր ինքնիշխան իրավունքները: Բացի այդ՝ հազարավոր երիտասարդ մարդկային կյանքեր եւ ճակատագրեր զերծ էին մնում խեղվելուց ու վտանգի ենթարկվելուց: Եւ վերջապես՝ հանրապետու-

[86] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 117 («Տեղեկագրի» տեքստում Աբգարյան ազգանունը սխալմամբ տպագրված է Աբրահամյան):*

[87] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 118: Արդեն մեկ տարուց ավելի գոյություն ուներ խորհրդային բանակից հարկադրաբար հեռացած հայ զինվորների եւ ծառայության չմեկնած զինակոչիկների խնդիր: Երկու դեպքում էլ գործող օրենքը քրեական հետապնդում էր ենթադրում: Սակայն նրանցից որեւէ մեկի նկատմամբ երբեւէ քրեական գործ չհարուցեց Հայաստանում տեղակայված խորհրդային 7-րդ բանակի զինվորական դատախազ Միքայել Սեւյանը, ում հետ, ի սկզբանե, սերտորեն համագործակցում էր Եջանիկ Աբգարյանի ղեկավարած ՀՀՇ համապատասխան կառույցը: Միայն այժմ այդ արարքը օրենսդրական հիմքով ապաքրեականացվեց: Եւ այդուամենայնիվ, դրանից նույնիսկ մեկ տարի անց՝ 1991թ. մայիսին ԽՍՀՄ ՊՆ նախարարությունը սպառնալից նամակով Հայաստանի ղեկավարությունից պահանջում էր ապահովել զորակոչը խորհրդային բանակ (տե՛ս «Գիտնականը եւ Նախագահը...» էջ 517-518:*

թյունում էր մնում այն ուժը, որը, ինչպես ցույց էր տալիս զարգացող դեպքերի տրամաբանությունը, պարզապես անհրաժեշտ կարող էր լինել պաշտպանելու համար հանրապետության բնակչության անվտանգությունը:

Քիչ անց, այս անգամ՝ Գերագույն խորհրդի նախագահության կողմից, կատարվեց եւս մի քայլ. որոշում կայացվեց «իրավախախտումների կանխման եւ հասարակական կարգի պահպանության ինքնագործ հասարակական կազմակերպություններ» ստեղծելու մասին: Որպես հիմնավորում՝ արձանագրվում էր իրոք գոյություն ունեցող այն փաստը, որ հասարակական կարգի պահպանության մարմինների գործունեությունը կազմալուծված է, եւ նրանք չեն կարողանում արդյունավետ կատարել իրենց պարտականությունները: «Ինքնագործ հասարակական կազմավորումները» (խոսքը վերաբերում էր ինքնապաշտպանական զինված ջոկատներին) պետք է մտնեին Պաշտպանության խորհրդի ենթակայության տակ: Նախարարների խորհուրդը պետք է մշակեր նրանց իրավազորությունը կարգավորող կանոնադրություն եւ լուծեր նրանց նյութատեխնիկական ապահովման խնդիրները: Պաշտպանության խորհրդի համակարգից դուրս եւ նրան չենթարկվող կազմավորումները պետք է լուծարվեին[88]:

ժբ) «Նաիրիտի» խնդրի հետագա ընթացքը

Բնապահպանական շարժման հետապնդած կարեւորագույն հարցերից մեկի՝ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման մասին 1989թ. հունիսի 25-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած որոշումը նախատեսում էր այն փակել նույն թվականի ընթացքում: Մինչ այդ տվյալ խնդրի նկատմամբ բացասաբար տրամադրված իշխանական քարոզչամեքենան հանկարծ դարձավ քաղաքը թունավորող գործարանի փակման ամենամոլի ջատագովը: Այսպես, ըստ «Երեկոյան Երեւանի»՝ «Նաիրիտի» փակման որոշումը ողջունում են նաեւ գործարանի աշխատողները «հանուն իրենց երեխաների եւ ապագայի», եթե նույնիսկ դա իրենց համար աշխատանքի կորուստ կարող է լինել[89]: Պաշտոնական մամուլը դատապարտում էր ինչոր անհայտ մարդկանց. «Ոմանք փորձում են խոչընդոտել մեր ժողովրդի կեցության արմատները կացնահարող «Նաիրիտի» փակմանը[90]: Հարցազրույցներ էին տպագրվում նշանավոր եւ տիտղոսակիր գիտնականնե-

[88] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 130:*

[89] *«Երեկոյան Երեւան», 06.07.1989:*

[90] *«Խորհրդային Հայաստան», 03.11.1989:*

րի հետ (ԳԱ թղթակից-անդամ Գեւորգ Տեր-Ստեփանյան, աշխարհագրական գիտ. դոկտոր Սերգեյ Մելքումյան, ԳԱ ակադեմիկոս Արաքսի Բաբայան, աշխարհագրական գիտությունների դոկտոր Գրիգոր Ավագյան), եւ բոլորը միաբերան՝ փակման որոշումը անհապաղ չկատարելը համարում էին հանցագործություն[91]: Կարելի է ասել, որ այս հարցում կար հասարակական կարծիքի բացարձակ միասնություն: 1989թ. սեպտեմբերի կեսերին ՆԳՄ-ն զեկուցում է. «Եթե մինչեւ սեպտեմբերի 20-ը մամուլում տեղեկատվություն չիրապարակվի «Նաիրիտի» աշխատանքների փուլային դադարեցման եւ նրա աշխատողների աշխատանքի տեղավորման հատուկ հանձնաժողովի աշխատանքի մասին, չի բացառվում ձեռնարկության պիկետավորումը: Լենինյան շրջանի արտադրական ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվների հասարակական կարծիքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը դրական է վերաբերվում «Նաիրիտի» փակմանը եւ պատրաստ է միանալ ենթադրվող ակցիային»[92]:

Կառավարությունը, կարծես թե, չէր մտածում Գերագույն խորհրդի որոշումը կատարելու մասին. Կենտրոնի թելադրանքով պետք է շարունակվեր «Նաիրիտի» շահագործումը: Բնապահպանական շարժման գործիչներին տարբեր ճանապարհներով հայտնի էին դառնում այդ մասին վկայող փաստաթղթեր, եւ նրանք ստիպված էին դիմել ծայրահեղ քայլերի, ինչպես՝ գործարանը շրջափակելը եւ այստեղ մտնող երկաթուղու ճանապարհին պիկետ կազմակերպելը: Այս խնդրի շուրջ կազմված համապատասխան զեկուցագիրը տեղեկացնում է. «Ժամանակ առ ժամանակ նրանց ձեռքն են ընկնում կուսակցական եւ կառավարական փաստաթղթեր, որոնք կասկածի տակ են դնում խորհրդարանի ընդունած որոշման միանշանակությունը, ինչը նրանց կողմից օգտագործվում է մասսաներին բորբոքելու, նրանց պայթյունահրավտանգ ձեռնարկության տարածքում անօրինական գործողությունների մղելու, ինչպես նաեւ, որպես պառլամենտի որոշումներն արհամարհողների, հանրապետության ղեկավարությանը վարկաբեկելու համար»[93]: Որքան մոտենում էր փակման վերջնաժամկետը, այնքան ավելի էին սրվում հասարակական սպասումները, իսկ նույն պաշտոնական մամուլի որոշ միջոցներ տարեվերջին պարբերաբար խոշորատառ հայտնում էին, թե քանի օր է մնացել. «Բոլորին, բոլորին, բոլորին, Համաձայն ԳԽ ս.թ. հունիսի 25-ի որոշման՝ «Նաիրիտի» փակմանը մնացել է (այսքան) օր»[94]: ԳԽ-ի նախագահության անունից հայտարարվեց այն մասին, որ «Նաիրիտը» դեկտեմբերի 30-ից դադարել է գործելուց[95]: Շարժման ճնշման տակ 1990թ. հունվարի 10-ին Գերագույն խորհրդի նստաշրջանը ընդունեց այսպիսի որոշում. «Ի կատարումն Գերագույն խորհրդի 1989 թ. հունիսի 25-ի որոշման, 1990թ. դեկտեմբերի 30-ից «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը դադարել է գործելուց»[96]: Այս ձեւակերպման տակ էլ խաբեություն տեսնելով՝ Շարժման պահանջով հաջորդ օրը Գերագույն խորհուրդը ստիպված էր կրկին անդրադառնալ հարցին եւ հունվարի 11-ին ընդունել նոր որոշում՝ այսպիսի ձեւակերպմամբ. «Ի կատարումն 1989 թ. հունիսի 25-ի որոշման, 1990թ. դեկտեմբերի 30-ից «Նաիրիտը» փակված է»[97]:

Միութենական կառավարությունը ոչ մի կերպ չէր համակերպվում այս փաստի հետ: Փետրվարի 1-ին ՀԽՍՀ կառավարությունը եւ Գերագույն խորհուրդը Մոսկվայից ստանում են ԽՍՀՄ կառավարության ղեկավար Նիկոլայ Ռիժկովի կողմից ստորագրված հեռագիր, որում, մասնավորապես, ասվում էր. «Խնդրում ենք որոշում ընդունել «Նաիրիտը» վերագործարկելու մասին, հակառակ դեպքում մնասը 1990 թվականին կկազմի 14 միլիարդ ռուբլի»[98]: Հայաստանի կառավարության նախագահ Վլադիմիր Մարգարյանցն իր հերթին դիմում է Գերագույն խորհուրդ՝ խնդրելով փետրվարի 19-ից թույլ տալ «Նաիրիտի» օժանդակ արտադրությունների, իսկ ապա՝ հիմնական արտադրության գործարկումը»[99]: Գերագույն խորհուրդը կառավարությանը նման թույլտվություն չի տալիս:

Ապրիլի 14-ին «Նաիրիտում» տեղի ունեցավ մեծ վթար եւ թունավոր նյութերի արտահոսք: Հասարակական զայրույթը հասավ գագաթնակետին: Գերագույն խորհրդի նախագահությունը ստիպված էր ընդունել հետեւյալ հրամանագիրը. «...փակման կապակցությամբ ստեղծված հանձ-

---

91 *«Ավանգարդ», 17.11.1989:*

92 *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 37, թ. 54:*

93 *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 35, թ. 119:*

94 *Տե՛ս, օրինակ, «Ավանգարդ», 22, 29. 12. 1989թ.:*

95 *Տեղեկագրում դեկտեմբերի 29-ի ամսաթվով «Նաիրիտի» մասին կա մի այլ որոշում «Նաիրիտի» շահագործումն, ըստ էության, շարունակելու մասին (տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 24, հոդվ. 170):*

96 *«Խորհրդային Հայաստան», 11.01.1990:*

97 *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 1, հոդվ. 4:*

98 *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 43, թ. 10:*

99 *ՀՀԱ, ֆ. 1, ց. 87, գ. 43, թ. 15:*

նաժողովը անբավարար է աշխատել: Հանձնարարել Մինիստրների խորհրդին՝ մեկ ամսվա ընթացքում ԽՍՀ Միության համապատասխան մարմինների հետ լուծել «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման էկոլոգիապես վնասակար արտադրությունների կազմաքանդման հարցը, միջոցներ ձեռնարկել հանրապետության տարածքից նշված արտադրությունների համար միավորման հաւցեով ստացված եւ քիմիկատներով բեռնված վագոններն ու ցիստեռնները դուրս բերելու ուղղությամբ»[100]:

[100] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 8, հոդվ. 103:*

2. ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԼԸ, ՀԱՅԿԱԿԱՆ «ԻՆՏԵՐՖՐՈՆՏԸ»

ա) Ընդհանուր իրավիճակը եւ զարգացումները ԽՍՀՄ-ում

Ի հեճուկս «վերակառուցման» հռչակված կարգախոսների եւ խոստումների՝ Խորհրդային Միությունում իրավիճակը շարունակում էր մնալ լարված: Կարգախոսների ու իրական քայլերի բացահայտ տարբերությունը, երբեմն՝ հակադրությունը, ավելի մեծ թափով էր խորացնում ճգնաժամը բոլոր բնագավառներում՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, ազգամիջյան եւ այլն: Ձեռնարկված միջոցառումները տնտեսական զարգացման եւ արտադրության արդյունավետության բարձրացման համար որեւէ նշանակություն չունեցան: Խորանում էր ապրանքային դեֆիցիտը: Առաջին անհրաժեշտության ավելի ու ավելի շատ ապրանքներ էին բաշխվում քարտային սիստեմով եւ նվազագույն չափերով:

Ավելի էին սրվում ազգամիջյան հարաբերությունները, ինչպես նաեւ անկախական ձգտումները: Համառ պայքար էին մղում հատկապես Մերձբալթյան հանրապետությունները: 1989թ. նոյեմբերի 27-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ստիպված էր ընդունել օրենք՝ Լիտվական ԽՍՀ, Լատվիական ԽՍՀ եւ Էստոնական ԽՍՀ տնտեսական ինքնուրույնության մասին[101]: Բայց այս ուղղությամբ էլ այդ հանրապետությունների ձեռնարկած քայլերը հանդիպում էին Մոսկվայի հակազդեցությանը[102]: Իսկ քաղաքական անկախության հասնելու խնդրի լուծման համար նրանք շեշտը դնում էին իրավական փաստարկների, մասնավորապես՝ 1939թ. խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրին կցված գաղտնի արձանագրությունը[103]

[101] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 25, հոդվ. 490:*

[102] *Տե՛ս օրինակ՝ Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 3. հոդվ. 42:*

[103] *Հանրությանն այդ արձանագրությունը հայտնի է «Ռիբենտրոպ-Մոլոտով պակտ» անունով:*

ապօրինի ճանաչելու վրա, որի հետեւանքով այս հանրապետությունները բռնակցվել էին Խորհրդային Միությանը: Բուռն քննարկումներից հետո ստեղծվել էր համապատասխան հանձնաժողով՝ ուսումնասիրելու համար այս պայմանագրի եւ դրան կից գաղտնի փաստաթղթերի հետ կապված հարցերը: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարն այդ ուսումնասիրության հիմքի վրա արդեն իսկ ստիպված էր եղել արձանագրել. «Պայմանագիրը կնքելիս թաքցվել է, որ միաժամանակ ստորագրվել է «գաղտնի լրացուցիչ արձանագրություն», որով սահմանագծվել են պայմանավորված կողմերի շահերի ոլորտները Բալթիկ ծովից մինչեւ Սեւ ծով, Ֆինլանդիայից մինչեւ Բեսարաբիա»: Համագումարը դատապարտել եւ անվավեր էր համարել դրանք ստորագրման պահից[104]: Սակայն դա դեռ բավարար հիմք չէր համարվում Մերձբալթյան հանրապետությունների անկախության իրավունքի ճանաչման համար: Վերջիններս, ընդհակառակը, դա լիարժեք հիմք էին համարում, քանի որ դրանից հետո եւ դրա հետեւանքով էր տեղի ունեցել իրենց անկախության կորուստը եւ միացումը ԽՍՀՄ-ին:

Կենտրոնական իշխանությունը միայն կովկասյան ու մերձբալթյան շարժումներով չէր անհանգստացած: Ժողովրդավարական շարժումը հզորանում էր նաեւ Ռուսաստանում: Մի շարք հասարակական կազմակերպություններ կոչ էին արել 1990 թ. փետրվարի 25-ին միաժամանակյա հանրահավաքներ անցկացնել Մոսկվայում, Լենինգրադում եւ այլ քաղաքներում: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը դա կանխելու համար ստիպված էր հանդես գալ հատուկ մի հայտարարությամբ[105]: Իրավիճակը մեղմելուն էին ուղղված հանրապետությունների եւ ինքնավար կազմավորումների լիազորությունների ավելացմանը, հստակեցմանը ու սահմանազատմանն ուղված քայլերը: Այս նպատակով ընդունվեց հատուկ օրենք[106]:

Մարտի 10-12-ին Լիտվայի Գերագույն խորհուրդն ընդունեց մի շարք որոշումներ: Նա հռչակեց, որ վերականգնում է Լիտվական հանրապետության անկախ իշխանության գոյությունը, որը դադարեցվել էր օտար իշխանության կողմից 1940 թվականին, եւ դիմեց աշխարհի ժողովուրդներին՝ իր անկախությունը ճանաչելու կոչով: Դադարեցվեց ԽՍՀՄ եւ Լիտվական ԽՍՀ սահմանադրությունների գործողությունը հանրապետության տարածքում, անվավեր համարվեցին ԽՍՀՄ ԳԽ-ի՝ Լիտվայից ընտրված պատգամավորների մանդատները[107]: Կենտրոնը, բնականաբար, ընդդիմացավ: Ժողովրդական պատգամավորների արտահերթ 3-րդ համագումարն այդ որոշումները համարեց հակասահմանադրական եւ անվավեր ճանաչեց, բայց նաեւ ստիպված եղավ պարտավորություն ստանձնել օրենսդրորեն կարգավորելու «Խորհրդային Միության կազմից դուրս գալու կարգն ու հետեւանքները»[108]: Լիտվան հրաժարվեց վերանայել իր կատարած քայլերը եւ շարունակեց հռչակված անկախության առարկայացման հետ կապված նոր որոշումներ ընդունել: Դրան հետեւեց արդեն ԽՍՀՄ նախագահ դարձած Մ. Գորբաչովի հրամանագիրը, որով խստացվում էր պետական սահմանի պաշտպանությունը, մտցվում էր վիզային ռեժիմ, հանձնարարվում էր հավաքել որսորդական հրացանները[109]: Լիտվայի ժողովրդին ու Գերագույն խորհրդին հղվում էին սպառնալից դիմումներ[110]: Կայացված որոշումները չեղյալ չհայտարարելու դեպքում Գորբաչովի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ռիժկովի համատեղ ուղերձը սպառնում էր տնտեսական ճնշամիջոցներով[111]: Լիտվան տեղի չտվեց եւ շարունակեց անկախ պետականության կարգավիճակից բխող օրենքների ընդունումը:

Նույն ճանապարհն էին ընտրել նաեւ Մերձբալթյան մյուս հանրապետությունները: Էստոնիայի Գերագույն խորհուրդը 1990թ. մարտի 30-ին որոշում ընդունեց «Էստոնիայի պետական կարգավիճակի մասին», որով անօրինական ճանաչեց ԽՍՀՄ պետական իշխանությունը Էստոնիայում: Մայիսի 4-ին «Լատվիայի հանրապետության անկախությունը վերականգնելու մասին հռչակագիր» ընդունեց Լատվիայի Գերագույն խորհուրդը: ԽՍՀՄ նախագահի մայիսի 14-ի զույգ հրամանագրերը նույն կերպ ապօրինի ճանաչեցին եւ անվավեր համարեցին նաեւ այս որոշումները[112]: Ի պատասխան՝ մայիսի 16-ին Էստոնական հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած «Էստոնիայի կառավարման ժամանակավոր կարգի մասին» օրենքը նախատեսում էր Կենտրոնի ենթակայությունից հանել պետական իշխանության, դատական եւ դատախազական մարմինները:

[104] *Տե՛ս «Ավանգարդ», 05.01.1990:*
[105] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 8, հոդվ. 102:*
[106] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 19, հոդվ. 329:*

[107] *Տե՛ս «Հայք», 18.03.1990:*
[108] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 12, հոդվ. 194:*
[109] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 13, հոդվ. 207:*
[110] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 14, հոդվ. 244, 245:*
[111] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 17, հոդվ. 283:*
[112] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, հոդվ. 21, 369, 370:*

Գորբաչովը նոր մի հրամանագրով անվավեր համարեց նաեւ այս օրենքը[113]:

Սակայն օրենսդրական ակտերի այսօրինակ պատերազմը գործնականում անհեռանկարային էր կենտրոնական իշխանության համար: ԽՍՀՄ Սահմանադրությանը «չհամապատասխանող» օրենքներ եւ որոշումներ ընդունող հանրապետությունները շարունակում էին այդպիսիք ընդունել եւ առաջնորդվել դրանցով: Որեւէ դեր չէին խաղում ԽՍՀՄ նախագահի, Գերագույն խորհրդի ու կառավարության անունից հաճախակի հրապարակվող դիմում-հորդորները՝ իրենց վաղուց հոգնեցնող դարձվածներով ու փաստարկներով: Ուստի Մոսկվան հանրապետությունների որոշումները անվավեր ճանաչելուց զատ փորձում էր «նոր Միության» խոստումներով եւ իր օրենսդրական ակտերով կանխել կայսրության քայքայումը:

Հանրապետությունների՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու միտումը միայն ուժային մեթոդներով կասեցնելն այլեւս անհեռանկարային էր: Ընդ որում՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու կարգի մասին համապատասխան օրենքի բացակայությունը իրադարձությունների այսօրինակ զարգացումների դեպքում ինչ-որ փոլում կարող էր նաեւ չխոչընդոտել հանրապետություններին, պարզապես դա կարող էր հանգեցնել նոր հակամարտությունների եւ արյունահեղությունների: Կենտրոնը հասկացավ, որ այլեւս անիմաստ է խուսափել Միության կազմից դուրս գալու հարցը օրենքով կարգավորելու անհրաժեշտությունից, ավելին՝ որ հենց այդպիսի մի օրենքով կարելի է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք առավելագույնս կդժվարացնեն հանրապետությունների անկախացումը, գործնականում դա կդարձնեն անհնար: Այս դեպքում, սակայն, նմանօրինակ օրենքի գոյության պայմաններում, Կենտրոնի գործողությունները անկախության ձգտող հանրապետությունների դեմ ձեւական առումով կմնային իրավական եւ օրինականության դաշտում:

Հանրապետությունների անկախացման մասին համապատասխան օրենքն ընդունվեց ապրիլի 3-ին եւ կոչվում էր «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[114]: Միութենական հանրապետությունների անկախացումը նախատեսվում էր հանրաքվեով, որը կարող էր տեղի ունենալ տվյալ հանրապետության Գերագույն խորհրդի կամ ընտրողների 1/10-ի նախաձեռնությամբ: Հանրաքվեի արդյունքները համարվում էր դրական, եթե դրա

[113] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, հոդվ. 390:*

[114] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 15, հոդվ. 252:*

օգտին է քվեարկել այդ պահին տվյալ հանրապետությունում մշտապես բնակվող, ձայնի իրավունք ունեցող ԽՍՀՄ քաղաքացիների 2/3-ը: Ընդ որում՝ հանրապետության մեջ մտնող ինքնավար կազմավորումներում հանրաքվեն պետք է անցկացվեր առանձին, որի արդյունքով պետք է լուծվեր նրանց՝ ԽՍՀՄ կազմի մեջ մնալու կամ տվյալ հանրապետության կազմում ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցը: Լայն իրավունքներ էին նախատեսվում նաեւ «ազգային հոծ խմբերի» համար, որոնցով բնակեցված տարածքների կարգավիճակի հարցը պետք է համաձայնեցվեր Կենտրոնի հետ: Հանրաքվեն բարեհաջող անցնելու դեպքում սահմանվում էր 5-ամյա անցման շրջան, որից հետո կրկնական հանրաքվեն պետք է եւս մեկ անգամ 2/3-ով հաստատեր նույն որոշումը: Դրական արդյունք չարձանագրելու դեպքում նախաձեռնությունը կարելի էր կրկնել միայն 10 տարի անց[115]:

Ժողովրդավարական շարժումը խորանում էր ոչ միայն ազգային հանրապետություններում, այլեւ բուն Ռուսաստանում: Վաղուց արդեն օրակարգի հիմնական հարցերից մեկն էր Սահմանադրության՝ Կոմկուսի մշտական իշխանությունն ամրագրող 6-րդ հոդվածը. «Սովետական հասարակության ղեկավար եւ ուղղություն տվող ուժը, նրա քաղաքական սիստեմի, բոլոր պետական ու հասարակական կազմակերպությունների միջուկը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն է... կոմունիստական կուսակցությունը սահմանում է հասարակության զարգացման գլխավոր հեռանկարը, ԽՍՀՄ ներքին եւ արտաքին քաղաքական գիծը, ղեկավարում խորհրդային ժողովրդի մեծ ստեղծարար գործունեությունը, պլանաչափ, գիտականորեն հիմնավորված բնույթ է տալիս կոմունիզմի հաղթանակի համար նրա պայքարին...»[116]: Այս հոդվածի վերացման

[115] *Օրենքի պահանջներից դժվար չէ ենթադրել, որ դրանք գործնականում անհնար էին դարձնում այն հանրապետությունների անկախացումը, որոնց բնակչության թվում ռուսական տարրը էական տոկոս էր կազմում (օրինակ՝ Մերձբալթյան): Այդ պահանջները, առանց տարածքային կորուստների, չէին կարող հաղթահարել ոչ միայն Բալթյան հանրապետությունները, այլ նաեւ մյուսները, որոնք ունեին ինքնավար կազմավորումներ կամ «ազգային հոծ խմբեր»: Միակ հանրապետությունը, որտեղ չկային խոչընդոտող նման գործոններ, Հայաստանն էր, որը չուներ ինքնավար միավորներ, եւ բնակչության ազգային կազմը գործնականում միատարր էր: Այստեղ միակ խնդիրը Մոսկվային ծառայող «հայկական ինտերֆրոնտի» դիմադրության հաղթահարումն էր:*

[116] *Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնական օրենք), Երեւան, 1989, էջ 7:*

մասին խոսվում էր արդեն 1989թ գարնանից, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարի ընտրարշավի ժամանակ: Կոմկուսը, բնականաբար, համառորեն պայքարում էր իր իշխանության անձեռնմխելիությունն ապահովող սահմանադրական այս դրույթը պահպանելու համար: Նույնքան բնականաբար էլ այն պետք է դառնար ժողովրդավարական ուժերի պայքարի առաջին թիրախը, քանզի որեւէ ուժի նախասահմանված իշխանության պայմաններում չի կարող խոսք լինել ժողովրդավարության մասին: ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում Սահմանադրության 6-րդ հոդվածի վերացման խնդիրն առաջ էր քաշել Անդրեյ Սախարովը՝ համագումարի հաստատմանը ներկայացնելով «Դեկրետ իշխանության մասին» փաստաթուղթը[117]: 1989թ. դեկտեմբերին, ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարում կրկին փորձ արվեց հարցը օրակարգ մտցնել, սակայն անհրաժեշտ ձայներ հնարավոր չեղավ հավաքել[118]:

Մյուս կողմից՝ պարզ էր դառնում, որ սահմանադրական այս նորմի պահպանումը այլեւս ոչ այնքան օգնելու է Կոմկուսի իշխանության ամրապնդմանը եւ պահպանմանը, որքան գրգռելու է հասարակությանը, նպաստելու է քաղաքական ընդդիմության ընդլայնմանը եւ հզորացմանը: Այնպես որ՝ 6-րդ հոդվածից հրաժարվելը առաջին հերթին անհրաժեշտություն էր դարձել հենց կայսրության պահպանման եւ կոմունիստական կուսակցության իշխանության երկարաձգման շահերից ելնելով: Հասկանալով, որ դա անխուսափելիորեն արվելու է «ներքեւից» (հարցը ԽՍՀՄ ժող. պատգամավորների 2-րդ համագումարի օրակարգ չմտավ միայն քվեարկության ժամանակ կատարված կեղծիքի շնորհիվ), քաղաքական վճիռն ընդունեց փետրվարի 5-ին սկսված ԽՄԿԿ կենտկոմի պլենումը: Եթե պաշտոնական քարոզչությունը երեք- չորս ամիս առաջ կատաղի հիմնավորում էր Սահմանադրության այս հոդվածի պահպանման անհրաժեշտությունը,

[117] ***Сахаров А. Д.***, *Выступление на съезде народных депутатов 09. июня 1989г. https://www.youtube.com/watch?v=LGnqZ8HPv0g: Այս պահանջը պաշտպանում էր «Միջռեգիոնալ» պատգամավորական խումբը (Յուրի Աֆանասեւ, Գավրիլ Պոպով, Բորիս Ելցին, Վիկտոր Պալմ):*

[118] *Ընդ որում Հայաստանից ընտրված պատգամավորներից դրան դեմ էին քվեարկել Կենտկոմի քարտուղար Ս. Հարությունյանը, ՊԱԿ-ի նախագահ Վալերի Բագամյանցը, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանը, ինչպես նաեւ Գալուստ Գալոյանը, Վլադիմիր Մարգարյանցը, Օլեգ Լոբովը եւ այլն («Հայք», 01.04.1990):*

դրա վերացումը համարում սրբապղծության նման մի բան[119], ապա այժմ սկսեցին երեւալ հոդվածներ, մասնավորապես՝ «շարքային կոմունիստների» հայտարարություններ, այն մասին, որ Կոմկուսը «կարիք չունի սահմանադրության խնամակալության»: Իրականում այս նահանջը ժողովրդավարական շարժումների հաղթանակն էր, նրանց պայքարի ամենալուրջ արդյունքը: Առանց սահմանադրական երաշխիքների՝ Կոմկուսի իշխանությունը դատապարտված էր: Այժմ նա, պարզապես, իր առարկայացող պարտությունը սքողելու նպատակներով սույն հոդվածից հրաժարվելը գեթ քարոզչական նպատակով հօգուտ իրեն օգտագործելու հուսահատ փորձ էր անում:

Միաժամանակ, անշուշտ, Կոմկուսի նախաձեռնությամբ ստեղծվեց նաեւ իշխանություն ունենալու սահմանադրական այս երաշխիքի փոխհատուցման միջոց: Փետրվարի 27-ին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի, իսկ մարտի 14-ին՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 3-րդ արտահերթ համագումարի որոշումներով հիմնվեց ԽՍՀՄ նախագահի (պրեզիդենտի) պոստ՝ փաստորեն անսահմանափակ լիազորություններով: Իշխանության կենտրոնացումն ու խստացումը անհրաժեշտ էր ինչպես հանրապետությունների «անջատողական» ձգտումների, այնպես էլ ընդհանրապես ժողովրդավարական խորացող գործընթացների դեմ պայքարելու համար: Համապատասխան օրենսդրական հիմքն ստեղծելուց հետո, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 3-րդ համագումարը մարտի 15-ին Մ. Գորբաչովին ընտրեց ԽՍՀՄ նախագահ[120]: Ժողովրդավարական ուժերի

[119] *Նույն բանը, «ազգային մտավորականության» աջակցությամբ, արվում էր Հայաստանում, հատկապես 1989թ. դեկտեմբերի սկզբին ՀՀՇ-ի կողմից Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացված նույն՝ «Արմատական ժողովրդավարական վերափոխումներ անցկացնելու մասին հռչակագրի» հետ կապված քննարկումներում, որտեղ Շարժման կողմից առաջարկվում էր Սահմանադրությունից հանել այս հոդվածը:*

[120] *Անշուշտ, սա դեռ ամենեին չէր նշանակում, թե Կոմկուսը հրաժարվում է իշխանության մենաշնորհ ունենալու մտքից, եւ դա լավագույնս հաստատեց 1990թ. հուլիսին տեղի ունեցած ԽՄԿԿ 28-րդ համագումարը: Դրանից անմիջապես հետո ՌԽՖՍՀ Գեն-ի ԽՄԿԿ անդամ 54 պատգամավորներ (ռուսաստանյան ժողովրդավարական ուժերի աջակիցներ, որոնց պայքարի շնորհիվ Բորիս Ելցինը ընտրվել էր ՌԽՖՍՀ Գեն նախագահ) հուլիսի 14-ին հայտարարեցին, որ ԽՄԿԿ 28-րդ համագումարը չարդարացրեց կուսակցության եւ հասարակության ժողովրդավարական ուժերի սպասելիքները՝ դառնալ խորհրդարանական ժողովրդավարական կուսակցություն: Նրանք Կոմկուսը բնութագրեցին որպես «կուսակցություն, որը*

կողմից բարձրացված հարցը՝ ԽՍՀՄ նախագահի ընտրությունն իրականացնել ոչ թե համագումարի, այլ ժողովրդի կողմից՝ ուղիղ քվեարկությամբ, չանցավ: Ընդ որում՝ Հայկական ԽՍՀ-ից ներկայացված 53 պատգամավորների կազմում համագումարի կողմից ընտրվելուն դեմ էին քվեարկել ընդամենը չորս պատգամավոր[121]: Այսինքն՝ Հայաստանից ընտրված պատգամավորական կորպուսը, իր մեծագույն մասով, ինչպես եղել էր, այնպես էլ դեռ շարունակում էր մնալ կենտրոնական իշխանության հլու կամակատարը:

բ) Շարժման գործողությունները ճգնաժամի խորացման պայմաններում

ԽՍՀՄ-ում խորացող ընդհանուր տնտեսական եւ քաղաքական ճգնաժամը շատ ավելի ցայտուն էր արտահայտվում Հայաստանում: Տնտեսական եւ սոցիալական խնդիրների վրա, բացի ընդհանուր պատճառներից, մեծապես ազդում էին մի շարք ծանր եւ յուրահատուկ հանգամանքներ: Տնտեսական շրջափակումը կազմալուծում էր տնտեսությունը: Շրջափակման ամբողջ ընթացքում, փետրվարի դրությամբ, հանրապետություն չէր մտել 117,5 հազար վագոն, որը պետք է բերեր վեց միլիոն տոննա բեռ[122]: Միայն 1990 թվականի հունվար-ապրիլ ամիսներին շրջափակման հետեւանքով հանրապետության կրած վնասը կազմում էր 382 միլիոն ռուբլի: Կատարվել էր կապիտալ ներդրումների տարեկան ծավալի 17%-ը: Աղետի գոտում կատարվել էր բնակարանների շինարարության տարեկան պլանի 5,2%-ը եւ այլն[123]: Վերականգնման աշխատանքներն այստեղ, փաստորեն, կանգ էին առել: Անօթեւան մնացած կես միլիոնի չափ աղետյալներին ավելացել էին մի քանի հարյուր հազար փախստականներ: Հսկայական այս զանգվածը ոչ միայն աշխատանքի, այլեւ առաջին անհրաժեշտության հումանիտար օգնության կարիք ուներ: Սահմանամերձ

հասցրել է դաժանագույն տնտեսական, սոցիալական եւ քաղաքական ճգնաժամի, պահպանում է հրամայական կառույցները պետական օրգաններում եւ չի ուզում հրաժարվել քաղաքական իշխանության իր մենաշնորհից»: Դա անհամատեղելի համարելով ժողովրդավարության հետ՝ նրանք դուրս եկան կուսակցությունից եւ կոչ արեցին մտնել «ժողովրդավարական Ռուսաստան» շարժման մեջ (տե՛ս «Аргументы и факты» 21-27.07.1990).

[121] *«Հայք», 01.04.1990:*

[122] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 18.02.1990:*

[123] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29.05.1990:*

շրջաններն այլեւս անվտանգ չէին, եւ շատ տեղերում ձախողվում էին գյուղատնտեսական աշխատանքները: Վառելանյութի սակավությունը կազմալուծել էր տրանսպորտի աշխատանքը, բենզինի հերթերը ձգվում էին հարյուրավոր մետրեր: Վաղուց արդեն գործում էր ամենօրյա օգտագործման մթերքների եւ այլ ապրանքների նվազագույն չափերով բաշխման կտրոնային համակարգ, կտրոններով բաշխվող ապրանքների թիվը մոտենում էր մեկ տասնյակի: Սակայն չնչին չափաբաժիններով բաշխվող այդ ապրանքներն անգամ դժվար էր լինում ստանալ: Գյուղատնտեսական շուկաներում կտրուկ բարձրացել էին մթերքների գները:

Հատկապես հունվարյան իրադարձությունները ցույց տվեցին, որ գործող իշխանություններն անզոր են լուծել ծառացած այնպիսի հարցեր, ինչպես հանրապետության սահմանամերձ շրջանների պաշտպանությունն է, Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովումը, Կենտրոնի եւ Ադրբեջանի ճնշումներին ու սադրանքներին դիմակայելը: Այդ խնդիրները հանրապետության իշխանություններին փաստացի դրել էին երկընտրանքի առջեւ՝ կա՛մ իրական ընդդիմադիր դիրք գրավել կենտրոնական իշխանությունների նկատմամբ, կա՛մ, ըստ էության, կազմալուծվել եւ դիրքերը զիջել Շարժմանը: Ինչպես կտեսնենք, հանրապետության իշխանությունն ընտրել էր մի երրորդ՝ Կենտրոնին, այնուամենայնիվ, հավատարիմ մնալու, Շարժման դեմ ոչ թե ճակատային պայքարի, այլ թիկունքից հարվածելու, ցանկացած գնով իշխանությունը պահելու ճանապարհը:

Իշխանության կազմալուծումն ու անգործության մատնվելն ամենեին այն լավագույնը չէր, ինչ անհրաժեշտ էր երկրին, առավել եւս՝ այն նպատակը չէր, ինչին ձգտում էր ՀՀՇ-ն: Իշխանության կաթվածահարությունը, ներքին անկայունությունը, անիշխանության խորացումը, ինչպես ցույց էր տալիս նաեւ այլ հանրապետությունների փորձը, ընդամենը հիանալի առիթ կարող էին լինել Կենտրոնի ուժային միջամտության համար: Այսինքն, կվտանգվեր պետական շահը, եւ դա կլիներ նաեւ Շարժման պարտությունը: Ուստիեւ վերջինս յուրահատուկ այս իրավիճակում ավելի շատ մտահոգված էր հանրապետության իշխանությունների կենսագործունեության պահպանման եւ շարունակման մեջ, թեկուզեւ նրանց ստիպելու միջոցով՝ կատարելու անհրաժեշտ քայլեր: Պաշտպանական եւ երկրի ներքին կայունության հարցերից զատ ՀՀՇ-ի խնդիրն էր հանրապետության քաղաքական օրակարգի մյուս հարցերը ուշադրության կենտրոնում պահելը, դրանց վերաբերյալ հանրապետության պաշտոնական դիրքորոշումները ձեւավորելը, Կենտրոնի առջեւ հարցադրումներ եւ պահանջներ ղնելը, եւ

վերջապես՝ առաջիկա ընտրություններին օրենսդրորեն նախապատրաստվելը, դրանց անցկացման համար ներքաղաքական կայուն իրավիճակը պահպանելը: Հունվարյան բուռն իրադարձություններից հետո Շարժումն անմիջապես պահանջեց Գերագույն խորհրդի նստաշրջանի հրավիրում, որում պետք է լուծվեին նաեւ այս կարեւոր խնդիրները: Նստաշրջանը հրավիրվեց փետրվարի 13-14-ին եւ Շարժման կողմից ներկայացված օրենսդրական նախաձեռնություններով լուծեց մի շարք կարեւորագույն եւ հրատապ հարցեր:

Հարցերի առաջին խումբը վերաբերում էր իշխանության օրենսդիր մարմնի եւ տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրություններին: Գործող Գերագույն խորհրդի ժամկետը լրանում էր արդեն մի քանի օր անց՝ փետրվարի 24-ին, մինչդեռ, Սահմանադրության խախտմամբ, ժամանակին հերթական ընտրությունների օրը չէր նշանակվել: Գերագույն խորհրդի հերթական ընտրությունները նշանակվեցին մայիսի 20-ին՝ գործող պատգամավորների լիազորությունները երկարաձգելով նույն ժամկետով[124]: Նշանակվեցին նաեւ տեղական խորհուրդների ընտրությունները՝ հուլիսի 8-ին[125]: Կազմավորվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որի կազմի մեջ ընդգրկվեցին նաեւ ՀՀՇ-ի կողմից առաջադրված երեք ներկայացուցիչ[126]: Սահմանադրության եւ ընտրական օրենսդրության բարեփոխման հարցը Գերագույն խորհրդի օրակարգ էր մտել դեռ 1989 թվականի սեպտեմբերին, եւ համապատասխան նախագծերը դրվել էին ժողովրդական քննարկման: Սակայն դրանք այդ տարվա ընթացքում չէին ընդունվել: 1990-ի հունվարի 11-ին ստեղծվել էր հանձնաժողով (որում ՀՀՇ-ն ներկայացնում էին Լեւոն Տեր-Պետրոսյանը, Աշոտ Մանուչարյանը եւ Ռոբերտ Քոչարյանը) ժողովրդական քննարկման դրված օրինագծերի վերաբերյալ արված առաջարկությունների արդյունքներն ամփոփելու համար: ՀԽՍՀ Սահմանադրության մեջ կատարվեցին փոփոխություններ եւ լրացումներ[127]: Փոփոխություններ կատարվեցին ընտրական համակարգին եւ մեխանիզմներին վերաբերող հոդվածներում: Դրա հիման վրա էլ համապատասխան փոփոխություններ կատարվեցին ընտ-

[124] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 22:*

[125] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 23:*

[126] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 28: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմի մեջ ՀՀՇ-ից ընդգրկվեցին Խաչատուր Բեգիրջանը (նախագահի տեղակալ), Լյուդվիգ (Վարազդատի) Խաչատրյանը, Աշոտ Բաբախանյանը:*

[127] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 4, հոդվ. 55:*

րությունների մասին օրենքում: Ընդլայնվեցին եւ հստակեցվեցին Գերագույն խորհրդի իրավազորությունները: Միակուսակցական համակարգին հարմարեցված օրենքը, մասնավորապես՝ ընտրական հանձնաժողովների կազմավորման եւ վստահված անձանց իրավասություններին վերաբերող դրույթներում, որոշ չափով բարելավվեց: Գերագույն խորհուրդն էական փոփոխություններ կատարեց գործող Սահմանադրության ընտրական համակարգին վերաբերող բաժնում: Լեւոն Տեր-Պետրոսյանի պնդմամբ՝ պատգամավորական մանդատների 250 թիվը դարձվեց 260՝ ավելացված 10 տեղը նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի համար[128]:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնարարվեց կազմել 260 միամանդատ ընտրական տարածք: ԿԸՀ-ն, իր հերթին, Շարժման ճնշման տակ, հիմք ընդունելով 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը, այդ թվից 12 ընտրատարածք ձեւավորեց Լեռնային Ղարաբաղում[129]:

Երկրորդ կարեւոր խնդիրը՝ կատարված իրադարձություններին եւ առկա իրավիճակին քաղաքական գնահատական տալն էր եւ Մոսկվայի առջեւ պաշտոնապես համապատասխան հարցեր հարուցելը: Ընդունվեց որոշում՝ «1990 թվականի հունվարին Բաքու քաղաքում եւ Ադրբեջանական ԽՍՀ մի շարք այլ բնակավայրերում կատարված սպանությունների, ջարդերի եւ այլ ոճրագործությունների եւ դրա հետեւանքով ռեգիոնում իրավիճակի առավել սրման մասին»: Որոշման ընդարձակ ներածականը կատարված իրադարձությունների մանրակրկիտ վերլուծությունն ու քաղաքական գնահատականն էր՝ դրանցում կենտրոնական իշխանությունների մասնակցության մեղքի ու մեղսակցության հստակ արձանագրմամբ: Դատապարտվում էին Բաքվում եւ Ադրբեջանի մյուս շրջաններում հայերի

[128] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 4, հոդվ. 55:*

[129] *Այս փաստի հետ ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել կենտրոնական իշխանությունները: ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը մարտի 3-ին դրան անմիջապես արձագանքեց եւ հատուկ որոշմամբ այն «անիրավազոր» ճանաչեց (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 10, հոդվ. 159): Բայց դրանից ոչինչ չփոխվեց: Ավելի ուշ, ԽՍՀՄ ՆԳ նախարար Վ. Բակատինը Հայաստանի կոմկուսի նոր ղեկավար Վ. Մովսիսյանին ուղղված մի նամակով (20.04.1990), սպառնում էր. «Խնդրում եմ մի անգամ եւս անդրադառնալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերոհիշյալ որոշումը վերացնելու հարցին (ԼՂ-ում ընտրատարածքներ սահմանելու- Ա.Ս.): Հակառակ դեպքում ԽՍՀՄ ՆԳ-ը չի կարող ամբողջությամբ երաշխավորել տարածաշրջանում քաղաքացիների իրավունքներն ու անվտանգությունը ըստ ԽՍՀՄ ԳԽ-ի մարտի 5-ի որոշման» (ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 23):*

ջարդերը, եւ դրանք որակվում որպես հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության շարունակություն: Ապա ԽՍՀՄ Գերագույն խորհրդից պահանջվում էր.

- ճանաչել եւ դատապարտել Բաքվում եւ Ադրբեջանի այլ բնակավայրերում հայերի ցեղասպանությունը.
- ստեղծել պատգամավորական հանձնաժողով՝ կատարված իրադարձությունների պատճառներն ուսումնասիրելու եւ հարցը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների երրորդ համագումարի քննարկմանը ներկայացնելու համար.
- անհետաձգելի միջոցներ ձեռնարկել եւ ամուր երաշխիքներ տալ նման վայրագ ակտերի կրկնությունը բացառելու, Ադրբեջանում եւ Բաքվում բնակվող հայ ազգաբնակչության, այլազգի քաղաքացիների անձեռնմխելիությունը եւ անվտանգությունը ապահովելու համար.
- խիստ պատասխանատվության ենթարկել 1990 թվականի հունվարին Բաքվում եւ Ադրբեջանական ԽՍՀ մյուս բնակավայրերում տեղի ունեցած ոճրագործությունների կազմակերպիչներին եւ իրագործողներին.
- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանում քննարկել ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակը[130]:

Հաջորդ որոշումը վերաբերում էր Ադրբեջանի կողմից հունվարի 10-ից Հայաստանի վերսկսված շրջափակմանը: Արձանագրվում էին պատճառված վնասները եւ շրջափակման անթույլատրելիությունը՝ ինչպես միջազգային օրենքների, այնպես էլ Խորհրդային Միության օրենքների տեսակետից, նշվում էր, որ այն, փաստորեն, շարունակվում էր նաեւ ի հեճուկս այդ առիթով ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմնի ընդունած մի շարք որոշումների: Ապա ԽՍՀՄ Գերագույն խորհրդին առաջարկվում էր.

- դատապարտել ՀԽՍՀ-ի եւ ԼՂԻՄ տնտեսական շրջափակման ակտը եւ դրան տալ սկզբունքային գնահատական.
- արտակարգ միջոցներ ձեռնարկել շրջափակումը վերացնելու վերաբերյալ ընդունված սեփական որոշումների անհապաղ կատարման համար.
- Ադրբեջանի բյուջեի հաշվին փոխհատուցել պատճառված վնասները.
- դիմել ԽՍՀՄ գլխավոր դատախազին՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու պահանջով[131]:

[130] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 24:*
[131] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 25:*

Լեռնային Ղարաբաղի եւ շրջափակման հարցերի շուրջ հանրապետության բարձրագույն իշխանության մարմնի պաշտոնական դիրքորոշումներն ու պահանջներն ամփոփող կարեւորագույն այս փաստաթղթերն անհրաժեշտ էին հատկապես ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջիկա երրորդ համագումարին եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանին մեկնող Հայաստանի պատվիրակության համար: Բացի այդ, առանձին որոշմամբ Գերագույն խորհուրդը «իրավասությունից զուրկ, միջազգային իրավունքին անհարիր եւ անօրինական» համարեց նաեւ ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը[132], որով ժամանակին կանխորոշվել էր Լեռնային Ղարաբաղի ընդգրկումն Ադրբեջանի կազմում:

ԳԽ այսօրինակ որոշումները, որոնց նախագծերը պատրաստում էր ՀՀԾ-ն, հեշտությամբ չէին ընդունվում: Ինչքան էլ որ դրանք կենսականորեն անհրաժեշտ էին հանրապետության համար, այնուամենայնիվ, Գերագույն խորհրդում կուսակցական-խորհրդային նոմենկլատուրայի կողմից մեծ էր դիմադրությունը: Եւ այդ դիմադրությունն առայժմ դժվար էր հաղթահարել առանց դրսում հավաքված բազմության բուռն աջակցության: Նստաշրջանի երկրորդ օրը պատգամավորների մեծ մասը, անշուշտ «ղեկավարության» հրահանգով, բոյկոտեց նստաշրջանը եւ չներկայացավ նիստին: Շարժման ջանքերով եւ վաղուց մշակած մեխանիզմով նրանց հնարավոր եղավ հավաքել միայն օրվա երկրորդ կեսին: Նախագահության հաշվետվության հարցի քննարկման ժամանակ արձանագրվեց ծավալված իրադարձությունների ընթացքում նրա դրսեւորած պասիվությունը, ոչ համարժեք պահվածքը, եւ պահանջվեց, որ վերջինս ամբողջ կազմով հրաժարական տա: Քվեարկությամբ հրաժարականի հարցն, իհարկե, մերժվեց, սակայն, իշխանությունը ստիպված էր կարեւոր նահանջ քայլ կատարել. ըստ պաշտոնական լրատվության՝ «նպատակահարմար համարվեց համալրել եւ թարմացնել Գերագույն Խորհրդի նախագահության կազմը»: Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ ընտրվեց Ռաֆայել Ղազարյանը, նախագահության անդամներ ընտրվեցին Լեւոն Տեր-Պետրոսյանը, Հրաչիկ Սիմոնյանը եւ Ռոբերտ Քոչարյանը[133]: Բավականին լայն լիազորություններով օժտված նախագահությունում Շարժման ներկայացուցիչների մուտքը կարեւոր նշանակություն

[132] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 26:*
[133] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 3, հոդվ. 32, 33:*

ուներ: Նստաշրջանների հրավիրումը կատարվում էր դժվարությամբ, ամեն անգամ Շարժման մեծ ծավալի աշխատանքի գնով, հաղթահարելով նոմենկլատուրայի համառ դիմադրությունը: Մինչդեռ լարված եւ հարափոփոխ իրավիճակում մշտապես գործող Նախագահությունը կարող էր օպերատիվորեն արձագանքել իրադարձություններին, ժամանակին ընդունել անհրաժեշտ որոշումներ: Քիչ անց Գետաշենի ենթաշրջանի գյուղերի հայ բնակչությանը տեղահանելու՝ Կենտրոնի եւ Ադրբեջանի համատեղ միջոցառումների առիթով Գերագույն խորհրդի թարմացված կազմով նախագահության հայտարարությունը[134] եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված դիմումը առանց որեւէ սեթեւեթանքի իրերը կոչում էր իրենց անունով, հստակ ներկայացնում դրա պատասխանատուներին[135]:

Շարժման օրակարգում առաջին կարեւոր հարցն, անշուշտ, շարունակում էր մնալ Ղարաբաղը: Զնայած նոյեմբերի 28-ի որոշմանը եւ արտակարգ դրության պայմաններում զինվորական ուժով դրա իրականացմանն ուղղված Կենտրոնի եւ Ադրբեջանի համատեղ քայլերին՝ Ղարաբաղը լիակատար քաղաքացիական անհնազանդություն էր ցուցաբերում: Բաքվի հետ խզված էին բոլոր վարչական եւ տնտեսական հարաբերությունները, Շարժման համառ ջանքերով խորանում էր Ղարաբաղի եւ Հայաստանի համապատասխան վարչական, տնտեսական եւ մշակութային կառուցվածքների միաձուլումը: Հայաստանի Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի եւ 1989-ի դեկտեմբերի 1-ի որոշումներից հետո երրորդ կարեւոր քայլը Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա ընտրություններում ընդգրկելն էր: Հոգեբանական ճնշումները Ղարաբաղի բնակչության վրա ավելի սաստկացան: «Կազմկոմիտեի» ռադիոհեռները, սկսած ապրիլի 10-ից, օրվա մեջ մի քանի անգամ պահանջում էին ղարաբաղցիներից կա՛մ ենթարկվել Ադրբեջանին, կա՛մ հեռանալ Ղարաբաղից[136]:

Ադրբեջանում սուր հակազդեցություն առաջացրեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի խորհրդարանական ընտրություններում ընդգրկելու մասին որոշումը: Ի պատասխան դրա՝ ապրիլի 20-21-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց երկու որոշում: Առաջինով արգելվում էր Լեռնային Ղարաբաղի տարածքում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների հետ կապված որեւէ գործունեություն:

[134] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 5-6, հոդվ. 67:*
[135] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 5-6, հոդվ. 69:*
[136] *Տե՛ս* ***Арутюнян В.Б.****, События в Нагорном Карабахе, часть 3, с. 236.*

Երկրորդ որոշմամբ ԼՂԻՄ վարչատարածքային բաժանումը վերաձեւվում էր այնպես, որը հնարավորություն պետք է տար կարճ ժամանակում խախտել մարզի ժողովրդագրական հաշվեկշիռը: Ապրիլի 24-ի առիթով կազմակերպված սգո հանդիսությունների կազմակերպիչները եւ բանախոսները զինվորական պարետ Սաֆոնովի հրամանով ձերբակալվեցին: Նրանց ազատ արձակելու պահանջով մարզգործկոմի շենքի առջեւ հավաքված մարդկանց բազմությունը ցրելիս զինվորականները կրկին կրակ բացեցին, որի հետեւանքով չորս հոգի վիրավորվեցին: Ընդհանուր ճնշումներն ու խստություններն ավելի մեծացան:

Ղարաբաղում ստեղծված իրավիճակի հարցը քննարկման առարկա դարձավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի վերջին՝ 12-րդ արտահերթ նստաշրջանում, մայիսի 3-ին: Ընդունված որոշմամբ ԽՍՀՄ Նախագահից պահանջվում էր Լեռնային Ղարաբաղում վերացնել արտակարգ դրությունը եւ զորքերը դուրս բերել այնտեղից, վերականգնել մարզային խորհրդային մարմինների լիազորությունները, չեղյալ հայտարարել Ադրբեջանի վերջին ապօրինի որոշումը մարզի վարչատարածքային բաժանման մեջ փոփոխություններ մտցնելու մասին, բացել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը եւ այլն: Բողոք էր հայտնվում նաեւ, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն այդպես էլ անպատասխան է թողել դեռ մեկուկես տարի առաջ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի՝ 1915թ. Հայոց ցեղասպանության դատապարտման մասին իր՝ 1989թ. նոյեմբերի 22-ին ընդունած որոշման հետ կապված դիմումը: Գերագույն խորհուրդն իր պատրաստակամությունն էր հայտնում տեր կանգնել հանրապետության բնակչության անվտանգության ապահովմանը, պայքարել ԼՂ-ի ինքնորոշման իրավունքի համար եւ արձանագրում էր. «Սույն դիմումից բխող միջոցառումները չիրականացնելու դեպքում իրավիճակի հետագա բարդացման ողջ պատասխանատվությունը կընկնի կենտրոնական իշխանությունների եւ անձամբ ԽՍՀՄ պրեզիդենտի վրա»[137]:

Առանձին որոշմամբ միջնորդություն ներկայացվեց ԽՍՀՄ գլխավոր դատախազին՝ Ցեղասպանության 75-ամյակի առիթով Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքում կատարված բռնությունների դեպքերը քննելու եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար[138]:

[137] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 9, հոդվ. 113:*
[138] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 9, հոդվ. 114:*

Հայոց համազգային շարժումը շարունակում էր զբաղվել նաեւ երկրի քաղաքական սոցիալական եւ տնտեսական կյանքի այլ խնդիրներով: Շարունակում էր գործել «Գթություն» բարեգործական միությունը, որի միջոցով էական օգնություն էր կազմակերպվում Լեռնային Ղարաբաղի բնակչությանը: ՀՀՇ-ի առանձին մի կառույց զբաղվում էր փախստականների տեղավորման եւ աշխատանքով ապահովելու, նվազագույն կենսապայմանները հոգալու հարցերով, «Հայ զորական միությունը»՝ իրավական պաշտպանության կարիք ունեցող զինակոչիկների եւ խորհրդային բանակը հարկադրաբար լքած զինծառայողների խնդիրներով, «Ազգային կառույցը» զբաղվում էր Աղետի գոտու շինարարության կազմակերպման հարցերով եւ այլն: Վերջինս իր հայտարարություններից մեկում աշխատանքի է հրավիրում հանրապետության քաղաքացիներին՝ նրանց խոստանալով ապահովել «արտագնա աշխատանքների վարձատրությանը համարժեք պայմաններ», երաշխավորում է պայմանագրերի կնքումը համապատասխան կազմակերպությունների հետ եւ անհրաժեշտ վերահսկողության իրականացումը[139]: Առանձին կառույցներ զբաղվում էին բնապահպանական, հայերենի՝ որպես պետական լեզվի գործածության, հայկական կրթության ու այլ հարցերով: Շարունակվում էր պայքարը «Կոռնկ» կոմիտեի նախագահ Ա. Մանուչարովին շինծու մեղադրանքներից պաշտպանելու եւ կալանքից ազատելու, ԽՍՀՄ քաղաքացիությունից զրկված ու երկրից արտաքսված Պարույր Հայրիկյանի իրավունքների վերականգնման եւ այլ հարցերով: Այս հարցերի մասին օրենսդիր մարմինը հաճախ էր ստիպված լինում ընդունել Շարժման տեսակետներն արտահայտող որոշումներ:

Իշխանությունների հետ ՀՀՇ-ի հարաբերությունների իրական բնույթի մասին է վկայում, թերեւս, այսպիսի մի փաստ: Ապրիլի 14-ին «Նաիրիտում» տեղի ունեցած հերթական մեծ վթարի առիթով ՀՀՇ խորհուրդը հանդես եկավ հանրապետության դատախազին ուղղված հատուկ դիմումով. «Նկատի ունենալով, որ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը չի կատարել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թվականի հունիսի 25-ի որոշումը «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման փակման մասին, ժամանակին չի տվել փակման հրամանը, հասարակությունից թաքցրել է միավորման թունավոր հեղուկներով լեցուն տարողությունների գոյության փաստը, որ հանգեցրել է ս.թ. ապրիլի 14-ին տեղի ունեցած հանցավոր վթարին, Հայոց համազգային շարժում հասարակա-

[139] *Տե՛ս «Հայք», 08.04.1990:*

կան-քաղաքական կազմակերպությունը պահանջում է քրեական գործ հարուցել Վ. Մարգարյանցի դեմ, միաժամանակ պատասխանատվության կանչելով նաեւ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Վ. Դայանին եւ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման գլխավոր տնօրեն Ս. Աստվածատրյանին»[140]:

Իր արդյունավետ գործունեության շնորհիվ ՀՀՇ-ի վարկանիշը շարունակում էր բարձրանալ ոչ միայն Հայաստանում եւ Խորհրդային Միությունում: Սփյուռքում գործող քաղաքական կուսակցությունների եւ մասնավորապես՝ Դաշնակցության բուռն քարոզչությունը հօգուտ Հայաստանի կոմկուսի «հայրենասիրական» եւ ընդդեմ «ՀՀՇ-ի արկածախնդրական ծրագրերի», ավելի ու ավելի քչերին էր համոզիչ թվում. Սփյուռքի չկուսակցականացված հսկայական հատվածը բոլորովին այլ կերպ էր մտածում եւ մեծ համակրանք ուներ Շարժման նկատմամբ: Այս առումով հատկանշական է «Հայաստանին անհետաձգելի օգնության համաձայնեցման կոմիտեի»՝ փետրվարի 5-ով թվագրված մի հայտարարությունը: Վերջինս հայտնում էր, որ «անկախ է հայկական քաղաքական կազմակերպություններից եւ ուղղված է հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների միջեւ համերաշխության զարգացմանը»: Իր նպատակը համարելով նպաստել Հայաստանի ժողովրդավարացման ընթացքին, նրա անվտանգությանը եւ պաշտպանությանն աջակցելը՝ Ֆրանսիայում եւ եւրոպական այլ երկրներում գործող տասնմեկ հայտնի կազմակերպությունների այս միությունը Հայաստանում որպես գործընկեր տեսնում եւ ճանաչում էր ոչ թե գործող իշխանություններին, այլ Հայոց համազգային շարժմանը. ««Համաձայնությունը» մտադիր է արձագանքել այն կարիքներին ու խնդրանքներին, որոնք կարտահայտի Հայոց համազգային շարժումը: Իրոք, երկու տարուց ավելի է, ինչ Հայաստանը պայքարի մեջ է մտել Ղարաբաղի ազատ ինքնորոշման եւ Հայկական Հանրապետության դեմոկրատացման համար, եղել են բազմաթիվ փորձություններ, հաճախ՝ ցավալի: Այս բոլոր փորձությունների միջով անցնելով, Հայոց համազգային շարժումը (իսկ նրանից առաջ «Ղարաբաղ» կոմիտեն, որից եւ առաջացավ Շարժումը), ապացուցեց իր հաստատակամությունը, իր ընդունակությունը՝ արտահայտելու հայ ժողովրդի դեմոկրատական պահանջների առանձնահատկությունը, պատասխանատվության զգացումը, տեղական իշխանությունների եւ խորհրդային կենտրոնական կառավարության հետ իր ունեցած հարաբերությունները:

[140] *«Հայք», 22.04.1990:*

Հայոց համազգային շարժումն է այսօր կոորդինացնում քաղաքական, ռազմական եւ դիվանագիտական գործողությունները»[141]:

ՀՀՇ-ի ղեկավարները, տարբեր առիթներով լինելով արտասահմանում, զբաղվում էին նաեւ հանրապետության համար խիստ գործնական հարցերի լուծմամբ: Այսպես. «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը մի հեռագրով տեղեկացնում է Լեւոն Տեր-Պետրոսյանին եւ Բաբկեն Արարքցյանին, որ նրանց կողմից հայտնված ցանկությունը՝ Հայաստանում ունենալ մանկական սննդի եւ նորածինների խանձարուրների գործարաններ, շուտով կկատարվի, անհրաժեշտ սարքավորումները կառաքվեն Հայաստան[142]: Սփյուռքում Հայաստանի եւ Շարժման մասին օբյեկտիվ տեղեկատվության տարածմանը օգնում էին որոշ ոչ կուսակցական թերթեր, այդ թվում Փարիզում հրատարակվող «Յառաջը», որ ի սկզբանե կարեւոր դեր էր խաղում հայաստանյան իրողությունները եւ Շարժման փաստաթղթերը միջազգային ասպարեզում հանրայնացնելու գործում:

գ) Իրավիճակն իշխանության եւ Կոմկուսի ներսում

Նույնիսկ անզեն աչքով տեսանելի էր, որ ՀՀՇ-ի հեղինակությունը անհամեմատ մեծ է, եւ հասարակության քաղաքականապես ակտիվ ողջ զանգվածը նրան է պաշտպանում: Մինչդեռ Կոմկուսի հեղինակության անկումը շարունակվում էր, նրա կազմը շարունակաբար նոսրանում էր, եւ հեռանում էին հատկապես նրա շարքային անդամները: Քիչ թե շատ օրինական ընտրությունների դեպքում Կոմկուսի իշխանությունը Հայաստանում դատապարտված էր:

Կոմկուսի կենտկոմն առավել ուղղափառ կոմունիստներից, այդ թվում՝ նաեւ բարձրաստիճան պաշտոնյաներից, ստանում էր «տագնապով ու զայրույթով» գրված դիմումներ տիրող իրավիճակի եւ իշխանության անգործության մասին: Հրատարակչությունների եւ պոլիգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ, նույն Կոմկուսի ԿԿ-ի անդամ Ստեփան Պողոսյանի «գաղտնի» գրիֆով այդօրինակ մի գրության մեջ (թվագրված փետրվարի 22-ով), իմիջիայլոց, ներկայացված է նաեւ կազմալուծված իշխանության պատկերը. «Արտաքուստ թվում է, թե մեզանում երկիշխանություն է, սակայն միակ իրական իշխանությունը Հայոց համազգային շարժման թելադրանքն է.... Այնպիսի տպավորություն է, որ Հայաստանի կոմկուսի ԿԿ-ը,

[141] «Հայք», 08.04.1990:
[142] «Հայք», 08.04.1990:

Գերագույն խորհուրդը եւ կառավարությունը ինքնակամ քաշվել են հետին պլան եւ ասպարեզը տվել «ժողովրդի բարեկամներին», որոնք պայքարում են նրա ձգտումների իրականացման համար: Ավելին՝ շատ կուսակցական, խորհրդային, տնտեսական ղեկավարներ, այդ թվում՝ նաեւ բարձր պաշտոն զբաղեցնող, գործնականում իրենց տվել են ՀՀՇ-ի ողորմածությանը, վերածվել նրանց կամակատարի կամ փորձում են այն օգտագործել իրենց անձնական, եսասիրական, իշխանատենչ ծրագրերի կենսագործման համար: Շփոթի եւ հուսալքության մեջ են կուսակցական եւ խորհրդային աշխատողները: Նրանցից շատերը դատապարտված են անգործության կամ կատարում են ոչ պաշտոնական կազմակերպությունների հանձնարարությունները»: Կենտկոմի անդամը առաջարկում է բյուրոյին՝ «կա՛մ արմատական միջոցների դիմել, կա՛մ ամբողջ կազմով հրաժարական տալ»: Իսկ արմատական միջոցառումների տակ հասկանում էր՝ առանցքային պաշտոններում «քաղաքացիական համարձակություն եւ պայքարի կամք ունեցող» մարդկանց նշանակելը, պատժել որոշ պարբերականների ղեկավարների, գնահատական տալ «ադմինիստրատիվ օրգաններին» եւ այլն[143]:

Բարոյալքման եւ անգործության էր մատնված հատկապես միլիցիան: Կոմսոմոլի կենտկոմի ղեկավար Հրանուշ Հակոբյանը պարզապես առաջարկում էր. «Ներքին գործերի նախարարության մարմինները վերակազմավորել զինված ջոկատների առողջ ուժերի բազայի վրա եւ ստեղծել ժողովրդական միլիցիա, քանի որ վերջին շրջանի իրադարձությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում օրենքները չեն գործում եւ ՆԳՆ-ն ամբողջությամբ բարոյալքված է»: Առաջարկում էր նաեւ «կարճ ժամկետում ավարտել Ազգային պաշտպանության կոմիտեի» (խոսքը, հավանաբար, Գերագույն խորհրդին առընթեր Պաշտպանության խորհրդի մասին է,- Ա.Ս.) կառույցների ձեւավորումը»[144]:

Իշխանության լծակները վերից վար, ճիշտ է, ամբողջությամբ Կոմկուսի ձեռքում էին, սակայն միայն դրանք օգտագործելը եւ դրանց վրա հույսը դնելը, ինչպես ցույց էր տվել փորձը, կարող էր բավարար չլինել, անգամ հակառակ արդյունքի հանգեցնել: Շարժումը հզոր ուժ էր, կարող էր արդյունավետորեն հակադրվել իշխանությունների ճնշումներին, թույլ չտալ զանգվածային եւ ակնառու ընտրակեղծիքներ: Կոմկուսի ձեռքում էին նաեւ զանգվածային լրատվության՝ փաստորեն բոլոր միջոցները (թերթեր, ռա-

[143] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 14-16:
[144] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 57-58:

դիո, հեռուստատեսություն): Սակայն դրանցով ուղղակի ճակատային գաղափարական պայքարը ավելի շատ հակառակ արդյունք կարող էր տալ: Կոմկուսը չէր կարող ո՛չ իր «հերոսական անցյալով», ո՛չ իր «փառահեղ ներկայով», ո՛չ էլ «պայծառ ապագայի» խոստումներով հասարակության մեջ անհրաժեշտ ձայներ շահել: Չնայած մեծաքանակ գաղափարախոսական ապարատին եւ քարոզչության վրա իրականացվող բազմամիլիոն ծախսերին՝ նրա խոսքը չէր կարդացվում ու չէր լսվում[145]: Այնքան մեծ էր կոմունիստական իշխանության վարկաբեկվածության աստիճանը, որ նրան չէր փրկի անգամ հայտնի «հույժ ազգային» խնդիրների որդեգրումը, ավանդական պատկերացումներով հայրենասերի ու ազգայնականի կերպարանք ընդունելը, ինչը նա փորձում էր անել: Այժմ թռուցիկների փոխարեն դրանց արդյունավետորեն դիմակայում էր ՀՀՇ-ի՝ բազմահազար տպաքանակով հրապարակվող եւ երկրով մեկ տարածվող «Հայք» շաբաթաթերթը, շարունակվում էին նաեւ պարբերաբար հրավիրվող հանրահավաքները:

Կոմկուսը չէր կարող ընտրությունների գնալ միայն դրական քարոզչությամբ՝ սեփական ծրագրերը ներկայացնելու միջոցով ու նախընտրական խոստումներով, որոնց ոչ մեկն այլեւս չէր հավատում: Նա չէր կարող նաեւ արդյունավետորեն քննադատել ՀՀՇ-ին ո՛չ գաղափարական առումով, ո՛չ էլ նրա գործունեությանը վերաբերող մեղադրանքներով, դա կառաջացներ ամենաբուռն հասարակական հակազդեցություն: Մյուս կողմից, սակայն, նա ամենեւին չէր պատրաստվում կիսել, առավել եւս՝ զիջել իշխանությունը, եւ այն պահելու համար պատրաստ էր ամեն քայլի: Դատելով նախընտրական շրջանում ծավալված իրադարձություններից՝ կարելի է վերականգնել Կոմկուսի մարտավարությունը, նրա ու նրա դաշնակիցների կողմից իշխանությունը պահելուն ուղղված իրական նախընտրական միջոցառումների համալիրը: Հիմնական քայլերը չորսն էին.

Ա) Հանրապետության ղեկավարի փոփոխություն՝ ազատվելու համար արդեն վարկաբեկված Սուրեն Հարությունյանից.

---

[145] *Ահա այդ մասին վկայող մի խոսուն վիճակագրություն. ռուսերեն եւ չորս այլ օտար լեզուներով հրատարակվող «Վերածնված Հայաստան» ամսագրի գլխավոր խմբագիրն առաջարկում էր գաղարեցնել դրա գերմաներեն ու իսպաներեն տարբերակների հրապարակումը, քանի որ գերմաներեն 810 օրինակից Սփյուռքում բաժանորդագրվել են ընդամենը 6 օրինակ, իսկ իսպաներեն 720 օրինակից՝ 20: Ամսագրի ինքնարժեքը կազմում էր 4 ռուբլի, վաճառվում է 40 կոպեկով, տարեկան վնասը կազմում է 55.000 ռուբլի (ՀԱԱ, ֆ. 1. ց. 127, գ. 772, թ. 61):*

Բ) «Համահայկական խորհրդաժողովի» հրավիրում՝ օրակարգային հիմնական՝ անկախության հարցը փոխելու համար.

Գ) Նշանակված ընտրությունների հետաձգում անորոշ ժամանակով.

Դ) Հանրապետության նախագահի պաշտոնի հիմնում եւ նախագահական ընտրության շուտափույթ անցկացում:

Այս քայլերից նա կարողացավ իրականացնել միայն առաջինը, ինչը բավարար չէր իշխանությունը պահելու համար:

դ) Կոմկուսի ղեկավարի փոփոխությունը

Նախընտրական շրջանում, առաջին հերթին, անհրաժեշտ էր փոխել Հայաստանի կոմկուսի առաջին դեմքին: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը քաղաքական իմաստով վաղուց իրեն սպառել էր: Նա, որպես «դրսից եկած» եւ «չարատավորված» գործիչ, նախ փորձեց արտաքուստ ներկայանալ «ազգային» կոմունիստի կերպարով, նույն կերպարի մեջ մտցնել կուսակցությունը եւ ցույց տալ, թե գնում է Շարժմանը համընթաց: Սակայն դա անհնար էր համատեղել Մոսկվայից ստացված հրահանգներն անվերապահորեն կատարելու նրա իրական հանձնառության հետ, ուստիեւ քիչ անց բացահայտվեց նրա իրական կերպարը: Իսկ վերելք ապրող Շարժումը, «Ղարաբաղ» կոմիտեի գլխավորությամբ, արդեն 1988-ի նոյեմբերին ընդհուպ կարողացավ իր նախաձեռնությամբ, իր սահմանած օրակարգով եւ իր որոշած տեղում Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրել եւ որոշումներ ընդունել: Դա, իմիջիայլոց, նշանակում էր նաեւ, որ հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների մեծամասնությունը կտրուկ երկընտրանքի դեպքում ավելի շուտ կենթարկվի Շարժման ճնշմանը, քան ՀԿԿ ԿԿ-ին ու նրա ղեկավարին: Այս նստաշրջանի աշխատանքներն ընդհատելու համար իշխանությունը ստիպված էր գնալ ծայրահեղ քայլի, նախ՝ ամոթալի խաբեության, ապա՝ հատուկ դրություն եւ պարետային ժամ մտցնել[146]:

Երկրաշարժից հետո, հարմար պահն օգտագործելով, Ս. Հարությունյանը ձերբակալել տվեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին եւ արագորեն մտավ իր իրական՝ կոմունիստ ֆունկցիոների կերպարի մեջ՝ միաժամանակ բացահայտելով իր ամենաբուռն հակակրանքը Շարժման նկատմամբ: Շարժման նոր վերելքից եւ «Ղարաբաղ» կոմիտեի ազատվելուց հետո նա կրկին փորձեց վերադառնալ «ազգային կոմունիստի» կերպարին,

---

[146] *Տե՛ս* **Սարգսյան Ա.**, *Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 205-213:*

փորձեց Շարժման ղեկավարությանն այլընտրանք ստեղծել՝ օգտագործելով նոմենկլատուրային մտավորականությանը: Որպես քաղաքական դեմք՝ նա 1989-ի ամռանն արդեն իրեն լիովին սպառել էր, իսկ վարքագծի վայրիվերումների շնորհիվ դարձել համընդհանուր ծաղրուծանակի ու արհամարհանքի առարկա: Տրամաբանական կլիներ, եթե նա հենց այդ ժամանակ ազատվեր պաշտոնից, բայց Կենտրոնը չգնաց այդ քայլին, թերեւս, միայն այն բանի համար, որ նա անմոունչ կատարում էր բոլոր հանձնարարությունները:

ԽՍՀՄ ԳԽ նախագահության՝ 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումից հետո Ս. Հարությունյանը որպես առաջին դեմք, ըստ էության՝ գոյություն չուներ: Նրա ղեկավարած իշխանության վերջին հաջողությունը ՀՀՇ վարչության անունից ներկայացված «Արմատական ժողովրդավարական բարեփոխումների հռչակագրի» օրենսդրական նախաձեռնության խոչընդոտումն էր: Սակայն այդուհետեւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումների եւ օրենքների նախագծերի մեծ մասն արդեն Կոմկուսի կենտկոմում չէ, որ ծնվում էին, դրանք մտահղացվում եւ նախագծերը կազմվում էին «Ղարաբաղ» կոմիտեում, ՀՀՇ վարչությունում եւ ներկայացնում էին Շարժման օրակարգն ու տեսակետները: Գերագույն խորհրդում, թեկուզ դժվարությամբ, բայց անցնում էին այնպիսի օրենսդրական նախաձեռնություններ, որոնք կարող էին անմիջականորեն խարխլել կայսրության, հասարակարգի գաղափարախոսության եւ կոմունիստական իշխանության հիմքերը, դյուրացնել իշխանափոխությունը: Ս. Հարությունյանը դարձել էր այն կերպարը, որի ղեկավարությամբ Կոմկուսը եւ իշխանություններն առավել խոցելի էին դառնալու առաջիկա ընտրություններում: Կասկած լինել չի կարող, որ նրան Կոմկուսի ղեկավարի պաշտոնից ազատելը Մոսկվայի կողմից իրականացված հստակ նախընտրական միջոցառում էր՝ ՀՀՇ-ի հաղթանակը կանխելու միջոցառումների շրջանակներում:

Փոփոխությունը տեղի ունեցավ 1990թ. ապրիլի 6-ին: ՀԿԿ ԿԿ-ի Առաջին քարտուղար ընտրվեց ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի 1-ին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանը: Վերջինս երկարամյա աշխատանքի փորձ ուներ տնտեսական եւ կառավարման մարմիններում, հայտնի էր իր գործնականությամբ, չոր կաբինետային ապարատային աշխատող չէր, հաճախակի շփումների շնորհիվ ճանաչված էր հատկապես գյուղական շրջաններում, մինչ այդ, որպես պետական պաշտոնյա, Շարժման հետ բախվելու եւ նրա քննադատության թիրախ դառնալու առիթ չէր ունեցել: Ընտրությունն, այս առումով, մտածված էր եւ ժամանակին: Հաջորդ մեկու-

կես ամսվա ընթացքում դժվար կլիներ նրան որեւէ լուրջ թերացման կամ սխալի համար մեղադրանք ներկայացնել, իսկ բոլոր այդօրինակ մեղադրանքները կարելի էր վերահասցեագրել «նախկին ղեկավարությանը»:

ե) «Ազգային միասնությունը» որպես խայծ՝ ընտրությունները խափանելու համար

Գերագույն խորհրդի հերթական ընտրությունները, գործող Սահմանադրության խախտմամբ, արդեն իսկ ուշացել էին մոտ երեք ամսով: Ուստիեւ ՀՀՇ-ի ջանքերով Գերագույն խորհրդի փետրվարյան նստաշրջանում ընտրությունների օրը որոշմամբ ամրագրելը (մայիսի 20) կարեւոր նշանակություն ուներ: Իշխանությունը, Ս. Հարությունյանի գլխավորությամբ, չկարողացավ խուսափել դրանից: Կոմկուսը եւ նրան սատարող ուժերը բավարար տվյալներ ունեին հաշվարկելու համար, որ այդ ընտրություններում իրենց հաղթելու հավանականությունը զրոյական է: Դրա համար էլ՝ ՀԿԿ-ն իր նոր ղեկավարի գլխավորությամբ անմիջապես ձեռնամուխ եղավ արդեն իսկ նշանակված ընտրությունները որեւէ կերպ խափանելու կամ հետաձգելու խնդրին: Օրենսդրորեն՝ Գերագույն խորհրդի նոր որոշմամբ դա հնարավոր չէր անել շատ թե քիչ բանական հիմնավորմամբ, առավել եւս՝ հասարակական այդօրինակ ակտիվության պայմաններում, երբ ՀՀՇ-ն կարողանում էր օրենսդիր մարմնում անցկացնել իր բոլոր օրենսդրական նախաձեռնությունները: Հասարակական ընկալումներում այդ ընտրություններն արդեն իսկ դիտվում էին որպես կարեւորագույն քաղաքական միջոցառում՝ դրա արդյունքների հետ կապելով երկրի քաղաքական օրակարգում առկա բոլոր կարեւոր հարցերի լուծումը: Նշանակված ընտրությունները հետաձգելու համար անհրաժեշտ էր գտնել այլ՝ շրջանցիկ մի ճանապարհ կամ հնչեղ այլ մի հիմնավորում: Եւ օգնության կանչվեց «ազգային միասնության» կամ «ազգային համերաշխության» կարգախոսը՝ նոր ընտրվելիք Գերագույն խորհրդին հակադրելով «համահայկական խորհրդաժողով» հրավիրելու, «համազգային մի մարմին ստեղծելու» եւ նրա մշակած ուղեգծով առաջնորդվելու գաղափարը:

Առաջին անգամ չէր, որ շրջանառվում էր այս գաղափարը՝ որպես Շարժմանը հակադրվելու պլատֆորմ եւ նրա կարեւորագույն քայլերը խոչընդոտելու միջոց: Այլ միջոց պարզապես չկար: Գաղափարական հարթության վրա պայքարը ՀՀՇ-ի դեմ եւ հոգուտ կոմունիստների չէր կարող տնտեսական բնույթի հիմնավորում կամ հասարակական հնչեղություն

ունենալ. տնտեսվարման սոցիալիստական համակարգը հստակ ցույց էր տվել իր տխուր արդյունքները: Այդ պայքարը չէր կարող մղվել նաեւ կոմունիստական գաղափարախոսության դիրքերից. դրան այլեւս ոչ ոք չէր հավատում: Այն կարող էր մղվել միայն «ազգայինի» դիրքերից, բայց, իհարկե, այնպես, որ այդ «ազգայինը» ենթադրի ԽՍՀՄ կազմում մնալու անհրաժեշտություն: Ինչպե՞ս էր դա հնարավոր, երբ հանրահայտ է, որ անկախ պետականություն չունեցող բոլոր ժողովուրդների համար ազգայնականության դրսեւորումը եղել է անկախության ձգտումը եւ նրա թիվ 1 խնդիրը՝ անկախության ձեռքբերումը, որպես բարձրագույն արժեք՝ դրա պահպանումը: Եւ հենց դա էր ՀՀՇ-ի նախընտրական ծրագրի առանցքը, ուստի թվում էր, թե այդ ծրագիրն անհնար է քննադատել ազգայնականության դիրքերից:

Սակայն, ինչպես գիտենք, հայ իրականությունն այս առումով եզակի յուրահատկություն ուներ, եւ այդ յուրահատկությունը, գլխիվայր շրջված արժեքային համակարգի ու կեղծ քաղաքական հասկացությունների տեսքով, դրված էր ավանդական պատկերացումների հիմքում: Եւ ստացվել էր նույնպիսի մի բանաձեւ, որտեղ ազգայնական թիվ 1 հարց անկախությանը հակադրվում էր «ավելի ազգային»՝ «Հայ դատ»/պահանջատիրությունը, այսինքն՝ Թուրքիայից պատմական հայկական հողերը հետ ստանալու պահանջը, որը հնարավոր է լուծել միայն հզոր մի այլ երկրի (այս դեպքում՝ ԽՍՀՄ-ի) կազմում գտնվելով եւ նրա միջոցով: Եւ դա՝ այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ը երբեք իր վրա նման պարտավորություն չէր վերցրել, նման խոստում չէր տվել, անգամ ակնարկ չէր արել: Անկախության պայմաններում, ըստ հայդատականների, պահանջատիրությունը անհնար կլինի հետապնդել, իսկ Հայաստանը կհայտնվի պանթուրքիզմի երախում, եւ Թուրքիան հաջորդ օրը նրան կխժռի: Այսինքն՝ անկախությունը, ամեն ինչից զատ, վտանգավոր է նաեւ Հայաստանի բնակիչների համար: Գաղափարական այս հիմքի վրա պայքարը, ինչպես արդեն գիտենք, մղում էր Սփյուռքում Դաշնակցությունը, իսկ Հայաստանում՝ նոմենկլատուրային մտավորականությունը եւ այլազան մանր կազմակերպություններ[147]: ՀՀՇ-ի ծրագրով բարձրագույն արժեքը եւ ամեն տեսակ հնարավոր ազգային հարցերի (առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի) լուծման բանալին տվյալ պայմաններում անկախ պետականությունն էր: Անկախություն ձեռքբերումով Հայաստանը կարող էր ապրել եւ զարգանալ բոլոր հարե-

[147] *Տե՛ս Մարգոյան Ա., Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 416-447:*

ւանների, այդ թվում նաեւ Թուրքիայի հետ հաստատելով նորմալ միջպետական հարաբերություններ: Սա «Հայ դատ»/պահանջատիրականությունը համարում էր «թուրքասիրություն», պահանջատիրության զոհաբերում: Այս հիմքի վրա է, ահա, որ գաղափարական պայքար պետք է մղվեր ՀՀՇ-ի դեմ, եւ արդեն մոտ մեկ տարի այդ պայքարը կար եւ կազմակերպվածության որոշակի հատկանիշներ էր դրսեւորում: Նախատեսվող «համահայկական խորհրդաժողովն» էլ պետք է պաշտպաներ այս մոտեցումը: Հաշվարկը հստակ էր. եթե Հայաստանը մնում է ԽՍՀՄ կազմում, ապա այստեղ պահպանվում է Կոմկուսի իշխանությունը:

Կարճ նախապատրաստական աշխատանքներից հետո ՀԿԿ ԿԿ-ի նոր ղեկավար Վլադիմիր Մովսիսյանը ապրիլի 17-ին իր մի ելույթում առաջարկեց հետեւյալը. «Ճգնաժամից դուրս գալու ելք որոնելու, ազգի բոլոր կենսական ուժերը համախմբելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել ազգային համաձայնության խորհուրդ: Նրանում պետք է ընդգրկվեն մեր անվանի մարդիկ, բոլոր շարժումների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Դուք գիտեք, որ ծրագրվում է հրավիրել նաեւ համազգային խորհրդաժողով՝ Հայաստանի, Արցախի, ներքին եւ արտաքին սփյուռքի բարձր ներկայացուցչական կազմով: Այդ խորհրդաժողովը կքննարկի, կձեւավորի ազգային վերածնության ու գոյատեւման ծրագիր»[148]:

Համահայկական խորհրդաժողովի գաղափարը, որպես, փաստորեն, իշխանության բարձրագույն մարմին Գերագույն խորհրդին այլընտրանք, նույնիսկ ավելի բարձր՝ «համազգային մարմին», որպես ճգնաժամից դուրս գալու դեղատոմսեր առաջարկող միջոց, կարող էր ծառայել որպես խայծ՝ շեղելու համար հասարակության օրեցօր մեծացող ուշադրությունը առաջիկա ընտրությունների նկատմամբ: Իսկ որոշակի հաջողության դեպքում արդեն կարելի էր որեւէ կերպ լուծել նաեւ նշանակված ընտրությունները խափանելու կամ անհրաժեշտ ժամկետով հետաձգելու հարցը:

Համահայկական խորհրդաժողովն, իհարկե, միայն ընտրությունները հետաձգելու միջոց չէր դիտվում: Այն պետք է որոշեր եւ տար նաեւ «ազգային վերածնության ու գոյատեւման ծրագիր»: Իսկ այն կազմը, որ նախատեսվում էր հավաքել, արդեն ակնհայտ էր, բացասաբար պետք է արտահայտվեր երկրի քաղաքական օրակարգում հասունացած հիմնական՝ անկախության ուղեգծի վերաբերյալ:

[148] *«Խորհրդային Հայաստան», 20.04.1990:*

զ) Հանրապետության նախագահի պաշտոնի հիմնումը

Կոմկուսի հեղինակազրկումն ու թուլացումն անընդհատ խորացող երեւույթ էր ողջ Խորհրդային Միությունում: Ճիշտ է՝ նրան իշխանության իրավունք էր վերապահված Սահմանադրության ուժով, սակայն համապատասխան հոդվածն ավելի ու ավելի հաճախ էր դառնում քննարկման առարկա ե՛ւ ազգային հանրապետություններում, ե՛ւ ռուսաստանյան ժողովրդավարական ուժերի կողմից: Իշխանությունը կենտրոնացված եւ իր ձեռքում պահելու համար, դեռ 1989թ. ամռանը, Մ. Գորբաչովը ստիպված էր համատեղել Քաղբյուրոյի գլխավոր քարտուղարի եւ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնները: Ազգային հանրապետություններում դա չընդօրինակվեց, քանի դեռ օրենսդիր մարմինների ընտրության հարց չկար: Սակայն զարգացող իրադարձություններն ու միտումները ցույց էին տալիս, որ հանրապետություններում նաեւ այդօրինակ որեւէ նախաձեռնություն այլեւս բավարար լինել չի կարող իշխանությունը Կոմկուսի ձեռքում պահելու համար: Չնայած մինչ այդ իր ցուցաբերած բուռն դիմադրությանը՝ իշխող կուսակցությունն, այնուամենայնիվ, ստիպված էր հրաժարվել Սահմանադրության՝ իր իշխանությունն ապահովող 6-րդ հոդվածից: Վերջինս նրա համար իշխանության պահպանման երաշխիք լինելուց արդեն վերածվում էր Աքիլլեսյան գարշապարի, որին անընդհատ հարվածում էին: Ուստիեւ մտցվեց ԽՍՀՄ նախագահի պաշտոն, եւ Մ. Գորբաչովն ընտրվեց ԽՍՀՄ Նախագահ:

Հայաստանում Նախագահի պաշտոն հիմնելու մասին որոշումը թելադրված էր նույն՝ իշխանությունը պահպանելու ելք գտնելու մտահոգությամբ: Ակնհայտ էր, որ Գերագույն խորհրդի ընտրություններում ՀՀՇ-ի հաղթանակը, ուժերի այդ պահի հարաբերակցության պայմաններում, կանխորոշված է: Ուստիեւ Կոմկուսին այլ բան չէր մնում, քան որեւէ կերպ փորձել հետաձգել ընտրությունները եւ մինչ այդ անցկացնել Նախագահի ընտրություն: Բացատրությունը հասկանալի էր. Գերագույն խորհրդի ընտրություններում պարտվելուց հետո Կոմկուսը հաղթանակի հույս չէր կարող ունենալ նաեւ նախագահական ընտրություններում: Նախագահական ընտրություններում հաղթելու դեպքում (ինչի վրա կոմունիստները, երեւի, նոր Առաջին քարտուղարի առկայությամբ, ավելի վստահ էին) կարելի կլիներ թարմացված իշխանությունն ու հաղթանակի իներցիան օգտագործել հաղթելու նաեւ խորհրդարանական ընտրություններում:

Մայիսի 3-ին, նշանակված խորհրդարանական ընտրություններից ընդամենը երկու շաբաթ առաջ, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանձնարարել համապատասխան հանձնաժողովին՝ շտապ, 5-օրյա ժամկետում, մշակել ՀԽՍՀ Նախագահի մասին օրենքի եւ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխության նախագիծ եւ այն ներկայացնել Գերագույն խորհրդի քննարկմանը: Նույն որոշմամբ նախատեսվում էր նախագահական ընտրությունն անցկացնել օրենքն ընդունելուց հետո երկու ամսվա ընթացքում[149]: Դժվար չէ նկատել, որ թե՛ կարեւորագույն այս օրենքի նախագծի պատրաստության, թե՛ նույնքան կարեւորագույն այս միջոցառման անցկացման համար նախատեսված ժամկետները (հինգ օր եւ երկու ամիս) շատ սուղ էին: Այսինքն՝ ակնհայտ էր չափազանց շտապողականությունը: Միաժամանակ, իհարկե, ամեն ինչ պետք է արվեր, որպեսզի Գերագույն խորհրդի՝ մայիսի 20-ին նշանակված ընտրությունները հետաձգվեին այնքան ժամանակով, որ նախ տեղի ունենային նախագահական ընտրությունները: Մայիսի 14-ին Գերագույն խորհրդի նախագահությունն ի գիտություն ընդունեց, որ իր հանձնարարականները՝ «Նախագահի մասին» եւ «Սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը պատրաստ են: Սակայն Շարժումը կարողացավ կանխել այս սցենարի իրականացումը. Գերագույն խորհրդի նախագահությունը ստիպված էր որոշում ընդունել, նախ՝ այդ նախագծերը 10-օրյա ժամկետում դնել համաժողովրդական քննարկման, ապա՝ մեկամսյա քննարկումներից հետո ամփոփել արդյունքները, որից հետո այն կարելի էր ընդունել Գերագույն խորհրդում[150]: Ստացվում էր, որ լավագույն դեպքում՝ նախագահական ընտրությունները կարող էին իրականանալ սեպտեմբերի վերջին:

* * *

Իշխանության հավակնող երկու իրական ուժ գոյություն ուներ՝ ՀՀՇ-ն եւ Կոմկուսը: Ինչպես ցույց տվեցին առաջադրումները, նախընտրական պայքարը եւ ընտրությունների արդյունքները, բացի ՀՀՇ-ից, որեւէ այլ կազմակերպություն կամ կազմակերպությունների միություն ո՛չ ի վիճակի էր, եւ ո՛չ էլ իր առջեւ կոմունիստներից իշխանությունը վերցնելու խնդիր էր դրել: Ընդ որում՝ ՀՀՇ-ն նաեւ լայնորեն հովանավորում ու պաշտպանում էր այն կազմակերպություններին եւ հեղինակավոր անհատներին, որոնք

---

[149] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ. 112:*

[150] *Կար համապատասխան օրենք, որը նախատեսում էր հենց այսպիսի ընթացակարգ:*

նույնպես ժողովրդավարության հիմքի վրա որդեգրել էին Կոմկուսի դեմ քաղաքական պայքարի ճանապարհը: Նրանցից շատերը ներգրավված էին ՀՀՇ-ի կողմից պաշտոնապես պաշտպանվող թեկնածուների ցուցակում: Այս պայմաններում ՀՀՇ-ի դեմ պայքարը եւ դրա սաստկացումը, ում կողմից եւ ինչ կարգախոսով էլ դա իրականացվեր նախընտրական շրջանում, հստակորեն պետք է աշխատեր հօգուտ Կոմկուսի, նպաստեր նրա իշխանության պահպանմանը:

Շարժման, նրա գաղափարների ու ծրագրերի դեմ պայքարող հիմնական ուժերը, բացի Կոմկուսից, ինչպես մինչ այդ, այժմ էլ՝ երեքն էին. Հայաստանում՝ նոմենկլատուրային մտավորականությունը եւ ժամանակ առ ժամանակ տարբեր անուններով «համախմբվող» մանր կազմակերպությունները, Սփյուռքում՝ ավանդական կուսակցությունները:

Է) Կոմկուսի նախընտրական քարոզչությունը եւ միջոցառումները

Կոմկուսի նախընտրական ծրագիրը «բոլոր քաղաքացիներին» ուղղված մի դիմումի տեսքով հրապարակվեց ապրիլի սկզբին: Այն որպես «վերածնման ազգային ծրագրի» հիմք համարում էր 1988-ի Կոմկուսի սեպտեմբերյան պլենումում ընդունված «ռեալիստական ծրագիրը»: Այսինքն՝ վերջին ավելի քան մեկուկես տարին այս կուսակցության քաղաքական պատկերացումներում ոչինչ չէր փոխել: Հիմնական՝ հանրապետության ապագա կարգավիճակի հարցը, բնականաբար, լուծվում էր «նորացված ֆեդերացիայի» շրջանակներում: Մնացած խոստումները, իրենց տակ որեւէ մեխանիզմ չպարունակելով, դատարկ կարգախոսներ էին. ԼՂԻՄ-ի հարցի լուծում ինքնորոշման լենինյան սկզբունքի հիման վրա, հոգատարություն մարդու հանդեպ, պարենային պահանջների բավարարում, բնակարանային պահանջների բավարարում, երկրաշարժի հետեւանքների վերացում եւ այլն: Հետաքրքիր է բնապահպանական հարցերում նրանց դիրքորոշումը: Այս փաստաթղթում Կոմկուսն իր վաստակն է համարում շրջակա միջավայրի պահպանության նոր քաղաքականությունը՝ պարծենալով, որ դրա շնորհիվ են փակվել ատոմակայանը, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը, Կիրովականի քիմիական գործարանի եւ «Նաիրիտի» վնասակար արտադրությունները եւ այլն[151]:

[151] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 03.04.1990:*

Կային մի քանի թեմաներ, որոնցով ավելի վաղուց Կոմկուսն աշխատում էր ըստ հնարավորի ներկայանալ որպես «անցյալի սխալներից ազատված», նոր կերպար ստացած, արդյունավետ ծրագրեր որդեգրած կազմակերպություն: Այս թեմաներով քարոզչությունը հատկապես ակտիվացավ նախընտրական շրջանում: Դրանցից առաջինը վերաբերում էր 30-40-ական թվականներին բռնադատումների ենթարկված մարդկանց գործերը վերանայելուն, արդարացնելուն, կուսակցության մեջ վերականգնելուն: Սա ընդհանուր միութենական միջոցառման մաս էր: Երկրորդը հանրապետությունը ազատ տնտեսական գոտի դարձնելու «ծրագիրն» էր, որի մասին սկսեցին խոսել հատկապես երկրաշարժից հետո: Այս թեման բավականին երկար քննարկվեց, կազմվեցին պլաններ, տրվեցին խոստումներ, սակայն այդպես էլ գործնական որեւէ քայլ չարվեց: Տնտեսության վերափոխման ասպարեզում էլ Հայաստանի կոմունիստներն ավելին չէին պատկերացնում, քան այն, ինչի մասին խոսում էր Կենտրոնը, եւ այս ասպարեզում սահմանափակվում էին հանրապետության «տնտեսական ինքնուրույնության» մասին խոսելով, որը նույնպես խոստումներից ու տեսական ծրագրերից այն կողմ չէր անցնում: Մինչ այդ, որպես նախընտրական շրջանի փաստաթուղթ՝ հրապարակվեց նաեւ «ՀԽՍՀ տնտեսական ինքնուրույնության կոնցեպցիան»[152]՝ առանց, սակայն, բացելու դրա իրականացման մեխանիզմները: Թերթերի էջերում ավելի հաճախ էին կրկնվում «ավելի շատ բանջարեղեն», «ավելի շատ միս», «ավելի շատ ձու բնակչությանը» խորագրով ընդարձակ նյութեր, այն դեպքում, երբ այդ եւ մյուս բոլոր մթերքները շարունակում էին ավելի ու ավելի դժվարությամբ հայթայթվել, եւ ոչ միայն խանութներում, այլեւ շուկաներում:

«Զուտ ազգային» հարցերում Կոմկուսի՝ իր անունից արվող քարոզչությունը փոքր-ինչ զգուշավոր էր: Պատճառներից մեկը, թերեւս, այն էր, որ դրանով «ազգային» պլատֆորմի այն ավանդական մոտեցումները եւ հարցադրումները, որոնք կարող էին մեկնաբանվել ընդդեմ հիմնական քաղաքական հարցի՝ անկախության, կարող էին պարզապես շատերի աչքում արժեզրկվել: Վերջին հաշվով Կոմկուսն ի սկզբանե եւ տասնամյակներ շարունակ, ընդհուպ մինչեւ Շարժում, սկզբունքային եւ դաժան պայքար էր մղել նույն այդ հարցերի դեմ: Մինչդեռ դրանք, ճիշտ է՝ միջնորդավորված, բայց հօգուտ իրեն, շատ ավելի արդյունավետ կարող էին աշխատել, եթե հնչեին հասարակական պատկերացումներում «ազգային» հա-

[152] *«Խորհրդային Հայաստան», 20.03.1990:*

մարվող ուժերի ու անհատների կողմից: Ուստիեւ այս բնագավառում Կոմկուսը պարզապես ավելի հաճախ էր խոսում «ազգային միասնության», «համազգային քաղաքականության», «ազգային ծրագրերի» համատեղ մշակման անհրաժեշտության մասին, մասնավորապես՝ որպես ցայտուն օրինակ նշելով, որ ինքն արդեն հաշտվել եւ լեզու է գտել տասնամյակների իր անհաշտ թշնամու՝ Դաշնակցության հետ[153]:

Կոմկուսի համար իրավիճակն իրոք ճակատագրական էր, 70-ամյա մի շրջան ապահով իշխանություն ունենալուց հետո առաջին անգամ խաղաքարտի վրա էր դրված հավերժական թվացող այդ իշխանությունը կորցնելու հարցը: Հայաստանում առաջին անգամ պետք է իրականանային հանրապետության բարձրագույն իշխանության մարմնի ընտրություններ, երբ քվեաթերթիկներում մեկից ավելի թեկնածուներ էին լինելու գրանցված, երբ «անցունակ» թեկնածուների ցանկը նախօրոք համաձայնեցված չէր Կոմկուսի կենտկոմում, երբ խոր ճգնաժամ էր ապրում կոմունիստական գաղափարախոսությունը, եւ ընդդիմադիր ուժը մեծ հնարավորություն ուներ ընտրություններում հաղթելու: Կոմկուսն առաջին անգամ յոթանասուն տարվա ընթացքում պետք է բախվեր քաղաքական հակառակորդի հետ, որը սեփական ուժերով ձեռք էր բերել բացահայտ գործելու ու իշխանության հավակնելու իրավունք եւ հնարավորություն: Այս մրցակցի դեմ միայն օրենքով նախատեսված նախընտրական պայքարը, բոլոր հաշվարկներով՝ չէր կարող հաջողության գրավական լինել, անհրաժեշտ էր նաեւ պայքարի այլ ձեւեր ու միջոցներ մշակել: Ուստիեւ իր զինանոցի հայտնի միջոցներով պետք է աշխատեր նաեւ կոմունիստական իշխանության պահապան ՊԱԿ-ը[154]:

Նախընտրական շրջանում հատկապես բազմացան Շարժման ու նրա գործիչների հասցեին ուղղված զանազան վարկաբեկիչ թռուցիկները: ՀՀԾ-ի պաշտոնաթերթը ստիպված էր հանդես գալ հայտարարությամբ՝ թափանցիկ ակնարկելով, որ դրանք թխվում են ՊԱԿ-ի խոհանոցում. «Երբեմն Հայոց համազգային շարժման, նրա խորհրդի, վարչության, նրա առանձին անդամների մասին թռուցիկներ են երեւում այս կամ այն տեղ: Եթե ինչ-որ մեկը ինչ-որ բան ունի ասելու, խմբագրությունը նրան հնարավորություն է տալիս այդ անել հենց իր պաշտոնաթերթի՝ «Հայքի» էջերում»[155]:

---

153 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 20.04.1990:

154 Նրա գործունեության մեթոդների մասին տե՛ս ՊԱԿ-ի գեներալ Օլեգ Կալուգինի հարցազրույցը, «Ավանգարդ», 24.06.1990թ.:

155 «Հայք», 01.04.1990:

Հունվարի վերջերից, պաշտպանական անհրաժեշտության մեծացման բերումով, ՀՀԾ-ն արդեն բացահայտ ու հրապարակային էր դարձրել երկրապահ ջոկատներ ստեղծելու գործը: Նման ջոկատներ ստեղծվել էին նաեւ մինչ այդ՝ դեռ 1988-ից, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի վտանգված բնակավայրերին օգնելու նպատակով: ՊԱԿ-ը կատարած չէր լինի իր խնդիրը, եթե «այլընտրանքային» նույնպիսի ջոկատներ չստեղծեր իր գործակալների միջոցով եւ իր հովանավորության տակ: Դրանք, մասնավորապես, պետք է օգտագործվեին՝ երկրում, ըստ անհրաժեշտության, ներքին անկայունություն ստեղծելու համար: Եւ երբ կարճ ժամանակ անց, դարձյալ ՀՀԾ-ի նախաձեռնությամբ, այդ ջոկատները դրվեցին Գերագույն խորհրդի կողմից լիազորված մարմնի վերահսկողության տակ, ոչ բոլոր զինված ջոկատներն էին, որ ընդունեցին այդ վերահսկողությունը, եւ դրանցից ամենախոշորը «Հայոց ազգային բանակ» (ՀԱԲ) կոչվող զինված ջոկատն էր[156]: Լիազորված մարմնի վերահսկողության տակ չմտած ջոկատներն օգտագործվեցին ինչպես նախընտրական շրջանում իրավիճակը սրելու, զանազան սադրիչ գործողություններ կատարելու, ընտրությունները տապալելու, այնպես էլ հետագայում նոր իշխանության առաջին քայլերը խոչընդոտելու համար:

ը) Կոմկուսի դաշնակից նոմենկլատուրային մտավորականությունը

Հայաստանի եւ նրա ժողովրդի խնդիրները «համահայկական» քաղաքական հոգածության առարկա դարձնելու ու նրա որոշումներով առաջնորդվելու սողացող գաղափարը մեկ անգամ չէ, որ օգտագործել էր նաեւ ՀԿԿ-ին հավատարիմ մնացած նոմենկլատուրային մտավորականությունը: Նա եւս նախընտրական վճռորոշ ամիսներին ակտիվացրեց իր պայքարը ՀՀԾ-ի դեմ եւ այս դեպքում եւս պետք է ունենար իր ներդրումը: Մինչ այդ էլ նրանք պատրաստակամ կատարել էին Կոմկուսի կենտկոմի կողմից իջեցված պատվերները: Պարբերաբար, տարբեր առիթներով, այս խավի ներկայացուցիչները հանդես էին գալիս Շարժման տարբեր գաղափարների, մանավանդ՝ սեփական ուժերին ապավինելու, անկախության ձգտման, հարեւան երկրների հետ նորմալ հարաբերություններ ունենալու՝ հոչակած սկզբունքների դեմ: Իսկ կազմակերպված գործնական նախա-

---

*156 Սրա կազմավորման մասին տե՛ս **Մարգսյան Ա.**, Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 445:*

ձեռնություն ցուցաբերում էին իշխանության համար հատկապես վտանգավոր ու ճգնաժամային պահերին: Այսպես՝ նրանց ուժերով փորձ արվեց Շարժմանը հակադրվող մի քանի կազմակերպություններ ստեղծել 1988-ին («Հայկաշեն», «Ժողովրդական ճակատ», «Ազգային ճակատ»), 1989-ի սեպտեմբերին հրավիրել, այսպես կոչված, «Հայ մտավորականության համաժողով»՝ Շարժման գլուխ անցնելու եւ ուղղությունը փոխելու կամ այն պառակտելու հստակ մտադրությամբ: Նրանք հերթական անգամ ակտիվացան նույն թվականի դեկտեմբերին ՀՀՇ վարչության ներկայացրած՝ երկրում արմատական ժողովրդավարական վերափոխումներ անցկացնելու օրենսդրական նախաձեռնության դեմ եւ այլն: Նախընտրական ճակատագրական այս շրջանում Կոմկուսն առավել եւս ուներ նրանց օգնության կարիքը: Իսկ ընդհանրապես՝ տեղեկություններ կային, որ դեռ առաջադրումների ժամանակ նա խոստացել էր պաշտպանել ոմանց թեկնածությունը ընտրություններում, եթե նրանք հիմա՝ նախընտրական շրջանում, պայքարեն ընտրությունները հետաձգելու համար[157]:

Իշխանության պաշտոնաթերթերն իրենց էջերը լայնորեն տրամադրում էին «պանթուրքիզմի վտանգին», «ռուսական կողմնորոշման» անհրաժեշտությանը վերաբերող նյութերին, Սփյուռքին ու «ազգային կուսակցություններին», «երրորդ ուժի բացառման» դրույթի վտանգավորությանը եւ այլն: Բազմաթիվ էին ֆիդայական պայքարի դրվագներին, դարասկզբին թուրքական վայրագությունների սահմոկեցուցիչ նկարագրություններին վերաբերող նյութերը եւ այլն, որոնք պետք է վերակենդանացնեին **մշտական ոսոխի** կերպարը, հիշեցնեին «թուրքական վտանգի» մասին անկախության դեպքում: Ընդարձակ էջեր էին տպագրվում դարասկզբի այն գործիչների (հատկապես՝ դաշնակցական) հուշերից ու աշխատություններից, որոնք պրոռուսական էին կամ հակաթուրքական եւ այլն: Այսինքն՝ միասնական ջանքերով փորձ էր արվում հավաքել, ամբողջացնել եւ մատուցել այն ամբողջ պատմական նյութը, որը, որպես «պատմության դաս»՝ պետք է նշանակեր՝ անկախությունը վտանգավոր եւ հակացուցված է Հայաստանի համար, նրա փրկության միակ ելքը ԽՍՀՄ կազմում կամ հավերժ Ռուսաստանի հետ լինելն է, իսկ Հայաստանի խնդիրներն էլ ոչ միայն նրա բնակիչների, այլեւ համայն հայության գործն են: Այս քարոզչության առաջամարտիկներից էին Վարդգես Միքայելյանը[158], Վլադիմիր

[157] *Տե՛ս «Հայք», 06.05.1990:*

[158] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 04.03.1990:*

Պետրոսյանը[159], Սիլվա Կապուտիկյանը[160], Բագրատ Ուլուբաբյանը[161], Լեւոն Հախվերդյանը[162], Պերճ Զեյթունցյանը[163], Զորի Բալայանը[164], Ստեփան Պողոսյանը[165], Ազատ Եղիազարյանը[166], Լենդրուշ Խուրշուդյանը[167] եւ այլք: Դեռ ապրիլի սկզբին դերասան (հետագայում՝ ՀՅԴ-ի կողմից Հանրապետության նախագահի թեկնածու) Սոս Սարգսյանը իր մի հարցազրույցում արդեն հիմնավորում էր ընտրությունների հետաձգման անհրաժեշտությունը. «Հիմա Հայաստանում ընտրությունների անցկացումը մի տեսակ հասունացած չէ: Մինչեւ չընդունենք բազմակուսակցության մասին օրենքը, կամ չօրինականացնենք մյուս կուսակցությունները, կարելի է մի քիչ սպասել: Կամ՝ ինչո՞ւ ընտրություններին չի կարող մասնակցել Սփյուռքը, ինչ-որ չափով: Մենք չենք կարող նրանց զրկել թեկուզ խորհրդակցական ձայնից: Չէ՞ որ սա եզակի դեպք է. մեր ազգի կեսը դրսում է, մեր կուսակցությունները դրսում են»[168]:

Հասկանալի եւ սպասելի էր, որ ՀԿԿ ԿԿ-ի նոր քարտուղարի ելույթում հնչած գաղափարին առաջիններից մեկը պետք է արձագանքեր հենց այս ուժը, եւ դա արվեց անմիջապես հաջորդ օրը: Ապրիլի 21-ին մտավորականության մի մեծ խմբի անունից հրապարակվեց հայտարարություն, որտեղ հանրապետությունը ծանր վիճակից հանելու եւ ծառացած մյուս խնդիրները լուծելու ծրագրեր մշակելու նույն ուղին էր առաջարկվում. «Մենք առաջարկում ենք ամենամոտ ժամանակներս հրավիրել հանրապե-

[159] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 07.04.1990:*

[160] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 19.05.1990:*

[161] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 13.05.1990:*

[162] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 16.05.1990:*

[163] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 17.04.1990:*

[164] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 03.02.1990:*

[165] *Տե՛ս «Ավանգարդ», 12.01.1990 21.01.90, 11.05.1990:*

[166] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 20.04.1990:*

[167] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 19.05.1990:*

[168] *«Խորհրդային Հայաստան», 06.04.1990: Սա նշանակում էր արհամարհել Հայաստանի գործող Սահմանադրությունը, որը օրենսդիր մարմնի գործունեության որոշակի ժամկետ էր սահմանում, իսկ Սփյուռքի մասնակցություն ընտրություններին չէր նախատեսում: Անհասկանալի է նաեւ, թե ինչպես պետք է լիներ Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններին, եւ այն էլ՝ «ինչ-որ չափով», կամ ընտրություններին մասնակցելը՝ «խորհրդակցական ձայնով»: Այս ամենը ամբոխահաճ պատրվակներ էին, գերխնդիրը՝ ընտրությունները հետաձգելն էր:*

տության հասարակայնության, ինչպես նաեւ պաշտոնական եւ ոչ պաշտոնական կազմակերպությունների ու իշխանության ներկայացուցիչների ժողով՝ ազգային համաձայնության գալու, մեր հայրենիքը կրկին ոտքի կանգնեցնելու ընդհանուր ծրագիր մշակելու համար: Հայրենիք, որ միայն մերը չէ, այլ համայն հայությանը: Մենք պաշտպանում ենք հայրենիքի եւ Սփյուռքի բոլոր ուժերի մասնակցությամբ ազգային համաժողով հրավիրելու առաջարկը»[169]:

Մտավորականների նախաձեռնությունը ներկայանում էր որպես «ազգային միասնության» հասնելու խնդիր, որի հիմքի վրա պետք է ձեռք բերվեր «ազգային համաձայնություն», սրա միջոցով էլ երկիրը պետք է դուրս բերվեր ճգնաժամից: Անգամ նախատեսվում էր ստեղծել գործող մարմին՝ «Ազգային համաձայնության խորհուրդ»: Այսինքն՝ այն բառացի կրկնում էր ընդամենը նախորդ օրը ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի ներկայացրած ծրագիրը՝ նույն նպատակով այդպիսի մի համահայկական խորհրդաժողով հրավիրելու մասին: Հայտարարությունը ստորագրող մտավորականներն, անշուշտ, կարող էին պարզապես ասել, որ իրենք պաշտպանում են կուսակցության ղեկավարի ներկայացրած ծրագիրը: Սակայն նրանք գերադասել էին նույնը ներկայացնել «ինքնուրույն»:

Համահայկական խորհրդաժողովի հրավիրումն այն թափառող գաղափարներից էր, որն ամեն անգամ փորձ էր արվում հրապարակ նետել՝ երբ իշխանությունը հայտնվում էր ճգնաժամային վիճակում: Հասկանալու համար, թե ինչու էին կառչում այս գաղափարից, պետք է պատկերացնել դրա իրականացման մեխանիզմն ու սպասվող արդյունքը: Ըստ մտահղացման՝ նախատեսվող խորհրդաժողովին պետք է մասնակցեին՝ **ա)** «անվանի մարդիկ», այսինքն՝ նոմենկլատուրային մտավորականները, **բ)** իշխանության ներկայացուցիչներ, **գ)** ներքին սփյուռքից հրավիրվածներ (հրավիրյալներին, բնականաբար, պետք է ընտրեր նախաձեռնողը՝ ՀԿԿ-ն), **դ)** արտաքին սփյուռքի երեք կուսակցությունները, **ե)** Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների եւ շարժումների ներկայացուցիչները: Ըստ այդմ՝ իր հեղինակությամբ Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնության համակրանքը վայելող ՀՀՇ-ն այս համաժողովի ենթադրվող մի քանի տասնյակ մասնակիցների մեջ որպես մեկ միավոր դիտվելով, փոքրամասնություն պետք է կազմեր: Դժվար չէ նկատել նաեւ, որ հանրապետության քաղաքական օրակարգի հիմնական՝ անկախու-

[169] *«Խորհրդային Հայաստան», 21.04.1990:*

թյան ուղեգծի նկատմամբ սրանք բոլորը պետք է բացասական վերաբերմունք արտահայտեին: Հիանալի պատկեր կլիներ ցույց տալու համար, որ ազգն իր բացարձակ մեծամասնությամբ բոլորովին այլ կերպ է պատկերացնում հայ ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները եւ դրանց լուծումը, քան ՀՀՇ-ն, կամ ցույց տալ, որ հերթական անգամ «ազգային միասնությունը» խախտում կամ դրա կայացմանը խանգարում է ՀՀՇ-ն: Եւ դա տպավորիչ նախընտրական միջոցառում կլիներ՝ հօգուտ Կոմկուսի:

Սա դավադրություն էր: Դավադրություն էր ոչ միայն Շարժման եւ Հայաստանի ժողովրդի դեմ՝ հօգուտ Կոմկուսի իշխանության պահպանման: Այն դավադրություն էր անկախության ուղեգծի դեմ, դավադրություն էր սպասվող խորհրդարանական ընտրությունների եւ նոր խորհրդարանի դեմ, որ պետք է ձեռավորվեր այդ ընտրություններով: Վերջինս, եթե անգամ կազմավորվեր, իր կարգավիճակով կարծես թե մի աստիճան ցածր էր գտնվելու «համազգային համաձայնություն» արձանագրած համահայկական խորհրդաժողովից եւ դատապարտված էր լինելու գործել վերջինիս մշակած «ազգային ծրագրերի» շրջանակներում: Այս միջոցառման վատ քողարկված իրական նպատակներն, իհարկե, անմիջապես նկատվեցին Շարժման ղեկավարների կողմից: Մասնավորապես՝ դրանում նոմենկլատուրային մտավորականության՝ որպես իշխանության քաղաքական պատվերը կատարողի դերի բացահայտմանն էր նվիրված ՀՀՇ վարչության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի «Պատվերը կատարված է. սպասեք շքանշաններին» վերնագրով «Հայքում» տպագրված ընդարձակ վերլուծությունը[170]:

Մտավորականության այս խավի բացասական վերաբերմունքը Շարժման եւ ՀՀՇ-ի նկատմամբ եւ անմնացորդ օժանդակությունը Կոմկուսին պահպանվեց նաեւ ընտրությունների ընթացքում: ՊԱԿ-ի մի զեկուցագիրը (հունիսի 15-ով թվագրված) ամբողջությամբ նվիրված է այս խնդրին՝ «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններին գիտա-տեխնիկական մտավորականության վերաբերմունքի մասին» վերնագրով: Ըստ այդմ՝ «ՀՀՇ-ի գործունեությանը հատկապես քննադատորեն են վերաբերվում ակադեմիական ինստիտուտների բարձրագույն խավի ներկայացուցիչները, որոնք, սակայն, զգուշանալով ՀՀՇ-ի լիդերների հարձակումներից, չեն համարձակվում բացահայտ հայտնել իրենց կարծիքները»: Ահա մտավորականության այս «բարձրագույն խավը», ըստ զեկուցագրի, տագնապ էր հայտնում ՀՀՇ-ի նախընտրական արշավի հաջողությունների առիթով՝

[170] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 87-91:*

համարելով, որ նրա ղեկավարները ձգտում են առանցքային պաշտոններ գրավել հանրապետության ղեկավար մարմիններում, իսկ դա կարող է բերել անսքող տեռորի, շատ ավելի վատ, քան 30-40-ական թվականներին: Ճիշտ է՝ սրանք ընդունում էին, որ ՀՀՇ-ն մեծ ազդեցություն ունի հասարակության մեջ, եւ նրան քննադատելու եւ նրա օժանդակությունը չունենալու պատճառով է, որ Սիլվա Կապուտիկյանը եւ Լենդրուշ Խուրշուդյանը ընտրություններում պարտվեցին: Մտավորականության մյուս՝ հիմնական մասը, ըստ նույն փաստաթղթի, Շարժման հետ էր, եւ նրանց այդօրինակ դիրքորոշումը ՊԱԿ-ի նախագահը բացատրում է, թե դրանք մարդիկ են, ովքեր՝ «չեն կարողացել գիտության մեջ հաջողությունների հասնել եւ պաշտոնական կառույցներում պրեստիժային տեղեր զբաղեցնել, ձգտում են այդ վնասը վերականգնել ՀՀՇ-ի շարքերում հասարակական-քաղաքական ակտիվությամբ»[171]:

թ) Այլազան կազմակերպությունների եւ ուժերի աջակցությունը Կոմկուսին

Դեռ նախորդ տարվա կեսերից, Շարժման նոր վերելքին զուգահեռ՝ սկսեց ակտիվանալ նոր կազմակերպությունների հիմնադրման ու հայտարարման աշխույժ մի գործընթաց: Ընդ որում, բազմանալուն զուգահեռ՝ դրանք նաեւ ժամանակ առ ժամանակ համախմբվում էին զանազան «միությունների», «դաշինքների» ու «ճակատների» մեջ: Նախընտրական ամիսներին նրանց ակտիվությունն աճեց: Որպես կանոն՝ այդ միավորումների կարգախոսը «ազգային միասնությունն» էր, գաղափարական հիմքը՝ «Հայ դատի» հայտնի մեկնաբանությունը՝ պահանջատիրության հակադրումը անկախությանը, Հայաստանը միմիայն ԽՍՀՄ կազմում տեսնելը: Այդ կազմակերպությունների ամբողջ ներուժը միասին վերցրած՝ երբեւէ չգերազանցեց ՀՀՇ-ի հետեւից գնացող ուժի 1-2%-ը: Բայց նաեւ նրանց հիմնական մեղադրանքը ՀՀՇ-ի դեմ լինում էր իրենց հետ չմիավորվելով՝ «ազգային միասնությունը» տապալելը: Ընդ որում՝ հաճախ նրանց մեղադրանքները պարզապես իրարամերժ էին:

Նմանօրինակ հերթական, այս անգամ՝ նախընտրական միջոցառումն էր, այսպես կոչված, «Համահայկական միացյալ ճակատը», որի մասին հայտարարվեց 1990թ. փետրվարին[172]: Դրա մեջ մտան մի ամբողջ շարք «կազմակերպություններ»՝ հայտարարելով, որ միավորվում են՝ մի կողմ են թողնում իրենց մեջ եղած «տարաձայնությունները»: Բայց չէր ասվում, թե ինչ գաղափարի կամ խնդրի շուրջ են միավորվում: Հաջորդ գործը եղավ, բնականաբար, դարձյալ մեղադրել ՀՀՇ-ին, որ նա ձեռնպահ մնաց մտնել այդ «ճակատի» մեջ: «Ճակատը» համարում էր, որ Հայաստանի այս տարածքը իրավասու են տնօրինելու ոչ միայն հայաստանաբնակները, այլեւ ողջ հայությունը՝ իր կազմակերպություններով ու կուսակցություններով հանդերձ[173]: Դրա ղեկավարներից մեկը՝ Ֆելիքս Սաֆարյան, նախընտրական շրջանում խոսում էր «Ճակատի» մեջ մտած 45 կազմակերպությունների անունից[174]: Դրանից մի քանի ամիս առաջ նա մեղադրում էր ՀՀՇ-ին՝ անկախությունից հրաժարվելու, հանրապետության իշխանությունների հետ համագործակցելու մեջ: Այժմ, ընդհակառակը, նա ՀՀՇ-ին մեղադրում էր անկախության ձգտելու եւ իշխանությունների հետ չհամագործակցելու մեջ[175]: Սա եւս մինչեւ Գերագույն խորհրդի ընտրությունները անհրաժեշտ էր համարում համահայկական համագումարի հրավիրում՝ որպես «Ազգային բարձրագույն ժողով», եւ կոչ էր անում բոյկոտել առաջիկա ընտրությունները:

Հայաստանի ապագան այս «ճակատը», ինչպես եւ սպասելի էր, տեսնում էր նոր պայմանագրով «նորացված ԽՍՀՄ-ի» մեջ, որի միջոցով միայն հնարավոր կլիներ հետապնդել պահանջատիրությունը, եւ եթե այն չլուծվի էլ, ապա կփոխանցվի հաջորդ սերունդներին[176]: Ընդ որում, ի տարբերություն «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ մյուս ղեկավարների՝ «Ճակատի» ղեկավարներին ազատորեն տրամադրվում էին պետական հեռուստաթերթերը եւ մամուլի էջերը: Եւ դա հասկանալի է. ինչպես դժվար չէ նկատել, նրանք ակնհայտորեն աշխատում էին հօգուտ Կոմկուսի՝ նաեւ բառացի կրկնելով նրա տեսակետները:

Սակայն գործը միայն քարոզչությամբ չէր սահմանափակվում, ձեռնարկվում էին նաեւ նշանակված ընտրությունները խափանելու որոշակի գործողություններ. մայիսի 4-ի առավոտյան ՀԿԿ կենտկոմում մամուլի աշ-

---

[171] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, էջ 67-68:

[172] Սրա ստեղծման մասին «Հոչակագիրը» տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 15/16.01.90:

[173] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.03.1990:

[174] Եւ թե ինչու 45 «կազմակերպություն» միավորող այս ուժը երկու ամիս անց չմասնակցեց ընտրություններին կամ ընդհանրապես մոռացվեց՝ մնում է անհայտ:

[175] Տե՛ս «Հայք», 01.04.1990:

[176] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.03.1990:

խատողների ինչ-որ խորհրդակցության ժամանակ քննարկվում էր ընտրությունների հետաձգման նպատակահարմարության եւ անհրաժեշտության հարցը: Եւ դա այն դեպքում, երբ առանց այդ էլ երեք ամսով խախտվել էր հերթական ընտրությունների անցկացման սահմանադրական ժամկետը: Հետաձգման հիմնավորումներից մեկն, իբր, կուսակցությունների ձեւավորման համար անհրաժեշտ ժամանակի հատկացումն էր: Միաժամանակ, նույն օրն առավոտյան ՀԱԲ-ը եւ Հանրապետական կուսակցության զինված խմբերը գրավեցին ՀԿԿ Երեւանի քաղկոմի շենքը եւ ներկայացրին նույն պահանջը՝ վեց ամսով հետաձգել ընտրությունները: Օրվա վերջում իշխանությունները «խոստացան» քննարկել նրանց պահանջը եւ գտնել դրա իրականացման ձեւը: Սա, ակնհայտորեն, նախապես մշակված սցենարով կազմակերպված միջոցառում էր, որ նպատակ ուներ ցույց տալու, թե ընտրությունների անցկացումը կարող է բերել իրավիճակի ապակայունացման: Ոչ շատ խորամանկ կազմակերպված դավադրությունն անմիջապես բացահայտվեց նախընտրական հանրահավաքներում եւ «Հայքի» էջերում[177]՝ արժանանալով ամենաբուռն հակազդեցության: Ճիշտ է՝ հաջորդ օրերին դեռ շարունակվում էին հարցի քննարկումները, սակայն, վերջին հաշվով, Կոմկուսի հերթական այս միջոցառումը՝ «Համահայկական միացյալ ճակատի» եւ որոշ զինված կազմակերպությունների նախապատրաստված դերակատարությամբ, հնարավոր եղավ խափանել:

ժ) Սփյուռքի կուսակցությունները, Կոմկուսին աջակցելու նրանց շարժառիթները

Անկախության դեմ հիմնական փաստարկի՝ «պանթուրքիզմի վտանգի» եւ «Հայ դատ»/պահանջատիրության արդեն մշակված հանգրվանային ծրագրի դրոշակակիրն ու հիմնական գաղափարախոսն, իհարկե, շարունակում էր մնալ ՀՅԴ-ն: Այս կուսակցության բյուրոյի օրգան «Դրոշակի» յուրաքանչյուր համարը մի քանի ծավալուն հոդված էր պարունակում այս թեմաներով:

ՀՅԴ քաղաքական ծրագիրը շարունակում էր ներկայացնել **«Միացյալ, ազատ, անկախ»** կարգախոսով ենթադրվող հետեւյալ երեք հաջորդական խնդիրները. **ա)** «Ստեղծումը ամբողջական Հայաստանի՝ ազատագրումովը Թուրքիո կողմե բռնագրավված պատմականորեն հայ-

[177] *Տե՛ս «Հայք», 06.05.1990 եւ 13.05.1990:*

պատկան հողերուն եւ միացումովը Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանի (հողահավաք)»: **բ)** «Խորհրդային թե արտախորհրդային Սփյուռքի տարագիր հայության համախմբում՝ իր հայրենի ամբողջացած հողերուն վրա (ազգահավաք)»: **գ)** «Ազգային ազատ ինքնորոշում՝ Ամբողջական Հայաստանի ամբողջական հայության»[178]: Ծրագիրն, ինչպես տեսնում ենք՝ բացառում է Հայաստանի անկախացումը, քանի դեռ չեն լուծվել պատմական տարածքների վերադարձի եւ համայն հայությանը դրանցում բնակեցնելու խնդիրները:

Եւ որպեսզի իր ծրագիրը հավատ ներշնչեր, Դաշնակցությունը պետք է համոզմունք հայտներ, որ Խորհրդային Միությունը շատ երկար կյանք պետք է ունենա, հզորանա, ու ինքն էլ ամեն ինչ աներ դրա համար. «Այսօր ոչ մեկ բանավոր տվյալ կա հաստատելու համար, որ Խորհրդային Միությունը քայքայումի ընթացքի մեջ է... Մնալով Խորհրդային Միության կազմին մեջ, հայությունն այսօր կրնա լուծել քաղաքական իր ճակատագրին հետ առնչվող բազմաթիվ սուր հարցերը՝ սկսելով Արցախի հարցեն մինչեւ տնտեսական հզորանքի կերտումը»[179]: Խորհրդային Միության ապագան Դաշնակցությունը տեսնում էր որպես նորացված ֆեդերացիա, որը հետագայում աստիճանաբար կարող է վերաճել կոնֆեդերացիայի. «Հատկապես դաշնակցության ուղեգծին եւ մտածողության մեջ հիմնական նշանակություն ունի իրապես դաշնակցային կարգերու հաստատումը Խորհրդային Միության մեջ: Նախ այն պատճառով՝ որ ՀՅԴ Ծրագիրը տարբեր ուղի չի տեսներ ազգային հարցի արդարացի ու առողջ լուծման համար»[180]:

Համոզվածության եւ քաղաքական ծրագրի այս հիմքի վրա խիստ բացասական, «արկածախնդրական», «մանկունակ» էր գնահատվում եւ անթույլատրելի համարվում անկախության միտված ամեն խոսք ու ծրագիր: Մերձբալթյան հանրապետությունների համար անկախությունը համարվում էր շղթաների թոթափում եւ սոցիալ-տնտեսական ազատ զարգացում, մինչդեռ Հայաստանի դեպքում՝ «այնքան ատեն, որ անկախորեն գործելու կովաններեն զուրկ ենք՝ անկախացման հայտարարությունը այսօր միայն արկածախնդրություն կրնա ըլլալ»[181]:

[178] *«Դրոշակ», 18.06.1990, էջ 8:*
[179] *«Դրոշակ», 23.05.1990, էջ 36:*
[180] *«Դրոշակ», 23.05.1990, էջ 32-33:*
[181] *«Դրոշակ», 14.03.1990, էջ 14:*

Անկախացումը, ըստ ՀՅԴ-ի, անթույլատրելի էր ոչ միայն «Միացյալ, ազատ, անկախ» Հայաստան ստեղծելու ծրագիրը խաթարելու առումով: Այն անթույլատրելի էր համարվում՝ հատկապես նկատի ունենալով «պանթուրքիզմի վտանգը» Հայաստանի համար. «Դաշնակցությունը արկածախնդրական քայլ մը կը նկատե անմիջական անջատումի որեւէ փորձ, որովհետեւ Հայաստանի անկախությունը պայմանավորված կտեսնենք պանթուրքիզմի վտանգին դեմ մեր ժողովուրդին գոյատեւումը ապահովելու կոչված երաշխիքներով»[182]: Իսկ ՀՅԴ ղեկավար Հրայր Մարուխյանը համարում էր, որ այժմ «մեր ժողովուրդը ճիգ չպիտի խնայի «սպիտակ» թե «կարմիր» բոլոր տուներու բնակիչներուն ցույց տալու հայ ժողովուրդին վիճակված դերը... պանթյուրքիզմի տարածման դեմ նոր սահմանապահի անհրաժեշտությունը: Պետք է համոզել բոլորին, որ այդ հուսալի սահմանապահը կրնա ըլլալ հայ ժողովուրդն ու Հայաստանը»[183]: Դաշնակցությունը հատկապես զայրանում էր, որ պանթուրքիզմի հետ կապված հարցերում որեւէ մեկը Հայաստանում փորձում էր այլ դատողություններ անել. «Եւ այս մարզին մեջ, բերնի կապանքներեն նորոք ձերբազատված որեւէ պատմագետ կամ պրոֆեսոր բարոյական իրավունքը չունի դաս տալու հայ քաղաքական կուսակցություններուն, եւ հատկապես ՀՅԴ-ին», քանի որ... վերջինիս Ծրագրի մեջ «անջնջելի տառերով արձանագրված է Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստան»[184]:

Անհասկանալի էր մնում հատկապես «բարոյականության» պահը. Հայաստանում ապրող ժողովուրդը բարոյական իրավունք չուներ տնօրինելու իր ճակատագիրը, իսկ ահա արդեն 70 տարի Հայաստանից բացակայող այս կուսակցությունը ուներ այդ իրավունքը, դա իր մենաշնորհն էր[185]:

Դաշնակցական մամուլի նյութերը հաճույքով դրվում էին կոմունիստական թերթերի էջերում, սակայն դա քիչ էր: Ստեղծվեցին մամուլի նոր

[182] *«Դրոշակ», 23.05.1990, էջ 32:*

[183] *«Դրոշակ», 14.02.1990, էջ 5:*

[184] *«Դրոշակ», 18.07.1990, էջ 7:*

[185] *Մի մենաշնորհ, որ նա արդեն մի անգամ իրականացրել էր դարասկիզբին՝ կորցնելով հայության բնօրրանը՝ ողջ Արեւմտյան Հայաստանը, եւ Արեւելյան Հայաստանի կեսը՝ իր ողջ բնակչությամբ հանդերձ:*

«անկախ» օրգաններ, որոնք ավելի հաճախակի էին վերատպում ՀՅԴական գործիչների հակաանկախական հոդվածները[186]:

Քննադատության հիմնական թիրախն, անշուշտ, ՀՀՇ Ծրագիրն էր: Վերջինս, 1989թ. նոյեմբերին կայացած 1-ին համագումարում հաստատված տեսքով մասնավորապես արձանագրում էր հետեւյալ սկզբունքները.

ա) իր ազգային ծրագրերն իրագործելիս ժողովուրդը պետք է ապավինի սեփական ուժերին՝ հույս չդնելով ուրիշի հովանավորության վրա.

բ) Հայաստանի անկախության վերականգնումը առաջնային քաղաքական խնդիր է.

գ) պետք է բացառվի որեւէ կուսակցության ղեկավար դերը.

դ) խաղաղ ու համերաշխ ապրել բոլոր ժողովուրդների հետ եւ թշնամություն չքարոզել ուրիշ ժողովուրդների եւ կրոնների հանդեպ.

ե) հայ ժողովրդի քայլերը պետք է համաչափ լինեն իր ուժերին եւ հնարավորություններին:

Այս ամենը նշանակում էր հայդատական/պահանջատիրական գաղափարախոսության բոլոր հիմնասյուների կործանում:

Հատկապես սուր էր ՀՀՇ-ի նկատմամբ քննադատությունն այն բանի համար, որ նա հրաժարվում էր ընդօրինակել «ազատագրական պայքարի»՝ Սփյուռքի փորձը. «Ազատագրական պայքարի հասկացության անտեսումին զուգահեռ եւ մասամբ անոր պատճառով, ՀՀՇ Ծրագիրը կմերժե Սփյուռքի փորձառությունը.... Բան մը, որ ՀՀՇ Ծրագիրն ի վիճակի չէր ընելու, որովհետեւ հոն ոչ միայն կմերժվեր ազատագրական պայքարի հասկացությունը, այլ նաեւ Սփյուռքի քսանհինգամյա ազատագրական պայքարի փորձառությունը....»[187]: Վերջին քսանհինգ տարին նախորդ շրջանից տարբերվում էր տարբեր երկրներում թուրք դեսպանների նկատմամբ ահաբեկությունների կազմակերպմամբ: ՀՀՇ-ն, իրոք, ահաբեկչա-

[186] *Երկու օրինակ 1990թ. հրատարակվող «Ուրբաթ» շաբաթաթերթից. «Ներկա պայմաններու մեջ անկախացում պիտի նշանակե զիջում թուրքական քաղաքականության.... այսօր միայն անկախության հարց դնել, կնշանակե կասեցնել Հայ դատի պայքարը» («Ուրբաթ», 29.06.1990, արտատպված «Ազգակ»-ից): «Իրադատի պայքարը» («Ուրբաթ», 29.06.1990, արտատպված «Ազգակ»-ից): «Իրապաշտորեն դիտած, քաղաքական ներկա իրադրությամբ անկախ Հայաստանի հռչակումը արտաքին աշխարհին, առանց խորհրդային պիտակի ներկայանալեն ավելին պիտի չկարենա իրագործել... Մնալով խ. Միության կազմին մեջ, հայությունն այսօր կրնա լուծել իր ճակատագրին հետ առնչվող բազմաթիվ սուր հարցերը» («Ուրբաթ» 13.07.1990, արտատպված «Դրոշակից»):*

[187] *«Դրոշակ», 17.01.1990, էջ 6:*

կան «պայքարի» որեւէ փորձառություն չուներ, քանի որ ի սկզբանե, որպես քաղաքական խնդիրների լուծման ճանապարհ, սկզբունքորեն մերժել եւ մերժում էր այդ միջոցն ու ճանապարհը:

Բոլորովին այլ էր Դաշնակցության վերաբերմունքը եւ գնահատականը Հայաստանում իշխող կոմունիստական կուսակցության նկատմամբ: Յոթանասունամյա ոխերիմ թշնամիներն այլեւս գաղափարախոսական տարաձայնություններ չէին արձանագրում, ըստ էության՝ պայքարում էին նույն կարգախոսների ներքո, Հայաստանի անկախության դեմ եւ ԽՍՀՄ պահպանման համար: Առաջին եւ հիմնական քաղաքական հարցում տեսակետները բացարձակ համընկնում էին՝ Հայաստանի ապագան միայն ԽՍՀՄ կազմում կարող է լինել: Բայց ահա, որպես նորություն՝ Կոմկուսը շատ բարձր էր գնահատվում հատկապես իր «ազգային դիմագծով»: ՀՅԴ-ն համարում էր, որ կուսակցությունը Կարեն Դեմիրճյանի օրերին դեռ մաֆիաների կենտրոն էր, բայց նրանից հետո՝ «ապշեցուցիչ շրջադարձներ կատարեց դեպի արցախյան շարժման դրոշակիրի դիրքերը»: Որպես այդպիսին՝ Հայաստանի կոմկուսը հակադրվում էր նաեւ «Ղարաբաղ» կոմիտեին եւ ՀՀՇ-ին, որոնք այդ ընթացքում, ընդհակառակը՝ «քայլ առ քայլ սպառեցին համազգային հույսերու դրամագլուխը», որովհետեւ իշխանության հասնելու հարց դրեցին իրենց առջեւ[188]: Իրականությունն, ինչպես տեսանք, տրամագծորեն հակառակն էր. Հայոց համազգային շարժման հեղինակությունը շարունակում էր աճել, Կոմկուսինը՝ գահավիժել, եւ հենց դա էր ԳԽ-ի հերթական ընտրություններից խուսափելու, այն հետաձգելու իրական պատճառը:

Եւ վերջապես, Դաշնակցությունը եւս միանում ու պաշտպանում էր ընտրությունները հետաձգելու, համազգային ինչ-որ մարմին ստեղծելու գաղափարները, ինչը ժողովրդավարական ճանապարհով ընտրվելիք Գերագույն խորհրդի քաղաքական նշանակությունն արժեզրկելու, նվաստացնելու նպատակ ուներ. «Ո՛չ, մայիս 1990-ի ընտրություններեն չի կրնա ծնիլ հայության իսկական ժողովրդական խորհրդարանը... Այժմու ընտրապայքարը պարզապես կծառայե իսկապես ազատ, համազգային եւ ժողովրդական ընտրապայքարի մը պահանջը շեշտելու նպատակին»[189]:

ՀՅԴ վերոհիշյալ տեսակետները, հասկանալի է, միայն Սփյուռքի սպառման համար չէին, այլ առաջին հերթին՝ Հայաստանի. դրանք հա-

[188] *Տե՛ս «Դրոշակ», 14.03.1990, էջ 14:*

[189] *«Դրոշակ», 09.05.1990, էջ 5:*

ճախ էին տեղ գտնում հայաստանյան իշխանական մամուլում ոչ միայն միջնորդավորված, այլեւ ուղղակի: Այսպես՝ Վարանդ Փափազյանի «Պանթյուրքիզմ, թե՞ պանիսլամիզմ» հոդվածն անմիջապես արտատպվեց Հայաստանի կոմկուսի պաշտոնաթերթում[190]: Որպես հեղինակություն եւ հակակշիռ Շարժմանն ու նրա քաղաքական ծրագրերին, նոմենկլատուրային մտավորականներն իրենց երկարաշունչ հոդվածներում հղում եւ փառաբանում էին Դաշնակցությանն ու նրա գործիչներին[191]: Նախընտրական դժվարին պահին նույն նպատակով այս կուսակցությանն էր վկայակոչում ընդհուպ այն կառույցը՝ ՊԱԿ-ը, որը տասնամյակներ շարունակ կոչված է եղել գործնական պայքար մղելու նրա դեմ: Այս հանգամանքը շատ լավ ծանոթ էր հասարակությանը, ուստի ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ Վալերի Բադամյանցի՝ նախընտրական շրջանի սկզբում տված տեղեկատվությունը այս կուսակցության քաղաքական դիրքորոշումների մասին՝ հասարակության աչքում առավել վստահելի պետք է երեւար. «Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման պահից հանրապետությունը ավանդաբար բարեկամական հարաբերություններ է պահպանում Հնչակ եւ Ռամկավար կուսակցությունների հետ: Ինչ վերաբերում է Դաշնակցությանը, ապա նրա քաղաքական պլատֆորմը, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հակախորհրդային գործողությունները թույլ չէին տալիս նախկինում որեւէ հարաբերություն ունենալ նրա հետ: Բայց այստեղ էլ մեզանում տեղի ունեցող կազդուրիչ գործողությունները եւ դեպի իրենց հայրենիքը դաշնակների բնական ձգտումը շատ բան փոխեցին: Ինքներդ դատեցեք: Դաշնակցության 24-րդ համագումարը, որ տեղի ունեցավ 1988-ի օգոստոսին, առաջին անգամ որոշում ընդունեց եւ իր քաղաքական պլատֆորմում հայտարարեց, որ անվերապահորեն պաշտպանում է ԽՍՀՄ-ում իրականացվող վերակառուցումը, հրաժարվում է որեւէ բացասական գործունեության իրականացումից ընդդեմ Խորհրդային Միության եւ Հայկական

[190] *«Խորհրդային Հայաստան», 28.01.1990:*

[191] *Ընդ որում նրանցից շատերը (ինչպես Լենդրուշ Խուրշուդյան, Հրաչիկ Սիմոնյան եւ այլն) ժամանակին իրենց գիտական կոչումները ստացել եւ կարիերայի մեջ առաջ էին գնացել հենց այս կուսակցությունը գաղափարապես ոչնչացնող բազմաթիվ աշխատություններով (տե՛ս, օրինակ՝ **Խուրշուդյան Լ.**, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երեւան, 1964, **Սիմոնյան Հ.**, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երեւան, 1968 եւ այլն): Հիմա նրանք տրամագծորեն հակառակն էին գրում ու քարոզում այս կուսակցության մասին:*

ԽՍՀ-ի՝ որպես նրա անկապտելի մասի: Դաշնակները բացեիբաց հայտարարեցին, որ իրենք կտրականապես համաձայն չեն այն ամեն տեսակ գործողությունների հետ, որոնց նպատակն է Հայաստանը դուրս բերել ԽՍՀՄ կազմից, հասկանալով նմանօրինակ քայլի կործանարարությունը: Դաշնակցության բյուրոն հանդես եկավ հանրապետության զանազան կազմակերպությունների եւ խմբերի գործունեության դեմ, որոնք վնաս են հասցնում ռուս ժողովրդի հետ հայերի բարեկամությանը եւ նրանց պատմական կապերին: Դաշնակները խելացի, հաշվեկշռված դիրք բռնեցին նաեւ Անդրկովկասում պայթած ազգամիջյան կոնֆլիկտի խնդրում: Սա իրողություն է, որի հետ պետք է հաշվի նստել»[192]:

Ինչպես վերեւում տեսանք, դա իսկապես իրողություն էր, եւ այդ իրողությանը ՊԱԿ-ի նախագահը տեղյակ էր ոչ միայն դաշնակցական մամուլից: Նույն տեղեկատվությունը նա ստանում էր նաեւ հետախուզական ծառայությունների միջոցով եւ պարբերաբար այդ մասին տեղյակ պահում Կոմկուսի ղեկավարին[193]: Հասարակությանը դրանով մի բան էր ասվում. ձեր կողմից «ամենաազգային», «ամենաանկախական», «ամենահակախորհրդային» ճանաչված կազմակերպությունն անգամ պնդում է, որ ո՛չ անկախության հարց պետք է դնել, ո՛չ էլ իշխանափոխության: Հաշվարկն այն էր, որ դաշնակցության մասին հասարակական պատկերացումներում տարածված միֆի պայմաններում դա նախընտրական շրջանում էապես կարող էր ազդել մարդկանց կողմնորոշումների վրա՝ ի վնաս ՀՀՇ-ի եւ հօգուտ Կոմկուսի:

ՀՅԴ բյուրոյի անմնացորդ ջանքերը՝ հօգուտ Հայաստանի կոմկուսի իշխանության պահպանման, անշուշտ, նաեւ փոխհատուցման ակնկալիքով էին: Որպես իր ծառայությունների փոխհատուցում, նա գործնական առաջարկ էր արել. «Դաշնակցության ղեկավարները նշում են, որ այդ կուսակցությունը «կարող էր գործել Հայկական ԽՍՀ-ում որպես գոյություն

[192] *«Խորհրդային Հայաստան» 13.03.1990:*

[193] *Այսպես՝ ապրիլի 19-ի գրությամբ նա հայտնում է ԽՍՀՄ կազմից դուրս գալու՝ ՀՀՇ-ի «պլանների» առիթով իրանահայության բուռն դժգոհության մասին, որոնք դա որպես արկածախնդրություն էին գնահատում եւ համարում, որ նման հարցերը չեն կարող լուծվել առանց սփյուռքահայության կարծիքը հաշվի առնելու (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 41): Նույնպիսի տեղեկություններ են հայտնվում ԱՄՆ-ի հայկական գաղութի եւ «դաշնակցական շրջանակների» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 45 46), ինչպես նաեւ ՀՅԴ ղեկավարության մասին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, էջ 60 62):*

ունեցող իշխանությանը լոյալ ընդդիմություն»[194]: Այսինքն՝ ՀՅԴ-ն Հայաստանի կոմկուսին հստակ գործարքի առաջարկ էր արել, այն է՝ ինքն ամեն կերպ կօժանդակի կոմունիստների իշխանության պահպանման հարցի լուծմանը, իսկ դրա փոխարեն իրեն հնարավորություն պետք է տրվի գործել Հայաստանում որպես կոմունիստների իշխանությանը «լոյալ ընդդիմություն»: Դատելով իրադարձությունների հետագա ընթացքից, այս գործարքը կայացել էր: Ակնհայտ են նաեւ այս գործարքի՝ հեռուն գնացող նպատակները, այն է՝ **եթե իրադարձություններն այնպես զարգանան, որ Կոմկուսն, այնուամենայնիվ, ստիպված լինի թողնել իշխանությունը, ապա այն հանձնի ԽՍՀՄ կազմում Հայաստանի մնալու կողմնակից, պաշտոնականացված «լոյալ ընդդիմություն» ՀՅԴ-ին՝** թույլ չտալով, որ իշխանությունն անցնի անկախության կողմնակից ՀՀՇ-ին: Մնացած ամեն ինչ՝ համահայկական համաժողով, ընտրությունների հետաձգման փորձեր, կուսակցությունների կայացած չլինելու հանգամանք եւ այլն, Դաշնակցության համար ընդամենը պատրվակներ ու միջոցներ էին այս նպատակի իրականացումն ապահովելու համար:

Դաշնակցության մասին ՀԿԿ կենտկոմ հղած վերջին զեկուցագիրը հուլիսի 12-ին է, երբ արդեն տեղի էին ունեցել խորհրդարանական ընտրությունների մի քանի փուլերը, եւ ակնհայտ էր ՀՀՇ-ի հաղթանակը: Դրանում արձանագրվում է «դաշնակցության լիդերների» անհանգստությունը, որոնք համարում էին, որ ՀՀՇ-ի գծի կյանքի կոչվելը եւ ամբողջական իշխանության ձգտումը ապակայունացնող գործոն է[195]: Անգամ Սփյուռքում գործող, ԽՍՀՄ-ի ավանդական բարեկամ եւ աջակից «առաջադիմականները»[196] նկատել էին, որ կոմունիստական իշխանության հետ հարաբերություններում Դաշնակցությունն իրենցից առաջ է անցել եւ անհանգստանում էին դրա համար: Նրանք քննադատում էին Հայաստանի կոմկուսի քաղաքականությունը, որը «նրանց կարծիքով նպաստում է դաշնակցական գաղափարախոսության վերադարձին հանրապետություն եւ անհրաժեշտ էին համարում միջոցներ ձեռնարկել այդ ընթացքը կասեցնելու համար»[197]:

[194] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 62:*

[195] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 75:*

[196] *«Առաջադիմական» կամ «հայրենասիրական» էին համարվում ԽՍՀՄ նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող սփյուռքյան կազմակերպությունները:*

[197] *ՀԱԱ, ֆ.1, ց. 87, գ.47, թ. 63:*

Հայաստանի քաղաքական կյանքի թիվ 1 խնդրի նկատմամբ, բնականաբար, նույնն էր Սփյուռքի մյուս՝ «խորհրդամետ» կուսակցությունների դիրքորոշումը, որոնք Խորհրդային Միության ավելի հին եւ բացահայտ բարեկամներն էին: Կոմկուսի պաշտոնաթերթն ընդարձակ ներկայացրեց Ռամկավար ազատական կուսակցության տեսակետը: ՀՀՇ-ի եւ անկախության նրա ծրագրի դեմ նույնն էին ռամկավարական փաստարկները, նույնն էին ՀՀՇ-ին տրված պիտակները՝ «թրքական արեւելումի դրոշակակիրներ», «հակառուս» եւ այլն: Եւ խիստ յուրահատուկ տրամաբանությամբ նրանք հօգուտ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության, մի քայլ էլ առաջ են գնում՝ մատնանշելով «չոր իրականությունը». ճիշտ է՝ բանակը երեք օր ուշացավ Սումգայիթում, բայց կարող էր չէ՞, նաեւ 30 օր ուշանալ: Կամ՝ Աղետի գոտում Կենտրոնը քիչ է կառուցում, բայց կարող էր չէ՞, այդ էլ չանել: Այնպես որ՝ ցանկացած դեպքում մենք պարտավոր ենք շնորհակալ լինել[198]: Մայիսի 26-ին տարածած իր հայտարարության մեջ այս կուսակցությունը մտավախություն էր հայտնում, որ Հայաստանի շրջակա երկրները կարող են անկախություն հռչակել, եւ Հայաստանը ստիպված լինի նույնը անել նաեւ ինքը, ինչպես 1918 թվականին. «Բարեբախտաբար, Հայաստանի եւ Սփյուռքի մեջ, բացի ծայրահեղական փոքրամասնություններե, հայ քաղաքական, մտավորական եւ այլ շրջանակներ եկած են այն համոզման, որ անկախությունը՝ որքան ալ ամեն մարդու իդեալական բաղձանքն ու ձգտումն է, Հայաստանի ներկա քաղաքական պայմաններուն տակ, վստահաբար ավելի անստույգ, անապահով եւ վտանգավոր կացություն մը պիտի ստեղծե հայ ժողովուրդին համար: Անկախությունը կը մնա հետագայի ցանկություն մը, որուն ուղղությամբ երկար ու ծրագրված աշխատանքի կարիք կա, տնտեսական հզորացման ու քաղաքական հզորացման գծով.... Հայաստանի ապահովությունը կերաշխավորվի ռուսական պետական ծիրեն ներս ընկերակցության մը հիման վրա, հակառակ անցյալի ու ներկայի ունեցած կամ ապագային ունենալիք իր բոլոր անպատեհություններուն, եւ անկախաբար այդ պետության ունեցած քաղաքական դավանանքեն կամ ընկերային վարչակարգեն»[199]:

---

[198] *«Խորհրդային Հայաստան», 20.06.1990:*

[199] *Տե՛ս «ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմէջէն» (1988-1991) կազմեց Եղիա Գայայեան, Նիկոսիա, 2003, էջ 56-57 («Պայքար», 26.05.1990): Անշուշտ, այստեղ որեւէ ակնարկ չկա մեկ շաբաթ առաջ կայացած խորհրդարանական ընտրությունների ու դրանց արդյունքների մասին: Այդ լռությունը նա խախտեց միայն Գեն նախագահի ընտրությունից հետո (տե՛ս նույն տեղում, էջ 58-63):*

ժա) Հայկական «ինտերֆրոնտի» յուրահատկությունները

Հանրապետությունների անկախական ձգտումներին եւ դրան հասնելու կազմակերպական միջոցառումներին ի պատասխան, Կենտրոնի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ, փորձ էր արվում ստեղծել դրանց հակառակ կառույցներ, որոնց նպատակը ԽՍՀՄ-ը պահպանելն էր, հանրապետությունների անկախության ձգտումները խափանելը: Ընդհանրացված բառով սրանք հայտնի են «ինտերֆրոնտ» (Интернациональный фронт)՝ ի հակակշիռ տարածված «Ժողովրդական ճակատ» (Народный фронт) անվանման: Սրանք, անկախ իրենց իրական կշռից, Կենտրոնի ձեռքին լուրջ գործիք էին դառնում հատկապես այն հանրապետություններում, որտեղ մեծ էր ռուսալեզու բնակչության տեսակարար կշիռը: Այս իմաստով ամենախոցելին Մերձբալթյան հանրապետություններն էին:

Քանի որ ԽՍՀՄ պահպանման քաղաքական խնդիրն առկա էր նաեւ Հայաստանում, այստեղ նույնպես կար սեփական «ինտերֆրոնտը»:

Ինչպես նախորդող շրջանում, նախընտրական ամիսներին եւս Հայոց համազգային շարժումը ստիպված էր պայքարել նույն ճակատներում, որոնք եւ վերեւում առանձին-առանձին ներկայացվեցին: Երեւութապես միայն միմյանցից անկախ լինելով՝ Շարժման դեմ գործող ուժերի կապը եւ համագործակցությունը երբեմն անսքող երեւում էր: Այդ ուժերը քաղաքական հիմնական նպատակի միասնականությամբ առանձնել էին այն դերը, ինչ հայտնի «ինտերֆրոնտները»:

Հայկական «ինտերֆրոնտն» ուներ յուրահատկություններ:

Մերձբալթյան հանրապետություններում «ինտերֆրոնտները» հեշտ ճանաչելի էին. դրանց սոցիալական հիմքը հիմնականում ռուսալեզու (ռուս) բնակչությունն էր, բացահայտ քարոզվող ու հետապնդվող նպատակը՝ ԽՍՀՄ-ի եւ դրանում տվյալ հանրապետությունների պահպանումը: Հայաստանն ազգային առումով համարյա միատարր էր, եւ հայկական «ինտերֆրոնտի» սոցիալական հիմքը տարբերակիչ էթնիկ հատկանիշ չուներ, այն հասարակության՝ տասնամյակների ընթացքում ձեւավորված արտոնյալ խավն էր՝ կուսակցական, խորհրդային, տնտեսական եւ առաջին հերթին՝ մտավորական նոմենկլատուրան, ինչպես նաեւ Սփյուռքի ավանդական կուսակցությունները: Վերջիններս պետք է ապահովեին, որ Հայաստանը հօգուտ անկախացման գաղափարի Սփյուռքից որեւէ դրական ազդակ չստանա, ինչն այդ ժամանակ կարող էր էական ոգեւորիչ նշանա-

կություն ունենալ հասարակության կողմնորոշումների վրա: Ընդհակառակը՝ նույն գաղափարախոսական հիմքով Հայաստանում ձեւավորված բազմաթիվ մանր կազմակերպություններ, նոմենկլատուրային մտավորականների հետ միասին, նրանց «զգաստացնող» գաղափարներն էին տարածում ընդդեմ անկախության ուղեգծի: Հայկական «ինտերֆրոնտը», բնականաբար, յուրահատուկ էր նաեւ իր գաղափարախոսությամբ: Հօգուտ ԽՍՀՄ-ի մեջ մնալու եւ ընդդեմ անկախության շրջանառվող կովաններն էին ոչ թե ԽՍՀՄ բարեմասնությունները, այլ «պանթուրքիզմի վտանգը», ազգային զգացումները շոյող «Հայ դատ»/պահանջատիրությունը: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ հայկական «ինտերֆրոնտը», իր բաղադրիչներով քաղաքական նույն նպատակը հետապնդելով հանդերձ, կազմակերպական առումով չէր ներկայանում որպես մի միասնական կառույց, ինչպես մյուս «ինտերֆրոնտները», ու դրանով իսկ դժվար ճանաչելի էր: Եւ վերջապես, ամենակարեւոր տարբերությունն այն էր, որ Մերձբալթյան հանրապետությունների «ինտերֆրոնտները» պետք է պայքարեին իշխանության համար, մինչդեռ հայկականը, ի դեմս Կոմկուսի, իր ձեռքում իշխանություն ուներ:

Հայկական «ինտերֆրոնտը» գնահատելու համար կարելի է համեմատություն անել նաեւ նույն շրջանում վրացական իրականության հետ: Այստեղ եւս ստեղծվել էին եւ շարունակում էին ստեղծվել բազմաթիվ կազմակերպություններ, որոնք հանդես էին գալիս ամենաբազմազան քաղաքական ծրագրերով՝ սկսած Վրաստանում միապետական կարգեր վերահաստատելուց մինչեւ եւրոպական չափանիշներով ժողովրդավարական պետություն ստեղծելը: Սակայն «վեճերն ու հակասությունները ոչինչ ընդհանուր չունեն Վրաստանի անկախության գաղափարի հետ: Այս հարցում ընդդիմախոսներ չկային, այդ թվում նաեւ Վրաստանի կոմունիստական կուսակցության մեջ»[200]: Ոչ մեծաքանակ լինելով՝ քաղաքական որեւէ հավակնություն չդրսեւորեց նաեւ այստեղի ռուսալեզու բնակչությունը: Նույնը կարելի է ասել անգամ Ադրբեջանի համար:

[200] *Տե՛ս «Հայք», 14.07.1990:*

ժբ) ՀՀՇ-ի նախընտրական պայքարը եւ «Հայք» թերթը

Նախընտրական պատասխանատու շրջանում միայն հանրահավաքները չէին կարող բավարար լինել: Որքան էլ բազմահազար, բայց դրանց մասնակիցների թիվն, այնուամենայնիվ, սահմանափակ էր եւ ընդգրկում էր հիմնականում Երեւանը, նրա շրջակայքը եւ հանրապետության առավել խոշոր բնակավայրերը: Մինչդեռ պետական քարոզչամեքենան ռադիոյի, հեռուստատեսության եւ բազմաթիվ թերթերի տեսքով ծածկում էր ամբողջ հանրապետության տարածքը, հասնում յուրաքանչյուրին: Շարժման թերթի հրապարակումը դառնում էր հրատապ անհրաժեշտություն, որը նախընտրական եւ գաղափարական պայքարում պետք է դիմագրավեր այդ ամենին միասին վերցրած:

«Հայքի» առաջին համարը հրատարակվել էր 1989թ. նոյեմբերի 4-ին, ՀՀՇ հիմնադիր համագումարի առիթով, ապա հրատարակությունը դադարել էր: Հետագա հրատարակության թույլտվությունը պետք է տար ՀԿԿ կենտկոմը, որն այն ձգձգում էր: Ըստ Լոբովի ստորագրությունը կրող մի գրության՝ դեկտեմբերի կեսերին հարցը քննարկվել էր կենտկոմի բյուրոյում, եւ բացասական որոշում էր կայացվել. ՀՀՇ-ից պահանջվել էր ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր՝ հրատարակության ծրագիր, թղթի ձեռքբերման աղբյուրը եւ այլն[201]: Հանրահավաքներում քննադատվում էր թերթի հրապարակման թույլտվության հետ կապված բյուրոկրատական անհիմն քաշքշուկը: Վերջապես դեկտեմբերի 30-ին ՀԿԿ կենտկոմի քարտուղարությունը իր թիվ 34 արձանագրության 1-ին կետով ստիպված էր դրական որոշում կայացնել (կենտկոմի 2-րդ քարտուղար, Մոսկվայի դրածո Օլեգ Լոբովը վերոհիշյալ փաստաթղթում բողոքում է այս որոշման դեմ): Թերթի հետագա հրատարակությունը հնարավոր եղավ միայն 1990թ. հունվարի 28-ից սկսած: ՀՀՇ վարչության կողմից գլխավոր խմբագիր էր նշանակված «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ վարչության անդամ Սամվել Գեւորգյանը:

«Հայքը» հրապարակվում էր որպես շաբաթաթերթ: Սուր հարցադրումներով, քաղաքական համոզիչ վերլուծություններով, իրադարձությունների նոր մեկնաբանություններով եւ գնահատականներով, որպես առաջին ընդդիմադիր թերթ՝ այն միանգամից մեծ ժողովրդականություն ստացավ, տպաքանակը հասավ ավելի քան հիսուն հազարի եւ տարած-

[201] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39ա, թ. 241:*

վում էր ամբողջ հանրապետությունով մեկ: Կոմունիստական մամուլում երբեւէ հնարավորություն չունենալով, այստեղ տպագրվում էին «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ վարչության անդամների, Շարժման այլ մասնակիցների հոդվածները (Լեւոն Տեր-Պետրոսյան, Վազգեն Մանուկյան, Վանո Սիրադեղյան, Համբարձում Գալստյան, Ալբերտ Բաղդասարյան, Վազգեն Սարգսյան, Ռաֆայել Իշխանյան, Հրանտ Բագրատյան, Շահեն Պետրոսյան, Կտրիճ Սարդարյան, Էդուարդ Եգորյան եւ այլն), նրանց հետ հրատապ թեմաներով հարցազրույցներ, ՀՀՇ վարչության եւ մյուս կառույցների հայտարարությունները: Մշտական տեղ էին զբաղեցնում Ղարաբաղում եւ սահմանամերձ շրջաններում կատարվող իրադարձությունները, դրանց մեկնաբանությունները եւ գնահատականները: Շարունակում էր արծարծվել բնապահպանական թեման, մասնավորապես՝ «Նաիրիտի» հետ կապված խնդիրները:

Իրադարձությունների եւ իրավիճակի քաղաքական վերլուծություններից եւ գնահատականներից զատ, «Հայքը» իրականացնում էր գաղափարական պայքար հայկական «ինտերֆրոնտի», անկախության անընդունելիության եւ վտանգավորության նրա գաղափարների դեմ: Համոզիչ եւ սուր պատասխաններ էին տպագրվում, մասնավորապես, նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչների՝ իշխանական մամուլում հրապարակված հոդվածներին:

Այս ճակատում արդյունավետ մարտավարություն էր որդեգրված. հրապարակել դարասկզբի եւ Առաջին հանրապետության այն գործիչների (Էդվարդ Ակնունի, Սիմոն Վրացյան, Նժդեհ, Ավետիս Ահարոնյան, Ա. Արաբո, եւ այլն) հուշերից ու աշխատություններից մասեր ու վկայություններ, որոնք ուղղված էին անվերապահ ռուսական կողմնորոշման (ցարական եւ բոլշեւիկյան շրջանում) բերած անհամար վնասներին: Եթե ապրիլի 24-ի առիթով կոմունիստական պաշտոնաթերթերը հրապարակեցին ցեղասպանության հետ կապված ծանր ու սահմռկեցուցիչ տեսարաններ ու նկարագրություններ, որոնք պետք է ամրապնդեին թուրքական վտանգի գիտակցումը եւ ըստ այդմ՝ անկախության ուղեգծի վտանգավորությունը, հավերժ Ռուսաստանի հետ մնալու տեսակետը, ապա «Հայքը», ի հակակշիռ դրա, տպագրեց փաստաթղթեր եւ նյութեր ժամանակի մամուլից, որոնք վկայում էին այդ ողբերգության մեջ Ռուսաստանի մեղքի ու մեղսակցության մասին: Կարեւոր փաստարկներ էին թեկուզ հենց խորհրդային կենտրոնի եւ զորքերի թողտվությամբ Սումգայիթից սկսած հայկական ջարդերն ու իրականացված բռնագաղթը:

ժգ) ՀՀՇ-ի նախընտրական ծրագիրը

Հայոց համազգային շարժումը հանդես եկավ հստակ նախընտրական ծրագրով[202]: ՀՀՇ առաջին համագումարում հաստատված Ծրագիրը արդեն որպես առաջնային խնդիր դրել էր անկախ պետականության վերականգնման խնդիրը՝ դրանից ածանցելով մնացած բոլոր հարցերի լուծումը: Բնականաբար նախընտրական ծրագրի հենց սկզբում, դրված էր նույն առաջնային խնդիրը՝ այսպիսի ձեւակերպմամբ. «Հայոց Համազգային Շարժման նախընտրական ծրագրի հիմնադրույթները բխում են Շարժման քաղաքական սկզբունքներից եւ նպատակներից, որոնցից կարեւորագույներն են՝ **անկախ պետականության վերականգնումը**, համակեցության միջազգային օրենքների վրա հիմնված ժողովրդավարական հասարակարգի ստեղծումը, ազգի հզորացումը»:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, քաղաքական առումով ճշգրիտ էին գնահատված իրավիճակը եւ հնարավոր զարգացումները. «Տնտեսական եւ քաղաքական ճգնաժամ ապրող կայսրությունը ազատագրական պայքարի ելած ժողովուրդներին կամովին անկախություն չի շնորհի: Բռնապետության հանկարծահաս փլուզումը դրան անպատրաստ ժողովուրդների համար կարող է ճակատագրական լինել»: Նախընտրական ծրագիրը հենվում էր այս գնահատականի եւ կանխատեսման, ինչպես նաեւ այն օբյեկտիվ իրողությունների վրա, որոնք գոյություն ունեին Հայաստանում. Աղետի գոտու գերխնդիրներ, փախստականների առկայություն, պարբերական շրջափակում եւ Հայաստանի տնտեսական ծանր վիճակ: Ըստ այդմ էլ՝ ներկայացվող ծրագիրը, որպես նպատակ՝ հռչակում էր ոչ թե անմիջապես անկախության հռչակումը, այլ՝ «ստեղծել Հայաստանի ինքնուրույն, անկախ գոյության քաղաքական, տնտեսական, իրավական եւ հոգեւոր նախադրյալներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ազգային անվտանգության ապահովման հարցերին»: Չնայած անկախության «վտանգների» մասին հասարակության մեջ տարվող բուռն քարոզը որոշակի ազդեցություն էր թողնում, այնուամենայնիվ, հիմնական քաղաքական խնդրում սա նախընտրական մարտավարական նահանջ չէր՝ ձայներ շահելու նպատակով: Դա պատճառաբանված եւ արդարացված զգուշավորություն էր եւ բխում էր ի սկզբանե Շարժման ղեկավարության որդեգրած մի այլ սկզբունքից՝ ըստ հնարավորին դուրս չգալ

---

[202] *«Հայք», 13.05.1990:*

պայքարի սահմանադրական, օրինական ուղուց, չվտանգել ժողովրդին եւ Շարժումը, թույլատրվածի սահմանն անցնել միայն ճշգրիտ քաղաքական հաշվարկների եւ ապահով հիմքի վրա:

Նախընտրական ծրագիրը, քաղաքական բնագավառում որպես անմիջական նպատակ՝ նախատեսում էր. «Ամրապնդել Հայաստանի ինքնիշխանությունը», որի տակ դրված հետեւյալ խնդիրների աստիճանական լուծումը, սակայն, ենթադրում էր հենց լիակատար փաստական անկախություն.

- հանրապետության տարածքում գործում են միայն նրա Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքները, բացառվում է այնպիսի օղակների գոյությունը, որոնք ղեկավարվում են դրսից.

- ստեղծել Գերագույն խորհրդին անմիջականորեն ենթարկվող զորամիավորումներ, որոնց հիմքը պետք է կազմեն գոյություն ունեցող ինքնապաշտպանական ջոկատները.

- դիվանագիտական կամ այլ ներկայացուցչություններ ստեղծել արտասահմանյան երկրներում, ԽՍՀՄ հանրապետություններում, Ռուսաստանի տարբեր երկրաշրջաններում, ինչպես նաեւ միջազգային հեղինակավոր կազմակերպություններում:

Ինքնիշխան Հայաստանում նախատեսվում էր ձեւավորել քաղաքացիական հասարակություն, այսինքն՝ նեղացնել իշխանության եւ կառավարման մարմինների լիազորությունների շրջանակները հօգուտ հասարակական կազմակերպությունների, իսկ անհատի եւ մարդկանց խմբերի նախաձեռնությունները սահմանափակել միայն օրենքով, կրճատել կառավարման ապարատը եւ ավելորդ պետական կառուցվածքները, խոշորացնել վարչատարածքային միավորները: Հասարակական կյանքի ապակուսակցականացումը ենթադրում էր բոլոր կուսակցությունների համար իրավահավասար պայմանների ապահովում, օրենքով արգելել վարչական եւ դատական մարմիններում պաշտոնների համատեղումը կուսակցականության հետ, հիմնարկներում եւ ձեռնարկություններում արգելել քաղաքական կազմակերպությունների գործունեությունը: Կոմունիստական կուսակցությունից նախատեսվում էր առգրավել նրա սեփականության այն մասը, որը ձեռք էր բերվել ոչ թե կուսակցական, այլ պետական կամ հասարակական միջոցների հաշվին:

Իրավական պետության ստեղծման խնդիրը նախատեսում էր օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների գործառույթների տարանջատում, օրենքի գերակայության ապահովում, Սահմանադրության եւ

օրենքների համապատասխանեցում միջազգային չափանիշներին եւ մարդու իրավունքների հանրաճանաչ նորմերին: Ներքաղաքական կյանքում ժողովրդավարության հաստատումը նախատեսում էր, մասնավորապես, քաղաքացիների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, խոսքի, մամուլի, հանրահավաքների, ցույցերի ազատություն:

Տնտեսական բնագավառում, որպես ինքնիշխանության հաստատման հիմք, նախ դրվում էր հանրապետության տնտեսական կարողությունները եւ տնտեսության զարգացումը Հայաստանի կառավարության կողմից տնօրինելու խնդիրը: Դրա վրա հենվելով՝ պետք էր հաղթահարել պարտադրված գաղութային տնտեսության հետեւանքները, ստեղծել ազատ ձեռներեցության համակարգ: Այս խնդրի իրականացման առաջին փուլը համարվում էր հողը գյուղացուն վերադարձնելը: Պետական սեփականությունը պետք է սահմանափակվեր միայն այն ձեռնարկություններով, որոնք դուրս են ազատ նախաձեռնության համակարգից: Նոր հիմքի վրա ստեղծված տնտեսությունը պետք է գործեր արդյունավետ, հիմքեր պետք է ստեղծվեին տարածաշրջանային եւ համաշխարհային տնտեսության մեջ նրա ինտեգրվելու համար: Ծրագիրը նախատեսում էր, որ համակարգային եւ տնտեսական արմատական բարեփոխումների պայմաններում անհրաժեշտ է ստեղծել հասարակության անդամների սոցիալական պաշտպանվածության որոշակի պահանջներ բավարարող համակարգ:

Արմատական խնդիրներ էին դրվում հոգեւոր բնագավառում՝ արձանագրելով, որ «երկարատեւ հոգեւոր ստրկությունը, ազգային իրավունքների եւ արժանապատվության ոտնահարումը, հոգեւոր-մշակութային սեփական արժեքներից ազգի բռնի օտարումը բացասաբար են անդրադարձել ժողովրդի բարոյական նկարագրի վրա»: Նախատեսվում էր պարտադիր հայկական կրթության համակարգի ներդրում, նոր ծրագրերի հիման վրա ազգային դպրոցի ստեղծում, պետությունից եկեղեցու անջատում եւ նրանից խլված ունեցվածքի վերադարձ: Խնդիրներ էին դրվում մշակութային ժառանգության պահպանման, Սփյուռքի կրթական եւ մշակութային կյանքին օժանդակելու հարցերում:

Ծրագրում, որպես առանձին բնագավառներ, իրենց յուրահատուկ խնդիրներով ներկայանում են Աղետի գոտին եւ փախստականները: Վերջում հատուկ նշվում է, որ Ծրագիրն ամբողջությամբ վերաբերում է «վերամիավորված Հայկական Հանրապետությանը», այսինքն՝ հավասարապես Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին:

ժդ) ՀՀՇ-ի կողմից պաշտպանվող պատգամավորության թեկնածուները

Ի տարբերություն կոմունիստական կուսակցության՝ ՀՀՇ-ն հրապարակեց իր կողմից պաշտպանվող թեկնածուների ցուցակը[203]: Ընդ որում, այդ ցուցակը կազմվել էր ոչ կուսակցական մոտեցմամբ: Այստեղ, Շարժման ղեկավար կազմի եւ առաջին շարքի ակտիվի կողքին, ընդգրկված էին ոչ միայն տարբեր քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլեւ, պարզապես, հասարակության մեջ հարգանք վայելող եւ հեղինակավոր անհատներ, որոնք կիսում էին նույն գաղափարներն ու ծրագիրը:

Շարժման պաշտպանությունը վայելող թեկնածուներ էին առաջադրված, փաստորեն, բոլոր ընտրատարածքներում (բացառությամբ Ղարաբաղի, որտեղ հարցի լուծումը թողնված էր Շարժումը ներկայացնող տեղի կազմակերպություններին): Բոլոր ընտրատարածքներում թեկնածուներ էր առաջադրել, բնականաբար, նաեւ Կոմկուսը: Այլ կազմակերպություններից ոմանք թեկնածուներ էին առաջադրել առանձին ընտրատարածքներում, սակայն նրանցից որեւէ մեկն առանձին, կամ որպես միություն (ինչպիսին, ասենք, երկու ամիս առաջ հնչեղ անունով հռչակված, 45 կազմակերպություն ընդգրկող «Համահայկական միացյալ ճակատը»), ընտրատարածքներում թեկնածուներ առաջադրելու փորձ չէին արել: Պատճառը միայն այն չէր, որ այդ ներուժը նրանցից որեւէ մեկը (ոչ էլ բոլորը միասին) չուներ, այլ նաեւ այն, որ նրանցից որեւէ մեկը Կոմկուսին իշխանազրկելու քաղաքական ծրագիր չուներ (եթե այդպիսիք կային, միացել էին ՀՀՇ-ին): Իսկ առանձին ընտրատարածքներում առաջադրվելով՝ իրենց «առավել ազգային» ծրագրերով նրանք ընդամենը պետք է պայքարեին ՀՀՇ թեկնածուների դեմ, ըստ էության՝ հօգուտ Կոմկուսի: Վերջին հաշվով՝ թե՛ ընտրությանը մասնակցող քաղաքական ուժերի, թե՛ հասարակության համար մի բան պարզ էր՝ մրցակցում էին երկու քաղաքական ծրագիր եւ երկու քաղաքական ուժ: Մյուսները՝ ուղղակի կամ միջնորդավորված, կարող էին օգնել դրանցից մեկին, կամ մյուսին: ՀՀՇ-ին աջակցողները որեւէ խնդիր չունեին, եւ նրանց ներկայացուցիչները ընդգրկված էին ՀՀՇ-ի թեկնածուների ցուցակում, դա անում էին բացահայտ: Կոմկուսին աջակցողները հասկանալի պատճառով դա բացահայտ չէին կարող անել. այդ

[203] *Տե՛ս «Հայք», 13.05.1990:*

դեպքում նրանք պարզապես հակառակ արդյունք կստանային: Թերեւս նաեւ սրանով պետք է բացատրել, որ Կոմկուսը, ի տարբերություն ՀՀՇ-ի, չհրապարակեց իր կողմից պաշտպանվող թեկնածուների ցուցակը:

ՀՀՇ-ի ցուցակը տպավորիչ էր եւ ներկայացնում էր փաստորեն ոչ թե քաղաքական կազմակերպության, այլ Շարժման ողջ սպեկտրը: Բնականաբար՝ այստեղ էին «Ղարաբաղ» կոմիտեն, ՀՀՇ վարչության անդամները եւ Շարժման ամենագործուն մասնակիցներ: Ներկայացված էին մի շարք քաղաքական կազմակերպություններ՝ Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությունը (ՀՔԴՄ), Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ) եւ այլն: Ավելին՝ նրանում հինգ թեկնածու պարզապես հանդես էր գալիս որպես Կոմկուսի անդամ: Իրենց բացակայության պայմաններում այստեղ ընդգրկված էին (եւ ՀՀՇ-ի ջանքերով պատգամավորներ դարձան) կալանքի տակ գտնվող Արկադի Մանուչարովը եւ ԽՍՀՄ-ից արտաքսված Պարույր Հայրիկյանը: Թեկնածուներն ունեին բարձր կրթական ցենզ, կային հայտնի մտավորականներ, գիտնականներ (գիտությունների թեկնածուներ, դոկտորներ, ակադեմիկոսներ), ԲՈՒՀ-ի ռեկտոր, ամբիոնի վարիչ, դեկան, պրոֆեսորներ: Այստեղ էր հայ գրականության նահապետ Հրանտ Մաթեւոսյանը:

ժե) Մայիսի 20-ի ընտրությունները, արդյունքները, ընտրակեղծիքներ

Կոմունիստական կուսակցության հույսը՝ համահայկական ինչ-որ խորհրդաժողով հրավիրելու նախաձեռնությամբ հետաձգել ընտրությունները եւ դրա միջոցով փրկել իր իշխանությունը, չհաջողվեց: Դրա իրական դավադիր նպատակն արագ եւ համոզիչ բացահայտվեց Շարժման ղեկավարների ջանքերով, եւ համաժողովի գաղափարը հասարակական հնչեղություն չստացավ: Այնուհետեւ այդ գաղափարն ավելի շուտ օգտագործվում էր քարոզչական նպատակով՝ նվազեցնելու համար հետաքրքրությունը առաջիկա, այլեւս անխուսափելի դարձած ընտրությունների նկատմամբ: Ընտրությունների կայացման անշրջանցելիության հանդիման՝ Կոմկուսը, իր բոլոր ուժերն ի մի հավաքելով, մանրակրկիտ նախապատրաստվում էր ընտրական ճակատամարտի: Արդեն ապրիլի 10-ի դրությամբ նրա առաջադրած 623 պատգամավորության թեկնածուների մեջ կենտկոմ-շրջկոմների քարտուղարներ էին 91 մարդ, շրջանային եւ քաղաքային գոր-

ծադիր կոմիտեների ղեկավարներ՝ 75, կոլեկտիվ եւ խորհրդային տնտեսությունների ղեկավարներ եւ գյուղատնտեսության բնագավառի այլ պաշտոնյաներ՝ 64, գործարանների, ֆաբրիկաների, միավորումների բազմաթիվ տնօրեններ, ներքին գործերի նախարարության վարչությունների պետեր եւ այլն: Միայն այս տվյալներով՝ առաջադրվածների ավելի քան 2/3-ը արդեն իշխանության ներկայացուցիչներ էին, որոնք տիրապետում էին կարեւոր վարչական եւ ազդեցության այլ լծակների:

Ընտրությունների մասին օրենքում չնայած հնարավոր էր եղել որոշ բարեփոխումներ կատարել, սակայն այն դեռ բազմաթիվ առավելություններ էր պահպանում իշխանության համար: Ընտրական հանձնաժողովները, որոնք պետք է կազմակերպեին նախընտրական ժողովները եւ գրանցեին թեկնածուներին, փաստորեն՝ ձեւավորվում էին շրջանային գործկոմների կողմից ու նրանց հայեցողությամբ: Վերջիններիս կամայականությունները միշտ չէ, որ հնարավոր էր լինում հաղթահարել: Դա հատկապես դժվար էր մայրաքաղաքից դուրս՝ գյուղական շրջաններում: Հանրապետության երկրորդ քաղաք Լենինականում այդ պատնեշն այդպես էլ չհաղթահարվեց, եւ պարզապես բռնությունների միջոցով քաղաքային իշխանությունները թույլ չտվեցին քաղաքի ընտրատարածքներում այլ թեկնածությունների՝ ՀՀՇ-ի ներկայացուցիչների առաջադրումը[204]: ՀՀՇ-ն ստիպված էր, դեմ գնալով իր իսկ սկզբունքներին, Լենինականում բոյկոտել ընտրությունները[205]: Իշխանության եւ հանձնաժողովների մեքենայությունների բազմաթիվ փաստեր են ներկայացվում «Հայքի» այդ շաբաթների համարներում:

Ընտրությունների նախօրյակին՝ մայիսի 19-ին, Ղարաբաղ Կոմիտեն եւ ՀՀՇ վարչությունը ընտրողներին կոչ արեցին ակտիվ մասնակցել քվեարկությանը, «Հայքը» ընդարձակ խորհրդատվությամբ հանդես եկավ քվեարկության կարգի եւ ընտրողի իրավունքների մասին: Նույն օրը Շարժման դեմ, ինչպես եւ կարելի էր սպասել, պաշտոնական մամուլում տրվեցին, ակնհայտորեն նախապես ծրագրված՝ հիմնական հարվածները: Մանր խորամանկություն ներկայացնող այս ծրագրի իրականացումը հանձն էին առել պատմաբան Լենդրուշ Խուրշուդյանը եւ բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանը: Այդ օրը տպագրվեց Լ. Խուրշուդյանի «Հայոց համազգային շարժում կազմակերպությունը եւ Հայկական հարցը» ընդարձակ հոդվածը[206], որ շարունակաբար հրատարակվեց նաեւ հաջորդ օրերին: Մեղադրանքներն արդեն հանրահայտ էին եւ հանրածանոթ: ՀՀՇ-ն անկախության եւ հարեւանների հետ խաղաղ գոյակցության իր ծրագրերի համար մեղադրվում էր «Հայ դատ»/պահանջատիրությանը եւ ազգային շահերին դավաճանելու, ապազգայնության, պանթուրքիզմի վտանգը չհասկանալու, թուրքամետության, ադրբեջանամետության եւ հնարավոր բոլոր մեղքերի մեջ[207]: Ի մի էր հավաքված այն ամենը, ինչ այս թեմայով վերջին մեկ տարում հայդատական գաղափարախոսության դիրքերից ստեղծվել եւ ասվել էր դաշնակցության կողմից՝ Սփյուռքում եւ նոմենկլատուրային մտավորականության մի շարք ներկայացուցիչների կողմից՝ Հայաստանում: Երկրորդ հոդվածի հեղինակ Ս. Կապուտիկյանի թիրախն անձամբ ՀՀՇ վարչության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, այն վերնագրված էր «Բաց նամակ Լեւոն Տեր-Պետրոսյանին»[208]: Մայիսի 19-ը որպես «վճռական հարվածի» օր, անշուշտ, պատահական չէր ընտրված. հաջորդ օրը նախընտրական որեւէ քարոզչություն (այսինքն՝ նաեւ այս հոդվածներին պատասխանելը) օրենքով արգելվում էր: Քվեարկության օրվա համար դրանք մնալու էին անպատասխան եւ նախատեսված էին հենց այդ օրը ազդելու ընտրողների ինչ-որ մասի վերջնական կողմնորոշման վրա[209]:

Հետագայում ընդունված էր ասել, թե 1990թ. մայիսի 20-ի ընտրություններն ամենամաքուրն ու ամենաժողովրդավարականն էին: Դա իրականությանը չի համապատասխանում: Այդպիսի գնահատական կարելի է տալ միայն մինչ այդ՝ շուրջ 70 տարի կոմունիստական բռնապետության տարիներին իրականացված ընտրական 100 տոկոսանոց խեղկատակության հետ համեմատած, երբ յուրաքանչյուր ընտրատարածքում առաջադրվում էր կուսակցական կառույցների կողմից որոշված միայն մեկ թեկնածու, վերահսկո-

[204] *Տե՛ս «Հայք» 15.04.1990:*

[205] *Տե՛ս «Հայք» 06.05.1990:*

[206] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19.05.1990:*

[207] *Ընդ որում ընդամենը մի քանի ամիս առաջ մահացու այս մեղադրանքների հեղինակ Լ. Խուրշուդյանը հավակնում էր ընտրվել ՀՀՇ վարչության անդամ (տե՛ս «Հայք», 27.05.1990)*

[208] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19.05.1990:*

[209] *Թե երկու մտավորականների «անձնագրի» այս հարձակումը որքանով ազդեց ՀՀՇ-ի ու նրա վարչության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ձայների վրա, անիմաստ է քննել, քանի որ ճիշտ հակառակ արդյունք ստացվեց. Լ. Խուրշուդյանն ու Ս. Կապուտիկյանը իրենց ընտրատարածքներում ստացան, համապատասխանաբար՝ 30 եւ 60 ձայն, ինչն ակնհայտորեն վերջին օրով նրանց այս ելույթների արդյունքն էր:*

ղական մեխանիզմն ընդհանրապես բացակայում էր, իսկ միակ թեկնածուն, որպես կանոն, «ընտրվում էր» 99,99% ձայներով: Այս առումով, անշուշտ, այլընտրանք պարունակող, մրցակցային այս ընտրությունները հայ իրականության մեջ առաջինն էին: Այս ընտրություններն առաջինն էին նաեւ այն առումով, որ 70 տարի իշխող կոմունիստական իշխանությունը, չնայած իր կատարած ամենախայտառակ ընտրակեղծիքներին, պարտություն կրեց: Պարտություն կրեց ընդամենը երկու տարի առաջ քաղաքական հրապարակ մտած ուժից՝ տեղի տալով վերջինիս բացառիկ հեղինակությանը եւ իր նկատմամբ հասարակական ամենաբուռն հակազդեցությանը:

Ընտրական ցուցակները չափազանց անխնամ էին կազմված, դրանցում արձանագրված էին վաղուց մահացածների, անչափահասների անուններ[210], որպես նմուշ՝ տարածվում էին նախապես լրացված քվեաթերթիկներ, որոնցում ձայն էր տրված Կոմկուսի թեկնածուներին, ընտրողներին ավտոբուսներով տեղափոխում էին տեղից տեղ, եւ նրանց հնարավորություն էր տրվում մի քանի անգամ քվեարկել[211]: Ըստ գործող օրենքի՝ ընտրությունը կայացած էր համարվում, եթե քվեարկությանը մասնակցել էր ընտրողների ընդհանուր թվի կեսից ավելին: Երբ պարզվում էր, որ հաղթել է ՀՀՇ-ի թեկնածուն, ցուցակները հանկարծ աճում էին ընդհուպ մինչեւ հազար մարդով, եւ ընտրությունը համարվում էր չկայացած[212]: Աշտարակում շրջկոմի 1-ին քարտուղարին որպես ընտրված գրանցելուց հետո անհայտացան բոլոր փաստաթղթերը, եւ այլեւս անհնար էր ստուգել արդյունքների իսկությունը[213]: Վստահված անձանց բողոքներին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը խիստ դժվարությամբ էր ընթացք տալիս, իսկ դատախազությունն ընդհանրապես հրաժարվում էր որեւէ բողոք ընդունել: Այդ ամիսների «Հայքի» համարները լի են ընտրակեղծիքները, զանազան կամայականությունները եւ ապօրինությունները բացահայտող հաղորդումներով: Ընտրակեղծիքները, հատկապես գյուղական շրջաններում, երբեմն տալիս էին բացարձակ արդյունք, եւ շրջկոմի քարտուղարները, որ Երեւանում, որպես կանոն, պարտվում էին, այստեղ «ընտրվում էին» ձայների ընդհուպ 94%-ով[214]:

---

210 Տե՛ս «Հայք», 02.06.1990:
211 Տե՛ս «Հայք», 27.05.1990:
212 Տե՛ս «Հայք», 17.06.1990:
213 Տե՛ս «Հայք», 01.06.1990:
214 Տե՛ս «Հայք», 22.05.1990:

Բոլոր 260 ընտրատարածքներում առաջադրվել էր 1307 թեկնածու, որից հինգ ընտրատարածքում՝ մեկական (այս ընտրատարածքներում հանձնաժողովները կամայականորեն պարզապես թույլ չէին տվել ՀՀՇ-ի թեկնածուների գրանցումը), 36-ում՝ երկուական, մյուսներում՝ երեք եւ ավելի: Մայիսի 20-ի քվեարկության արդյունքներով ընտրված ճանաչվեց 90 պատգամավոր, որից ՀՀՇ-ի ցուցակից՝ 31, ՀՀՇ-ի համակիրներ՝ 5, Արցախից՝ 10, Կոմկուսից՝ 35: Ընդ որում՝ ՀՀՇ-ի ցուցակից եւս 65 հոգի, հիմնականում՝ ձայների բացարձակ առավելությամբ, անցել էին քվեարկության երկրորդ փուլ[215], եւ նրանց հաղթանակն անխուսափելի էր: Մյուս ընտրատարածքներում ընտրությունները չէին կայացել: ՀՀՇ-ի հաջողություններն արձանագրված էին հիմնականում մայրաքաղաքում ու նրա շրջակայքում, Կոմկուսինը՝ գյուղական շրջաններում: Սա նշանակում էր, որ, չնայած իր վերահսկողության եւ ազդեցության տակ եղած բոլոր ուժերի համախմբման, կատարված կոպտագույն ընտրակեղծիքների ու ապօրինությունների, իշխող ուժի պարտությունը անխուսափելի էր, եթե նա լրացուցիչ միջոցներ չձեռնարկեր:

ժզ) Սադրանքների սաստկացումը, մայիսի 27-ի պատժիչ գործողությունը

Առաջին քվեարկության արդյունքները թվերի տեսքով ամենեւին ուժերի մոտավոր հավասարակշռություն չէին նշանակում: Կենտրոնի կողմից հանրապետության Կոմկուսը գործողությունների լիակատար ազատություն էր ստացել իշխանությունն ամեն գնով պահելու համար: Սակայն հնարավոր բոլոր միջոցների գործադրումից հետո անգամ ստացված արդյունքը նրա համար պարտություն էր նախանշում: Ընտրակեղծիքների ու ապօրինությունների իր ողջ զինանոցն օգտագործելով հանդերձ՝ Կոմկուսը շահել էր այնքան տեղ, որքան կարողացել էր: Մինչդեռ «ընտրությունները չկայացած»[216] ընտրատարածքներում ձայների արձանագրված հարաբերակցությունից ակնհայտ էր, որ հաջորդ փուլերում ՀՀՇ-ի թեկնածուները զանգվածաբար հաղթանակ էին արձանագրելու: Հասարակական մտածողության յոթանասունամյա ավանդույթի ներքոյին խախտված էր: Կոմկու-

---

215 Տե՛ս «Հայք», 27.05.1990:
216 Գործող օրենքով ընտրությունը կայացած չէր համարվում, եթե մասնակիցները ընտրողների ընդհանուր թվի 50%-ից պակաս էին:

սին չօգնեցին ո՛չ նոր խոստումները, ո՛չ «առավել ազգայինի» դիրքերից ՀՀՇ-ի դեմ իրականացված քարոզչությունը, ո՛չ ուժային լծակների գործադրումը, ո՛չ նոմենկլատուրային մտավորականությունից եւ ղարաբաղյան որոշ գործիչներից ստացած աջակցությունը, ո՛չ Սփյուռքի «ազգային» կուսակցությունների բացահայտ ու ոչ բացահայտ պաշտպանությունը, ո՛չ բազմաթիվ սադրանքները, ո՛չ էլ ընտրական հանձնաժողովների կամայականությունները: Կենտկոմ-շրջկոմների քարտուղարներ, մինիստրներ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, որոնք սովոր էին պատգամավոր դառնալ առանց որեւէ ջանքի 99 եւ ավելի տոկոս ձայներով եւ ընտրողների նույնպիսի մասնակցությամբ, ջախջախիչ եւ ամոթալի պարտություններ էին կրել: Արդեն 3-4 սերունդ կոմունիստական «բնական» իշխանության վարժված հասարակությունը տեսնում էր, թե ինչպես է հնարավոր դառնում երբեւէ անհնարին թվացողը: Դա մեծապես ազդում էր մարդկանց հոգեբանության վրա, մեծացնում ոգեւորությունը: Շարժումը խորհրդարանում մեծամասնություն կազմելու բոլոր հնարավորություններն ուներ: Հայաստանը սպառնում էր դառնալ Խորհրդային Միության հերթական հանրապետությունը, որտեղ կարող էր հաստատվել ոչ կոմունիստական, անկախության ուղեգիծ որդեգրած ինքնուրույն իշխանություն:

Կենտրոնը դա չէր կարող հանդուրժել եւ պետք է փորձեր գործի դնել վերջին՝ բռնի ուժի դիմելու իրեն հատուկ մեթոդները: Որ ընտրություններում պարտությունից խուսափելու համար իշխանությունների կողմից հնարավոր էին այսօրինակ քայլեր, կանխատեսվել էր դեռ երկու ամիս առաջ: Ֆրանսիայում հրատարակվող «Յառաջ» թերթին տված իր մի հարցազրույցում համոզմունք հայտնելով, որ Շարժումն առաջիկա ընտրություններում հաղթանակի կհասնի, Լեւոն Տեր-Պետրոսյանը նշում էր. «Հաջողվեց բարելավել օրենքը, եւ միայն կամայականություններով կամ արտակարգ դրություն մտցնելով կարելի է հասնել այլ արդյունքի»[217]:

Նախընտրական շրջանում եւ քվեարկության օրը կամայականություններն անհրաժեշտ արդյունք չտվեցին, ուրեմն պետք էր փորձել դիմել երկրորդ մեթոդին: Դա տեղի ունեցավ մայիսի 27-ին: Նյութված հերթական սադրանքի հետեւանքով Երեւանում տեղի ունեցան արյունոտ իրադարձություններ. «բախում» խորհրդային զինվորական ստորաբաժանումների հետ, որին զոհ գնացին տասնյակ մարդիկ: Այս առիթով «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ վարչության համատեղ հայտարարությունը դա

[217] *Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 84:*

գնահատում է որպես Մոսկվայի եւ հանրապետական իշխանությունների «ոճրագործ սադրանք»՝ ընտրությունների առաջիկա փուլերում դրությունը փրկելու, պարտությունից խուսափելու համար: Հայտարարության մեջ տրված է միմյանց հաջորդած այն իրադարձությունների տրամաբանական շղթան, որը եւ ունեցավ իր ողբերգական վախճանը[218]:

Սակայն մինչեւ այդ շղթայի օղակներին հասնելը՝ ներկայացնենք երկու փաստաթուղթ, որոնք վկայում են, որ հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններում, իրոք, մինչ այդ իշխանության կողմից մշակվել էին խորհրդային ներքին զորքերի եւ բանակի ստորաբաժանումների ներգրավմամբ ուժային գործողություններ՝ վիճակն ապակայունացնելու միջոցով պարտությունից խույս տալու համար: Դրանք ֆորմալ առումով վերաբերում են զինված կազմավորումների զինաթափման խնդրին, սակայն իրականում ընտրությունները «փրկելու» միջոցառումներ էին:

Առաջին փաստաթուղթը հանրապետության ներքին գործերի նախարարության եւ ՊԱԿ-ի ղեկավարների ստորագրությամբ ընտրության անմիջապես նախորդող օրերին Կոմկուսի կենտկոմին ուղարկված ընդարձակ մի պլան-առաջարկ է[219]: Հատկանշական է դրա վերնագիրը. «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990թ. մարտի 5-ի «Ադրբեջանական ԽՍՀ-ում եւ Հայկական ԽՍՀ-ում իրավիճակի եւ այդ տարածաշրջանում իրադրության կարգավորման միջոցառումների մասին» որոշման հետագա կատարմանն ուղղված գործնական միջոցառումների պլան»: «Պլանը» նախատեսում էր ավելի քան մեկուկես տասնյակ միջոցառումների շարք, այդ թվում՝ իրավական, քարոզչական, քրեական-դատավարական, օպերատիվ-հետախուզական եւ օպերատիվ-ռազմական: Վերջինս՝ օպերատիվ-ռազմականը, մասնավորապես, նախատեսում էր. **ա)** ստեղծել «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարության, ՊԱԿ-ի աշխատակիցներից, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի եւ խորհրդային բանակի զինծառայողներից կազմված հատուկ օպերատիվ-ռազմական խմբեր՝ իրականացնելու համար այն զինված խմբերի զինաթափումը, որոնք կհրաժարվեն կամավոր հանձնել զենքը եւ թալանված այլ գույքը», **բ)** «Ոչ պաշտոնական կազմակերպությունների զինված խմբերի եւ բանդիտական խմբերի զինաթափման ռազմական օպերացիաները համաձայնեցնել ԽՍՀՄ Ներքին գործերի եւ Պաշտպանության նախարարությունների հետ»: Սա այն դեպքում, երբ հանրապետության Գե-

[218] *Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 93-96:*

[219] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 42-46:*

ռագույն խորհուրդը երկու շաբաթ առաջ որոշում էր կայացրել ստեղծել Պաշտպանության խորհուրդ՝ զինված կազմավորումները դրա ենթակայության տակ առնելու, նրանց գործունեությունը կանոնակարգելու եւ համակարգելու համար (պետական կառույց մտնելով՝ այդ խմբերը եւ նրանց զենքը օրինական էին դառնում): Այսինքն՝ հանրապետության գործադիր իշխանությունը մտահոգված էր կատարելու ոչ թե սեփական Գերագույն խորհրդի որոշումը (զինված կազմավորումների մասին), այլ, ՀԿԿ կենտկոմի հետ միասին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումները: Ընդ որում՝ համարյա բոլոր միջոցառումների ժամկետը նշված է մայիս ամիսը (որի ավարտին մնում է 10-12 օր):

ՀԿԿ կենտկոմ ուղարկված հաջորդ փաստաթուղթը, որ մայիսի 22-ին ստորագրել է միայն ՆԳ նախարարի պաշտոնակատար Վ. Երինը, վերաբերում է նույն խնդրին, կրկին հիմնավորում է նույն անհրաժեշտությունը, նույնիսկ գանգատվում, որ «ՀԿԿ ԿԿ-ի եւ կառավարության հանձնարարությամբ ՆԳ նախարարությունը հանրապետության ՊԱԿ-ի եւ այլ իրավապահ մարմինների հետ միասին բազմիցս միջոցառումների պլան է ներկայացրել», որոնք առայժմ չեն իրականացվել: Նա առաջարկում է «անհապաղ քննարկել խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ-ի ներքին զորքերի ստորաբաժանումների ուժերի եւ միջոցների ներգրավմամբ օպերատիվ-ռազմական գործողություն սկսելու մասին քաղաքական եւ օրենսդրական որոշումներ ընդունելու հարցը»[220]: Ռազմական «միջոցառումների» անհրաժեշտությունն, ինչպես երեւում է, ավելի հրատապ էր դարձել մայիսի 20-ի քվեարկության արդյունքների ամփոփումից հետո: Այս փաստաթղթերն արդեն իսկ աներկբա վկայում են, որ այն, ինչ տեղի ունեցավ մայիսի 27-ին, այլ բան չէր, քան հենց պահանջված «օպերատիվ ռազմական գործողությունը»:

Իշխանությունների կողմից արյունոտ գործողությունների դիմելու նախապես կազմված ծրագրի առկայության մասին են վկայում նաեւ հետեւյալ փաստերը. առաջին. մայիսի 20-ի ընտրությունների նախնական արդյունքները հայտնի դառնալուց անմիջապես հետո՝ մայիսի 22-23-ին, Հայաստանի բոլոր ղեկավարները՝ Վլադիմիր Մովսիսյանը, Հրանտ Ոսկանյանը եւ Վլադիմիր Մարգարյանցը, կանչվեցին Մոսկվա՝ հասկանալի է, կարեւորագույն հանձնարարականներ ստանալու համար, եւ դա չէր կարող այլ խնդրի վերաբերել, քան այդ պահին ամենակարեւոր՝ կորսվող իշխանությունը փրկելու միջոցառումներին: Երկրորդ՝ ՊԱԿ-ի նախագահ

[220] ՀԱՄ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 49-50:

Բաղամյանցը հանդես եկավ ընդարձակ հարցազրույցով[221]: Հաճախ չէ եւ ամեն առիթով չէ, որ ՊԱԿ-ի նախագահը նման քայլի է դիմում: Հարցազրույցում նրա հիմնական թիրախը զինված կազմավորումներն էին, դրանց գոյությունը համարվում էր անթույլատրելի: Արձանագրվում էր, որ «զինված կազմավորումների ղեկավարներն անգամ ստեղծել են ռազմական տրիբունալ, որը պետք է դատավճիռներ կայացնի» (նման բան, իրականում, հայտարարել էր միայն ՀԱԲ-ը)[222]: ՊԱԿ-ի նախագահը, իր պաշտոնին անհարիր ինքնամոռացության մեջ, իրեն իրավունք էր վերապահում քննադատել անգամ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի վերոհիշյալ որոշումը՝ Պաշտպանության խորհուրդ ստեղծելու մասին, որի կատարման դեպքում հենց կվերանար զինված կազմավորումների ինքնագործունեությունը: Նա համարում էր, որ ինքնապաշտպանության կարիք չկա, եւ այդ գործը լավագույնս անում են ԽՍՀՄ ներքին զորքերը եւ այլն: Վերջում չէր մոռանում ավելացնել, որ ԽՍՀՄ կազմից դուրս գալու ծրագիրը «տաքգլխություն» է, եւ որ դա պարզ է ոչ միայն մեզ, այլեւ «Սփյուռքի բոլոր քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների համար»: Հաջորդ օրերին ծավալված իրադարձությունների ֆոնին այս ելույթը շատ նման էր առաջիկա արյունոտ իրադարձությունների գաղափարական նախապատրաստության:

Մայիսի 20-ից անմիջապես հետո սադրանքները սկսվեցին Լեռնային Ղարաբաղում, որտեղ, չնայած զինվորական իշխանությունների կտրուկ արգելքներին, հաջողությամբ անցկացվել էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Մայիսի 23-ին Ստեփանակերտում, չպարզված հանգամանքներում, սպանվեց մի հայ պատանի: Հաջորդ օրը Բաքվից Ստեփանակերտ եկած ստուգող ինչ-որ հանձնաժողովի գործողությունների առիթով ընդհարում տեղի ունեցավ զորքերի ստորաբաժանումների եւ բնակչության միջեւ: Նույն օրը ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումներն ահաբեկչական գործողությունների դիմեցին Ստեփանակեր-

[221] «Խորհրդային Հայաստան», 22.05.1990:

[222] Սա ռազմական այն հիմնական կառույցն էր, որ չենթարկվեց ոչ ՀԽՍՀ ԳԽ-ի կազմած համապատասխան լիազոր մարմնին, ոչ էլ հետո ՀՀ իշխանություններին, ուստի վերջինիս կողմից լուծարվեց: ՀԱԲ-ը ստեղծվել էր ՊԱԿ-ի նախաձեռնությամբ եւ գործում էր նրա թելադրանքով, ինչը հետագայում հաստատվեց ակնհայտ փաստերով: Ռազմական տրիբունալ ստեղծելն էլ, ըստ այդմ, արվել էր հենց ՊԱԿ-ի ցուցումով, որպեսզի այն վերագրվի նաեւ մյուս բոլոր ջոկատներին ու շահարկվի:

տի փողոցներում, որի հետեւանքով մեկ հոգի սպանվեց եւ ինը հոգի վիրավորվեցին: Զինվորների վրա պատասխան կրակ բացվեց: Այս դեպքերի առիթով մայիսի 25-ին Երեւանում տեղի ունեցած հանրահավաքում բնակչությանը զգուշացվեց, որ պետք է աշխատել հավատարիմ մնալ պայքարի քաղաքական եւ սահմանադրական ուղուն ու տեղիք չտալ հնարավոր նոր սադրանքների: Հաջորդ օրը՝ մայիսի 26-ին, կենտրոնական հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ապատեղեկատվություն տարածվեց նախորդ օրվա հանրահավաքի մասին, իբր այնտեղ հնչել են հակասահմանադրական գործողությունների դիմելու կոչեր: Իսկ մինչ այդ, նույն օրն արդեն Մոսկվայից Երեւան էին ժամանել բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի տեղակալ Շիլովը, ներքին զորքերի հրամանատար Շատալինը, ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Վ. Անդրեեւը, կենտրոնական ՊԱԿ-ի մի պաշտոնյա եւ ուրիշներ: Վերջիններս հայտարարեցին, թե իբր տեղեկություններ են ստացել, որ մայիսի 27-28-ին Երեւանում զանգվածային անկարգություններ են նախապատրաստվում, որ նախատեսված է տապալել Լենինի արձանը, կազմակերպել աշխարհազորի շքերթ, գրավել կառավարական շենքը եւ այլն[223]: Քանի որ որեւէ նման բան չկար, ուստի հստակ էր, որ Հայաստանում պարզապես պատժիչ գործողություններ են ծրագրված: ՀՀՇ ղեկավարությունը Մոսկվայից եկած պաշտոնատարներին իր բողոքը հայտնելուց հետո անմիջապես այդ մասին ահազանգեց նաեւ օտարերկրյա լրատվական գործակալություններին:

Հիմնական սադրանքը սկսվեց մայիսի 27-ի վաղ առավոտյան, Երեւանի երկաթուղային կայարանում:

Երկրապահ ջոկատների մարտիկները զենք էին ձեռք բերում տարբեր ճանապարհներով, այդ թվում նաեւ զինվորականներից գնելով, որոնք հաճախ ուրախությամբ եկամտաբեր գործարքի մեջ էին մտնում նրանց հետ: Այս դեպքում եւս նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որը, ինչպես պարզվեց, նախապատրաստված ծուղակ էր: Դեպի Նախիջեւան երթուղու գնացքն ուղեկցելուն սպասող զինվորական պահակախումբը կրակ բացեց նախապես պայմանավորված տեղում իրենց սպասող երկրապահ ջոկատի մարտիկների մի խմբի վրա[224]: Ջոհվեց վեց քաղաքա-

[223] *Լուրերի սադրիչ ու հորինված լինելու մասին տե՛ս նաեւ Երեւանի քաղգործկոմի նախագահ Ա. Գեղամյանի հարցազրույցները («Խորհրդային Հայաստան», 01.06.1990):*

[224] *Ըստ պայմանավորվածության՝ երկրապահ ջոկատի մարտիկները պետք է մտնեին զինվորականների սպասասրահ, օդ կրակեին, իսկ զինվորները պետք է անմիջա-*

ցի, եւ վիրավորվեց տասը զինվոր: Կայարանն անմիջապես շրջապատվեց զրահապատ մեքենաներով եւ ներքին զորքերով: Աշխարհազորային ջոկատների եւ հասարակական քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների, մասնավորապես՝ «Ղարաբաղ» կոմիտեի՝ այստեղ եկած անդամների ջանքերով միջադեպը տեղայնացվեց: Պայմանավորվածություն ձեռք բերվեց զորքերի հրամանատարության հետ, վերջիններս հավաստիացրին, որ ամեն ինչ կարելի է ավարտված համարել, եւ որեւէ շարունակություն չի լինի:

Սակայն պայմանավորվածությունը շուտով խախտվեց, եւ զինվորականները լարվածության նոր օջախ ստեղծեցին Էրեբունի թաղամասում, որտեղ դիահերձարան էին տեղափոխվել զոհվածների մարմինները: Տեղի տալով տարածված այն լուրին, որ Նուբարաշենից զորքերին նոր համալրում պետք է գա, աշխարհազորային չվերահսկվող մի ջոկատ փակեց քաղաք մտնող ճանապարհը: Այստեղ տեղի ունեցավ երկրորդ ընդհարումը: «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Վազգեն Մանուկյանի, Աշոտ Մանուչարյանի եւ Երեւանի քաղաքապետ Արտաշես Գեղամյանի ջանքերով գեներալ Սուրկովի հետ ձեռք բերվեց իրավիճակը կայունացնելու եւ զորքը քաղաքից դուրս բերելու նոր պայմանավորվածություն: Բայց խախտվեց նաեւ այդ պայմանավորվածությունը: Տանկերը եւ զրահատեխնիկան մտան բնակելի թաղամաս եւ սկսեցին անկանոն կրակել: Մեծ դժվարությամբ իրավիճակը շտկելուց հետո էլ երկու զրահապատ մեքենա սուրում էին Երեւանի փողոցներում՝ պատրվակ փնտրելով շարունակելու ընդհարումները: Ուշ երեկոյան լուր ստացվեց այն մասին, որ Երեւանի հյուսիսային մուտքից Երեւան պետք է մտնի եւ քաղաքի կենտրոնով անցնի ծանր տեխնիկայով զինվորական մի շարասյուն, եւ, որ դրա ճանապարհը քաղաքի մուտքի մոտ բեռնատարներով փակել են: Զինվորականները սպառնում էին տանկերով ջարդուփշուր անել արգելապատնեշը: Շտապ այստեղ հասած Վանո Սիրադեղյանին մեծ ջանքերի գնով հաջողվեց բացել տալ ճա-

պես հանձնեին իրենց զենքը՝ իբր անակնկալի եկած զինաթափվել են առաջինների կողմից: Ամեն ինչ այդպես էլ եղավ, որ վկայում է այն բանի մասին, թե պայմանավորվածությանը տեղյակ էին պահված պահակախմբի բոլոր զինվորները: Միայն դրանից հետո զինվորականներից մեկը, որ նախապես թաքստոցում էր գտնվում, դիպուկ կրակոցներ արձակեց երկրապահ ջոկատի մարտիկների վրա՝ սպանելով վեց հոգու: Վերջիններս, անակնկալի եկած, ստիպված էին պատասխան կրակ բացել: Հատկանշական է, որ նրանց կրակոցներից զինվորականներից ոչ մեկը չսպանվեց, նրանք միայն վիրավորվեցին:

նապարհը, իսկ զինվորականներին համոզել շարասյունն անցկացնել ոչ թե քաղաքի կենտրոնով, այլ շրջանցիկ ճանապարհով:

Բայց սրանով էլ ամեն ինչ չավարտվեց: Կազմակերպված սադրանքի հերթական օղակներն էին Երեւանում տեղակայված զորամասերում մայիսի լույս 28-ի գիշերը հնչած կրակոցները, իսկ վաղ առավոտյան զինվորական մի մեքենայից գնդակոծվեց ՀՀՇ վարչության շենքը, որի հետեւանքով զոհվեց դրսում մեքենայի մեջ քնած գետաշենցի փախստական մի երիտասարդ[225]: Երկու օրվա ընթացքում զոհվեց 26 եւ վիրավորվեց 60 քաղաքացի:

Ակնհայտ էր, որ պատժիչ այս միջոցառումը նախապես ծրագրված եւ նախապատրաստված էր Կենտրոնի եւ տեղական իշխանության որոշակի կառույցների կողմից: Ակնհայտ էր նաեւ, որ գտնվել եւ օգտագործվել էին սադրիչներ, իսկ ոմանք էլ ակամա գործիք էին դարձել: Օրվա ընթացքում, ըստ էության, միմյանց հետ կապ չունեցող 6-7 միջադեպերը նախապես ծրագրված էին՝ հույս ունենալով, որ դրանցից մեկնումեկը կարող է իրավիճակը դուրս բերել վերահսկողությունից եւ ավելի լայնամասշտաբ գործողությունների առիթ տալ: Չնայած կազմակերպիչների բոլոր ջանքերին՝ հնարավոր չեղավ դա իրականացնել: Արյունոտ «միջոցառման» կազմակերպիչները հավանաբար հույս ունեին նաեւ, որ այդ շփոթի ընթացքում կհաջողվի միմյանց դեմ դուրս բերել նաեւ հայկական զինված ջոկատներին, որոնց մի մասը որեւէ վերահսկողության եւ համակարգման չէր ենթարկվում: Իսկ դրանից հետո Կենտրոնի ցանկացած որոշում եւ զանգվածային ուժային միջամտություն պատճառաբանված կդիտվեր: Շարժման եւ հասարակության զանգվածության շնորհիվ դա տեղի չունեցավ, հնարավոր եղավ միջադեպը ըստ հնարավորին տեղայնացնել: Իշխանության՝ խնամքով մշակած «օպերատիվ ռազմական միջոցառումների պլանը», ըստ էության, անհաջողության մատնվեց, եւ Կենտրոնը չհամարձակվեց Երեւանում կամ հանրապետությունում հատուկ դրություն հայտարարել, ստիպել հեռաձգել կամ հատուկ դրության պայմաններում անցկացնել ընտրությունների հաջորդ փուլերը[226]:

---

[225] *Տե՛ս «Հայք», 02.06.1990:*

[226] *Մայիսի 27-ի՝ արդեն իսկ ի սկզբանե ճշգրիտ՝ որպես Հայաստանի անկախության գործընթացը խափանելու փորձ գնահատված դեպքերը անհասկանալիորեն «Հայոց պատմության» վերջին ակադեմիական հրատարակությունում, չգիտես ինչու, մեկնաբանված են որպես Կենտրոնի կողմից կազմակերպված սադրանք՝ հավասարության նշան դնելու համար «ադրբեջանցի գրոհայինների եւ ինքնապաշտպանության դուրս եկած հայ կամավորների միջեւ» (տե՛ս Հայոց Պատմություն, հ.4, գիրք երկրորդ, ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2016, էջ 203):*

Սադրանքի կազմակերպիչների համար, անշուշտ, որոշակի զսպող նշանակություն ունեցավ նախապատրաստվող պատժիչ գործողության մասին ՀՀՇ վարչության կողմից նախօրյակին օտարերկրյա լրատվական գործակալություններին տեղյակ պահելու փաստը եւ սադրանքի՝ որպես այդպիսին, բացահայտումը: Պետական ահաբեկչությունն այս դեպքում սահմանափակվեց անմեղ մարդկանց արյուն թափելու գնով հասարակությանը Շարժման դեմ տրամադրելու, այդ միջոցով նրա հնարավոր հաղթանակը ընտրություններում վիժեցնելու համար: Պետք է ասել, որ այն ոչ վճռական, սակայն ընտրողների ինչ-որ մասի վրա ինչ-որ ազդեցություն ունեցավ:

ժէ) Զինված կազմավորումների համախմբման գործը

Մայիսի 27-28-ի իրադարձություններն ավելի քան շեշտեցին այն վտանգը, որ ներկայացնում էր զինված ջոկատների տարանջատվածության եւ անվերահսկելիության փաստը: Երկրապահ ջոկատներ ունենալու անհրաժեշտությունն արձանագրվել էր դեռ սումգայիթյան ջարդից սկսած, երբ պարզ դարձավ, որ խորհրդային զորքերը չեն կարող հայ բնակչության կյանքի պաշտպանության երաշխիք դիտվել: «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծված նման ջոկատներ գործում էին Լեռնային Ղարաբաղում, սահմանամերձ շրջաններում, եւ նրանց գործունեությունը հստակ համակարգվում եւ վերահսկվում էր: 1990 թվականի սկզբին Բաքվի ջարդերից, ապա Երասխավանի եւ Կոռնիձորի կռիվներից հետո զինված ջոկատներ սկսեցին կազմավորվել ոչ միայն բացահայտ, այլ նաեւ տարերային: Հետագա ամիսներին տարբեր հիմնարկներից, նույնիսկ զորամասերից զենք ձեռք բերելը դարձավ զարմանալիորեն դյուրին: Պրոցեսը դարձավ անվերահսկելի. ոչ միայն շրջանները եւ մեծ հիմնարկները, նաեւ առանձին գյուղեր զինված ջոկատներ էին կազմակերպում: Իշխանության տարբեր օղակներ, առաջին հերթին՝ ՊԱԿ-ը, ընդհուպ՝ առանձին պաշտոնյաներ չէին կարող անմասն մնալ այս գործընթացից: Նրանք իրենք էին ստվերային հովանավորությամբ զինված ջոկատներ կազմակերպում կամ տարերային, ինքնաբուխ ստեղծված ջոկատները նյութական օժանդակությամբ վերցնում վերահսկողության տակ՝ ծառայեցնելու համար սեփական նպատակներին:

Վտանգը մի քանի ասպեկտ ուներ: Մինչ այդ շատերի մոտ, ըստ ավանդական պատկերացումների, ակնածանք առաջացնող «ֆիդային» հայտնվեց Երեւանի եւ այլ բնակավայրերի փողոցներում՝ զինված, երբեմն լկտի պահվածքով, սկսեցին տարբեր հիմնարկներից մեքենաներ տանել, ահաբեկել, միմյանց հետ հաշիվներ մաքրել, օրը ցերեկով կողոպուտներ կազմակերպել: Բազմացան զանազան «շտաբները», քաղաքի փողոցներում զիշերները սկսեցին կրակոցներ հնչել: Այս ամենը հասարակական գիտակցության մեջ կապվում էր Շարժման հետ եւ ինչ-որ չափով սկսում վարկաբեկել այն: Երկրորդ եւ հիմնական վտանգն այն էր, որ Շարժման կողմից չվերահսկվող այս ջոկատների ինքնագլուխ, կամ հենց անկայունություն ստեղծելու նպատակով հրահանգված ցանկացած գործողություն կարող էր որպես սադրանք օգտագործվել եւ ծանր հետեւանքներ ունենալ: Միասնական համակարգող կենտրոնի բացակայության պայմաններում ամեն առիթով կարող էին հակամարտություններ առաջանալ զինված կազմավորումների միջեւ եւ ծավալվելով՝ վերածվել քաղաքացիական պատերազմի:

Հանրապետության իշխանությունը ոչ միայն իր առջեւ նմանօրինակ վտանգավոր զարգացումները կանխելու խնդիր չէր դրել, այլեւ բացարձակ անընդունակ էր դրան: Ավելին՝ դրանում կարող էր իր համար յուրատեսակ փրկօղակ տեսնել. սկսված ընտրությունների տրամաբանական ընթացքը խափանելու համար դա կլիներ լավագույն եւ միակ հնարավոր առիթը՝ Կենտրոնի կողմից ուժային միջամտության եւ հանրապետությունում հատուկ դրություն հաստատելու համար: Մայիսի 27-ին կազմակերպված հրեշավոր սադրանքը հենց այս հիմքի վրա էր հաշվարկված, եւ մեծագույն ջանքերի գործադրմամբ, հրաշքով հնարավոր եղավ դրանից խուսափել: Չվերահսկվող որոշ ջոկատների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ ակտիվորեն մասնակցում էին (անշուշտ՝ ոչ առանց իշխանական հրահանգավորման) նախընտրական պայքարներին, ինչն սպառնում էր վարկաբեկել եւ արժեզրկել երկրում ընթացող կարեւորագույն քաղաքական գործընթացը:

Շարժման ղեկավարությունն ի սկզբանե հասկանում էր նմանօրինակ զարգացումների վտանգն ու անթույլատրելիությունը եւ փորձում ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական միջոցառումներով կարգավորել այս կարեւոր բնագավառը: Աշխարհազորային ջոկատները միակ միջոցն էին Հայաստանի սահմանների եւ Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի պաշտպանության համար: Դրանք նաեւ դիտվում էին որպես ապագա անկախ պետության բանակի հիմքը: Սակայն անհրաժեշտ էին միջոցառումներ՝ դրանց վտանգավոր ինքնագործունեությունը կանխելու, մեկ միասնական կենտրոնի ենթարկելու, դրանց գործողությունները համակարգելու համար: Տվյալ պայմաններում, եթե այդպիսի վերահսկողությունն անհնար էր միայն Շարժման ջանքերով կամ միայն իշխանության կողմից, ապա դա հնարավոր էր երկուսի համատեղ ուժերով՝ մասնավորապես այդ ջոկատներն ինչ-որ կերպ օրինականացնելու եւ Գերագույն խորհրդի վերահսկողության տակ առնելու միջոցով: Այդ ուղղությամբ միջոցառումներից վերջինը ՀՀԾ-ի նախաձեռնությամբ մայիսի 3-ին Գերագույն խորհրդին առընթեր Պաշտպանության խորհրդի ստեղծումն էր, որին պետք է ենթարկվեին բոլոր ջոկատները: Սակայն հանրապետության գործադիր իշխանությունը ձգձգում կամ փաստորեն բոյկոտում էր այս որոշումը կենսագործելու համար իրեն տրված հանձնարարությունների կատարումը, իսկ նրա որոշ առանցքային պաշտոնյաներ, ինչպես տեսանք, քամահրանքով էին խոսում այդ որոշման մասին:

Մայիսի 27-ից հետո զինված կազմավորումների անվերահսկելիությունը վերացնելու հարցն առավել սրվեց ՀՀԾ-ի համար եւ, ըստ էության, դարձավ նույնքան հրատապ եւ կարեւոր, որքան ընտրությունների հարցը: Ի սկզբանե էլ բացահայտ էր, որ ընտրությունների բնական ընթացքի դեպքում ՀՀԾ-ն ուներ հաղթանակի հասնելու բոլոր նախապայմանները, եւ միակ բանը, որ դրան կարող էր խոչընդոտել, իրավիճակի շեշտակի ապակայունացումը կարող էր լինել: Այդ բանը շատ լավ հասկանում էին նաեւ իշխանությունները, եւ կասկածից դուրս է, որ «չվերահսկվող» ջոկատների մի մասը կազմակերպվում եւ իրականում վերահսկվում էր հենց նրանց կողմից, կատարում նրանց հրահանգները: Մայիսի 27-ի սադրանքից հետո, երբ պետականորեն չվերահսկվող ջոկատների ինքնագլուխ գործողությունների հետեւանքով հնարավոր վտանգն ավելի էր մեծացել, զինված կազմավորումների վերահսկողությունը շտապ կարգավորելու անհրաժեշտության մասին հատուկ հայտարարություն ընդունեց «Ղարաբաղ» կոմիտեն[227]: Ջոկատներին ուղղված ընդարձակ եւ տագնապալից հոդվածով հանդես եկավ Վազգեն Սարգսյանը[228]: Կազմակերպվեց երկրապահ ջոկատների լիազոր ներկայացուցիչների հանրապետական հավաք, որին մասնակցած 26 ջոկատների ներկայացուցիչները հայտարարե-

[227] *Տե՛ս «Հայք», 10.06.1990:*

[228] *Տե՛ս «Հայք», 17.06.1990:*

ցին, որ այդ ջոկատներն այսուհետեւ դրվում են հանրապետության Գերագույն խորհրդի Պաշտպանության խորհրդի տրամադրության տակ: Ընդ որում, ընդունված Հռչակագրում հատուկ նշվում էին նաեւ մի քանի կարեւոր սկզբունքներ, որոնց պարտավորվում էին հավատարիմ մնալ փաստաթուղթը ստորագրող ջոկատները. բանակի կոչումը միայն պետության անվտանգության ապահովումն է արտաքին սպառնալիքից, նրա մասնակցությունը ներքին քաղաքականության հարցերին անթույլատրելի է, հանրապետությունում հասարակական կարգի պահպանությունը վերապահված է միայն իրավապահ մարմիններին[229]: Հաջորդ մեկ շաբաթում նույնպիսի որոշում կայացրեցին եւ Հռչակագրին միացան եւս վեց երկրապահ ջոկատներ: Գերագույն խորհրդի նախագահությունը ստիպված էր հունիսի 21-ին նորից անդրադառնալ Պաշտպանության խորհրդի հարցին եւ հանձնարարել Արդարադատության, ՆԳ նախարարներին եւ հանրապետության դատախազին՝ շարունակել աշխատանքը համապատասխան կանոնադրության եւ խորհրդի կազմը ճշտելու հարցերի վրա[230]: Սակայն այս ամենը դեռ շատ հեռու էր ապահովության երաշխիք լինելուց: Հատկանշական է, որ հենց նույն օրը պետական հեռուստատեսությունը եթեր հեռարձակեց մի քանի զինված ջոկատների հրամանատարների ինչ-որ հավաքի մասին հաղորդում, որում նրանք պահանջում էին ճանաչել իրենց որպես «ռազմա-քաղաքական միավորում», արհամարհանքով խոսում կազմավոր-

229 *Այս Հռչակագիրը ստորագրել էին Հայաստանի երկրապահ ջոկատների լիազոր ներկայացուցիչներ Վազգեն Սարգսյանը (Արարատ), Վահան Շիրխանյանը (Աշտարակ), Մուշեղ Սաղաթելյանը (Անի), Սարգիս Թամազյանը (Հրազդան), Գեւորգ Բաղդասարյանը (Իջեւան), Գարիկ Շառոյանը (Նոյեմբերյան), Մարտիրոս Ղազարյանը (Մեղրի), Սերգեյ Առաքելյանը (Թալին), Ֆելիքս Մարգարյանը (Լենինյան շրջան), Ալեքսանդր Փիրումովը (Խորհրդային շրջան), Ռուստամ Աղաջանյանը (Ջերմուկ), Վահան Վարդանյանը (Եղեգնաձոր), Ռոբերտ Այվազյանը (Մերգելյան ինստիտուտ), Աշոտ Մինասյանը (Միսիան), Գեւորգ Տեր-Գեւորգյանը (26 կոմիսարների շրջան), Սանասար Ղուկասյանը (Մաշտոցի շրջան), Արա Խուդավերդյանը («Կոռնիձոր» ջոկատ, Լեւոն Հարությունյանը (Սպանդարյան շրջան), Հովիկ Հայրապետյանը (Մարմարաշեն եւ Այնթապ գյուղեր), Արմեն Ղանդյանը (Կարմիրի շրջան), Գագիկ Գեւորգյանը («Խալգի» ջոկատ), Հայրապետ Մարգարյանը («Սպե» ջոկատ), Սամվել Շահինյանը (Ալավերդի եւ Ստեփանավան), Ալիկ Պետրոսյանը (Նաիրի), Ալֆրեդ Ներսիսյանը («Սասունցիներ» ջոկատ), Սասուն Ղազարյանը (Հոկտեմբերյան) (տե՛ս «Հայք», 10.06.1990):*

230 *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 12, հոդվ. 161:*

վող Գերագույն խորհրդի նկատմամբ եւ իրենց իրավունք վերապահում չենթարկվել նրան[231]:

Իրավիճակը կայուն պահելու խնդիրն ու դրա հետ կապված վտանգները շարունակում էին կախված մնալ օդում:

231 *Տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 15/21.06.90 (փաստաթուղթը այդ հաղորդման առիթով հեռուստառադիոպետկոմի նախագահին ուղղված դրավոր բողոք է մի քաղաքացու կողմից):*

3. ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

ա) Ընտրության հաջորդ փուլերը, նոր խոչընդոտների հաղթահարումը

Ըստ գործող օրենքի, եթե ընտրությունը կայացել, բայց թեկնածուներից որեւէ մեկը չէր ստացել մասնակիցների ձայների կեսից ավելին, ապա նշանակվում էր կրկնական քվեարկություն, որին մասնակցում էին առավել ձայն ստացած երկու թեկնածուները: Եթե ընտրությունը չէր կայացել (քվորում չէր ապահովվել) կամ անվավեր էր ճանաչվել, ապա նշանակվում էր կրկնական ընտրություն, եւ կարող էին առաջադրվել նաեւ նոր թեկնածուներ: Կրկնական քվեարկությունների օրը նշանակվեց հունիսի 3-ին, կրկնական ընտրությունները՝ հուլիսի 15-ին: Այս պայմաններում, երբ ընտրատարածքների շուրջ երկու երրորդում պատգամավոր չէր ընտրվել, անհրաժեշտ էր վերանայել տեղական խորհուրդների՝ նախապես այդ օրերին նշանակված ընտրությունները: Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ արդեն սկսված առաջադրումները տեղական խորհուրդների համար դադարեցվեցին, եւ հարցը տեղափոխվեց նոր խորհրդարանի քննարկմանը[232]:

Մայիսի 20-ի քվեարկությունը ցույց տվեց, որ դժվար էր լինելու հասարակության մեջ տիրող իրական տրամադրությունների ու քաղաքական կողմնորոշումների համապատասխան պատկեր ստանալ խորհրդարանում: Կենտրոնական եւ հանրապետական իշխանությունների համագործակցությամբ իրականացված մայիսի 27-ի արյունոտ ոճրագործությունը վկայում էր, որ Կոմկուսն իշխանությունը պահպանելու համար միջոցների մեջ խտրություն չի դնելու, եւ, առաջին հերթին՝ ներքաղաքական վիճակի ապակայունացումն է շարունակելու մնալ որպես ընտրություններում Շարժման հաջողությունը կանխելու հիմնական միջոց:

---

[232] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 12, հոդվ. 164:*

Ինչպես եւ սպասելի էր, ճնշումները եւ զանազան սադրանքները, ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում, հաջորդ շաբաթներին սաստկացան: Ղարաբաղում հատուկ շրջանի պարետ Վ. Սաֆոնովի հրամանով անջատվեցին «որոշ անձանց», այդ թվում՝ նույնիսկ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ծառայողական եւ բնակարանի հեռախոսները[233]: Հադրութի շրջկոմի առաջին քարտուղար Գրիշա Բաղյանը նախ հեռացվեց աշխատանքից եւ կուսակցությունից, ապա Ադրբեջանի նորընտիր պրեզիդենտը նրան մարզից արտաքսելու հրամանագիր ստորագրեց: Շրջանը օկուպացվեց խորհրդային զինված ստորաբաժանումների կողմից, եւ այնտեղ ղեկավար նշանակվեց «Կազմկոմիտեի» մի ներկայացուցիչ[234]: Մարզում իսկական տեռորի մթնոլորտ հաստատվեց հատկապես Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններին մասնակցելու առիթով: Միայն պատգամավորության թեկնածուների նախընտրական ծրագրերը մարդկանց մոտ հայտնաբերելու փաստը բավարար հիմք էր նրանց վարչական կալանքի եւ դրամական տուգանքի ենթարկելու համար[235]:

Հաճախադեպ դարձան զանազան սադրանքները Հայաստանում եւ հատկապես նրա սահմանամերձ շրջաններում: Հունիսի 24-ին զինվորական երեք ուղղաթիռ մտել էին Վարդենիսի տարածք, գնդացրային կրակ բացել, սպանել ճանապարհին գտնվող մի քաղաքացու, մեկին վիրավորել եւ երկուսին տարել իրենց հետ: Կրակոցների եւ առեւանգումների դեպքեր էին արձանագրվում նաեւ այլ շրջաններում: Երեւանում հունիսի 9-ին զինվորական մի ստորաբաժանումից կրակել եւ վիրավորել էին երկու անչափահասների, իսկ հաջորդ օրը կրակել էին դեպքի առիթով տեղազննություն կատարող քննիչների վրա[236]: Խորհրդային բանակում ավելի հաճախ էին դարձել հայ զինծառայողների զոհվելու դեպքերը: Բանակից զորացրված 80 հայ զինվորների Հայաստան ուղարկելու փոխարեն ուղարկել էին Ադրբեջան: Բնական է, որ Շարժման դեմ ծանրաբեռնված ու եռանդուն աշխատում էր ՊԱԿ-ը: Տարածվում էին զանազան սադրիչ ու գրգռիչ լուրեր: Օրինակ՝ լուր էր տարածվել, որ ԽՄԿԿ համագումարի նախօրերին Հայաստանում նոր ողբերգական իրադարձություններ են սպասվում, կամ՝ որ Հայաստանում ժամանակակից զենքով զինված բազմահազարանոց

[233] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 09.06.1990:*
[234] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.06.1990:*
[235] *Տե՛ս «Հայք», 24.06.1990:*
[236] *Տե՛ս «Հայք», 01.07.1990:*

բանակ գոյություն ունի եւ այլն: Այս ամենը մթնոլորտը շարունակում էին պահել պայթյունավտանգ, եւ այդ վտանգն ավելի էր մեծանում, եթե նկատի ունենանք, որ զինված ջոկատների մի մասը կարող էր գործել ինքնագլուխ: Ճիշտ է՝ ջոկատների մի մասի ինքնակամ համախմբումը Գերագույն խորհրդի Պաշտպանության խորհրդի ենթակայության տակ եւ հռչակած սկզբունքները անհամեմատ փոքրացնում էին վտանգավոր նոր սադրանքների հնարավորությունը, սակայն այդպիսիք ամենեւին չէին բացառվում:

Առաջին քվեարկության արդյունքները Կոմկուսին պետք է առանձնապես հույսեր չներշնչեին: Սակայն, մյուս կողմից, ակնհայտ էր նաեւ իր եւ իր դաշնակիցների գործադրած հսկայական ջանքերի, կատարված ընտրակեղծիքների արդյունքը: Հակառակ դեպքում իշխանության հարցը հօգուտ ՀՀԾ-ի կարող էր լուծվել հենց մայիսի 20-ին:

Նույնպիսի ինտենսիվությամբ շարունակվում էր ՀՀԾ-ի եւ նրա քաղաքական ծրագրերի դեմ քարոզչությունը նույն գաղափարախոսական հիմքերի վրա, նույն դաշնակիցների օգնությամբ: Մտավորականության անունից հրապարակվեց Հայաստանի ստեղծագործական միությունների՝ ռուս հասարակայնությանն ուղղված մի դիմում, որտեղ, մասնավորապես, ասվում էր, որ իրենց համար «թանկ է խորհրդային երկրի, հատկապես ռուս ժողովրդի՝ մեր մասին ունեցած համարումը»[237]: Իրավիճակից ելքի հույսը կապվում էր ոչ թե ընտրությունների եւ նոր խորհրդարանի, այլ արդեն մի քանի ամիս հոլովվող նույն «համահայկական խորհրդաժողովի» եւ նրա կողմից ստեղծվելիք «Ազգային համաձայնության խորհրդի» հետ: Հուլիսի 7-ին մամուլը դեռ շարունակում էր տեղեկացնել այդ համաժողովի հրավիրման նախապատրաստական աշխատանքների մասին, «որին մասնակցում են հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների, Գիտությունների ակադեմիայի, Գերագույն խորհրդի, կառավարական մարմինների ներկայացուցիչներ»: Դրա հետ էր կապվում «ազգի առջեւ ծառացած արմատական խնդիրների քննարկումը»: Այդ նպատակով հուլիսի կեսերին նախատեսվում էին «ազգային կուսակցությունների» (այսինքն՝ ազգայնության) հետ նախնական խորհրդակցություններ: Հատուկ շեշտվում էր, որ նախապատրաստող մարմնի աշխատանքներին մասնակցել են 25 կազմակերպություն, մի այդքան էլ ողջունել են այդ նախաձեռնությունը[238]: Սակայն ապրիլից թմբկա-

[237] *«Խորհրդային Հայաստան», 09.06.1990:*
[238] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 07.07.1990:*

հարվող այս միջոցառման իրականացման ժամկետն այդպես էլ համառորեն չէր նշվում: Քարոզչական այս նախաձեռնությունների իմաստը նույնն էր՝ ցույց տալ, թե բոլորը համախմբվում են, եւ բաղձալի «ազգային միասնության» վերջնական կայացմանը խանգարում է միայն ՀՀՇ-ն:

Կոմկուսը հասարակությանը խոստանում էր կուսակցության նոր ծրագիր, բայց առայժմ այն չէին հրապարակում: Հայաստանի ապագան այս կուսակցությունն այլ կերպ չէր պատկերացնում, քան «նորացված» ԽՍՀՄ-ի կազմում, շարունակում էր խոստանալ երկիրը դարձնել «ազատ ձեռնարկչության գոտի» եւ այլն[239]: Ավելին՝ մայիսի 27-ի արյունոտ սադրանքից հետո Կոմկուսի դիրքորոշումը դարձավ նույնիսկ փոքր-ինչ ավելի ագրեսիվ, ինչից կարելի է ենթադրել, թե հանրապետության իշխանությունն այդ ոճրագործության հետեւանքների մեջ, այնուամենայնիվ, տեսնում էր իր հաղթանակի հույսը: Նրա ղեկավար Վլադիմիր Մովսիսյանն իր քաղաքական հակառակորդներին սկսեց պիտակավորել որպես «տնաբույս քաղաքագետներ եւ տեսաբաններ», «ինքնուս պատմաբաններ», մեղադրում էր նրանց, որ փոխեցին «իր փրկությունը հարյուրամյակներ ի վեր Ռուսաստանի հետ կապած ժողովրդի ստրատեգիական կողմնորոշիչները», մեղադրում էր նաեւ մտավորականությանը, որ լավ չպայքարեց այդ գաղափարների դեմ եւ այլն[240]:

Այս ամենի դեմ ՀՀՇ-ի հիմնական քարոզչական միջոցը շարունակում էին մնալ «Հայք» շաբաթաթերթը, պարբերաբար հրավիրվող հանրահավաքները, Գերագույն խորհրդի նախագահության որոշումների վրա ազդելը: Այդ ճնշման տակ հունիսի 2-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված դիմում հղեց, որով դատապարտում էր մայիսի 27- ի ողբերգական դեպքերի առիթով կենտրոնական լրատվամիջոցների ապատեղեկատվությունը եւ որակումները[241]: Մեկ այլ որոշմամբ Նախագահությունը հրաժարվում էր քննարկել Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանում անվտանգության ապահովման միջոցառումների մասին հարցը, քանի դեռ Կենտրոնը չի կատարում իր իսկ ընդունած որոշումները Լեռնային Ղարաբաղի մասին[242]: Կրկին քննարկման առարկա

239 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 30.05.1990:*
240 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 30.06.1990:*
241 *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 11, հոդվ. 158:*
242 *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 12, հոդվ. 160:*

դարձան Պաշտպանության խորհրդի[243] եւ զորակոչը ժամանակավորապես դադարեցնելու խնդիրները[244]:

Հունիսի 3-ին տեղի ունեցած կրկնական քվեարկությունից հետո ՀՀՇ-ի կողմից պաշտպանվող թեկնածուներից ընտրված պատգամավորների թիվը արդեն 72 էր, որից 11-ը՝ Լեռնային Ղարաբաղից[245]:

Այս ամիսներին Շարժումը կարողացավ լուծել մեծ կարեւորություն եւ հնչեղություն ունեցող եւս մի խնդիր, որին վաղուց հետամուտ էր, թեեւ դա նախընտրական միջոցառումների հետ չէր կապվում: ՀՀՇ վարչության եւ «Մաշտոց» միավորման համառ ջանքերով հնարավոր եղավ հասնել հանրակրթական դպրոցներում պարտադիր հայկական կրթության՝ «Ազգային միասնական հանրակրթական դպրոցի մասին» որոշման ընդունմանը[246]:

բ) Նոր իշխանության առաջին՝ դժվարին, բայց վստահ քայլերը

Հակառակ հարուցված տարաբնույթ խոչընդոտներին՝ կայացել էին եւս մի քանի կրկնական քվեարկություններ եւ կրկնական ընտրություններ: Հուլիսի 15-ի կրկնական ընտրությունների արդյունքներից հետո ընտրված պատգամավորների թիվը գերազանցում էր պատգամավորների ընդհանուր թվակազմի 2/3-ը, ինչն օրենքով անհրաժեշտ էր նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանի առաջին նիստը հրավիրելու համար: Եւ վերջապես, հուլիսի 17-ին Գերագույն խորհրդի նախագահությունը նստաշրջանի հրավիրման օրը նշանակեց հուլիսի 20-ին[247]: Դրանից այլեւս անհնար էր խուսափել:

Բայց դա ամենեւին չէր նշանակում, թե ընտրությունների հետ կապված լարված, սադրանքներով հարուստ եւ վտանգներով հղի շրջանը ետեւում էր մնացել, կամ համապատասխան ուժերը հրաժարվել էին նորընտիր Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքները խոչընդոտելու մտադրությունից: Շարժման դեմ համառ պայքարը՝ իշխանությանը մատչելի զինանոցի բոլոր միջոցների գործադրմամբ, շարունակվելու էր նաեւ հաջորդ շաբաթներին եւ՝ սկսած հենց արդեն նշանակված նստաշրջանի հրավիրման հարցից:

243 *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 12, հոդվ. 161:*
244 *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 12, հոդվ. 162:*
245 *Տե՛ս «Հայք», 10.05.1990:*
246 *Տե՛ս «Հայք», 17.06.90, 08.07.1990:*
247 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 18.07.1990:*



Ներընտիր Գերագույն խորհրդի առաջին նիստերից, 1990թ. հուլիս

ԳԽ Նախագահությունը նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նիստը հրավիրելու մասին հրամանագիրն ընդունեց՝ միայն տեղի տալով ՀՀՇ-ի հսկայական ճնշմանը նստաշրջանի հրավիրումից ընդամենը երեք օր առաջ: Բայց անմիջապես էլ հաջորդ օրերին իշխանության տարբեր մարմիններ ընտրված պատգամավորների, Շարժման առանձին ներկայացուցիչների հրավիրում էին ՀԿԿ կենտկոմ, իշխանական այլ մարմիններ՝ համոզելով կամ պահանջելով հետաձգել նստաշրջանի հրավիրումը: Պահանջը հիմնավորվում էր նրանով, իբր, մի շարք ջոկատներ սպառնում են զինված միջամտությամբ թույլ չտալ նստաշրջանի անցկացումը եւ խանգարել նրա աշխատանքները[248]: Հանրապետության ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Լեւոն Գալստյանը հայտարարեց, որ ինքը չի կարող ապահովել խորհրդարանի աշխատանքների եւ պատգամավորների կյանքի անվտանգությունը: Առավել հաճախադեպ էին դարձել կենտրոնական լրատվամիջոցների հակահայկական եւ կրքեր բորբոքող հաղորդումները, որոնք ավելի էին շիկացնում մթնոլորտը: Եւ այնուամենայնիվ, ՀՀՇ-ի ներկայացուցիչները չտրվեցին սադրանքների, չենթարկվեցին հոգեբանական ճնշումների եւ արդեն նշանակված նստաշրջանի հետաձգման առաջարկին համաձայնություն չտվեցին:

Նորընտիր խորհրդարանի առաջին նիստը բացվեց հուլիսի 20-ին, առավոտյան ժամը 11-ին: Այն, ըստ գործող Սահմանադրության, նախագահում էր ԿԸՀ-ի նախագահ Ռոբերտ Ամիրյանը: Խորհրդարանին իր օրինությունն ու մաղթանքները հղեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն: Սկսվեցին աշխատանքների կազմակերպման հետ կապված առաջին հարցերի քննարկումները:

Ինչպես եւ սպասելի էր, աշխատանքի առաջին իսկ օրվանից խորհրդարանը ստիպված էր իր քննարկելիք սովորական հարցերն ընդմիջել զանազան տագնապալի հայտարարությունների եւ իրադարձությունների արձագանքելով եւ դրանք կարգավորելու քայլեր ձեռնարկելով: Նիստն սկսելուց ընդամենը մի քանի ժամ անց ՆԳ նախարարը հայտարարեց, որ զինված ջոկատներից մեկը հարձակվել է մի զորամասի վրա, տարել 37 ինքնաձիգ, ականանետ, պատանդ վերցրել երեք զինվոր եւ մի սպա: Այնուհետեւ Կոմկուսի ղեկավար Վ. Մովսիսյանը նրան լրացրեց, թե իբր ԽՍՀՄ Պաշտպանության նախարարը հրամայել է տարված զենքը հետ բերելու եւ

[248] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 131-132:*

պատանդներին ազատելու նպատակով ռազմական գործողություն կատարել: Շտապ իրադարձությունների վայր մեկնեց պատգամավորների մի խումբ՝ Բաբկեն Արարքցյանի գլխավորությամբ: Պարզվեց, որ կազմակերպված է հերթական սադրանքը, որը բացահայտվեց, հաղթահարվեց եւ հաջողություն չունեցավ: Իսկ խորհրդարանն այս առիթով ընդունեց իր առաջին պաշտոնական ու վճռական հայտարարությունը.

«Խորհրդային բանակի եւ ներքին զորքերի ստորաբաժանումները Հայաստանի տարածքում իրավունք չունեն իրականացնելու պատժիչ որեւէ գործողություն՝ առանց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի թույլտվության»[249]:

Հուլիսի 25-ին հրապարակվեց ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովի հրամանագիրը «ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու եւ անօրինականորեն զենքը պահելու դեպքում այն առգրավելու մասին»[250]: Հրամանագրի կատարումը Հայաստանի տարածքում, մի կողմից՝ հանրապետությունը զրկելու էր սահմանների պաշտպանության համար անհրաժեշտ ուժերից, մյուս կողմից՝ անխուսափելիորեն հանգեցնելու էր ծանր հետեւանքներով հղի ընդհարումների: Գերագույն խորհուրդն արձագանքեց անմիջապես. հաջորդ իսկ օրը կազմվեց հանձնաժողով՝ այդ հրամանագիրը եւ դրա կատարումից բխող հետեւանքներն ուսումնասիրելու եւ համապատասխան առաջարկություններ նախապատրաստելու համար: Սա հնարավոր այլ գործողությունները կանխարգելող եւ վերջնական կողմնորոշման համար ժամանակ շահելուն նպատակաուղղված քայլ էր: Մի քանի օր անց՝ հուլիսի 30-ին, ընդունվեց ինքնիշխան պետության խորհրդարանին վայել հիմնական որոշումը, որով կասեցվում էր հիշյալ հրամանագրի կիրարկումը Հայկական ԽՍՀ-ում, ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղում: Հարցի կարգավորումը Գերագույն խորհուրդը վերցնում էր իր տնօրինության տակ եւ բացառում դրանում որեւէ արտաքին միջամտություն: Որոշման մասին տեղյակ էին պահվում ԽՍՀՄ պրեզիդենտը եւ մյուս հանրապետությունների խորհրդարանները[251]: Լիակատար ինքնիշխանության ցուցադրման առաջին հստակ եւ համարձակ քայլն իրեն արդարացրեց:

[249] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 14, հոդվ. 188:*

[250] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 27.07.1990:*

[251] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 14, հոդվ. 202: Այս որոշման համար որպես հիմք վկայակոչվում էր Հայկական ԽՍՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը, ըստ*

Թերեւս ոչ պատահականորեն նույն օրերին ստացվեց ԽՍՀՄ դատախազության միջնորդագիրը՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Արկադի Մանուչարովին քրեական պատասխանատվության ենթարկելու թույլտվություն ստանալու համար: Խորհրդարանը ոչ միայն մերժեց միջնորդությունը, այլեւ Մանուչարովի նկատմամբ խորհրդային իշխանությունների գործողությունները որակեց հակասահմանադրական, գնահատեց որպես Ղարաբաղյան շարժման ղեկավարներից մեկի նկատմամբ քաղաքական հետապնդում ու հաշվեհարդարի փորձ[252]:

Լարումը մեծ էր նաեւ խորհրդարանի ներսում՝ համարյա բոլոր հարցերի քննարկման ժամանակ: Ունենալով անհրաժեշտ թվով ձայներ որոշումների կայացմանը խոչընդոտելու համար՝ Կոմկուսը կարողացավ հասնել այն բանին, որ հնարավոր չեղավ իրականացնել մի ամբողջ շարք ընտրատարածքներում բացահայտ օրինախախտումներով կատարված ընտրության արդյունքների քննարկումը: Ապօրինություններ կատարողները մնացին անպատիժ:

Օգոստոսի 1-ին տեղի ունեցավ Երեւան-Ստեփանակերտ երթուղու ինքնաթիռի վթար, զոհվեցին ուղեւորները, օգոստոսի 5-ը հայտարարվեց սգո օր: Օգոստոսի 2-ին Գերագույն խորհրդում տեղեկատվություն հաղորդվեց, որ Երեւանի զորամասերից մեկից հափշտակվել է 165 ռեակտիվ հետեւակային հրանետ, դրանց 100 լիցք եւ այլ հանդերձանք՝ ընդամենը 1240 միավոր[253]: Սադրանքները վերջ գտնելու եւ լարվածությունը թուլանալու որեւէ միտում չունեին: Ավելին, կարծես թե հանրապետության իշխանության առաջին դեմքի ընտրված չլինելու հանգամանքը նպաստում էր սադրիչ գործողությունների հաճախացմանը եւ լարվածության մեծացմանը: Այս պայմաններում, նվազագույն անհրաժեշտ նախապատրաստու-

որի՝ հանրապետության շահերին վերաբերող ԽՍՀՄ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը Հայկական ԽՍՀ տարածքում գործում են միայն հանրապետության Գերագույն խորհրդի կողմից վավերացվելուց հետո (այս փոփոխությունը Սահմանադրության մեջ ՀՀՇ-ի ճնշմամբ կատարվել էր 1990թ. հունվարի 11-ին): Ինչ վերաբերում է Գերագույն խորհրդի՝ հուլիսի 20-ի որոշմանը, որով ԽՍՀՄ ներքին զորքերին եւ բանակին արգելվում էր հանրապետության տարածքում կատարել պատժիչ որեւէ գործողություն՝ առանց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի թույլտվության, դրա համար որպես հիմք վկայակոչվում էր ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը, որը նախատեսում էր ժողովրդի ինքնապաշտպանության բնական իրավունք:

252 Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 15, հոդվ. 208 եւ 245:

253 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 07.08.1990:

թյուններն ավարտելուց հետո, խորհրդարանը օգոստոսի 3-ին վերջապես ձեռնամուխ եղավ Գերագույն խորհրդի նախագահի ընտրության հարցին:

գ) Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը, իշխանության հարցի վերջնական լուծումը

Խորհրդարանում ուժերի իրական հարաբերակցության հստակ պատկերը, իսկ վերջին հաշվով՝ իշխանության հարցը, որոշվելու էր Գերագույն խորհրդի նախագահի ընտրությամբ: Խորհրդարանի 260 պատգամավորներից մոտ 40-ը դեռ չէին ընտրվել, իսկ նախագահի ընտրության համար պահանջվում էր պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին՝ 131 ձայն[254]:

Խորհրդարանական ընտրությունները Շարժման հեղինակության բարձրակետի վրա չիրականացան: Երկուսուկես տարին բավականին երկար ժամանակ էր՝ պահելու համար այն բարձրագույն վերելքի աստիճանը, որին մի քանի անգամ հասավ Շարժումը: Մյուս կողմից՝ դա նաեւ բավարար ժամանակ էր, որպեսզի իշխանությունները լիովին ուշքի գային եւ մշակեին Շարժման դեմ պայքարի արդյունավետ ձեւերի մի ամբողջ համակարգ: Թե՛ նախընտրական, թե՛ ընտրությունների շրջանում բազմաճակատ այդ համակարգը, որպես յուրահատուկ մի «ինտերֆրոնտ»՝ ի դեմս Կոմկուսի, մտավորական նոմենկլատուրայի, ափյուռքյան կուսակցությունների, ՊԱԿ-ի եւ իշխանության այլ մարմինների հրահանգներով ու խնամակալությամբ, հիմնականում հայդատական գաղափարների վրա ստեղծված զանազան մանր կազմակերպությունների ու որոշ զինված ջոկատների, հատակ աշխատում էր Շարժման դեմ: Իսկ նախընտրական շրջանում սրանց միացան նաեւ ղարաբաղյան պաշտոնեության մի մասը եւ ծագումով ղարաբաղցի հայաստանաբնակները: Սրանց քարոզը «ազգային միասնության» դիրքերից՝ ուղղված անկախության «վտանգավորությունը» բացահայտելուն, ինչպես նաեւ Կենտրոնի հետ համատեղ ձեռնարկած սադրիչ ու ահաբեկչական գործողություններն ինչ-որ չափով, այնուամենայնիվ, ազդում էին հասարակության մի մասի վրա: Մայիսի 27-ի արյու-

254 ՀՀՇ-ն մերժեց Կոմկուսի ներկայացուցիչների՝ ԳԽ նախագահի ընտրության համար ընտրված պատգամավորների թիվը ելակետ ընդունելու առաջարկը (այդ պահին՝ 220), եւ որպես ելակետային արձանագրվեց պատգամավորների ընդհանուր թիվը՝ 260, ինչը նշանակում էր, որ ԳԽ նախագահը կարող էր ընտրվել նվազագույնը 131 ձայնով:

նոտ իրադարձությունները նույնպես՝ իրենց հերթին, ոմանց «զգաստացրին», չնայած՝ շատերին էլ դարձրին ավելի վճռական:

ՀՀՇ-ն իր չպարտավորեցնող ու չկաշկանդող կանոնադրությամբ, ըստ էության, բաց էր պահում իր դռները բոլորի առջեւ, եւ բնական է, որ հետագայում նաեւ անակնկալների կարող էր գալ, թե ովքեր են իր շարքերում եւ ցուցակներում: Մյուս կողմից, սակայն, նաեւ դժվար էր գտնել այնպիսի մի չափանիշ, ֆիլտր, որով հնարավոր լիներ փակել համաժողովրդական բնույթի շարժման բոլոր հատկանիշները պահպանող կազմակերպության դռներն այլ նպատակներով այստեղ թափանցողների ու ներդրվողների առջեւ: Դա հնարավոր չեղավ անել անգամ նրա կողմից պաշտպանվող թեկնածուների ընտրացուցակներում: ՀՀՇ-ի պաշտպանությամբ ընտրված մի քանի պատգամավորներ քիչ անց բացահայտվեցին որպես ՀՅԴ եւ այլ կուսակցությունների անդամներ, չնայած որպես այդպիսին էլ նրանք կարող էին մտնել այդ ցուցակների մեջ, ինչպես Կոմկուսի մի շարք անդամներ, եթե ժամանակին, առանց թաքցնելու իրենց կուսակցականությունը, նման ցանկություն հայտնեին: Որոշակի արդյունք տվեցին, հատկապես գյուղական շրջաններում կոմունիստների օգտին կատարված ամենակոպիտ ընտրակեղծիքները, կամայականությունները եւ զանազան ապօրինությունները: Միայն հասարակության մեծագույն մասի մեջ բացարձակ հեղինակություն ու վստահություն վայելելու եւ Շարժման տասնյակ հազարավոր մասնակիցների՝ ապօրինությունների դեմ համառ ու հետեւողական պայքարի շնորհիվ ՀՀՇ-ն ընտրությունների երեք փուլերից հետո խորհրդարանում կարողացավ հարաբերական մեծամասնություն ապահովել:

Ընդհանրապես, դժվար է որոշակի ու ճշգրիտ թվերով ներկայացնել ուժերի հարաբերակցությունը խորհրդարանում: Ինչպես ՀՀՇ-ի պաշտպանությամբ պատգամավոր դառնալու, այնպես էլ Կոմկուսի անդամ լինելու հանգամանքները դեռ բոլորի համար չէ, որ վճռորոշ նշանակություն պիտի ունենային այս կամ այն ճամբարում հայտնվելու համար: Կային նաեւ զգալի թվով պատգամավորներ, որոնք ընտրվել էին ինքնուրույն, առանց ՀՀՇ-ի կամ Կոմկուսի պաշտպանության:

Իշխանության հարցի վերջնական որոշման վճռորոշ գործոնությունը, որը նաեւ ուժերի իրական ստուգատեսն էր լինելու ու պարզելու ոմանց իրական դիրքորոշումը, պետք է լիներ Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը:

Որպես հաղթող ուժ՝ Շարժումը նախ իր մեջ պետք է որոշեր, թե ով պետք է լինի երկրի ղեկավարի իր թեկնածուն: ՀՀՇ վարչությունը եւ ՀՀՇ-ի պաշտպանությամբ ընտրված պատգամավորների հավաքը որոշեցին, որ Գերագույն խորհրդի նախագահի թեկնածուի հարցը պետք է որոշի «Ղարաբաղ» կոմիտեն[255]: Կոմիտեի նիստին մասնակցեց 8 հոգի (բացակայել էին Ալեքսան Հակոբյանը եւ Համբարձում Գալստյանը, իսկ Սամսոն Ղազարյանը մի քանի ամիս առաջ դուրս էր եկել Կոմիտեից): Որպես թեկնածուներ առաջադրվել էին Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Վազգեն Մանուկյանը, որոնք եւ չմասնակցեցին քվեարկությանը: Քվեարկությունը եղել էր փակ-գաղտնի: Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածության օգտին քվեարկել էին 4, Վազգեն Մանուկյանի օգտին՝ 2 հոգի[256]: Ապա այդ որոշումը հաստատեց նաեւ ՀՀՇ վարչության եւ պատգամավորական խմբակցության համատեղ նիստը: Նույն օրը Ազատության հրապարակում բազմահազարանոց հանրահավաքը սպասում էր՝ իմանալու համար, թե հաջորդ օրը Շարժման կողմից ում թեկնածությունն է առաջադրվելու երկրի բարձրագույն իշխանության ղեկավարի պաշտոնում: Սակայն մինչ հանրահավաքը վարող Վանո Սիրադեղյանը կհայտարարեր թեկնածուի անունը՝ բազմությունը կանխեց նրան՝ միաբերան ու վանկարկելով «Լե՛ւոն, Լե՛ւոն»[257]:

Գերագույն խորհրդի նախագահի ընտրությանը խորհրդարանը ձեռնարկեց օգոստոսի 3-ին: Կոմկուսի կողմից առաջադրվեց նրա ղեկավարի՝ Վլադիմիր Մովսիսյանի, ՀՀՇ-ի եւ ժողովրդավարական այլ ուժերի կողմից՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը: Առաջադրվեցին նաեւ Վազգեն Մանուկյանի, Ռաֆայել Ղազարյանի, Թելման Դիլանյանի, Պարույր Հայրիկյանի, Հրաչիկ Սիմոնյանի, Սուրեն Հարությունյանի թեկնածությունները: Ինքնաբացարկներից, Պ. Հայրիկյանի եւ Ս. Հարությունյանի՝ արտասահմանում գտնվելու հանգամանքով նրանց համաձայնությունն

---

255 Չնայած «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամները նաեւ ՀՀՇ վարչության կազմում էին, սակայն «Ղարաբաղ» կոմիտեն, որպես առանձին մարմին, դեռեւս շարունակում էր գործել:

256 Ավելի ուշ պարզվեց, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկել են Ռաֆայել Ղազարյանը, Բարկեն Արարքցյանը, Վանո Սիրադեղյանը, Սամվել Գեւորգյանը, իսկ Վազգեն Մանուկյանի օգտին՝ Դավիթ Վարդանյանը եւ Աշոտ Մանուչարյանը:

257 Տողերիս հեղինակը, որ պատգամավոր էր ընտրվել որպես ՀՀՇ անդամ, մասնակցում էր ինչպես հիշյալ նիստին, այնպես էլ դրան հաջորդած հանրահավաքին եւ այս ամենը վկայում է որպես ականատես:

ունենալու անհնարինության պատճառով այդ թեկնածությունները հանելուց հետո քվեարկվեցին Լեոն Տեր-Պետրոսյանը եւ Վլադիմիր Մովսիսյանը:

Թեկնածուների նախընտրական ելույթներում առանցքային տարբերությունը Հայաստանի՝ անկախ, թե՞ Միութենական նոր պայմանագրի կամ ֆեդերացիայի կազմում լինելու, այլ խոսքով՝ երկրի ապագա կարգավիճակի հարցում էր:

Լեոն Տեր-Պետրոսյանը, նկատի ունենալով Խորհրդային Միությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների ուղղվածությունը եւ պատմական փորձը, հանրապետության զարգացման հեռանկարը տեսնում էր ինքնուրույն տնտեսական համակարգի վրա հաստատված ազգային անկախ պետականության ստեղծման, միջազգային իրավունքի նորմերի վրա հիմնված իրավական պետության կառուցման, համամարդկային արժեքների, մարդու իրավունքների վրա խարսխված ժողովրդավարական հասարակարգի հաստատման խնդիրների իրականացման ճանապարհով: Անկախ պետականության հաստատումը պետք է լիներ «ոչ թե միաժամանակյա ակտ, այլ միջոցառումների մի հսկայական համալիրի հետեւողական կենսագործման որոշակի տեւողություն պահանջող գործընթաց»: Ընդ որում՝ այս խնդիրների կենսագործմանն ուղղված գործնական քայլերը նախատեսվում էր սկսել անմիջապես: Միութենական պայմանագրին Հայաստանի մասնակցությունը նա հնարավոր էր համարում միայն երկու պայմանների առկայության դեպքում. եթե հանրապետությունը հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, եւ եթե բացառվի հանրապետության տարածքում միութենական Սահմանադրության եւ օրենսդրության գործողությունը: Այսինքն՝ եթե այդ Միությունը հանդես գա որպես «անկախ պետությունների մի համագործակցություն»[258]:

Կոմկուսի թեկնածու Վլադիմիր Մովսիսյանը նույնպես խոսում էր հանրապետության ինքնիշխանության ընդլայնման խնդիրների, ժողովրդավարական ազատությունների հաստատման մասին եւ այլն, սակայն հանրապետության ապագան տեսնում էր միայն ԽՍՀՄ կազմում, առանց առաջարկվող միութենական պայմանագրի նկատմամբ որեւէ վերապահության: Այնպես որ՝ խորհրդարանն այդ քվեարկությամբ նաեւ իր դիրքորոշումն էր արտահայտելու, թե ինչպես է տեսնում երկրի ապագան՝ ԽՍՀՄ կազմում մնալո՞ւ, թե՞ անկախության ճանապարհով գնալու մեջ,

[258] *Գերագույն խորհրդի նստաշրջանում օգոստոսի 3-ին ունեցած նախընտրական ելույթը տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 103-112:*

ինչպես նաեւ՝ թե քաղաքական ո՞ր ուժին ու նրա ղեկավարին է վստահում այդ ընթացքի ապահովումը եւ ծառացած հիմնահարցերի լուծումը:

Առաջին քվեարկությամբ հարցը չվճռվեց, սակայն ձայների տարբերությունը զգալի էր. Լեոն Տեր-Պետրոսյանը ստացավ 110, Վլադիմիր Մովսիսյանը՝ 93 ձայն: Վերջնական արդյունք չտվեց նաեւ երկրորդ քվեարկությունը, սակայն արդյունքների մեջ տարբերությունը խորացավ. Լ. Տեր-Պետրոսյանը ստացավ 124, Վլադիմիր Մովսիսյանը՝ 83 ձայն: Նիստը դադարեցվեց օգոստոսի լույս 4-ին, գիշերվա ժամը 3-ին, եւ հաջորդ նիստը՝ հերթական քվեարկությունն իրականացնելու համար, նշանակվեց նույն օրը՝ ժամը 14-ին: Երրորդ քվեարկությանն առաջադրվեց եւ գրանցվեց նաեւ Պ. Հայրիկյանի թեկնածությունը. նա հասցրել էր Միացյալ Նահանգներից տեղեկացնել իր համաձայնության մասին: Նա ստացավ ընդամենը 8 ձայն, Լեոն Տեր-Պետրոսյանը՝ 123, Վլադիմիր Մովսիսյանը՝ 81 ձայն: Նախագահի ընտրության հարցը վճռվեց չորրորդ քվեարկությամբ. Լեոն Տեր-Պետրոսյանը ստացավ 140 ձայն եւ ընտրվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ[259]: Վ. Մովսիսյանի օգտին քվեարկել էր 76 պատգամավոր:

Գերագույն խորհրդի նորընտիր նախագահը, ինչպես նախատեսված էր օրենքով, առաջարկեց թեկնածուներ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալի եւ տեղակալի պաշտոնների համար: Օգոստոսի 6-ին Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ ընտրվեց «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ վարչության անդամ Բաբկեն Արարքցյանը: Գե-

[259] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան, 07.08.1990 եւ Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 15, հոդվ. 220: Լավատեղյակ աղբյուրների վկայությամբ՝ վերջին քվեարկության ժամանակ ձայների տեղաշարժը հօգուտ Լեւոն Տեր-Պետրոսյանի տեղի էր ունեցել հետեւյալ կերպ: Վերակողմնորոշվել էր Լոռու կոմունիստ պատգամավորների մի խումբ՝ ՀԿԿ Գուգարքի շրջկոմի առաջին քարտուղար Վիգեն Խաչատրյանի դիմավորությամբ (վերջինս այդ մասին հայտարարեց ամբիոնից, քվեարկությունից առաջ): Թերեւս՝ գումարվել էին նաեւ Պ. Հայրիկյանի կողմնակիցների մի մասի ձայները՝ երբ պարզվեց, որ նրա թեկնածությունը (ընդամենը 8 ձայն) անհույս է: Զի բացառվում, որ ավելացել էին Վազգեն Մանուկյանի կողմնակիցներից մի քանիսի ձայները՝ այն բանից հետո, երբ ՀՀՇ-ն հաստատակամ մնաց իր նախնական որոշման մեջ եւ չընդունեց նախագահի թեկնածուին փոխելու եւ Վ. Մանուկյանին առաջադրելու նրանց առաջարկը: Ընթացքում վերակողմնորոշվել էին նաեւ առանձին անկախ պատգամավորներ: ՀՅԴ դեռեւս չբացահայտված անդամները միշտ քվեարկել էին հօգուտ Կոմկուսի թեկնածուի (այդ մասին կան մի շարք վկայություններ, տե՛ս օրինակ՝ «Պաշտոնական հայտարարություն ՀՅԴ վերականգնումի շարժման», «Հնչակ Հայաստանի», 24.12.1994):*

րագույն խորհրդի նախագահի տեղակալ ընտրվեց Կոմկուսի կողմից ընտրված պատգամավոր Գագիկ Հարությունյանը: Նախագահի՝ շատերի համար անակնկալ այս վերջին առաջարկը վկայությունն էր մրցակից ուժի նկատմամբ հանդուրժողականության, համատեղ աշխատելու պատրաստակամության եւ էականորեն լիցքաթափեց լարված մթնոլորտը[260]: Հաստատվեց Գերագույն խորհրդի քարտուղարի պաշտոն: Գերագույն խորհրդի քարտուղար ընտրվեց ՀՀՇ անդամ Արա Սահակյանը: Օգոստոսի 13-ին Գերագույն խորհրդի նախագահի առաջարկով հանրապետության կառավարության՝ Նախարարների (Մինիստրների) խորհրդի նախագահ ընտրվեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Վազգեն Մանուկյանը:

Գերագույն խորհրդի նորընտիր նախագահի առաջին պաշտոնական հայտարարությունն արտաքուստ ընդհանրական բնույթ ուներ, բայց ակնհայտորեն ուղղված էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին. «Հայաստանի իշխանություններն ի վիճակի են կարճ ժամանակի ընթացքում սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքին վերաբերող, նրա քաղաքական-հասարակական վիճակի կայունացմանն ուղղված բոլոր խնդիրները, պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը»[261]: Նախագահը նաեւ հատուկ դիմում հղեց հայ ժողովրդին: Բարձր գնահատելով ազգային-ազատագրական պայքարում ժողովրդի դրսեւորած հոգեկան կորովը, զոհողությունները եւ զգաստությունը, նվաճված հաղթանակները համարելով նրա վճռականության եւ հաստատակամության արդյունք, նա կոչ էր անում համախմբվել պետականության գաղափարի շուրջ եւ հաղթահարել առկա եւ սպասվող դժվարություններն ու խնդիրները[262]:

Խորհրդարանն ընտրեց նաեւ իր աշխատանքային մարմինները՝ մշտական հանձնաժողովները, ձեւավորվեց Գերագույն խորհրդի նախագահությունը:

դ) Հայաստանի անկախության մասին հռչակագիրը

[260] *Չնայած ամբողջ երկուսուկես տարի Հայաստանի կոմկուսի պաշտոնեության՝ Շարժման դեմ մղած անմնացորդ պայքարին, ՀՀՇ-ն ու նրա իշխանությունները Կոմկուսի նկատմամբ քինախնդրության որեւէ դրսեւորում չունեցան: Հետագայում էլ այս կուսակցության ունակ ու պատրաստակամ կադրերի մեծ մասը համապատասխան աշխատանք ու պաշտոններ ստացավ: Նրանց զգալի մասն արդարացրեց այդ վստահությունը:*

[261] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 15, հոդվ. 223:*

[262] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 15, հոդվ. 229:*

Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունից հետո հաջորդ առաջնահերթ խնդիրը պետք է դառնար Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումը, այնքանով, որքանով խորհրդարանի ընտրությունը կանգ էր առել ոչ թե ԽՍՀՄ կազմում մնալու, այլ անկախության ձեռքբերման ծրագրի վրա: Անկախության հռչակագիրը նախապատրաստելու նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ պատգամավոր Կարեն Յուզբաշյանի[263] նախագահությամբ: Կարճ ժամանակի ընթացքում, բացի հանձնաժողովից, ստացվեց փաստաթղթի նախագծի մոտ մեկ տասնյակ տարբերակ: Առանձին տարբերակներ էին ներկայացրել ՍԻՄ-ը, Հանրապետական կուսակցությունը, «Ազգային միասնության ուխտը», Կոմկուսը, անգամ անհատ պատգամավորներ:

Առաջին քննարկումներից, խմբավորումներից ու խմբագրումներից հետո խորհրդարանի քննարկմանը ներկայացվեց Հռչակագրի երեք տարբերակ: Երկրորդ քննարկումից հետո այն ներկայացվեց մեկ նախագծի եւ երկու հատուկ կարծիքի տեսքով: Հատուկ կարծիքներից մեկը (Մեխակ Գաբրիելյան) առաջարկում էր տեքստում ավելացնել հետեւյալը. «Չեղյալ հայտարարել 1920թ. դեկտեմբերի 2-ից հետո մինչեւ 1923թ. կնքված Հայաստանին վերաբերող բոլոր պայմանագրերը եւ որպես նպատակ հռչակել «Ազատ, անկախ եւ միացյալ» Հայաստանի կերտումը»: Երկրորդ հատուկ կարծիքը (Աշոտ Նավասարդյան, Իգոր Մուրադյան) նախատեսում էր անկախության վերականգնման հռչակում 1922թ. ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրը չեղյալ հայտարարելու ճանապարհով[264]: Խորհրդարանը հռչակագրի տեքստում չընդունեց այդպիսի լրացումներ: Որպես հիմք ընդունված տարբերակի վրա որոշ փոփոխություններից հետո այն «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» անվանումով օգոստոսի 23-ին 183 կողմ, 2 դեմ եւ 2 ձեռնպահ ձայներով, մեծ խանդավառությամբ ընդունվեց Գերագույն խորհրդում[265]: Հռչակագիրը վերջնական տեսքով նիստում ընթերցեց պատգամավոր Արամ Մանուկյանը:

Կարեւոր այս քաղաքական փաստաթղթի քննարկման ընթացքում ծավալված բանավեճը, ինչպես եւ սպասելի էր, ընթացավ, մի կողմից՝ ՀՀՇ-ի՝ իրական քաղաքական հասկացությունների, իրատեսական քաղաքական սկզբունքների եւ արժեքային նոր համակարգի վրա հենված գա-

[263] *Նշանավոր հայագետ Լենինգրադից:*

[264] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21.08.1990:*

[265] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24.08.1990:*

ղափարախոսության ու ծրագրերի, մյուս կողմից՝ դրան հակադրվող ավանդական պատկերացումների միջեւ: Քննարկումների առաջին փոլերում շրջանառությունից դուրս եկան այն նախագծերը, որոնք ենթադրում էին Հայաստանի գոյությունը ԽՍՀՄ կազմում: Մյուս մանրամասների բազմաժամ քննարկումները հանգեցրեցին երկու հիմնական խնդրի հաղթահարմանը: Պատգամավորների մի խումբ, «արմատական» անկախական դիրքերից համարում էր, որ պետք է Գերագույն խորհրդի միջոցով անմիջապես քաղաքական անկախություն հռչակել: ՀՀՇ-ն մերժում էր առկա հարափոփոխ եւ անկանխատեսելի իրավիճակների համար կոշտ, մանեւրելու հնարավորությունից զրկող, նաեւ ԽՍՀՄ գործող համապատասխան օրենքին հակասող եւ Կենտրոնի կողմից ճնշումների համար իրավական հիմք կամ առիթ տվող այդ ուղին:

ՀՀՇ ծրագիրը ենթադրում էր ունենալ մի փաստաթուղթ, որը կարձանագրի հանրապետության՝ ժողովրդավարական ինքնիշխան պետություն դառնալու հաստատակամությունը եւ կուղենշի այդ հիմքի վրա քաղաքական անկախության հասնելու՝ գործող օրենսդրական դաշտում օրինական, միջազգային հանրության համար ընդունելի ճանապարհը: Դա կվերացներ հետագայում նույն միջազգային հանրության կողմից Հայաստանի անկախության ճանաչման համար հնարավոր խոչընդոտները: ՀՀՇ-ի այս մեկնակետը, սակայն, շատ ավելի կարեւոր էր անկախության հասնելու ճանապարհի անվտանգության եւ ապահովության առումով: Խորհրդային Միությունը շարունակում էր գոյատեւել, իսկ նրա քայքայման ակնհայտ նշանները հարյուրտոկոսանոց երաշխիք չէին այն բանի, որ այդ քայքայումը առանց մեծ ցնցումների ու վտանգավոր անակնկալների կարճ ժամանակում կհասնի տրամաբանական ավարտի: Այդ երաշխիքը եւ համոզմունքը չունեին նաեւ միջազգային հանրությունը եւ նույնիսկ միջազգային տրամաչափի քաղաքական գործիչները, ուստիեւ առավել զգուշությամբ ու «հոգատարությամբ» էին վերաբերվում ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությանը: Ընդհակառակը՝ ավելի էր մեծանում այն վտանգը, որ հոգեվարք ապրող բռնապետությունում հնարավոր են նաեւ անկանխատեսելի զարգացումներ ու իրադարձություններ, որոնք, թեկուզ տեւական ժամանակի համար՝ անհեռանկար, սակայն տվյալ պահին կարող էին վտանգավոր լինել միջազգային հանրության, եւ ճակատագրական՝ առաջին հերթին՝ հենց իր կազմում գտնվող փոքր ու «ապստամբ» ժողովուրդների համար: Մեկ տարի անց հայտնի «ԳԿՉՊ»-ն նման սպասումների եւ զգուշավորու-

թյան արդարացիության փայլուն ապացույցն էր: Հայոց համազգային շարժումը մերժում էր չհաշվարկված այդ ուղին:

ՀՀՇ-ն մերժում էր նաեւ հայդատական/պահանջատիրական գաղափարներն այդ փաստաթղթի հիմքում դնելու ձգտումները: Վերջինս, որպես նպատակ, առաջ էր քաշում ոչ թե Հայաստանի (ՀԽՍՀ գոյություն ունեցող սահմաններով) անկախությունը, այլ «Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի կերտումը», առաջարկում դա ամրագրել Հռչակագրում, ինչպես նաեւ՝ չեղյալ հայտարարել 1920թ. դեկտեմբերի 2-ից հետո մինչեւ 1923թ. կնքված բոլոր պայմանագրերը: Սա, ակնհայտորեն, այլ բան չէր նշանակում, քան պահանջատիրական նկրտումների հռչակմամբ անկախության ուղեգծից հրաժարում: Հիշյալ պայմանագրերի չեղյալ հայտարարումը կնշանակեր Թուրքիայի հետ դե յուրե հայտնվել չհայտարարված պատերազմական կամ առճակատման իրավիճակում, ինչն, իր հերթին, Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմում մնալը կդարձներ պարտադրված ու աներկընտրանք[266]:

Սակայն կար նաեւ մեկ այլ լուրջ նկատառում: Շատ կարեւոր էր, որ Անկախության մասին հռչակագիրը, որպես քաղաքական հիմնարար փաստաթուղթ, ընդունվեր ոչ թե պարզապես ձայների սահմանված մեծամասնությամբ, այլ միաձայնությամբ, ընդհանուր համաձայնությամբ՝ որպես Հայաստանի ժողովրդի ընդհանրական կամքն արտահայտող իշխանության բարձրագույն մարմնի ակտ: Դա կարեւոր էր ինչպես երկրի ներսում գործելու, այնպես էլ ԽՍՀՄ-ում եւ միջազգային ասպարեզում դրա կշիռը բարձրացնելու համար: Նման միաձայնության հնարավոր եղավ հասնել «արմատականների» եւ «պահանջատիրականների» քաղաքական պատվախնդրությունը բավարարող ոչ էական երկու զիջմամբ՝ Հռչակագրի նախաբանում «Առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթների» եւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման՝ Դեկտեմբերի 1-ի որոշման հիշատակմամբ, իսկ հիմնական տեքստում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատար կանգնե-

---

[266] *Ինչպես արդեն հայտնի է, սա Հայաստանի հեռանկարի՝ Դաշնակցության տեսակետն էր, որն այժմ խորհրդարանում հանրապետության կարգավիճակի մասին կարեւորագույն փաստաթղթում փորձում էր իրացնել իր չբացահայտված ներկայացուցիչների միջոցով: Քիչ անց, երբ այլ կազմակերպությունների անվան տակ կամ որպես անհատներ խորհրդարան մտած նրա անդամները բացահայտվեցին եւ հայտարարեցին ՀՅԴ խմբակցության ստեղծման մասին, հենց համապատասխան փաստաթղթի հեղինակն էլ դարձավ այդ խմբակցության ղեկավար Մեխակ Դարբինյանը:*

լու մասին մի դրույթ ներառելով[267]: Դրանք ձեւակերպվեցին այնպես, որ հետագայում լուրջ խնդիրներ չհարուցեին:

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը կարեւորագույն պատմական փաստաթուղթ էր: Այն ազդարարում էր 70-ամյա կոմունիստական բռնապետական դարաշրջանի ավարտը եւ դրա թողած ժառանգության ու ծանրագույն հետեւանքների թոթափման սկիզբը: Այստեղ օրենսդրական ամրագրում ստացան հանրապետության ինքնիշխանության հաստատմանն ու ամրապնդմանը նպատակաուղղված այն խնդիրները, որոնք մինչ այդ (մասնավորապես՝ 1989-ի դեկտեմբերին եւ հետո) ՀՀՇ-ն փորձել, բայց ամբողջությամբ չէր կարողացել անցկացնել կոմունիստական Գերագույն խորհրդում: **«Հայաստանի անկախության մասին Հռչակագիրն» ամփոփում էր ՀՀՇ քաղաքական ծրագրի բոլոր հիմնական խնդիրները եւ նպատակները, որոնք եւ ամբողջությամբ իրականացվեցին հաջորդ տարիներին**:

«Հայաստանի անկախության մասին հռչակագիրը» ընդունվեց օգոստոսի 23-ին, ըստ էության՝ միաձայն[268]: Իրավական կարգավիճակի առումով Հռչակագիրը յուրահատկություն ուներ: Այն սահմանադրություն չէր, եւ նրա նորմերը անմիջական գործողության ուժ չունեին: Փաստաթղթի վերջին կետը նախատեսում էր, որ այն հիմք պետք է ծառայեր «Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության մշակման, իսկ մինչ այդ՝ գործող Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարման, պետական իշխանության մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար»: Հռչակագրի ներածական մասը ներկայացնում էր այն հիմքերը եւ ելակետերը, որոնցից ելնելով էլ հռչակվում էր երկրի քաղաքական ընթացքի հետագա ուղեգիծը: Այդ հիմքերն էին՝ «Հայաստանի ժողովրդի միասնական կամքը», «պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջեւ, համայն հայության իղձերի իրականացման եւ պատմական արդարության վերականգնման գործում», «մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքները եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը», «ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը», Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին դեկտեմբերի 1-ի որոշումը, Առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթները: Նպատակը հայտարարվում էր «ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը»:

Ճշտվում էր Հայաստանի դիրքը ԽՍՀՄ-ի կամ կենտրոնական իշխանության նկատմամբ: Հռչակվում էր ոչ թե անկախություն, այլ՝ «անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբ»: Ըստ այսմ էլ՝ խոսվում էր նոր ինքնիշխան պետության մասին: Եւ այդ ինքնիշխանությունը ենթադրում էր «պետական իշխանության գերակայություն, անկախություն, ինքնուրույնություն, լիիրավություն»: Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում էր Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան)[269], որտեղ պետք է գործեին միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները: Այսինքն՝ դադարեցվում էր ԽՍՀՄ Սահմանադրության գործողությունը Հայաստանում: Սա նշանակում է, որ ձեւի առումով կամ իրավականորեն՝ Հայաստանը առայժմ մնում էր ԽՍՀՄ կազմում եւ պատրաստ էր ԽՍՀՄ կազմից դուրս գալը համապատասխանեցնել այդ գործընթացը կարգավորող միութենական համապատասխան օրենքին: Սակայն դրա կողքին՝ արդեն իսկ իրեն էր վերապահում բոլոր այն իրավունքները, ինչ կարող էր ունենալ յուրաքանչյուր անկախ պետություն: Հետ էին վերցվում Կենտրոնին պատվիրակված լիազորությունները եւ իրավունքները: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը վերապահվում էր բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին: Հայաստանն իրեն հայտարարում էր միջազգային իրավունքի սուբյեկտ, իրեն իրավունք վերապահում այլ պետությունների հետ մտնել անմիջական հարաբերությունների մեջ եւ վարել անկախ արտաքին քաղաքականություն, ինքնուրույն եւ անմիջապես մասնակցել միջազգային կազմակերպությունների գործունեությանը: Հրաժարվում էր նաեւ իր նկատմամբ Կենտրոնի ստանձնած պարտավորություններից. «Հայաստանի Հանրապետության անվտանգությունը եւ նրա սահ-

---

[267] *Մեկ տարի անց Լեռնային Ղարաբաղը անկախություն հռչակեց, ինչով այս որոշումը, փաստորեն, չեղարկվեց, ճիշտ այնպես, ինչպես ավելի ուշ՝ Հայաստանի անկախության հանրաքվեով ընդունված որոշմամբ առանց հիշատակման չեղարկվեց ԽՍՀՄ կազմի մեջ մտնելու պայմանագիրը: Ցեղասպանության հիշատակումը, բացի անհարկի շահարկումների առիթից, քաղաքական իմաստով ոչինչ չէր տալիս: Դրա լինել-չլինելը ոչնչով չէր նպաստել ու չի նպաստել Ցեղասպանության միջազգային ճանաչման գործին, ոչ էլ ավելացնում կամ պակասեցնում էր այդ ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը, աշխատանք, որը ՀՀՇ-ի իշխանության տարիներին հաջողությամբ իրականացվեց՝ առանց այդ մասին բարձրաձայնելու:*

[268] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 16, հոդվ. 256:*

[269] *Վերանվանումը հաստատվեց առանձին օրենքով (Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 16, հոդվ. 257):*

մանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական եւ հասարակական անվտանգության մարմիններ»: Հայտարարվում էր նաեւ ԽՍՀՄ սպառազինությունից, ոսկու պաշարներից, ալմաստի եւ վալյուտային ֆոնդերից իր մասնաբաժնի իրավունքը: Հռչակագիրը հանրապետության ինքնիշխան իրավունքների օբյեկտ եւ նրա ժողովրդի սեփականություն էր հայտարարում «հողը, նրա ընդերքը, օդային տարածությունը, ջրային եւ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային պոտենցիալը», որոնց «տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով»:

Հարցերի մյուս կարեւոր խումբը վերաբերում էր ժողովրդավարական նորմերի հաստատմանը: Իշխանության միակ կրողը հայտարարվում էր Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, որն այն «իրագործում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմիններով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների հիման վրա»: Հռչակվում էր խոսքի, մամուլի, խղճի ազատություն: Ընդ որում՝ այս ազատությունները, փաստորեն, անմիջապես սկսեցին գործել, եւ նոր իշխանությունը ապահովում էր դրանց անձեռնմխելիությունը: Հայտարարվում էր օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների գործառույթների տարանջատում, բազմակուսակցական համակարգ, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների եւ զինված ուժերի ապակուսակցականացում: Հանրապետության տարածքում ապրող բոլոր բնակիչների համար հայտարարվում էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, պետությունը ստանձնում էր նրանց պաշտպանությունը, ապահովում նրանց ազատ եւ իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից եւ դավանանքից:

Հռչակագրում հստակ ուրվագծվում էին նաեւ տնտեսության մեջ կատարվելիք համակարգային փոփոխությունները: Սոցիալիստական տնտեսաձեւը զրկվում էր մենաշնորհային իրավունքից, հայտարարվում էր, որ «Հայաստանի Հանրապետությունը, հենվելով տնտեսության բազմակացութաձեւության հիմունքների վրա, որոշում է իր տնտեսվարման սկզբունքները եւ կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային եւ մաքսային ծառայություններ»:

Ինքնիշխան պետությանը հատուկ քաղաքականություն էր նախատեսվում իրականացնել նաեւ այլ բնագավառներում, մասնավորապես՝

լեզվի, կրթության, մշակույթի ոլորտներում. «Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության եւ մշակույթի սեփական համակարգ»: Անկախության մասին հռչակագրի դրույթները շուտով օրենսդրական ուժ ստացան ընդունված համապատասխան օրենքներով, ինչպես նաեւ դարձան այն հիմքը, որի վրա ստեղծվեցին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքները եւ առաջին Սահմանադրությունը:

Ե) Ներքաղաքական իրավիճակի կայունացման վճռական քայլերը, ՀԱԲ-ի լուծարումը

Հանրապետությունում ներքաղաքական կայունության ապահովումը կենսականորեն անհրաժեշտ էր ոչ միայն նախընտրական շրջանում եւ ընտրությունների ընթացքում, այլեւ նոր իշխանության ձեւավորումից հետո: Գերագույն խորհրդի նախագահի նախընտրական իր ելույթում Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ հանրապետության առջեւ ծառացած ինչպես հեռանկարային, այնպես էլ բազմաթիվ առաջնահերթ ու օրախնդիր դժվարին հարցերի լուծմանը ձեռնամուխ լինել հնարավոր չէ, քանի դեռ նորաստեղծ իշխանությունը չի կարողացել ապահովել հանրապետության ներքաղաքական կայունությունը[270]: Իսկ ընտրվելուց երկու օր անց՝ օգոստոսի 6-ին, առաջին պաշտոնական հայտարարությամբ հավաստեց. «Հայաստանի իշխանություններն ի վիճակի են կարճ ժամանակի ընթացքում սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքին վերաբերող, նրա քաղաքական-հասարակական վիճակի կայունացմանն ուղղված բոլոր խնդիրները, պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը»[271]: Ապօրինի զինված կազմավորումների խնդիրը սեփական ուժերով լուծելու նույն պնդումը նա արել է նաեւ օրեր անց՝ ԽՍՀՄ ՆԳ նախարար Վադիմ Բակատինի հետ հանդիպման ժամանակ[272]: Վեր-

---

[270] *Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 112:*

[271] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 15, հոդվ. 223:*

[272] *Այս հանդիպմանը մասնակցել են նաեւ Աշոտ Մանուչարյանը եւ Գալինա Ստարովոյտովան:*

ջինիս ողջունել է այդ մոտեցումը եւ խոստացել աջակցել[273]: Իսկ այդ աջակցությունը հնարավոր էր եղել ստանալ լրացուցիչ 2000 «Կալաշնիկով»-ինքնաձիգի տեսքով, ինչն օգտագործվեց քիչ անց ՆԳ համակարգում ստեղծված առաջին զինվորական ստորաբաժանումը՝ «Հատուկ գունդը» [274] զինելու համար:

Ներքաղաքական իրավիճակի ապակայունացման հիմնական վտանգը շարունակում էին մնալ այն զինված կազմավորումները, որոնք համառորեն շարունակում էին խույս տալ պաշտոնական որեւէ վերահսկողությունից: Դրանք վտանգ էին ներկայացնում երեք առումով: Առաջին՝ ինքնագլուխ գործողություններով ակամա կարող էին դառնալ վտանգավոր զարգացումների առիթ: Երկրորդ՝ կարող էին բախվել միմյանց հետ՝ ներքին ապակայունացում ստեղծելով: Երրորդ՝ կարող էին օգտագործվել իշխանության դեմ զանազան ուժերի կողմից՝ իրենց քաղաքական կամ այլ նպատակների համար[275]: Իսկ ընդհանրապես, այս ամենից առաջ, որեւէ պետության ներսում ինքնագլուխ զինված խմբավորումների գոյությունը հակապետական երեւույթ է ինքնին եւ նշանակում է, թե այդ երկրում իրական իշխանություն գոյություն չունի: Հայաստանում հաստատված նոր, ժողովրդավար իշխանությունը, օժտված ժողովրդի հաստատուն մանդատով, չէր կարող նման բան թույլ տալ: Ուստիեւ՝ իշխանության հարցի վերջնական լուծումից հետո Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ «Հայ ժողովրդին ուղղված դիմումի» առանցքային եւ սթափեցնող կոչերից մեկը վերաբերում էր այս խնդրին. «Կոչ եմ անում բոլոր աշխարհազորայիններին՝ հավատարմության երդում տալ հանրապետության գերագույն իշխանության ատյանին եւ, մոռանալով ներքին հակասությունները, ձեռնպահ մնալ որեւէ անխոհեմ գործողությունից: Հարկադրված եմ հիշեցնել, որ մեր պետականության կայացումը վտանգող ոչ մի արկա-

[273] *Այս մասին Բակատինի հարցազրույցի (Mandeville, «Le Figaro», 17.08.1990) հայերեն թարգմանությունը եւ կից ծանոթագրությունը տե՛ս «Գիտնականը եւ Նախագահը...», էջ 107-108:*

[274] *«Հատուկ գունդը» ստեղծվել է օգոստոսի 21-ին՝ որպես «Ներքին գործերի Նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանում»:*

[275] *Մայիսի 9-ին այդպիսի մի ընդհարում տեղի ունեցավ Արտաշատում, որտեղ շրջկոմի քարտուղարի եւ գործկոմի նախագահի անձնական հակասությունը վերաճեց երկու ջոկատների բախման, գոհվեց 5 հոգի, երկուսը՝ անչափահաս (տե՛ս «Հայք», 13.05.1990): Ակնհայտ էր, որ այդ ջոկատները ստեղծվել էին կամ գործում էին համապատասխան պաշտոնյաների հովանավորությամբ:*

ծախնդրություն չի ներվի ժողովրդի կողմից»[276]: Զվերահսկվող զինված կազմավորումներ հանդուրժելու անթույլատրելիության մասին նույն կարծիքին էր նաեւ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը[277]:

Զվերահսկվող զինված խմբերն ամենամեծ ապակայունացնող վտանգն էին ներկայացնում արդեն նախընտրական եւ ընտրական շրջանում: Փորձ արեցին պատգամավորական մանդատներ ձեռք բերել եւ մտնել խորհրդարան, ինչը նրանց չհաջողվեց: Թելադրող քաղաքական գործոն դառնալու մտադրությունից նրանք չհրաժարվեցին նաեւ խորհրդարանի աշխատանքները սկսվելուց հետո եւ նրա գործունեության առաջին շաբաթներին:

ՀՀՇ-ի կողմից դեռ կոմունիստական իշխանության պայմաններում ձեռնարկվել էին միջոցառումներ՝ զինված ջոկատները պետական վերահսկողության ու համակարգման տակ վերցնելու, նրանց ինքնագլուխ գործողությունների վտանգը չեզոքացնելու համար: Դա հաջողվել էր միայն մասամբ, եւ մայիսի 27-ի սադրանքի կազմակերպիչների հույսը եւ հաշվարկը նաեւ վերահսկողությունից դուրս գտնվող ջոկատների վրա էր:

ՀՀՇ-ի նախաձեռնությամբ ջոկատների զգալի մասի՝ պետական վերահսկողության՝ Պաշտպանության խորհրդի ենթակայության տակ անցնելուց հետո, այս համակարգից դուրս մնացած ջոկատներից իր «ինքնուրույն» վարքագծով եւ վտանգավոր հավակնություններով առանձնանում էր հատկապես, այսպես կոչված, «Հայոց ազգային բանակ» (ՀԱԲ) զինված կազմավորումը: Այն ի սկզբանե որոշակի առանձնահատկություններ էր դրսեւորում մյուս ջոկատների համեմատությամբ: Դա տեսանելի դարձնելու ու հասկանալու համար անհրաժեշտ է վերհիշել այս կազմավորման սկզբնավորման ու գործունեության մի քանի բնորոշ դրվագներ[278]:

ՀԱԲ-ը սկսեց ակտիվանալ հատկապես նախընտրական ամիսներին: Մայիսին, խորհրդարանական ընտրությունների նախօրյակին, նա այն ուժերի շարքում էր (Կոմկուս, ՀՅԴ, նոմենկլատուրային մտավորականություն եւ այլն), որոնք բոլոր ջանքերը գործադրում էին «մինչեւ քաղաքա-

[276] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 15, հոդվ. 129:*

[277] *«Ոչ մի բան մեզ այնքան չի հեռացնում մեր երազանքից, անկախ պետության վերականգնումից, ոչ մի բան այնքան չի խանգարում մեր տնտեսության զարգացմանը, որքան անօրինական գործող զինված ջոկատների ստեղծած ապակայունացումը» «Հայք, 17.08.1990 (Նախընտրական ծրագիրը ԳԽ-ում 13.08.90թ.):*

[278] *Տե՛ս **Սարգսյան Ա.**, Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 445-446:*

կան կուսակցությունների կազմավորումը» ընտրությունները հետաձգելու համար: Կոմունիստական իշխանական մամուլը հակապետական այս կազմավորման ղեկավարներին էջեր էր տրամադրում ընդարձակ հարցազրույցների համար[279]: «Ուրբաթ» թերթը հրապարակեց ՀԱԲ-ի «ծրագիրը» [280]: Մայիսի 27-ի առիթով նրա ղեկավարներից մեկը՝ Վարդան Վարդանյանը, հայտարարեց, որ ո՛չ «զենքի գնացած» ջոկատը, ո՛չ Էրեբունիում զորքի ճանապարհը փակած ջոկատը «նախապես իրենց հետ չեն համաձայնեցրել», եւ դատապարտեց նրանց գործողությունները[281]: Հունիսի սկզբին նա հայտարարում էր, որ որեւէ կուսակցության չի ենթարկվում, կենթարկվի միայն «բազմակուսակցական» խորհրդարանին, որ՝ իրենք ստեղծել են «ռազմական խորհուրդ», եւ նրա հետ պետք է համաձայնեցվեն բոլոր գործողությունները, որ՝ հանցագործներին պատժելու համար ստեղծել են ռազմական դատարան, որ՝ կզինաթափեն այն ջոկատներին, որոնք ստեղծել են քաղաքական կազմակերպությունները եւ այլն: Ռազմական այս կազմակերպությունն ուներ շատ լայն քաղաքական հավակնություններ. Հայաստանի փրկությունը ՀԱԲ-ը համարում էր «ցեղակրոնը»՝ իր առաքելությունը համարելով «ազգային քաղաքական իշխանության ստեղծումը, ազգային շահերով ազգին նվիրված կուսակցությունների ազատ գործունեության ապահովումը» (բնականաբար՝ իրեն վերապահելով «ազգային շահերի» եւ «ազգին նվիրվածության» չափորոշիչների որոշումը): Ինքն իրեն հակասելով եւ անհեթեթության հասնելով՝ նա պնդում էր, որ «ազգային միասնություն» ապահովելու համար կուսակցություններ չպետք է լինեն, բայց, միաժամանակ, այդ միասնությանը հասնելու համար կարեւոր դեր էր վերապահում Սփյուռքի հայ կուսակցություններին եւ այլն: Հուլիսի կեսերին ՀԱԲ-ի ղեկավարը հայտարարում էր, որ չեն ենթարկվի նաեւ նոր կազմավորվող խորհրդարանին, քանի որ այնտեղ հիմնականում երկու կուսակցություններ են ներկայանում[282]: Չնայած դրան՝ ՀԱԲ-ը ինքը նույնպես պատգամավորության թեկնածուներ էր առաջադրել, սակայն նրանցից որեւէ մեկը հաջողություն չէր ունեցել:

[279] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 05.06.1990, 14.07.1990:*

[280] *«Ուրբաթ» 29.06.1990, 06.07.1990: Այս թերթը գտնվում էր Դաշնակցության վերահսկողության տակ:*

[281] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 05.06.1990:*

[282] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 14.07.1990:*

Գերագույն խորհուրդը փորձում էր ինքնապաշտպանական անհրաժեշտությամբ ձեւավորված զինված ջոկատների հիմքի վրա ստեղծել իրեն ենթակա ռազմական կազմավորումներ, փաստորեն՝ բանակի ստեղծման հիմքեր դնել: Այդ նպատակով կառավարությունը որոշում էր կայացրել ՆԳ նախարարությանը կից հատուկ ստորաբաժանում ստեղծելու մասին, որին կարող էին անդամագրվել ջոկատների անդամները: Սակայն ռազմականացված այս կազմակերպությունը՝ ՀԱԲ-ը համարում էր, որ հենց ինքն է այդ բանակը, որ բոլոր ջոկատները պետք է մտնեն իր ենթակայության տակ, իսկ ինքը հրաժարվում էր ենթարկվել հանրապետության իշխանության գերագույն մարմնին, քանզի վերջինս չէր համապատասխանում իր պատկերացումներին: Այսինքն՝ ՀԱԲ-ը հավակնում էր դառնալ յուրատեսակ ռազմական իշխանություն՝ բացահայտ մարտահրավեր նետելով օրինական քաղաքացիական իշխանություններին: Սա այլ բան չէր, քան պետական հեղաշրջման փորձ կամ ընթացք՝ մայիսի 27-ի արյունոտ սադրանքի հետեւանքները հաղթահարելուց հետո արդեն ձեւավորված նոր ժողովրդավարական իշխանության դեմ:

Խորհրդարանում կային մի քանի պատգամավորներ, որոնք ուղղակի կամ անուղղակի, անհայտ ու անհասկանալի դրդապատճառներով, պաշտպանում էին ՀԱԲ-ին, ինչը նրան ոգեշնչում էր եւ դժվարացնում ապակայունացնող վտանգավոր այս երեւույթը հաղթահարելու ջանքերը: Կոմկուսի պաշտոնական մամուլը մինչեւ վերջ էլ շարունակում էր իր էջերը տրամադրել ՀԱԲ-ին եւ նրա օգտին այլոց հայտարարությունների հրապարակմանը[283]:

Գերագույն խորհրդի նախագահի եւ տեղակալների ընտրությունից եւ կառավարության նախագահի նշանակումից (այսինքն՝ իշխանության հարցի վերջնական լուծումից) հետո էլ ներքաղաքական լարվածությունը եւ ապակայունացման այս վտանգը, ըստ էության, տեղի չտվեց: Ընդ որում՝ անվերահսկելի ջոկատների գործողությունները դառնում էին ավելի ու ավելի անպատկառ եւ հրահրիչ: Ջոկատներից մեկն, օրինակ, խանգարում էր Գետաշեն գնացող ուղղաթիռների կանոնավոր թռիչքը, ընդհուպ հանդգնում մտնել վեհարան եւ վերջնագիր ներկայացնել Ամենայն հայոց կաթողիկոսին, ապա նույն օրը փորձում զինված միջամտությամբ խանգարել ՀՀԾ-ի հրավիրած հանրահավաքը[284]:

[283] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16.08.1990:*

[284] *Տե՛ս «Հայք», 17.08.1990:*

Հասարակական դժգոհություն էր առաջացնում «սահմանների պաշտպանության» պատրվակով նրանց իրականացրած կողոպուտը քաղաքացիներից ու պետական հիմնարկներից[285]: Նրանց գործողություններն առավել ակտիվացան «Հոչակագրի» ընդունման նախորդող օրերին եւ արդեն խիստ վտանգավոր դարձան Հոչակագրի ընդունումից անմիջապես հետո: Օգոստոսի 20-ին խաղաղ ճանապարհով լուծելի մի միջադեպի առիթով (սահմանագլխին գերի էր ընկել մի մարտիկ) ՀԱԲ-ի ջոկատները սկսեցին կուտակվել Նոյեմբերյանի շրջանի սահմանամերձ գոտում, նախահարձակ եղան ադրբեջանական բնակավայրերի վրա՝ բախվելով խորհրդային ներքին զորքերի ստորաբաժանումներին[286]: Դրա հետեւանքով հինգ հոգի զոհվեց, քսանհինգ հոգի վիրավորվեց, փակվեցին Ղազախ-Երեւան գազամուղը եւ Ղազախ-Երեւան երկաթգիծը: Իսկ սադրանքը կազմակերպողների հիմնական քաղաքական նպատակն էր ցույց տալ, իբր, սահմանագլխին զինված ջոկատների կուտակումներ կազմակերպելով՝ Հայաստանի կողմից Ադրբեջանի նկատմամբ ագրեսիա է նախապատրաստվում:

Շտապ դեպքի վայր մեկնեց Գերագույն խորհրդի պատվիրակությունը, որին դժվարությամբ հաջողվեց կանխել դեպքերի հետագա վտանգավոր զարգացումները, անգամ մի քանի ջոկատների համոզեց հետ վերադառնալ[287]: Վտանգավոր միջադեպը կարգավորելու նպատակով Իջեւանում եռակողմ հանդիպում կայացավ. Հայաստանից՝ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ՊԱԿ-ի նախագահ Վալերի Բադամյանցը, ՆԳ նախարար Լեւոն Գալստյանը, Գերագույն խորհրդի Պաշտպանության եւ ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Վազգեն Սարգսյանը, մյուս կողմից՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրամանատար Վ. Պատրիկեեւը, ԽՍՀՄ ներքին զորքերի հրամանատար Յու. Շատալինը, Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահը: Կողմերը եկան այն եզրակացության, որ միջադեպը եղել է անհիմն[288]: Դժվարությամբ չեզոքացվեց հերթական վտանգավոր սադրանքը: Սակայն ՀԱԲ-ի ջոկատները շարունակում էին լարվածության նոր օջախներ ստեղծել: Այդ օրերին դա նրանց հաջողվեց, մասնավորապես, Շահումյանի շրջանում, ապա նաեւ Գետաշենում: Այս ամենի հետեւանքով երկաթգիծը փակելու վերջնագիր էր ներկայացրել Նախիջեւանը:

Չվերահսկվող զինված ջոկատների օրեցօր հանդուգն դարձող գործողությունները նույնքան վտանգավոր էին նաեւ հանրապետության ներսում եւ մայրաքաղաքում: Շարունակվում էին անհատներից ու հիմնարկներից «սահման գնալու» համար մեքենաների ամենօրյա հափշտակությունները, հարձակումները միլիցիայի բաժանմունքների վրա՝ զենք ձեռք բերելու նպատակով: Նման հարձակում տեղի ունեցավ անգամ Աղետի գոտում աշխատող ուկրաինական շինարարական տրեստի պահակային ծառայության վրա, որի հետեւանքով եղան վիրավորներ: Դա առաջացրեց ուկրաինացի շինարարների բուռն բողոքը: Նկատելի էր, սակայն, մի որակական տարբերություն. ներքին գործերի ծառայությունները, ունենալով նոր իշխանության պաշտպանությունը, այժմ որոշակի համարձակություն էին ստացել, եւ նրանց վրա նման հարձակումները հիմնականում ապարդյուն էին անցնում: Բոլոր դեպքերում այս վիճակի շարունակումը, ամեն ինչից զատ, կարող էր անարխիա ստեղծել, արագորեն հեղինակազրկել նոր իշխանությանը, հասարակության մեջ զցել նրա վարկը: Նման արկածախնդրության վտանգը արագ չչեզոքացնելու դեպքում հետեւանքները սպառնում էին ծանր լինել:

ՀԱԲ-ի անարխիկ գործողությունները ակտիվացան հատկապես Անկախության մասին հոչակագրի ընդունումից հետո: Նրա ջոկատներն անցան բացահայտ ահաբեկչական գործողությունների: Օգոստոսի 28-ի լույս 29-ի գիշերը առանց պետհամարանիշի մի ավտոմեքենա վրաերթի ենթարկեց Գերագույն խորհրդի պատգամավոր Ռաֆայել Իշխանյանին: Գնդակոծվեց Երեւանի բենզակայաններից մեկը պահպանող հասարակական կարգի պահպանության ջոկատը, որի հետեւանքով վիրավորվեց երեք հոգի: Կատարված միջադեպի առիթով ՀԱԲ-ի շտաբ ժամանած պատվիրակության վրա կրակ բացվեց, ինչի հետեւանքով ծանր վիրավորվեցին եւ քիչ անց մահացան հասարակական կարգի պահպանության ջո-

---

[285] *Այսպես՝ ըստ «Արմենպրեսի» մի հաղորդագրության՝ 1990թ. սկզբից մինչեւ օգոստոսի 1-ը նրանց կողմից «առգրավվել» էր 1824 զինվորական փոխադրամիջոց, անհատական եւ պետական ավտոմեքենա, այդ թվում բնակչությանը վաճառելու համար 106 նոր ստացված ավտոմեքենա («Խորհրդային Հայաստան», 04.08.1990):*

[286] *Այս մասին տե՛ս «Խորհրդային Հայաստան» 22.08.1990:*

[287] *«Հայք», 24.08.1990թ. («Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը» 21.08.1990թ.):*

[288] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25.08.1990:*

կատի անդամ Գեղազնիկ Միքայելյանը եւ Գերագույն խորհրդի պատգամավոր Վիտյա Այվազյանը[289]:

Արձանագրելով այս ամենը եւ նկատի ունենալով, որ, չնայած բոլոր ջանքերին, ՀԱԲ-ի գործողությունները ավելի ու ավելի հանդուգն ու վտանգավոր են դառնում, իշխանությունը ստիպված էր գնալ վճռական քայլերի: Այնքան բացահայտ էր վճռական այդ քայլերի անհրաժեշտությունը եւ օրինաչափությունը, որ օգոստոսի 29-ին Գերագույն խորհուրդը, փաստորեն՝ միաձայն (170 կողմ, 2 ձեռնպահ)[290], ընդունեց հանրապետության ողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարելու եւ պարետային ժամ սահմանելու առաջարկված նախագիծը: Նույն որոշմամբ լուծարվում էր «Հայոց ազգային բանակ» կոչվող ռազմական կազմակերպությունը: ՀԱԲ-ի մարտիկներին կոչ էր արվում մինչեւ նույն օրվա ժամը 22-ը հանձնել իրենց ունեցած զենքն ու ռազմամթերքը, զբաղեցրած շենքերը, հափշտակած ռազմական տեխնիկան եւ տրանսպորտային միջոցները: Որոշման պահանջները կատարողներն ազատվում էին քրեական պատասխանատվությունից, չկատարողներին սպառնում էր ձերբակալություն եւ պատիժ օրենքի ամբողջ խստությամբ: Որոշման կատարումը դրվում էր հանրապետական ուժային կառույցների եւ ՆԳ համակարգում ընդգրկված հասարակական կարգի պահպանության ջոկատների վրա[291]:

Նոր իշխանության վճռականությունը տվեց իր արդյունքը: Ժամը 22-ին ամեն ինչ պատրաստ էր զինաթափման գործողությունը սկսելու համար, սակայն դրան խանգարում էր մի քանի պատգամավորների՝ ՀԱԲ-ի զորակայանում գտնվելու հանգամանքը, չնայած վերջիններս այնտեղ էին գնացել առանց հանրապետության ղեկավարության հետ նախապես համաձայնեցնելու[292]: Շուտով պարզվեց, որ հենց այդ ընթացքում, առանց իշխանություններին տեղյակ պահելու, երեք բեռնատար մեքենաներով զորակայան էր մտել նաեւ ՊԱԿ-ի նախագահ Վ. Բադամյանցը եւ շուրջ 40 որպես մնացել այնտեղ: Եզրակացությունը միակն էր. մինչեւ անխուսափելի զինաթափումը ՀԱԲ-ն իր զենքերը հանձնում էր ՊԱԿ-ին, կամ որ միեւնույն է՝ ՀԱԲ-ի անխուսափելի դարձած զինաթափումից առաջ ՊԱԿ-ը տանում էր նրանց տված իր զենքն ու զինամթերքը: Պահանջվեց, որ մի քանի

[289] *Տե՛ս «Հայք», 01.09.1990:*

[290] *Տե՛ս «Հայաստան», 31.08.1990:*

[291] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 16, հոդվ. 277:*

[292] *Տե՛ս «Հայք» 01.09.1990:*

պատգամավորները անմիջապես դուրս գան զորակայանից՝ զինաթափման գործողությունը սկսելու համար: Ժամը 23-ին հանրապետության ղեկավարությանը ներկայացան ՀԱԲ-ի ղեկավարները եւ խնդրեցին մի քանի ժամով հետաձգել վերջնագրի ժամկետը: Նրանց ընդառաջեցին: Վաղ առավոտյան ՀՀ իշխանություններին ներկայացվեց լուծարվելու մասին ՀԱԲ-ի ղեկավար մարմնի որոշումը:

Ըստ ՆԳ հրապարակած ամփոփագրի՝ լուծարված ՀԱԲ-ը ունեցել էր 385 անդամ, 20 ինքնաձիգ, 19 ատրճանակ, 28 հակակարկտային հրանոթ, 4850 փամփուշտ, 30 ավտոմեքենա, 10 ռադիոկայան: Սա զինամթերքի այն չնչին մասն էր, ինչ հնարավոր եղավ առգրավել եւ արձանագրել: Հիմնական մասը մինչ այդ հանձնվել էր ՊԱԿ-ին, որը տեղափոխվել էր երեք բեռնատար ավտոմեքենայով[293]:

ՀԱԲ-ի ոչ բոլոր ջոկատները ենթարկվեցին իրենց ղեկավար մարմնի՝ ինքնալուծարման մասին որոշմանը, սակայն ներքաղաքական կյանքի կայունությանը սպառնացող ամենավտանգավոր եւ սուր հարցը հնարավոր եղավ լուծել: Իշխանությունը պահեց իր խոստումը, եւ բոլոր նրանց, ովքեր ինքնակամ հանձնեցին զենքը, եւ նախկինում որեւէ հանցանք չէին գործել, ազատվեցին պատասխանատվությունից: Նրանցից շատերը հետագայում ընդգրկվեցին նոր ձեւավորվող հայկական բանակի շարքերում:

Իշխանության վճռականությունը տպավորիչ էր, կատարած քայլը՝ անվերապահորեն ընդունելի ոչ միայն ողջ հասարակության, այլեւ բոլոր քաղաքական ուժերի համար[294]: ՀԱԲ-ի ագրեսիվ ակտիվացումը օգոստոսի

[293] *Գերագույն խորհրդի կողմից տրված զինաթափվելու եւ հանձնվելու վերջնաժամկետից առաջ ՊԱԿ-ի նախագահ Բադամյանցի՝ երեք բեռնատարով ՀԱԲ-ի զորակայան մտնելը, հանձնվելուց հետո այստեղ մնացած չնչին քանակությամբ զենքն ու զինամթերքը (տե՛ս «Հայք» 01.09.1990) եւ այլն, ըստ էության, վերջնականապես հաստատեցին այն ենթադրությունը, որ ի սկզբանե այս կազմակերպությունը ստեղծվել է հենց ՊԱԿ-ի կողմից եւ մինչեւ վերջ կատարել է նրա հրահանգները:*

[294] *Անգամ ՀՅԴ-ն, թերեւս, տեղի տալով իշխանության կատարած այս քայլի նկատմամբ հասարակական անվերապահ դրական վերաբերմունքի մթնոլորտին, այն պաշտպանեց հետեւյալ հայտարարությամբ. «Հայ հեղափոխական դաշնակցության Հայաստանի կենտրոնական գրասենյակը իր զորակցությունն է հայտնում Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից կարգ ու կանոնի հաստատման գծով որդեգրած որոշումներին եւ այս առիթով դատապարտում է անիշխանության միտող զինյալ այն գործողությունները, որոնք որեւէ նպաստ չեն բերում Հայրենիքի պաշտպանության գործին» («Հայք», 01.09.1990):*

երրորդ տասնօրյակում ակնհայտորեն այլ բան չէր, քան անկախության ուղեգիծը խաթարելու նույնպիսի մի սադրանք, ինչ իրականացվել էր մայիսի 27-ին:

Ոմանք իշխանության այս գործողությունը կապում էին ԽՍՀՄ նախագահ Գորբաչովի հայտնի հրամանագրի հետ: Իրականությունն, անշուշտ, այլ էր: Լևոն Տեր-Պետրոսյանի հավաստմամբ՝ զինված կազմավորումների ցրումը տեղի պետք է ունենար անկախ Գորբաչովի հրամանագրից: Դա բխում էր նախ եւ առաջ՝ հանրապետության ներքին կայունության ապահովման անհրաժեշտությունից. «Մենք կանգնած էինք քաղաքացիական պատերազմի շեմին: Նախկին իշխանություններն ի վիճակի չէին, մտադիր էլ չէին ցրելու այդ ջոկատները, որովհետեւ դրանք օգնում էին իրենց ապակայունացնել վիճակը՝ շարունակել երկարաձգել իրենց իշխանությունը»[295]: Անկախ հետազոտողի գնահատմամբ՝ «Հայաստանը Անդրկովկասի երեք հանրապետություններից միակն էր, որ կարողացավ խուսափել լուրջ զինված ընդհարումներից, որոնք հարեւան Վրաստանում եւ Ադրբեջանում ժամանակ առ ժամանակ վերաճում էին մինչեւ քաղաքացիական պատերազմի»[296]: Անշուշտ, այս միջոցառումը նաեւ Մոսկվային զրկեց անօրինական զինված կազմավորումների զենքի բռնագրավման մասին ԽՍՀՄ Նախագահի հրամանագրի առիթով հանրապետության ներքին գործերին միջամտելու հնարավորությունից:

Այսպիսով, ընտրությունների միջոցով խորհրդարանում մեծամասնություն ստացած ՀՀՇ-ն եւ նրան պաշտպանող ժողովրդավարական ուժերը մոտ մեկ ամսվա ընթացքում արձանագրեցին երեք կարեւոր հաղթանակ.

Առաջին՝ Գերագույն խորհրդի եւ կառավարության քաղաքական ղեկավարության ընտրությամբ Հայաստանում վերջնականապես լուծվեց իշ-

[295] *«Դրոշակ», 07.11.1990, էջ 13-15 (Ալիս Մարուխյանի հարցազրույցը Լևոն Տեր-Պետրոսյանի հետ):*

[296] ***Армения**: Проблемы независимого развития, Российский институт стратегических исследований, Москва, 1998, с. 78. Նույնպիսի մի այլ գնահատական ռուսական մամուլում. «Տեր-Պետրոսյանը Հայաստանի խորհրդարանի ղեկն ստանձնեց այն պահին, երբ հանրապետությունը գրեթե գտնվում էր քաղաքացիական պատերազմի եւ խորհրդային բանակի հետ ընդհարումների շեմին, եւ ցույց տվեց, թե ինչպիսի պատուղներ կարող է տալ քաղաքական վճռականությունը, եթե հաստատակամորեն տարվի այդ ուղին» («Независимая Газета» 16,05,1991):*

խանության հարցը, վերջ դրվեց կոմունիստական 70-ամյա մենատիրությանը:

Երկրորդ՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումով գործողության մեջ դրվեց ՀՀՇ-ի քաղաքական ծրագրի վրա խարսխված, դեպի ժողովրդավարական անկախ պետության կառուցում տանող երկրի հետագա զարգացման քաղաքական ուղեգիծը:

Երրորդ՝ քաղաքացիական իշխանության վերահսկողությունից դուրս գործող ռազմական կազմավորումների լուծարմամբ կանխվեց ներքաղաքական իրավիճակի հնարավոր ապակայունացման, ընդհուպ քաղաքացիական պատերազմի վտանգը, վերացվեց անկախության ճանապարհի հայտնված եւս մի վտանգավոր խոչընդոտ:

զ) Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի («Ղարաբաղ» կոմիտեի) պատմական դերը

Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման ղեկավար մարմնի՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի (ընդունված էր կարճ կոչել «Ղարաբաղ» կոմիտե) վերջին պաշտոնական նիստը կայացավ 1990թ. օգոստոսի 3-ին՝ օրակարգում ունենալով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնի համար թեկնածության առաջադրումը:

Հայոց պատմության մեջ իր բնույթով եւ արդյունավետությամբ անանախադեպ էր «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն»՝ որպես քաղաքական կառույց: Նրա գործունեության համառոտ ամփոփումն այսպիսի պատկեր է ներկայացնում:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն փոխարինեց Շարժման առաջին երեք ամիսների ղեկավարությանը 1988թ. մայիսի վերջին: Նրանում ընդգրկվեց Շարժման նախկին ղեկավարության մի մասը՝ լրացվելով նույն ամիսներին իրենց դրսեւորած եւ ճանաչում գտած նոր գործիչներով[297]: Երկու տարուց ավելի, մինչեւ կոմունիստական դարաշրջանի ավարտը, Շարժման ղեկավար մարմինը գործեց հստակ ձեւավորված ու անփոփոխ այս կազմով.

Բաբկեն Արարքցյան Պետական համալսարանի դասախոս, դոցենտ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

[297] *Տե՛ս նաեւ **Մարգսյան Ա.**, Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 101-108:*

Համբարձում Գալստյան պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ,

Սամվել Գեւորգյան հեռուստալրագրող,

Ալեքսան Հակոբյան պատմական գիտությունների թեկնածու,

Ռաֆայել Ղազարյան ֆիզիկոս, ԳԱ թղթակից անդամ,

Սամսոն Ղազարյան ուսուցիչ եւ լրագրող,

Վազգեն Մանուկյան Պետական համալսարանի դասախոս, դոցենտ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

Աշոտ Մանուչարյան դպրոցի ուսմասվար,

Վանո Սիրադեղյան գրող,

Դավիթ Վարդանյան լաբորատորիայի ղեկավար, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

Լեւոն Տեր-Պետրոսյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր:

Շարժման գործիչների այս միավորումը կազմվեց այն համոզմունքի հիման վրա, որ, նախ՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման համար սկսված պայքարը չի կարելի ընդհատել կամ սառեցնել (ինչպես կարծում էր Շարժման առաջին ղեկավարների «ավագ սերունդը»), այն պետք է շարունակել: Երկրորդ՝ այդ շարունակությունը հնարավոր է ու կարող է արդյունքների հանգեցնել միայն այն դեպքում, եթե խնդիրն առավելագույնս հստակեցվի որպես ինքնորոշման իրավունքի ժողովրդավարական հարց եւ խարսխվի ընդհանուր, համակարգված ժողովրդավարական խնդիրների մի օրակարգի: Հաշվարկն այսպիսին էր. ընդդեմ բռնության գործադրման «աղրբեջանական գործոնի»՝ ստեղծել ժողովրդավարական պայքարի «հայկական գործոն» [298]: Այս դեպքում Ադրբեջանական բռնության գործոնի եւ նրա դաշնակից Կենտրոնի դեմ որպես հակակշիռ հնարավոր կլիներ ձեռք բերել արդեն երեւացող ժողովրդավար տրամադրություններ ունեցող շրջանակների ու գործիչների, ինչպես նաեւ միջազգային հանրային կարծիքի աջակցությունն ու պաշտպանությունը: Այլ խոսքով՝ պայքարի ծանրության կենտրոնը փակուղիների բերող **իրավական հարթությունից տեղափոխել քաղաքական հարթություն**՝ հստակորեն մերժելով Շարժման առաջին ամիսների՝ որպես պահանջատիրություն դրսեւորվող կամ այդպես մեկնաբանելի տրամադրություններն ու պատկերացումները: Այդ կերպ Ղարաբաղի խնդիրը հնարավոր կլիներ դնել միմիայն ինքնորոշման

[298] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 127:*

սկզբունքի վրա, որդեգրել պայքարի քաղաքական մեթոդներ, առաջնորդվել իրատեսության սկզբունքով:

Իր քաղաքական բովանդակությամբ, մասնավորապես՝ հիմքում լայն ժողովրդավարական խնդիրներ դնելու հանգամանքով, այս ամենը նշանակում էր ճակատային պայքարի գնալ իշխող կոմունիստական գաղափարախոսության եւ խորհրդային համակարգի դեմ ընդհանրապես: Տվյալ պահին դա ԽՍՀՄ մասշտաբով աննախադեպ քաղաքական խիզախումի մի օրինակ էր:

Բայց միաժամանակ՝ դա նշանակում էր նաեւ մարտահրավեր նետել հայ ավանդական քաղաքական մտքի իշխող պատկերացումներին ու դրանց պատվաստված սոցիալական խմբերին ու հասարակական խավերին, Սփյուռքում գործող կազմակերպություններին: Այսինքն՝ բացի հիշյալ «արտաքին» հակառակորդից (ի դեմս խորհրդային համակարգի), ձեռք բերել մի երկրորդ, ոչ պակաս անհանդուրժող ու ոչ պակաս վտանգավոր, ներքին, ներազգային քաղաքական հակառակորդ: Չհաշված մի քանի ողջախոհ մտավորական անհատների[299], հայ քաղաքական մտքի ավանդական պատկերացումների դեմ երբեւէ չէր ստեղծվել ու չէր գործել քաղաքական այսօրինակ որեւէ կառույց, ուստիեւ՝ տվյալ պահին դա քաղաքական խիզախումի աննախադեպ մի օրինակ էր նաեւ հայ իրականության կտրվածքով:

Կոմիտեին անդամագրվելու որոշումն իրական խիզախության դրսեւորում էր նաեւ Կոմիտեի անդամների անձնական կյանքի հարթության վրա: Կոմիտեի անդամներից յուրաքանչյուրն, անշուշտ, գիտակցում էր, որ անձամբ իր համար ամենահավանական հեռանկարը անկանխատեսելի ժամանակով խորհրդային բանտերում հայտնվելն է: Պետք է նկատի ունենալ, որ այդ պահին դեռ նոր-նոր էին սաղմնավորվում ժողովրդավարական շարժումները ԽՍՀՄ այլ հանրապետություններում, մինչդեռ Հայաստանում այն որակապես նոր քայլ էր անում: Բացի այդ, ինչպես 1988-ին, անգամ 1990-91-ին, դեռ անհայտ էր, թե ինչպիսին կլինի ԽՍՀՄ ճակատագիրը, նույնիսկ աշխարհի հայտնի քաղաքական գործիչներ ու քաղաքագետներ չէին կանխատեսում ԽՍՀՄ նմանօրինակ արագ վախճանը: Իսկ 1991թ. օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած պետական հեղաշրջումը ցույց տվեց, որ հնարավոր էր նաեւ, որ ԽՍՀՄ-ը առժամանակ վերադառնա, ասենք, 30-ական թվականների քաղաքական ռեժիմին:

[299] *Հայտնի պատմաբաններից, օրինակ՝ Դավիթ Անանուն, Լեո, Լեւոն Զորմիսյան:*

«Ղարաբաղ» կոմիտեն մինչեւ վերջ գործեց անփոփոխ կազմով[300], որպես համախոհների եւ հավասարների համախումբ, չունեցավ իր նախագահը կամ ղեկավարը: Իրադրության թելադրանքով ու գործնական նկատառումներով որդեգրված այս ձեւը, թերեւս, դարձավ նաեւ նրա ուժի, հեղինակության եւ հաջողությունների կարեւոր գրավականներից մեկը:

Կոմիտեի անդամներից յուրաքանչյուրը հսկայական ծանրություն եւ պատասխանատվություն էր ստանձնել, անմնացորդ կատարում էր իր գործը, փոխադարձաբար լրացնում միմյանց: Այն իրավիճակներում, երբ ֆիզիկապես հնարավոր չէր խորհրդակցել, Կոմիտեի անդամներից յուրաքանչյուրը նաեւ կարեւոր հարցերում անձնական որոշումներ ընդունելու լիազորություն ուներ: Հարցերի քննարկման անկաշկանդ մթնոլորտ, աշխատանքի եւ բնագավառների բնական բաժանում եւ ներդաշնակություն կար Կոմիտեում: Կոմիտեի անդամների վկայությամբ՝ ամենաբուռն քննարկումներ ու բանավեճեր էին լինում նրա նիստերում: Սակայն դժվար է հիշել դեպք, երբ որեւէ հարցում նա հասարակությանը ներկայանար ոչ միասնական, ոչ հստակ, չպատճառաբանված ու չհիմնավորված դիրքորոշմամբ: Դա ավելացնում ու բազմապատկում էր նրա հեղինակությունը եւ իր նկատմամբ հասարակական վստահությունը:

Ավելի քան երկու տարի Կոմիտեն, ըստ էության, գործում էր որպես հանրապետության երկրորդ իշխանություն՝ իր ազդեցությամբ հաճախ գերազանցելով պաշտոնական իշխանություններին: Այդ իշխանությունը նա իրականացնում էր համաժողովրդական վստահության ու աջակցության պայմաններում: Երկու տարվա ընթացքում ՀԽՍՀ օրենսդիր մարմնի ընդունած հայտարարությունների, որոշումների զգալի մասի, թերեւս՝ հարյուրի չափ, նախագծերը կազմվել էին Կոմիտեում կամ ՀՀՇ վարչությունում: Իսկ 1988թ. նոյեմբերի 24-ին Գերագույն խորհրդի՝ Կոմիտեի կոչով Օպերային թատրոնի շենքում հրավիրված նիստը նշանակում էր, որ երկիշխանական դրությունը վերածվում էր Շարժման մենիշխանության:

Կոմիտեի հարյուրհազարանոց հանրահավաքները հիշեցնում էին հին հունական ժողովրդավարության «ժողովրդական ժողովները» («Ագորա»), որի մասնակից յուրաքանչյուր քաղաքացի զգում էր իր ներկայության կարեւորությունը, ձայնի արժեքը եւ իրադարձություններին բերած գործնական մասնակցությունը: Հանրահավաքներում կարեւորագույն որոշումներ էին ընդունվում, ապա դրանք պարտադրվում կոմունիստական իշխանություններին կամ իրականացվում Շարժման կառույցների ու մասնակիցների ուժերով: Կոմիտեի շուրջ ինքնաբերաբար ձեւավորվել էր յուրատեսակ բազմանդամ մի աշխատակազմ՝ Շարժման գործուն մասնակիցներից, տեղական կառույցների ղեկավարներից: Երկուսուկես տարում այդ ակտիվը ձեռք բերեց ոչ միայն քաղաքական պայքարի, այլեւ իշխանության գործնական իրականացման հարուստ փորձ:

Կոմիտեի հանրահավաքները միայն քաղաքական պայքարի ու ժողովրդի իշխանության իրականացման միջոց չէին: Դրանք նաեւ, հաճախ՝ առաջին հերթին, վերածվում էին նաեւ քաղաքական գիտելիքների ձեռքբերման բաց համալսարանի: Հանրապետությունում, Խորհրդային Միությունում եւ աշխարհում կատարվող նշանակալից իրադարձություններն այստեղ մանրամասն ու մատչելի վերլուծվում էին: Բայց շատ ավելի կարեւոր էր երկրորդ ուղղությունը. Կոմիտեի անդամները, ի տարբերություն Շարժման առաջին ամիսների ղեկավարության, հաճախ ստիպված էին լինում խոսել նաեւ «դժվար» թեմաներով: Խոսքը չի վերաբերում Մոսկվայի կամ Հայաստանի իշխանության մարմինների կամ առանձին ղեկավարների դեմ ուղղված համարձակ ելույթներին, նրանց անողոք քննադատությանը ու գնահատականներին: Հանրությունը ու, մանավանդ հանրահավաքների մշտական մասնակիցները, վաղուց արդեն պատրաստ էին ծափահարություններով ընդունել նման ելույթները: Խոսքը վերաբերում է այն ելույթներին, որոնք հակադրվում էին հայ հասարակական-քաղաքական մտքի ավանդական պատկերացումներին՝ կեղծ-հայրենասիրության, կեղծ-ազգային, կեղծ-քաղաքական արժեքներին, որոնք ամրորեն նստած էին շատերի մտապատկերում: Եւ սա, որքան էլ չնկատվող ու չնկատված, սակայն Կոմիտեի պայքարի ամենադժվարին ճակատն էր: Հարյուր հազարանոց բորբոքված, ամեն վայրկյան անկառավարելի ամբոխի վերածվելու եզրագծին կանգնած մարդկային զանգվածի առջեւ այսպիսի թեմաներով ելույթները ոչ միայն լուրջ պատրաստություն, նյութի իմացություն էին պահանջում, խոսքի արվեստ, հեղինակություն, այլեւ, առաջին հերթին, բացառիկ քաղաքական հանդգնություն ու քաջություն: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն ունեցավ այդ պատրաստությունը, հանդգնությունը եւ քաջությունը:

1988թ. օգոստոսի 19-ին Կոմիտեն հանդես եկավ Շարժմանը «Հայոց համազգային շարժում» անվամբ կազմակերպական ձեւ տալու նախաձեռնությամբ՝ ներկայացնելով դրա քաղաքական ծրագիրը: Եւ այդ Ծրագիրն իր հիմնադրույթներով ու արժեքային համակարգով առաջին մարտահրա-

[300] *Վերջին 1-2 ամսում նրա կազմից դուրս եկավ միայն Սամսոն Ղազարյանը:*

վերն էր կոմունիստական գաղափարախոսությանը եւ ռեժիմին: Բայց որպես այդպիսին այն մարտահրավեր էր նաեւ հայ հասարակական-քաղաքական մտքի արդեն դարավոր, ավանդական կարծրատիպերին, սրբագործված պատկերացումներին, գլխիվայր շրջված ողջ քաղաքական արժեքային համակարգին եւ գործելակերպին: Կոմիտեի գործունեության ավելի քան երկու տարվա ընթացքում սա կարելի է համարել նրա քայլերի ու նախաձեռնությունների մեջ ամենախիզախը, ամենաշրջադարձայինն ու ամենաարդյունավետը: Դրանով «մեկ հարցի» Շարժումը վերջնականապես ու հիմնավորապես վերածվեց ընդհանուր հիմքով ժողովրդավարական շարժման՝ Լեռնային Ղարաբաղի՝ այդ հիմքին խարսխված խնդրին տալով նույնպիսի՝ ժողովրդավարական հարցի բովանդակություն: Որպես վերջնանպատակ՝ հստակ ուրվագծվեց պետական անկախության հասնելու գաղափարը: Քաղաքական այդ ծրագրով սկիզբ դրվեց ժողովրդին հոգեբանորեն ընկճող՝ ցեղասպանության բարդույթից ազատելուն, ազգային ինքնավստահության եւ սեփական ուժերի նկատմամբ հավատի ձեռքբերմանը: Շարժման մեջ ձեւավորվեց իրական քաղաքական մտածելակերպով օժտված գործիչների ստվար մի խումբ, աստիճանաբար արմատական փոփոխություններ կրեցին նաեւ հասարակական պատկերացումները:

Մարդկանց ու նրանց խմբերի հոգեբանությունն ուսումնասիրող գիտության արձանագրմամբ՝ մարդկային անգամ ոչ մեծ խմբերը, զգացումների տրվելով, հակված են ձեռք բերելու ամբոխի հատկանիշներ ու գնալու չկշռադատված քայլերի ու գործողությունների: Դա առավել եւս անխուսափելի է համարվում հոծ զանգվածների համար՝ սովորաբար կործանարար հետեւանքներով: Երբեմն դրա համար բավարար է լինում ամենափոքր կայծը, ամենաչնչին սադրանքը: Երկուսուկես տարվա ընթացքում հարյուրհազարանոց հանրահավաքներում հաճախ եղան ե՛ւ նմանօրինակ կայծեր, ե՛ւ բազմաթիվ սադրանքներ ու առիթներ: Որեւէ անգամ դրանք լուրջ հետեւանքներ չունեցան: Կոմիտեի անդամները ժամանակին եւ հաջողությամբ կարողանում էին կանխել չմտածված գործողություններն ու դեպքերի անկանխատեսելի, վտանգավոր ընթացքը: Նրանց հաջողվեց 1988-90թթ. բուռն փոթորիկների պայմաններում ամուր պահել Շարժման ղեկը եւ համաժողովրդական շարժման հսկայածավալ նավը, ինչպես ասում են, հասցնել խաղաղ նավահանգիստ, ավելի ճիշտ՝ հաղթական հանգրվանի:

Համոզված լինելով հանդերձ, որ իր գործունեությունը ցանկացած պահի կարող է ընդհատվել ձերբակալություններով ու ազատազրկմամբ՝ «Ղարաբաղ» կոմիտեն դրանից խույս տալու համար երբեւէ չդավաճանեց

Շարժման տրամաբանությանը եւ օրակարգային հարցերին: Ընդհակառակը՝ երբ ազատազրկման այդ հեռանկարը դարձավ ավելի քան իրական, Շարժման շարունակականությունն ապահովելու համար նա 1988թ. հոկտեմբերին ստեղծեց իրեն փոխարինող (գաղտնի) մի կազմ (**Երջանիկ Աբգարյան, Դավիթ Շահնազարյան, Ավետիք Իշխանյան, Արշակ Սադոյան, Ալբերտ Բաղդասարյան, Սմբատ Հակոբյան**), որը եւ Կոմիտեի անդամների վեցամսյա ազատազրկման շրջանում նույն հաջողությամբ ղեկավարեց Շարժումը:

«Ղարաբաղ» կոմիտեն հայ քաղաքական իրականության մեջ, կարելի է ասել, աննախադեպ հաջողված եւ կայուն քաղաքական թիմ էր: Նրա առջեւ ծառացած խնդիրները տասնապատիկ ավելի ծանր ու բարդ էին, քան այդ տարիներին ԽՍՀՄ-ում եւ Արեւելյան Եւրոպայում ժողովրդավարական շարժումներից որեւէ մեկի առջեւ դրված հարցերը: Նրա դեմ գործող ուժերը շատ ավելի անհանդուրժող էին, ագրեսիվ ու վտանգավոր, քան մյուս երկրների ժողովրդավարական շարժումների դեմ գործողները: «Ղարաբաղ» կոմիտեի հաջողության կարեւորագույն գրավականն այն էր, որ նա կարողացավ ոչ միայն առաջնորդել Շարժումը, այլեւ հաճախ դեմ գնալ հասարակական կարծիքին եւ իշխող պատկերացումներին, ուղղել եւ ուղղորդել հասարակական կարծիքը, փոխել քարացած, սրբագործված ավանդական պատկերացումները: Պատմականորեն իրեն տրված շատ կարճ ժամանակահատվածում նա իր դերը կատարեց բացառիկ պատասխանատվությամբ եւ արդյունավետությամբ՝ ապահովելով հնարավոր առավելագույն քաղաքական արդյունքներ:

Որպես անառարկելի փաստ՝ պետք է արձանագրել երկու իրողություն.

Առաջին. Շարժման առաջին ամիսներից հետո ծառացել էր փակուղային ճգնաժամ. կա՛մ դադարեցնել Շարժումը՝ բավարարվելով խնդիրը Մոսկվայի առջեւ բարձրացրած լինելու իրողությամբ, կա՛մ այն տեղափոխել պատմական իրավունքների եւ հողային պահանջատիրության հարթություն եւ դիմել չմտածված գործողությունների: Երկու դեպքում էլ ԽՍՀՄ-ի հոգեվարքի խառնաշփոթ տարիներին Լեռնային Ղարաբաղը դատապարտվելու էր հայ բնակչությունից դատարկվելու ու անդարձ կորստյան: Պայքարի իրատեսական եւ արդյունավետ քաղաքական շարունակությունը հնարավոր դարձավ միայն այն բանի շնորհիվ, որ նորակազմ «Ղարաբաղ» կոմիտեն կարողացավ կանխել անհեռանկար այս տարբերակները, խնդիրը դնել լայն ժողովրդավարական օրակարգի հարթության

վրա, պայքարը շարունակել իրատես քաղաքական մեթոդներով: Դրա շնորհիվ **փրկվեց Լեռնային Ղարաբաղը**:

Երկրորդ. անշուշտ, Խորհրդային Միությունը, ինչպես եւ ամեն մի բռնապետություն ու կայսրություն, պատմականորեն դատապարտված էր: Բայց սա տեսական դատողություն է եւ արդարանում է միայն նրանով, որ պատմության մեջ ամեն մի բռնապետություն ու կայսրություն փլուզվել է միայն, կամ նաեւ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հարվածների տակ[301]: Խորհրդային կայսրությունը նույնպես փլուզվեց ազգային-ազատագրական պայքարների հարվածների տակ: Ղարաբաղյան շարժումը ազգային-ազատագրական պայքարի ամբողջական հատկանիշներ ձեռք բերեց, երբ 1988-ի մայիսի վերջից սկսեց ղեկավարվել Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կողմից եւ վերածվեց խորհրդային բռնապետական համակարգի հիմքերի դեմ ուղղված ժողովրդավարական քաղաքական շարժման: Մինչ այդ առաջինը եւ միակը լինելով՝ Հայկական ժողովրդավարական շարժումը հետագայում էլ մնաց ԽՍՀՄ-ում նոր առաջացող նմանատիպ շարժումների եւ բռնապետության դեմ պայքարի առաջամարտիկը: 1988-90թթ. այդ պայքարը ղեկավարող մարմինը Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն էր: «Ղարաբաղ» կոմիտեի կողմից ղեկավարվող Շարժման, ապա ՀՀՇ-ի գաղափարական սկզբունքների վրա ժողովրդավարական իշխանության վարած քաղաքականության շնորհիվ **Հայաստանը ձեռք բերեց իր անկախությունը,** եւ ձեռք բերեց էականորեն դրան նախապատրաստված վիճակում:

1990թ. խորհրդարանական ընտրություններում ժողովրդավարական ուժերի հաղթանակով եւ Գերագույն խորհրդի նախագահի թեկնածուի առաջադրմամբ «Ղարաբաղ» կոմիտեն պատմականորեն կատարել էր իր դերը: Նրանից ժառանգված քաղաքական փորձը եւ պրակտիկան դրվեց ՀՀՇ-ի ու նրա իշխանության գործունեության հիմքում՝ ապահովելով ծանրագույն մարտահրավերներին դիմակայելը, անկախ պետականության կայացումը, պարտադրված պատերազմում հաղթանակը:

Որպես Հայաստանի անկախության ձեռքբերման եւ Լեռնային Ղարաբաղի փրկության պատմական խնդիրների լուծմանն ուղղված պայքարի առաջնորդներ՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներն, ըստ իրենց գործունեության քաղաքական արդյունքների, Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին տասնմեկ ազգային հերոսներն են, անկախ այդ կոչմանը ֆորմալ առումով արժանացած չլինելու հանգամանքից:

է) Շարժման չորրորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները

1. 1989թ. վերջին, նկատի ունենալով, որ ԽՍՀՄ իշխանության կենտրոնական մարմինների որոշումներով վերջնականապես սպառված են Խորհրդային Միության պայմաններում Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման հնարավորությունները, ինչպես նաեւ ԽՍՀՄ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական գործընթացների միտումները, ՀՀՇ-ն սահմանադրական ճանապարհով՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունների միջոցով իշխանության գալու եւ Հայաստանի անկախության հասնելու քաղաքական ընթացք վերցրեց:

2. 1989թ. դեկտեմբերին ՀՀՇ-ի կողմից Հայաստանի Գերագույն խորհրդի քննարկմանն առաջարկած՝ «Արմատական ժողովրդական վերափոխումների մասին» հռչակագրի մեջ տեսնելով անկախության ուղեգծի հետագա խորացում, միասնական ճակատով դրա դեմ դուրս եկավ ԽՍՀՄ պահպանման եւ Հայաստանի ապագան միայն նրա կազմում տեսնող ուժերի համախումբը՝ հայկական «ինտերֆրոնտը»: Այս պլատֆորմի վրա գտնվող ուժերի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների եւ ՀՀ ԳԽ պատգամավորների մեծ մասի, իշխանությանը սերտաճած նոմենկլատուրային մտավորականության, հընթացս առաջացած կամ ստեղծված զանազան մանր կազմակերպությունների, Սփյուռքի ավանդական կուսակցությունների, որոշ անվերահսկելի զինված ջոկատների հարուցած խոչընդոտների պատճառով էր նաեւ, որ ամենավճռական այդ պահին՝ 1989թ. վերջին, ձախողելով ՀՀՇ-ի ներկայացրած «Արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին» հռչակագրի ընդունումը, ձեռքից բաց թողնվեց «հայկական

[301] *ԽՍՀՄ փլուզման մեջ, անշուշտ, որոշակի դեր խաղաց նաեւ նրա տնտեսական համակարգի անկատարությունը եւ ոչ կենսունակությունը, ինչը վերջին տասնամյակում անկառավարելի ճգնաժամերի էր հանգեցրել: Այս խնդրի մասնագիտական համապարփակ ուսումնասիրությանն է նվիրված հայտնի տնտեսագետ, քաղաքական եւ պետական գործիչ, բարեփոխիչ Եգոր Գայդարի ընդարձակ հետազոտությունը (տե՛ս* ***Գայդար Է.****, Կայսրության կործանումը, Անտարես, Երեւան, 2019): Սակայն նա չափազանցել, բացարձակացրել է տնտեսական գործոնի դերակատարությունը կայսրության փլուզման գործում:*

գործոնի»՝ ժողովրդավարական միջազգային համարումի մեծացման ու հզորացման հնարավորությունը: Իսկ դա, իր հերթին, նպաստեց նաեւ բռնությունների այն շղթայի սանձազերծմանը, որ այդ ամիսներին տարածվեց Նախիջեւանում, Բաքվում, Ադրբեջանի հայկական այլ բնակավայրերում, Գետաշենի ենթաշրջանում, Լեռնային Ղարաբաղում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

3. Հայաստանում քաղաքական ջրբաժանի վերջնական հստակեցումից հետո, Լեռնային Ղարաբաղի վտանգվածության աստիճանի մեծացման եւ Հայաստանի ապագայի ապահովության խնդրական լինելու պայմաններում, Շարժումը ստանձնեց պաշտպանական խնդիրների ամբողջ ծանրությունը՝ Լեռնային Ղարաբաղում նվազագույնի հասցնելով կորուստները: Նա կարողացավ գործող Գերագույն խորհրդին պարտադրել նաեւ պաշտպանական խնդիրները կարգավորող կարեւորագույն օրենքների եւ որոշումների ընդունումը, հնարավորինս ապահովել հայաստանյան ժողովրդավարական գործընթացներին ԽՍՀՄ առաջադիմական ուժերի եւ միջազգային հանրության աջակցությունը: Հոգեբանական եւ գործնական առումով կարեւոր նշանակություն ունեցավ ՀՀՇ-ի պահանջով Լեռնային Ղարաբաղի ընդգրկումը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի՝ մայիսին նշանակված ընտրություններում:

4. Որքան էլ որ Շարժումը Հայաստանում փաստական իշխանություն էր եւ իրականացնում էր պաշտպանական գործառույթներից սկսած մինչեւ օրենսդիր մարմնում հիմնական քաղաքական որոշումների անցկացումը, այնուամենայնիվ, Կոմկուսը, ունենալով հայկական «ինտերֆրոնտի» լայն աջակցությունը, պատրաստվում էր ամեն գնով պահել իշխանությունը, կասեցնել անկախության տանող գործընթացները: Այդ նպատակով նրա ձեռնարկած նախընտրական միջոցառումներից էին՝ իր վարկաբեկված ղեկավարին փոխելը, Հանրապետության նախագահի պաշտոն հիմնելու եւ հապճեպ, մինչեւ խորհրդարանական ընտրությունները, Հանրապետության նախագահի ընտրություններ անցկացնելու փորձը, Շարժման ու նրա ղեկավարների հասցեին մեծ ծավալով անստորագիր վարկաբեկիչ թռուցիկների ու հերյուրանքների տարածումը: Տեսնելով, որ մայիսի 20-ին նշանակված հերթական ընտրություններում դատապարտված է պարտության, Կոմկուսն իր դաշնակիցների հետ դիմեց հնարավոր բոլոր քայլերին՝ անորոշ ժամանակով հետաձգելու համար Գերագույն խորհրդի՝ արդեն նշանակված ընտրությունները, իսկ ընտրությունների կայացումից հետո ամեն կերպ խոչընդոտելու առաջին նստաշրջանի հրավիրումը:

5. ՀՀՇ-ի դեմ գաղափարական պայքարը շարունակում էր հենվել Հայաստանի անկախությունը բացառող հայդատական ու պահանջատիրական գաղափարների վրա: Ամեն անգամ, երբ իշխանությունը հայտնվում էր հատկապես ծանր ու ճգնաժամային պայմաններում, երբ անհրաժեշտ էր լինում խոչընդոտել Շարժման քաղաքական լուրջ ձեռնարկումները, շահարկելով «ազգային միասնության» մասին կեղծ պատկերացումը՝ ասպարեզ էր նետվում կարեւորագույն հարցերը «համահայկական» ինչոր խորհրդաժողովով լուծելու գաղափարը: 1990-ի գարնանը նման միջոցառման գաղափարն օգտագործվում էր կանխելու համար առաջիկա խորհրդարանական ընտրությունների անցկացումը, դրանով փորձ էր արվում նսեմացնել Հայաստանի իշխանության բարձրագույն մարմնի դերը: Այդ դեմագոգիայի հիմքը ավանդական այն հակաքաղաքական պատկերացումն էր, ըստ որի՝ աշխարհասփյուռ հայ ժողովուրդը մի ընդհանրություն է, որը հավասար իրավունքներ ունի Հայաստանի նկատմամբ, Հայաստանի ժողովուրդն այդ ընդհանրության մասերից մեկն է լոկ եւ իր իսկ ճակատագիրը տնօրինելու իրավունք չունի՝ առանց հայության մյուս մասերի հետ դա համաձայնեցնելու:

6. Մայիսի 20-ի խորհրդարանական ընտրությունների առաջին փուլի հաղթական արդյունքներից հետո անկախության ուղեգիծ որդեգրած Հայկական ժողովրդավարական շարժման վերջնական հաղթանակը կանխելու համար Մոսկվան, Հայաստանի իշխանության հետ համատեղ, որոշեց դիմել ուժային մեթոդների: Այդ նպատակով կատարվեցին մի շարք սադրիչ գործողություններ, որոնցից ամենածանր հետեւանքներն ունեցավ մայիսի 27-ի արյունոտ սադրանքը: Դա անկախության գնացող Հայաստանի դեմ իշխանության պատժիչ մի գործողություն էր, ինչին զոհ գնաց 26 քաղաքացի: Մեծ ջանքերի գնով եւ սառնասիրտ գործողություններով ՀՀՇ-ին հաջողվեց կանխել սադրանքի ծավալումը, հաղթահարել հետագա բոլոր խոչընդոտները, հասնել Հայաստանում առաջին ժողովրդավարական, այլընտրանքային ընտրությունների անցկացմանը եւ դրանում իր հաղթանակի արձանագրմանը:

7. ՀՀՇ նախընտրական ծրագիրը, որպես առանցքային ուղենիշ ունենալով հանդերձ անկախ պետականության հաստատման նպատակը, ընտրություններում հաղթանակից հետո անմիջապես անկախության հռչակման խնդիր չէր դնում: Այն նախատեսում էր հանրապետության լիակատար ինքնիշխանության (փաստական անկախության) խնդրի լուծում, ինչը կբավարարեր իրադարձությունների հետագա զարգացման կանխա-

տեսելի հնարավոր երկու տարբերակներին. առաջին՝ ԽՍՀՄ փլուզման դեպքում երկիրն ու ժողովուրդը առավելագույնս հեռու պահել վտանգներից եւ պատրաստ լինել ինքնուրույն գոյատեւման, երկրորդ՝ ԽՍՀՄ առժամանակյա գոյատեւման դեպքում քաղաքական անկախության հասնել իրավական, սահմանադրական ճանապարհով, ԽՍՀՄ համապատասխան օրենքով սահմանված կարգով: Այսինքն՝ այդ կերպ ապահովելով գործընթացի իրավական անխոցելիությունը, մի կողմից՝ երկիրն ու ժողովուրդը հեռու պահել Կենտրոնի պատժիչ գործողություններից, մյուս կողմից՝ ապահովել անկախության միջազգային ճանաչման անհրաժեշտ իրավական հիմքերը: Նախատեսվում էր ստեղծել ժողովրդավարական, իրավական պետություն, կատարել օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատում, ապահովել օրենքի գերակայությունը, Սահմանադրությունը եւ օրենքները համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին եւ մարդու իրավունքների հանրաճանաչ նորմերին: Տնտեսական բնագավառում Ծրագիրը նախատեսում էր գաղութային տնտեսության հետեւանքների վերացում, սեփականության բոլոր ձեւերի իրավահավասարության ու ազատ շուկայական հարաբերությունների ստեղծում: ՀՀՇ-ն ընտրությունների գնաց իր կողմից պաշտպանվող թեկնածուների հրապարակված ցուցակով, որի մեջ մտնում էին ոչ միայն ՀՀՇ-ի հայտնի գործիչներ, այլ նաեւ այլ կուսակցությունների անդամներ եւ անկուսակցականներ, որոնք կիսում էին նույն գաղափարներն ու ծրագիրը:

8. Չնայած իշխանության ու նրան սատարող ուժերի ու կառույցների բազմաթիվ սադրանքներին ու ընտրակեղծիքներին, Հայոց համազգային շարժումը ու նրա գլխավորած ժողովրդավարական ուժերը հաղթանակ տարան խորհրդարանական ընտրություններում: Օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, ՀՀՇ վարչության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ինչով ավարտվեց կոմունիստական կուսակցության մենիշխանության ու բռնատիրության շրջանը:

9. Նոր իշխանությունը վճռական ու գրագետ քաղաքական քայլերով չեզոքացրեց ներքաղաքական իրավիճակի ապակայունացմանն ուղղված ուժերի գործողությունները, կանխեց քաղաքացիական պատերազմի վտանգը, որ Կոմկուսի իշխանության վերջին ամիսներին օր օրի հասունանում ու ահագնանում էր, հանրապետությունը զերծ պահեց Մոսկվայի կողմից ուժային միջամտությունների վտանգից: Միաժամանակ, օգոստոսի 23-ին ընդունած «Անկախության մասին հռչակագրով» իրավական հիմք դրեց դեպի անկախություն տանող քաղաքական ուղեգծին:

Իշխանության հասնելու եւ իր ծրագրում որպես առաջնային խնդիր արձանագրած՝ Հայաստանի անկախության գործընթացի մեկնարկը տալու ճանապարհին կոմունիստական իշխանությունը (կենտրոնական եւ տեղական) ՀՀՇ-ի դեմ ծավալեց մոլեգին պայքար՝ խտրություն չդնելով միջոցների մեջ: Շուրջ կես տարվա ընթացքում Շարժումը հաղթահարեց հարուցված հետեւյալ խոչընդոտներ. **ա)** հանրապետության սահմանների վրա ոտնձգությունները, **բ)** «համահայկական» ինչ-որ խորհրդաժողով կազմակերպելու ու դրանով ԳԽ ընտրությունները հետաձգելու-վիժեցնելու փորձերը, **գ)** կենտրոնական ու տեղական իշխանության կողմից համատեղ կազմակերպած՝ մայիսի 27-ի արյունոտ սադրանքը, **դ)** Հանրապետության նախագահի պաշտոն հիմնելու եւ հապշտապ ընտրություններ անցկացնելու փորձը, **ե)** ԳԽ ընտրությունների ընթացքում իշխանության կողմից իրականացված բազմաթիվ ընտրակեղծիքները, **զ)** արդեն ընտրված ԳԽ-ի աշխատանքները սկսելը խոչընդոտելուն ուղղված՝ իշխանական այլազան նախաձեռնությունները, **է)** չվերահսկվող (իրականում՝ ՊԱԿ-ի կողմից վերահսկվող) զինված ջոկատների կողմից ներքին անկայունության, ընդհուպ՝ քաղաքացիական պատերազմի հրահրման ճանապարհով նորաստեղծ իշխանության ձախողման կամ տապալման փորձերը:

10. 1990թ. օգոստոսին Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդական շարժումը, լուծած լինելով իր զույգ անուններից բխող երկու կարեւոր խնդիրները, հետագա ծրագրերն ու խնդիրները փոխանցեց համընդհանուր ընտրությունների միջոցով ձեւավորված իր իշխանությանը: Շարժման առաջին կարեւորագույն արդյունքը Լեռնային Ղարաբաղի փրկությունն էր. չլիներ երկուսուկես տարվա համաժողովրդական պայքարը, ԽՍՀՄ քայքայման պայմաններում անհնար էր լինելու որեւէ կերպ կանխել Լեռնային Ղարաբաղի կորուստը, նրա հայ բնակչության բռնի տեղահանումը: Դրանում վճռորոշ դեր խաղացին հայաստանյան ժողովրդավարական շարժումը եւ նրա ղեկավար մարմինը՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, Շարժման քաղաքական կառույցը՝ Հայոց համազգային շարժումը: Երկրորդ կարեւորագույն արդյունքը Հայաստանի փաստական անկախության հաստատումն էր եւ վերջնական անկախության անվտանգ, իրավական գործընթացի մեկնարկը: Շարժման ընթացքում ձեւավորվեց հզոր ժողովրդավարական քաղաքական ուժ, որն ի վիճակի եղավ օրինական ճանապարհով հասնել իշխանության: Չհաղթեր Շարժումը՝ մեկ տարի անց, ԽՍՀՄ փլուզման պայմաններում, Հայաստանն անկախ գոյավիճակի փաստի առջեւ էր հայտնվելու նույնքան անպատրաստ, որ-

քան 1918 թվականի մայիսին: Շարժման կողմից ստեղծված քաղաքական ուժը՝ ՀՀՇ-ն, համաժողովրդական լայն պաշտպանությամբ ստանձնեց ինքնիշխանության հաստատման, անկախ պետականության կառույցների ստեղծման, Ղարաբաղի անվտանգության ապահովման, արմատական ժողովրդավարական եւ համակարգային վերափոխումների իրականացման խնդիրների պատասխանատվությունը:

11. Հայկական ժողովրդավարական շարժման հաղթանակը պայմանավորված էր մի շարք գործոններով.

ա) Շարժումը վճռականորեն մերժեց հայ հասարակական-քաղաքական մտքի ավանդույթներով եկած կեղծ պատկերացումներն ու գլխիվայր շրջված քաղաքական արժեքային համակարգը, դրա տարտամ գաղափարախոսական հիմնադրույթների ու քարացած ձեւակերպումների փոխարեն որդեգրեց իրական, լուծելի քաղաքական խնդիրներ: Արժեքային համակարգում, որպես գերագույն արժեք՝ հայդատականության/պահանջատիրականության փոխարեն դրվեց անկախ պետականության հաստատման խնդիրը՝ որպես անհատի եւ ժողովրդի արժանապատիվ կյանքի եւ հուսալի ապագայի ապահովման՝ պատմականորեն հաստատված եւ միջազգայնորեն ճանաչված երաշխիք: Մերժվեց երրորդ ուժի ապավինելու՝ հայ քաղաքական մտքի ավելի քան 300-ամյա ավանդական, անփոխարինելի համարվող, վնասաբեր կանխադրույթը, եւ ձեւակերպվեցին Հայաստանի ժողովրդի ուժերին ու հնարավորություններին համապատասխան իրատեսական քաղաքական խնդիրներ՝ ելնելով նրա ներկայի հոգսերից ու ապագայի խնդիրներից: Լեռնային Ղարաբաղի խնդիրը հետեւողականորեն հետապնդվեց ոչ թե պահանջատիրության, այլ գործող Սահմանադրությամբ ամրագրված եւ միջազգային հասարակական կարծիքի կողմից ընկալելի՝ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի հարթության վրա: Հայկական համաժողովրդական շարժումն, ըստ էության, ապստամբություն էր սեփական պատմության եւ անցյալի կարծրատիպերի դեմ: Պապերից ժառանգած խնդիրների եւ «հանուն ապագա սերունդների» կարգախոսների փոխարեն այն պայքար էր ներկա սերնդի ու ներկայի խնդիրների համար, որոնց լուծմամբ միայն կարելի էր ապահովել ապագան եւ երբեւէ անդրադառնալ անցյալին:

բ) «Ղարաբաղ» կոմիտեի, ՀՀՇ վարչության, ապա՝ ՀՀ նոր իշխանության գործունեության հիմքում միշտ դրված մնաց հետեւյալ սկզբունքը. դնել միայն լուծելի խնդիրներ եւ դիմել միայն այնպիսի գործողությունների, որոնց հետեւանքները պետք է հստակ կանխատեսելի լինեն, դրական

արդյունք չստանալու դեպքում դրանք չպետք է հանգեցնեն բացասական արդյունքի: Դրանք պետք է նաեւ, որպես ընդհանուր հայտարար, բավարարեն հնարավոր քաղաքական զարգացումների բոլոր տարբերակներին, ու, անհրաժեշտության դեպքում նաեւ ժամանակավոր, հնարավորինս անկորուստ նահանջի հնարավորություն տային:

գ) Շարժումը չոգեւորվեց գայթակղիչ եւ ամբոխահաճ կարգախոսներով եւ հեռու մնաց տվյալ պահի համար մինչեւ վերջ չհասունացած, հաջողության հասնելու համար նվազագույն անհրաժեշտ վստահելի հիմքեր չունեցող քայլերից ու նախաձեռնություններից: Որեւէ նախաձեռնության համար հաշվի էր առնվում նպաստավոր եւ աննպաստ գործոնների ամբողջ համալիրը՝ սկսած հասարակական պատկերացումների բյուրեղացման աստիճանից մինչեւ միջազգային հանրային կարծիքը, ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի վերաբերմունքը, կենտրոնական իշխանությունների հնարավոր հակազդեցության ռեսուրսները եւ այլն:

դ) Շարժման քաղաքական ղեկավարությունը չխորշեց նաեւ լայն զանգվածների համար դեռեւս ոչ այնքան դյուրըմբռնելի ու ոչ ժողովրդահաճ քաղաքական որոշումներից, այդօրինակ գաղափարների պաշտպանությունից, քարոզից եւ իրագործումից: Հաջողվեց հաղթանակի հասնել 1989թ. հունիսից ի վեր Շարժման դեմ հարդարված գաղափարական պայքարում, որը հենվում էր «ազգային միասնության», «ազգային գաղափարախոսության», Հայաստանի ու նրա ճակատագրի նկատմամբ համայն հայության հավասար իրավասության, ինչ-որ «համահայկական համագումարի», «պանթուրքիզմի վտանգի», անկախ ապրելու անհնարինության ու վտանգավորության եւ նմանօրինակ այլ՝ մինչ այդ սերմանված ու տարածված սնանկ կարծրատիպերի, կեղծ հասկացությունների ու պատկերացումների վրա: Մերժելով կեղծ քաղաքական հասկացությունները՝ համարձակորեն վերագնահատեց ու վերաիմաստավորեց պատմության սրբազործված դրվագների մասին ավանդական, իրականությանը չհամապատասխանող պատկերացումները եւ այլն: Հաջողվեց հասարակական գիտակցության մեջ արմատավորել քաղաքական նոր ու իրական արժեքային համակարգ:

ե) Շարժումը հետեւողականորեն մնաց սահմանադրական պայքարի դիրքերում՝ ամեն կերպ հզորացնելով «հայկական գործոնը», այն է՝ ժողովրդավարության համար պայքարում առաջամարտիկի իր ստանձնած դերը պահպանելով՝ վայելել ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի ու միջազգային հանրային կարծիքի օգնությունն ու օժանդակությունը, ինչը եւ

դարձավ նաեւ հետագա հաջողություններն ու հաղթանակներն ապահովող ամենակարեւոր լծակը:

12. Հայկական ժողովրդավարական շարժման իրական գաղափարական ախոյանը ոչ այնքան խորհրդային կոմունիստական գաղափարախոսությունն էր, ինչպես ԽՍՀՄ մյուս հանրապետություններում, որքան հայ ավանդական քաղաքական մտքի քարացած պատկերացումները, կեղծ հասկացությունները, այդ հիմքի վրա կառուցված ու սրբագործված ապաքաղաքական ու պետականամերժ արժեքային համակարգը: Դրան հակադրվող՝ Շարժման նոր գաղափարները, բնականաբար, միանգամից ու հեշտությամբ չէ, որ փոխարինեցին հներին: Եւ Շարժման ընթացքում ամենօրյա հանրահավաքներն ամբողջ երկու տարի նաեւ քաղաքական կրթության բաց համալսարան էին, տասնյակ հազարավոր օրինակներով տարածվող հարյուրավոր թռուցիկները՝ այդ գաղափարները քարոզող դասագրքեր: Բայց եւ այնպես, հասարակական մտածողության մեջ այդ հեղափոխության իրականացումը հնարավոր չէր լինի, եթե նույն այդ տարիներին չարձանագրվեին ձեռքբերումներ, հաղթանակներ ու նվաճումներ՝ որպես քաղաքական պայքարի այդ գաղափարախոսությանը եւ այդ մեթոդաբանությանը հետեւելու, դրա կիրառման առարկայական արդյունք: Որպես այդպիսին՝ ՀՀՇ Ծրագիրը քննություն բռնեց, եւ, օրեցօր հաստատելով իր կենսունակությունը, դրվեց անկախ պետականության առաջին ծրագրային փաստաթղթի՝ «Անկախության հռչակագրի» հիմքում:

Երկրորդ բաժին

ԱՆԿԱԽ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

1. ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

ա) Նոր իշխանության ստացած տխուր ժառանգությունը եւ ծանրագույն մարտահրավերները

Յոթանասունամյա կոմունիստական վարչակարգը չափազանց տխուր ժառանգություն էր թողել բոլոր ասպարեզներում: Այդ ամբողջ ընթացքում տեւական եւ հետեւողական աշխատանքը մեկ նպատակ էր ունեցել՝ ամրապնդել բռնապետական կայսրության հիմքերը, չեզոքացնել նրան սպառնացող բոլոր հնարավոր վտանգները: ԽՍՀՄ-ը գաղափարախոսականացված պետություն էր. պետական գաղափարախոսության խնդիրն էր նվազագույնի հասցնել ազգային առանձնահատկությունները, ստեղծել նոր՝ «սովետական ժողովուրդ»: «Կոմունիզմ կառուցող» մարդու դաստիարակությունը սկսվում էր նախադպրոցական հիմնարկներից եւ շարունակվում ուսումնառության ողջ ընթացքում: Կրթական հաստատություններն իրենց ներքին կյանքով ավելի շատ զորանոցների էին նման: Դպրոց մուտք գործող երեխան առաջին օրից, աշակերտ լինելուց առաջ, պարտադրվում էր դառնալ նաեւ կազմակերպության անդամ, հաջորդաբար՝ հոկտեմբերիկ, պիոներ, կոմերիտական: Միակ՝ կոմունիստական գաղափարախոսությունը պարտադրելու ելակետով էին կազմված բոլոր ուսումնական ծրագրերը, դասագրքերը, ձեռնարկները՝ որքանով որ դա հնարավոր էր անել: Նույնը շարունակվում էր հետագա ուսուցումն ապահովող հիմնարկներում եւ, «քաղպարապմունքների» տեսքով՝ աշխատանքային ամբողջ գործունեության ընթացքում: Դրան էին ծառայում գրականությունը, արվեստը, կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը: Գաղափարախոսական ոլորտը մանրակրկիտ մշակված հսկայածավալ մի համակարգ էր, թերեւս՝ առաջնայինը եւ ամենածախսատարը ռազմականից հետո: Անհատի կողմից այս համակարգերից խուսափելու փորձերը անմիջապես կարող էին ազդել նրա կարիերայի ու աշխատանքային հաջողությունների վրա՝ բանվորականից սկսած մինչեւ արվեստի ու գիտության ասպարեզ: Մնացյալ աշխարհից «երկաթյա վարագույրով» մեկուսացված երկրում այս

ամենը որոշակի կարծրատիպեր էր ձեւավորել, ազդել հասարակության պատկերացումների, հոգեկերտվածքի ու աշխարհայացքի վրա:

Շարժման տարիներին հասարակությունը որոշ չափով թոթափել էր գաղափարախոսական կապանքները եւ անազատության մեջ ձեռք բերած բարդույթները, սակայն դա դեռ հեռու էր լիակատար լինելուց, շատ բան ծանր իներցիայով մնում էր մարդկանց մտածողության եւ հոգեբանության մեջ, եւ դրանց հաղթահարումը նոր իշխանությունից ժամանակ ու ջանքեր էր պահանջելու:

Տնտեսվարման կենտրոնացված պլանային համակարգը ելնում էր կայսրության ամրապնդման տրամաբանությունից եւ ոչ թե առանձին հանրապետությունների ու տարածաշրջանների կարիքներից, հնարավորություններից եւ իրողություններից: Տնտեսական, գիտական եւ այլ առումներով հանրապետությունները հարյուրավոր ու հազարավոր թելերով կապված էին Կենտրոնի եւ միմյանց հետ: Ընդ որում՝ այդ կապերի մի զգալի մասը տնտեսական արդյունավետության առումով ոչ միայն հիմնավորված չէր, այլեւ անտրամաբանական էր ու վնասակար: Միակ բացատրությունը կարող էր լինել այն, որ դրանք հաճախ արհեստականորեն էին ստեղծվել եւ հետապնդում էին ոչ թե տնտեսական արդյունավետության, այլ քաղաքական նպատակ, այն է՝ ունենալ այնպիսի տնտեսական համակարգ, որ որեւէ հանրապետության անկախանալու դեպքում այդ կապերի խզումը նրա համար անմիջապես անհաղթահարելի տնտեսական եւ սոցիալական լրջագույն խնդիրներ առաջացներ:

Հայաստանն ուներ բազմաճյուղ արդյունաբերական համալիր եւ համարվում էր առավելապես արդյունաբերական երկիր: Արդյունաբերական արտադրանքը կազմում էր համախառն ներքին արդյունքի 2/3-ը: Մեծ տեսակարար կշիռ ունեին արդյունաբերական հսկաները, մասնավորապես՝ քիմիական եւ լեռնամետալուրգիական արդյունաբերությունը, որ էներգատար էր, այն դեպքում, երբ հանրապետությունում սպառվող էներգակիրների 95%-ը ներմուծվում էր: Արտադրանքը մեծագույն մասով սպառվում էր հանրապետության շրջանակներից դուրս: Ձեռնարկությունների մի զգալի մասն աշխատում էր միութենական ռազմարդյունաբերական համալիրի համար, նրա պատվերներով: Գործնականում՝ արդյունաբերական ձեռնարկությունները հագեցված էին ոչ ժամանակակից տեխնոլոգիաներով, հաստոցները՝ բարոյապես մաշված, աշխատում էին դրսից բերվող հումքի եւ լրակազմի հիմքի վրա: Հանրապետությունների՝ տնտեսական ինքնուրույնության անցումը եւ շուկայական հարաբերությունների ներդրումը անմրցունակ պետք է դարձնեին արտադրանքի մեծագույն մասը, եթե ոչ ամբողջը: Մեկ անգամ արդեն խզված տնտեսական կապերը դժվար էր լինում կրկին վերականգնել. համապատասխան գործարանները գտնում էին այլ՝ ավելի հուսալի գործընկերներ: Արդեն իսկ շրջափակման հետեւանքով արտադրական կապերի խզման, իսկ Հայկական ատոմակայանի փակումից հետո էլ էներգետիկ անբավարարության պատճառով, Հայաստանի ամբողջ արդյունաբերությունը միանգամից կանգնել էր կազմալուծման վտանգի առջեւ:

Հայաստանյան հասարակությունն անհամաչափ կառուցվածք ուներ: Բարձրագույն եւ այլ ուսումնական հաստատությունները մասնագետներ պատրաստելու պատվերներ էին ստանում ոչ միայն հանրապետության կարիքներից ելնելով: Ամբողջ ծանրաբեռնվածությամբ աշխատող տնտեսության պայմաններում անգամ շատ մասնագետներ հանրապետությունում պարզապես աշխատանք չէին գտնում եւ ստիպված էին լինում տեղափոխվել Խորհրդային Միության այլ շրջաններ: Եւ, այդուամենայնիվ, հանրապետությունում կար մասնագետների մեծ ավելցուկ: Նրանց մի մասն զբաղված էր ոչ մասնագիտական աշխատանքով: Շրջափակման, էներգետիկ խնդիրների, տնտեսական ճգնաժամի խորացմանը զուգընթաց շեշտակի ավելացել էր գործազուրկների բանակը: Այն բազմապատկվել էր երկրաշարժի հետեւանքով արդյունաբերական ձեռնարկությունների ավերման եւ Ադրբեջանից եկած շուրջ 300 հազար՝ հիմնականում քաղաքաբնակ փախստականների համալրմամբ:

Հայաստանում բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական հողերը յոթ անգամ պակաս էին, քան միութենական միջինը: Վարելահողերը խիստ կտրտված էին, հատկապես նախալեռնային եւ լեռնային շրջաններում, կիրառվում էր արհեստական ոռոգում: Ընդ որում, անհասկանալի մի տրամաբանությամբ, ինքնահոս ջրամատակարարման համակարգ ստեղծելու փոխարեն (ինչի համար հանրապետության ռելիեֆային պայմանները լավագույնն են) կառուցվել էին շատ ավելի թանկարժեք եւ հսկայական էլեկտրաէներգիա խլող պոմպակայաններ: Էլեկտրաէներգիայի սողությունը աղետալի վիճակի էր հասցնելու, անհնար դարձնելու տասնյակ հազարավոր հեկտարների մշակությունը: Գյուղատնտեսական արտադրությունը հենված էր խորհրդային տնտեսությունների եւ արդեն դրանցից համարյա չտարբերվող կոլեկտիվ տնտեսությունների վրա՝ իրենց մեծաթիվ գյուղական չինովնիկությամբ: Դրանք, որ ի սկզբանե էլ անարդյունավետ էին, վաղուց արդեն աշխատում էին մեծ վնասներով, պե-

տական բյուջեից գյուղատնտեսությանը հսկայական դոտացիա էր տրվում: Փոքրիկ տնամերձ հողակտորներից մի քանի անգամ ավելի բերք էր ստացվում, քան պետական հողերից:

Ամբողջությամբ պետական բյուջեից սնվող առողջապահության համակարգն իրականացնում էր «անվճար» բժշկական սպասարկում: Սակայն բոլորին էր հայտնի, որ բժշկական սպասարկման ցանկացած տեսակ ուներ իր գործող հստակ ստվերային սակագինը: Անհուսալիորեն հնացած էին բժշկական սարքավորումները, դեղորայքի եւ մասնավորապես՝ որակյալ դեղորայքի, մեծ պակաս կար: Անհրաժեշտ նյութական բազայից զրկված «անվճար» բժշկական սպասարկումը իրականում դարձել էր չարիք:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1990թ. հունիսի 20-ին կայացրած որոշման մեջ հանրապետությունում արձանագրվում էր 230 000 բռնագաղթվածների առկայություն, որոնց մեծ մասն ապահովված չէր մշտական բնակարանով, աշխատանքով, լուծված չէին նախադպրոցական հիմնարկների, բժշկական սպասարկման եւ փոխհատուցման հարցերը: Ընդորում՝ չտեսնելով նաեւ այդ հարցերի լուծման որեւէ հեռանկար, կառավարությունն առաջարկում է նպաստել նրանց «կամավոր վերադարձին իրենց բնակության նախկին վայրերը»[302], ինչը գործնականում անհնար էր կյանքի ապահովության տեսակետից:

1988-ի դեկտեմբերյան հզոր երկրաշարժից հետո երկրի մեկ երրորդն ավերված վիճակում էր, 530 000 մարդ շարունակում էր մնալ անօթեւան: Երկրաշարժից հետո կենտրոնական իշխանությունների տված խոստումը՝ երկու տարվա ընթացքում 10 միլիարդ ռուբլի ներդրում կատարել եւ ավարտել Աղետի գոտու վերականգնումը, շատ հեռու էր ոչ միայն իրականանալուց, այլեւ իրականությունից: Եւ պատճառները բազմաթիվ էին: Կենտրոնը խոստացած տարեկան ֆինանսավորման հազիվ 1/10-րդ մասն էր կարողացել ապահովել: Մինչդեռ շրջափակման հետեւանքով հանրապետության կրած ընդհանուր վնասները, թերեւս, ավելի մեծ թիվ էին կազմում, քան Կենտրոնի կատարված ներդրումները: Տրամադրված միջոցներն էլ մատակարարումների ընդհատումների, հանրապետական իշխանությունների անկարողության ու կաթվածահարության, չինովնիկների չարաշահումների ու կոռումպացվածության պայմաններում խիստ անարդյունավետ էին օգտագործվել: Խորհրդային հանրապետությունները, որոնց վրա բաժան-

[302] ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 789, թ. 28-29:

ված էին Աղետի գոտու վերականգնման աշխատանքները, չնչին տոկոսներով էին կատարում իրենց վրա դրված պարտավորությունները: Այսպես՝ Ադրբեջանը եւ Տաջիկստանը այն կատարել էին 0, Ղազախստանը՝ 0,6, Էստոնիան՝ 4,4, Մոլդովան՝ 6,6, Վրաստանը՝ 6,7 տոկոսով: 1989թ. բնակարանային շինարարությունն իրականացվել էր 14, դպրոցներինը՝ 8, մանկապարտեզներինը՝ 2,5, հիվանդանոցներինը՝ 0 տոկոսով: Թվերը համարյա նույնն էին նաեւ 1990-ի անցած 8 ամիսների կտրվածքով[303]:

Դեռ մինչեւ Ղարաբաղյան շարժման սկիզբը, բնապահպանական խնդիրներին զուգահեռ, լայնորեն քննարկվում էր նաեւ արտագաղթի խնդիրը: Հայաստանի դեպքում բնակչության արտագաղթելու «պոտենցիալն» ավելի մեծ էր մյուս հանրապետությունների համեմատությամբ: Այն կապված էր ժամանակին հայրենադարձվածների ու նրանց սերունդների առկայության[304] եւ արտերկրում շատերի՝ հարազատներ ունենալու հանգամանքի հետ: Անկախ իրենց սոցիալական, կենցաղային եւ այլ պայմաններից, բնակչության մի ոչ փոքր զանգված բնակության համար որպես վայր այլ երկիր ընտրելու բուռն ցանկություն ուներ, եւ դրան խանգարում էր միայն խորհրդային ռեժիմը, նրա «երկաթյա վարագույրը»: «Վերակառուցման» տարիներին պայմանների որոշ մեղմացումը նրանց տվեց այդ հնարավորությունը: Արտագաղթին նպաստեց երկրաշարժի եւ Ադրբեջանից բռնագաղթի հետեւանքով ստեղծված նոր իրավիճակը. մոտ 800.000 մարդ համարյա միաժամանակ հայտնվեց աշխատանքից, օթեւանից, կյանքի բնական պայմաններից ու ռիթմից դուրս շպրտված ծայրահեղ վիճակում: Սրան ավելանում էր խուլ շրջափակման հետեւանքով արագ թափով ծանրացող պարենային եւ էներգետիկ ճգնաժամը, ամենաանհրաժեշտ սննդամթերքի նվազագույն չափաքանակներով քարտային բաշխման համակարգը, բենզինի կիլոմետրանոց հերթերը: 1989-ից արդեն մամուլը գրում էր արտագաղթի խիստ անհանգստացնող չափերի մասին[305]:

[303] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.12.1990:*

[304] *Հետպատերազմյան ու հետագա տարիներին հայրենադարձվածների զգալի մասը բռնաճնշումների էր ենթարկվել, հուսախաբվել, սակայն այլեւս զրկված էր եղել ետ դնալու հնարավորությունից, ինչն այժմ կարող էր իրականացնել:*

[305] *Վերակառուցումից անմիջապես հետո մեծ չափերի հասած արտագաղթի մասին տե՛ս, օրինակ, Պերճ Ջելթունցյանի հրապարակախոսական հոդվածները՝ տպագրված 1988-1989թթ. (Ջելթունցյան Պ., Ցուլերը դեռ այնտեղ են, Երեւան, 1990, էջ 21-24, 81-82 եւ այն): Ավելի ուշ ոմանք ամեն կերպ աշխատում էին*

Նոր իշխանությունն այս ամենի հետ միասին ժառանգում էր տնտեսական շրջափակման մեջ գտնվող երկիր, բացարձակ անիշխանություն, ներքին օղակների պաշտոնյաների կամայականություններ, քրեական տարրերի ակտիվացում, որոնք նաև ներթափանցել էին աշխարհազորային ջոկատներ, կաթվածահար իրավապահ մարմիններ, համատարած ապօրինություն եւ անպատժելիություն, գործող կոմունիստական պաշտոնեության նենգադուլ եւ, որպես այս ամենի հետեւանք՝ մարդկանց անպաշտպանվածության զգացում, սոցիալական պայթյունի եւ քաղաքացիական պատերազմի իրական վտանգ: Եւ վերջապես՝ նոր իշխանությունը ստանում էր Լեռնային Ղարաբաղի չլուծված հարց, նրա բնակչության կյանքի ապահովությունից սկսած մինչեւ ամենատարրական սոցիալական, կենցաղային ու տնտեսական հարցերն առաջնահերթ լուծելու հրամայական անհրաժեշտություն: Հանրապետության ռեսուրսները առնվազն տասն անգամ պակաս էին առկա եւ ուրվագծվող խնդիրները լուծելու եւ մարտահրավերներին դիմակայելու համար:

բ) Կառավարության ձեւավորումը ու առաջին խնդիրները

Գերագույն խորհրդի նախագահի ընտրությամբ իշխանության հարցը վերջնականապես լուծելուց հետո խորհրդարանը ձեռնամուխ եղավ գործադիր իշխանության ձեւավորմանը: Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը, ըստ օրենքի, հրաժարական տվեց, եւ Նախարարների խորհուրդը վայր դրեց իր լիազորությունները: Լեւոն Տեր-Պետրոսյանը կառավարության՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնում առաջարկեց «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ վարչության անդամ Վազգեն Մանուկյանի թեկնածությունը, որը եւ օգոստոսի 13-ին խորհրդարանի կողմից նշանակվեց այդ պաշտոնում:

Խորհրդարանին ներկայացրած՝ Վ. Մանուկյանի քաղաքական ծրագրում շեշտվում էին կառավարության գործունեության մի քանի ելակետա-

արտագաղթի երեւույթի սկզբնավորումը կապել ՀՀՇ իշխանության հետ: Մինչդեռ այս խնդիրն իր դրսեւորման ամենասուր ձեւերով ՀՀՇ-ն ժառանգել էր կոմունիստական շրջանից. 1990թ. ամռան ՕՎԻՐ-ում Հայաստանից արտասահման բնակության մեկնելու շուրջ 600.000 դիմում կար: Բնականաբար, արտագաղթի համար լրացուցիչ խթան էին հանդիսանալու սոցիալական ու տնտեսական անխուսափելի վայրէջքը եւ պարտադրված պատերազմը:

յին դրույթներ. **ա)** աստիճանաբար հասնել հանրապետության տնտեսական ինքնուրույնության ապահովմանը, **բ)** նոր տնտեսության հիմքում դնել արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, **գ)** սոցիալական արդարությունը վերականգնելու համար չգնալ նախորդ ռեժիմի պայմաններում ապօրինություններով հարստություններ դիզած մարդկանց ունեզրկման ճանապարհով («կուլակաթափ չանել»), այլ հնարավորություն տալ, որ նրանք իրենց ունեցած կապիտալը ներդնեն տնտեսության մեջ: Այս խնդիրների լուծումը կառավարության նախագահը հնարավոր էր համարում ժողովրդավարության հաստատման եւ ներքաղաքական կայունության ապահովման դեպքում եւ հատուկ մատնանշում էր. «Ոչ մի բան այնքան չի խանգարում մեր տնտեսության զարգացմանը, որքան անօրինական գործող զինված ջոկատների կողմից ստեղծված ապակայունացումը»[306]:

Վազգեն Մանուկյանին հանձնարարվեց մեկ ամսվա ընթացքում խորհրդարանի քննարկմանը ներկայացնել Նախարարների խորհրդի կազմի մասին առաջարկություններ, իսկ մինչ այդ հին նախարարները պետք է շարունակեին աշխատել: Նոր կառավարության մեջ հաստատվեց 17 նախարարություն եւ 8 պետական կոմիտե[307]:

Կառավարության կազմավորումը ձգձգվեց: ՀԽՍՀ-ն խորհրդարանական հանրապետություն էր, եւ ըստ գործող օրենքի՝ նախարարներին պետք է կառավարության նախագահի ներկայացմամբ նշանակեր Գերագույն խորհուրդը: Վ. Մանուկյանի ներկայացրած թեկնածուները դժվարությամբ էին հավաքում անհրաժեշտ ձայներ: Կառավարության նախագահն իր հերթին սկսեց պնդել իր որոշ թեկնածուների վրա՝ նրանց բազմակի ներկայացնելով խորհրդարան: Դրա հետեւանքով հասունացավ քաղաքական ճգնաժամ: Որպես ելք՝ Նախարարների խորհրդի նախագահը պահանջեց, որ մեկ տարի ժամանակով իրեն լիազորություն տրվի միանձնյա նշանակել եւ ազատել կառավարության անդամներին: Գերագույն խորհուրդը նոյեմբերի 30-ի իր որոշմամբ նրան տվեց այդ լիազորությունը[308]: Այդ պահին կար եւս մի խնդիր. գործող ընտրական օրենսգրքով դժվարությամբ էին ձեւավորվում տեղական ինքնակառավարման մարմինները: Նույն որոշմամբ նաեւ սահմանվեց, որ Նախարարների խորհրդի նախագահությունը Գերագույն խորհրդի նախագահության համաձայնությամբ

[306] *«Հայք», 17.08.1990:*

[307] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1990, 18, հոդվ. 323:*

[308] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1990, 22, հոդվ. 440:*

կարող է լիազոր ներկայացուցիչներ նշանակել շրջաններում եւ քաղաքներում: Դրանով Վ. Մանուկյանը, փաստորեն, ստանում էր հսկայական լիազորություններ եւ վարչական լծակներ:

գ) Տեղական իշխանության մարմինների ընտրությունները

Տեղական՝ քաղաքային, շրջանային, ավանային եւ գյուղական խորհուրդների ընտրությունները նախապես նշանակված էին 1990թ. հուլիսի 8-ին: Ժամանակին սկսվել էին նաեւ առաջադրումները, գրանցվել էին պատգամավորության թեկնածուները: Սակայն նկատի ունենալով, որ Գերագույն խորհրդի ընտրությունները մեծ թվով ընտրատարածքներում չէին ավարտվում պատգամավորի ընտրությամբ, եւ նշանակվում էին կրկնական քվեարկություններ ու կրկնական ընտրություններ, տեղական խորհուրդների պատգամավորների առաջադրումը կասեցվեց, իսկ ընտրությունները հետաձգվեցին եւ նշանակեցին հոկտեմբերի 28-ին: Այդ ընթացքում Գերագույն խորհուրդը նաեւ փոփոխություններ կատարեց համապատասխան օրենքում եւ Սահմանադրության մեջ, ինչը թույլ տվեց տեղական ընտրությունների կազմակերպում նաեւ բազմամանդատ ընտրատարածքներով: Թեկնածուների առաջադրման ժամկետը երկարաձգվեց եւս երկու շաբաթով: Լեռնային Ղարաբաղն ինքնուրույն պետք է որոշեր իր տարածքում տեղական խորհուրդների ընտրությունների հետ կապված հարցերը[309]:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում որոշակի դժվարություններ պետք է առաջանային: Ընտրությունը կայացած համարվելու համար անհրաժեշտ էր ընտրողների ընդհանուր թվի նվազագույնը 50%-ի մասնակցությունը, մինչդեռ բնակչության մեծ մասը 2-3 անգամ, իսկ որոշ տեղերում՝ մինչեւ 5 անգամ մասնակցել էր Գերագույն խորհրդի ընտրություններին եւ հոգնել էր: Հասարակության մի մասն էլ տեղական ընտրություններին շատ ավելի պակաս կարեւորություն էր տալիս՝ համարելով, որ Գերագույն խորհրդի ընտրությամբ եւ կառավարության կազմավորմամբ իշխանության հարցն արդեն վերջնականապես լուծվել է: Սակայն Հայաստանում կատարվածը սովորական իշխանափոխություն չէր, ինչի դեպքում այս տրամաբանությունը, թերեւս, կարող էր աշխատել: Կոմկուսը, կորցնելով հանրապետական իշխանության մարմինները, ամենեւին չէր պատրաստվում նահանջել: Գիտակցելով, որ իրական իշխանությունը տեղերում կուսակցական մարմիններից անցնում էր տեղական խորհուրդների ձեռքը, կոմունիստական նոմենկլատուրայի միջին եւ ստորին օղակների հսկայական շերտերը կորցրածը հետ բերելու համար նետվեցին դեպի իշխանության տեղական մարմինները: Դեռեւս ունենալով իշխանության լծակներ, մասնավորապես՝ գյուղական շրջաններում օգտվելով հասարակական գիտակցության ու մտածելակերպի որոշակի իներցիայից[310], ընտրողների համեմատաբար փոքր թիվ ունեցող ընտրատարածքների հանգամանքից, նրանք հեշտությամբ կարող էին տեղական խորհուրդներում հաղթանակի հասնել: Ինչպես արդեն իսկ ցույց էր տվել փորձը, այդ իշխանությունը նրանք պետք է օգտագործեին առաջին հերթին, սաբոտաժի, նոր իշխանության նկատմամբ հասարակական դժգոհություն հրահրելու համար: Ակնհայտ էր, որ տեղական ընտրություններում հաջողություն չունենալու դեպքում բազմաթիվ օբյեկտիվ դժվարություններին եւ խոչընդոտներին կավելանար եւս մեկը, ինչը կարող էր իրական հարցականի տակ դնել նոր իշխանության ծրագրերը, մինչ այդ ունեցած ձեռքբերումները:

Լուրջ խնդիրներ առաջացան նաեւ տեղական խորհուրդների գործադիր մարմինների ձեւավորման եւ ընտրված պատգամավորների կողմից գործադիր կոմիտեների նախագահների ընտրության հարցերում: Մի կողմից՝ ՀՀՇ-ն միշտ չէ, որ կարողանում էր վճռական մեծամասնություն ստանալ տեղական խորհուրդներում, մյուս կողմից՝ ՀՀՇ-ին ընդդիմադիր ուժերը չէին կարողանում դեռեւս միմյանց հետ համաձայնության գալ եւ անցկացնել իրենց թեկնածուին: Անգամ մայրաքաղաքում այդ հարցը հնարավոր չեղավ լուծել: Ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական առումներով լարված իրավիճակում, հատկապես ձմռան շեմին, տեղական իշխանության մակարդակում առաջացող դատարկությունը կարող էր լուրջ ճախողումների հանգեցնել եւ հասարակական դժգոհությունների տեղիք տալ: Օրենսդիր մարմինն այս դեպքում էլ ստիպված էր գնալ իրավիճակի կարգավորման ժամանակավոր եւ ոչ ստանդարտ քայլի. կառավարության նախագահությանն իրավասություն ընձեռվեց կենտրոնական իշխանության լիազոր ներկայացուցիչներ նշանակել (գործկոմների նախագահների իրավասություններով) այն քաղաքներում եւ շրջաններում, որտեղ ձգձգվում էր խոր-

[309] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 17, հոդվ. 297:*

[310] *Մայրաքաղաքից հեռու գյուղական շրջաններում Շարժման ազդեցությունը, բնականաբար, ավելի թույլ էր, բնակչությունն ավելի քիչ էր տեղեկացված:*

հուրդների կամ նրանց գործադիր մարմինների կազմավորումը: Լիազոր ներկայացուցիչների թեկնածություններին նախապես իր համաձայնությունը պետք է տար Գերագույն խորհրդի նախագահությունը: Սա թույլ տվեց կարճ ժամանակում կազմավորել տեղական իշխանության մարմինները: Երեւանում կենտրոնական իշխանությունների լիազոր ներկայացուցիչ նշանակվեց «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ վարչության անդամ Համբարձում Գալստյանը, որը մի քանի շաբաթ անց, ստանալով քաղաքային խորհրդի պատգամավորների ձայների մեծամասնությունը, ընտրվեց մայրաքաղաքի խորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում:

դ) Բանակի կազմավորման սկիզբը, ներքաղաքական իրավիճակը եւ զարգացումները

Դեպի անկախություն ընթացող եւ ինքնիշխան իրավունքներն ամրապնդող Հայաստանի Հանրապետության համար կարեւորագույն խնդիրներից մեկը, բնականաբար, զինված ուժերի՝ բանակի ստեղծման հարցն էր: Բանակի ստեղծումը ո՛չ հռչակագրերով ու հայտարարություններով, ոչ էլ աշխարհազորային ջոկատների մեխանիկական գումարումով չէր կարող իրականացվել: Ոչ միայն այն պատճառով, որ դա առայժմ կարող էր հանդիպել կենտրոնական իշխանության սուր հակազդեցությանը, այլ նաեւ այն, որ դրա համար բացակայում էր նվազագույն անհրաժեշտ նյութատեխնիկական բազան: Վերջինս ամբողջությամբ գտնվում էր կենտրոնական իշխանության ձեռքում: Այս իրավիճակում հանրապետության քաղաքական ղեկավարությունը որոշում ընդունեց պաշտպանական ու հասարակական կարգի ապահովման գործառույթներն առժամանակ համատեղել եւ զինված ուժերի փաստական ստեղծման առաջին քայլերը կատարել Ներքին գործերի նախարարության շրջանակներում:

Հայաստանի համար խնդիրն ուներ մի քանի յուրահատկություն: Առաջին՝ այն առավել հրատապ էր դառնում՝ կապված Լեռնային Ղարաբաղի իրավիճակի ու հանրապետության սահմանամերձ շրջանները հարձակումներից պաշտպանելու հետ: Երկրորդ՝ հենց այդ անհրաժեշտության բերումով, արդեն իսկ ստեղծվել էին աշխարհազորային ջոկատներ, եւ դրանց գոյության փաստը պետք էր հաշվի առնել: Երրորդ՝ ազգամիջյան հակամարտությունների հողի վրա արդեն վաղուց խորհրդային բանակից հայ զինծառայողները հարկադրված էին լինում թողնել ծառայությունը եւ վերադառնալ հանրապետություն: Զինված ուժերի ստեղծումը պետք է

հենվեր գոյություն ունեցող ջոկատների եւ զորակոչի ենթակա երիտասարդների հիմքի վրա:

Աշխարհազորային ջոկատների օրինականացման եւ պետական մարմինների վերահսկողության տակ առնելու համար որոշակի օրենսդրական ու գործնական քայլեր արվել էին, ինչի շնորհիվ դրանց մեծագույն մասը վերահսկվում էր: 1990-ի հուլիսի 30-ին սկիզբ դրվեց 1114 հոգուց բաղկացած Միլիցիայի օպերատիվ հակազդեցության ջոկատի (ՄՕՀՋ) ձեւավորմանը: Նրա հիմնական գործառույթների մեջ նախատեսված էր նաեւ ՀԽՍՀ սահմանների պաշտպանությունը:

Այս ուղղությամբ կատարված հաջորդ քայլը ՀՀ Ներքին գործերի նախարարությանն առընթեր՝ հանրապետության պաշտպանության եւ հասարակական կարգի պահպանության Հատուկ գնդի ստեղծումն էր: Կառավարության համապատասխան որոշման մասին հայտարարություն հրապարակեց Գերագույն խորհրդի Պաշտպանության եւ ներքին գործերի հանձնաժողովը: Նոր ստորաբաժանումների գործառույթը ձեւակերպված էր հետեւյալ կերպ. **ա)** Հայաստանի սահմանամերձ շրջանների պաշտպանություն, հասարակական կարգի եւ ազգաբնակչության անվտանգության ապահովում, **բ)** բնական աղետների, էկոլոգիական եւ արտադրական խոշոր վթարների դեպքում փրկարար աշխատանքների եւ ազգաբնակչության էվակուացիայի կազմակերպում, **գ)** կազմակերպված հանցագործության կանխարգելում եւ կանխում: Ստորաբաժանումները պետք է համալրվեին կամավորական հիմունքներով՝ ինքնապաշտպանական եւ աշխարհազորային ջոկատների անդամներով, նրանք պետք է ունենային հատուկ համազգեստ, տարբերանշաններ եւ վկայականներ[311]: Հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ Հատուկ գնդի շքերթը եւ երդման արարողությունը[312]: Գնդի

---

[311] *Տե՛ս «Հայք», 24.08.1990:*

[312] *Զինվորագրվողները երդվում էին.*

«Ես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիս, զորագրվելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության եւ հասարակական կարգի պահպանության հատուկ ստորաբաժանումների շարքերը, Աստծո եւ ազգիս առջեւ երդվում եմ

- անմնացորդ նվիրվել Հայրենիքիս պաշտպանության եւ վերածնման սուրբ գործին

- դառնալ նվիրյալ զինվորը Հայաստանի վերականգնվող պետականության:

Երդվում եմ մինչեւ վերջ հավատարիմ մնալ իմ հայրենիքին, լինել ազնիվ, կարգապահ.

- չխախտել Հայաստանի սահմանադրությունը եւ օրենքները.

- պահպանել պետական եւ ծառայական գաղտնիքները.

մարտիկներին օրհնեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Գունդը ստացավ նաեւ իր սպառազինությունը, ինչը, որպես հասարակական կարգի պահպանությանն ուղված «աջակցություն» (2000 «Կալաշնիկով»-ինքնաձիգ), հանրապետության ղեկավարը կարողացել էր ստանալ ԽՍՀՄ ՆԳ նախարար Բակատինի հետ օգոստոսին կայացած հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությամբ[313]: Սա նաեւ հայկական բանակի փաստական կազմավորման սկիզբն էր, նրա ծնունդը:

Նախնական քայլեր էին արվել նաեւ զինակոչիկների ծառայության կազմակերպման հետ կապված: Դեռ մայիսի 3-ին, կոմունիստական իշխանության պայմաններում, ՀՀԾ-ի ճնշմամբ, Գերագույն խորհուրդը կասեցրել էր հանրապետությունից գարնանային զորակոչը, ինչպես նաեւ հանձնարարել զինվորական ծառայությունը հարկադրաբար թողած զինվորների հետագա ծառայության չկրած մասը կազմակերպել հանրապետության ներսում տեղակայված խորհրդային բանակի զինվորական ստորաբաժանումներում: Սակայն այդ որոշման երկրորդ մասը կոմունիստական իշխանության գործադիր մարմինների կողմից չէր իրականացվել: Գերագույն խորհուրդն այժմ կրկին հանձնարարեց կառավարությանը եւ զինվորական կոմիսարիատին՝ երկու ամսվա ընթացքում լուծել այդ հարցը: Գերագույն խորհրդի հոկտեմբերի 17-ին կայացրած որոշմամբ կասեցվեց համընդհանուր զինապարտության մասին ԽՍՀՄ օրենքի գործողությունը հանրապետության տարածքում[314]: Հերթական զորակոչի ենթակա անձինք իրենց ծառայությունը պետք է անցնեին դարձյալ խորհրդային զորքերի կազմում, բայց Հայաստանի տարածքում տեղակայված զորամիավորումներում: Զորակոչիկներն այլ տեղերում կարող էին ծառայել միայն իրենց ցանկությամբ եւ Հայաստանի կառավարության կողմից հաս-

- *չարաշավորել հայրենիքի զինվորի անունս եւ ընկերներիս պատիվը անվայել վարքով եւ անկարգապահությամբ.*
- *չծառայեցնել զենքն անձնական շահադիտական նպատակների համար.*
- *հանուն Հայաստանի Հանրապետության չխնայել կյանքս:*

Ու թե գրժեմ երդումս, թող որ ինձ պատժեն Հայաստանի Հանրապետության օրենքների ամբողջ խստությամբ» («Հայաստանի Հանրապետություն» 09.10.1990):

[313] *Տե՛ս վերեւում, ծթ. 272:*

[314] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 20, հոդվ. 368:*

տատված կարգով[315]: Այսինքն՝ Հայաստանի իշխանությունները բանակի հարցում չընտրեցին պոպուլիստական, դեռեւս լրիվ չհասունացած իրավիճակում անզգույշ ու վտանգավոր որոշումներ ընդունելու ճանապարհը, ինչը որոշ ընդդիմադիր ուժեր մեծ աղմուկով պահանջում էին նրանցից[316]: Հանրապետության տարածքում տեղակայված ԽՍՀՄ զինված ուժերի ստորաբաժանումներում հայաստանցի զինակոչիկների ծառայության կազմակերպումը այդ զորամասերն, ըստ էության, վերածելու էին հայկական զորամասերի՝ օժտված համապատասխան զինվածությամբ, հանդերձանքով եւ անհրաժեշտ այլ պայմաններով: Հակառակ դեպքում անհայտ էր, թե ինչով եւ ինչպես պետք է արտահայտվեր հավաքված հազարավոր զինակոչիկների ծառայությունն առանց դրա համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի:

Չնայած նմանօրինակ որոշումներ էին ընդունել նաեւ մի քանի այլ հանրապետություններ, սակայն այնպես չէ, որ Մոսկվան հաշտվում էր դրա հետ: ԽՍՀՄ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Մ. Մոյիսեեւի՝ 1991թ. մայիսի 24-ի թվակիր նամակը Լեւոն Տեր-Պետրոսյանին, արձանագրելով, որ արդեն երկու անգամ Հայաստանից զորակոչ չի կատարվել խորհրդային բանակ, սպառնում է, թե՝ «Գլխավոր Շտաբն իրեն իրավունք է վերապահում, առանց բացառության, ցանկացած միջոց կիրառելու՝ ԽՍՀՄ կառավարության որոշումն անվերապահորեն կատարելու համար» [317]: Նոր իշխանությունը կարողանում էր դիմակայել այսօրինակ սպառնալիքներին:

Առաջնահերթ խնդիրներից էր շարունակում մնալ ներքաղաքական իրավիճակի կայունացման ապահովումը: Զգալի քանակությամբ զենք կար առանձին մարդկանց եւ խմբերի ձեռքին: Միլիցիան, որ վերջին տարինե-

[315] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 20, հոդվ. 369: Խորհրդային բանակում չծառայելու կամ միայն իրենց հանրապետության տարածքում ծառայելու մասին որոշումներ էին կայացրել նաեւ Բալթյան հանրապետությունները, Վրաստանը, Մոլդովան:*

[316] *Որոշ ուժեր, մասնավորապես՝ ԱԻՄ-ը Պ. Հայրիկյանի գլխավորությամբ, մեղադրում էր Հայաստանի իշխանություններին բանակի ստեղծման գործում հապաղելու մեջ: Սակայն պատմական իրողություն է, որ Հայաստանը ԽՍՀՄ կազմում առաջինն էր, որ, ի դեմս Հատուկ գնդի, փաստորեն՝ հիմք դրեց իր զինված ուժերի ստեղծմանը, իսկ քայլի օրինական լինելը հիմք եւ հնարավորություն տվեց նոր կազմավորման համար լրացուցիչ զենք ու զինամթերք ստանալ կենտրոնից:*

[317] *Նամակի ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 07/24.05.1991, հայերեն թարգմանությունը՝ «Գիտնականը եւ Նախագահը...», էջ 517-518:*

ին անգործության էր մատնվել, բարոյալքվել, դժվարությամբ էր կարողանում ուշքի գալ եւ ապահովել հասարակական կարգի պահպանության իր դերը: Շարունակում էին հրատապ խնդիրներից մնալ հանրապետության սահմանների պաշտպանության եւ Ղարաբաղին օգնելու հարցերը: ՀԱԲ-ի կազմաց՝ ոումից հետո վերացել էր խոշոր մասշտաբի ապակայունացնող գործողությունների, քաղաքացիական կռիվներ հրահրելու վտանգը: Սակայն ինչպես նրա կազմի մեջ մտնող, այնպես էլ մի քանի այլ զինված խմբեր, չենթարկվելով իշխանության մարմիններին, դեռ շարունակում էին գոյատեւել ու մանր սադրանքներ հրահրել: Հոկտեմբերի 17-ին կրակոցներ արձակվեցին Գերագույն խորհրդի շենքի վրա, կրակոցներ եղան նաեւ Նախարարների խորհրդի եւ կառավարական ամառանոցների ուղղությամբ[318]: Գիշերները կրակոցներ էին հնչում մայրաքաղաքի փողոցներում եւ հատկապես արվարձաններում: Շարունակվում էին սադրիչ գործողությունները խորհրդային բանակային ստորաբաժանումների նկատմամբ: Երկրապահ ջոկատների օգնությամբ գտնվեց եւ ետ վերադարձվեց նրանցից գողացված մի հրանոթ: Նույն կերպ՝ միլիցիայի աշխատակիցները գտան եւ վերադարձրին Բալահովիտ գյուղից զինամթերք տեղափոխող մեքենայից առեւանգված մեծ քանակի զենքը: Անվտանգ չէին հասարակական կարգի պահպանման այսօրինակ գործողությունները. զինված մի խմբի հետ բանակցելու նպատակով նրանց մոտեցած ՆԳ բաժնի պետն սպանվեց, նրա տեղակալը ծանր վիրավորվեց: Զինված խմբերը զբաղվում էին նաեւ ամենաստորակարգ թալանով. Աբովյան քաղաքում նոր ստացված մեքենաների առեւանգումը կանխվեց միայն ՀՀՇ-ի տեղական կազմակերպության եւ Ներքին գործերի աշխատակիցների համատեղ ջանքերով[319]: Երեւանի կենտրոնական հանրախանութում հայտնաբերվեց պայթուցիկ նյութ՝ զգուշացնող գրությամբ. «Եթե մինչեւ փետրվարի 25-ը ազատ չարձակվեն ՀԱԲ-ի ձերբակալված ղեկավարները, ապա նման պայթուցիկներ կհայտնվեն նաեւ այլ վայրերում»[320]:

Իրավիճակի ապակայունացման փորձեր էին լինում նաեւ իշխանության միջին եւ ստորին օղակների կողմից՝ նոր օրենքները եւ որոշումները բոյկոտելու, աշխատանքները սաբոտաժի ենթարկելու ձեւով: Առաջին անհրաժեշտության ապրանքների առանց այն էլ սուղ պաշարների պայ-

[318] *«Հայաստանի Հանրապետություն» 28.10.1990:*
[319] *«Հայք», 17.10.1990, 31.10.1990:*
[320] *«Հայք», 12.02.1991:*

մաններում հասարակական դժգոհության տեղիք էին տալիս առեւտրի համակարգում չարաշահումները: Այս ասպարեզում եւս վիճակը շտկելու անհրաժեշտության բերումով ՀՀՇ-ն ստիպված էր դիմել քաղաքական կազմակերպությանը ոչ բնորոշ ժամանակավոր միջոցառումների: Իրավապահ մարմինների հետ համատեղ ամենօրյա վերահսկողություն հաստատվեց առեւտրի բնագավառում. հայտնաբերվեց եւ ազատ վաճառքի հանվեց պահեստներում եւ խանութներում թաքցված մեծ քանակությամբ ապրանք: Եւ այնուամենայնիվ, դրանց քանակությունը բավարար չէր պահանջարկը բավարարելու համար: Կառավարությունը շուտով ստիպված էր որոշ մթերքների համար (կարագ, ձավարեղեն, պանիր, ծխախոտ) մտցնել նորմավորված, կտրոնային վաճառքի համակարգ: Կտրոններ մտցվեցին նաեւ բենզինի համար: Սկսեցին աճել հացի հերթերը: Միութենական ֆոնդերից ստացվող ապրանքների մեծածախ գների բարձրացումը հանրապետությանը կանգնեցրեց գների եւ, առաջին հերթին հացի գնի ազատականացման անհրաժեշտության առջեւ: Արդեն անխուսափելի այս քայլը ավելի էր սրելու սոցիալական իրավիճակը:

ե) Ինքնիշխանության ամրապնդման օրենսդրական եւ գործնական քայլերը

Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից անմիջապես հետո, դրա հիման վրա ընդունվեց երկու օրենք: Դրանցից առաջինով Հայկական ԽՍՀ-ն պաշտոնապես վերանվանվեց «Հայաստանի Հանրապետություն», կրճատ՝ «Հայաստան», իսկ գործող Գերագույն խորհուրդը համարվեց առաջին գումարման Գերագույն խորհուրդ[321]: Սրանով իրավական առումով սահմանազատում կատարվեց խորհրդային, կոմունիստական շրջանից: Բնական է, որ քննարկման առարկա դարձան նաեւ նոր պետության խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի եւ օրհներգի հարցերը: Առանձին օրենքով Եռագույն (կարմիր, կապույտ, նարնջագույն) դրոշը ընդունվեց որպես պետական դրոշ[322]: Զինանշանի եւ օրհներգի հարցում դժվար եղավ ընդհանուր համաձայնության գալ: Որոշվեց կազմակերպել մրցույթ եւ երեք ամսվա ընթացքում արդյունքները ներկայացնել խորհրդարանի քննարկմանը: Ավելի ուշ՝ որպես զինանշան ընդունվեց 1918-20թթ. Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ ոճավորված տարբե-

[321] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 16, հոդվ. 257:*
[322] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 16, հոդվ. 258:*

րակով, ինչպես նաեւ «Մեր հայրենիք» օրիներգը՝ բնագրային որոշ փոփոխություններով[323]:

Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումներից մեկը թերեւս ոչ այնքան գործնական, որքան բարոյահոգեբանական նշանակություն ուներ: 1988-ի նոյեմբերին Շարժումն արձանագրել էր իր բարձրակետերից եւ կարեւորագույն ձեռքբերումներից մեկը. ի հեճուկս երկրի ղեկավարության հարուցած խոչընդոտների, նոյեմբերի 24-ին կարողացել էր սեփական նախաձեռնությամբ Օպերային թատրոնի շենքում Գերագույն խորհրդի նիստ հրավիրել, որը եւ կարեւոր որոշումներ էր ընդունել: Դրանից անմիջապես հետո Երեւանում արտակարգ իրավիճակ եւ պարետային ժամ էր մտցվել, իսկ Գերագույն խորհրդի նախագահությունը հաջորդ օրը անօրինական էր հայտարարել այդ նիստն ու նրա որոշումները: Նախագահության այս վերջին որոշումը չեղյալ հայտարարվեց, եւ 1988-ի նոյեմբերի 24-ի նիստում ընդունված փաստաթղթերը համարվեցին օրինական[324]:

ՀԽՍՀ գործող Սահմանադրությունը չեղյալ չհայտարարվեց, սակայն Անկախության հռչակագրի վերջին դրույթը նախատեսում էր, որ այն հիմք է ծառայելու Սահմանադրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենադրության մշակման համար:

Գերագույն խորհուրդը հրաժարվեց նաեւ «Խորհրդային Հայաստան» օրաթերթից, որը ԳԽ-ի, միաժամանակ նաեւ Կոմունիստական կուսակցության կենտկոմի օրգանն էր[325]: Հիմնվեց նոր օրաթերթ՝ «Հայաստանի Հանրապետություն» անվանմամբ, որի գլխավոր խմբագիր նշանակվեց պատգամավոր Այդին Մորիկյանը[326]:

Ինքնիշխանության հաստատման կարեւոր քայլերից էր «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենքի ընդունումը: Հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների եւ կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի Հանրապետության սեփա-

[323] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 13, հոդվ. 261:*

[324] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 19, հոդվ. 364:*

[325] *Հայաստանի կոմկուսի կենտկոմն, իր հերթին, որպես մամուլի իր կենտրոնական օրգան օգոստոսի 28-ից սկսեց հրատարակվել «Հայաստան» թերթը:*

[326] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 17, հոդվ. 304:*

կանություն: Դրա տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքը վերապահվեց կառավարությանը՝ սահմանելով, որ այդ ունեցվածքի տնօրինումը իրականացնելիս պետք է ելնել հանրապետության տնտեսական ինքնուրույնության հաստատման շահերից[327]:

Խորհրդային Միությունում դատախազությունը կենտրոնացված համակարգերից մեկն էր: Հանրապետության դատախազը նշանակվում էր ԽՍՀՄ գլխավոր դատախազի կողմից եւ հաշվետու էր նրան: Դա ամրագրված էր նաեւ հանրապետությունների սահմանադրություններում: Փաստորեն՝ ամբողջությամբ համակարգը գտնվում էր Կենտրոնի անմիջական ենթակայության տակ: Համապատասխան սահմանադրական փոփոխությունները, որոնք պետք է ապահովեին այս վիճակի վերացումը եւ դատախազության ենթարկումը հանրապետության իշխանությանը, ընդունվեցին նոյեմբերի 13-ին[328]: Հանրապետության դատախազը, ըստ այդ փոփոխությունների, կոչվեց հանրապետության գլխավոր դատախազ: Այժմ նա պետք է նշանակվեր հանրապետության Գերագույն խորհրդի կողմից, պատասխանատու էր նրա առջեւ եւ հաշվետու էր նրան: Հանրապետության գլխավոր դատախազ նշանակվեց Արտավազդ Գեւորգյանը: Գերագույն դատարանի նախագահ ընտրվեց Տարիել Բարսեղյանը:

Այն հանգամանքը, որ ՀԽՍՀ Սահմանադրությունը շարունակում էր գործել, մյուս կողմից էլ՝ օրենքները կարող էին եւ պետք է ընդունվեին Անկախության հռչակագրի դրույթներից ելնելով, լուրջ դժվարություններ էր ստեղծում: Ամեն անգամ անհրաժեշտ էր լինում սահմանադրական փոփոխություններ կատարել: Այս վիճակը վերացնելու համար ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքը, որով նախատեսվում էր մինչեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը դադարեցնել գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին[329]: Ճիշտ է՝ այս դեպքում եւս խորհրդային Սահմանադրությունը շարունակելու էր խնդիրներ հարուցել օրենադրական գործունեության եւ նոր օրենադրական դաշտի կազմավորման ընթացքում, բայց նաեւ սա իրավաբանական պրակտիկայում հաճախ չհանդիպող, գտնված

[327] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 17, հոդվ. 315:*

[328] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 21, հոդվ. 422:*

[329] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 23, հոդվ. 456:*

միակ իրավական տարբերակն էր: Արմատական լուծումը կլիներ նոր Սահմանադրության ընդունումը: Այս ճանապարհով գնացին մյուս հանրապետությունները՝ հապճեպ ընդունելով նոր սահմանադրություններ: Ապագան ցույց տվեց, որ դա հեշտ, բայց անարդյունավետ ճանապարհ էր: Հապճեպ ընդունված սահմանադրությունները այդ հանրապետություններում շատ ավելի մեծ խնդիրներ ստեղծեցին հետագա տարիների համար, մինչդեռ Հայաստանում համբերատար եւ հետեւողական աշխատանքը, ինչպես նաեւ սահմանադրորեն կարգավորվող հարցերի գործարկման մի քանի տարվա փորձը նկատի ունենալը, զերծ պահեցին նոր Սահմանադրությունը շտապողականության անխուսափելի հետեւանքներից[330]:

Իսկ նոր Սահմանադրություն ունենալու հարցը դրված էր ի սկզբանե: Գերագույն խորհրդի որոշմամբ 1990թ. նոյեմբերի 5-ին կազմվեց Սահմանադրական հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին տարբեր քաղաքական ուղղություններ ներկայացնող պատգամավորներ, գիտնականներ, ինչպես նաեւ իրավաբան մասնագետներ՝ ընդամենը 20 հոգի[331]: Այն պետք է

[330] *Անկախ փորձագետներն արձանագրում են, որ նորանկախ պետությունները ոգեւորության ալիքի վրա, շտապողականություն ցուցաբերելով, ձգտեցին «իրենց ստեղծած իշխանական կառույցների համար ամենակարճ ժամկետներում ձեռք բերել սահմանադրական հիմքեր», ինչը անխուսափելիորեն հանգեցրեց «չարգարացված նորարարությունների», այլ երկրների պրակտիկայից նրանց առանձին ինստիտուտների անքննադատ փոխառությունների»: Հայաստանն այս բնագավառում մյուսներից առանձնացվում է իր «հարաբերականորեն դանդաղեցված տեմպերով» (տե՛ս Армения: Проблемы, с. 11-12): Հեղինակը սխալմամբ դրա պատճառը համարում է հակամարտության մեջ նրա ներքաշված լինելը, իրականում դա լիովին արդարացված քաղաքական զգուշավորության եւ քաղաքական պատասխանատվության արդարացված դրսեւորում էր:*

[331] *Տեր-Պետրոսյան Լեւոն Հակոբի (հանձնաժողովի նախագահ), հանձնաժողովի անդամներ. Ավագյան Գրիգոր Երեմի, Բարսեղյան Տարիել Կարապետի, Գեւորգյան Արտավազդ Աշոտի, Գեւորգյան Համլետ Ամրակումի, եգորյան Էդուարդ Շմավոնի, Զուռնաչյան Վարդան Արտուշի, Խաչատրյան Հրանտ Հրաչի, Խաչատրյան Մհեր Գվիդոնի, Հովհաննիսյան Վոլոդյա Համբարձումի, Մովսիսյան Յուրի Թադեւոսի, Նավասարդյան Աշոտ Յոլակի, Ոսկանյան Աշոտ Վալինակի, Պապյան Ռաֆայել Աշոտի, Պետրոսյան Ռաֆիկ Գարեգինի, Սադոյան Արշակ Ավետիսի, Սահակյան Արա Հակոբի, Սարգսյան Յուրի Լեւոնի, Ստեփանյան Վահե Վարդանի, Քոչարյան Նսարը Միքայելի: Ավելի ուշ՝ 1994թ., երբ ԳԽ-ը սահմանադրության նախագծերից մեկը ընտրեց որպես հիմք՝ լրամշակման համար, Սահմանադրական հանձնաժողովը լրացվեց նոր անդամներով, իսկ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը ընտրվեց հանձնաժողովի համանախագահ:*

մշակեր նոր Սահմանադրության նախագիծ, ինչպես նաեւ այն օրենքների նախագծերը, որոնցով պարբերաբար անհրաժեշտ էր լինում փոփոխություններ մտցնել գործող Սահմանադրության մեջ: Սահմանադրական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը[332]:

Որպես ինքնիշխան պետություն՝ Հայաստանի գործնական քայլերից մեկն էլ առաջին համընդհանուր ներման իրականացումն էր, որ Անկախության հռչակագրի առիթով կատարվեց Գերագույն խորհրդի նոյեմբերի 27-ի որոշմամբ[333]:

Մոսկվան, բնականաբար, չէր հաշտվում հանրապետությունների ինքնիշխանության ընդլայնման ծավալված գործընթացի հետ եւ ամեն կերպ աշխատում էր խոչընդոտել այն իր ձեռքի տակ եղած լծակներով: Այդպիսի մի քայլ էր ԽՍՀՄ նախագահի՝ 1991թ. հունվարի 22-ի հրամանագիրը՝ 100 եւ 50 ռուբլիանոց թղթադրամները կարճ ժամանակում եւ սահմանափակ քանակով նոր նմուշի թղթադրամներով փոխանակելու մասին[334]: Ըստ էության, դա ուղղված էր հանրապետությունների տնտեսական ինքնուրույնության եւ, մասնավորապես՝ տնտեսության բնագավառում արմատական տնտեսական բարեփոխումների (սեփականաշնորհման) դեմ: Փոխանակման համար սահմանվել էր եռօրյա ժամկետ: Ընդ որում՝ դրա մասին հանրապետությունները նախապես տեղյակ չէին պահվել: Գտնվելով առայժմ ԽՍՀՄ կազմում եւ ռուբլու գոտում՝ Հայաստանը ստիպված էր կատարել սույն հրամանագիրը: Սակայն Գերագույն խորհրդի ընդունած համապատասխան որոշմամբ երեք օրով երկարացվեց փոխանակման ժամկետը[335], իսկ մեկ անձի համար սահմանված 1000 ռուբլու փոխարեն հանձնարարվեց փոխանակման չափը հասցնել մինչեւ 10000 ռուբլու:

[332] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 21, հոդվ. 404:*

[333] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 22, հոդվ. 438:*

[334] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1991, 5, հոդվ. 117:*

[335] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 2, հոդվ. 26: ԽՍՀՄ նախագահի նույն հրամանագրով նաեւ սառեցվում էին խնայբանկում քաղաքացիների դրամական ավանդները, նրանք այժմ բանկից կարող էին ստանալ ամսական ոչ ավելի, քան 500 ռուբլի: Խնայբանկում քաղաքացիների ավանդների վրա դրված այս կալանքն է, որ դարձավ բնակչության ավանդների կորստյան հիմնական պատճառը, ինչի համար հետագայում հանիրավի մեղադրվում էին կոմունիստներին հաջորդած ժողովրդավարական իշխանությունները:*

Հանրապետության ինքնիշխան իրավունքները խախտող հրամանագրերն ու որոշումները ավելի հաճախ ուղղակի կասեցվում էին: Այսպես, դեկտեմբերի 29-ին ստորագրվել էր ԽՍՀՄ ՆԳ եւ պաշտպանության նախարարների համատեղ մի հրամանագիր, ըստ որի՝ 1991թ. փետրվարի 1-ից «երկրի խոշոր քաղաքների եւ այլ բնակավայրերի փողոցներում կարգուկանոն հաստատելու նպատակով» համատեղ պարեկություն էր նախատեսվում: ՀՀ ԳԽ նախագահությունը 1991թ. հունվարի 31-ի որոշմամբ պարզապես կասեցրեց հանրապետության տարածքում այդ հրամանի գործողությունը՝ որպես հակասահմանադրական եւ հանրապետության սոցիալ-քաղաքական իրադրության կայունացման գործընթացը վտանգող ակտ[336]:

զ) Տնտեսական բարեփոխումների սկիզբը, հողի սեփականաշնորհումը, տնտեսության վերակենդանացմանն ուղղված քայլեր

Կոմունիստական գաղափարախոսականացված հասարակարգի հիմնական հենասյունը, արտադրության միջոցների պետական սեփականությունն էր: Մասնավոր սեփականությունը որպես այդպիսին, խստորեն արգելված էր: Նույն կերպ արգելված էր անհատական տնտեսական գործունեություն ծավալելու որեւէ ամենաչնչին ազատություն: Արտադրության բոլոր միջոցները պետական սեփականություն էին, արտադրությունը՝ պլանային, գները՝ պետականորեն կարգավորվող, պարտադրվող: Համարվում էր, որ դա է համակարգի հենասյունը, եւ որ այս ասպարեզում որեւէ շեղում կքայքայի տվյալ քաղաքական համակարգի հիմքերը: Մյուս կողմից, սակայն, վաղուց ակնհայտ էր, որ այդ հենասյունը անխաթար պահելը բերում է երկրի տնտեսական քայքայմանը, որն անխուսափելիորեն հանգեցնելու էր նրա քաղաքական կործանմանը: Հատկապես հողի նկատմամբ մասնավոր սեփականության գաղափարը սրբապղծության նման մի բան էր համարվում: Եւ դա ոչ միայն խորհրդային համակարգի

[336] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 2, հոդվ. 42: Այսօրինակ հրամանը անընդունելի համարեց նաեւ Ռուսաստանը, որի ԳԽ-ը հունվարի 31-ի իր որոշմամբ արձանագրելով, որ այն հակասում է ԽՍՀՄ եւ ՌՍՖՍՀ սահմանադրություններին եւ ՌՍՖՍՀ ժողովրդական պատգամավորների համագումարի որոշումներին, դիմեց ԽՍՀՄ նախագահին՝ կասեցնել այդ հրամանի գործողությունը (տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ, 1991, 6, հոդվ. 84:*

ջատագովների կողմից, այլ, տասնամյակների տեւական քարոզչության շնորհիվ, նաեւ հասարակության խեղված պատկերացումներում: «Վերակառուցման» տարիներին օրենքների որոշ փոփոխություններ արվեցին, ինչի նպատակն էր տնտեսության աշխուժացում առաջացնել: Արդյունաբերության ոլորտում թույլ տրվեց կոոպերատիվների կազմակերպում, գյուղատնտեսության մեջ թույլատրվեց խիստ սահմանափակ չափերով հողի վարձակալությունը: Չափազանց կոսմետիկ լինելով՝ այդ փոփոխությունները էական արդյունքների չհանգեցրին:

ՀՀԾ-ի ծրագրային դրույթներից մեկը սեփականության ձեւերի բազմազանության ապահովումն էր: Իսկ նրա նախընտրական ծրագրում էլ նախատեսվում էր ազատ ձեռներեցության համակարգի ստեղծում՝ արտադրության միջոցների մասնավորեցում եւ, առաջին հերթին՝ հողի սեփականաշնորհում: Այն Հայաստանի անկախության մասին հռչակագրում ձեւակերպվեց հետեւյալ կերպ. «Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձեւության հիման վրա որոշում է իր տնտեսվարման սկզբունքները եւ կարգը»:

Հայաստանը իրավականորեն դեռ շարունակում էր մնալ ԽՍՀՄ կազմում, սակայն նոր ժողովրդավարական իշխանության հաստատումով փաստական առումով իրեն պահում էր որպես ինքնիշխան պետություն: Եւ դա, առաջին հերթին, արտահայտվում էր տնտեսական ասպարեզում Անկախության հռչակագրի համապատասխան դրույթների հետեւողական իրականացման մեջ: Ընդունվեցին մի քանի կարեւոր օրենքներ եւ որոշումներ: «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» 1990թ. սեպտեմբերի 10-ին ընդունված օրենքով Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հայտարարվեց նրա տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների եւ կազմակերպությունների ունեցվածքը: Դրանց տիրապետման, օգտագործման ու տնօրինման իրավունքը վերապահվեց հանրապետության կառավարությանը: Քիչ անց՝ հոկտեմբերի 31-ին, «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքով հաստատվեց սեփականության բազմաձեւություն՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետական եւ խառը[337]: Այսպիսով՝ հաստատվեց, օրինականացվեց մասնավոր սեփականության իրավունքը: Քաղաքացու սեփականության օբյեկտ կարող էին լինել արտադրական եւ ոչ արտադրական

[337] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 20, հոդվ. 383:*

ձեռնարկություններ, շենքեր, շինություններ, հողը, փոխադրամիջոցներ եւ այլն: Սեփականության բոլոր ձեւերի զարգացման համար սահմանվեց հավասար իրավական պաշտպանություն: Սա արմատական ու հեղափոխական, ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական մեծ նշանակություն ունեցող քայլ էր. որքան էլ արտաքուստ տնտեսական հարց՝ այն առաջին ամենաարմատական, իրոք հեղափոխական քայլն էր, ինչով ոչնչացվում, վերացվում էր խորհրդային քաղաքական համակարգի տնտեսական հիմքը՝ արտադրության միջոցների պետական սեփականությունը: Այս հիմքի վրա պետք է իրականացվեր տնտեսական համակարգի հիմնովին վերափոխումը, նրա ազատականացումը, ազատ շուկայական հարաբերությունների հաստատումը, ժողովրդավարական նորմերի համալիր ներդրումն ու ապահովումը:

Օրենսդրական հաջորդ ակտը Գերագույն խորհրդի որոշումն էր՝ «Սեփականաշնորհման հիմունքների մասին»: Այն սեփականաշնորհումը համարում էր մի միջոցառում, որի նպատակն է հասարակական տնտեսության մեջ պետական սեփականության դերի արմատական կրճատումը: Այդ սեփականությունը, մասնակի փոխհատուցման կամ վաճառքի միջոցով պետք է փոխանցվեր քաղաքացիներին, նրանց խմբերին, ոչ պետական իրավաբանական անձանց: Սեփականաշնորհման նպատակն էր ընդլայնել քաղաքացիների ազատությունները, ձեւավորել շուկայական տնտեսություն, բարձրացնել տնտեսության արդյունավետությունը[338]:

Ակնհայտ էր, որ հսկայական վնասներով, պետական դոտացիաներով աշխատող գյուղատնտեսությունը արմատական բարեփոխումների չենթարկելու դեպքում ոչ միայն ավելի ու ավելի ծանր բեռ էր դառնալու պետական բյուջեի վրա, այլեւ պարզապես արագացող ընթացքով քայքայվելու ու կազմալուծվելու էր[339]: Տնտեսական շրջափակման եւ սկսված ու

[338] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 3, հոդվ. 50:*

[339] *Անարդյունավետությունը եւ վնասաբերությունը ունեին նաեւ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ մի շարք այլ պատճառներ: Հանրապետությունը սակավահող էր, այն գյուղական բնակչության միայն մի մասի համար կարող էր աշխատանք ապահովել, եւ աշխատատեղեր ավելացնելու համար խորհրդային եւ կոլեկտիվ տնտեսություններում ստեղծվել էր հաստիքների ուռճացված մի համակարգ: Դրա հետ միասին արտադրանքի ինքնարժեքի վրա ավելի շատ ազդում էին վաղուց (եւ ոչ միայն գյուղատնտեսության մեջ) ավանդույթ դարձած համատարած գողությունը, չարաշահումները, հողի եւ տեխնիկայի նկատմամբ անխնամ վերաբերմունքը, վառելանյութի վատնումը եւ այլն:*

խորացող էներգետիկ ճգնաժամի պայմաններում այդ ընթացքն ավելի էր արագանալու[340]: Գյուղատնտեսության մեջ նախատեսվող արմատական վերափոխումը նպատակ ուներ հնարավորինս կանխել այդ ընթացքը, կարեւորագույն այս բնագավառը դնել առողջ տնտեսական հարաբերությունների վրա, արտադրողի շահագրգռվածության բարձրացման միջոցով ոչ միայն փրկել այն, այլեւ դրանով ստեղծել սպասվող ընդհանուր դժվարությունները հաղթահարելու ներքին ռեսուրս:

Բարեփոխումն իր մեջ նաեւ մեծ ռիսկ էր պարունակում: Նախ եւ առաջ՝ այն նոր մի հարված էր լինելու փլուզվող, բայց դեռեւս գոյատեւող կոմունիստական խորհրդային համակարգի հիմքերին, ուստիեւ չէր կարող չհարուցել թե՛ Մոսկվայի, թե՛ տեղի կոմունիստական նոմենկլատուրայի դժգոհությունն ու դիմադրությունը: Երկրորդ՝ չկար հողի սեփականաշնորհման նախադեպ մի օրինակ ո՛չ ԽՍՀՄ-ում, ո՛չ Արեւելյան Եւրոպայի երկրներում, որի փորձը հնարավոր լիներ հաշվի առնել կամ օգտագործել: Այս բնագավառում, փաստորեն, Հայաստանն էր բացում առաջին արահետը, եւ ձախողվելու դեպքում այն կարող էր ճակատագրական նշանակություն ունենալ նոր իշխանության համար: Երրորդ՝ անգամ իդեալական օրենքով եւ իդեալական ճշտությամբ իրականացվելու դեպքում հասարակության մի մասը դժգոհ էր մնալու (թեկուզ այն պատճառով, որ, անկախ բնակության վայրից, բոլորն էին հավակնում հող ստանալ, ինչը հնարավոր չէր): Այսինքն՝ հողի եւ գյուղատնտեսական մյուս արտադրամիջոցների սեփականաշնորհման որոշումը որքան էլ ե՛ւ տնտեսական, ե՛ւ քաղաքական առումով անհրաժեշտություն էր, սակայն նույն այդ առումներով նաեւ մեծ ռիսկ էր պարունակում: Վստահ կարելի է ասել, որ նախատեսվող համակարգային բարեփոխումների մեջ գյուղատնտեսական բարեփոխումը ամենախորը, ամենառիսկայինը եւ ամենապատասխանատուն էր, եւ դրան իշխանությունը ձեռնարկում էր իր գոյության ընդամենը 6-րդ ամսում[341]:

[340] *1990 թ. աշնանը շրջափակման պատճառով էներգետիկ ճգնաժամը արդեն զգալի էր: Բենզինի սղության պատճառով մտցվեց կտրոնային համակարգ, Ադրբեջանի տարածքով Հայաստան մտնող գազամուղով տեղ էր հասնում վառելիքի սահմանված քանակի միայն կեսը:*

[341] *Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության մեջ, ի տարբերություն այլ բնագավառների, ոլորտների ու խնդիրների, հողային բարեփոխումը, որպես հետկոմունիստական շրջանի կարեւորագույն ձեռնարկումներից մեկը, հիմնարար ձեւով ուսումնասիրվել է: Ուսումնասիրության հեղինակը Հրանտ Բագրատյանն է,*

Հողի սեփականաշնորհումն իրականացվեց «Գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքի հիման վրա, որը տեւական քննարկումներից հետո ընդունվեց 1991թ. հունվարի 22-ին[342]: Հողի սեփականության իրավունք ստացան Հայաստանի Հանրապետության՝ առաջին հերթին գյուղական բնակավայրերում մշտապես բնակվող քաղաքացիները: Դրանից հետո սեփականաշնորհման ենթակա հող մնալու դեպքում այն կարող էր տրամադրվել այդ բնակավայրերի նախկին բնակիչների, ապա նաեւ այլ քաղաքացիների, եթե նրանք մշտական բնակություն էին հաստատում այդ բնակավայրերում: Սեփականաշնորհվող հողամասի մեծությունը կախված էր ընտանիքի անդամների թվից: Օրենքը հողի եւ գյուղատնտեսական մյուս արտադրամիջոցների ու գույքի սեփականաշնորհման պարտադրանք չէր, այլ դրա իրավունքի ընձեռում: Գոյություն ունեցող կոլեկտիվ տնտեսությունները («կոլխոզներ») կարող էին պահպանվել, եթե նրա անդամների 2/3-ը համաձայն էր այն պահպանել: Խորհրդային տնտեսությունները («սովխոզներ») լուծարվում էին, սակայն այնտեղ աշխատողների մասը (կամ ամբողջը), որը հրաժարվում էր հողի սեփականաշնորհումից, կարող էր իր գործունեությունը շարունակել որպես պետական ձեռնարկություն՝ պետական սեփականություն մնացած հողերի վրա: Միաժամանակ, սակայն, բոլոր նրանք, ովքեր ցանկություն ունեին, պետք է կարողանային օգտվել հողի սեփականաշնորհման իրենց իրավունքից: Հողը սեփականաշնորհվելու էր մասնակի հատուցմամբ[343]: Որոշակի պայմաններով սեփականաշնորհվելու էր նաեւ անասնագլխաքանակը եւ գյուղատնտեսական տեխնիկան: Առանձին արտոնություններ սահմանվեցին լեռնային եւ սահմանամերձ գյուղերի բնակիչների համար:

Հենց առաջին տարում գյուղացիության մեծագույն մասը որոշեց օգտվել հողի սեփականաշնորհման ընձեռված հնարավորությունից: Դա նշանակում էր, որ իշխանության քաղաքական ռիսկն արդարացված էր. գյուղացիությունը պաշտպանեց նրա այս նախաձեռնությունը: Տնտեսական արդյունավետությունը նույն տարում ակնհայտ էր. 1991-ին 1990-ի համեմատությամբ, գյուղատնտեսության մեջ գրանցվեց 11,3% աճ[344]: Եւ դա՝ այն պայմաններում, երբ շրջափակմամբ պայմանավորված՝ վառելանյութի, պարարտանյութերի եւ անասնակերի խիստ պակաս կար: Ընդ որում, ինչպես հայտնի է, նույնիսկ սովորական պայմաններում ամեն մի բարեփոխումից հետո առաջին շրջանում տվյալ ոլորտում, որպես կանոն, անկում է գրանցվում:

Գյուղատնտեսության մեջ իրականացված համարձակ բարեփոխման շնորհիվ կանխվեց անկասելի տնտեսական անկումը եւ օր-օրի մեծացող թալանը: Պատերազմական ծանր տարիներին գյուղացիությունը, ճիշտ է՝ ծանր աշխատանքի շնորհիվ, սակայն ոչ միայն ինքը փրկվեց անխուսափելի սովից, այլեւ իր արտադրանքի ավելցուկով օգնեց քաղաքաբնակ հարազատներին եւ էականորեն մեղմեց քաղաքային շուկայում ապրանքների սղությունն ու գների թռիչքային աճը:

Հայաստանն առավելապես արդյունաբերական երկիր էր, սակայն տնտեսության այս ճյուղում կարճ ժամանակում արմատական վերափոխումների իրականացումն ու դրանով շատ թե քիչ էական արդյունքների հասնելը, տասնապատիկ դժվար էր: Խոչընդոտները երկուսն էին: Առաջին՝ տնտեսական շրջափակումը, որը, մի կողմից, էներգետիկ սով էր առաջացնում, եւ արտադրությունը զրկում աշխատելու համար անհրաժեշտ էներգիայից, մյուս կողմից՝ անհնար դարձնում արդյունաբերական ձեռնարկությունների համար պահանջվող հումքի կամ լրակազմի ներմուծումը եւ պատրաստի արտադրանքի արտահանումը: Երկրորդ՝ ինչպես ողջ Խորհրդային Միության տարածքում, այնպես էլ Հայաստանում, պլանային տնտեսության եւ փակ շուկայի վրա հենված արդյունաբերությունը տեխնոլոգիական առումով շատ հետ էր մնացել, նրա արտադրանքի մեծագույն մասն իր որակական եւ այլ հատկանիշներով չէր կարող մրցակցել արդեն բացված ճանապարհներով կապիտալիստական երկրներից ներմուծվող նույնպիսի արտադրատեսակների հետ: Քիչ արտադրատեսակներից մեկը, որը միջազգային շուկայում կարող էր սպառում ունենալ, «Նաիրիտ» գործարանի արտադրանքն էր:

Դեռ 1990թ. հոկտեմբերի 14-ին կառավարությունը դիմեց Գերագույն խորհրդին՝ «Նաիրիտի» որոշ արտադրություններ վերագործարկելու թույլտվություն ստանալու համար: ԽՍՀՄ բյուջեին հսկայական օգուտ բերող, մյուս կողմից՝ Երեւանի մթնոլորտը աղտոտող քիմիական այս հսկայի

որը նույն այդ բարեփոխման ընթացքում, որպես փոխվարչապետ, ապա՝ վարչապետ, նաեւ առանցքային դերակատարություն է ունեցել (տե՛ս ***Багратян Г.****, Земельная реформа, вопросы теории и практики. Ереван. 2003)։*

[342] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 2, հոդվ. 12։ Մինչեւ սեփականաշնորհման իրականացումը ընդունվեց նաեւ հողային հարաբերությունները կարգավորող Հողային օրենսգիրքը (Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 2, հոդվ. 18)։*

[343] *Դա շատ չնչին, սիմվոլիկ գումար էր։*

[344] *Տե՛ս* ***Բագրատյան Հ.****, Հայաստանը դարերի սահմանագծին, Երեւան, 2003, էջ 18։*

փակումը հայկական բնապահպանական շարժման հիմնական խնդիրն էր դեռեւս 1986-87 թվականներից: Բնապահպանական շարժումն իր խնդիրներով հանդերձ մտավ ծավալված Ղարաբաղյան շարժման մեջ: Վերջինս պաշտպանեց բնապահպանների այդ պահանջը՝ խնդիր ունենալով նաեւ դրանով, որպես լծակ, ազդելու Մոսկվայի վրա Լեռնային Ղարաբաղի հարցում[345]: Այժմ մի կողմից՝ այլեւս չկար այդ գործոնով Կենտրոնի վրա ճնշում գործադրելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ այդ արտադրության գործարկումը կենսականորեն կարեւոր էր Հայաստանի՝ ծայրահեղ ծանր վիճակում հայտնված տնտեսության համար: 1991թ. ապրիլի 17-ին Գերագույն խորհուրդը, տնտեսական նպատակահարմարությունից ելնելով, որոշեց ընդառաջել կառավարության՝ «Նաիրիտը» գործարկելու մասին առաջարկին եւ չեղյալ հայտարարեց 1989թ. հունիսի 25-ի ՀԽՍՀ ԳԽ-ի որոշումը: Միաժամանակ՝ որոշվեց արտադրությունից ստացված ամբողջ շահութահարկն ուղղել գործարանին հարակից տարածքների բնակչության սոցիալ-կենցաղային հարցերի լուծմանը[346]:

Կենսական երկրորդ՝ դարձյալ համապարփակ շրջափակման հետեւանքով առաջացած հարցը էներգետիկ ճգնաժամի խնդիրն էր: Եթե չլիներ շրջափակումը, մյուս էներգետիկ հզորություններով կարելի էր նվազագույն չափով հոգալ հանրապետության կարիքները, սակայն խուլ շրջափակումը խաթարում էր էլեկտրաէներգիա արտադրող հզոր ջերմակայանների աշխատանքը: Ատոմակայանի փակումը նույնպես իր հետ բնապահպանական շարժումն էր բերել, եւ Ղարաբաղյան շարժումը այն ընդունել էր որպես խնդիր: Սակայն, ի տարբերություն «Նաիրիտի», Ատոմակայանի հարցը նրա կողմից երբեւէ նույն սրությամբ չէր դրվել, իսկ նրա փակումը Մոսկվայի կենտրոնական իշխանության կողմից պայմանավորված է միմիայն 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժով[347]:

Ատոմակայանի վերագործարկմամբ էներգետիկ ճգնաժամի լուծումը շատ ավելի լայն մասշտաբի խնդիրների հետ էր կապված՝ սկսած բնակչության կենսապահովումից մինչեւ արդյունաբերության աշխատանք: Մյուս

[345] *Այս մասին ավելի մանրամասն տե՛ս* ***Սարգսյան Ա.****, Ղարաբաղյան շարժման պատմություն, էջ 387-392:*

[346] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1991, 8, հոդվ. 145:*

[347] *Ատոմակայանը փակվել էր այն ժամանակ, երբ ո՛չ բնապահպանական շարժումն էր ինչ-որ պահանջներ ներկայացնում, ո՛չ Ղարաբաղյան շարժումը, իսկ վերջինիս առաջնորդները՝ «Ղարաբաղ» կոմիտեն ամբողջ կազմով, գտնվում էր մոսկովյան բանտերում:*

կողմից՝ արդեն փակված ատոմակայանի վերագործարկումը, եւ այն էլ՝ աշխատանքի անվտանգության լրացուցիչ երաշխիքներով, մի խնդիր էր, որը, չափազանց թանկ լինելով, նաեւ նախադեպը չէր ունեցել աշխարհում: Գերագույն խորհուրդը քննարկեց այդ հարցը, սակայն առայժմ ձեռնպահ մնաց այն վերաբացելու վերջնական որոշում ընդունելուց[348]:

[348] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 8, հոդվ. 143:*

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶ

ա) Կենտրոնի հետ հարաբերությունները, Հայաստանը՝ ԽՍՀՄ անվտանգ կազմաքանդման ակտիվ դերակատար

Հայաստանը Խորհրդային Միության առաջին հանրապետություններից էր, որտեղ իշխանափոխությունն իրականացավ իրավական առումով անխոցելի ճանապարհով: Ժողովրդավարական ուժերը իշխանության եկան գործող օրենքների տառի պահպանումով, առաջին անգամ կայացած այլընտրանքային, ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով: Դա այնքան բացահայտ էր եւ ակնառու, որ որեւէ մեկի մտքով չէր կարող անցնել վիճարկել դրա օրինականությունը կամ արդյունքները: Ընդհակառակը, զանգվածային ապօրինությունները եւ կեղծիքները կատարում էին իրենց հոգեվարքն ապրող կոմունիստական իշխանության մարմինները, իսկ Շարժման հաղթանակն, այդուամենայնիվ, ապահովվել էր ի հեճուկս այդ ապօրինությունների:

Անկախության հռչակագրով պահպանվեց ԽՍՀՄ համապատասխան օրենքի նորմը՝ զրկելով Կենտրոնին հանրապետության գործերին կոպիտ միջամտության իրավական հիմքից: Վճռական գործողությունների շնորհիվ լուծվեց ապօրինի զինված կազմավորումների խնդիրը՝ չեզոքացնելով Կենտրոնի ուժային միջամտության հաջորդ առիթը: Դրանք ճշգրիտ, նաեւ տպավորիչ քայլեր էին: Հայաստանի վրա ներազդելու համար Մոսկվայի հիմնական լծակը մնում էր Ադրբեջանի միջոցով շրջափակման խստացումը եւ Լեռնային Ղարաբաղում ճնշումների մեծացումը:

Անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո սկսեց կենսագործվել նաեւ արտաքին քաղաքականության մասին նրանում ամրագրված նորմը. «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային

իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը»: Այս ասպարեզում ամենապատասխանատուն եւ յուրահատուկն, անշուշտ, հարաբերություններն էին Մոսկվայի հետ: Վերջինս դժվարությամբ էր համակերպվելու հանրապետությունների նկատմամբ գերակայի եւ թելադրողի իր դիրքի կորստյան հետ: Անկախության ուղին որդեգրած մյուս հանրապետությունների նկատմամբ Հայաստանն ուներ մի յուրահատկություն. նա հրաժարվել էր այս հարցում Կենտրոնի հետ առճակատման գնալուց եւ ընտրել էր խնդրի լուծման օրինական, սահմանադրական ճանապարհը: Բայց դա ամենեւին չէր նշանակում, թե Մոսկվան դրա հետեւանքով պետք է զերծ մնար ուժի դիրքերից հանրապետության գործերին միջամտելու եւ անկախության նրա քաղաքական ուղեգիծը խոչընդոտելու ու կասեցնելու քայլերից: Ընդհակառակը՝ Հայաստանը վտանգավոր էր հենց այն առումով, որ նրան չէին կարող խանգարել նաեւ ԽՍՀՄ կազմից դուրս գալու համար սահմանված օրենսդրական խոչընդոտները: Էթնիկ միատարրության իր հատկանիշի եւ ինքնավար կազմավորումների խնդիր չունենալու շնորհիվ (լծակներ, որոնցով Կենտրոնը կարող էր խանգարել մյուս հանրապետություններին), անգամ գործող օրենքներով, Հայաստանն, ի տարբերություն մյուս հանրապետությունների, կարողանալու էր լուծել ԽՍՀՄ կազմից դուրս գալու խնդիրը, եթե անգամ ԽՍՀՄ-ը կարողանար առժամանակ գոյատեւել:

Հայաստանի նոր իշխանությունները Կենտրոնի հետ հարաբերություններում սկզբից եւեթ որդեգրեցին ոչ թե որպես ենթակա, այլ որպես ինքնիշխան պետություն ներկայանալու, օրենսդրական երկխոսության եւ կենդանի քաղաքական շփումների կառուցողական ճանապարհը: Ճիշտ է՝ Հայաստանում եւս կային անկախության դեմ տրամադրված ուժեր, ինչպես Կոմկուսի նոմենկլատուրան եւ Դաշնակցության բացահայտվող կառույցները: Սակայն դրանցից առաջինը՝ պարտված, իսկ երկրորդը՝ դեռեւս ընդհատակում լինելով, չէին կարող Մոսկվայի ձեռքում որպես ազդու լծակ ծառայել հանրապետության նոր իշխանությունների քաղաքականության վրա էականորեն ազդելու կամ ուժային միջամտության համար ծանրակշիռ սադրանքներ ստեղծելու համար: Օրենսդրական ոլորտում եւ գործնական քաղաքականության մեջ Հայաստանի նոր իշխանության վճռականությունն ու հաստատակամությունը ստիպեցին Մոսկվային,

ճնշումների մեխանիզմներ փնտրելու հետ մեկտեղ, աստիճանաբար, Հայաստանն ընդունել որպես քաղաքական գործընկեր: Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելուց անմիջապես հետո Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Մոսկվա կատարած այցի արդյունքներից մեկը եղավ այն, որ Գորբաչովը երեք ամսով հետաձգեց ապօրինի զինված կազմավորումները զինաթափելու մասին իր հրամանագրի գործադրումը Հայաստանում[349]: Այցի եւ բանակցությունների ընդհանուր արդյունքները ներկայացվեցին ՀՀ Գերագույն խորհրդին, որը որոշմամբ հավանություն տվեց դրանց[350]:

Կենտրոնի հետ Հայաստանի նոր իշխանության հարաբերությունների հիմնական ելակետն այն էր, որ Խորհրդային Միությունը, որպես կայսրություն, ապրում է իր փլուզման եւ հոգեվարքի շրջանը: Այդ համոզմունքն էր դրված ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ հոկտեմբերի 22-ի ելույթի հիմքում. «Գուցե մեր ժողովրդի համար, որը խոր քնի մեջ էր, դա հայտնություն էր, բայց վերջին տարիների իրադարձությունները ցույց էին տալիս դրա նշանները, իսկ այսօր այդ փլուզումն իրականություն է դառնում՝ կախված մի շարք օբյեկտիվ պատճառներից»[351]: Այդ պայմաններում, սակայն, Հայաստանի քաղաքական ղեկավարությունն իր խնդիրը տեսնում էր ոչ թե խորտակման գնացող «գնացքից թռչելու»[352] ճիշտ պահը որսալու, այլ կայսրության փլուզման գործընթացները կառավարելի ու հնարավորինս անվտանգ դարձնելու մեջ. «Մեզանից այսօր միայն մեկ բան է կախված, եւ ոչ միայն մեզանից, այլեւ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներից եւ համայն մարդկությունից՝ որքան հնարավոր է անարյուն, անցավ դարձնել այդ փլուզումը, անարյուն, խաղաղ դարձնել անցումը դեպի նոր վարչակարգ»[353]: Գերագույն խորհրդի նախագահը հույս էր հայտնում, որ «խորհրդային ղեկավարններն ու նաեւ հանրապետությունները կդրսեւորեն այնքան հանդուրժողականու-

---

[349] *Այս այցի մասին Գերագույն խորհրդում տված հաշվետվությունը տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 12/10.08.90:*

[350] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 15, հոդվ. 230:*

[351] ***Տեր-Պետրոսյան Լ.***, *Ընտրանի, էջ 143:*

[352] *«Գնացքից թռչելու ժամանակն է» վերնագրով մի հոդված հրապարակեց Վազգեն Մանուկյանը, որտեղ այս գործելակերպն էր հիմնավորվում. « (տե՛ս* ***Մանուկյան Վ.***, *Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու, Երեւան, 2002, էջ 15-16 (արտատպված «Հայք» 19.05.1990, 27.05.1990, 10.06.1990, 10.06.1990 համարներից):*

[353] ***Լ. Տեր-Պետրոսյան***, *Ընտրանի, էջ 143:*

թյուն եւ գիտակցություն, որ գործը չեն հասցնի լուրջ առճակատման եւ խոշոր ցնցումների»[354]: Սա, կարելի է ասել, այդ շրջանում միջազգային քաղաքական անհանգստություն էր. բռնատիրական կայսրության հոգեվարքի շրջանում հնարավոր էին ամեն տեսակ վտանգավոր զարգացումներ, եւ Հայաստանի ղեկավարը, առաջին հերթին, ձեւակերպում էր այդ անհանգստությունը: Սակայն այդ անհանգստությունը շատ ավելի մեծ չափով բխում էր հենց Հայաստանի շահերից. կայսրության կառավարելի կազմաքանդումն էր, որ կարող էր լինել Հայաստանի համար անկախության ձեռքբերման ամենաապահով տարբերակը:

Հաստատակամորեն ընտրելով հանդերձ անկախության ճանապարհը՝ Հայաստանի նոր իշխանությունը ոչ միայն չմեկուսացավ Մոսկվայից ու չհակադրվեց նրան, այլեւ գործուն ու կառուցողական մասնակցություն էր ցուցաբերում Խորհրդային Միությունում ընթացող բոլոր առաջադիմական քաղաքական գործընթացներին: Սա, փաստորեն, պայքարի մի նոր ճակատ էր՝ ամրապնդելու համար ժողովրդավարական ուժերի ձեռքբերումները, դիմակայելու հետադիմական ուժերին եւ գտնելու ճգնաժամի հաղթահարման անվտանգ ուղիներ: Այս առումով ուշագրավ են 1990 թ. նոյեմբերի 16-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը եւ գործնական առաջարկությունները: Կենտրոնական իշխանության կաթվածահարությունն ու Ճգնաժամը հաղթահարելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում քննարկվում էին միջոցներ: Գորբաչովն առաջարկում էր դրան հասնել՝ սառեցնելով հանրապետական իշխանությունների որոշումները, ուրիշներն առաջարկում էին «ուժեղացնել իշխանությունը»՝ դրա տակ նկատի ունենալով ռեպրեսիաների կիրառում: Լեւոն Տեր-Պետրոսյանը անօգուտ համարելով ու մերժելով այդ ուղիները՝ առաջարկեց ճգնաժամը հաղթահարելու համար ստեղծել **համաձայնության մեխանիզմ**: Ընդ որում՝ դա անել ոչ թե պաշտոնական կառույցների (ԽՍՀՄ Նախագահ, Միութենական խորհրդարան, Նախարարների խորհուրդ), այլ նոր ձեւավորված՝ «մեր իրականության դրական կողմեր» հանդիսացող անշրջանցելի իրողությունների հիման վրա. «Առաջինը հանրապետությունների ինքնիշխանության գործընթացի խորացումն է եւ Կենտրոնի ու հանրապետությունների իրավասությունների սահմանազատումը: Երկրորդը՝ հանրապետությունների միջեւ հորիզոնական հարաբերությունների հաստատումը: Երրորդը՝ հանրապետություններում ժողովրդավարական գործընթացների խորացումը, որն, իմ կարծիքով, ոչ մեկը չի կարող ժխտել: Եւ վերջինն ու ամենակարեւորը՝ հանրապետական իշխանությունների կենսունակության դրսեւորումը, ինչը մի շարք հանրապետություններ ապացուցել են գործով»[355]: Ահա այս հիմքի վրա նա առաջարկեց ստեղծել երկու մարմին. Տնտեսական համաձայնության կոմիտե՝ 15 հանրապետությունների վարչապետների կազմով, որի որոշումները պետք է կատարեր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահը, եւ Քաղաքական համաձայնության խորհուրդ՝ որպես այդպիսին հստակեցնելով հանրապետությունների առաջին դեմքերի կազմով գործող Ֆեդերացիայի խորհրդի լիազորությունները[356]: Եւ այս առաջարկներն, ըստ էության, ընդունվեցին[357]: Խորհրդային համակարգի դեմ 1988-ից պայքարի ելած Հայկական ժողովրդավարական շարժումը, արդեն ի դեմս իր նորահաստատ իշխանության ու նրա ղեկավարի, դառնում էր նաեւ ԽՍՀՄ անվտանգ կազմաքանդման գործոններից մեկը:

Հայաստանը չէր թաքցնում նաեւ իր վերաբերմունքը Միութենական նոր պայմանագրի նկատմամբ, որի կնքումը կենտրոնական իշխանությունը համարում էր իր գերագույն քաղաքական խնդիրը: Նույն ելույթում ՀՀ ղեկավարն արձանագրեց, որ Միութենական նոր պայմանագրի կնքման ժամանակը բաց է թողնված: Դրան կարելի կլինի անդրադառնալ միայն այն ժամանակ, երբ կավարտվեն հանրապետություններում սկսված ու ծավալվող ինքնիշխանության հաստատման գործընթացները, որից հետո, եւ արդեն անկախ պետությունների հիմքի վրա, հնարավոր կլինի որոշել նոր Միության իրական ձեւաչափը[358]:

Անշուշտ, բոլորովին այլ կերպ էր պատկերացնում ԽՍՀՄ ապագան կենտրոնական իշխանությունը, եւ Գորբաչովը եռանդով ու հաստատակամությամբ պետք է շարունակեր խոչընդոտել հանրապետությունների ժողովրդավարացման ու անկախացման գործընթացներին՝ նրանց «Նոր

---

354 *Նույն տեղում:*

355 *Նույն տեղում, էջ 153-154:*

356 *Նույն տեղում, էջ 155-156:*

357 *Ֆեդերացիայի խորհուրդը սահմանագրական մարմին դարձավ 1990թ. դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ ժողպատգամավորների համագումարի կողմից Սահմանադրության մեջ կատարած համապատասխան փոփոխությամբ:*

358 *Իմիջիայլոց, իր հաջորդ ելույթներից մեկում Տեր-Պետրոսյանը ճշգրտորեն կանխագուշակել էր նաեւ այդ նոր Միության անվանումը՝ «Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)», որը իրականություն պետք է դառնար այդ ելույթից շուրջ մեկ տարի հետո (տե՛ս, **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, էջ 175):*

միության» մեջ հավաքելու փորձեր աներ: Սակայն ընդամենը մեկ տարվա ընթացքում պարզ դարձավ, որ դա, իրոք, այլեւս անհնար է: Հանրապետությունների անկախացման գործընթացը բարեհաջող շարունակվեց եւ ավարտվեց ԽՍՀՄ կազմալուծմամբ եւ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծմամբ:

բ) Այլ միջպետական հարաբերություններ, Հայաստանի ակտիվ դերակատարությունը ԽՍՀՄ ժողովրդավարական գործընթացներում եւ արժանապատիվ մուտքը միջազգային ասպարեզ

Քաղաքական մեկուսացման վտանգը հաղթահարելու համար Հայաստանի նոր իշխանությունը միանգամից ձեռնամուխ եղավ նաեւ անմիջական միջպետական հարաբերությունների հաստատմանը՝ ինչպես ԽՍՀՄ հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան երկրների հետ: Այս բնագավառում առաջնահերթ խնդիր էր համարվում հատկապես անմիջական հարեւանների հետ հարաբերությունների հաստատումը[359]: Որքան բազմակողմանի ու արդյունավետ լինեին նման երկկողմ հարաբերությունները, այնքան կնվազեին հանրապետության վրա տնտեսական ու քաղաքական այն լծակների գործադրման հնարավորությունը եւ արդյունավետությունը, որոնք դեռեւս պահպանվում էին Մոսկվայի ձեռքում:

Խորհրդային Միության ներսում առաջին հարաբերությունները, բնականաբար, պետք է հաստատվեին այն հանրապետությունների հետ, որոնք նույնպես անկախության ուղի էին որդեգրել: Հայաստանը կարեւոր քաղաքական աջակցություն էր ցուցաբերում Մերձբալթյան հանրապետություններին: Հոկտեմբերի 22-ին ՀՀ Գերագույն խորհուրդը հատուկ հանձնաժողով ստեղծեց՝ նախապատրաստելու Հայաստանի եւ Լիտվայի միջեւ միջպետական հարաբերությունների մասին պայմանագրի նախագիծ, որը

[359] *Հոկտեմբերի սկզբին տված իր հարցազրույցում Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը բարիդրացիական հարաբերություններ հաստատելու լիակատար հիմքեր էր տեսնում Վրաստանի եւ Իրանի հետ: Նաեւ համարում էր, որ պետք է հաղթահարել հոգեբանական դժվարությունները, առանց որեւէ քաղաքական զիջում կատարելու եւ ելնելով Հայաստանի ու նրա ժողովրդի շահերից, որոշակի հարաբերություններ հաստատել նաեւ Թուրքիայի հետ՝ նախ «զուտ առեւտրական, իսկ այնուհետեւ՝ ավելի լայն տնտեսական հարաբերությունների մակարդակի վրա» (տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, 135-136):*

պետք է ստորագրվեր երկու երկրների Գերագույն խորհուրդների նախագահների առաջիկա հանդիպման ժամանակ: Հայ-Լիտվական այդ պայմանագիրը Վիտաուտաս Լանդսբերգիսը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը ստորագրեցին Վիլնյուսում 1991թ. օգոստոսի 14-ին[360]: Տնտեսական եւ մշակութային համագործակցության պայմանագիր ստորագրվեց Հայաստանի եւ Լատվիայի կառավարությունների միջեւ 1990-95թթ. համար [361]: Մինչ այդ, հուլիսի 27-ին, միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին առաջին պայմանագիրը ստորագրվել էր Վրաստանի հետ[362]: Սրանք, փաստորեն, Հայաստանի Հանրապետության առաջին միջպետական պայմանագրերն էին:

Հայաստանն ուշադիր էր կենտրոնական իշխանության կողմից հանրապետությունների եւ ժողովրդավարական ուժերի նկատմամբ հակաօրինական գործողություններին եւ անմիջապես արձագանքում էր դրանց: Ավելին՝ հնարավորության դեպքում նաեւ գործնական օգնություն էր ցույց տրվում բռնության թիրախ դարձած հանրապետությանը: Այսպես, 1991թ. հունվարին սրվել էր իրավիճակը Մերձբալթյան հանրապետություններում: Չնայած հենց նույն ժամանակ մեծացել էին Կենտրոնի եւ Ադրբեջանի համատեղ ճնշումները նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վրա, այնուամենայնիվ, Հայաստանն ամենաակտիվ քաղաքական օժանդակությունը ցուցաբերեց նրանց: Լիտվական հանրապետության համար ամենածանր եւ վտանգավոր պահին, երբ խորհրդային զորքերը դիմել էին պատժիչ գործողությունների, եւ քաղաքացիական պատերազմը հասունանում էր, վճռական նշանակություն ունեցավ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահի եւ Անվտանգության գծով նրա խորհրդական Աշոտ Մանուչարյանի միջնորդական նախաձեռնությունը եւ այցը Վիլնյուս հունվարի 12-14-ին: Նրանց հաջողվեց կանխել խորհրդային բանակի հետ արյունահեղությամբ ուղեկցվող առճակատման հետագա խորացումը, ծրագրված պետական հեղաշրջումը, ինչը եւ մեծ շնորհակալությամբ ընդունվեց լիտվական իշխանությունների եւ ժողովրդի կողմից[363]: ՀՀ Գերագույն խորհր-

[360] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.08.1991:*

[361] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20.10.1990:*

[362] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 30.07.1991:*

[363] *Տեր-Պետրոսյանի այդ դերը բարձր է գնահատել Լիտվական հանրապետության նախագահ Վիտաուտաս Լանդսբերգիսը. «Անցյալ տարվա հունվարի հիշարժան-ողբերգական օրերին Դուք եղաք Լիտվայի ազնվաբարո պաշտպանը եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատվիրակության գործողությունների վկան ու մասնակիցը»*

դի նախագահությունը ցավակցություն հայտնեց նաեւ Լատվիայի մայրաքաղաքում 1991թ. հունվարի 21-ին կատարված արյունահեղության առիթով՝ համարելով, որ Մերձբալթյան հանրապետություններում իրադրության ապակայունացումը եւ այդ նպատակով ազգամիջյան ընդհարումների հրահրումը հետեւանք են այն ուժային քաղաքականության, որը վարում են միութենական իշխանությունները ազգերի ինքնորոշման հարցում[364]:

Ռուսաստանի ժողովրդավարական ուժերի հետ դեռ Շարժման տարիներին հաստատված էին գործնական հարաբերություններ: Բորիս Ելցինի՝ Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելով[365], իշխանության էին եկել ժողովրդավարական ուժերը: Արդեն իսկ ՀՀ նոր Գերագույն խորհրդի աշխատանքի առաջին օրերին ստացվեց ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Ելցինի եւ Նախարարների խորհրդի նախագահ Սիլաեւի առաջարկը՝ երկու երկրների միջեւ միջպետական դաշնագիր նախապատրաստելու եւ ստորագրելու մասին: Հայաստանի Գերագույն խորհուրդն, իր հերթին, անմիջապես ձեռնամուխ եղավ դրա նախապատրաստման աշխատանքներին եւ այդ նպատակով ստեղծեց պատգամավորական հանձնաժողով[366]: Սեպտեմբերին Գերագույն խորհրդի նախագահությունը հատուկ ուղերձով դիմեց Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահությանը՝ շնորհակալություն հայտնելով Աղետի գոտում Ռուսաստանի շինարարների կատարած աշխատանքների համար եւ՝ հույս հայտնելով, որ դրանք կշարունակվեն նաեւ 1991-ին: Լեւոն Տեր-Պետրոսյանին ուղղված՝ սեպտեմբերի 17-ի թվակիր նամակում Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահը հայտնում է, որ ինքը որոշել է, նկատի ունենալով Կենտրոնի ապակայունացնող գործողությունները, մյուս հանրապետությունների հետ անցնել հորիզոնական կապերի[367]: Ելցինի հետ հոկտեմբերին տեղի ունեցած հանդիպումը Լեւոն Տեր-Պետրոսյանը գնահատում էր որպես «միջպետական կապեր հաստատելու եւ զարգացնելու առաջին հաջողված քայլը»[368]: Ընդհանրապես, կենտրոնական իշխանությունների ուժային, քաղաքական եւ տնտեսական պատժիչ գործողությունները զսպելու առումով Ռուսաստանի նոր իշխանությունը, Ելցինի գլխավորությամբ, շատ կարեւոր դեր էր խաղում[369]: Հարցազրույցներից մեկում Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահը դա գնահատում է ըստ արժանվույն. «Ոչ մի հանրապետություն չի կարող դիմակայել նման ուժի (Կենտրոնին), բայց հարկավոր է ստեղծել միասնական ճակատ: Եթե չլիներ Ռուսաստանի հանրապետության եւ նրա նախագահ Ելցինի վճռական դիրքորոշումը, Մերձբալթյան երկրների ժողովրդավարական ուժերը կործանված կլինեին»[370]:

Ռուսական ժողովրդավարական ուժերը, Ելցինի գլխավորությամբ, մեծ դեր խաղացին նաեւ 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, Գետաշենում եւ Շահումյանի շրջանում Կենտրոնի եւ Ադրբեջանի համատեղ աննախադեպ պատժիչ գործողությունները կասեցնելու, Հայաստանի իշխանություններին բարոյական եւ գործնական օժանդակություն ցուցաբերելու հարցում: Գործընկերային հարաբերությունները Ռուսաստանի հետ ավելի հեռանկարային դարձան, երբ 1991թ. հունիսի 12-ին Ելցինն ընտրվեց Ռուսաստանի Դաշնության նախագահ, նրա համախոհներից Գավրիլ Պոպովը՝ Մոսկվայի, իսկ Անատոլի Սոբչակը՝ Լենինգրադի քաղաքապետ:

(ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 03/01.03.1992, հայերեն թարգմանությունը՝ «Գիտնականը եւ նախագահը...», էջ 160-161): Դրա մասին գրեց նաեւ միջազգային մամուլը (տե՛ս «The New York Times», 15.04.1991, հոդվածի հայերեն թարգմանությունը՝ «Ազգ», 20.04.1991):

364 *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 02, հոդվ. 23:*

365 *Քաղաքական այս դործչին էր վիճակված, անցնելով ոչ դյուրին ճանապարհ, առաջնորդել Ռուսաստանի ժողովրդավարական ուժերին: Նա, ի տարբերություն այլ ժողովրդավարական շարժումների ղեկավարների, ԽՄԿԿ վերնախավից էր, «տաք էր քաշվել» Գորբաչովի հետ միասին եւ ղեկավարում էր Մոսկվայի կուսակցական կոմիտեն: Դեռ 1987թ. վերջին, որպես բողոքի նշան Գորբաչովի կողմից հետադիմական ուժերի պաշտպանության, Ելցինը հրաժարական տվեց ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարի անդամությունից (նա անդամության թեկնածու էր), իսկ հետագա տարիներին իշխանական վերնախավում հետադիմական ուժերի հիմնական թիրախն էր: Այնուամենայնիվ, 1990թ. մայիսի 29-ին նա ՌՍՖՍՀ ժող. պատգամավորների առաջին համագումարում ընտրվեց ՌՍՖՍՀ Գխ նախագահ: 1990թ. հուլիսին ԽՄԿԿ 28-րդ համագումարում Ելցինը հայտարարեց, որ դուրս է գալիս Կոմունիստական կուսակցությունից եւ առաջարկեց կուսակցությունը լուծարել:*

366 *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25.07.1990:*

367 *Տե՛ս Левон Тер-Петросян в российской прессе, Москва, 2018, с. 324-325.*

368 *«Հայաստանի Հանրապետություն», 23.10.1990:*

369 *Փետրվարի 19-ի իր հեռուստաելույթում Ելցինը խստորեն քննադատեց Բալթյան հանրապետությունների վրա կենտրոնական իշխանությունների գործադրած ուժային միջոցները եւ ընդհուպ պահանջեց Գորբաչովի հրաժարականը (տե՛ս* ***Ельцин Б.****, Записки президента, Москва, 1994 с. 58.):*

370 *Հարցազրույցի հայերեն թարգմանությունը տե՛ս «Հայաստանի Հանրապետություն, 25.01.1991, ներդիր:*

Ինքնուրույն միջպետական կապեր եւ հարաբերություններ հաստատելու եւ միջազգային ասպարեզ մտնելու ակտիվ քայլեր ձեռնարկվեցին նաեւ այլ, այդ թվում խոշոր պետությունների հետ: Շնորհավորական հեռագիր ուղարկվեց Գերմանիայի վերամիավորման առիթով[371]: Գերագույն խորհրդի որոշմամբ՝ 1990թ. սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի 8-օրյա այցը Միացյալ Նահանգներ[372]: Կայացան բարձր մակարդակի հանդիպումներ ԱՄՆ-ի նախագահի Ազգային անվտանգության գծով խորհրդականի, Սենատի Հանրապետական խմբակցության նախագահ Դոուլի, Դեմոկրատական խմբակցության նախագահ Միտչելի, կոնգրեսականների, սենատորների եւ, իհարկե, հայկական համայնքի հետ[373]:

Վերակառուցման տարիներից ի վեր Արեւմուտքի գրավը Գորբաչովի վրա էր: Կարելի էր սպասել, որ ժողովրդավարական շարժումների՝ ավելի ու ավելի մեծ կշիռ ձեռք բերելուն ու նաեւ միջազգային մասշտաբով քաղաքական գործոն դառնալուն զուգահեռ՝ այդ գրավն աստիճանաբար տեղափոխվեր վերջիններիս վրա[374]: Սակայն Արեւմուտքը շարունակում էր զգուշավոր եւ բարյացակամ վերաբերմունք պահպանել Գորբաչովի նկատմամբ ու դեռեւս ձեռնպահ էր մնում անկախության ուղին բռնած հանրապետություններին վերաբերվել որպես հավասար գործընկերների: Ավելին՝ երբեմն բացահայտ ասվում էր, որ ինքնիշխանություն հաստատող եւ անկախություն հռչակած հանրապետությունների հետ միջազգային հանրությունը գործ կունենա միայն ԽՍՀՄ խողովակով: Օրինակ՝ ԵԱՀԽ-ին դիտորդի կարգավիճակով անդամակցելուն օժանդակելու մասին Հայաստանի պաշտոնական դիմումին ի պատասխան՝ Գերմանիայի կանցլեր Հելմուտ Կոլի պատասխան հեռագրում ասվում է. «Անհրաժեշտ է նաեւ, որ Հայաստանը հանդես գա խորհրդային կենտրոնի հետ համագործակցված»[375]: Սակայն դրա հետ միասին արեւմտյան եւ այլ պետություններ դեսպանների մակարդակով ակտիվ շփումներ էին իրականացնում հանրապետությունների ղեկավարների հետ, ուշադիր հետեւում էին իրավիճակին եւ զարգացումներին: Մոսկվայում Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ իրենց նախաձեռնությամբ հանդիպում ունեցան ԱՄՆ-ի դեսպան Մեթլոքը, Ավստրիայի, Կիպրոսի եւ այլ երկրների դեսպաններ:

Սկզբնական այս շրջանում հանրապետությունները կարող էին հարաբերությունների մեջ մտնել, պայմանագրեր կնքել Արեւմտյան երկրների վարչական խոշոր միավորների հետ: Այդպես, ուղիղ տնտեսական կապեր հաստատելու հարցեր քննարկվեցին Իտալիայի Վենետոյի մարզի հետ[376]: Գերագույն խորհրդում մշակվում էր համագործակցության մասին պայմանագրի նախագիծ՝ ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի հետ[377]:

Արտասահմանյան ուղեւորությունների եւ դեսպանների հետ հանդիպումների ընթացքում հիմնական աշխատանքը նպատակ էր հետապնդում նրանց համոզելու, որ Արեւմուտքը անտարբեր չպետք է մնա ԽՍՀՄ այն ներքին խնդիրների հանդեպ, որոնք վերաբերում են ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերին, որ՝ Գորբաչովի նկատմամբ անվերապահ հավանության կեցվածքը չի դյուրացնում այդ խնդիրների լուծումը եւ ոչ էլ նպաստում է ժողովրդավարության խորացմանը, որ՝ հանրապետությունները դարձել են իրական քաղաքական ուժ, եւ այդ հանգամանքի անտեսումը կարող է նպաստել հետադիմական ուժերի ակտիվացմանը, նրանց կողմից բռնությունների կիրառմանը եւ այլն:

Արդյունավետ արտաքին շփումները, իսկ ավելի շատ, թերեւս, ժողովրդավարության հաստատման եւ ազատական տնտեսաձեւին անցնելու համարձակ քայլերն արագորեն բարձրացնում էին Հայաստանի միջազգային վարկանիշը: Այնպես որ՝ շուտով հնարավոր եղան անմիջական հանդիպումները նաեւ մեծ տերությունների ղեկավարների հետ: Կենտրոնի կողմից ամենասուր ճնշումների շրջանում, 1991թ. մայիսի 21-26-ը տեղի ունեցավ Լ. Տեր-Պետրոսյանի եւ նրա ղեկավարած պատվիրակության այցը Ֆրանսիա եւ հանդիպումը Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի հետ: Հանդիպումներ եղան նաեւ արտգործնախարար Ռոլան Դյումայի, Սահմանադրական խորհրդի նախագահի, Ազգային ժողովի նախա-

371 Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 19, հոդվ. 359:

372 ԳԽ նախագահին ուղեկցում էին Ալեքսանդր Արզումանյանը եւ Համբարձում Գալստյանը:

373 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.10.1990:

374 Հետաքրքիրն այն է, որ անգամ հետագայում, ընդհուպ մինչեւ ԽՍՀՄ փլուզումը, դա ամբողջությամբ տեղի չունեցավ, արեւմտյան երկրների կառավարություններն այդ արեցին միայն այն չափով, որքանով չէին կարող տեղի չտալ սեփական հասարակությունների կարծիքի ճնշմանը, ըստ էության, աշխատելով մինչեւ վերջ մնալ Գորբաչովի կողքին:

375 «Հայաստանի Հանրապետություն», 04.02.1991:

376 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.01.1990:

377 Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 6, հոդվ. 103:

գահ Լորան Ֆաբիուսի, Փարիզի քաղաքապետ, «Միավորում հանուն հանրապետության» կուսակցության ղեկավար Ժակ Շիրակի հետ: Կենտրոնական իշխանության կողմից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ դաժան ճնշումների այդ շրջանում անգամ Հայաստանը Արեւմտյան երկրներին ԽՍՀՄ ներքին գործերին միջամտելու կոչ չէր անում, սակայն անհրաժեշտ էր համարվում, որ նրանք աչք չփակեն «մարդու իրավունքների խախտումների եւ ժողովրդի դեմ բանակի օգտագործման փաստի վրա»[378]: Այս հանդիպումը լուրջ փաստարկ էր հօգուտ այն բանի, որ Արեւմտյան երկրները սկսել էին որոշակի կարեւորություն եւ դեր տալ նաեւ անկախության ուղին բռնած հանրապետություններին: Եւ բարձր մակարդակի առաջին նման հանդիպումը Հայաստանի ղեկավարի հետ էր: Հայաստանի համար սա լուրջ քայլ էր դեպի համաշխարհային հանրություն: Մեկ ամիս անց տեղի ունեցավ հանդիպում նաեւ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ՝ Մոսկվայում: Գորբաչովի պատվին տված ճաշկերույթին Բուշը Խորհրդային Միության հանրապետությունների ղեկավարներից հրավիրել էր չորս հոգու՝ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին, Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիային եւ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին:

1991թ. օգոստոսին Հայաստանն ունեցավ իր առաջին պաշտոնական մշտական ներկայացուցիչն արտասահմանում. ԱՄՆ-ի եւ Կանադայի հետ ուղիղ կապերն ամրապնդելու, Հայաստանին ցուցաբերվող օգնությունը համակարգելու եւ հայ համայնքի հետ հարաբերություններ հաստատելու համար Ալեքսանդր Արզումանյանը նշանակվեց Հյուսիսային Ամերիկայում Հայաստանի ներկայացուցիչ[379]:

Արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալն էր, որը սկզբից եւեթ հետեւողականորեն փորձ էր արվում իրականացնել: Ադրբեջանի հետ հարաբերությունները, բնականաբար, պայմանավորված էին Լեռնային Ղարաբաղի խնդրով: Հայաստանի կողմից արված առաջարկները՝ հրաժարվել առճակատման խորացումից եւ փորձել բանակցությունների միջոցով գտնել խնդրի խաղաղ կարգավորման տարբերակներ, Ադրբեջանի կողմից որեւէ արձագանք չէին գտնում: Ոգեւորված Կենտրո-

[378] *«Հայաստանի Հանրապետություն», 21.06.1991:*
[379] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 15, հոդվ. 326:*

նից ստացվող աջակցությամբ՝ Ադրբեջանը ամեն ինչ անում էր հարցը լուծելու ուժային գործողություններով, փաստորեն Լեռնային Ղարաբաղի բնակչությանը բռնագաղթի ենթարկելու միջոցով:

Բարեկամական էին Վրաստանի հետ հարաբերությունները: Նոյեմբերին Վրաստանի նոր խորհրդարանի կազմավորման առիթով Հայաստանի Գերագույն խորհուրդը շնորհավորական հեռագիր ուղարկեց, իսկ 1991թ. հուլիսի 27-ին Վրաստանի հետ կնքվեց առաջին միջպետական համաձայնագիրը:

Թուրքիայի հետ երկխոսություն եւ հարաբերություններ հաստատելու առաջին փորձն իրականացվեց արդեն 1990թ. դեկտեմբերին[380], իսկ 1991թ. ապրիլի 8-ին Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալին: Դեսպանը հայտնեց իր երկրի պատրաստակամությունը եւրոպական գործընթացի, սեւծովյան ծրագրվող համագործակցության շրջանակներում Հայաստանի հետ բնականոն կապեր հաստատելու, համագործակցելու տնտեսության, ենթակառուցվածքների, գբոսաշրջության, մշակութային ոլորտներում[381]:

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը միջազգային ասպարեզում իր ներկայությունը որպես սուբյեկտ արձանագրելն էր, միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալը: Ներքաղաքական կյանքը ժողովրդավարության միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ծրագրվող ու կատարվող բարեփոխումները դրան նպաստող քայլեր էին: Ընդունվեց օրենք «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին»[382]: 1991թ. ապրիլի 1-ին Գերագույն խորհուրդը, «ձգտելով Հայաստանի Հանրապետությունը տեսնել համաշխարհային հանրության երկրների շարքում որպես այդ հանրության իրավական եւ բարոյական նորմերը ճանաչող եւ դրանցով ղեկավարվող պետություն»՝ որոշում ընդունեց միանալ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրին եւ դրան կից ֆակուլտատիվ արձանագրությանը: Նույն որոշմամբ նախատեսվում էր հանրապետության բոլոր օրենսդրական ակտերը համապատասխանեցնել ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի եւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրի դրույթներին,

[380] *«Հայաստանի Հանրապետություն», 11.12.1990:*
[381] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 7, էջ 66:*
[382] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 12, հոդվ. 245:*

իսկ մինչ այդ՝ ճանաչել այդ դրույթների գերակայությունը հանրապետության օրենքների նկատմամբ[383]: Որոշումն ուղարկվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին եւ ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրներին: Մինչ այդ, Գերագույն խորհրդի նախագահությունը 1990թ. նոյեմբերին դիմել էր Եւրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) մասնակից երկրներին՝ առաջ քաշելով այս կազմակերպությանը դիտորդի կարգավիճակով Հայաստանի անդամակցության հարցը: Միջազգային հանրությունն իր հերթին աստիճանաբար ավելի ու ավելի էր մեծացնում իր ուշադրությունը անկախության եւ ժողովրդավարության ուղին բռնած խորհրդային հանրապետությունների նկատմամբ: Դրա արտահայտություններից մեկն էր Շվեյցարիայի Դավոս քաղաքում ամենամյա համաշխարհային տնտեսական համաժողովին Հայաստանին ուղղված հրավերը: Նման հրավերներ ԽՍՀՄ հանրապետություններից ստացել էին նաեւ Ռուսաստանը, Վրաստանը եւ Մերձբալթյան երկրները:

Ժողովրդավարության հաստատման, դեպի ազատական տնտեսություն կատարած քայլերի համակարգային փոփոխությունների իրականացման հարցերում Հայաստանի Հանրապետության սկզբունքային դիրքորոշումները եւ ձեռնարկումները նրա համար կարճ ժամանակում որոշակի միջազգային հեղինակություն եւ վարկանիշ էին ստեղծել: Այն խիստ անհրաժեշտ էր դիմագրավելու համար անկախության ճանապարհին Կենտրոնի հարուցելիք դժվարությունները, խոչընդոտները, ճնշումները: Այն կարեւոր էր նաեւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացված ճնշումներին դիմագրավելու համար:

գ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ որպես ճնշման միջոց Հայաստանի վրա

Ի սկզբանե Լեռնային Ղարաբաղի հարցում Կենտրոնի եւ Ադրբեջանի տեսակետներն ու շահերն օբյեկտիվորեն համընկնում էին: Այժմ, երբ Հայաստանն անկախացման պաշտոնապես հայտարարված կուրս էր վերցրել, նրանց համագործակցությունը Հայաստանի նկատմամբ առավել սերտ եւ ագրեսիվ պետք է դառնար: Այն տեսակետը, թե անկախության խնդիր չունենալու դեպքում Հայաստանը կարող էր կանխել Լեռնային Ղարաբաղի վրա ճնշումների նոր ալիքները, անտրամաբանական էր[384]: Մինչ այդ Լեռնային Ղարաբաղի փրկությունը հնարավոր էր դարձել այն ընդհանուր ժողովրդավարական խնդիրների հենքին խարսխելու, որպես ինքնորոշման ժողովրդավարական խնդիր հետապնդելու շնորհիվ: Քաղաքական պայքարի այդ ուղու տրամաբանական ու անխուսափելի բարձրագույն պահանջն էլ պետք է լիներ անկախության խնդիրը: Հրաժարվել դրանից եւ Ադրբեջանի հետ միասին կանգնել ԽՍՀՄ պահպանման դիրքերում՝ կնշանակեր վտանգի ենթարկել Լեռնային Ղարաբաղը: Ընդհակառակը, նոր իրավիճակում առավել անհրաժեշտ էր հզորացնել այդ գործոնը՝ շարունակելով մնալ ժողովրդավարության եւ անկախության համար պայքարող ուժերի ավանգարդում: Այս խնդիրը եւս ներկայացված է Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 1990թ. հոկտեմբերի 22-ի վերոհիշյալ ելույթում. «Հայաստանում հաստատվել են ժողովրդավարական կարգեր, կոմունիստական իշխանությունը վերացել է, Ադրբեջանում՝ հակառակը, կոմունիստական իշխանությունը ամրապնդվել է... Պարզ համեմատություն անցկացնելու դեպքում թվում է, թե Անդրկովկասում ստեղծվել է այնպիսի դրություն, ինչպիսին կար 1920 թվականին. կոմունիստական Ադրբեջանը դարձել է Կենտրոնի հենարանը՝ ժողովրդավարական Հայաստանի... դեմ պայքարելու համար: Եւ մենք, իսկապես Արցախում տեսնում ենք Կենտրոնի եւ Ադրբեջանի նմանատիպ համագործակցությունը: Այս հանգամանքը, թերեւս, Ադրբեջանին կարող է բերել ժամանակավոր շահեր, եւ, ըստ երեւույթին, բերում էլ է»[385]: Սակայն բացի օրվա իրողություններից գոյություն ուներ նաեւ քաղաքական զարգացումների միտում, որոնց ճշգրիտ հաշվարկումը եւ գնահատումը շատ ավելի կարեւոր էին՝ որպես քաղաքականությունը պայմանավորող հիմք եւ ելակետ. «Եթե 1920 թվականին Ադրբեջանը հանդես էր գալիս որպես հզորացող կոմունիստական Ռուսաստանի դաշնակիցը, ապա այժմ նա դարձել է ռեալ իշխանությունը կորցնող խորհրդային Կենտրոնի հենարանը՝ դրանով հակադրվելով ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ ժողովրդավարական Ռուսաստանին: Հանգամանք, որն էապես փոխում է իրերի վիճակը...»[386]: Այսինքն՝ քաղաքական դաշնակցության իմաստով հարաբերությունները հեռանկարային կարող էին

[383] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի,1991, 7, հոդվ. 122:*

[384] *Սա հատկապես տարածված տեսակետ էր բնակությամբ եւ ծագումով ղարաբաղցի գործիչների եւ մտավորականության շրջանակներում:*

[385] ***Տեր-Պետրոսյան Լ.**, Լնտրանի, էջ 146:*

[386] *Նույն տեղում:*

լինել ոչ թե Կենտրոնի, այլ հենց նույն այդ Կենտրոնի դեմ պայքարող, հզորացող եւ ժողովրդավար Ռուսաստանի հետ: Եւ այդ հաշվարկն էր դրված Հայաստանի քաղաքականության հիմքում: Ինչ վերաբերում է Ղարաբաղի վրա ժամանակ առ ժամանակ խստացող ճնշումներին, ապա դրանք անխուսափելի էին բոլոր դեպքերում եւ, ինչպես մինչ այդ, հաղթահարելի՝ միայն հզորացող ժողովրդավարական շարժումների եւ ուժերի օժանդակությամբ:

1990թ. ամռանը Լեռնային Ղարաբաղը շարունակում էր մնալ տնտեսական եւ տեղեկատվական խուլ շրջափակման, անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով հաճախակի խուզարկությունների, բռնությունների, արտակարգ դրության եւ պարետային ժամի պայմաններում: Հուլիսի 24-ին ուղղաթիռից Ղարաբաղում ցրած թռուցիկները Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի անունից պահանջում էին ենթարկվել Ադրբեջանին եւ նրա օրենքներին՝ հակառակ դեպքում սպառնալով ուժի գործադրում[387]: Մի քանի օր անց Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը որոշում կայացրեց դադարեցնել Շահումյանի շրջանային կուսկոմիտեի գործունեությունը եւ դրա ղեկավար Վալերի Աղաջանյանին հեռացնել կուսակցությունից: Սեպտեմբերի սկզբին ադրբեջանական լրատվամիջոցները սկսեցին գրել Շահումյանի շրջանի՝ որպես վարչական միավորի գոյության աննպատակահարմարության մասին: Հասկանալի էր, որ Բաքուն պատրաստվում է ցրել հայերով բնակեցված այս վարչական միավորը եւ տեղահանել նրա բնակչությունը: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը չեղյալ հայտարարեց Շահումյանի շրջանում բոլոր մակարդակների ընտրությունները, կասեցրեց բոլոր խորհուրդների գործունեությունը՝ նրանց իրավասությունները հանձնելով նշանակված ինչ-որ «կազմակերպական բյուրոյի»[388]: Խստացան բանակային ստորաբաժանումների, ներքին զորքերի եւ ադրբեջանական զինված կազմավորումների պատժիչ գործողությունները: Արգելվեցին Հայաստանից Գետաշեն եւ Շահումյան ուղղաթիռային թռիչքները, որ նրանց համար արտաքին աշխարհի հետ միակ կապն էր: Բնակչությանը բացահայտ ներկայացվում էր իրենց բնակավայրերը լքելու եւ արտագաղթելու պահանջ:

Միաժամանակ՝ փակվել էին Հայաստան մտնող գազամուղը եւ Ղազախ-Երեւան երկաթգիծը: Կենտրոնական լրատվամիջոցները շարունակում էին ապատեղեկատվության տարածումը՝ Հայաստանին Ադրբեջանի նկատմամբ ագրեսիայի մեղադրանք ներկայացնելով: Արձանագրելով այս իրողությունները՝ Հայաստանի Գերագույն խորհուրդը 1990թ. սեպտեմբերի 5-ին ընդունած հայտարարության մեջ ԽՍՀՄ եւ ադրբեջանական իշխանությունների համատեղ գործողությունները գնահատում էր որպես ապակայունացնող, առաջարկում էր խուսափել վտանգավոր առճակատումներից եւ հարցերը տեղափոխել միջպետական բանակցությունների հարթություն: Դրությունը կայունացնելու համար որպես երաշխիք՝ պահանջվում էր խորհրդային զինվորական ստորաբաժանումները դուրս բերել բնակավայրերից եւ տեղաբաշխել Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի վարչական սահմանների երկայնքով, վերացնել շրջափակումները, ցրել «Կազմկոմիտեն», վերականգնել իշխանության օրինական մարմինների գործունեությունը[389]:

Նույն օրերին իշխանության օրինական մարմինները Լեռնային Ղարաբաղում, Շահումյանում եւ Գետաշենում վերականգնելու եւ բռնություններին վերջ տալու պահանջով Մոսկվայում ծայրահեղ քայլի՝ հացադուլի դիմեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Ջորի Բալայանը, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, ԽՍՀՄ ժող. արտիստ Սոս Սարգսյանը, Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանը: Նրանց էին միացել՝ Լեռնային Ղարաբաղում՝ մարզխորհրդի մի շարք աշխատողներ, Մոսկվայում՝ տաջիկ պատմաբան Ռուստամ Շուքուրովը, Տաշքենդում՝ ուզբեկ Սուրաբ Շարաֆուդինովը: Այս առիթով ՀՀ Գերագույն խորհուրդը սեպտեմբերի 17-ին ընդարձակ մի դիմում ընդունեց՝ ուղղված «Աշխարհի երկրների խորհրդարաններին, միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին, ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովին»[390]: Հացադուլը դադարեցնելու եւ քաղաքական պայքարի այլ մեթոդների դիմելու խնդրանքով եւս մի դիմում Գերագույն խորհուրդն ընդունեց սեպտեմբերի 24-ին: Հացադուլը դադարեցվեց միայն Հայաստանի Գերագույն Խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա վեհափառ հայրապետի հորդորներից հետո:

[387] *Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, часть 3, с. 280.*
[388] *Նույն տեղում, էջ 282.*

[389] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1990, 17, հոդվ. 296:*
[390] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1990, 18, հոդվ. 321:*

Ստեփանակերտում զինվորական իշխանությունն առանց որեւէ պատճառի ձերբակալեց Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներ Ռոլես Աղաջանյանին եւ Համլետ Գրիգորյանին ու նրանց տեղափոխեց Ռուսաստան: Գերագույն խորհուրդն անմիջապես այս առիթով առանձին որոշում ընդունեց՝ դատապարտելով պատգամավորի անձեռնմխելիության իրավունքի այդ կոպիտ ոտնահարումը, եւ պահանջեց նրանց ազատ արձակել[391]: Հայաստանի ղեկավարությունը Ադրբեջանի ներկայացուցիչների հետ քաղաքական խորհրդակցություններ կազմակերպելու եւ բանակցությունների մեջ մտնելու մի քանի փորձեր արեց՝ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը կայունացնելու նպատակով: Սակայն կենտրոնական իշխանության ակտիվ ջանքերով դրանք առայժմ որեւէ հաջողության չէին կարողանում հասնել: Ղարաբաղում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում ադրբեջանական զինված խմբավորումների կողմից անասնագողությունը, հրկիզումները, մարդկանց առեւանգումները դառնում էին առավել հաճախադեպ, ամենօրյա երեւույթ:

դ) Լեռնային Ղարաբաղի հարցում առճակատումից դեպի փոխզիջումներով համաձայնության եւ խաղաղության հասնելու քաղաքական ուղեգիծը

Ինչպես սպասելի էր, եւ ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, Հայաստանի նկատմամբ ճնշումներ գործադրելու համար միութենական իշխանությունների հիմնական լծակը շարունակելու էր մնալ Լեռնային Ղարաբաղի հարցը: Դա հատկապես հարմար միջոց էր, քանի որ ճնշումներն իրականացվում էին հիմնականում Ադրբեջանի ձեռքով կամ նրանով միջնորդավորված: Անկախության հռչակագրից հետո, ինչպես տեսանք, ձեռնարկվեց այդպիսի ճնշումների նոր մի ալիք, մինչդեռ նոր իշխանության քաղաքական եւ գործնական քայլերի շնորհիվ Գորբաչովը ստիպված էր առայժմ ձեռնպահ մնալ Հայաստանում զինված կազմավորումների զինաթափման մասին նախագահական հրամանագրի անմիջական գործադրումից:

1988 թվականից ի վեր Լեռնային Ղարաբաղի հարցում պայքարն ընթացել էր, ճիշտ է՝ սահմանադրական ուղիով, սակայն, ըստ էության, առճակատումների միջոցով: Քանի դեռ գոյություն ուներ ԽՍՀՄ-ը, կենտրոնական իշխանությունը, ամբողջությամբ վերահսկելով հանդերձ իրավի-

[391] *Տեղեկագիր ՀՍԽ-ի, 1990, 20, հոդվ. 367:*

ճակը կամ ունենալով դրա հնարավորությունը, հրաժարվում էր բարձրացված խնդիրը լուծել, ուստիեւ պայքարի այդ ճանապարհը միակն էր: Անուրանալի եւ առարկայական էին նաեւ այդ պայքարի արդյունքները: Դրա շնորհիվ ձախողվել էր Լեռնային Ղարաբաղի բնակչության տեղահանման՝ նախիջեւանյան տարբերակով հայկական այս երկրամասի հարցը լուծելու Ադրբեջանի ծրագիրը, որ սկսվել էր դեռ 1987-ին հայկական Զարդախլու գյուղի բնակչության բռնագաղթով: Դիմադրության չհանդիպելու դեպքում այն ակնհայտորեն աստիճանաբար տարածվելու էր նաեւ հայաբնակ այլ բնակավայրերի, իսկ կայսրության փլուզման անկառավարելի շրջանում՝ նաեւ ԼՂԻՄ-ի վրա:

Երկուսուկես տարվա պայքարի շնորհիվ ապահովության որոշակի երաշխիքներ էին ձեռք բերվել: Մոսկվան, համառ դիմադրությամբ հանդերձ, այնուամենայնիվ, ստիպված էր եղել նահանջի որոշակի քայլեր կատարել եւ մի շարք օրենսդրական ակտեր ընդունել: Խնդիրը եթե ոչ իրավական, ապա փաստական առումով միջազգայնացվել էր, ընդ որում՝ ոչ թե որպես միջկրոնական կամ պահանջատիրական, այլ որպես ժողովրդավարական պայքարի օրակարգի հարց, ինչի շնորհիվ վաստակել էր միջազգային հանրության դրական վերաբերմունքն ու արդյունավետ աջակցությունը: Եւրոպական Խորհրդարանը եւ ԱՄՆ-ը մի քանի անգամ արդեն պաշտոնապես իրենց դրական վերաբերմունքն էին արտահայտել եւ պաշտպանել խնդրի լուծման Հայկական ժողովրդավարական շարժման ուղեգիծը: Այն նույնպիսի հնչեղություն էր ստացել ու դրական վերաբերմունքի արժանացել նաեւ Խորհրդային Միության ժողովրդավարական ուժերի կողմից, որոնց ազդեցությունն ու կշիռը երկրի քաղաքական կյանքում հետեւողականորեն մեծանում էր: Մարզի բնակչությունը գտնվում էր զգաստ վիճակում, հոգեբանական վերելքի պայմաններում, ինչպես նաեւ տիրապետում էր ինքնապաշտպանական որոշակի քաղաքական ու նվազագույն անհրաժեշտ զինական միջոցների: Եւ վերջապես՝ Հայաստանում արդեն, ի տարբերություն Մոսկվայի կամակատար կոմունիստական, կազմալուծված ու բարոյալքված իշխանությունների, կար նոր եւ ուժեղ ժողովրդավարական իշխանություն, որն անհրաժեշտության դեպքում բոլոր միջոցներով կօգներ Լեռնային Ղարաբաղին: Այսինքն՝ տեղահանման այն վտանգը, որ անխուսափելի կլիներ նախորդ տարիներին Շարժման չլինելու դեպքում, այժմ, ըստ էության բացառվում էր:

Մյուս կողմից՝ տեղի էին ունեցել քաղաքական իրավիճակի որոշակի որակական փոփոխություններ: Առաջացել էին նոր իրողություններ,

որոնք, Ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման խնդրից ելնելով, չէր կարելի հաշվի չառնել: Առաջին հերթին՝ դա Խորհրդային Միությունում ծավալված ժողովրդավարական գործընթացների խորացումն էր ու դրան զուգահեռ՝ կենտրոնական իշխանության թուլացումը: Երկրորդը՝ Հայաստանում կոմունիստական դարաշրջանի ավարտն էր, նոր՝ ժողովրդավարական իշխանության հաստատումը: Այժմ Մոսկվան Հայաստանում ուներ ոչ թե իրեն ենթակա եւ իր օրգանական մասը կազմող, այլ գաղափարական եւ քաղաքական առումով իրեն հակադիր իշխանություն, որը նաեւ անկախության գործընթաց էր սկսել: 1988-89թթ. Մոսկվայի համար խնդիրը կայսրության հիմքերը խարխլող ժողովրդավարական ամենահզոր շարժումից ազատվելն էր, ինչի համար նա հրաժարվում էր Լեռնային Ղարաբաղի հարցում որեւէ զիջման գնալ եւ աշխատում էր ամեն ինչ վերադարձնել Շարժմանը նախորդած իրավիճակին, ինչով, սակայն, Ղարաբաղը կմնար առանց անվտանգության որեւէ երաշխիքի: Հայաստանի կոմունիստական իշխանությունները, միշտ մնալով նրա կամակատարը, որեւէ խնդիր չէին հարուցում: Այժմ նրա համար խնդիրը Հայաստանում հաստատված ոչ կոմունիստական, ժողովրդավարական իշխանությունն էր, նրա նախաձեռնած անկախության գործընթացը խոչընդոտելը: Այս դեպքում, ահա, Ղարաբաղը կարող էր ծառայել որպես ճնշումներ իրականացնելու հարմար լծակ՝ այդ իշխանությունը վարկաբեկելու, վերացնելու կամ անկախության ուղեգծից հետ պահելու համար:

Սակայն Հայաստանի նոր իշխանության համար խնդիրը միայն Հայաստանի որդեգրած անկախության քաղաքական ուղեգծի անվտանգության ու անխաթարության ապահովման հարցը չէր: Նոր իրավիճակում, եւ մանավանդ սպասվող զարգացումների ուղղվածությունը նկատի ունենալով, հենց իր՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման տեսակետից չափազանց կարեւոր նշանակություն էր ձեռք բերել տեղում մարզային օրինական իշխանությունների վերականգնման հարցը: Սակայն դա հնարավոր էր միայն բանակցությունների եւ որոշակի փոխզիջումների միջոցով: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման համար Ադրբեջանի եւ կենտրոնական իշխանությունների դեմ քաղաքական ճակատային պայքարի, առճակատման փուլը, հնարավոր անհրաժեշտ արդյունքներն արձանագրելուց հետո, իրեն սպառել էր: Քաղաքական նոր իրողությունների պայմաններում դրա շարունակումը կարող էր նաեւ հակառակ արդյունքների հանգեցնել: Ուստի Հայաստանի ժողովրդավարական իշխանության համար առաջանում էր քաղաքական

բոլորովին նոր խնդիր՝ թույլ չտալ, որ առճակատումը խորանա, առկա հակամարտությունը խորացվի, եւ Կենտրոնն այն օգտագործի որպես Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու միջոց: Հասկանալի է, որ այդ ճնշումների հաջողության դեպքում վտանգվելու էր ոչ միայն անկախության գործընթացը, այլեւ, առաջին հերթին, հենց Ղարաբաղը:

Առճակատման փուլի դադարեցման անհրաժեշտության քաղաքական այս եզրահանգմանը Շարժման ղեկավարությունը, թերեւս, մի քանի ամիս ավելի վաղ էր եկել՝ 1990թ. փետրվարին ընդունելով փոխհամաձայնության որոնման Բալթյան խորհրդի միջնորդական առաջարկը: Վերջինիս ջանքերով կազմակերպված այդ խորհրդակցությունը սկսվելուց հետո տապալվեց ադրբեջանական կողմի մեղքով: Այսինքն՝ դեռ իշխանության գալուց ամիսներ առաջ ակնհայտ էր, որ առճակատման քաղաքականությունից անհրաժեշտ է լինելու անցում կատարել համաձայնության ուղիների որոնման քաղաքականության, եւ այդ անհրաժեշտությունն այժմ արդեն առարկայորեն դրսեւորվում էր: Հենց այդպիսի ուղեգիծ էր որդեգրել Հայաստանի նոր իշխանությունն ի սկզբանե[392], մինչդեռ հիմնականում Ղարաբաղից ընտրված պատգամավորները, ինչպես նաեւ խորհրդարանի մի շարք այլ անդամներ, հաճախակի ելույթներով ու հարցապնդումներով, փաստորեն, պահանջում էին շարունակել առճակատման քաղաքականությունը, ընդհուպ պաշտոնապես կամ բացահայտ ռազմական ուժ մտցնել Լեռնային Ղարաբաղ: Այս առիթով Լեւոն Տեր-Պետրոսյանը Գերագույն խորհրդի սեպտեմբերի 3-ի փակ նիստում ստիպված էր եւս մեկ անգամ մանրամասն

---

[392] *Ամիսներ անց, Լեւոն Տեր-Պետրոսյանն հիշում է այդ ուղղությամբ իր կատարած առաջին քայլը. «Փոխզիջումների գնալու նախաձեռնությամբ ես հանդես եկա 1990 թ. օգոստոսին, երբ ընտրվեցի Գեւ նախագահ: Առաջին անգամ, երբ եղա Մոսկվայում, ես հանդիպեցի Ռիժկովի հետ: Եւ առաջին անգամ նրան ասացի, որ մենք պատրաստ ենք երկխոսության, պատրաստ ենք փոխզիջումների գնալ, պատրաստ ենք մորատորիում, երկկողմանի մորատորիում հայտարարել այն բոլոր որոշումների վրա, որ ընդունել են Հայաստանը, Ադրբեջանը եւ Կենտրոնը ԼՂ հարցով: Նա զարմացած էր, ապշած. էքստրեմիստները եկել են իշխանության եւ պատրաստ են գնալ փոխզիջումների՞.... Մենք ունեինք հստակ նպատակ՝ Լեռնային Ղարաբաղում վերականգնել սահմանադրական ժողովրդավարական իշխանություն, այլապես ոչ մի բանակցություն ոչ մի արդյունքի չի կարող բերել, եթե ԼՂ-ը հանդես չի գալիս որպես սուբյեկտ: Իսկ այդպիսին հանդես գալու համար անհրաժեշտ էր, որ այնտեղ վերականգնվեին սահմանադրական իշխանությունները, որոնք կասեցված էին Գորբաչովի հրամանագրով» (ՀՀԱՆԱ, թղթ. 12/03.05.91-Լ. Տեր-Պետրոսյանի մամուլի ասուլիսը 03.05.1991):*

ներկայացնել Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ կապված նոր ռազմավարությունը եւ ծրագիրը[393]: Այն այսպիսին էր.

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման համար գոյություն ունի երկու ռազմավարություն՝ առճակատման եւ փոխզիջումներով կարգավորման: Շարժման սկզբից ի վեր, ըստ էության, խնդիրը հետապնդվել է կողմերի առճակատման միջոցով: Դա հայկական կողմին բերել է որոշակի հաջողություններ: Այժմ խնդիրը մտել է ճգնաժամային փուլ՝ ե՛ւ հայկական կողմի, ե՛ւ Ադրբեջանի համար: Անհրաժեշտ է նոր ուղի փնտրել, մասնավորապես՝ փորձել այն փոխզիջումների միջոցով կարգավորելու դիվանագիտական ճանապարհը: Դրան հակված է նաեւ Ադրբեջանը: Նույն կոչն է անում նաեւ Կենտրոնը, չնայած՝ վերջինս իր այդ կոչում անկեղծ չէ, քանի որ Ղարաբաղում արտակարգ դրություն պահելով նա վիժեցնում է բանակցության ամեն մի փորձ:

Տվյալ իրավիճակում ամենակարեւոր խնդիրը համարելով արցախահայության գոյության ապահովումն Արցախում՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը արձանագրում էր. «....այսօր առճակատման ստրատեգիան արդեն սպառել է իրեն, եւ ժամանակն է անցնելու փոխզիջումների ստրատեգիային.... Ավելին, ես չեմ բացառում, որ դիվանագիտական նկատառումներով կարելի է նույնիսկ որոշ ժամանակով մորատորիում հայտարարել մեր իսկ ընդունած որոշումների վրա: Նկատի ունեմ դեկտեմբերի 1-ի եւ հունվարի 9-ի որոշումները: Դրա համար, ասացի, կա երկու պայման. մեկ՝ վերականգնել Արցախի օրինական իշխանությունները, եւ երկրորդ՝ բացառել բանակի միջամտությունը Արցախի գործերին»[394]:

Լեռնային Ղարաբաղում իշխանության սահմանադրական մարմինների վերականգնումով Հայաստանը այստեղ որպես գործընկեր կունենար սահմանադրական, օրինական իշխանություն, որի հետ եւ կարող էր արդյունավետ իրականացնել ինտեգրման քայլեր: Մարզային քաղաքացիական իշխանության բացակայության եւ զինվորական իշխանությունների կամայականությունների պայմաններում դա գործնականում անհնար էր: Ղարաբաղցի պատգամավորները պահանջում էին Լեռնային Ղարաբաղում իշխանության մարմինները վերականգնելու համար ընտրություններ անցկացնել Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ: Հայաստանի

[393] *Այս եզրույթի՝ ձայնագրությունից կատարված առաջին հրապարակումը տե՛ս* **Տեր-Պետրոսյան Լ.**, *Ընտրանի, էջ 111-122:*

[394] **Տեր-Պետրոսյան Լ.**, *Ընտրանի, էջ 121:*

Գերագույն խորհրդի նախագահը փորձում էր համոզել ղարաբաղցի գործիչներին, որ դա առճակատման ռազմավարության շարունակում կլինի, որեւէ իրավական արդյունք չի տա եւ կխոչընդոտի հետագա գործնական քայլերին[395]: Սեպտեմբերի 30-ին նշանակված էին Ադրբեջանի Գերագույն խորհրդի եւ բոլոր մակարդակների տեղական խորհուրդների ընտրությունները[396]: Նա առաջարկում էր, որ, եթե ոչ Բաքվի, ապա սեփական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը մասնակցի սեպտեմբերի 30-ին կայանալիք ընտրություններին եւ ստանա տվյալ պահին ամենակարեւորը՝ օրինական եւ ճանաչված մարզային իշխանության մարմիններ[397]: Քաղաքացիական իշխանությունների ձեւավորմամբ մարզում կվերանար նաեւ արտակարգ դրությունը:

Այս ծրագրի իրականացմամբ մի քանի կարեւոր հարցեր էին լուծվում. առաջին՝ Ղարաբաղն ունենում էր հայկական օրինական իշխանություն, երկրորդ՝ Հայաստանն, ի դեմս Ղարաբաղում իշխանության օրինական մարմինների՝ ունենում էր պաշտոնական գործընկեր, առանց որի Հայաստանի ձեռնարկած որեւէ օգնություն արդյունավետ չէր կարող լինել: Երրորդ՝ Ղարաբաղում իրավիճակը համեմատաբար խաղաղվում եւ կայունանում էր, եւ Կենտրոնը այլեւս չէր կարողանում այն Հայաստանի վրա որպես ճնշամիջոց օգտագործել: Չորրորդ՝ Ղարաբաղի իշխանությունը կարող էր հանդես գալ որպես պաշտոնական կողմ՝ խնդրի հետագա կարգավորմանն ուղղված բանակցություններում: Բացի այս ամենից, կար եւս մի նշանակալից հանգամանք: Միութենական նոր պայմանագրի նախագիծը մշակելու իր նախաձեռնություններում նոր դաշնակիցներ ու վճռա-

[395] *Նույն տեղում, էջ 119: Նման ընտրությունների արդյունքներն անմիջապես չեղյալ կհայտարարեին ե՛ւ Մոսկվան, ե՛ւ Ադրբեջանը, ինչով այն կդադարեր իրավական վաստակ լինելուց:*

[396] *Այս ընտրություններում հաղթանակ տարավ Ադրբեջանի կոմկուսը, 350 տեղից ժողճակատը կարողացավ վաստակել միայն 40 մանդատ (տե՛ս* **Независимый** *Азербайджан: новые ориентиры, Российский институт стратегических исследований, т. 1, Москва, 2000, с. 14.): ԳԽ-ի փոխարեն ստեղծվեց Միլի մեջլիս, որտեղ 25:25 հավասար թվաքանակով մտան ժողճակատի եւ Ադրբեջանի կոմկուսի ներկայացուցիչները: Իսկ հանրապետության Նախագահ ընտրվեց Մութալիբովը:*

[397] **Տեր-Պետրոսյան Լ.**, *Ընտրանի, էջ 118-119: Միաժամանակ տեղի ունեցող Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընտրությունները կարելի էր կազմակերպել այնպես, որ դրանք ավարտվեին անարդյունք:*

կան օժանդակություն ստանալու համար Գորբաչովը Նովոօգարյովյան գործընթացներում ընդգրկել էր նաեւ ինքնավար կազմավորումների ներկայացուցիչներին ու, որպես այդպիսին, հնարավորինս բարձրացրել նրանց կարգավիճակն ու կարեւորությունը[398]: Իշխանության սահմանադրական մարմինների վերականգնումով Լեռնային Ղարաբաղը հնարավորություն կստանար մասնակցել այդ գործընթացներին, մի կողմից՝ անմիջական շփումների հնարավորություն ունենալով Գորբաչովի հետ, մյուս կողմից՝ հնարավորինս օգտվելով տվյալ պահին ինքնավարություններին օբյեկտիվորեն տրված կարեւորության այդ հանգամանքից:

Արտաքուստ պետք է թվար, թե այս ամենը նահանջ է եւ տրամագծորեն հակադրվում է նախորդ տարիների պայքարի ոգուն ու ձեռքբերումներին: Բնական է, որ որոշ ուժեր եւ գործիչներ դրան հակադրվելու էին պայքարի նախորդ փուլի կարգախոսների իներցիայով, որոշ ուժեր՝ կեղծ-ազգայնական դիրքերից դա շահարկելու էին իշխանության դեմ: Հակադրվելու էին, առաջին հերթին, նրանք, ովքեր Լեռնային Ղարաբաղի հարցը հետեւողականորեն համարում էին «Հայ դատ»/պահանջատիրության մաս, ոչ թե ժողովրդավարական, այլ հողային պահանջատիրական խնդիր: Նոր մոտեցումը դժվարությամբ էին ընդունելու եւ դրան հակադրվելու էին նաեւ ղարաբաղցի գործիչները, որոնք այդպես էլ չէին կարողանում դուրս գալ տեղայնական, մեկ խնդրի շրջանակներից, այն դիտել կատարված արմատական փոփոխությունների, նոր խնդիրների եւ հնարավոր քաղաքական զարգացումների ետնախորքում: Այսինքն՝ նմանօրինակ ծրագիր ներկայացնելը ու դրանով առաջնորդվելը խոր համոզմունք, որոշակի ռիսկ ու քաղաքական խիզախություն էր պահանջում[399]: Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը գնաց այդ քայլին՝ քիչ անց Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման իր այս ծրագիրն ու ռազմավարությունը ներկայացնելով նաեւ հրապարակավ[400]:

---

398 *Կենտրոնի կողմից ինքնավար կազմավորումների փաստական կարգավիճակի եւ նրանց կարեւորության բարձրացման այս միջոցառումն, առաջին հերթին, ուղղված էր Ելցինին թուլացնելու նպատակին, քանի որ հենց Ռուսաստանի կազմում էին գտնվում ինքնավարությունների մեծագույն մասը:*

399 *«Փոխզիջումների մասին խոսելով ես չեմ վախենում իմ վարկը կորցնելուց: Իսկ դուք կարող եք ժողովրդի մեջ տարածել, որ ես դավաճանել եմ Արցախի գործին» (տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, էջ 121):*

400 *Նույն խնդրի հետ կապված իր հիմնավորումները նա ներկայացրեց հոկտեմբերի 9-ին հրապարակված իր մի հարցազրույցում (տե՛ս նույն տեղում, էջ 137-138):*

Դա չէր նշանակում, անշուշտ, ուժային մեթոդներից ընդհանրապես հրաժարում, եթե առճակատումը պարտադրվեր հակառակ կողմից (Հայաստանի նույն իշխանությունը քիչ անց ընդունեց այդ մարտահրավերը՝ պարտադրված պատերազմը, եւ հաղթանակով դուրս եկավ դրանից): Դրանով հանդերձ՝ ղարաբաղյան հակամարտության խաղաղ, փոխզիջումային հիմունքներով կարգավորման ռազմավարությունը Հայաստանի իշխանության ու նրա ղեկավարի անխախտ ուղենիշը մնաց հետագա տարիներին:

* * *

Մոսկվայի քողարկված դիմադրությունը հաղթահարելի էր, եւ արդեն 1990թ. սեպտեմբերին Լեւոն Տեր-Պետրոսյանը մոտ էր նոր ռազմավարության առաջին քայլերի իրականացմանը: Մոսկվան եւ Բաքուն համաձայնել էին վերականգնել մարզային իշխանության մարմինները, եթե Լեռնային Ղարաբաղը համաձայներ մասնակցել սեպտեմբերի 30-ին նշանակված Ադրբեջանի Գերագույն խորհրդի եւ տեղական ընտրություններին: Սակայն դրան խանգարեցին հայաստանյան եւ ղարաբաղյան վերոհիշյալ ուժերը[401]:

Քաղաքական համաձայնության քայլերի բացակայության պայմաններում Կենտրոնի եւ Ադրբեջանի շահերը եւ գործելակերպը Ղարաբաղում այս շրջանում շարունակում էին համընկնել, եւ Ղարաբաղը մնում էր որպես Հայաստանի վրա ճնշումներ գործադրելու թիրախ: Այդ ճնշումները

---

401 *Ամիսներ անց, երբ իրադարձությունների թելադրանքով Լեռնային Ղարաբաղի գործիչները նույնպես եկել էին նույն համոզման, Լեւոն Տեր-Պետրոսյանը ափսոսանքով հիշեցնում է. «Այդ ժամանակ (1990-ի սեպտեմբերին Ա.Ս.) Մութալիբովը եւ Մոսկվան խնդրում, աղաչում էին, որ Արցախը մասնակցի այդ ընտրություններին: Ամեն ինչ արվեց նրանց համոզելու համար: Երկու մարդ գտնվեց (նկատի ունի՝ Ղարաբաղում Ա.Ս.), որ հասկացավ, թե դա ճիշտ է, մնացածները միայն խանգարեցին: Եթե սեպտեմբերի 30-ին այդ ընտրությունները տեղի ունենային, եւ թող 10 պատգամավոր (Լեռնային Ղարաբաղից-Ա.Ս.) ընտրվեր Ադրբեջանի Գերագույն խորհրդում, բայց գոնե մենք մարզային խորհուրդ կունենայինք: Այսօր չափազանց դժվար է այս հարցի լուծումը: Մինչեւ Արցախում մարզային իշխանություն չլինի, ոչ մի հարց չի լուծվի» (ՀՀԱՆԱ, թղթ. 12/05.06.91, թ. 4ա ելույթ ՀՀ Գեն նստաշրջանում 05.06.1991): Այդ երկու հոգին, որոնք հասկացել էին խնդրի կարեւորությունը (Լեւոն Տեր-Պետրոսյանի բանավոր տեղեկատվությամբ) Հենրիկ Պողոսյանը եւ Լեոնարդ Պետրոսյանն էին:*

մեծացան հատկապես այն ժամանակ, երբ աշխարհին զբաղված էր Պարսից ծոցում սկսված պատերազմով, իսկ խորհրդային կենտրոնը, օգտվելով դրանից, ակտիվացրեց իր պետական ահաբեկչությունը անկախության ուղին բռնած հանրապետությունների նկատմամբ: Հարձակումները հաճախադեպ էին հատկապես ռազմավարական կարեւոր դիրք ունեցող բնակավայրերի, ինչպես օրինակ, Շուշիի շրջանի Բերդաձորի չորս փոքրիկ գյուղերի վրա, որոնց բնակչության ընդհանուր թիվն ընդամենը 540 էր: Բերդաձորը հաջողությամբ պաշտպանվում էր պարբերաբար կրկնվող ահաբեկումներից եւ բացահայտ զինված գրոհներից: Գնդակոծությունների եւ գրոհների էին ենթարկվում նաեւ Հայաստանի սահմանամերձ գյուղերը:

Մոսկվայի՝ հետեւողականորեն խստացող այս գործելակերպի դեմ էր ուղղված Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից ընտրված ԽՍՀՄ 58 ժողովրդական պատգամավորների քաղաքական մի քայլը: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 4-րդ համագումարի նախօրեին՝ 1990թ. դեկտեմբերի 2-ին, նրանք հայտարարեցին, որ քանի դեռ կենտրոնական իշխանությունը չի կատարել իր իսկ կողմից ընդունած որոշումները եւ տված խոստումները, մասնավորապես՝ չի վերացրել մարզի շրջափակումը, չի վերականգնել իշխանության սահմանադրական մարմինների գործունեությունը, շարունակվում են մարզում ոտնահարվել մարդու տարրական իրավունքները, իրենք չեն մասնակցի համագումարի աշխատանքներին[402]: Հայաստանի Գերագույն խորհուրդն իր հերթին, հատուկ մի հայտարարությամբ հավանություն տվեց եւ պաշտպանեց նրանց այս քայլը եւ ներկայացրած պահանջները[403]:

1991թ. հունվարի 12-13-ին կրկին գնդակոծվեցին Բերդաձոր, Եղծահող եւ Մեծ Շեն գյուղերը: Ստեփանակերտում տարածվում էին թռուցիկներ, որտեղ պահանջվում էր, որ «Երեւանից եկած գրոհայինները» երեք օրվա ընթացքում հեռանան՝ հակառակ դեպքում սպառնալով կրակի մատնել բոլոր այն բնակավայրերը, որտեղ նրանք թաքնվում են: Հայտնվում էր, որ մինչեւ հունվարի 20-ը կարտաքսվեն Գետաշենի եւ Մարտունաշենի բնակիչները, կդադարեցվի գազի մատակարարումը Հայաստանին, Ստեփանակերտին, կփակվեն երկաթուղին եւ օդանավակայանը[404]:

Շահումյանի շրջանը դեռ աշնանից շրջափակված էր հատուկ ջոկատայինների կողմից: Հունվարի 14-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը հրամանագիր ընդունեց շրջանը լուծարելու եւ նրա տարածքը հարեւան ադրբեջանական շրջաններին կցելու մասին: Նույն օրը ԽՍՀՄ ներքին զորքերը զինաթափեցին շրջանի միլիցիան: Պաշտպանական եւ քաղաքական անհրաժեշտ եւ համարժեք քայլերը կատարվում էին ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում: Չնայած հատուկ դրության պայմաններին՝ Շահումյանի շրջանի լուծարման հրամանագրի առիթով մեծ հանրահավաք կազմակերպվեց Ստեփանակերտում՝ այդ հրամանագիրը չեղյալ հայտարարելու, մարզային իշխանության մարմինների իրավազորությունները վերականգնելու, ադրբեջանական զինված կազմավորումները մարզի տարածքից դուրս բերելու պահանջով[405]: Նույնաբովանդակ հայտարարություններով հանդես եկան ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը[406] եւ Հայոց համազգային շարժումը[407]:

Փետրվարի 20-ին նշվեց Ղարաբաղյան համաժողովրդական շարժման 3-րդ տարեդարձը: Բազմամարդ հանրահավաքներ գումարվեցին Երեւանում եւ Ստեփանակերտում[408]: ՀՀ Գերագույն խորհուրդն այս առիթով ընդունեց արցախահայությանն ուղղված դիմում: Բարձր գնահատելով եռամյա պայքարի ընթացքում նրանց դրսեւորած տոկունությունը՝ Գերագույն խորհուրդը հավաստում էր. «Ստեղծված պայմաններում Հայաստանի Հանրապետությունը ձգտում է արցախյան հիմնախնդրի քաղաքական լուծման, որի ճշմարիտ ուղին բռնության բացառումն է եւ Արցախի բնակ-

[402] *«Հայաստանի Հանրապետություն», 07.12.1990: Այնուամենայնիվ, բոյկոտը լիակատար չէր. Հայաստանից ընտրված պատգամավորներից ՊԱԿ-ի նախկին նախագահ Վ. Բագամյանցը, ՀԽՍՀ կառավարության նախկին նախագահ Վ. Մարգարյանցը եւ գեներալ Մ. Սուրկովը, չնայած նախապես ստորագրել էին պատգամավորների այդ հայտարարությունը, մասնակցեցին համագումարի աշխատանքներին:*

[403] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 23, հոդվ. 457:*

[404] *«Հայաստանի Հանրապետություն», 16.01.1991:*

[405] *«Հայաստանի Հանրապետություն», 23.01.1991:*

[406] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 1, հոդվ. 9:*

[407] *Տե՛ս «Հայք», 16.01.1991:*

[408] *Հետաքրքիր է, որ սփյուռքահայ կազմակերպությունները, մասնավորապես՝ կուսակցությունները, որեւէ միջոցառում չկազմակերպեցին այս տարեդարձը նշելու համար: Այդ առիթով իր խոր զարմանքն ու տարակուսանքն է հայտնում սփյուռքահայ լրագրողներից մեկը եւ անում տխուր, բայց դիպուկ հետեւություն. «Ամերիկահայության համար Հայաստանն ու հայությունը կրնան ներշնչման աղբյուր դառնալ երկու ծայրագույն պարագաներու: Ասոնք են՝ խանգավառ հաջողությունները եւ ապեռները» (**Գագանճյան Կ.**, Հայաստանի Հանրապետության առաջին տարիները, Պեյրութ-Լիբանան, 1997 էջ 63):*

չության ազատ ինքնորոշման իրավունքի իրագործումը: Միեւնույն ժամանակ՝ Հայաստանի Հանրապետությունն ամենայն պատասխանատվությամբ հայտնում է Արցախին զորավիգ կանգնելու, ձեր կյանքն ու կենսական շահերը բոլոր միջոցներով պաշտպանելու իր անփոփոխ վճռականությունը եւ ամեն ինչ կանի Արցախի վերամիավորումը Մայր Հայրենիքին ավարտին հասցնելու համար»[409]:

Այս ամբողջ ընթացքում շարունակվում էին առճակատումներից խուսափելու եւ համաձայնության հիմքի վրա Լեռնային Ղարաբաղում սահմանադրական կարգավիճակը եւ մարզային իշխանության մարմինների լիազորությունները վերականգնելու ջանքերը: Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին հաջողվեց երկրորդ անգամ՝ 1991թ. փետրվարին, այդ խնդիրը մոտեցնել լուծման եզրագծին: Կենտրոնական իշխանությունների հետ արդյունավետ բանակցությունների շնորհիվ հնարավոր էր եղել հասնել ԽՍՀՄ Նախագահի համապատասխան հրամանագրի նախագծի պատրաստմանը՝ Լեռնային Ղարաբաղում իրավիճակը կարգավորելու մասին: Դրան նախապես իր համաձայնությունն էր տվել նաեւ Ադրբեջանի ղեկավար Մութալիբովը: Անգամ նախատեսված էր, որ հրամանագիրը կստորագրվի փետրվարի 18-ին, սակայն նույն ուժերը[410], որոնք 1990-ի սեպտեմբերին էին խանգարել, այժմ էլ վերջին պահին կրկին հաջողել էին ձախողել հրամանագրի ստորագրումը[411]:

Կենտրոնական իշխանության հետ բանակցությունները Լեռնային Ղարաբաղում իրավիճակը կարգավորելու, բռնություններն ու ահաբեկչու-

[409] *Տեղեկագիր ՀՀ Գհ-ի, 1991, 4, հոդվ. 69:*

[410] *Ավելի ուշ, մի այլ առիթով Լեւոն Տեր-Պետրոսյանը մասնավորեցնում է, թե որոնք էին Հայաստանից դուրս գործող այդ ուժերը. «Եթե Գորբաչովն իր հրամանագրով վերականգնի կասեցված 20-րդ գումարման մարզային խորհուրդը, ապա այն կկազմակերպի ու կընտրի նոր մարզային խորհուրդ, ինչպես նաեւ հանրապետության Գխ համար պատգամավորներ, եւ ամեն ինչ իր տեղը կընկնի: Փետրվարի 8-ին Գորբաչովը պատրաստ էր ստորագրել այդ հրամանագիրը, դրան համաձայն էին բոլորը: Փետրվարի 9-ին ես գնացի, որ վերցնեմ ստորագրված հրամանագիրը, սակայն, պարզվում է, Մութալիբովը գնացել էր Բաքու, այնտեղ նրա վրա ճնշումներ էին եղել»: Մութալիբովը ետ էր վերցրել իր համաձայնությունը: Իրենց հերթին՝ Գորբաչովի վրա ճնշումներ էին գործադրել ԽՍՀՄ ՆԳ նախարարը եւ ներքին զորքերի հրամանատարը (տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 12/03.05.91, էջ 10-11 է. Տեր-Պետրոսյանի մամուլի ասուլիսը 03.05.1991):*

[411] *ՀՀԱՆԱ, թղթ. 12/05.06.91, թ. 3բ ելույթ ՀՀ Գհ նստաշրջանում 05.06.1991:*

թյունը վերացնելու, մարզային իշխանությունների լիազորությունները վերականգնելու հարցում վերջնական հաջողություն չունեցան: Քաղաքական հիմքի վրա խնդրի լուծմանը այս անգամ էլ խանգարեցին ինչպես դրսի, այնպես էլ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի «արմատական» ուժերն ու գործիչները: Այլ բան չէր մնում, քան փորձել հարցը բարձրացնել իրավական հիմնավորմամբ, որքան էլ ակնհայտ էր, որ այդ կերպ հաջողության հասնելու հնարավորություններն անհամեմատ ավելի քիչ էին: Հայաստանի Գերագույն խորհուրդը փետրվարի 27-ի իր որոշմամբ, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, պաշտոնական դիմում ընդունեց՝ ուղղված ԽՍՀՄ Սահմանադրական հսկողության կոմիտե: Դրանում ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող էր համարվում. ա) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի որոշման 1-ին հոդվածի 3-րդ մասը, որով Լեռնային Ղարաբաղում դադարեցվել էր մարզային իշխանության մարմինների գործունեությունը, բ) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման 3-րդ կետը, որով ստեղծվել էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ եւ օրենքներով չնախատեսված հակասահմանադրական մարմին՝ «Կազմկոմիտե» (որի վրա էր դրվել մարզային խորհրդի եւ նրա գործադիր կոմիտեի գործունեության վերականգնման հարցը, ինչն այդպես էլ չէր լուծվել): Սահմանադրական հսկողության կոմիտեին առաջարկվում էր քննարկել դրանց՝ ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխանության հարցը[412]:

Հայաստանի արտաքին քաղաքական ակտիվ քայլերը եւ օրենսդիր մարմնի քաղաքականապես գրագետ որոշումները որոշակիորեն բարենպաստ կարծիք եւ վերաբերմունք էին ստեղծում տարբեր երկրների քաղաքական շրջանակներում եւ միջազգային կազմակերպություններում: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը փետրվարի վերջին մարտի սկզբին քննության առարկա էր դարձրել Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների հարցը: Մարտի 3-ին հրապարակվեց եկեղեցիների համաշխարհային խորհրդի դիրքորոշումը: Այն Խորհրդային Միության ղեկավարին կոչ էր անում միջոցներ ձեռք առնել ապահովելու Ղարաբաղի բնակչության կրոնական, մշակութային, ազգային պահանջները, ընդհուպ ազգային ինքնորոշման իրավունքը[413]: Մարտի 14-ին Եւրոպական Խորհրդարանը նոր մի բանաձեւ ընդունեց Հայաստանի եւ Լեռնային Ղարաբա-

[412] *Տեղեկագիր ՀՀ Գհ-ի, 1991, 04, հոդվ. 74:*

[413] *«Հայաստանի Հանրապետություն», 07.03.1991:*

ղի հարցի մասին, որով Գորբաչովին կոչ էր անում արագ որոշումներ ընդունել՝ դադարեցնելու համար Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը եւ վերականգնելու Լեռնային Ղարաբաղի սահմանադրական իշխանությունների լիազորությունները[414]: Եւ, որքան էլ միջազգային հանրությունը Գորբաչովին չէր ուզում նեղացնել, այնուամենայնիվ, ձեւավորված ճիշտ պատկերացումները եւ դրանց հիման վրա միջազգային հանրային կարծիքը Կենտրոնի համար որոշակի զսպաշապիկի դեր էին խաղում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ նոր ճնշամիջոցների խնդրում:

Ե) Կայսրության պահպանման համառ ջանքերը եւ Հայաստանը

Առավել փորձառու եւ հեռատես քաղաքական գործիչներն այլեւս կասկած չունեին, որ Խորհրդային Միությունը դատապարտված է փլուզման: Այդ մասին բարձրաձայն ասում էին նաեւ համաշխարհային ճանաչում ունեցող քաղաքական դեմքեր, ինչպես, օրինակ, Զբիգնեւ Բժեզինսկին. «Ներկայիս Խորհրդային Միությունը դատապարտված է: Ավելին՝ այն չի փոխարինվելու Գորբաչովի հանրահայտ «Ինքնիշխան սոցիալիստական պետությունների միություն» բանաձեւով: Այս բանաձեւի նպատակն է՝ «ինքնիշխան» բառի մի այլ մեկնաբանման միջոցով փոշիացնել ոչ ռուս ժողովուրդների ազգային մղումները, միաժամանակ պահպանել Միությունը»[415]: Որպես փաստարկ՝ վկայակոչվում էր, մասնավորապես, Մերձբալթյան հանրապետությունների, Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի ընդունած անկախության հռչակագրերը, տարեկան զորակոչի ձախողումը[416], նույն հանրապետությունների՝ սեփական զինված ուժեր ունենալու մասին հայտարարությունները, Ռուսաստանում Ելցինի գլխավորությամբ ժողովրդավարական ուժերի վճռական աշխուժացումը, կենտրոնական իշխանության ծայրահեղ ձեռնարկումները, որոնք ավարտվում

[414] *«Հայաստանի Հանրապետություն», 16.03.1991:*

[415] ***Բժեզինսկի Զ.**, Խորհրդային Միության անկումը, «Հայաստանի Հանրապետություն», 09.01.1991:*

[416] *1990թ. զորակոչը Լատվիայում իրականացել էր 54, Էստոնիայում 40, Լիտվայում 33, Վրաստանում 27, Հայաստանում 7 տոկոսով: Անշուշտ, որեւէ նշանակություն չունեցավ այս գործընթացը կանխելուն ուղղված ԽՍՀՄ նախագահի՝ դեկտեմբերի 1-ի հրամանագիրը (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ Գեն, 1990, 49, հոդվ. 1074):*

էին արյունահեղությամբ եւ այլն: Նա միջազգային հանրությանն առաջարկում էր օժանդակել ոչ միայն Գորբաչովին, այլ նաեւ ժողովրդավարության եւ ինքնորոշման ճանապարհ բռնած հանրապետություններին[417]: Եւ, այնուամենայնիվ, քչերն էին կիսում այս համոզումը: Բոլոր դեպքերում, Արեւմտյան պետությունների ղեկավարների գործնական քաղաքականության մեջ Գորբաչովն էր շարունակում մնալ որպես հիմնական օժանդակության եւ աջակցության առարկա:

Որպես կանոն, աչք էր փակվում կենտրոնական իշխանության այն սեւեռուն ջանքերի վրա, որ նա գործադրում էր 1990-91 թվականներին՝ պահպանելու համար Խորհրդային կայսրությունը: Մինչդեռ դա Մոսկվայի առաջին եւ կենսական քաղաքական խնդիրն էր, ինչը լուծելու համար նա միջոցների միջեւ ամենեին խտրություն չէր դնում, որքանով դա թույլ էին տալիս նոր իրավիճակում իր ունեցած ուժերն ու հնարավորությունները: Եւ այս ամբողջ ընթացքում Գորբաչովը ստանում էր Արեւմտյան տերությունների ղեկավարների զգալի աջակցությունը: Անգամ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին օրենքը, որ նա ստիպված եղավ ընդունել, հանրապետությունների համար ավելի շուտ այդ իրավունքի իրականացումը գործնականում բացառող մի մեխանիզմ էր: Կայսրության պահպանման՝ Կենտրոնի այդ ջանքերի մեջ կարեւոր էին տնտեսական լծակների, ոստիկանական մեթոդների, ռազմական ուժի կիրառումը, ազգամիջյան բախումների հրահրումը: Մի շարք հանրապետություններում անկախական շարժումների հետ արյունոտ հաշվեհարդար կազմակերպվեց: Անկախության, ինքնիշխանության ձգտումների դեմ արյունալի ավարտով ռազմական ուժ գործադրվեց բոլոր այն վայրերում, որտեղ նրան տրվեցին, կամ նա կարողացավ հայթայթել դրա համար ամենաչնչին առիթները: Նման դեպքեր տեղի ունեցան Մերձբալթյան հանրապետություններում, Վրաստանում, Ադրբեջանում, Մոլդովայում եւ այլն: Պարզապես, ի տարբերություն նախորդ տասնամյակների, երբ այդ բանը կարելի էր անել անսեթեւեթ, այժմ կենտրոնական իշխանությունն աշխատում էր նմանօրինակ միջամտությունների համար «իրավական» հիմքեր ստեղծել: Նման «հիմքերը» ներկայացվում էին այնպիսի մեղադրանքների տեսքով, ինչպես՝ ոչ սահմանադրական ճանապարհով իշխանությունը գրավելու փորձեր, ներքին անկայունության հրահրում, քաղաքացիական կռվի վտանգ, «ինտերֆրոնտների» հրավերներ եւ այլն:

[417] ***Բժեզինսկի Զ.**, Խորհրդային Միության անկումը:*

Եւ այնուամենայնիվ, կայսրության փլուզման ընթացքը շարունակվում էր, ու դրան զուգընթաց մեծանում էին նաեւ հետադիմական ուժերի ձգտումները՝ այդ ընթացքը կասեցնելու ԽՍՀՄ-ին հատուկ՝ կոպիտ ռազմական ուժի կիրառման միջոցով: Երբ 1990 թ. դեկտեմբերի 20-ին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Էդուարդ Շեւարդնաձեն հրաժարական տվեց[418] ու հայտարարեց, որ ԽՍՀՄ-ին սպառնում է ավտորիտարիզմ ու նրանում գործող ժողովրդավարական շարժումների ջախջախում, նրա հայտարարության տակ ինչ-որ իրական բան կար: Համենայնդեպս, քիչ անց արյունոտ իրադարձություններ սկսվեցին Մերձբալթյան հանրապետություններում:

Ինչպես միջազգային հանրության, այնպես էլ ներքին ժողովրդավարական ուժերի համար, հիմնական մտահոգությունը պետք է լիներ կայսրության հոգեվարքի շրջանը հնարավորինս անցնցում, անվտանգ դարձնելը, քանի որ կենտրոնական իշխանությունը, որտեղ հետադիմական ուժերի ներկայացուցիչները կարեւորագույն պաշտոններ էին զբաղեցնում, այնուամենայնիվ, դեռեւս տիրապետում էր քաղաքական, տնտեսական եւ մանավանդ՝ ուժային լծակների: Այս խնդրին, Հայաստանի առաջիկա քաղաքական վարքագծին եւ անելիքների ծրագրին էր վերաբերում Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի «Հայաստանի ներկա քաղաքական իրավիճակի մասին» ելույթը խորհրդարանում 1990թ. հոկտեմբերի 22-ին: Իսկ խնդիրը, վերջին հաշվով, վերաբերում էր նրան, որ ԽՍՀՄ-ը չի կարող հանրապետության ժողովրդի համար անվտանգության երաշխիքներ ապահովել, ուստի անհրաժեշտ է ստեղծել այդպիսի նոր երաշխիքներ: Այդպիսի երաշխիքներ էին համարվում՝ օտարին ծառայող քաղաքական ուժի իշխանությունից ազատվելը (ինչն արդեն իրականացվել էր), համակարգային բարեփոխումների իրականացմամբ սոցիալ-տնտեսական զարգացման մեջ հարեւան Վրաստանից եւ Ադրբեջանից առաջ անցնելը, սեփական զինված ուժերի ստեղծումը, արտաքին միջպետական հարաբերությունների հաստատումը ԽՍՀՄ հանրապետությունների եւ այլ երկրների հետ, հարեւան Իրանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Արձանագրելով, որ Ադրբեջանում կոմունիստական իշխանության պահպանումը հնարավորություն էր տալիս, որ վերջինս առայժմ վայելի Կենտրոնի աջակցությունը, նա համարում էր, որ ապագան պատկանում է ոչ թե Կենտրոնին, այլ օրեցօր զորացող Ռուսաստանին, եւ այդ պատճառով ավելի հեռանկարային է հենց նրա հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը[419]:

[418] *Տե՛ս «Երեկոյան Երեւան», 24.12.1990:*

Կայսրության խարխլումը, ներքին գործընթացների արդյունք լինելուց զատ, իրականանում էր, բնականաբար, ազգային հանրապետությունների՝ ժողովրդավարության, ինքնիշխանության եւ անկախության համար պայքարի հարվածների տակ ու դրանց շնորհիվ: Հայաստանը շարունակում էր մնալ այդ պայքարի առաջամարտիկներից մեկը: Կարեւոր նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ նաեւ ռուսական ժողովրդավարական ուժերը սկսեցին կայսրության վախճանը համարել սեփական երկրի ազատագրման սկիզբ: Ժողովրդավարական մի շարք կազմակերպություններ նախաձեռնել էին նոյեմբերի 7-ին Մոսկվայում «այլընտրանքային» ցույցերի ու հանրահավաքների անցկացումը, հասկանալի է՝ օրվա խորհրդին հակառակ կարգախոսներով ու բովանդակությամբ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ստիպված էր կոշտ միջամտել եւ հատուկ հրամանագրով «աննպատակահարմար» համարել դրանց անցկացումը եւ արգելել նման ցույցերը[420]:

Կենտրոնն օգտագործում էր իր ունեցած բոլոր լծակները՝ պահպանելու համար կայսրությունը: Ժողովրդավարական ու անկախական շարժումների դեմ պայքարելու լծակներից մեկը Միութենական նոր պայմանագրի իրականացման ծրագիրն էր: Այն երկար ժամանակ էր շրջանառության մեջ, իսկ 1990-ի հուլիս-սեպտեմբեր ամիսներին գործուն խորհրդակցություններ էին ընթանում միութենական եւ ինքնավար հանրապետությունների ներկայացուցիչների հետ: Հոկտեմբերի 1-ին ԽՍՀՄ ԳԽ-ը ստեղծեց նաեւ այդ պայմանագրի նախագիծը մշակող կոմիտե: Ընդ որում՝ որոշման մեջ արձանագրվում էր, որ միութենական նոր պայմանագիրը պետք է դիտել որպես «ճգնաժամային վիճակից հասարակության դուրս գալու կարեւոր գործոն»[421]: Դեռ 1990թ. հունիսի 21-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը միութենական պայմանագրի մշակման ԽՍՀՄ ֆեդերացիայի խորհրդի աշխատանքներին մասնակցելու համար հատուկ խումբ էր ստեղծել[422]: Ըստ ԽՄԿԿ կենտկոմից ստացված մի գրության՝ 1990թ. օգոստոսի 3-28-ը Մոսկվայում տեղի են ունեցել կոնսուլտացիաներ բոլոր հան-

[419] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 143-151:*
[420] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1990, 45, հոդվ. 976:*
[421] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 41, հոդվ. 815:*
[422] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 12, հոդվ. 163:*

ռապետությունների ներկայացուցիչների հետ: Նախապես նրանց առաջարկվել էր ներկայացնել միութենական պայմանագրի իրենց տարբերակները: Այդպիսի տարբերակներ էին ներկայացրել Բելառուսը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ղազախստանը, Ադրբեջանը: Նման մի նախագիծ կամ առաջարկությունների փաթեթ, հավանաբար, մշակել էր նաեւ Հայաստանի կոմունիստական իշխանությունը: Սակայն այժմ դրա փոխարեն, արդեն Հայաստանի նոր իշխանության կողմից, այդ կոնսոլտացիաներին ներկայացվեց Հայաստանի Անկախության հռչակագիրը: Նույն կերպ վարվեցին նաեւ Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը: Մերձբալթյան հանրապետություններն ընդհանրապես հրաժարվել էին այս ֆորմատին մասնակցել, եւ նրանց հետ կենտրոնական իշխանության հանդիպումները կայացան առանձին, այս օրակարգից դուրս[423]:

Պայմանագրի նախագծից հստակ էր, որ նախատեսվող նոր Միությունը, ըստ էության, ոչնչով չէր տարբերվելու նախորդից: Ըստ հրապարակված նախագծի[424]՝ ԽՍՀՄ-ը պետք է մնար որպես ֆեդերատիվ պետություն: Այս նախագծին 1990թ. դեկտեմբերի 24-ին հավանություն տվեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 4-րդ համագումարը: Հանրապետությունները «կամավոր» պետք է ստորագրեին պայմանագիրը, բայց այն հանրապետությունները, որոնք դա չէին ցանկանա, պետք է մնային նույն ֆեդերացիայի կազմում նախորդ պայմանագրի ուժով: Միջազգային իրավունքի սուբյեկտ էր լինելու միայն Միությունը, հանրապետությունները չէին ունենալու այդ իրավունքը: Իսկ Միության սուբյեկտ դարձյալ դառնալու էին միայն նույն հանրապետությունները, մյուս ազգային ինքնավար կազմավորումներն այդ իրավունքը չէին ստանում: Կենտրոնի լիազորությունների մեջ էին մնալու Միության սահմանների պաշտպանությունը, պետական անվտանգության ապահովումը, զինված ուժերի ղեկավարումը, պատերազմ հայտարարելը եւ հաշտություն կնքելը, արտաքին քաղաքականությունը, ընդհանուր տարադրամի վրա հիմնված միասնական ֆինանսավարկային քաղաքականությունը եւ այլն: Փաստորեն՝ որեւէ նշանակություն չէր տրվել այն հանգամանքին, որ հանրապետություններն այդ ընթացքում էական ինքնիշխանություն էին ձեռք բերել: Միութենական դաշնագրի ստորագրմանը դեմ էր արտահայտվել Ուկրաինայի ժողովրդա-

[423] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 40, թ. 15:*

[424] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25.11.1990:*

կան ճակատը՝ ՌՈՒԽ-ը: Դաշնագիրը խիստ քննադատության արժանացավ նաեւ Ռուսաստանի ժողովրդավարական ուժերի կողմից: Պարզ էր, որ հանրապետություններից շատերն այն կամավոր չէին ստորագրելու:

Անկախության ճանապարհ ընտրած հանրապետությունների դեմ հիմնական լծակը շարունակում էր մնալ ռազմական ուժի գործադրումը: Դրա հերթական ցայտուն դրսեւորումները հանդիսացան արյունահեղությամբ ավարտված ռազմական միջամտությունները Մերձբալթյան հանրապետություններում, որոնք ԽՍՀՄ եւ Գերմանիայի միջեւ 1939թ. օգոստոսի 23-ին կնքված գաղտնի պայմանագրերն ապօրինի ճանաչելու հիմքի վրա հռչակել էին իրենց անկախությունը: Եւ չնայած Մոսկվան դրանք համարել էր հակասահմանադրական ակտեր ու անվավեր ճանաչել, այնուամենայնիվ, նրանք շարունակում էին նույնպիսի ինքնուրույն նոր որոշումներով եւ օրենքներով կարգավորել իրենց ներքին կյանքը[425]: Նրանց դեմ Կենտրոնը հաջողությամբ օգտագործում էր այստեղ մեծ տոկոս կազմող ռուս բնակչությանը, որոնք, ի հակադրություն ժողովրդական ճակատների, ձեւավորել էին այսպես կոչված «ինտերֆրոնտներ»: Ներքին իրավիճակի հերթական սրացում արձանագրվեց 1991 թվականի առաջին օրերին: Ժողովրդավարական ուժերը Լիտվայում Գերագույն խորհրդի շենքը ստիպված էին պաշտպանել ինտերֆրոնտայիններից: Ինչ-որ «փրկության կոմիտեների» հրավերով եւ պաշտպանության նախարար Յազովի հրամանով, դաղարեցված զորակոչն իրականացնելու պատրվակով, խորհրդային զինված ուժեր մտան նախ Լիտվա, ապա Լատվիա: Հունվարի 8-ից անընդհատ սրվող իրավիճակը նույն ամսի 13-ին ավարտվեց Վիլնյուսում խորհրդային զինվորների կողմից անզեն ժողովրդի վրա կրակ բացելով, որի հետեւանքով զոհվեց 16 եւ վիրավորվեց 330 մարդ: Հատկանշական է, որ հետագայում ե՛ւ Լիտվայում, ե՛ւ Լատվիայում հնարավոր չեղավ գտնել

[425] *Լիտվայում 1990թ. սեպտեմբերի 25-ին ընդունված այդպիսի մի օրենք սահմանափակումներ է նախատեսում քաղաքական կուսակցություններին անդամագրվելու հարցում, արգելում էր կուսակցական կազմակերպությունների գործունեությունը հիմնարկներում: Հոկտեմբերի 4-ին ընդունված մի այլ օրենքով քրեական պատասխանատվություն էր սահմանվում Լիտվայի այն քաղաքացիների համար, ովքեր կանդամագրվեն «օտարերկրյա կազմակերպության», ինչպիսիք դիտվում էին միութենական զանազան կազմակերպություններ: Մոսկվան, իր հերթին, հակասահմանադրական եւ անվավեր էր ճանաչում այսօրինակ որոշումները (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 49, հոդվ. 1059, 1991, հ. 9, հոդվ. 206), ինչը, սակայն, որեւէ գործնական հետեւանք չէր ունենում:*

այն «ազգային փրկության կոմիտեները», որոնց հրավերով, իբր, խորհրդային զորքերը մտել էին այս հանրապետություններ: Նույն սցենարով խորհրդային զորքերի ուժի ցուցադրում եւ արյունահեղություն եղավ նաեւ Լատվիայում հունվարի 21-ին[426]: Ըստ Ելցինի ունեցած տվյալների՝ ինչ-որ լուրեր են ստացվել «Ռուսաստանի ազգային փրկության կոմիտեի» մասին, եւ նախատեսված է եղել նույն բանը կրկնել նաեւ Ռուսաստանում[427]:

Մերձբալթյան արյունոտ իրադարձությունները համընկան Պարսից ծոցի պատերազմի հետ եւ գուցե այդ պատճառով շատ մեծ միջազգային արձագանք չստացան: Դրանք ավելի մեծ արձագանք ստացան եւ դատապարտվեցին Խորհրդային Միության հանրապետությունների ժողովրդավարական ուժերի կողմից: ՀՀՇ վարչությունն իր վճռական բողոքը հայտնեց «օկուպացիոն զորքերի գործողությունների դեմ»՝ արձանագրելով, որ դրանք լրացնում են Արցախում, Երեւանում եւ Թբիլիսիում մինչ այդ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների շղթան[428]: Նույնպիսի հայտարարությամբ հանդես եկան ՀՀ Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունները[429]: Այդ գործողությունները դատապարտեց նաեւ Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ելցինը՝ հայտարարելով որ «Մերձբալթիկայի իրադարձությունները լուրջ հարված հասցրին միութենական դաշնագիր կնքելու իրական հնարավորությանը... հազիվ թե որեւէ մեկը դաշնագիրը ստորագրի պարանի օղակը վզին»[430]: Իսկ մինչ այդ, հունվարի 12-ին, Ռուսաստանի ԳԽ նախագահությունը հանդես էր եկել հայտարարությամբ, որով անթույլատրելի էր համարել Մերձբալթյան հանրապետություններում խաղաղ բնակչության դեմ ռազմական ուժի գործադրումը եւ հակաօրինական՝ այդ գործողություններին Ռուսաստանի տարածքից զորակոչված զինծառայողներին մասնակից դարձնելը[431]: Կատարված արյունահեղությունից հետո Ելցինը հրապարակավ պահանջեց Գորբաչովի հրաժարականը[432]: Եւ պատահական չէ, որ, չսպասելով միութենական պայմանագրի անհեռանկար ապագային, Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը եւ Ղազախստանը նախաձեռնեցին ստորագրել քառակողմ մի պայմանագիր, որը բաց պիտի լիներ նաեւ մյուս հանրապետությունների համար[433]:

[426] *Այս առիթով ՀՀ Գերագույն խորհրդի ցավակցական հեռագրում կատարվածը գնահատվում է որպես «հետեւանք այն ուժային քաղաքականության, որը վարում են միութենական իշխանություններն ազգերի ինքնորոշման հարցում» (Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 2, հոդվ. 23:*

[427] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16.01.1991:*

[428] *Տե՛ս «Հայք», 16.01.1991:*

[429] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 1, հոդվ. 6:*

[430] *«Հայաստանի Հանրապետություն», 16.01.1991:*

[431] *Տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ-ի, 1991, 2, հոդվ.11:*

[432] *Տե՛ս* **Ельцин Б.**, *Записки президента, с. 58. Ավելի ուշ Ելցինը հակված էր մտածել, որ լիտվական արյունահեղության պատասխանատուն ՊԱԿ-ի նախագահ Կրյուչկովն է (տե՛ս նույն տեղում, էջ 55):*

[433] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16.01.1991:*

3. ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ժողովրդավարության հաստատման առաջին արմատական վերափոխումը, բազմակուսակցական համակարգի հաստատումը

Խորհրդային ամբողջատիրության հիմնասույն հանդիսացող միակուսակցական համակարգն անխաթար պահելու, կոմունիստական միակ գաղափարախոսության դեմ այլակարծության ամեն մի առաջացում կանխելու համար ստեղծված էին որոշակի մեխանիզմներ: Իշխանության համակարգում, վերեւից ներքեւ, ամենաածանրակշիռ ու հզոր օղակները համարվում էին գաղափարախոսական բաժինները: Սրանք էին վերահսկում զանգվածային լրատվության բոլոր միջոցները, տոտալ գրաքննության իրականացումը:

Կոմունիստական կուսակցության կազմակերպական կառույցը ոչ միայն տարածքային, այլ նաեւ արտադրական սկզբունքի վրա էր հիմնված: Կոմկուսը կազմակերպություններ ուներ անխտիր բոլոր բնակավայրերում, հիմնարկներում, պետական մարմիններում, զորամասերում եւ այլն: Սրանց հիմնական գործը նույնպես կոմունիստական գաղափարախոսության քարոզչությունն էր, այլակարծության դեմ պայքարը, «կուսակցության գծի» ապահովումը: Իրական ժողովրդավարական քաղաքական կյանքի համար սա ոչ նորմալ երեւույթ էր՝ անկախ այն բանից, թե այս մեխանիզմով ինչ գաղափարախոսություն է քարոզվում կամ սպասարկվում:

Հասարակական կյանքի ապագաղափարախոսականացումը քաղաքական կյանքում ժողովրդավարական նորմերի հաստատման կարեւորագույն նախապայմանն էր: Այն, որպես խնդիր, դրված էր ինչպես ՀՀՇ

ծրագրում, այնպես էլ Անկախության հռչակագրում: Հայաստանի Գերագույն խորհուրդը 1990թ. նոյեմբերի 5-ին ընդունած իր որոշմամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում, պետական ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում, զինվորական ստորաբաժանումներում դադարեցրեց կուսակցությունների եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը[434]: Սրանով սկիզբ դրվեց համակարգային կարեւորագույն վերափոխումներից մեկին, որը պետք է ապահովեր հանրապետության հասարակական քաղաքական կյանքի ժողովրդավարացումը:

Բազմակուսակցական համակարգի իրավական-օրենսդրական հիմնական կարգավորումը կատարվեց 1991թ. փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով[435]: Այս օրենքով կուսակցություններն իրենց կառույցները կարող էին կազմավորել միայն տարածքային սկզբունքով: Կուսակցություններն էին դառնում ընտրությունների միջոցով պետական իշխանության մարմինների կազմավորման հիմնական միջոցը: Օրենքը երաշխավորում էր կուսակցությունների իրավահավասարությունը եւ հավասար պայմաններ սահմանում դրանց կազմավորման, գործունեության եւ զարգացման համար: Սահմանվում էին նվազագույն անհրաժեշտ եւ հանրահայտ այն պահանջներն ու պայմանները, որոնց առկայության դեպքում միայն կարող էին կայանալ քաղաքական կազմակերպությունները, ապահովվեր ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ նորմալ քաղաքական պայքարի հնարավորությունը:

Օրենքի կարեւոր դրույթներն էին.

1. Կուսակցության անդամ լինել չէին կարող արդարադատության, ներքին գործերի, պետական անվտանգության, դատախազության, մաքսային ծառայության, պետական արբիտրաժի, արդարադատության, զինված ուժերի համակարգերում աշխատողներն ու ծառայողները՝ այդ մարմիններում աշխատելու կամ ծառայության ժամանակահատվածում:

[434] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1990, 21, հոդվ. 405:*

[435] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 4, հոդվ. 73: Օրենսդիրն այդ ժամանակ որոշ նկատառումներով այսպես՝ «հասարակական-քաղաքական կազմակերպություն» անվամբ նպատակահարմար համարեց կոչել կուսակցությունները: Մենք հետագա շարադրանքում դրա փոխարեն կօգտագործենք «կուսակցություն» բառը:*

2. Օրենքով ամրապնդվեց այն դրույթը, ըստ որի՝ կուսակցություններին արգելվում էր կառույցներ հիմնել պետական մարմիններում, ինչպես նաեւ հիմնարկներում, ձեռնարկություններում, կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում:

3. Կուսակցության անդամ կարող էին լինել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

4. Օրենքը պարտադրում էր, որ հանրապետությունում գործող կուսակցությունների ղեկավար մարմինը գտնվեր Հայաստանի Հանրապետությունում:

5. Կուսակցություններին արգելում էր ղեկավարվել Հայաստանի տարածքից դուրս գտնվող կազմակերպությունների, օտար պետական մարմինների կողմից, գտնվել այլ կազմակերպությունների կառուցվածքի մեջ:

6. Արգելվում էր ֆինանսական եւ նյութական օգնություն ստանալ Հայաստանից դուրս գտնվող աղբյուրներից, իսկ հանրապետության ներսում՝ արգելվում էր նման օգնություն ստանալ պետական մարմիններից ու պետական հաստատություններից:

Այս ամենն առողջ ու բնականոն քաղաքական կյանք եւ դրանում մրցակցության հավասար պայմաններ ունենալու համար նվազագույն պարտադիր պայմաններ էին, ժողովրդավարության արմատավորման հիմքերը: Ավելին, դրանք պարտադիր էին նաեւ որեւէ երկրի ինքնիշխանության եւ ընդհուպ՝ ազգային անվտանգության ապահովման նկատառումներով: Հասկանալի ու պարզ տրամաբանությամբ՝ այլ երկրներում ղեկավար մարմին ունեցող կամ դրանցից նյութական օժանդակություն ստանալով իշխանության եկած քաղաքական ուժը չէր կարող գործել անկախ ու ինքնուրույն, եւ իր ծրագրերն ու գործունեությունը պետք է համապատասխանեցներ նյութական օժանդակություն տրամադրողների շահերին ու պահանջներին: Իսկ այդ դեպքում խոսք լինել չէր կարող ո՛չ անկախ պետականության, ո՛չ ժողովրդավարության, ո՛չ էլ ինքնուրույն քաղաքականության մասին: Անկախության, իրական քաղաքական կյանքի ու ժողովրդավարության բավարար ավանդույթ ունեցող ամեն մի պետության համար այս պահանջները եւս ավելի քան սովորական էին, այնքան, որ դրանք պարզապես կարող էին նաեւ չարձանագրվել համապատասխան օրենքում:

Մոտ մեկ ամիս բուռն եւ երկարատեւ քննարկումներ ծավալվեցին օրենքի վերոհիշյալ դրույթների շուրջ: Դիմադրությունը մեծ էր Կոմկուսի կողմից, որը ղեկավարվում եւ ֆինանսավորվում էր Մոսկվայից, ու դրա

հետ միասին, բնականաբար, ստանում էր նաեւ համապատասխան քաղաքական պատվեր: Կոմկուսը համարում էր, որ օրենքը, մասնավորապես՝ հիմնարկներում ու ձեռնարկություններում կուսակցական կազմակերպությունների արգելումը, ուղղված է իր դեմ: Սակայն այս մեղադրանքն անհիմն էր. դեռ 1988թ. Շարժման առաջին շաբաթներին ստեղծված «Ղարաբաղ» ենթակոմիտեները, ապա դրանց հիման վրա ստեղծված ՀՀՇ սկզբնական կազմակերպությունները, ինքնաբերաբար, որպես հակակշիռ իշխանականի, նույնպես արտադրական հիմքի վրա էին ստեղծվել, եւ կոմունիստական կազմակերպություններին զուգահեռ գործում էին բոլոր հիմնարկներում, կազմակերպություններում ու բնակավայրերում: Ավելին՝ եթե Կոմկուսի հիմնարկային սկզբնական կազմակերպություններն արագորեն հյուծվում էին, ապա ՀՀՇ-ի սկզբնական կազմակերպությունները, հատկապես՝ 1990թ. ԳԽ ընտրություններում նրա հաղթանակից հետո, արագորեն համալրվում եւ հզորանում էին: Այնպես որ՝ այդ որոշումը մի քանի անգամ ավելի մեծ «անհարմարություններ» էր ստեղծում ՀՀՇ-ի համար: Սակայն խնդիրը, որպես ժողովրդավարության հաստատման հիմնաքար, շատ ավելի կարեւոր էր, քան որեւէ կուսակցական շահ, եւ նոր իշխանությունն այն դրեց ու օրենքով լուծեց ըստ այդմ[436]:

Սակայն ընդդիմացողը միայն Կոմկուսը չէր: Դրա դեմ պայքարում էին «ավանդական կուսակցությունները» եւ նրանց ազդեցության տակ գտնվող մի շարք պատգամավորներ՝ մատնանշելով «մեր ազգային առանձնահատկությունները»՝ Սփյուռքը եւ Սփյուռքում կուսակցություններ ունենալու հանգամանքը: Համարվում էր, որ դրանով խախտվում են սփյուռքահայության իրավունքները, արգելք է ստեղծվում սփյուռքահայ կուսակցությունների՝ Հայաստան վերադարձի համար: Վերջիններս եւս ձգտում էին, իրենց կենտրոններն ունենալով արտասահմանում, Հայաստանում գործել որպես «համահայկական» կուսակցության տարածքային մի կազմակերպություն՝ հայաստանյան կուսակցությունների հետ նույն կարգավիճակով: Այլ խոսքով՝ բանավեճի հիմքում նույն կեղծ քաղաքական պատկերացումներն էին, կեղծ-ազգայնականությունը, գլխիվայր շուռ տրված քաղաքական արժեքային համակարգը՝ ազգ եւ պետություն, հայ եւ

[436] *Գորբաչովն ապրիլի 23-ին հրամանագիր ստորագրեց, որով այս օրենքի դրույթները հայտարարվում էին ԽՍՀՄ օրենսդրությանը հակասող, ու կասեցվում էր նրանց գործողությունը (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ Գեր-ի, 1991, 18, հոդվ. 530), սակայն Հայաստանի Հանրապետությունում այն շարունակեց գործել:*

Հայաստանի քաղաքացի հասկացությունների արհեստական հակադրմամբ, պետական մտածողության բացակայությունը: Մինչդեռ այս օրենքի պահանջները անկախ պետականության, նրա անվտանգության, ինքնուրույն քաղաքական կյանքի, ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ պարզագույն, հանրահայտ եւ անհրաժեշտ նախապայմանների ու պահանջների արձանագրումն էին ընդամենը[437]:

բ) Հայոց համազգային շարժումը՝ որպես իշխանություն, ՀՀՇ 2-րդ համագումարը

Հայոց համազգային շարժումը կարողացավ իշխանության հասնել ամենաողջվարին պայմաններում, համառ ու գրագետ քաղաքական պայքարում, սահմանադրական ճանապարհով, ընտրությունների միջոցով: Դա տեղի ունեցավ՝ չնայած կազմակերպված արյունոտ սադրանքին, ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ավանդույթի եւ մշակույթի լիակատար բացակայությանը, կուսակցությունների եւ անկախ լրատվամիջոցների սաղմնային վիճակին, օրենսդրության անկատարությանը, ընտրական ցուցակների կիսատ-պռատությանը, ընտրական հանձնաժողովների՝ հօգուտ գործող իշխանության կատարած բազմաթիվ ընտրակեղծիքներին, որոշ զինված կազմավորումների՝ հօգուտ իշխանության ձեռնարկած խժդժություններին, կոմունիստական նոմենկլատուրայի ու դեռեւս նրա վերահսկողության տակ գտնվող պետական, վարչական, իրավապահ մարմինների հարուցած բազմաթիվ խոչընդոտներին ու կամայականություններին: Հսկայական ժողովրդականության հիման վրա ՀՀՇ-ն կարողացավ հաղթահարել այս խոչընդոտները: Հայ իրականության մեջ, փաստորեն, առաջին անգամ մարդիկ հնարավորություն ստացան կատարել իրական ընտրություն: Եւ այնպիսի ընտրություն, որի շնորհիվ ոչ թե իշխանավորներ ու պաշտոնյաներ են փոխվում, այլ մի ողջ հա-

[437] *Այս օրենքի դեմ հատկապես ակտիվ էր պայքարում Դաշնակցությունը: Եթե Համկավար եւ Հնչակյան կուսակցությունները համակերպվեցին օրենքի հետ եւ աշխատեցին բավարարել նրա պահանջները, Դաշնակցությունը դրա հետ չհամակերպվեց: Նա շարունակում էր համարել, որ «Բազմակուսակցական դրության որդեգրման փոխարեն փետրվար 1988-են եւ ապա կազմված թե անկե առաջ ամբողջ հարյուրամյա ուղի կտրած կուսակցությունները վարչահրահանգչական արգելքներով կաշկանդելու օրենք պարտադրվեցավ» («Դրոշակ», 19.06.1991):*

մակարգ: Այն, ինչը շատ-շատերին անհավատալի էր թվում, իրականություն դարձավ. դրանով Հայաստանում վերջ դրվեց կոմունիստական 70-ամյա մենիշխանությանը եւ բռնատիրությանը: Սեփական ձայնի արժեքի ու կշռի գիտակցումը, այն առարկայացված տեսնելը՝ ազատության, արժանապատվության եւ երկրի քաղաքացու՝ մինչ այդ անծանոթ զգացողության առաջին հիմնաքարն էին:

ՀՀՇ-ի ծրագրային հիմնադրույթների վրա խարսխվեց երկրի հետագա քաղաքական զարգացման ուղեգիծ հանդիսացող «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը», որի դրույթներն, ըստ էության, սահմանադրական նորմերի դեր խաղացին նոր խորհրդարանի օրինաստեղծ աշխատանքի, ժողովրդավարության հաստատման, համակարգային վերափոխումների իրականացման եւ արտաքին քաղաքականության համար:

ՀՀՇ-ն իր կադրային բազայով լիակատար հնարավորություն ուներ սեփական կազմակերպական կառույցներով ամբողջությամբ զբաղեցնել պետական կառավարման ողջ համակարգը: Սակայն նա չգնաց հեղափոխական գայթակղության ճանապարհով: Այդ բանը չարվեց անգամ կարեւոր պետական ու քաղաքական պաշտոններում նշանակումներ կատարելիս: Իր ձեռքում ունենալով հանգուցային քաղաքական պաշտոնները՝ ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ կառավարությունների կազմում կազմակերպությունը ներկայացված էր նման հաղթանակի եւ հնարավորությունների համեմատ շատ համեստ թվով[438]: Այսպիսի մոտեցումը պայմանավորված էր, առաջին հերթին, պատասխանատվության զգացումով, ՀՀՇ-ի հանդուրժողականությամբ, ապա նաեւ քաղաքական լայնախոհությամբ ու հաշվարկով՝ ներքին կայունության պահպանման ավելի ապահով հիմքեր ունենալուց մինչեւ կադրերի ընտրության համար անձի մասնագիտական պատրաստությունը, կարողությունները եւ փորձը հաշվի առնելու որդեգրված սկզբունքով: Հասարակության մեջ եղան դժգոհություններ, մասնավորապես՝ Վազգեն Մանուկյանի՝ միանձնյա կազմավորած առաջին կառավարության գործունեության արդյունքից: Դժգոհություններ եղան նաեւ ՀՀՇ-ի ներսում. ճնշում էին նախկին կուսակցապետական համակարգից եկած պատկերացումները, դրանց հետեւելու գայթակղությունը: Ոմանք, ըստ էության, պահանջում էին, որ ՀՀՇ վարչությունում լուծվեն, օրինակ, կադրային հարցերը, ինչը գործադիր եւ օրենսդիր մարմինների ու պաշտոնատար անձանց օրինական լիազորություններն էին: Բայց դրա արդյունքը կլիներ նույն կուսակցապետությունը, այս անգամ՝ ՀՀՇ-ի գլխավորությամբ, ինչի դեմ հաջողությամբ պայքարել ու հաղթել էր Շարժումը:

Կադրային քաղաքականության հիմքում դրված սկզբունքը, բնականաբար, պետք է ունենար նաեւ իր բացասական կողմերը: ՀՀՇ-ն ներկայացնող պաշտոնյաներին հատուկ էր ոգեւորությունը, քաղաքական սկզբունքներին հավատարմությունը, դրանց իրականացման գործում նվիրումն ու անմնացորդ ջանքը, սակայն նրանք ունեին կառավարման գործնական փորձի պակաս: Նախկին կադրերը, եթե ունեին կառավարման որոշակի փորձ եւ մասնագիտական հմտություններ, սակայն նրանք էլ քաղաքական շահագրգռության եւ էնտուզիազմի պակաս ունեին, աշխատում էին իրենց հին մեթոդներով, հաճախ նաեւ չարաշահելով, ինչպես սովոր էին, իրենց պաշտոնեական դիրքը: Այս հանգամանքն էր, որ, հատկապես հետագայում, դժգոհության եւ քննադատության տեղիք տվեց կազմակերպության ներսում: Սակայն, ինչպես ցույց տվեց այլ երկրների փորձը, որտեղ ժողովրդավարական շարժումները, հաղթանակ տանելով, գնացին երկրի պաշտոնեությունը զանգվածաբար փոխելու ճանապարհով, ձախողվեցին եւ մեկ-երկու տարի հետո որպես քաղաքական ուժ դուրս եկան ասպարեզից եւ զիջեցին իշխանությունը[439]: ՀՀՇ-ի իշխանությունը միակն էր,

---

438 Վազգեն Մանուկյանի կառավարության 36 անդամների շարքում, բացի իրենից, ՀՀՇ անդամներ էին միայն Հրանտ Բագրատյանը, Կարիճ Սարգսյանը, Աշոտ Մանուչարյանը, Ալեքսան Հակոբյանը: Գագիկ Հարությունյանի եւ Խոսրով Հարությունյանի կառավարությունների 38 անդամներից ՀՀՇ-ն ներկայացնում էին Հրանտ Բագրատյանը, Վանո Սիրադեղյանը, Վազգեն Սարգսյանը, Վալերի Պողոսյանը, Վահան Շիրխանյանը եւ Սամվել Գեւորգյանը: Ավելի ուշ՝ Հրանտ Բագրատյանի վարչապետության շրջանում ՀՀՇ-ից նախարարներ էին Վազգեն Սարգսյանը, Վահան Փափազյանը, Վանո Սիրադեղյանը եւ Դավիթ Ջադոյանը (տե՛ս ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 373):*

439 Կարճ ու անփառունակ եւ իրենց երկրների համար կորստաբեր իշխանություն ունեցան ժողովրդավարական շարժումների առաջնորդներ Զվիադ Գամսախուրդիան Վրաստանում եւ Աբուլֆազ Էլչիբեյը Ադրբեջանում: Նրանց փոխարինեցին, համապատասխանաբար, նախկին բարձրաստիճան կոմունիստներ Էդուարդ Շեւարդնաձեն եւ Հեյդար Ալիեւը: Կարճատեւ՝ 1-2 տարվա իշխանություն ունեցան Էդգար Սավիսաարը՝ Էստոնիայում, Իվար Գոդմանիսը՝ Լատվիայում, «Մայուդիսի» դեկավար Վիտաուտաս Լանդսբերգիսը՝ Լիտվայում: Մյուս հանրապետություններում իշխանության եկան կոմունիստական նախկին պաշտոնեության ներկայացուցիչները՝ Բորիս Ելցինը՝ Ռուսաստանում, Լեոնիդ Կրավչուկը՝ Ուկրաինայում, Ստանիսլավ Շուշկեւիչը՝ Բելառուսում, Միրչա Մնեգուրը՝ Մոլդովայում, Նուրսուլ-

որ, նրանց համեմատ ունենալով հանդերձ բազմակի դժվարին խնդիրներ ու մարտահրավերներ, ոչ միայն խուսափեց այսօրինակ ճակատագրից, այլեւ լուծեց իր առջեւ դրված բոլոր, բազմակի դժվարին քաղաքական խնդիրները:

ՀՀՇ-ն ձեռնպահ մնաց նաեւ մեկ այլ գայթակղությունից՝ հակադրվելով աշխարհում անհասկանալի ու անընդունելի, բայց հանգամանքների բերումով հայ իրականությանը խիստ յուրահատուկ եւ ավանդական մի երեւույթի կամ պատկերացումների: Ըստ այդ պատկերացումների՝ որեւէ կուսակցության անդամագրվելու համար ազգային պատկանելությունն է որոշիչ եւ ոչ թե երկրի քաղաքացիությունը: ՀՀՇ-ն հրաժարվեց կառույցներ ստեղծել հանրապետության սահմաններից դուրս: Ինչպես մինչեւ իշխանության գալը, իսկ ավելի շատ՝ դրանից հետո, բազմաթիվ նման առաջարկներ էին ստացվում եւ նախաձեռնություններ ցուցաբերվում տարբեր երկրների հայկական գաղթօջախներում: Երեւանից դրանց հետեւողականորեն ընթացք չտրվեց: Անգամ Լեռնային Ղարաբաղում ՀՀՇ-ի կուսակցական կառույցներ չստեղծվեցին: Սփյուռքում նման կառույցներ ստեղծելով՝ ՀՀՇ-ն, անշուշտ, կբազմապատկեր իր ուժն ու հզորությունը եւ տարաբնույթ էական օժանդակություն կստանար: Սակայն, նախ՝ դրանով լրացուցիչ կպառակտվեր արդեն իսկ այնտեղ գործող ավանդական կուսակցությունների գործունեության հետեւանքով եռատված Սփյուռքը: ՀՀՇ-ի հիմնական ելակետը, սակայն, տվյալ դեպքում բոլորվին այլ, շատ ավելի կարեւոր այն հանրահայտ սկզբունքն էր, որ կուսակցությունը պետական, քաղաքական կառույց է եւ կարող է կազմավորվել ոչ թե ազգային (էթնիկ) հատկանիշի, այլ տվյալ պետության քաղաքացի լինելու հանգամանքի հիմքի վրա, ինչպես դա ընդունված է ամբողջ աշխարհում: Հակառակ դեպքում անհնար էր պետականության ստեղծման ու անկախության խնդիր հետապնդել, ընդհակառակը՝ դրանով կարելի էր ապահովել, որ նման խնդիրները երբեւէ իրականություն չդառնան: Եւ սա ՀՀՇ-ի նետած հերթական մարտահրավերն էր հայ քաղաքական մտքի եւ մտածողության ավանդական ու քարացած պատկերացումներին:

Չնայած կատարված իշխանափոխությանը՝ շարունակվում էին Հայոց համազգային շարժման քաղաքական ծրագրի քննադատությունները, որ

Թան Նազարբաեւը՝ Ղազախստանում, Սափարմուրատ Նիյազովը՝ Թուրքմենստանում, Ասքար Ակաեւը՝ Ղրղզստանում, Կախար Մախկամովը՝ Տաջիկստանում:

բխում էին երկու տարբեր, ավանդաբար հակադիր համարված ելակետերից՝ կոմունիստական եւ հայդատական/պահանջատիրական: Բայց դրանք հատվում էին քաղաքական նույն նպատակակետում: Կոմկուսի գաղափարախոսությունը չէր տեսնում Հայաստանի եւ նրա ժողովրդի գոյությունը ԽՍՀՄ կազմից դուրս, իսկ հայ-ռուսական հարաբերություններն այլ կերպ չէր պատկերացնում, քան գերիշխան պետության եւ վասալի հարաբերություն: Հայդատական կազմակերպությունները շարունակում էին համարել, որ հայ ժողովրդի առաջնահերթ խնդիրը պետք է լինի պահանջատիրության հետապնդումը, ինչը, Հայաստանը միայնակ ի զորու չէր անել, ուստի պետք է գտնվեր ավելի հզոր մի պետության կազմում ու աներ նրա ուժերով, նրա միջոցով: Երկու դեպքում էլ նույնն էր քաղաքական եզրահանգումը՝ Հայաստանը միայնակ չի կարող ապրել, եւ նույնն էր նպատակը՝ Հայաստանը պահել ԽՍՀՄ կազմում: Երկու ուժերն էլ, մասնավորապես երկրորդը՝ պահանջատիրականությունը, իրենց ծրագրերը համարում էին «ազգային» եւ մեղադրում ՀՀՇ-ին ոչ ազգային կամ ապազգային՝ անկախ պետականության ստեղծման ծրագրեր ունենալու մեջ: Մեղադրանքը, մեղմ ասած՝ անհեթեթ էր, քանզի շատ վաղուց աշխարհի բոլոր ժողովուրդների համար թիվ մեկ ազգային խնդիրը հենց անկախություն ձեռքբերումն է՝ եթե զրկված են դրանից, եւ ամրապնդումը՝ եթե այն վտանգված կամ խաթարված է:

Նոր իշխանության օրոք, խոսքի բացարձակ ազատության պայմաններում, ՀՀՇ-ի ու նրա իշխանության դեմ քարոզչության համար ազատորեն օգտագործվում էին զանգվածային լրատվության բոլոր միջոցները, չէին խորշում ամենաէժան շահարկումներից, սեւ տեխնոլոգիաների օգտագործումից: Դրանց համեմատ ՀՀՇ-ն, ինչպես մինչեւ իշխանության գալը, այժմ էլ շարունակում էր չափազանց հանդուրժող մնալ իր քննադատների նկատմամբ: Այսպես, Դաշնակցությունը քարոզչություն կարող էր ծավալել ոչ միայն կոմունիստական մամուլի օրգաններում եւ այն թերթերում, որոնք կոմունիստները ներքին կարգով փոխանցեցին Դաշնակցությանը, այլեւ ընդհուպ Գերագույն խորհրդի նոր հիմնադրած «Հայաստանի Հանրապետությունում» էին «հանուն բազմակարծության» հայտնվում նրանց հեղինակած նմանօրինակ նյութեր:

Բուռն էր ՀՀՇ-ի հասցեին հնչող այլ տիպի մի մեղադրանք՝ թե նա «լայն» համաժողովրդական շարժումը վերածել է «նեղ» կուսակցության: Ընդ որում՝ այս մեղադրանքն առավել ակտիվ հարուցում էին առաջին հերթին հենց նրանք, ովքեր ամենախիստ ու «նեղ» կանոնադրություններով

առաջնորդվող կուսակցությունների անդամներ էին: Սակայն մեղադրանքն անհեթեթ էր ոչ միայն սրանով: Բնական էր, որ համաժողովրդական շարժման կազմակերպական կառույցը, որպես այդպիսին, իր հիմնական խնդիրները լուծելուց հետո պետք է ավելի հստակ ու միաձույլ քաղաքական կազմակերպության որակներ ձեռք բերեր: Հակառակ դեպքում այն չէր կարող իշխանություն իրականացնել, այլ պետք է վերանար կամ աստիճանաբար տարալուծվեր այլ կուսակցությունների մեջ: Մեղադրանքի նպատակն էլ հենց դա էր. խաղալով «կուսակցություն» երեւույթի դեմ խորհրդային շրջանում կոմունիստների օրինակի վրա ձեւավորված հասարակական բացասական պատկերացումների ու զգացումների վրա՝ թույլ չտալ Կոմկուսի 70-ամյա իշխանությունը տապալած, հսկայական վստահություն վայելող, իր հեղինակությամբ մյուս քաղաքական ուժերին միասին վերցրած մի քանի անգամ գերազանցող ուժի բյուրեղացումը ՝ որպես կազմակերպական կառույց: Այսինքն՝ նպատակը քաղաքական դաշտը նրա ներկայությունից ու նրա գաղափարական հիմնադրույթներից ազատելն էր կամ, առնվազն՝ իրենց Շարժման մասնակից համարող համակիրների հոծ շարքերը հիասթափեցնելն ու նոսրացնելը:

Եւ այնուամենայնիվ, մեղադրանքն ինքն առայժմ իրականությանը չէր էլ համապատասխանում: ՀՀՇ-ի կազմակերպական կառույցը ստեղծված էր 1-ին համագումարի կողմից հաստատված կանոնադրությամբ, որը, փաստորեն, նախատեսում էր ազատ անդամագրում բոլոր այն կազմակերպությունների (որպես կոլեկտիվ անդամներ) եւ անհատների, որոնք հայտարարում էին նրա գաղափարական սկզբունքներն ընդունելու մասին եւ համապատասխան դիմում ներկայացնում: Դիմորդներին մերժելու որեւէ հիմք չէր նախատեսվում: Ընդ որում՝ նրանք միաժամանակ կարող էին լինել նաեւ այլ քաղաքական կազմակերպության, այդ թվում՝ Կոմկուսի անդամ: Չափազանց ազատական կանոնադրությունը կազմակերպությունը դարձրեց խիստ զանգվածային: Հոսքը կազմակերպություն մեծացավ հատկապես 1990 թ. ընտրություններում հաղթանակ տանելուց եւ իշխանության գալուց հետո: Քաղաքական այն խնդիրները, որոնք դրված էին Շարժման առջեւ, իրոք, համաժողովրդական ջանքեր էին պահանջում, եւ այդ մոտեցումը 1988-1990-ին ճիշտ էր: Այդպես էլ ՀՀՇ-ն մասնակցեց ընտրություններին՝ պաշտպանվող թեկնածուների իր ցուցակում ունենալով մեծ թվով այլ կուսակցությունների եւ կազմակերպությունների, այդ թվում՝ Կոմկուսի անդամներ, ինչպես նաեւ պարզապես հասարակության մեջ հեղինակություն եւ հարգանք վայելող, իր գաղափարները կիսող անկուսակցական անհատներ: Մոտեցումը ճշգրիտ էր, եւ դրա շնորհիվ լուծվեցին առաջնահերթ՝ ժողովրդավարական ընտրություններ իրականացնելու, դրանցում հաղթանակի հասնելու խնդիրները: Դրանով հնարավոր եղավ նաեւ ապահովել այն հարաբերական միակամությունը, որով լուծվեցին երկրի քաղաքական ղեկավարության՝ Գերագույն խորհրդի նախագահի, նրա տեղակալների, Նախարարների խորհրդի նախագահի ընտրության, ինչպես նաեւ հանրապետության քաղաքական կարգավիճակի՝ Հայաստանի Անկախության հռչակագրի ընդունման հարցերը:

Բնական է, որ կազմակերպության «շարժումային» կանոնադրությունն ունենալու էր նաեւ իր անխուսափելի բացասական հետեւանքները՝ քաղաքական ծրագրի առանձին մանրամասներն իրականացնելիս: ՀՀՇ-ի ցուցակով անցած պատգամավորների մի մասն իրեն բացարձակ ազատ էր զգում եւ չպարտավորված, նրանք կարող էին անդամագրվել տարբեր կուսակցական խմբակցությունների կամ պատգամավորական խմբերի, կային նաեւ այլ կուսակցությունների չբացահայտված անդամներ, որոնք շուտով անհաշտ ընդդիմություն էին դառնալու: Եւ երբ ՀՀՇ-ի նախաձեռնությամբ խորհրդարանում կազմվեց «Հանրապետություն» խմբակցությունը, նրանում անդամագրվեց ընդամենը 48 պատգամավոր: Թեեւ դա խորհրդարանում կազմավորված խմբակցությունների մեջ ամենաբազմամարդն էր, սակայն միայն կեսն էր այն պատգամավորների ընդհանուր թվից, որոնք ՀՀՇ-ի օժանդակությամբ էին հայտնվել խորհրդարանում:

Երբ այլեւս պարզ էր, որ իշխանության հարցը անշրջելիորեն լուծված է (ուրեմն՝ նաեւ հիմնական վտանգները վերացած), հասարակության մեջ նկատվեց երկու գործընթաց: Ակտիվացավ մինչ այդ անտարբեր եւ հայեցողական դիրք գրավող մտավորականության մի մեծ շերտ՝ հավակնելով տեղ զբաղեցնել նոր իշխանական կառույցներում: Պաշտոններ չստանալու դեպքում նրանք դառնում էին ՀՀՇ-ի գործուն ընդդիմախոսն ու քննադատը: Մյուս կողմից՝ սկսվեց ՀՀՇ անդամ դառնալու դիմումների զանգվածային հեղեղ՝ մասնավորապես քաղքենիական խավի, միջին եւ մանր խորհրդային չինովնիկության կողմից [440]: Ակնհայտ էր, որ դրա պատճառն ամենեւին գաղափարական նոր, հանկարծահաս համոզմունքները չէին: Դիմումները մերժելու կանոնադրական որեւէ հիմք չկար, եւ այդպես շարունակվելու դեպքում կազմակերպությունը պարզապես կարող էր վերածվել ամորֆ մի հսկայածավալ զանգվածի: Ուստիեւ՝ ՀՀՇ-ն իր երկրորդ հա-

[440] *Տե՛ս «Հայք», 24.10.1990:*

մագումարի նախապատրաստությունների շրջանակներում ստիպված էր հաշվի նստել այս երեւույթի հետ: Ինչպես 1-ին համագումարին նախորդող շրջանում, այժմ էլ վտանգ կար, որ, օգտվելով կազմակերպության մեջ անարգել մտնելու հնարավորությունից, համագումարում կարող էին մեծամասնություն կազմել քաղաքական բոլորովին այլ գաղափարների կրողներ կամ քաղաքական որեւէ գաղափարից զուրկ, պատեհապաշտ մարդիկ: Սեպտեմբերի 15-ին ՀՀՇ խորհրդի որոշմամբ հայտարարվեց անհատական անդամագրում: Տեղական կազմակերպություններին հանձնարարվեց. «Անդամագրելիս... անընդունելի համարել ՀՀՇ անդամության համատեղելիությունը Կոմկուսի եւ այն կուսակցությունների ու կազմակերպությունների անդամության հետ, որոնց գաղափարախոսությունն ու գործելակերպը հակասում են ՀՀՇ գաղափարական հիմնադրույթներին եւ կանոնադրական գործելակերպին: Այլ կուսակցություններից եւ կազմակերպություններից անդամագրումը ՀՀՇ-ին թողնել տեղական խորհուրդների հայեցողությանը»[441]: Սա, թերեւս, այն նվազագույն անհրաժեշտ սահմանափակումն էր, որին պարտավոր էր գնալ իշխանության պատասխանատվությունը ստանձնած քաղաքական ուժը:

ՀՀՇ երկրորդ համագումարը սկսվեց 1990թ. նոյեմբերի 23-ին: Հիմնական հարցերից մեկը հետեւյալն էր. կազմակերպությունը պետք է վերածվի կուսակցությա՞ն, թե՞ մնա որպես հասարակական լայն շարժում: Խնդրի քննարկումը պայմանավորված չէր վերոհիշյալ մեղադրանքներով: Հարցադրումն այսպիսին էր. լուծվե՞լ են արդյոք այն բոլոր խնդիրները, որոնց համար առավել արդյունավետ է կազմակերպությունը պահել հենց Շարժման կազմակերպական սկզբունքների վրա: Եթե լուծվել են, ուրեմն այն կարելի է վերածել քաղաքական գործունեության իրականացման համար առավել ճկուն հատկանիշներ եւ այլ անհրաժեշտ որակներ ապահովող կազմակերպության՝ կուսակցության: Համագումարը համարեց, որ կազմակերպությունը շարժման տեսքով դեռեւս իր առջեւ դրած խնդիրներն ամբողջությամբ չի սպառել[442]:

[441] *«Հայք», 20.09.1990:*

[442] *ՀՀՇ-ի դեմ քարոզչության գինանոցում կային եւ լայնորեն օգտագործվում էին մի ամբողջ շարք այլ մեղադրանքներ, որոնցից հիմնականների էության բացահայտմանն ու մերժմանն էր նվիրված համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի կարեւոր մի մասը (տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 59-67:*

Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին համագումարում ընդունված բանաձեւում արձանագրվեցին կազմակերպության հիմնական սկզբունքները. **ա)** «Արցախի խնդրի քաղաքական լուծումը կապված է Հայաստանի Հանրապետության բազմակողմանի հզորացման եւ անկախ պետականության վերականգնման գործընթացի հետ եւ կազմում է դրա անքակտելի մասը», **բ)** «Հայոց համազգային շարժումն առկա հակասությունների լուծման ճանապարհին կողմնակից է քաղաքական ուղղակի երկխոսությունների՝ հիմքում ունենալով արցախահայության արմատական շահերը»[443]:

Մի այլ բանաձեւում համագումարն արձանագրեց Անկախության հռչակագրի ընդունմամբ եւ իշխանությունների վճռական դիրքորոշման շնորհիվ ներքաղաքական իրավիճակի որոշակի կայունացումը: Կայունության հետագա պահպանման համար որպես վտանգ նշվում էր երկու հանգամանք: Առաջինը վերաբերում էր երկրում գործող կոմունիստական պաշտոնեությանը. «Կոմունիստական համակարգի ծնած սոցիալ-տնտեսական ճգնաժամն ավելի է խորանում մեծ եւ փոքր պաշտոններ ժառանգածների մի ստվար խմբի հակազգային գործունեության պատճառով, որոնք տնտեսական դժվարությունները փորձում են բարդել նորաստեղծ ժողովրդավարական իշխանությունների վրա»: Այս մտահոգությունը ճշգրիտ էր եւ տեղին: Երկրորդը կապված էր Սփյուռքի կուսակցությունների հետ, սակայն անմիջապես նրանց չէր վերաբերում: Ընդհակառակը՝ համագումարը ողջունում էր «Սփյուռքի ազգային կուսակցությունների մուտքը Հայաստան», իսկ վտանգը համարում էր այն, որ՝ «նրանց մեջ ապազգային, կայսերամետ տարրերի ներթափանցման եւ գրավիչ ցուցանակների ներքո ազգային պետության հաստատմանը խոչընդոտելու վտանգավոր միտում է նկատվում»[444]: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այս հարցում ՀՀՇ-ն պաշտոնական իր գնահատականներում շարունակում էր չարդարացված նրբանկատություն ու հանդուրժողականություն ցուցաբերել. «կայսերամետ տարրերի» հոսքը դեպի սփյուռքյան կուսակցություններ իրականում պայմանավորված էր հենց այդ կուսակցությունների էությամբ ու ծրագրերով[445]: Այնպես որ՝ նրանք հաճույքով տրա-

[443] *«Հայք», 29.11.1990:*

[444] *«Հայք», 29.11.1990:*

[445] *Ղեկավարությունն, անշուշտ, Շարժման ողջ ընթացքում նրանց դրսեւորած վարքագծից գիտեր այդ կազմակերպությունների իրական (կայսերամետ) էության մասին, սակայն շարքերում եւ հասարակության մեջ դեռեւս այլ էր նրանց մասին պատկերացումը, ու դա չէր կարելի հաշվի չառնել:*

մադրում էին իրենց «գրավիչ ցուցանակները» այդօրինակ՝ «կայսերամետ» գաղափարներ կրողներին:

Մյուս բանաձեւերը վերաբերում էին արտաքին քաղաքականությանը, հայրենիք-սփյուռք հարաբերություններին, բնապահպանական խնդիրներին:

Համագումարն ընտրեց նաեւ կուսակցության ղեկավար մարմնի՝ ՀՀԾ վարչության նոր կազմը[446]:

գ) Ընդդիմության առաջին պատկերը, դրա գաղափարախոսական, քաղաքական, սոցիալական հիմքերը

Նոր ձեւավորված խորհրդարանի հստակ քաղաքական պատկերի մասին դժվար էր խոսել միայն խորհրդարանական ընտրությունների ֆորմալ արդյունքներից ելնելով:

ՀՀԾ-ն, որ թեկնածուներ էր առաջադրել հանրապետության համարյա բոլոր ընտրատարածքներում, ընտրություններին մասնակցեց իր կողմից պաշտպանվող թեկնածուների նախընտրական հրապարակված ցուցակով, եւ կարելի էր համարել, որ այդ ցանկից ընտրվածներն էլ պետք է կազմեին քաղաքական մեկ բեւեռը: Բոլոր ընտրատարածքներում թեկնածուներ էր առաջադրել նաեւ Կոմկուսը, որը թեեւ նման նախընտրական ցուցակ չէր հրապարակել, սակայն բնական կլիներ ենթադրել, որ նա էլ խորհրդարանում պետք է կազմեր քաղաքական մյուս բեւեռը: Ընտրություններին մասնակցել էին նաեւ մի քանի այլ մանր կազմակերպություններ եւ որեւէ կազմակերպություն չներկայացնող անհատներ, որոնք էապես չէին կարող ազդել այս երկու հիմնական ուժերի հարաբերակցության

[446] *Աբգարյան Երջանիկ, Անանիկյան Լեւոն, Ասատրյան Բագրատ, Արարքցյան Բաբկեն, Բագրատյան Հրանտ, Բազդասարյան Ալբերտ, Բլեյան Աշոտ, Գալստյան Համբարձում, Գեւորգյան Սամվել, Եգորյան Էդուարդ, Զուռնաչյան Վարդան, Իշխանյան Ավետիք, Իշխանյան Ռաֆայել, Լազարյան Տեր-Հուսիկ քահանա, Կարամանուկյան Շահեն, Հակոբյան Ալեքսան, Հակոբյան Սմբատ, Հայրիկյան Պարույր, Հովհաննիսյան Արամ, Ղազարյան Ռաֆայել, Ղարագեբակյան Ստեփան, Մանթաշյան Գրիգոր, Մայիլյան Արամ, Մանուչարյան Աշոտ, Մովսիսյան Յուրի, Շահնազարյան Դավիթ, Ոսկանյան Աշոտ, Պապկեւիչյան Տիգրան, Պետրոսյան Շահեն, Ռուբինյան Կարապետ, Սադոյան Արշակ, Սարգսյան Վազգեն, Սարգսյան Տիգրան, Սարդարյան Կորիւն, Միրզեղյան Վանիկ, Ստամբոլցյան Խաչիկ, Վարդանյան Կամո, Փափազյան Վահան, Քոչարյան Շավարշ, Քոչարյան Ռոբերտ (տե՛ս «Հայք», 29.11.1990):*

վրա: Սակայն սա խիստ կոպիտ ու պայմանական բաժանում էր: Ընտրվելուց հետո էլ, արդեն խորհրդարանում, որոշակի տեղաշարժեր պետք է լինեին: Քաղաքական երկու ուժերի դեպքում էլ կարելի էր խոսել միայն հիմնական քաղաքական կորիզի մասին, իսկ որոշակի թվով պատգամավորներ կողմնորոշվելու եւ վերակողմնորոշվելու էին ընթացքում: Այնպես որ՝ տարբեր աստիճանի անակնկալներ էին սպասվում ինչպես ՀՀԾ-ին, այնպես էլ Կոմկուսին: Երկու կարեւոր հարցերի՝ Գերագույն խորհրդի նախագահի ընտրության եւ երկրի քաղաքական կարգավիճակի (Անկախության հռչակագրի) հարցերի քննարկումները ընդամենը ուրվագծեցին Խորհրդարանի առաջին քաղաքական պատկերը:

Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունն, ըստ էության, վերջնականապես լուծում էր նաեւ իշխանության հարցը, ուստի քաղաքական ջրբաժանը հստակ էր հետեւյալ հարցով՝ թողնե՞լ իշխանությունը Կոմկուսին, թե՞ ոչ: Իսկ սա իր հերթին պայմանավորում էր երկրորդ հարցի պատասխանը՝ Հայաստանը պետք է շարունակի մնալ ԽՍՀՄ կազմո՞ւմ, հին համակարգը պահպանելու դիրքերում, թե՞ վերցնի ժողովրդավարական եւ համակարգային արմատական վերափոխումների ուղեգիծ եւ սկսի անկախ պետականության հաստատման գործընթաց: Ավելի պարզ ու ընդունված բնորոշմամբ, մի կողմում հավաքվելու էին հետադիմական, մյուս կողմում՝ առաջադիմական ուժերը: Եթե հասարակական տրամադրվածությունն, ի դեմս ընտրված պատգամավորների, հակված էր երկրորդ ճանապարհն ընտրելու, ուրեմն իշխանության հավակնորդ միակ կազմակերպված ուժը ՀՀԾ-ն էր, որի թեկնածուն միայն կարող էր մրցակցել կոմունիստների թեկնածուի հետ: Ընդ որում՝ հասարակական այդ տրամադրվածությունը, որպես կարեւոր գործոն, հօգուտ երկրորդ ճանապարհի շատ ակտիվ դրսեւորվում էր ոչ միայն խորհրդարանում, այլեւ նրա պատերից դուրս, փողոցներում եւ հրապարակներում՝ հանրահավաքների ու ցույցերի տեսքով:

Օգոստոսի 3-ին ԳԽ նախագահի առաջին քվեարկությունը ցույց տվեց, որ կոմունիստների թեկնածու Վլադիմիր Մովսիսյանը շատ ավելի հեռու է հաղթելու համար անհրաժեշտ քվեների քանակից, քան Շարժման թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը: Իսկ հաջորդ փուլերը ցույց տվեցին, որ կոմունիստների ձայները՝ նվազելու, իսկ ՀՀԾ-ի ձայներն ավելանալու միտում ունեն. մի շարք կոմունիստ եւ անկախ պատգամավորներ, այնուամենայնիվ, հակված էին հաշվի նստել օբյեկտիվ իրողությունների հետ եւ իրատեսորեն մտածել: Եթե նկատի ունենանք, որ չբացահայտված դաշ-

նակցականները (որ անցել էին նաեւ ՀՀՇ-ի ցուցակով կամ որպես անհատ թեկնածու՝ շուրջ 10-15 ձայն) նույնպես ձայն էին տվել կոմունիստ թեկնածուին, ուրեմն ավելի մեծ է եղել այն կոմունիստ եւ անկախ պատգամավորների թիվը, ովքեր քվեարկել էին հօգուտ Շարժման թեկնածուի: Այստեղ արձանագրվեց նաեւ մի երրորդ խմբի գոյություն, որն իրեն համարում էր «առավել արմատական ազգային գաղափարների» կրող եւ խնդիրների առավել արմատական լուծումների կողմնակից: Այն առաջադրեց Պարույր Հայրիկյանի թեկնածությունը եւ հավաքեց 8 ձայն: Նրանք, որ նույնպես ընտրվել էին ՀՀՇ-ի աջակցությամբ, քվեարկության վերջին՝ չորրորդ փուլում արդեն իրենց ձայնը տվեցին Շարժման թեկնածուին:

Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը եւ իշխանության հարցի վերջնական լուծումը դեռ չէր նշանակում իրենց քաղաքական հավատամքով երկու բեւեռի վերջնական սահմանազատում եւ հստակեցում: Այն առայժմ հստակեցրեց մեկ հարց՝ իշխանությունը չի մնում կոմունիստներին, այն անցնում ժողովրդավարական նոր ուժի՝ ՀՀՇ-ին: Այն սպասումը, որ իշխանությունը կորցրած եւ փոքրամասնության մեջ մնացած Կոմկուսն էլ իր գաղափարախոսությամբ պաշտոնապես եւ փաստացի կստանձնի նոր իշխանության ընդդիմության դերը, բնական էր: Սակայն, քիչ անց խորհրդարանում ձեւավորվեց քաղաքական ավելի բազմագույն խճապատկեր, քան ենթադրելի երկբեւեռ վիճակը կլիներ[447]:

Նոր իշխանության քաղաքական ընդդիմությունն ավելի հստակ պետք է ուրվագծվեր հաջորդ հարցի՝ Հայաստանի կարգավիճակի, Անկախության հռչակագրի քննարկման ժամանակ: Հայոց համազգային շարժումը համարում էր, որ փաստաթղթի հիմքում պետք է դրվի ԽՍՀՄ արդեն ընդունված օրենքով սահմանված կարգը, այն է՝ ոչ թե անմիջապես անկախություն հռչակել, այլ սկսել անկախության գործընթացը: Չնայած Կոմկուսն էլ ներկայացրել էր Հռչակագրի նախագծի իր տարբերակը, սակայն նա շատ չպնդեց այն: Այժմ արդեն ՀՀՇ-ի տեսակետների հիմնական վիճարկողները «առավել ազգային» դիրքերից հանդես եկող խմբերն էին:

[447] *Բացի ՀՀՇ-ի եւ ՀԿԿ-ի խմբակցություններից, գործում էին նաեւ հետեւյալ պատգամավորական խմբերը. «Հանրապետություն», «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Արցախ», «Ազգային ժողովրդավարներ», «Լիբերալ դեմոկրատներ», «Ազգային առաջադիմություն»: Իսկ ընդհանրապես, ըստ պատգամավորների կուսակցականության, խորհրդարանում ներկայացված էր 18 քաղաքական ուժ (տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, 1990-1995, Երեւան, 1995, էջ 125):*

Սակայն նրանք էլ առայժմ չէին կարողացել (կամ չէին ցանկացել) համախմբվել ընդհանուր մի նախագծի շուրջ: Նրանց նախագծերում տարբերվող ու բնութագրական հիմնական դրույթներն այսպիսին էին. Գերագույն խորհրդի որոշմամբ միանգամից անկախության հռչակում, անկախության հռչակում Ղարաբաղի հետ միասին, «Ազատ, անկախ, միացյալ» Հայաստանի հռչակում, 1921թ. ռուս-թուրքական պայմանագրերի՝ Հայաստանին վերաբերող մասերի չեղյալ հայտարարում, ԽՍՀՄ կազմավորման պայմանագրի ապօրինի համարում, Հայաստանի հռչակումը որպես «Արեւելյան Հայաստանի Հանրապետություն» եւ այլն: Բուռն քննարկումներից եւ մանրակրկիտ բացատրություններից հետո Հռչակագրի նախագծի վերջնական տարբերակում այս դրույթները տեղ չգտան:

Այդ ժամանակ, ահա, վերոհիշյալ ուժերին հաջողվեց միավորվել երկու դրույթի շուրջ. առաջին՝ Հռչակագրում 1915թ. Հայոց ցեղասպանության փաստի ու դրա հետ կապված՝ պահանջատիրության ամրագրում, եւ երկրորդ՝ 1989թ. դեկտեմբերի 1-ի՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման որոշման հիշատակում: Երկու կետերն էլ ի վերջո, որոշ խմբագրումներով, տեղ գտան Հռչակագրում:

Կարելի է ասել, որ հենց Հռչակագրի հետ կապված հարցերի բուռն եւ երկարատեւ քննարկումների ժամանակ արդեն բացահայտ էր, որ ՀՀՇ-ի իշխանությունն ունենալու է երկու կարգի ընդդիմություն, պայքարելու է երկու ճակատում: Առաջին ճակատը նրա դեմ հարդարելու էր պարտված, փոքր-ինչ հետ քաշված, բայց ամենեւին չհանձնված Կոմկուսը՝ անկախության, ազատական տնտեսության եւ ժողովրդավարական նորմերի հաստատման հարցերում: Նրա բնական դաշնակիցը պետք է լիներ, ինչպես մինչ այդ, Դաշնակցությունը: Այս երկու ուժերին միավորում էին նաեւ Հայաստանի կարգավիճակի մասին պատկերացումները: Տարբեր հիմնավորումներով, բայց նրանք երկուսն էլ Հայաստանն այլ կերպ չէին պատկերացնում, քան «Ռուսաստանի հետ մեկ միության մեջ»: Տեղի տալ այս ճակատին՝ կնշանակեր հրաժարվել անկախության կուրսից: Երկրորդ ճակատը կազմելու էին «առավել արմատականները», որոնք, ի հեճուկս անկախության ձեռքբերման եւ պետականության կայացման գործընթացում իրատեսական մոտեցումների եւ խնդիրների ողջախոհ հաջորդականության, պահանջում էին հապշտապ եւ ցուցական գործողություններ: Այս ճակատում տեղի տալը կնշանակեր անիմաստ եւ վտանգավոր սուր առճակատում Մոսկվայի հետ, անկախության գործընթացի վտանգում:

Վաղուց արդեն ակնհայտ էր, որ կոմունիստական գաղափարախոսությունը չէր կարող լինել այն գաղափարական հիմքը, որի վրա կարող էր խարսխվել նոր իշխանության քաղաքական ընդդիմությունը: Իսկ 1989 թվականի ամռանից այլեւս պարզ էր, որ Շարժման դեմ որպես գաղափարական պայքարի միասնական պլատֆորմ՝ ընտրվել է հայդատականությունը, որի հռչակած խնդիրները եւս հենվում էին այն կանխադրույթի վրա, որ Հայաստանը պետք է շարունակի գտնվել ԽՍՀՄ կազմում: Հետագա պայքարը Շարժման դեմ ընթացավ հենց այս վերջին հիմքի վրա: Դրա համար լավագույնս օգտագործվեցին ե՛ւ սփյուռքյան կուսակցությունները, ե՛ւ Հայաստանի մտավորական նոմենկլատուրան, ե՛ւ գաղափարախոսական նույն հիմքի վրա ստեղծված բազմաթիվ մանր կազմակերպությունները: Պայքարն արդեն իշխանության հասած ՀՀՇ-ի դեմ շարունակելու էր հենվել գաղափարախոսական նույն հիմքի վրա: Որպես այդպիսին՝ այն լիովի բավարարում էր ինչպես կոմունիստներին ու Դաշնակցությանը, այնպես էլ «արմատական» անկախականներին:

Ընդդիմության քաղաքական պայքարի հիմքը պետք է դառնար անկախության ուղեգծի նկատմամբ վերաբերմունքի հարցը: Անկախության հռչակագիրը հնարավոր եղավ, փաստորեն, միաձայն ընդունել: Այն միութենական պայմանագրին միանալու կողմնակիցներին բավարարում էր այնքանով, որ անմիջապես անկախություն չէր հռչակում, այլ «գործընթացի սկիզբ» էր, որն, ըստ ԽՍՀՄ համապատասխան օրենքի, պետք է տեւեր առնվազն 5 տարի: Ձեւավորվող «արմատականներին» այն բավարարեց այնքանով, որ դրանում հիշատակվեցին Ցեղասպանության հարցը եւ Դեկտեմբերի 1-ի՝ Լեռնային Ղարաբաղի հետ վերամիավորման որոշումը:

Ընդդիմությունն ուներ նաեւ որոշակի սոցիալական հիմք, հասարակության մեջ ձեւավորված որոշակի խավեր: Դրանք էին կոմունիստական շրջանի կուսակցական, խորհրդային մարմինների, տնտեսական եւ մտավորական նոմենկլատուրան, որոնք նոր պայմաններում, բնականաբար, զրկվելու էին իրենց արտոնյալ դիրքից, շատերը՝ նաեւ աշխատանքից ու եկամուտների աղբյուրներից: Ընդդիմության համար որոշակի «հումք» կարող էին հանդիսանալ նաեւ Շարժման բազմաթիվ մասնակիցներ, ովքեր կհամարեին, որ իշխանության մարմիններում ներգրավվածության իմաստով անտեսվել են իրենց ունեցած վաստակի համեմատ:

դ) Կոմկուսը խորհրդարանական ընդդիմության դերում

Իշխանությունը կորցնելուց քիչ անց Կոմկուսի քաղաքական ակտիվությունը առերեւույթ սկսեց կտրուկ նվազել: Անշուշտ, դրան նպաստեց նոր իշխանության հանդուրժողական, կառուցողական վերաբերմունքը: Այս իմաստով առաջին տպավորիչ քայլը կատարեց Գերագույն խորհրդի նորընտիր նախագահը՝ որպես իր տեղակալ առաջարկելով կոմունիստ պատգամավոր (ՀԿԿ ԿԿ-ի բաժնի վարիչ) Գագիկ Հարությունյանի թեկնածությունը: Կոմունիստ պաշտոնյաների մի մասը, որպես մասնագետներ, ընդգրկվեց նոր իշխանության կառույցներում:

Իրականում, սակայն, Կոմկուսը, որ խորհրդարանում ուներ զգալի թվով ձայներ[448], ամենեւին տրամադրված չէր վերջնականապես հանձնվելու: Աշնանը, տեղական իշխանությունների ձեւավորման ժամանակ, կուսակցական նոմենկլատուրան նետվեց նոր պայքարի եւ շատ տեղերում, մասնավորապես՝ գյուղական շրջաններում, հաջողության հասավ: Իսկ խորհրդարանում սկզբունքային հարցերում նա շարունակում էր մնալ անզիջում: Հռչակագրի ընդունման նախօրյակին նրա քաղաքական մարմինը հայտարարեց, որ շարունակելու է մնալ որպես Հայաստանի՝ ԽՍՀՄ-ի կազմում մնալու կողմնակից. «Ընդունելով անկախության գաղափարը, մենք գտնում ենք, որ անկախ եւ ինքնուրույն Հայաստանը տեսանելի ապագայում որպես ինքնիշխան պետություն, կամավոր հիմունքներով պետք է գտնվի Միության նորացված համակարգում»[449]: Դժվար չէ նկատել, որ ձեւակերպումը ոչ միայն բովանդակությամբ, այլեւ ձեւով շատ նման էր ՀՅԴ-ի հայտնի «անջատման դեմ ըլլալով հանդերձ՝ անկախական կմնանք» յուրօրինակ «բանաձեւին»[450] :

---

448 *Գերագույն խորհրդում 1990 թվականի օգոստոսի սկզբին Կոմկուսը Գխ նախագահի իր թեկնածուի համար կարողանում էր ապահովել մոտ 8 ասանյակ ձայն: Ավելի ուշ՝ 1991թ. մարտի 6-ին կազմավորված «Կոմունիստ» պատգամավորական խմբի մեջ ընդգրկվեց ընդամենը 25 հոգի (տե՛ս Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 5, հոդվ. 81):*

449 *«Խորհրդային Հայաստան», 21.08.1990:*

450 *Կոմկուսը երբեւէ պաշտոնական փաստաթղթերում բացահայտ չխոստովանեց Դաշնակցության հետ իր կապերի մասին: Սակայն նախ ՀԿԿ-ի, ապա ՀՅԴ-ի գաղափարների պաշտպանները երբեմն նմանօրինակ միջնորդավորված ակնարկներ անում էին: Այսպես՝ Լենգրուշ Խուրշուդյանը արձանագրում է, որ «Դաշնակցության ազգային քաղաքականությունը շատ մոտ է Հայաստանի կոմկուսի նոր ծրագրին»*

Հռչակագրի ընդունման հաջորդ օրն իսկ Կոմկուսը հրապարակավ հանդես եկավ ՀԽՍՀ Սահմանադրության 6-րդ եւ 7-րդ հոդվածները փոփոխելու օրենսդրական նախաձեռնությամբ[451]: Դրանք վերաբերում էին Կոմկուսի «ղեկավար եւ ուղղություն տվող» դեր ունենալուն: Սահմանադրական նման մի փոփոխության առաջարկի դեմ ընդամենը մի քանի ամիս առաջ, կատաղի պայքարելով, Կոմկուսը թույլ չտվեց, որ այն հանվի ՀԽՍՀ Սահմանադրությունից[452]: Նախաձեռնությունն այժմ չափազանց ուշացած էր, հետապնդում էր ընդամենը սեփական վարկանիշի բարձրացման քարոզչական նպատակ, եւ այն օրենսդիր մարմինը քննության չառավ: Այդ դրույթն արդեն իսկ ոչնչացել էր մայիսին կայացած համաժողովրդական քվեարկությամբ, իսկ մինչ այդ հանված էր անգամ ԽՍՀՄ Սահմանադրությունից եւ գործնականում գոյություն չուներ:

Իշխանությունից զրկված կուսակցության ներսում անմիջապես սկսվեցին նաեւ խլրտումներ, որ մինչ այդ անհարիր էին նրա բնութագրին եւ անթույլատրելի: Հրապարակվեց ՀԿԿ-ի նոր կանոնադրության եւ ծրագրի մի նախագիծ, որտեղ անվանման մեջ փակագծերում դրվում էր «անկախ» բառը՝ «Հայաստանի կոմունիստական (անկախ) կուսակցություն»[453]: Հայաստանի կոմկուսի 29-րդ համագումարը, որ տեղի ունեցավ 1990թ. հոկտեմբերին, հարցը չլուծեց: Այստեղ է՛լ ավելի հստակ անջատվեց այն թեւը, որը պահանջում էր կուսակցությունը վերածել սոցիալ-դեմոկրատական տիպի անկախ կազմակերպության, նախատեսում էր կուսակցության ծրագրի վերանայում, դեմոկրատական ցենտրալիզմի մերժում եւ անկախացում ԽՄԿԿ-ից: Այս թեւն ընդդիմացավ ներկուսակցական հանրաքվե անցկաց-

(«Հայաստան», 05.10.90): Այստեղ խոսքը ՀԿԿ-ի նոր Ծրագրում հայդատական/պահանջատիական նոր էլեմենտների մասին է: Շատ ավելի կարեւոր էր Հայաստանի անկախությանը դեմ լինելու, ԽՍՀՄ (կամ Ռուսաստանի) կազմում մնալու նրանց նպատակների նույնությունը, ինչը, բնականաբար, առաջին հերթին պետք է քաղաքական համագործակցության հիմք ծառայեր:

[451] *«Խորհրդային Հայաստան», 24.08.1990:*

[452] *Սահմանադրության այս դրույթի վերացման նախաձեռնությամբ ՀՀՇ-ն հանդես էր եկել 1989թ. դեկտեմբերի սկզբին Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացրած «Հայաստանում արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին հռչակագրում» դա կարեւոր դրույթներից մեկն էր, ինչն այն ժամանակ սուր հակահարվածի արժանացավ Կոմկուսի ու նրա հովանավորյալների կողմից եւ մերժվեց ամբողջ փաստաթղթի հետ միասին:*

[453] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 22.08.1990:*

նելու նախաձեռնությանը եւ, որպես անջատված մաս, հանդես եկավ նոր կուսակցություն ստեղծելու մասին հայտարարությամբ, որը պետք է կոչվեր «Հայաստանի կոմունիստական անկախ կուսակցություն»[454]:

Զնայած իշխանությունից զրկվելուն եւ իր համար անսովոր վիճակում հայտնվելուն, Կոմունիստական կուսակցությունը 1990թ. վերջին դեռեւս զանգվածային մի կառույց էր՝ 2400 հաստիքային աշխատողներով, որոնցից 800-ը՝ տեղական կազմակերպություններում, 1600-ը՝ կենտրոնական եւ շրջանային կոմիտեների ապարատում[455]: Սա հսկայական ուժ էր՝ իր վճարվող պաշտոնյաներով համեմատելի պետական կառույցների պաշտոնեության թվին: Նրա նոր ղեկավար Ստեփան Պողոսյանը հայտարարում էր, որ կմնան ԽՄԿԿ կազմում՝ «հանուն ազգային շահերի»[456]:

Կոմկուսն օգտվում էր մեծ ֆինանսական միջոցներից: Թեեւ կտրուկ կրճատվել էր անդամավճարների հոսքը, սակայն ՀԿԿ-ն շարունակում էր ֆինանսավորվել Մոսկվայից[457], ուստիեւ, բնականաբար, պետք է մնար նրան հաշվետու եւ շարունակեր կատարել նրա քաղաքական պատվերները: Այնուամենայնիվ, կոմկուսն արագորեն բարոյալքվում եւ քայքայվում էր, նրա անդամները զանգվածաբար դուրս էին գալիս կազմակերպությունից: Դա հասկանալի եւ անխուսափելի գործընթաց էր: Խորհրդային մարդու համար ցանկացած բնագավառում, բանվորից մինչեւ գիտնական, առաջ գնալու, որեւէ հաջողության հասնելու նվազագույն անհրաժեշտ պայմանը տասնամյակներ շարունակ եղել էր անդամակցումն այս՝ միակ կուսակցությանը: Այժմ դա այլեւս որեւէ դեր չէր խաղում:

Այն բանից հետո, երբ արդեն վերջնականապես լուծված էին իշխանության եւ հիմնական պաշտոնների նշանակումների հարցերը, Կոմկուսի ներկայացուցիչները խորհրդարանում արտաքնապես անցան պասիվ դիրքերի, չնայած՝ նրանում դեռեւս պատկառելի իրենց ներկայացվածության: Իրականում, սակայն, Կոմկուսը ոչ միայն չէր համակերպվել իշխանության կորստի հետ, այլեւ կորցրածը կարճ ժամկետում վերադարձնելու ման-

[454] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 01.11.1990:

[455] Համեմատության համար նշենք, որ ՀՀՇ-ի հաստիքային աշխատողների թիվը երբեւէ չանցավ մեկ տասնյակը:

[456] Տե՛ս «Հայք», 12.12.1990:

[457] 1990թ. անդամավճարների պլանավորված 16.168.500 ռուբլու փոխարեն հավաքվել էր ընդամենը 10.350.000-ը: Սակայն դա ՀԿԿ-ի համար լուծելի հարց էր. Ստ. Պողոսյանը ԽՄԿԿ կենտկոմից նախատեսված 3.262.500 ռուբլի դոտացիան խնդրում էր ավելացնել եւ դարձնել 6.350.000 ռուբլի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 35, թ. 50):

ռակրկիտ ծրագրեր էր կազմել եւ գործունեություն ծավալել: Այդ է վկայում գաղտնի մի փաստաթուղթ, որն ամիսներ անց, ՀԿԿ-ի գույքի ազգայնացման նպատակով կատարվող գույքագրման ժամանակ, հայտնաբերվեց կուսակցության ղեկավարի դարակում: Այն վերնագրված էր հետեւյալ կերպ. «**Տեղեկանք՝ գործող քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների եւ ՀԿԿ-ի հետ նրանց համագործակցության ձեւերի մասին**»[458]՝ թվագրված 1990թ. հոկտեմբեր ամսով: Դատելով այն բանից, որ փաստաթուղթը հաշվետվության հստակ տարրեր էր պարունակում, դժվար չէ ենթադրել, որ այն ներկայացվել էր (կամ կազմվել էր ներկայացնելու համար) Մոսկվա: Կոմկուսը չժխտեց փաստաթղթի վավերականությունը[459]:

Փաստաթուղթը շատ կարեւոր տեղեկություններ է պարունակում ոչ միայն իշխանությունը կորցրած Կոմկուսի մասին, այլեւ լույս է սփռում ընդդիմադիր դաշտի վրա ընդհանրապես, բացում նոր իշխանության դեմ առաջին իսկ օրերից ծավալված պայքարի խոհանոցը, ընդդիմության իրական նպատակներն ու շարժառիթները, պայքարի մեթոդները, բնույթն ու այլ կարեւոր մանրամասները, ուստիեւ՝ արժանի է մանրամասն ներկայացման ու քննության[460]:

Այստեղ հիմնավորվում է իշխանափոխությունից հետո առաջին ամիսներին Կոմկուսի քաղաքական վարքագծի վերոհիշյալ անակնկալ պասիվությունը, հանդուրժողականությունը: Պարզվում է, որ դա ոչ թե շփոթվածության արդյունք, այլ նախապես ծրագրված մարտավարական քայլ է եղել՝ նպատակ ունենալով ազդելու հասարակության հոգեբանության, զգացումների վրա, հարուցելու նրանց խղճահարությունը: Ենթադրելով, որ իշխանության վերջնական կորստից՝ ԳԽ նախագահի ընտրություններում պարտվելուց հետո, հնարավոր է Կոմկուսի վրա հարձակումների ալիք, որոշվել էր «պասիվ պաշտպանության դիրք գրավել. ժողովուրդը պետք է տեսնի, որ մեզ անտեղի են խփում, եւ ցավակցի «թույլերին»:

[458] *Ռուսերեն այս փաստաթուղթը հրապարակվեց հայերեն թարգմանությամբ (տե՛ս «Հայք», 15.05.1991):*

[459] *Կոմկուսի վերջին ղեկավար Արամ Սարգսյանը (որը փոխարինեց Ստ. Պողոսյանին) այդ առիթով միայն բարոյախոսական խրատ կարդաց. «Ընդունված չէ կարդալ ուրիշի նամակներն ու փաստաթղթերը» եւ հայտարարեց, որ այն, իբր, իրենք կազմել էին հրապարակելու համար (տե՛ս «Հայաստան», 21.05.1991):*

[460] *Ստորեւ բոլոր մեջբերումներն այս փաստաթղթից կկատարենք ըստ «Հայքում» հրապարակված հայերեն թարգմանության:*

Թվարկվում են այն միտումները, որոնց զարգացումը, «Տեղեկանքը» կազմողների կարծիքով, կբերի ՀՀՇ-ի իշխանության տապալմանը: Որպես առաջին միտում՝ արդեն արձանագրվում է. «ՀՀՇ-ն այժմ ծանր ժամանակներ է ապրում: ՀՀՇ-ին ոչ միայն չհաջողվեց ամրապնդվել հանրապետության շրջաններում, այլեւ հասնել Երեւանում աշխատանքի որակական բարեփոխման: Զգալի են նրանց կորուստները... ՀՀՇ-ի վարկն օրեցօր ընկնում է...»[461]:

Կոմկուսին հուսադրող եւ ուրախացնող հաջորդ միտումը համարվում է նոր իշխանության դեմ այլ կազմակերպությունների ծավալած գործունեությունը. «ՀՀՇ-ի դեմ լայն քարոզչական աշխատանք են տանում մի շարք քաղաքական կուսակցություններ ու կազմակերպություններ. բացահայտ առճակատմամբ առանձնանում են տեղական «Հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, «Ազատ Հայքը», «Ազգային միասնության ուխտը», «Միացյալ Հայաստան» կուսակցությունը, եւ մի շարք այլ կազմակերպությունների դիրքորոշումները: Մի շարք սկզբունքային հարցերում ՀՀՇ-ի հետ իրենց անհամաձայնությունն են հայտնում նրա այնպիսի դաշնակիցներ, ինչպիսիք են ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը, «Հանրապետական» կուսակցությունը, «Հայաստանի անկախության» կուսակցությունը եւ այլն»:

Կարելի է չկասկածել, որ կտրուկ պասիվության անցնելու մարտավարական քայլով Կոմկուսը հետապնդել է նաեւ մի երկրորդ կարեւոր նպատակ, այն է՝ խորհրդարանում ազատել ընդդիմության տեղը, համոզված՝ որ այն արագորեն կզբաղեցվի ոչ կոմունիստական, «ազգային» համարվող ուժերի կողմից: Նրանց հաշվարկով՝ այս ուժերի դեմ նոր իշխանությունն ավելի խոցելի կլիներ: Խորհրդարանում բացահայտորեն ակտիվ ընդդիմություն մնալու դեպքում, նախ՝ ՀԿԿ-ն որպես պարտված ուժ պետք է հոգեբանական խնդիր ունենար ՀՀՇ-ի դեմ ամբողջ ուժով պայքարելու համար, եւ երկրորդ՝ այդ դեպքում «ազգային» համարվող ուժերին ակամա պետք է մղեր դաշնակցելու իշխանության հետ:

«Տեղեկանքը» ոգեւորությամբ է արձանագրում նոր իշխանության դեմ մամուլի եւ լրատվության այլ միջոցների սուր հրապարակումները եւ

[461] *Այս արձանագրումը, իշխանափոխությունից ընդամենը երկու ամիս անց, ցանկությունների ոլորտից էր եւ չէր համապատասխանում իրականությանը: Ոչ թե այդ ժամանակ, այլ անգամ մեկ տարի անց, ամենածանր խնդիրների բախվելուց հետո անգամ, ՀՀՇ-ի վարկանիշի ցուցիչը մնաց ամենաբարձրը, ինչի մի վկայությունն է Հանրապետության նախագահի՝ 1991թ. նրա թեկնածուի ստացած ձայների ավելի քան 83%-ը :*

հոդվածները. «Ավելի հաճախ են լույս տեսնում համարձակ հրապարակումներ, որոնք քննադատում են ՀՀՇ-ի ուղին ու գործունեության տարբեր կողմերը «Էպոխա», «Մունետիկ», «Գործ» եւ մի շարք ոչ պաշտոնական թերթերում, ավելի անկախ են գործում մամուլը եւ հեռուստատեսությունը»[462]: Այս ամենի հիման վրա համոզմունք է հայտնվում, որ տեղական խորհուրդների ընտրություններում ՀՀՇ-ն պարտություն կկրի, եւ դա «կհանգեցնի հանրապետությունում քաղաքական լարվածության նոր փուլի»: Ակնհայտորեն՝ քաղաքական լարվածության սպասումը ոգեւորում է «Տեղեկանքի» հեղինակներին:

Այսինքն՝ Կոմկուսը, իշխանությունը կորցնելուց անմիջապես հետո, փաստորեն, հիմնական նպատակ էր դրել՝ ապակայունացնել երկրի ներքաղաքական իրավիճակը եւ դրա համար դաշնակիցներ, ուժեր եւ միջոցներ էր փնտրում ու հավաքագրում: Հիշենք, որ սա նոր նպատակ կամ գործելակերպ չէր, նա հենց դրան էր ձգտում նաեւ իր իշխանության վերջին շրջանում եւ մանավանդ նախընտրական ամիսներին: Այն ժամանակ հույս ունեին հասնել քաղաքացիական բախումների, առիթ ստեղծել Կենտրոնի ռազմական ուժի միջամտության համար, ինչը կթուլացներ Շարժումը, կապահովեր ու կամրապնդեր իրենց իշխանությունը: Այժմ արդեն նպատակը նույն՝ ապակայունացման միջոցով ՀՀՇ-ի իշխանության թուլացումն ու տապալումն էր: Ընդ որում, նրանց համար ոչ մի նշանակություն չուներ, որ, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա (նաեւ հետագայում), ամեն ինչից զատ, Հայաստանում ցանկացած մեծ անկայունություն կարող էր նաեւ ճակատագրական հետեւանքներ ունենալ, առաջին հերթին՝ Ղարաբաղի համար:

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, նախորդ տարիներին Շարժման դեմ գաղափարական պայքարում կոմունիստական իշխանությունների հիմնական դաշնակիցը ՀՅԴ-ն էր: «Տեղեկանքը» հաստատում է, որ նոր իշխանության դեմ պայքարում Կոմկուսի հիմնական հույսը դարձյալ մնում էր Դաշնակցությունը, ինչը եւ հատուկ առանձնացվում եւ ընդգծվում է. «-Հանրապետության քաղաքական ասպարեզում, չնայած զգալի հեղինակու-

[462] *Հետաքրքիր է, որ այս փաստը Կոմկուսը ներկայացնում է որպես նոր իշխանության թուլության նշան, մինչդեռ սա լավագույն ու անաչառ խոստովանությունն է այն իրողության, որ նոր իշխանությունը առաջին իսկ օրերից լիակատար ապահովում էր ժողովրդավարության հիմնական պահանջներից մեկը՝ խոսքի եւ մամուլի ազատությունը:*

թյանը, իր խոսքը դեռ չի ասել Դաշնակցական կուսակցությունը... Ընդհանուր առմամբ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը՝ ՀՅԴ-ն (եւ տեղականը, եւ Կենտրոնական բյուրոյի կողմից Հայաստանում ստեղծվածը), բոլոր պրոդաշնակցական կազմակերպությունները հակադրվում են ՀՀՇ-ի քաղաքական ուղուն, եւ եթե նրանց հաջողվի, հաղթահարելով բոլոր խոչընդոտներն ու տարաձայնությունները, միավորվել՝ ապա ՀՀՇ-ին կդիմակայի ուժեղ, բավականին կազմակերպված, ՀՀՇ-ին քանակով գերազանցող եւ ժողովրդի մեջ ավելի համակրանք վայելող մի կուսակցություն[463]: Մեր կարծիքով դա տեղի կունենա չորս-հինգ ամսվա ընթացքում»[464]: Որպես քաղաքական արյունակցության փաստարկ եւ համագործակցության հիմք՝ հատուկ ընդգծվում է եւս երկու կարեւոր հանգամանք: Առաջին՝ որ ՀՅԴ-ն «սոցիալիստական ընտրության կուսակցություն է, նրա տնտեսական քաղաքականության հիմքում ընկած է սոցիալիզմի եւրոպական մոդելը»: Երկրորդ՝ «Կենտրոնական բյուրոն գտնում է, որ Հայաստանն անկախ գոյության պատրաստ չէ, որ ռուսական կողմնորոշումն այս պայմաններում ավելի է համապատասխանում Հայաստանի ազգային շահերին»:

Սա բացահայտ ու անհերքելի վկայություն է այն բանի, որ Հայաստանի անկախության դեմ պայքարում Կոմկուսն ու Դաշնակցությունը գտնվել են նույն քաղաքական պլատֆորմի վրա եւ սերտ համագործակցության մեջ: Զարմազանց հետաքրքիր է հետեւյալ արձանագրումը. «Զարմե մոռանալ, որ բոլոր արտասահմանյան հայկական կուսակցությունները արեւմտյան հատուկ ծառայությունների սեւեռուն ուշադրության առարկա են եղել»: Այս ամենը նկատի ունենալով՝ ենթադրվում է. «Իշխանության համար քաղաքական պայքարում ՀՅԴ-ն, ըստ ամենայնի, հանրապետության Կոմկուսի հետ համագործակցության եւ կոալիցիայի կձգտի, որին պետք է

[463] *Այս դեպքում Կոմկուսի «լավատեսությունը», անշուշտ, չափազանցված է: Դաշնակցության իրական վարկանիշը եւս մի տարի «աճելուց» հետո հստակ արձանագրվեց 1991թ հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրություններում: Նրա թեկնածու Սոս Սարգսյանը հավաքեց ընտրողների ձայների միայն 4,3 %-ը, որ մոտ 20 անգամ պակաս էր, քան ստացել էր ՀՀՇ-ի թեկնածուն, եւ երկու անգամ ավելի պակաս, քան նույնիսկ ստացել էր ԱԻՄ-ի թեկնածուն:*

[464] *Տեղեկանքը թվագրված է 1990-ի հոկտեմբերի 30-ով, այսինքն՝ այս կանխատեսումը պետք է իրականություն դառնար 1991թ. մարտ-ապրիլ ամիսներին: Ըստ այսմ գուցե եւ զուգադիպություն չէին հենց այս ամիսներին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վրա Կենտրոնի սաստկացած ճնշումները եւ «Կոլցո» օպերացիան:*

մանրազնին նախապատրաստվել արդեն այսօր»: Այսինքն, ՀԿԿ-ն, համոզված լինելով հանդերձ, որ Դաշնակցությունը գտնվում է արեւմտյան հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ՝ պատրաստվում է նրա հետ համագործակցել անկախության դեմ պայքարելու եւ նոր իշխանությունը տապալելու համար:

Ըստ «Տեղեկանքի»՝ Կոմկուսն իր առջեւ խնդիր է դնում նախապատրաստել հետեւյալ «անհետաձգելի ու նաեւ հեռանկարային միջոցառումները».

ա) Տեղական խորհուրդների ընտրություններից հետո (որտեղ Կոմկուսը հաջողություններ էր ակնկալում Ա.Ս) պատրաստ լինել իր վրա հարձակումների նոր ալիքի: Խորհրդարանում ոչ սկզբունքային հարցերում պասիվ լինել, բայց դա փոխհատուցել «շրջանային տեղական խորհուրդներում փոքրամասնություն կազմող ՀՀՇ-ականների դեմ ակտիվ պայքարով»: Խորհրդարանում սկզբունքային հարցերում «վճռական եւ սուր հակահարված տալ ՀՀՇ-ի եւ այլ կազմակերպությունների, նաեւ մեր կուսակցության չափն ու սահմանն անցած նախկին անդամներին: Շեշտը հատուկ պետք է դնել կառավարության տնտեսական քաղաքականության վրա եւ աստիճանաբար սկսել դրա քննադատությունը՝ բնակչությանը պարենով մատակարարելու, փախստականների ու ձմեռվա շեմին Աղետի գոտու վիճակի եւ այլ հարցերի վերաբերյալ համապատասխան հասարակական կարծիք ձեւավորելով»:

բ) Երկրորդ հեռանկարային միջոցառումը կապվում է սփյուռքահայ կուսակցությունների հետ. «Լուրջ ուշադրության է արժանի Դաշնակցական, Ռամկավար եւ Հնչակ կուսակցությունների հետ փոխհամաձայնության եւ հնարավոր համագործակցության հարցը՝ նրանց ծրագրերի, գործողությունների, ռազմավարության եւ մարտավարության, այն ամենի, ինչ մեզ միացնում կամ բաժանում է: Նախնական քննարկումից հետո անհրաժեշտ է խորհրդարանական պայքարում նրանց հետ համագործակցության ձեւեր մշակել»: Ծրագրվում էր այդ ուժերի հետ միասին պահանջել «բազմակուսակցության հիման վրա» նոր ընտրությունների անցկացում՝ օգտվելով այն հանգամանքից, որ նման դրույթ է պարունակել նաեւ ՀՀՇ-ի նախընտրական ծրագիրը:

գ) Հաջորդ խնդիրը եղել է իշխանության դեմ պայքարում զանգվածային լրատվության միջոցներն իրենց նպատակներին ծառայեցնելը. «Հասարակական կարծիքի համար պայքարի պայմաններում մեծ ուշադրության է արժանի կուսակցական մամուլի օրգանների համագործակցության

հարցը: «Էպոխա», «Մունետիկ», «Հնչակ», «Անդրադարձ» եւ մի շարք այլ թերթերն ու ամսագրերը այդ պայքարում կարող էին ոչ վատ դաշնակիցներ հանդիսանալ»[465]: Նույն խնդրի շրջանակներում նախատեսվում էր մտածել նաեւ «սեփական կամ համատեղ ռադիո եւ հեռուստատեսային հաղորդումների հարցի եւ այս ոլորտում ուրիշ կազմակերպությունների ու կուսակցությունների հետ համագործակցության համապատասխան ձեւերի մասին»:

դ) Նախատեսվում էին համատեղ զանգվածային միջոցառումներ, մասնավորապես՝ անցյալի նշանավոր այն գործիչների մեծարում, որոնք «ՀԿԿ ընդունվելուց առաջ վերոհիշյալ կուսակցությունների անդամ են եղել», ինչպես նաեւ նկատի ունենալով այն փաստը, որ Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունները «ժամանակին իրենց ակտիվ մասնակցությունն են բերել մարքսիզմի տարածմանը»:

ե) Անհրաժեշտ էր համարվում փոխհամաձայնության ծրագրեր մշակել նաեւ այլ հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ՝ «որոնք երբեմն քաղաքական հստակ դրույթներ չունեն»: Որպես պոտենցիալ դաշնակիցներ են համարվում՝ «Հայ դատ», «Գոյապահպանություն», «Հայկաշեն», «Ժողովրդավարական միություն», «Եղեռնի դեմ պայքարի վետերանների միություն», «Արցախ», «Ամբերդ» եւ այլն, որ փոքրաքանակ լինելով՝ «ուժեղ հովանավորի կարիք ունեն», «ընկնում են վերը նշված կուսակցությունների (սփյուռքահայ կուսակցությունների- Ա. Ս.) ազդեցության տակ եւ ներառվում նրանց պրակտիկ գործունեության մեջ»:

զ) Հաջորդ միջոցառումը պետք է լիներ Գերագույն խորհրդում կոմունիստական խմբակցության կազմավորումը (քիչ հետո այն իրոք կազմավորվեց), որի նպատակն է համարվում «խորհրդարանական պայքարի գործելակերպի ու սկզբունքային պաշտպանության հարցերի շրջանակը» գծելը: Իսկ այդ կապակցությամբ նշվում է. «Խորհրդարանում կան ուրիշ կազմակերպությունների (հատկապես՝ Դաշնակցությանը) ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող պատգամավորներ: Համատեղ աշխատանքի եւ համագործակցության ընթացքում նրանք ավելի «քաջ» ու ակտիվ կդառնան»:

---

[465] *Նկատենք, որ նշված թերթերից հայտնի է միայն «Հնչակ»-ի կուսակցական պատկանելությունը ՍԴՀԿ-ին: Մյուսները, որ հստակ կուսակցական թերթեր են կոչվում, եւ Կոմկուսն իրենք չի համարում, դատելով նրանց ուղղվածությունից, ամենայն հավանականությամբ պատկանել են Դաշնակցությանը:*

«Տեղեկանքն» անդրադառնում է նաեւ այն կուսակցություններին՝ «Հանրապետական», ԱԻՄ, ՍԻՄ, ՀԱԱԿ, որոնք «հետեւեցին ՀՀՇ-ին եւ նրա կողքին էին, քանի դեռ վերջինս հանդես էր գալիս գոյություն ունեցող կարգերի դեմ, բայց խորհրդարան հասնելով՝ այդ կազմակերպությունների եւ կուսակցությունների ներկայացուցիչները սկսեցին «բնավորություն ցույց տալ»: Ենթադրվում էր, որ Պարույր Հայրիկյանի վերադարձից հետո դրանք կհամախմբվեն նրա շուրջ եւ կմիավորվեն ազգային կամ ազգայնական մի կազմակերպության մեջ: Ավելի ուշ, նույն «Տեղեկանքում» որպես լրացում արձանագրված է, որ «Պ. Հայրիկյանի՝ հանրապետություն վերադառնալու կապակցությամբ նկատելի է ԱԻՄ-ի, ՍԻՄ-ի, «Միացում»-ի եւ Հանրապետական կուսակցության մերձեցման եւ համատեղ գործունեության միտում: Մասնավորապես, նրանց համատեղ խնդիրներից մեկը համարվում է Պարույր Հայրիկյանին Գերագույն խորհրդի «Անկախ պետականության», եւ Սեյրան Բաղդասարյանին՝ «Արցախի հարցերի» հանձնաժողովի նախագահ դարձնելը»: Ճիշտ է՝ սրանց հետ Կոմկուսը որոշակի համագործակցության խնդիր չի դնում, սակայն հույս ունի, որ «խմբավորումը կարող է հանդես գալ որպես կտրուկ փոփոխությունների կողմնակից օպոզիցիոն ուժ», այսինքն՝ իր վարքագծով կնպաստի ներքաղաքական լարվածության մեծացմանը, խոչընդոտներ կստեղծի իշխանության համար եւ այդ կերպ ակամա կօգնի իրենց ծրագրերի իրականացմանը:

Հետաքրքիր ու բնութագրական է փաստաթղթում արտահայտված մի մտահոգություն. «ՀՀՇ-ի համախմբման եւ ժողովրդի մեջ հեղինակության բարձրացման համար նրա գաղափարական առաջնորդները նոր ուժով կհարձակվեն Կոմկուսի վրա: Կոմկուսը հարմար օբյեկտ է դժվարությունների, հասարակական կոնֆլիկտների եւ այլնի մեջ մեղադրվելու համար: Չի բացառվում նաեւ ներքաղաքական կամ արտաքին քաղաքական իրադրության ապակայունացմանը միտված գործողությունների կազմակերպումը, որոնց նպատակը կլինի Կոմկուսի վարկաբեկումը եւ ՀՀՇ-ի հեղինակության բարձրացումը»: Ավելի քան բնական էր, որ սեփական շահերը առաջնային համարող եւ մնացած բոլոր արժեքները (երկիր, ժողովուրդ, պետություն, անկախություն, ազատություն) դրան ստորադասող ուժը կարող էր նման բան մտածել. ինքն այս մեթոդները լիուլի օգտագործել էր ե՛ւ այն ժամանակ, երբ իր իշխանությունն էր հաստատում (70 տարի առաջ), ե՛ւ տասնամյակներ շարունակ իր իշխանությունը պահպանելու համար: Նույն մեթոդը փորձ արվեց օգտագործել նաեւ մի քանի ամիս առաջ՝ իշխանությունը չկորցնելու համար: Այս դեպքում, սակայն, նրանց հաշվարկները չարդարացան. ՀՀՇ-ն չգնաց այս քայլերից առաջինին, Կոմկուսի դեմ արշավանք չձեռնարկեց. «Հայք» եւ «Հայաստանի Հանրապետություն» թերթերի այդ շրջանի համարներում դժվար է գտնել նրա դեմ «նոր ուժով հարձակում» ենթադրող նյութեր: ՀՀՇ-ն առավել եւս չէր կարող գնալ երկրորդ քայլին՝ արհեստականորեն ապակայունացնել երկրի ներքին իրավիճակը՝ իր քաղաքական հակառակորդին ոչնչացնելու համար, ինչի վկայությունն է նրա ողջ հետագա գործունեությունը:

Քաղաքական պայքարում այլ կուսակցությունների եւ կազմակերպությունների հետ համագործակցությունը, որոշակի հարցերում դաշնակիցների որոնումը դատապարտելի չէ ինչպես ցանկացած կուսակցության, այնպես էլ Կոմկուսի համար: Անգամ կարելի էր դատապարտելի չհամարել այն, որ այս կուսակցությունը շարունակեր քաղաքական միջոցներով պայքարել Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմում մնալու, անկախության գործընթացը կասեցնելու համար, եթե դա էր իր քաղաքական համոզմունքը: Սակայն ընդարձակ սույն փաստաթղթում չկա մեկ միտք, դարձված կամ բառ, որը հնարավոր լինի մեկնաբանել որպես հանրապետության, նրա ժողովրդի ու պետության ներկայի կամ ապագայի համար մտահոգություն:

Այսպիսով, ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելու միջոցով նոր իշխանությունը թուլացնելու եւ անկախության գործընթացը կասեցնելու իր առջեւ դրած խնդրում Կոմկուսը որպես լավագույն դաշնակիցներ տեսնում էր, առաջին հերթին, սիյուռքահայ կուսակցություններից՝ Դաշնակցությանը, որի անմիջական մաս էր համարում «Ազատ Հայք», «Ազգային միասնության ուխտ», «Հայ երիտասարդների միություն» եւ այլ կազմակերպություններ, ինչպես նաեւ Ռամկավար ազատական եւ Հնչակյան կուսակցություններին: Տեղական կազմակերպություններից նա որպես դաշնակիցներ էր դիտարկում՝ «Հայ դատը», «Գոյապահպանությունը», «Հայկաշենը», «Ժողովրդավարական միությունը», «Եղեռնի դեմ պայքարի վետերանների միությունը», «Արցախը», «Ամբերդը» եւ «շատ ուրիշ կազմակերպություններ»: Հրատարակվող թերթերից այդ նպատակի համար օգտագործելի էին համարում «Մունետիկը», «Գործը», «Էպոխան», «Հնչակը», «Անդրադարձը» եւ «մի շարք այլ թերթեր ու ամսագրեր»: Նկատենք, որ արդարացավ նրանց նաեւ այն կանխատեսումը, որ իրենց դրած հիմնական նպատակին՝ ներքաղաքական իրավիճակի ապակայունացմանը քիչ ավելի ուշ նպաստեցին նաեւ ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը, Հանրապետական կուսակցությունը, «Միացումը» եւ այլն:

Այսինքն, տարածված այն պատկերացումը, թե, իբր, Կոմկուսը ողջախոհություն ցուցաբերեց եւ «առանց արյունի» հանձնեց իշխանությունը, իսկ հետո էլ հանդուրժողական եղավ նոր իշխանության նկատմամբ, իրականությանը չի համապատասխանում: Նախ՝ 1990թ. մայիսի 27-ին թափված արյունը հենց իշխանությունը պահելու համար էր: Ինչպես մինչեւ իշխանությունից զրկվելը, այնպես էլ դրանից հետո, արդեն որպես ընդդիմություն, նա պայքարել է առանց միջոցների մեջ խտրություն դնելու, եւ ավելի շատ՝ դատապարտելի, երկրի եւ պետության շահերի տեսանկյունից՝ դավաճանական մեթոդներով: Հաղթած քաղաքական ուժը՝ ՀՀՇ-ն, չտրվեց հեղափոխական ծայրահեղությունների, հանդուրժող գտնվեց նախորդ իշխանության նկատմամբ, օգտագործեց ինչպես նրանց, այնպես էլ մյուս քաղաքական ուժերի դրական պոտենցիալը, եւ ընդդիմության հետ հարաբերվում էր բացառապես օրինականության դաշտում՝ դրանով իսկ անխոցելի դարձնելով ե՛ւ իրեն, ե՛ւ երկիրը:

ե) Կոմկուսի գույքի ազգայնացումը

ՀԿԿ-ի գույքի ազգայնացման հետ կապված գործողությունները նրան պատժելու կամ ունեզրկելու նպատակ չունեին: Այս քայլը հետագայում կատարեցին նաեւ բոլոր մյուս հանրապետությունները եւ սոցիալիստական ճամբարի երկրները: Առաջին հերթին՝ այն անհրաժեշտ էր արդարության վերականգնման եւ քաղաքական ուժերի համար ելակետային հավասար պայմանների ստեղծման առումով: Ամբողջ 70 տարի իրեն պետության հետ նույնացրած այս կուսակցությունը հսկայական նյութական եւ ֆինանսական միջոցներ էր կուտակել ոչ այնքան իր անդամների անդամավճարների, որքան պետական միջոցների, այլ խոսքով՝ ժողովրդի աշխատանքի հաշվին: Այժմ, զրկվելով իշխանությունից, Կոմկուսի պաշտոնյաները սկսեցին զարտուղի գործարքների միջոցով յուրացնել այդ ամբողջ գույքը եւ հարստությունը, որ գտնվում էր կուսակցության եւ նրա հովանավորության տակ գործող բազմազան հասարակական կազմակերպությունների տնօրինման տակ:

1991թ. ապրիլի 17-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կայացրեց հետեւյալ որոշումը. «Ազգայնացնել Հայաստանի կոմունիստական կուսակցության եւ նրա փաստացի մաս կազմող նախկին՝ Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության (ներկայումս՝ Հայաստանի երիտասարդական միություն) ամբողջ ունեցվածքը, համարել այն պետական սեփականություն եւ դրա տնօրինման իրավունքը հանձնել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին»[466]: Որոշումը հիմնավորվում էր այն իրողությամբ, որ, նախ՝ պետական իշխանության կառուցվածքի հետ ՀԿԿ-ի սերտաճումը եւ նրա ղեկավար դերի ինքնաշնորհումը օգտագործվել է կուսակցության ձեռքում հսկայական նյութական միջոցների կուտակման համար, երկրորդ՝ Կոմկուսի ունեցվածքը ստեղծվել է հանրապետության քաղաքացիների մի քանի սերունդների աշխատանքի, պետական միջոցների հաշվին: Հետաքրքիր է այն փաստը, որ որոշումն ընդունվեց ձայների ճնշող մեծամասնությամբ (ներկա 175 պատգամավորներից 153-ը՝ կողմ, միայն 7-ը՝ դեմ եւ 6-ը՝ ձեռնպահ[467]: Այսինքն՝ որոշման օգտին քվեարկողների մեջ էին նաեւ մեծ թվով նախկին եւ դեռ առկա կոմունիստ պատգամավորներ:

Հայաստանի կառավարության հաստատմամբ նախազգուշական նամակ ստացվեց ԽՄԿԿ կենտկոմից, որում ՀԿԿ ԿԿ-ի շենքը եւ այլ ունեցվածքը համարվում էր ԽՄԿԿ սեփականություն եւ պահանջվում էր դրանց մասին որոշումներ չընդունել առանց իրենց հետ համաձայնեցնելու[468]: Գորբաչովը հրամանագիր ստորագրեց Հայաստանի ԳԽ ընդունած այդ որոշումը կասեցնելու մասին[469]: Սպառնալի հայտարարություն ընդունեց նաեւ ՀԿԿ-ն, հոխորտալով, թե այդ որոշումը կարող է տանել «դեպի լարվածության խորացում եւ կարող է հանգեցնել այնպիսի հետեւանքների, որոնց համար Հայաստանի կոմկուսը չի կարող պատասխանատվություն կրել»[470]: Օգտվելով օրենսդրական նախաձեռնության իրավունքից, Հայաստանի կոմկուսն իր 29-րդ համագումարի անունից դիմեց՝ վերանայելու ինչպես այս որոշումը, այնպես էլ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի այն դրույթները, որոնք նրան զրկում էին Մոսկվայից ղեկավարվելու եւ նյութական օգնություն ստանալու, հիմնարկներում կու-

---

466 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 08, հոդվ. 146:*

467 *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19.04.1991:*

468 *«Հայաստանի Հանրապետություն», 20.04.1991:*

469 *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1991, 18, հոդվ. 530: Սակայն կենտրոնական իշխանության իրավական ակտերը Հայաստանում փաստորեն ուժ չունեին: Ճիշտ է՝ ՀԿԿ-ի գույքի ազգայնացման որոշման ամբողջական կատարումը փոքր-ինչ ուշացավ, սակայն քիչ անց, օգոստոսյան «պուտչից» հետո, արագ իրականացվեց:*

470 *«Հայաստանի Հանրապետություն», 20.04.1991:*

սակցական կառույցներ ունենալու հնարավորությունից: Գերագույն խորհուրդը մերժեց այդ օրենսդրական ակտերի վերանայումը[471]:

զ) ՀՅԴ «բացահայտման» եւ գործունեության գնահատականը քաղաքական հարթության վրա

Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունից անմիջապես հետո՝ 1990թ. օգոստոսի 8-ին, հրապարակվեց ՀՅԴ բյուրոյի «հայտարարագիրը»՝ Հայաստանում այս կուսակցության «կազմակերպական ներկայության բացահայտման մասին»: Ըստ հրապարակման՝ կուսակցության ղեկավար մարմինը սույն փաստաթուղթն ընդունել էր Երեւանում անցկացրած իր նիստում[472]: ՀՅԴ-ն իր «բացահայտումը» հենց այդ պահին բացատրում եւ հիմնավորում էր՝ ա) «Հայաստանի Հանրապետության ներկա իրավիճակով», բ) «Արցախին սպառնացող վտանգով» եւ գ) «մեր ազգային-ազատագրական շարունակվող պայքարի ներկա փուլի թելադրանքներով»:

Ինչո՞ւ ՀՅԴ-ն չբացահայտվեց խորհրդարանական ընտրություններից առաջ եւ չմասնակցեց դրանց իր անունով: Բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարուխյանը դա բացատրում է հետեւյալ կերպ. «Դաշնակցության անունով մասնակցիլը գործնական իմաստով պիտի չտար մեզի այն կարելիությունը, որ նման ընտրության մը համար Դաշնակցությունը պիտի ուզենար ունենալ՝ որպեսզի իրապես տեղ հասներ, տեղ հասցներ իր խոսքը: Մյուս կողմե նաեւ գիտեք, որ այնքան աղտոտ փոշի կար հրապարակի վրա, եւ կա տակավին մինչեւ այսօր, որ այդ պայմաններուն մեջ Դաշնակցությունը, որ մեր ժողովրդի մեջ կնկատվի վերջին հույսը... չուզեց մասնակցել»[473]:

Պատճառն, անշուշտ, բոլորովին այլ էր:

Եթե ՀՅԴ-ն բացահայտվեր Կոմկուսի իշխանության պայմաններում, պետք է պայքարեր վերջինիս դեմ, ինչպիսին որ էր հասարակության մեջ տասնամյակներով արմատավորված պատկերացումը: Մինչդեռ «աղտոտ փոշուց» խուսափող Դաշնակցությունը, ինչպես ի սկզբանե (Շարժման սկզբից), շարունակում էր մնալ ՀԿԿ-ի դաշնակիցը, ամեն ինչ անում էր նրա իշխանությունն ամրացնելու ու հավերժացնելու համար: Բացահայտ վարկաբեկված Կոմկուսի կողմում եւ Շարժման դեմ ընտրություններին

[471] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 8, հոդվ. 153:*

[472] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 09.08.1990:*

[473] *«Դրոշակ», 16.01.1991, էջ 8:*

պաշտոնապես մասնակցելը հասարակության մեջ միանգամից կոչնչացներ որպես «հակակոմունիստական» եւ «ազգային կուսակցություն» նրա մասին տարածված լեգենդը, ինչի վրա հենվում էր նրա ունեցած վարկանիշը: Շարժման կողմում հանդես գալ նույնպես չէր կարող, քանի որ Շարժման քաղաքական ծրագիրը ու հատկապես՝ որդեգրած անկախության քաղաքական ուղեգիծը, դեմ էր «հայդատական» իր ծրագրերին, ինչի մասին ասել էր բազմիցս: Որպես առանձին ուժ էլ իր անունով եւ ծրագրերով անիմաստ էր մասնակցելը, քանզի, Շարժմանը հակադրվելով, հաջողության հասնելու որեւէ հեռանկար չուներ: Ուստի նրան մնում էր մեկ ճանապարհ. գործել ընդհատակում, չբացահայտել իր անդամներին, ամեն ինչ անել Կոմկուսի հաղթանակի համար, ընտրություններին մասնակցել՝ «ներթափանցելով» այլ կազմակերպությունների, նաեւ ՀՀԾ-ի մեջ կամ որպես անկախ թեկնածուներ, ինչպես նաեւ պարզապես «հավաքագրում» կատարել արդեն ընտրված պատգամավորներից:

Վերոհիշյալ նկատառումներով Դաշնակցությունը որոշեց իր կազմակերպական ներկայության մասին հայտարարել անմիջապես այն բանից հետո, երբ Գերագույն խորհրդի նախագահի ընտրությամբ արձանագրվեց, որ կոմունիստների քաղաքական պարտությունը վերջնական է: Եւ այնուամենայնիվ, «բացահայտման» հայտարարությունը Դաշնակցության համար դեռ չէր նշանակում բացահայտ գործունեություն: «Հայտարարագիրը» խոստանում էր, որ կուսակցությունը Երեւանում կունենա իր կենտրոնական գրասենյակը, պաշտոնաթերթը եւ մամուլի տեղեկատվական կենտրոնը: Մինչդեռ բուն կազմակերպություններն իրենց անդամներով առայժմ պետք է մնային եւ գործեին ընդհատակում՝ կա՛մ տարբեր անուններով դուստր կազմակերպությունների տեսքով, կա՛մ որպես այլ կազմակերպություններում ներդրված անդամներ, կա՛մ որպես անկուսակցականներ: Ըստ Բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարուխյանի՝ «որոշեցինք հրապարակել Դաշնակցության կազմակերպական ներկայության մեր հայտարարագիրը, առանց, անշուշտ, գեթ հիմակուհիմա, կազմակերպական մեքենան ընդհատակեն դուրս բերելու — պատճառները հասկանալի են անշուշտ...»[474]: Իրականում, սակայն, պատճառներն ավելի քան անհասկանալի էին մնում: Ինչպես մինչ այդ, այժմ էլ՝ ընդհատակյա գործունեության որեւէ անհրաժեշտություն չկար: Ինչպես մինչ այդ, այնպես էլ այժմ բացատրությունը կարող էր լինել մեկը. Դաշնակցությունը պետք է շարունա-

[474] *«Դրոշակ», 15.08.1990, էջ 4:*

կեր զբաղվել այնպիսի գործունեությամբ, որն իր մեջ կամ ապօրինության ու հանցավորության տարրեր էր պարունակում, կամ հետապնդում էր այնպիսի քաղաքական նպատակներ, որոնք անընդունելի ու դատապարտելի էին հասարակության համար:

Դաշնակցությունը 1990թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցել էր երկու ուղղությամբ: Նախ՝ ըստ ամենայնի աջակցել էր Կոմկուսի թեկնածուներին: Երկրորդ՝ «թափանցումների» իր մարտավարությամբ նա իր չբացահայտված կառույցների անդամներին կարող էր տեղավորել նաեւ թեկնածուների այն ցուցակում, որոնց պաշտպանում եւ աջակցում էր ՀՀԾ-ն: Հետագայում որպես ՀՅԴ անդամ բացահայտված պատգամավորների մեծ մասն անցել էր ՀՀԾ-ի ցուցակով եւ աջակցությամբ[475]: Ավելին՝ ՀՀԾ-ի աջակցությամբ ընտրվածներից ոմանք, մինչեւ բացահայտվելը, դարձյալ ՀՀԾ-ի աջակցությամբ, դարձան Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովների նախագահներ, այսինքն՝ Գերագույն խորհրդի մշտապես գործող մարմնի՝ Նախագահության անդամներ: Իսկ առայժմ նրանք դեռեւս որոշակի մի շրջան պետք է շարունակեին մնալ խորհրդարանի ՀՀԾ պատգամավորների շարքերում: Անշուշտ, նաեւ այս խնդիրը լուծելու համար էր, որ իր «կազմակերպական ներկայությունը» Հայաստանում բացահայտելով հանդերձ, դեռեւս չբացահայտված մնացին ՀՅԴ կառույցներն ու անդամները:

Բացահայտման «հայտարարագրում» արտահայտվում էր նաեւ ՀՅԴ այն քաղաքական ուղենիշը, որով նա պատրաստվում էր իրականացնել իր գործունեությունը: Դա պահանջատիրությունը պետական քաղաքականության հիմքում դնելու եւ դրանով Հայաստանը Խորհրդային Միության կազմում պահելու խնդիրն էր: Այդ խնդիրն արտահայտվում էր հետեւյալ ձեւակերպմամբ. «Հայաստանի ինքնիշխան իրավիճակի իրագործումից մինչեւ Միացյալ, Ազատ, Անկախ Հայաստանի կերտումը»: Այս ծրագրին արդեն ծանոթ ենք, եւ ամենեւին պատահական չէ հայտնի կարգախոսում («միացյալ, ազատ, անկախ») բառերի այսպիսի հերթականությունը: Դա

[475] *Ռուբեն Թորոսյան, Սեյրան Բաղդասարյան, Կիմ Բալայան, Մարգիս Մուրադյան, Հովիկ Ադգաբյան, Նորայր Մանասերյան, Տիգրան Կյուրեղյան, Արամայիս Սահակյան (ՀՀԾ-ի կողմից պաշտպանվող թեկնածուների ցուցակը տե՛ս «Հայք» 13.05.1990, 02.06.1990, 08.07.1990: Ընդ որում, նշված անձանց մի մասին ՀՅԴ-ն «հավաքագրել» էր պատգամավոր ընտրվելուց հետո:*

կրկին նշանակում էր մնալ ԽՍՀՄ կազմում եւ նրա օգնությամբ իրականացնել պատմական հայկական հողերի հավաքում, ապա՝ անկախանալ:

Արդեն իսկ այն հանգամանքը, որ ՀՅԴ-ն միայն ի գիտություն էր «բացահայտում» իր ներկայությունը Հայաստանում եւ ոչ թե դիմում էր՝ որպես քաղաքական կազմակերպություն գրանցվելու համար, քամահրական վերաբերմունք էր հայկական պետականության նկատմամբ[476]: Իսկ այն, որ բացահայտումն էլ դեռ ամբողջական չէր, եւ նրա կառույցները դեռ շարունակելու էին գործել ընդհատակում (ինչն ավելի քան տարօրինակ էր)՝ արհամարհանք էր իշխանության եւ օրենքի նկատմամբ: Սրա հետ մեկտեղ՝ Դաշնակցությունը ներկայացնում էր հայ քաղաքական կյանքում առաջինն ու միակը եւ ամեն ինչից վեր լինելու իր ավանդական հավակնությունները. «Ճիշտ է, որ Հայաստանի մեջ հետզհետե կազմավորեցան քաղաքական նոր խմբավորումներ, որոնցմե մեկը նույնիսկ տիրացավ իշխանության, բայց թե՛ իր անցյալով, թե՛ սփյուռքյան կյանքին վրա իր ունեցած հակակշռով եւ թե՛ իր գաղափարական-քաղաքական մտածողությամբ, այս պարագային եւս ՀՅ Դաշնակցությունը կներկայանա իբրեւ ավագ եղբայր, որուն բարոյական աշխարհը եւ փորձառությունը ծանր կկշռեն նույնիսկ իրեն չհամակրող խմբավորումներուն մոտ»[477]:

Անկախության հռչակագրի քննարկման օրերին Դաշնակցությունը հստակ հայտարարում էր. «Ճիշտ չենք գտներ Հայաստանի այս քաղաքականապես ու տնտեսապես շատ տկար վիճակին մեջ, Խորհրդային Միութենեն անմիջական եւ ամբողջական անջատումը նկատել մեր փրկության միակ ուղին: Այդ կրնա ճակատագրական սխալ ըլլալ մեր հայրենիքին, անոր ժողովրդին եւ պետականության համար»[478]: Այս կշտամբանքը, սակայն, միանգամայն կեղծ ու անտեղի էր, քանի որ ՀՀԾ-ի նախընտրական ծրագրում խոսք չկար իշխանության գալուց հետո «անմիջական եւ ամբողջական անջատումի» մասին: Անկախության նվաճումը նախատեսվում էր հենց աստիճանական ճանապարհով, ինչպես նախատեսում էր միութենական համապատասխան օրենքը, ինչի մասին բազմիցս ասվել էր: Եւ դա՝ շատ պարզ պատճառով, որպեսզի այդ անկախությունը անխոցելի լինի

[476] *Ակնհայտ այս իրողությունը դատապարտեց ՌԱԿ կենտրոնական վարչությունը. «...ինքնակոչ այս «բացահայտումը» իրավական գետնի վրա ապօրեն արարք մըն էր եւ անընդունելի հայրենի իշխանությանց կողմե» (տե՛ս ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմէջէն, էջ 83):*

[477] *«Դրոշակ», 24.10.1990:*

[478] *«Դրոշակ», 15.08.1990, էջ 7:*

իրավական առումով: Հռչակագրի քննարկումների ժամանակ էլ հենց ՀՀՇ-ն վճռականորեն չէր ընդունում այն նախագծերը կամ առաջարկները, որոնք նախատեսում էին «անմիջական անջատում»՝ միանգամից անկախության հռչակում: Հակառակ այն բանի, որ, ընդհուպ մինչեւ 1991թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվե այդ պահանջը պարբերական օրակարգի հարց էին դարձնում այլ, «արմատական» ուժեր, ՀՀՇ-ի իշխանությունը հաստատակամորեն մնաց իր տեսակետին:

Ինչ վերաբերում է «անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբ» հայտարարելուն, ապա դա, ինչպես արդեն նշել ենք, պայմանավորված էր ԽՍՀՄ համապատասխան օրենքի պահանջով, եւ ոչ մի կապ չուներ Դաշնակցության «հանգրվանային» ծրագրի հետ: Վերջինս բոլորովին այլ բան էր՝ ճիշտ հակառակը: Դրա «առաջին հանգրվանը» նախատեսում էր մնալ Խորհրդային Միության կազմում այնքան ժամանակ, քանի դեռ չեն լուծվել պատմական հայկական հողերի «հավաքման» խնդիրները: Մինչդեռ անկախության գործընթացը նախատեսում էր ԽՍՀՄ համապատասխան օրենքով սահմանված՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հնգամյա շրջանի սկիզբ:

Բացահայտման իր «Հայտարարագրում» ՀՅԴ-ն խոստանում էր, որ շուտով կունենա իր պաշտոնաթերթը: Մինչ այդ, որպես նոր իշխանությանը ընդդիմադիր ուժ, նա իր պայքարն իրականացնելու էր «անկախ» (իրականում՝ սեփական կամ իր կողմից ֆինանսավորվող) լրատվամիջոցների էջերում, խորհրդարանում դեռեւս ծպտված անդամների եւ այլ անուններով գործող դուստր կազմակերպությունների միջոցով:

Դաշնակցությունն, իր «կազմակերպական ներկայությունը» բացահայտելու հետ մեկտեղ, ներկայացավ նաեւ իրեն հատուկ վերամբարձ հավակնություններով՝ որպես վերպետական ու վերազգային մի մարմին: Վերջնագրի տեսք ունեցող նրա պահանջները կարելի է գտնել տարբեր փաստաթղթերում, առավել ամբողջական ու համակարգված դրանք ներկայացված են այս կուսակցության անդամներից մեկի մի հոդվածում, որում պետությանը ու նրա օրինական իշխանությանը ներկայացվում էին հետեւյալ կատեգորիկ պահանջները եւ պայմանները.

ա) Դաշնակցությունը պատրաստ է նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ Հայաստանը հանել միջազգային ասպարեզ, եթե «Հայաստանի կառավարությունը ընթացք տա դաշնակցության ծրագիրներուն»:

բ) Դաշնակցությունը պայքարելու է Թուրքիայի հետ բնականոն տնտեսական եւ քաղաքական հարաբերություններ հաստատելու դեմ, քանի որ դա «մահացու հարված կհասցնե Հայ դատի նկատմամբ ստեղծված նպաստավոր կարծիքին»:

գ) Հայաստանը պետք է քաղաքական կամք դրսեւորի եւ հայտնի իր պահանջատիրությունը:

դ) Ղարաբաղի հարցը առաջին հերթին պատմական հողերի նկատմամբ իրավունքի հարց է, ուստի շեշտը պետք է դնել պահանջատիրության վրա[479]:

ե) Հայաստանի համար ազգային-ազատագրական պայքարն ավարտված չէ այնքան ժամանակ, քանի դեռ իրականություն չի դարձել «ազատ, անկախ, միացյալ» Հայաստանը: Եւ քանի դեռ այդ պայքարը չի ավարտվել, այն պետք է «վարե եւ ղեկավարե Դաշնակցությունը»[480]:

Այստեղ կարեւոր չէ այն, թե ինչու ընտրություններում հաղթած ու օրինական իշխանություն ձեւավորած քաղաքական ուժը (լիներ դա ՀՀՇ-ն, թե մեկ այլ ուժ) պետք է իրականացներ ոչ թե իր, այլ այդ ընտրություններին անգամ չմասնակցած մի այլ ուժի քաղաքական ծրագրերը: Կարեւոր չէ նաեւ տարօրինակ այն համոզումը, թե հայ ժողովրդի «ազգային-ազատագրական պայքարը» վարելու եւ ղեկավարելու մենաշնորհը Դաշնակցությանն է (որը ամբողջ երկուսուկես տարի ոչ միայն անմասն էր մնացել ազգային-ազատագրական այդ պայքարի ամենահամաժողովրդական դրսեւորմանը, այլեւ ամեն կերպ խոչընդոտել էր այն): Կարեւորն այն է, որ դրանով եւս մեկ անգամ արձանագրվում էր, որ այս կազմակերպությունը, իրեն համարելով վերազգային ու վերպետական մի կառույց, որպես այդպիսին անհամատեղելի էր ոչ միայն ժողովրդավարությանը, քաղաքականությանը, այլեւ, ընդհանրապես, պետությանը եւ պետականությանը. թվարկված պահանջներն այլ բան չեն, քան ցանկացած պետության ձախողման, տապալման, ոչնչացման ամենաիրական ուղի: Դա էր Դաշնակցության խնդիրը, եւ նա գնալու էր այդ ճանապարհով:

---

[479] *Սա հենց այն բանաձեւն էր, ինչը որպես «հողային պահանջատիրության» մեղադրանք Ադրբեջանը ներկայացնում էր Հայաստանին Ղարաբաղյան շարժման սկզբից եւեթ եւ հետագայում: Մինչդեռ ՀՅԴ Բյուրոյի օրգան «Դրոշակը» բոլոր համարներում ուներ «Արցախյան պահանջատիրություն» խորագրի տակ տպագրվող հոդվածներ:*

[480] *«Հայաստանի Հանրապետություն», 19.12.1990:*

Օրինական պետական իշխանության դեմ պայքարելու գործում Դաշնակցությունը չէր խորշելու որեւէ միջոցից: ՀՅԴ անունից «Հայաստանի պատասխանատու մարմնի» ստորագրությամբ սեպտեմբերի 5-ին տարածված սադրիչ մի թռուցիկ, իմիջիայլոց, կոչ էր անում. «Ազգային զինված ջոկատներ հայրենի իշխանության ղեկավարությամբ մղել գործելու Արցախի եւ սահմանամերձ շրջանների պաշտպանության ուղղությամբ»[481]: Նման հարյուրավոր ջոկատներ, ինչպես նախորդ շրջանում Շարժման նախաձեռնությամբ, այնպես էլ այժմ՝ նրա նորահաստատ իշխանության հովանավորությամբ, առանց հոչակման, այդ գործն անում էին առավելագույնս: Սակայն, դրանով հանդերձ, Հայաստանի իշխանությունը պաշտոնապես ժխտում էր այդ իրողությունը, իսկ Գորբաչովի հետ կարողացել էր համաձայնության հասնել այն բանի շուրջ, որ Հայաստանում երեք ամսով կասեցվի վերջինիս՝ «ապօրինի զինված կազմավորումները զինաթափելու մասին» հայտնի հրամանագրի գործադրումը: Դաշնակցության սույն կոչը, Մոսկվային հիշյալ հրամանագրի գործադրման իր ուզած առիթը տալուց զատ, ուղղված էր նաեւ նոր իշխանության այն քաղաքական ուղեգծի դեմ, որը նախատեսում էր՝ Կենտրոնի հետ փոխհամաձայնությամբ, հասնել Լեռնային Ղարաբաղի մարզային իշխանության սահմանադրական մարմինների վերականգնման խիստ կենսական խնդրի լուծմանը:

Է) Ռամկավար ազատական եւ Հնչակյան կուսակցություններ

Սփյուռքյան մյուս՝ Ռամկավար-ազատական եւ Հնչակյան կուսակցությունները նույնպես աննկատ մտան Հայաստանի քաղաքական դաշտ: Հայաստանում լայն զանգվածները սրանց ավելի քիչ էին ծանոթ: Պատճառը, թերեւս, այն էր, որ, ի տարբերության Դաշնակցության, այս կուսակցություններն ի սկզբանե Խորհրդային Հայաստանի նկատմամբ որդեգրել էին բարեկամական դիրքորոշում եւ կոմունիստական գաղափարախոսության ու պատմագրության քննադատության թիրախ չէին դարձել, նրանց մասին անհամեմատ քիչ էր խոսվել, ուստիեւ՝ ավելի քիչ էին հայտնի: Մյուս կողմից՝ փաստերը եւ ենթադրությունները, որ խորհրդային իշխանության մարմինները աշխատել են սփյուռքյան կազմակերպությունների հետ, առաջին հերթին վերաբերում են հենց այս կուսակցություններին:

[481] ՀՀԱՆԱ, թղթ. 19/05.09.90:

Երկուսն էլ, որպես խորհրդամետ կազմակերպություններ, Շարժման տարիներին իրենց հնարավորությունների չափով օժանդակել էին կոմունիստական իշխանությանը: Նրանք եւս ստորագրել էին Շարժման դեմ ուղղված՝ 1988թ. հոկտեմբերի սկզբին տարածված հայտարարությունը:

Չնայած Հայաստանի կարգավիճակի հարցում նրանց մոտեցումները նույնանում էին դաշնակցականների պատկերացումներին (Հայաստանի ապագան տեսնում էին ԽՍՀՄ կազմում), սակայն ՀՀԾ-ի հաղթանակից հետո ռամկավարները բարեկամական դիրք գրավեցին նոր իշխանությունների նկատմամբ: Դա, թերեւս, պայմանավորված էր այն հանգամանքով, որ ընտրություններում ՀՀԾ-ի հաղթանակից, իշխանության հարցի վերջնական լուծումից հետո հասկացան պատմական զարգացումների անշրջելիությունը, եւ երկրորդ՝ ավելի չափավոր էին իրենց հավակնություններում: Բոլոր դեպքերում՝ ՌԱԿ-ը անմիջապես ջերմորեն շնորհավորեց Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելու առթիվ[482], ինչպես նաեւ դիմեց հատուկ մի ուղերձով: Վերջինիս մեջ հայտնվում էր նաեւ ՌԱԿ-ի կարծիքը Հայաստանի անկախության մասին, որ կարծես թե մի քայլ առաջ էր նախկին կոշտ դրսեւորումից. «Տարակույսե վեր է, թե մեր հայրենիքը պետք է ըլլա անկախ ու մեր ժողովուրդը վայելե անոր բարիքները: Իբրեւ Գերագույն խորհուրդի նախագահ Ձեր ընտրության փաստին մեջ արդեն իսկ կտեսնենք դեպի իսկական անկախություն առաջնորդող նախաքայլը»: Սակայն, դրա հետ մեկտեղ, իր անհանգստությունն էր հայտնում, որ այդ անկախությունը չլինի «ակամայորեն հարկադրական», ինչպես 1918թ., այլ՝ նախապատրաստված[483]: ՌԱԿ-ը ողջույնի ջերմ ուղերձ հղեց «Հայաստանի անկախության հռչակագրի» ընդունման առիթով[484]: Իսկ ՌԱԿ-ի անունից կենտրոնական վարչության ատենապետ Ա. Գեոնջյանի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին ուղղված հուշագրում ասվում էր. «Հայոց Համազգային Շարժումին նախաձեռնությամբ հաստատված նոր իշխանությունը, անկասկած որ թարմ շունչ մը կը բերե մեր հայրենիքեն ներս եւ ամբողջությամբ կը հեղաշրջե պետական շահերու ուղղությունը ի նպաստ մեր ազգային պահանջներուն եւ պատմական

[482] ՌԱԿ-ի խոսքը, էջ 63-64: Օգոստոսի 6-ով թվագրված այս փաստաթուղթը կուսակցության անունից ստորագրել էին ատենապետներ Հրաչյա Սեդրակյանը եւ Արշավիր Գեոնջյանը:

[483] ՌԱԿ-ի խոսքը, էջ 65-66:

[484] ՌԱԿ-ի խոսքը, էջ 75-76:

իրավունքներուն»[485]: Այստեղ եւս արտահայտված է կուսակցության մասնակի վերապահությունը անկախության խնդրին. «Մենք տակավին Հայաստանի հողային տարածքին ամբողջականությունը եւ անոր ժողովուրդին ֆիզիկական ապահովությունը երաշխավորված կը տեսնենք վերափոխվող Խորհրդային երկրի ծիրին մեջ, հակառակ Արցախի մեջ Կարմիր Բանակի ցուցաբերած դատապարտելի կողմնակալության եւ ոճրամիտ արարքներուն»[486]:

Կուսակցությունն, ըստ էության, պաշտպանում էր Հայաստանի նոր իշխանության բոլոր կարեւոր եւ սկզբունքային քայլերը: Այսպես՝ հատուկ մի հայտարարությամբ նա պաշտպանեց ապօրինի ռազմական կազմավորումները (ՀԱԲ) լուծարելու մասին օգոստոսի 29-ին ընդունված որոշումը[487]: Ռամկավարներին հատկապես անհանգստանում էր, որ ՀՀՇ իշխանությունը նույնպես Դաշնակցությանը ավելի մեծ տեղ կտա, քան Սփյուռքի մյուս կուսակցություններին: ՀՀՇ 2-րդ համագումարում ՌԱԿ ղեկավարներից Հակոբ Ավետիքյանը առկա ձեռքբերումների համար ամենամեծ վտանգը համարում էր այն, որ ՀՅԴ-ն «ամեն միջոցի պիտի դիմե իր 70 տարիներու իշխանատենչության քաղցը հագեցնելու համար»: Նա միաժամանակ հույս էր հայտնում, որ նոր իշխանությունը վտարանդի երեք կուսակցություններին էլ հավասար հնարավորություններ կտա գործելու, «եւ ոչ թե ինչպես ըրին կոմունիստները վերջին երեք տարիներուն՝ իրենց ամբողջ քարոզչական մեքենան ի սպաս դնելով ՀՅԴ-ի փրոփագանդումին»[488]:

Ռամկավար կուսակցությունը նույնպես չէր մասնակցել 1990 թվականի խորհրդարանական ընտրություններին, սակայն շուտով ձեռնամուխ եղավ խորհրդարանում պատգամավորներ հավաքագրելուն եւ հայտարարեց ռամկավարների կուսակցական խմբակցության ստեղծման մասին: Սկզբում այն ներկայացնում էին ՀՀՇ-ի ցուցակով եւ նրա ամենաեռանդուն օժանդակությամբ պատգամավոր դարձած Պետրոս Քացախյանը եւ Վարդան Պետրոսյանը, ապա այս խմբակցության մեջ մտան նաեւ նախկին կոմունիստներ Վիգեն Խաչատրյանը եւ ուրիշներ:

[485] *ՀՀԱՆԼ, թղթ. 19/03.11.90, թ. 2:*

[486] *Նույն տեղում, էջ 3:*

[487] *ՌԱԿ-ի խոսքը, էջ 76:*

[488] *«Հայք», 29.11.1990: Սա կողմնակի եւ կարեւոր վկայություն է, որ հաստատում է մի շարք դեպքերում մեր կողմից արված այն ենթադրությունը, որ Շարժման դեմ պայքարում կոմունիստական իշխանությունների եւ Դաշնակցության միջեւ իրական համագործակցություն է եղել ամբողջ ընթացքում:*

Ի տարբերության ՀՅԴ-ի, ՌԱԿ-ը համակերպվեց հասարակաքաղաքական կազմակերպությունների մասին ընդունված օրենքի պահանջներին: Նրա հայաստանյան կազմակերպությունը գրանցվեց որպես անկախ միավոր՝ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցություն (ՀՌԱԿ) անվանվամբ: ՌԱԿ կենտրոնական վարչության ատենապետ Ա. Գեոնջյանը պաշտոնապես հայտարարեց. «Սփյուռքի մեջ պատմականորեն գործող ՌԱԿ-ը եւ Հայաստանի ՌԱԿ-ը օրգանապես իրարմէ անկախ կազմակերպություններ են»[489]: ՀՅԴ-ն, որ հրաժարվեց կատարել օրենքի այս պահանջը, չարախնդությամբ սա գնահատեց որպես կուսակցության պառակտում եւ «անհերքելի ճգնաժամ, որ այս յոթանասունամյա կուսակցությունը կապրի»[490]:

Ռամկավարներն արդեն չէին ընդունում նաեւ ՀՀՇ-ի դեմ ուղղված այն մեղադրանքը, թե նա դավաճանում է ազգային շահերին՝ պետական քաղաքականության հիմքում Թուրքիայի նկատմամբ պահանջատիրություն չդնելով: Ըստ նույն Ավետիքյանի կոշտ գնահատականի՝ «Հայ դատի հետապնդումը, Ցեղասպանության միջազգային ճանաչումը մեր սրբազան գործն է: Սակայն պետության գլուխ կանգնած կուսակցությանը ասել՝ եթե չես հետապնդում եւ լուծում այս հարցերն, ուրեմն հրաժարական տուր, առնվազն քաղաքական անբարոյականություն է»[491]:

ՀՀՇ-ն, իր հերթին, բարեկամաբար ընդունեց եւ ողջունեց ռամկավարների գործունեությունը Հայաստանում եւ հատուկ հայտարարությամբ ընդգծեց, որ երկու կուսակցությունների ծրագրային մի շարք դրույթների փաստական նույնությունը համագործակցության իրական հիմք է տալիս[492]: ՌԱԿ կենտրոնական վարչությունը դրան արձագանքեց նույնպիսի սիրալիրությամբ.

«Մեկնելով Հայաստանի Հանրապետության մեջ մեր ժողովրդին դիմագրաված ներկայի հրամայականներեն,

[489] *«Ազգ», 22.06.1991:*

[490] *«Դրոշակ», 03.07.1991, էջ 16-17:*

[491] *«Հայաստանի Հանրապետություն», 25.06.1991:*

[492] *Տե՛ս «Հայք», 03.07.1991:*

նկատի ունենալով, որ Հայոց համազգային շարժումը Հայաստանի մեջ ազգային նոր պետականության ստեղծելու ուղղությամբ արձանագրած բարեփոխումներու առանցքային եւ առաջմղիչ ուժը կհանդիսանա,

եւ նկատի ունենալով ընդհանրապես Հայոց համազգային շարժումի ազգային-քաղաքական ծրագրային կարգ մը կետերուն համընկումը Ռամկավար ազատական կուսակցության ծրագրային հիմնակետերուն հետ՝ հատկապես ինչ կվերաբերի հայրենիքին տնտեսական եւ ընկերային վերականգնումին, մասնավոր սեփականության հաստատումին, հողահատկացումի եւ ռամկավարական վարչաձեւի մը արմատավորման,

եւ նկատի ունենալով պատմական ճգնաժամային պահը, որ բոլոր խմբավորումներուն եւ քաղաքական հոսանքներուն կպարտադրե շարքերու խտացում՝ վասն հայրենիքի գերագույն շահերուն եւ փրկության,

Ռամկավար ազատական կուսակցությունը իր նեցուկը ընծայելու պատրաստակամությունը հայտնելով Հայոց համազգային շարժումին, անոր ղեկավարությանը կիրավիրե այսուհետեւ համադրյալ ճիգերով եւ համակարգված աշխատանքով հետապնդելու մեր ժողովուրդի գերագույն շահերը՝ անոր ապահովելով քաղաքական առողջ առաջնորդություն»[493]:

Ինչ վերաբերում է Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությանը, ապա այն նույնպես մի քանի պատգամավորներ հավաքագրեց խորհրդարանում[494] եւ նույնպես սերտորեն համագործակցում էր նոր իշխանության հետ եւ օժանդակում նրան:

ը) «Արմատականները» եւ Հայաստանի ներքաղաքական կայունության խնդիրը

Հայաստանի քաղաքական կյանքում առավել արմատական դիրքեր գրավեցին մի քանի մանր կազմակերպություններ, որոնց ղեկավարները խորհրդարանում էին հայտնվել ՀՀՇ-ի ակտիվ աջակցությամբ: Ինչպես անկախության գործընթացի հետ կապված խնդիրներում, այնպես էլ հնարավոր բոլոր այլ հարցերում, նրանք որդեգրել էին «առավել արմատական» դիրքորոշումներ, որոնք եւ պարբերաբար դարձնում էին ինչպես

[493] *«Ազգ», 19.07.1991:*

[494] *Առաջին Գերագույն խորհրդի պատգամավորների ցուցակը, որում նշված է նաեւ կուսակցական պատկանելությունը, տե՛ս «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ 1990-1995», Երեւան, 1995 (հրապարակված Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրության կողմից):*

խորհրդարանի, այնպես էլ հասարակական քննարկման առարկա: Լինելով արտաքնապես տպավորիչ ու հուզական՝ ամբոխահաճ այդ նախաձեռնություններն ու պահանջները երբեմն նաեւ հասարակական ինչեղություն էին ստանում: Դրանց առաջին եւ ընդհանուր բնութագրիչը արտաքին էֆեկտներն էին, երկրորդը՝ որ տվյալ խնդիրները դրվելով չհասունացած ու չնախապատրաստված պայմաններում, պարզապես ճախողման էին դատապարտված, իսկ պահանջների մի մասը նշանակում էր դուրս գալ անկախության եւ այլ քաղաքական գործընթացների սահմանադրական ճանապարհից եւ չհաշվարկված առճակատման գնալ կենտրոնական իշխանության հետ:

«Արմատական» դիրքերի վրա գտնվող ուժերի մեջ հիմնական դերակատարն ԱԻՄ-ն էր՝ Պ. Հայրիկյանի ղեկավարությամբ, որին էլ հետեւում էին իր նախկին կողմնակիցները, որ մինչ այդ առանձնանալով նրանից՝ առանձին կուսակցություններ էին հիմնել. ՀՀԿ-ն՝ Աշոտ Նավասարդյանի, ՀՔԴՄ-ն՝ Ազատ Արշակյանի (երեքն էլ խորհրդային շրջանի այլախոհներ), ինչպես նաեւ ՍԻՄ-ը՝ Հրանտ Խաչատրյանի ղեկավարությամբ: Որոշ «խիստ ազգային» հարցերում նրանց էր միանում նաեւ ՀՅԴ-ն, երբեմն այս խումբն էր պաշտպանում ՀՅԴ-ի նույնպիսի նախաձեռնությունները:

Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ) կուսակցությունը կազմավորվել էր խոհրդային տարիների այլախոհ, քաղբանտարկյալ Պարույր Հայրիկյանի գլխավորությամբ: ԱԻՄ-ը «մեկ անձի կուսակցություն» երեւույթի ցայտուն օրինակներից մեկն էր: Սկզբից եւեթ այս կազմակերպությունը եւ նրա ղեկավարը ներկայանում էին իրավիճակին եւ հնարավորություններին անհարիր ծայրահեղական կարգախոսներով եւ պահանջներով: 1988թ. մարտի 28-ին Հայրիկյանը ձերբակալվեց, ապա զրկվեց քաղաքացիությունից եւ արտաքսվեց Խորհրդային Միությունից: 1989 թվականին ԱԻՄ-ը համատեղ հանրահավաքներ էր հրավիրում այն մանր կազմակերպությունների հետ («Նախախորհրդարան», ՍԻՄ, ՀԱԲ եւ այլն), որոնք զանազան մեղադրանքներ էին ներկայացնում ՀՀՇ-ին եւ փորձում նրան հակակշիռ կազմել: Արտասահմանում գտնվելով՝ Հայրիկյանը 1989թ. վերջերին մեղադրում էր ՀՀՇ-ին՝ «պահը բաց թողելու» եւ Հայաստանում անկախության հանրաքվե չկազմակերպելու համար[495], այն դեպքում, երբ ՀՀՇ-ն դեռ քաղաքական իշխանություն չուներ եւ ընդամենը նոր միայն գրանցված հասարակական կազմակերպություն էր: Ընդհանրա-

[495] *Տե՛ս «Հայք», 25.03.1990:*

պես, ԱԻՄ-ի ամենաբնութագրիչ գիծը միշտ մնաց այն, որ նա առաջ էր քաշում խնդիրներ, որոնց իրականացումը տվյալ պահին առնվազն քաղաքական արկածախնդրություն էր՝ հղի անկանխատեսելի հետեւանքներով:

Չնայած ամբողջ ընթացքում ԱԻՄ-ը «արմատական» դիրքերից միշտ շարունակեց մնալ ՀՀՇ-ի քննադատների շարքերում, այնուամենայնիվ, Շարժումն առաջին իսկ օրից հետեւողականորեն զբաղվում էր նրա առաջնորդի իրավունքների պաշտպանության, հայրենիք վերադառնալու հարցերով: ՀՀՇ 1-ին համագումարի բանաձեւերից մեկում պահանջվում էր վերականգնել նրա քաղաքացիական իրավունքները եւ հնարավորություն տալ վերադառնալ Հայաստան[496]: Նա ՀՀՇ-ի նախաձեռնությամբ եւ պաշտպանությամբ առաջադրվեց պատգամավորության թեկնածու: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունն իր ՀՀՇ-ական անդամների պնդմամբ դեռ 1990թ. մայիսին հատուկ որոշմամբ դիմեց Գորբաչովին՝ նրա քաղաքացիությունը վերականգնելու միջնորդությամբ[497]: Այս դիմումը չհարգվեց: Չնայած դրան, ՀՀՇ-ի ճնշմամբ ու պաշտպանությամբ նա գրանցվեց եւ իր բացակայությամբ ընտրվեց Գերագույն խորհրդի պատգամավոր: Արդեն նորընտիր խորհրդարանն առաջին իսկ օրերին որոշում ընդունեց, որով նրան կենտրոնական իշխանության կողմից քաղաքացիությունից զրկելը որակում էր ապօրինի եւ վերականգնում ՀԽՍՀ քաղաքացու նրա իրավունքները՝ արտաքսման օրից սկսած[498]: Այս հիմքի վրա էլ հաստատվեցին նրա պատգամավորական լիազորությունները: Այնուհետեւ Հայրիկյանի հարցին Գերագույն խորհուրդն անդրադարձավ եւս երկու անգամ. նախ՝ հանձնարարեց կառավարությանը ապահովել նրա վերադարձը Հայաստան, իսկ մեկ այլ որոշմամբ նա հրավիրվեց մասնակցելու Գերագույն խորհրդի աշխատանքներին: Մինչ այդ, դեռ հունիսի վերջերին, նա հատուկ դիմում էր հղել ՀՀՇ վարչությանը եւ իրեն հայտարարել ՀՀՇ անդամ[499]:

ԱԻՄ-ի ղեկավարին միշտ հատուկ մնաց յուրօրինակ, տպավորիչ «համեստությունը». Միացյալ Նահանգներում գտնվելով՝ նա առաջարկեց իրեն ընտրել Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ: Նրա թեկնածությունը դրվեց քվեարկության, որի արդյունքում նա հավաքեց ընդամենը 8 ձայն: Առաջին կառավարության կազմավորումից հետո Պ. Հայրիկյանը հայտարարեց, որ Հայաստանում չկան ազգային գործիչներ, հակառակ դեպքում՝ «Վ. Մանուկյանն իր՝ Նախարարների խորհրդի նախագահ ընտրվելու առաջին իսկ րոպեներից պետք է թռչեր Արեւմուտք եւ ինձ տաներ Հայաստան: Բայց նման բան տեղի չունեցավ: Նրան թվում է, որ այսօր Հայաստանում ավելի կարեւոր հարցեր կան, քան իմ հարցը»[500]: Հայաստանի նոր իշխանությունների հետեւողական ջանքերի շնորհիվ ԽՍՀՄ նախագահի հրամանագրով 1990թ. հոկտեմբերի 4-ին վերականգնվեց նրա քաղաքացիությունը[501]:

Հայաստան վերադառնալուց հետո Հայրիկյանն ընտրվեց ՀՀՇ վարչության անդամ: Չնայած դրան, նա անմիջապես ստանձնեց ՀՀՇ-ի եւ իշխանության նկատմամբ ակտիվ ընդդիմության դերը: Ընդ որում՝ նրա հավակնությունները երբեմն անցնում էին բանականության բոլոր սահմանները եւ վերածվում զավեշտի. շուտով նա արդեն մեղադրում էր ՀՀՇ-ին, որ վերջինս չի արագացնում... իր ԱԻՄ-ացումը[502]: Ի տարբերություն Կոմկուսի եւ Դաշնակցության, որոնք պայքարում էին անկախության գործընթացի, ազատ շուկայական տնտեսության անցմանն ուղղված փոփոխությունների դեմ, ԱԻՄ-ը հակառակ՝ «ավելի արմատական» դիրքերից, ՀՀՇ-ին քննադատում էր դանդաղելու մեջ: Այդ քննադատությունները չէին վերաբերում համակարգային փոփոխությունների, ժողովրդավարական նորմերի հաստատման խնդիրներին: ԱԻՄ-ի պահանջներն էին. անմիջապես անկախության հռչակում, Սահմանադիր ժողովի հրավիրում եւ կարճ ժամանակում Սահմանադրության մշակում եւ ընդունում, Հանրապետության Նախագահի (պրեզիդենտի) պաշտոնի հիմնում եւ նախագահական ընտրությունների անցկացում, Գերագույն խորհրդի լիազորությունների ժամկետի սահմանափակում եւ նոր ընտրությունների նշանակում, ինքնուրույն բանակի ստեղծում («սպարապետության» հիմնում), հրաժարում ԽՍՀՄ բանակում ծառայելուց եւ այլն[503]:

Իր տեսակետները պաշտպանելու եւ անցկացնելու համար ԱԻՄ-ը անմիջապես դիմեց ամենաակտիվ գործնական քայլերի՝ զանգվածային

---

496 *Տե՛ս ՀՀԱՆԵԱ, թղթ. 23.12.2000, էջ 5 (ՀՀՇ 12-րդ համագումարի պատվիրակների համար հրապարակված ժողովածու):*

497 *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 9, հոդվ.126:*

498 *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990, 14, հոդվ. 195:*

499 *Տե՛ս «Հայք», 24.06.1990:*

500 *«Ազատություն» ռ/կ, 07.10.90, ՀՀԱՆԵԱ, թղթ. 07.10.90, Շիֆ.:*

501 *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1990, 41, հոդվ. 826:*

502 *Տե՛ս «Հայք», 27.02.1991:*

503 *Տե՛ս «Հայք», 25.11.1990, 16.01.1991:*

միջոցառումներ, ստորագրահավաքներ, թռուցիկների տարածում, Գերագույն խորհրդում աղմկոտ քննարկումների պարտադրում եւ այլն: 1990 թ. օգոստոսի 29-ին, երբ քաղաքացիական պատերազմի վտանգը կանխելու համար Գերագույն խորհուրդը ստիպված էր ընդունել ՀԱԲ ռազմաքաղաքական միավորումը լուծարելու մասին որոշումը, նույն օրը ԱԻՄ-ը հանդես եկավ դրա դեմ՝ հայտարարելով, թե հենց Գերագույն խորհրդի այդ որոշումը կարող է քաղաքացիական պատերազմի պատճառ դառնալ: Նա մեղադրում էր ԳԽ-ին, որ հաշվի չի առնում «մեր ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ստեղծված քաղաքական եւ ռազմական կազմակերպությունների անհրաժեշտ դերը եւ իրավունքը հայ պետականության կառուցման գործում», պահանջում «Հռչակել ՀՀ պետական անկախությունը՝ անհապաղ դուրս գալով ԽՍՀՄ կազմից, եւ դիմել ՄԱԿ-ին՝ Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելու խնդրով», ինչպես նաեւ «Անհապաղ մշակել եւ ընդունել օրենք ՀՀ պետական բանակի կազմավորման մասին»[504]:

ԱԻՄ-ի գործողությունները հետագայում եւս հաճախ էին դուրս գալիս օրինականության սահմաններից, դառնում հանրապետության ներքին իրավիճակն ապակայունացնող վտանգավոր գործոն:

[504] ՀՀԱՆԼ, թղթ. 19/29.08.90:

4. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՒ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ա) Անկախության հանրաքվեի մասին որոշման կայացման ընթացքը

Իրադարձություններին ու քաղաքական գործընթացներին զուգընթաց՝ Միութենական նոր պայմանագրի ստորագրման հեռանկարը դառնում էր ավելի ու ավելի մշուշոտ: Բացահայտ էր, որ հանրապետությունների մի մասը կամավոր չէր ստորագրելու այն, եւ նրանց վրա անհրաժեշտ էր տարաբնույթ ճնշումներ բանեցնել: Նախատեսվող պայմանագիրը հանրապետություններին պարտադրելու համար Կենտրոնը նախաձեռնեց մի շարք միջոցառումներ: Ժողովրդական պատգամավորների 4-րդ համագումարը 1990 թ. դեկտեմբերի 24-ին ընդունեց երեք որոշում.

«Անհրաժեշտ համարել ԽՍՀ Միությունը պահպանել որպես իրավահավասար ինքնիշխան հանրապետությունների նորացված ֆեդերացիա, որտեղ լիովին կապահովվեն ցանկացած ազգության մարդու իրավունքներն ու ազատությունները»[505]:

«Պաշտպանել խորհրդային պետության անվանումը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն թողնելու առաջարկությունը»[506]:

«Անցկացնել ԽՍՀՄ հանրաքվե՝ նորացված Միությունը որպես իրավահավասար ինքնիշխան Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունների ֆեդերացիա պահպանելու հարցը որոշելու համար, հաշվի առնելով քվեարկության արդյունքներն ըստ առանձին վերցրած յուրաքանչյուր հանրապետության»[507]:

[505] Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1990, 52, հոդվ. 1158:
[506] Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1990, 52, հոդվ. 1159:
[507] Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1990, 52, հոդվ. 1161:

Գերագույն խորհրդին հանձնարարվեց որոշել միայն հանրաքվեի անցկացման օրը[508]:

Դժվար չէ նկատել, որ այս որոշումները հակասում էին ԽՍՀՄ կազմից հանրապետությունների դուրս գալու իրավունքի մասին սահմանադրական դրույթին: Դրանք թելադրված էին ոչ թե իրավական, այլ քաղաքական նկատառումներով, ու նպատակ ունեին անկախության ձգտող հանրապետությունների վրա քաղաքական ճնշման լծակ ծառայելու:

Հունվարի 16-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց «ԽՍՀՄ պահպանման հարցի առթիվ հանրաքվե կազմակերպելու եւ դրա անցկացումն ապահովելու միջոցառումների մասին»[509]: Հանրաքվեի դրվող հարցը ձեւակերպվեց հետեւյալ կերպ. «Դուք արդյոք անհրաժեշտ համարո՞ւմ եք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պահպանումը որպես իրավահավասար ինքնիշխան հանրապետությունների նորացված ֆեդերացիա, որտեղ լիովին կապահովվեն ցանկացած ազգության մարդու իրավունքներն ու ազատությունները»: Այսինքն՝ քվեարկողը մեկ պատասխանով պետք է իր վերաբերմունքն արտահայտեր առնվազն երեք հարցի վերաբերյալ: Ընդ որում՝ դրանցից երկուսը՝ թե ինչ բովանդակություն պետք է ունենար «նորացված ֆեդերացիան» եւ ինչպիսի մեխանիզմներով են «լիովին» ապահովվելու մարդու իրավունքներն ու ազատությունները, մնում էին անորոշ: Հատկանշական է որոշման՝ հանրաքվեի արդյունքները որոշելու կարգին վերաբերող հաջորդ կետը, որը հակասում էր ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի համապատասխան որոշմանը, որի համաձայն դրանք պետք է հաշվի առնվեին «ըստ յուրաքանչյուր հանրապետության», ինչը ենթադրում էր, որ հանրապետություններից յուրաքանչյուրի առանձին արդյունքներն իրավական հետեւանքներ պետք է ունենան՝ որոշելու ԽՍՀՄ կազմում նրա մնալ-չմնալու հարցը: Այժմ Գերագույն խորհրդի կողմից դա խմբագրվեց ու սկզբից լրացվեց «քվեարկության արդյունքները որոշել ԽՍՀ Միությունում ամբողջությամբ վերցրած» դրույթով, ինչից հետո արդեն ինքնանպատակ ու անհասկանալի էր դառնում հանրապետություններում արդյունքներն առանձին ամփոփելու իմաստը: Իսկ նույն

[508] *Հանրաքվե անցկացնելու մասին որոշումներն ընդունվեցին առանց համապատասխան օրենքն ունենալու: Այն ընդունվեց միայն մի քանի օր անց՝ դեկտեմբերի 27-ին:*

[509] *Տեղեկագիր ԽՍՀՄ Գխ, 1991, 4, հոդվ. 87:*

որոշման 10-րդ կետն ամեն ինչ իր տեղն էր դնում. «ԽՍՀ Միության հանրաքվեի միջոցով ընդունված որոշումը վերջնական է, պարտադիր ուժ ունի ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում եւ կարող է չեղարկվել կամ փոփոխվել ԽՍՀ Միության նոր հանրաքվեի միջոցով միայն»: Այսինքն՝ միութենական հանրաքվեին անգամ 100% բացասական պատասխանող հանրապետությունը պետք է մնար ԽՍՀՄ կազմում, եթե Միության մասշտաբով արդյունքները դրական էին:

Հանրաքվեի օրը նշանակվեց մարտի 17-ին: Արդյունքը համարվելու էր դրական, եթե Խորհրդային Միության մասշտաբով քվեարկությանը մասնակցեր ընտրողների կեսից ավելին, եւ նրանք, ձայների մեծամասնությամբ, դրված հարցին դրական պատասխանեին: Փաստորեն՝ քվեարկության իրավունք ունեցողների 25 տոկոսի ձայները կարող էին վճռել հարցը, եւ առանձին հանրապետություններում անգամ 100%-անոց բացասական արդյունքը իրավական որեւէ նշանակություն չպետք է ունենար: Դա այլ բան չէր, քան ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի եւ ԽՍՀՄ կազմից հանրապետության ազատ դուրս գալու սահմանադրական իրավունքի կոպիտ ու անսեթեւեթ խախտում, եթե ոչ՝ խեղկատակություն:

Հայաստանի Գերագույն խորհուրդը Միության Գերագույն խորհրդի հունվարի 16-ի որոշման առիթով հունվարի 30-ին հանդես եկավ հայտարարությամբ, որում տրվում էր Մոսկվայի նախաձեռնության սպառիչ եւ ճշգրիտ քաղաքական գնահատականը: Ըստ այդմ էլ՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ի հանրաքվեի հարցը համարեց «չնախապատրաստված» իսկ նրա անցկացումը՝ անընդունելի»[510]:

Հանրաքվեին միայն չմասնակցելը կլիներ կիսատ եւ կրավորական դիրքորոշում: Ուստի քաղաքական որոշում կայացվեց անցկացնել ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին սեփական հանրաքվե՝ օգտվելով նույն ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին միութենական օրենքի դրույթից: ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշեց նախապատրաստել եւ խորհրդարանի քննարկմանը հանձնել «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի նախագիծը, որը եւ շուտով ներկայացվեց ու ըն-

[510] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 19, հոդվ. 19: Հանրաքվեի դրված հարցի անորոշությունը արձանագրեց Ռուսաստանի Գխ նախագահությունը՝ հունվարի 25-ի իր որոշմամբ առաջարկելով դրա մեջ ճշգրտություն մտցնել (տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ Գխ-ի, 1991, 4, հոդվ. 19:*

դունվեց առաջին ընթերցմամբ[511]: Գերագույն խորհրդի փետրվարի 28-ի նիստում Հանրապետության ԳԽ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Կենտրոնի հանրաքվեի նախաձեռնությունը գնահատեց «ոչ թե իրավական ակտ, այլ զուտ պրոպագանդիստական միջոցառում», եւ ինչպես դա, այնպես էլ առաջարկվող միութենական պայմանագրի նախագիծը բնութագրեց որպես ուժի դիրքերից բխող անպատկառության, ցինիզմի արտահայտություն[512]:

Հիմնական որոշումներն ընդունվեցին մարտի 1-ին: Դրանցից առաջինը նախատեսում էր Հայաստանի Հանրապետության տարածքում չանցկացնել ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն, իսկ դրա արդյունքները Հայաստանի համար համարվում էին իրավական ուժ չունեցող[513]: Երկրորդ որոշումը վերաբերում էր ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ սեփական հանրաքվե անցկացնելուն.

«Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից եւ նպատակներից եւ հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 98 հոդվածի 5-րդ կետի վրա, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ, քվեարկության դնելով հետեւյալ հարցը. «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս»:

2. Հանրաքվեն անցկացնել 1991 թվականի սեպտեմբերի 21-ին»[514]:

Որոշումներն ընդունվեցին բուռն քննարկումներից հետո: Հաղթեց այն տեսակետը, որ, այնուամենայնիվ, այս դեպքում պետք է պահպանել ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին ԽՍՀՄ օրենքի նորմը, որպեսզի դրա օրինականությունն ու արդյունքները չճանաչելու առիթ չունենան ո՛չ Կենտրոնը, ո՛չ միջազգային հանրությունը: Ըստ այդմ էլ՝ հանրաքվեի օրը նշանակվեց որոշման կայացումից վեցամսյա ժամկետը լրանալուց հետո՝ սեպտեմբերի 21-ին: Այս մոտեցումը եւս բխում էր Անկախության հռչակագրի տրամաբանությունից եւ ի սկզբանե ՀՀԾ-ի որդեգրած՝ օրինականության

[511] *Այն վերջնականապես ընդունվեց ապրիլի 2-ին (Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 7, հոդվ. 124):*

[512] *Տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 170:*

[513] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 5, հոդվ. 77:*

[514] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 05, հոդվ. 78:*

դաշտում գործելու սկզբունքից: Ոմանց հայտնած մտահոգությունը, թե առաջիկայում հնարավոր են իրավիճակի անկանխատեսելի փոփոխություններ, փարատվեց նրանով, որ նույն որոշման հաջորդ կետով Գերագույն խորհրդի նախագահությանն իրավունք էր տրվում նման դեպքում որոշում կայացնել հանրաքվեն ավելի վաղ ժամկետում անցկացնելու մասին:

Միութենական հանրաքվեին չմասնակցելու մասին հայտարարեց նաեւ Լեռնային Ղարաբաղը՝ դա պատճառաբանելով մարզում սահմանադրական իշխանությունների լիազորությունների կասեցված լինելու փաստով:

Միութենական պայմանագրի եւ հանրաքվեի մասին տարբեր էին հանրապետությունների դիրքորոշումները: Ն. Նազարբաեւը համարում էր, որ Ղազախստանի համար հանրաքվեի անհրաժեշտություն չկա էլ, քանի որ իր հանրապետությունը անվերապահորեն ԽՍՀՄ պահպանման կողմնակից է: Նույն կարծիքին էին Բելառուսի ղեկավար Ս. Շուշկեւիչը եւ Տաջիկստանի նախագահ Կ. Մախկամովը: Միության պահպանությանը եւ հանրաքվեին կողմ էին Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը, Ղրղզստանի նախագահ Ա. Ակաեւը, Թուրքմենստանի նախագահ Ս. Նիյազովը, որոնք նույնպես վստահ էին, որ իրենց ժողովուրդները դրան դրական պատասխան կտան: Ռուսաստանի ԳԽ նախագահ Ելցինի վերաբերմունքը միանշանակ չէր. նա, նախ, համարում էր, որ Կենտրոնը Մերձբալթյան հանրապետություններում իր կոպիտ գործողություններով լուրջ հարված հասցրեց միութենական պայմանագրի հեռանկարին եւ, երկրորդ՝ համարում էր, որ նոր Միության կազմավորման գործընթացը պետք է սկսել «ներքեւից»՝ հանրապետություններից, որոնք նախապես պետք է երկկողմանի պայմանագրեր կնքեն միմյանց հետ, ոչ թե դա նրանց պետք է պարտադրվի «վերեւից», ինչպես արվում է: Ուստի Ռուսաստանի ԳԽ-ն էլ դեռ մտածում է՝ պե՞տք է իրենց այնպիսի Միությունը, երբ իրենց ամեն պահի կարող են թելադրել վերեւի կամքը ու հաշվի չառնեն հանրապետության կամքը[515]:

Անկախության հռչակագրեր ընդունած հանրապետությունները տարբեր կերպ արձագանքեցին Միութենական հանրաքվեի հարցին: Մերձբալթյան հանրապետությունները, որոնք իրենց անկախությունները վերականգնված էին համարում խորհրդա-գերմանական պայմանագրին կից

[515] *Տե՛ս «Литературная Газета», 12.01.1991.*

գաղտնի համաձայնության ապօրինի ճանաչման հիմքով, գնացին միութենական հանրաքվեն ինչ-որ կերպ շրջանցելու ճանապարհով: Էստոնիան որոշեց փետրվարի 24-ին անցկացնել «կանխահանրաքվե»՝ «Արդյոք ձեր ցանկությանը համապատասխանո՞ւմ է Էստոնիայի դեմոկրատական պետության ինքնուրույնության վերականգնումը ԽՍՀՄ կազմից դուրս»[516] հարցադրմամբ: Լիտվայում հանրաքվե անցկացվեց փետրվարի 9-ին, հարցի՝ «Համաձա՞յն եք, որ Լիտվական պետությունը լինի անկախ ժողովրդավարական հանրապետություն» ձեւակերպմամբ՝ միաժամանակ սահմանափակումներ մտցնելով քվեարկության իրավունքի հարցում[517]: Լատվիայի հանրաքվեն նույնպես կանխեց միութենականը. այն անցկացվեց «Դուք կողմնակի՞ց եք ժողովրդավարական եւ պետականորեն անկախ լատվիական հանրապետությանը» հարցադրմամբ: Ընդ որում՝ Լատվիայի օրենսդիր մարմինը հայտարարեց, որ ինքը չի կազմակերպի միութենական հանրաքվե, բայց նաեւ չի խոչընդոտի նրանց, ովքեր կուզեն այն կազմակերպել եւ դրան մասնակցել[518]: Միութենական հանրաքվեին չմասնակցելու որոշում ընդունեց նաեւ Մոլդովան: Մարտի 31-ին իր առանձին անկախության հանրաքվեն կազմակերպեց եւ անցկացրեց Վրաստանը: Ապրիլի 9-ին Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ Զվիադ Գամսախուրդիան հռչակեց Վրաստանի անկախությունը՝ «1918թ. մայիսի 26-ին ընդունված անկախության ակտի հիման վրա»[519]:

Հրապարակվեցին միութենական հանրաքվեի արդյունքները, որոնց համաձայն՝ այն կայացել էր, ու ստացվել էր դրական պատասխան: ԽՍՀՄ ԳԽ-ի ընդունած համապատասխան որոշմամբ հայտարարվեց, որ ԽՍՀՄ պահպանման մասին հանրաքվեով ընդունված որոշումը «վերջնական է եւ պարտադիր ուժ ունի ԽՍՀՄ ամբողջ տարածքում», այսինքն՝ նաեւ հանրաքվեին չմասնակցած հանրապետությունների համար: Նաեւ հանձնարարություն տրվեց՝ այդ հիմքի վրա արագացնել Միութենական նոր դաշնագրի վրա աշխատանքները, դրա ստորագրումը եւ նոր Սահմանադրության մշակումը[520]:

[516] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 02.02.1991:*
[517] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 06.02.1991:*
[518] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.02.1991:*
[519] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 13.04.1991:*
[520] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1991, 13, հոդվ. 350:*

ԽՍՀՄ պահպանման հարցով հանրաքվեին չմասնակցեց վեց հանրապետություն[521]: Նրանցից հինգը՝ կանխելով միութենական հանրաքվեն՝ անցկացրին իրենց հանրաքվեները: Դրանք միջազգային հանրության համար իրավական ուժ ունենալ չէին կարող, քանի որ չէին հենվում խորհրդային օրենքների վրա, ուստիեւ Գորբաչովն այդ հանրաքվեները շատ հանգիստ գնահատեց որպես «սոցիոլոգիական հետազոտություն»: Այլ էր Հայաստանի դեպքում. Հայաստանը միակ հանրապետությունն էր, որ շարունակում էր անկախացման գործընթացը օրինականության դաշտում, եւ այս առիթով ընդունել էր, փաստորեն, ամենահստակ, որքան կտրուկ, նույնքան իրավականորեն անխոցելի որոշումը, ինչի օրինականությունը ո՛չ Կենտրոնը, ոչ էլ աշխարհի մյուս պետությունները չէին կարող վիճարկել:

Անկախության հանրաքվեի մասին ՀՀ ԳԽ որոշումը միայն առաջին հայացքից կարող էր թվալ որպես պարտադրված պատասխան ԽՍՀՄ պահպանման մասին միութենական հանրաքվեին: Այն, որպես անկախության գործընթացի հիմնական քայլ, նախատեսված էր Անկախության հռչակագրով եւ այլ բան չէր, քան ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին միութենական օրենքի համապատասխան նորմի իրացում: Պարզապես, եթե չլիներ Մոսկվայի նախաձեռնությունը, Հայաստանը համապատասխան որոշումը կարող էր, թերեւս, ընդունել այլ ժամկետում:

Մայիսի 23-ին կազմավորվեց նաեւ Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանը, տեղակալ՝ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Գեորգ Վարդանյանը, եւ քարտուղար՝ ԳԽ պատգամավոր, Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի ավագ ինժեներ Լյուդվիգ Խաչատրյանը[522]:

Մայիսի 6-ին Գերագույն խորհուրդը դիմում ընդունեց՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դը Կուելյարին՝ դիտորդներ ուղարկել Հայաստանի Հանրապետության անկախության հանրաքվեի կազմա-

[521] *Ջնայած հանրաքվեի դրված հարցի նկատմամբ իր ունեցած վերապահությանը՝ Ռուսաստանի ԳԽ-ը որոշեց մասնակցել հանրաքվեին, սակայն իր կողմից հանրապետության տարածքում հանրաքվեի դրեց նաեւ մի երկրորդ՝ ՌՍՖՍՀ Նախագահի պաշտոն հիմնելու հարցը: Միութենական հանրաքվեին չմասնակցելու որոշումներ էին կայացրել նաեւ Ռուսաստանի կազմի մեջ մտնող մի քանի ինքնավար կազմավորումներ, անգամ տեղական խորհուրդներ (տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ 1991, 11, հոդվ. 358):*
[522] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 10, հոդվ. 187:*

կերպմանը եւ անցկացմանը դիտորդական առաքելություն իրականացնելու համար: Գերագույն խորհուրդը նկատի ուներ, որ հեղինակավոր միջազգային կառույցի դիտորդների ներկայությունը կարող էր մեղմել Հայաստանի դեմ հրահրվող սադրանքները, որոնք նպատակ ունեին խափանել Անկախության հանրաքվեն եւ, որ ՄԱԿ-ի դիտորդների ներկայությունը կարող էր նպաստել հանրաքվեի բնականոն նախապատրաստմանը եւ անցկացմանը[523]: Դիտորդներ ուղարկելու հրավերներ հղվեցին նաեւ այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որ սկսվել էր անկախության գործընթացի սկիզբն ազդարարող Անկախության հռչակագրի ընդունմամբ, փակվում էր Անկախության հանրաքվե անցկացնելու մասին ընդունված որոշմամբ:

բ) Անկախության գործընթացի դեմ քաղաքական արգելափակոց դնելու փորձ

Խնդրի նկատմամբ քաղաքական դիրքորոշումները երեքն էին: Միության կազմի մեջ մնալու կողմնակից ուժերը, բնականաբար, պնդում էին մասնակցել միութենական հանրաքվեին: Այս տեսակետը պաշտպանում էին հայ կոմունիստները: Նրանց կողքին էր Դաշնակցությունը, որը ոչ թե հանրապետությունների ինքնորոշման սահմանադրական իրավունքը ոտնահարող միութենական հանրաքվեն էր համարում հակաժողովրդավարական քայլ, այլ դրան մասնակցելուց հրաժարվելու որոշումը: Այս կուսակցության գաղափարախոսներից Էդուարդ Հովհաննիսյանն այդ առիթով գրում էր. «Հանրաքվեին մասնակցելուց հրաժարվելն է հակաժողովրդավարական քայլ, որովհետեւ Հայաստանի Գերագույն խորհուրդն իրավունք չուներ զրկելու իր ժողովուրդը միութենական հանրաքվեից, քանի դեռ Հայաստանն այդ պետության մաս է կազմում»[524]: Իսկ ՀՅԴ բյուրոյի պաշտոնաթերթը նաեւ իր համոզմունքն էր հայտնում առաջիկա զարգացումների մասին. «Ընդհանուր եզրակացությունը հստակ է. Ռուսաստանը (նկատի ունի ԽՍՀՄ-ը Ա. Ս.) չի բաքայվելու: Միությունը պահպանվելու է, անկախ նրանից, որ կմասնակցեն, թե՞ ոչ Հայաստանը եւ ուրիշ հանրապետություններ հանրաքվեին: Բոլոր հանրապետությունները, ներառյալ Մերձբալթյան, կմնան Միության կազմի մեջ, բայց ոմանք պատվով ու կամավոր կարգով, իսկ ոմանք՝ հրասայլերի պարտադրանքով: Ելցինը պարտվելու է, իսկ Արեւմուտքը պաշտպանելու է Խորհրդային Միության ամբողջականությունը»[525]: Հետագա ընդամենը կես տարվա իրադարձությունները գրանցեցին ճիշտ հակառակ արդյունքները՝ ցույց տալով իր «հարյուրամյա քաղաքական փորձով» պարծեցող այս կուսակցության՝ քաղաքական իրողությունները տեսնելու եւ կանխատեսումներ անելու ունակության աստիճանը[526]: Թերեւս՝ դա ոչ այնքան քաղաքական իրողությունների վրա հենված սխալ հաշվարկ էր, որքան նպատակ-երազանք, անկախության գործընթացի դեմ ուղղված պարզ քարոզչական քայլ:

Ուղղակի քարոզչությունն ու նպատակաուղղված բացահայտ գործողություններն արդյունք չտվեցին: Միութենական հանրաքվեին Հայաստանի չմասնակցելն այլեւս փաստ էր, ուստիեւ ակնհայտ, որ սեպտեմբերի 21-ին նշանակված Անկախության հանրաքվեն պետք է տեղի ունենար: Սակայն դա ամենեւին չէր նշանակում, թե անկախության դեմ պայքարող ուժերը պետք է զենքը վայր դնեին: Դաշնակցությունը եւ Կոմկուսը սկսեցին փնտրել միջոցներ, որոնք արդեն ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված ձեւով կարող էին խոչընդոտել հանրաքվեի իրականացմանը: Այդ նպատակին ուղղված մի քայլ էր 1921 թվականի մարտի 16-ի Ռուս-թուրքական պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերը չեղյալ հայտարարելու հարցը Գերագույն խորհրդի օրակարգ մտցնելու Դաշնակցության նախաձեռնությունը: Մարտի 10-ին նրանց տարածած թռուցիկը պահանջում էր. «Առանց 1921թ. մարտի 16-ի պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերի Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ապօրինի ճանաչման, խոսք անգամ չի կարող լինել Հայաստանի ինքնիշխանության մասին»[527]: Կոմկուսը միացավ դաշնակցության այս նախաձեռնությանը[528]: Այս օրակարգով արտահերթ նստաշրջան գումարելու պահանջի տակ հնարավոր եղավ հավաքել 112 պատգամավորի ստորագրություն: Միաժամանակ, նույն պահանջով Գերագույն խորհրդի շենքի դիմաց ուսանողնե-

[523] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 9, հոդվ. 167:*

[524] *«Դրոշակ», 27.03.1991, էջ 23:*

[525] *«Դրոշակ», 13.03.1991, էջ 32:*

[526] *Նման հաշվարկներ անելու անկարողությունը այս կուսակցության հին հիվանդությունն էր՝ արձանագրված դեռ Առաջին հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունու կողմից (տե՛ս Քաջազնունի Հ., «Դաշնակցությունն անելիք չունի այլեւս», Երեւան, 1994, էջ 42:*

[527] *ՀՀԱՆԱ, թղթ. 25ժ/10.03.91:*

[528] *Տե՛ս «Հայաստան», 16.03.1991: Դա ներկայացվեց որպես բողոքի ակցիա Օզալի եւ Գորբաչովի հանդիպման դեմ:*

րի նստացույց կազմակերպեց Դաշնակցության երիտասարդական թեւը[529]: Հաշվարկն այսպիսին էր. նման որոշման ընդունումն այլ բան չէր նշանակի, քան իրավական առումով գտնվել Թուրքիայի հետ պատերազմական կամ առնվազն չափազանց լարված հարաբերությունների վիճակում: Եւ որպեսզի Թուրքիան չհամարձակվի վերցնել նետված ձեռնոցը, դրանից հետո տրամաբանական մի ելք կմնար Հայաստանին՝ մնալ ԽՍՀՄ կազմում եւ մտքից հանել անկախության գաղափարը: Բայց կարող էր լինել նաեւ մի այլ տարբերակ, որ նախաձեռնության հեղինակների մտքով չէր կարող չանցնել. ԽՍՀՄ-ը կարող էր փլուզվել նաեւ անկախ մեր կամքից, Ռուսաստանն ինչ-որ ներքին անհրաժեշտության բերումով, թեկուզ ժամանակավոր, կարող էր ետ քաշել իր զորքերը (ինչպես եղել էր 1918-ին), եւ Հայաստանը կհայտնվեր մեն-մենակ՝ Թուրքիայի դեմ, փաստորեն, պատերազմ հայտարարած վիճակում:

Ստեղծվեց բավականին լարված եւ վտանգավոր իրավիճակ: Գերագույն խորհրդի ղեկավարությունը ստիպված եղավ մարտի 15-ին հրավիրել պատգամավորների հատուկ մի խորհրդակցություն: Այս նախաձեռնության վտանգավոր հետեւանքների մասին Լեւոն Տեր-Պետրոսյանի համոզիչ կարճ բացատրություններից հետո պատգամավորների մի մասը ետ վերցրեց իր ստորագրությունը, ուստիեւ հարցը նստաշրջան չմտավ[530]: Սակայն, անկախ ամեն ինչից, այս փաստը ցույց էր տալիս երկու բան. նախ՝ որ անկախության դեմ պայքարող ուժերը նպատակին հասնելու համար պատրաստ էին գնալ ցանկացած, այդ թվում՝ նաեւ ամբողջ երկիրն ու ժողովուրդը վտանգող քայլերի, երկրորդ՝ որ անգամ օրենսդիր մարմնի անդամներից շատերը դեռեւս անպաշտպան էին կեղծ-ազգային կարգախոսների, կեղծ-հայրենասիրական դեմագոգիայի առջեւ եւ կարող էին հեշտությամբ կուլ տալ դրանց խայծը, ընկնել դրանցով հյուսված ծուղակը:

Վտանգավոր այս նախաձեռնությունը տապալվեց՝ եւ դրա հեղինակները ստիպված էին բավարարվել ընդամենը դա շահարկելով, թե ինչպես ՀՀՇ-ի «ապազգային» իշխանությունը չի ուզում չճանաչել հայ ժողովրդի համար աննպաստ, նրա թիկունքում կնքված ու նրա տարածքներն ուրիշներին նվիրաբերած մի պայմանագիր[531]:

---

529 Տե՛ս «Դրոշակ», 27.03.1991:

530 Տե՛ս «Ազգ», 20.03.1991:

531 Ազգային զգացումների շահարկման միջոցով իշխանությանը նեղ վիճակում գնելու, արհեստական խոչընդոտներ ստեղծելու, գրանով որպես «ազգային ուժի» եւ «հայրենասերի» իր վարկանիշը բարձրացնելու այս գործելակերպը Դաշնակցությունը շարունակեց նաեւ հետագայում հարուցելով նմանօրինակ այլ հարցեր: Հատկանշական է, որ նա ավելի ուշ, 1998-ից ի վեր, ունենալով խորհրդարանական խմբակցություն, ապա նաեւ լինելով իշխող կուսակցություն, այլեւս չհիշեց «ազգային» ու «համազգային» այդ խնդիրները. նա երբեւէ այլեւս որեւէ օրենսդրական նախաձեռնություն չցուցաբերեց՝ ո՛չ ռուս-թուրքական պայմանագրերի, ո՛չ 1915թ. ցեղասպանության, ո՛չ Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման հարցերում, որոնք պետականության կայացման առաջին տարիների իշխանության դեմ նրա հիմնական թեմաներն էին ու մեղադրանքների հիմքը:

գ) Սոցիալական իրավիճակի լարվածության աճին ուղղված քայլեր

Հայաստանի իշխանության որդեգրած անկախության գործընթացը խոչընդոտելու հիմնական միջոցներից մեկն էլ երկրի տնտեսության կազմալուծումն ու սոցիալական լարվածության մեծացումն էր: Դրա շնորհիվ պետք է կտրուկ նվազեր նոր իշխանության հեղինակությունը, նրա կարողությունների եւ քաղաքական ուղեգծի նկատմամբ հասարակական վստահությունը: Այդպիսի լարվածություն ստեղծելու հիմքեր կարող էին ծառայել Կենտրոնական իշխանության կողմից առաջին անհրաժեշտության ապրանքների (կենտրոնական ֆոնդերից ստացվող) մեծածախ գների կտրուկ բարձրացումը, շրջափակման հետեւանքով 1991-ի ձմռանը էներգակիրների խիստ սակավությունը, արտադրական ձեռնարկությունների անգործության մատնվելը եւ գործազրկության աճը: Եւ իրոք, արդեն 1990 թվականի վերջին կենսապահովման կարեւոր ոլորտներում, որպես դժգոհության նշան, արձանագրվեց առաջին գործադուլը[532]:

Շրջափակման հետեւանքով էներգակիրների սուր պակասությունը մեղմելու համար նախաձեռնվել էր Վրաստանի տարածքով նոր գազամուղ անցկացնել: Առաջարկ եղավ լրիվ հզորությամբ աշխատեցնել Սեւան-Հրազդան կասկադը՝ Սեւանա լճից լրացուցիչ քանակությամբ ջուր բաց թողնելու հաշվին: Այդ առաջարկը մերժվեց, դրա փոխարեն սահմանվեց էլեկտրաէներգիայի խնայողության խիստ ռեժիմ, ընդհուպ՝ կրճատվեց հեռուստատեսային հաղորդումների տեւողությունը: 1991թ. մայիսին առաջին

---

532 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.11.1990:

անհրաժեշտության սննդամթերքների գները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել էին 2-4,5 անգամ[533]:

Վիճակը շատ թե քիչ շտկելու համար իշխանությունը դիմեց մի շարք ձեռնարկումների: Մասնավորապես՝ հնարավոր եղավ օգնության կարգով զգալի քանակությամբ սննդամթերք ձեռք բերել արտասահմանից: Սակայն խնդիրը ոչ միայն այն հայթայթելն էր, այլեւ տեղ հասցնելը: Օրինակ՝ 1991-ի հունվարին բարեգործական մի կազմակերպության ջանքերով Շվեյցարիայում ձեռք էր բերվել 100 տոննա մանկական սնունդ: Աերոֆլոտը նախապես խոստացել էր այն անվճար տեղափոխել, սակայն վերջում հրաժարվեց: Բարեգործական կազմակերպությունը ստիպված էր այն տեղ հասցնելու համար հավաքած գումարի մի մասը տրամադրել բրիտանական ինքնաթիռներ վարձելու նպատակին:

Ծանրագույն իրավիճակում կենսական նշանակություն ստացավ ճանապարհային շրջափակման հաղթահարումը: Այդպիսի հաջող փորձ արվեց Թուրքիայի տարածքով. Ֆրանսիայից սննդամթերքով բեռնված ավտոշարասյունը ձմռան դժվարին պայմաններում Հայաստան հասավ Երզնկա-Էրզրում-Կարս գծով: Առաջին շփումները հուսադրող էին, եւ թուրքական ավտոմոբիլային ու երկաթուղային ճանապարհներն, իրոք, կարող էին շրջափակման ճեղքման, Կենտրոնի տնտեսական ճնշամիջոցներին դիմակայելու, սոցիալական վիճակի վատթարացումը կանխող, վերջին հաշվով՝ երկրի ներքաղաքական կայունությունը պահպանելու լուրջ միջոց հանդիսանալ:

Խոչ շրջափակումը ճեղքելու, երկրի ներքին կայունությունը պահպանելու ու դրանով իսկ անկախության գործընթացը բարեհաջող շարունակելու այդ «վտանգը» չէին կարող չտեսնել անկախության դեմ պայքարող ուժերը: Հայ-թուրքական սկիզբ առնող հարաբերությունների դեմ, որից առայժմ շահում էր միմիայն Հայաստանը, անմիջապես փորձ արվեց պատնեշներ դնել: Ըստ էության այդպիսին էր 1921թ. Ռուս-թուրքական պայմանագիրը չեղյալ հայտարարելու՝ ՀՅԴ-ի վերոհիշյալ նախաձեռնությունը, որին միացան նաեւ Կոմկուսը եւ «արմատականները»: Երբ դա չհաջողվեց, ապրիլին, Լեռնային Ղարաբաղում ճնշումների սաստկացման շրջանում, դարձյալ Դաշնակցության նախաձեռնությամբ, առաջ քաշվեց

[533] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 30.05.1991: ՀՀ վիճակագրի՝ 1991թ առաջին եռամսյակի մասին հաղորդագրության որոշ տվյալներ տե՛ս «Հայաստան», 16.05.1991:*

1915 թվականի ցեղասպանության ճանաչման խնդիրը[534], այն դեպքում, երբ դա արդեն արվել էր նախորդ գումարման ԳԽ կողմից:

Թուրքիայի հետ շփումների եւ հարաբերությունների հաստատման այս կոնտեքստում ապրիլի սկզբին Երեւանում տեղի ունեցավ Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի հետ: Դաշնակցական մամուլը հսկայական աղմուկ բարձրացրեց, այն գնահատեց որպես «անպատասխանատու քայլ», համարելով, թե «առանց նախապայմաններ դնելու»՝ նման քայլով «անդարմանելի վնաս» է հասցվում Հայաստանի եւ հայ ժողովրդի գերագույն շահերին, փորձ է արվում խորտակել «միացյալ, ազատ եւ անկախ Հայաստանի տեսլականը»[535]:

դ) Երկրի ներքաղաքական կայունության խաթարմանն ուղղված այլ փորձեր

Նկատի ունենալով Խորհրդային Միությունում ընթացող գործընթացները, Հայաստանի ռեսուրսները, առկա խնդիրները եւ այլն՝ նոր իշխանությունը որդեգրել էր մի քաղաքականություն, որը իրադարձությունների զարգացման հնարավոր բոլոր տարբերակների դեպքում դառնար յուրատեսակ մի «ընդհանուր հայտարար»՝ պահպաներ անվտանգ ու արդյունավետ լուծումներ գտնելու հնարավորությունը: Այն, մի կողմից՝ պետք է ապահովեր ընտրված քաղաքական ուղեգծի անխաթարությունը, մյուս կողմից՝ արդեն իսկ բազմաթիվ մարտահրավերների առջեւ հայտնված երկիրն ու ժողովուրդը հնարավորինս զերծ պահեր նոր խնդիրներից ու դժվարություններից. «Հայաստանի ժողովրդավարական իշխանության որդեգրած քաղաքականության էությունը կարելի է ձեւակերպել հետեւյալ կերպ. առանց լուրջ առճակատումների, առանց ավելորդ ցուցամոլության ու շտապողականության, հանդարտորեն, նուրբ մանեւրներով, ճկուն դի-

[534] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 7, հոդվ. 130, Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 8, հոդվ. 156: ՀՀՇ-ի նախաձեռնությամբ ու պահանջով Հայոց ցեղասպանության դատապարտման որոշում արդեն ընդունել էր ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը դեռ 1988 թ նոյեմբերի 22-ին Օպերային թատրոնում կայացած նիստում:*

[535] *«Գրոշակ», 24.04.1991: «Հայրենիք», 13.04.1991: Ավելի ուշ, երբ ՀՅԴ-ն արդեն մաս էր կազմում Հայաստանի հաջորդ իշխանության, այլեւս նման մտահոգություն չուներ եւ ողջունում էր Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու արտաքին քաղաքական թեզը:*

վանագիտությամբ, միաժամանակ հաստատակամ ու անդանդաղ, քայլ առ քայլ նոր եւ կայուն քաղաքական երաշխիքներ ստեղծել մեր հանրապետության գոյության ու բարգավաճման համար»[536]: Եւ իրոք, ներքաղաքական կայունությունը եւ առկա խնդիրները բանական հերթականությամբ կամ զուգադրությամբ հետապնդելը հետագա հաջողությունների, մասնավորապես՝ անկախության խնդրի լուծման միակ գրավականն էր:

Եթե ՀԿԿ-ն ու ՀՅԴ-ն բացահայտ դեմ էին անկախության հանրաքվեին եւ համարում էին, որ Հայաստանը պետք է ստորագրի Միութենական նոր պայմանագիրը, ապա նույն խնդիրների մասին խորհրդարանում տրամագծորեն հակառակ դիրքորոշում ունեին «արմատականները»: Նրանք, ԱԻՄ-ի գլխավորությամբ համարում էին, որ բոլոր խնդիրները կենտրոնական իշխանության հետ պետք է լուծել առճակատման միջոցով: Ընդ որում՝ արտաքուստ տրամագծորեն հակառակ բեւեռներում գտնվելը չէր խանգարում ընդդիմության այս երկու թեւերին հաճախ սերտորեն համագործակցել եւ երբեք միմյանց չհակադրվել: Այսինքն՝ արտաքուստ միմյանց տրամագծորեն հակադիր այս «ընդդիմությունների» պայքարն իշխանության դեմ, ըստ էության, հենվում էր ոչ թե սեփական քաղաքական համոզմունքների ու ծրագրերի վրա, այլ պարզապես առկա իշխանությանը խոչընդոտելու նպատակ էր հետապնդում՝ անկախ այն բանից, թե դրանք ինչպիսի բացասական հետեւանքներ կունենան, օբյեկտիվորեն ինչպիսի վնաս կհասցվի երկրին ու ժողովրդին:

ԱԻՄ-ն առաջարկում էր Հայաստանի անկախության հանրաքվեն անցկացնել մինչեւ մարտի 17-ը կամ դրանից անմիջապես հետո՝ հնարավոր կարճ ժամկետում: Այսինքն՝ հաշվի չառնել միութենական օրենքի պահանջները, ըստ որոնց՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին հանրաքվեն պետք է անցկացվեր համապատասխան որոշման կայացումից 6 ամիս հետո: Եթե միութենական հանրաքվեին մասնակցելու դեպքում (ինչպես պահանջում էին Կոմկուսը եւ Դաշնակցությունը) Հայաստանն իր իսկ ձեռքով կկասեցներ անկախության սկսած օրինական գործընթացը կամ առնվազն լուրջ խոչընդոտներ կստեղծեր դրա համար, ապա այն ավելի վաղ անցկացնելու դեպքում քաղաքական կարեւորագույն այս քայլն իրավական հետեւանքներ չէր ունենա՝ արժեզրկելով նաեւ հանրաքվեի բուն գաղափարը: Այն ապահով հիմքեր կտար Մոսկվային եւ առիթ՝ միջազգային հանրությանը՝ չճանաչել դրա արդյունքները[537]: Դժվար է ասել՝ ԱԻՄ-ը եւ այս հարցում նրա շուրջ հավաքված ուժերը, որ հաջորդ օրերին, շաբաթներին ու ամիսներին հանրահավաքներով ու այլ միջոցներով փորձում էին ճնշում գործադրել իշխանության վրա, առաջնորդվում էին հենց ա՞յս՝ անկախության ուղեգիծը խոչընդոտելու նպատակով, թե՞ պարզապես ինքնահաստատման, հասարակության պատկերացումներում որպես ընդդիմություն կայանալու համար էին շահարկում հարմար հարցը՝ առանց հաշվի առնելու երկրի համար դրա վնասակար հետեւանքները:

Հատկապես վտանգավոր ընթացք ստացան զինվորական ծառայության եւ զինակոչի հարցերին ԱԻՄ-ի ապօրինի միջամտություններն ու սադրիչ գործողությունները: Իրականացնելով Անկախության հռչակագրի դրույթները՝ իշխանությունն այս ասպարեզում կարեւոր առաջընթաց քայլ էր կատարել՝ հասնելով այն բանին, որ Հայաստանից զորակոչվածները ծառայում էին Հայաստանի տարածքում տեղակայված ԽՍՀՄ զինված ուժերի ստորաբաժանումներում: Ստեղծվել էր զինվորական գերատեսչությունների աշխատանքը համակարգող կոմիտե (Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ), որն զբաղվում էր նաեւ այս հարցերով: Դրա բնականոն արդյունքը պետք է լիներ Հայաստանում տեղակայված ԽՍՀՄ 7-րդ բանակի հայկականացումը: Մինչդեռ ԱԻՄ-ը ամեն ինչ անում էր, որպեսզի զորակոչի տարիքի հասածները խուսափեն զինվորական ծառայությունից: Գերագույն խորհուրդը ստիպված էր հարցը քննարկման առարկա դարձնել, ծառայությունից խուսափածների համար ծառայության ներկայանալու

[536] *Տեր-Պետրոսյան Լ., Երեւանի, էջ 150-151:*

[537] *Ճիշտ այնպես, ինչպես այդ արդյունքները չճանաչվեցին միութենական հանրաքվեին չմասնակցած եւ մարտ-ապրիլ ամիսներին իրենց հանրաքվեներն անցկացրած հանրապետությունների ստացած արդյունքները: Սա չի նշանակում, անշուշտ, թե այդ հանրապետությունների ժողովրդավարական շարժումների քաղաքական միտքը չէր ընկալում, թե որն է ճիշտ ճանապարհը: Նրանց վարքագիծը, տվյալ դեպքում, իրենց իրողությունների հարթության վրա, թերեւս՝ արդարացված էր եւ միակ հնարավորը: Խնդիրն այն է, որ ԽՍՀՄ համապատասխան օրենքով սահմանված էր այնպիսի ընթացակարգ, որ գործնականում անհնար էր հաղթահարել բոլոր այն հանրապետություններում, որտեղ բնակչության էական տոկոսը այլազգիներ էին կամ իրենց կազմում ունեին ինքնավար կազմավորումներ: Նրանց իրականացրած անկախության հանրաքվեները կարող էին ունենալ զուտ քաղաքական իմաստ: Հայաստանը միակ հանրապետությունն էր, որը նման խնդիրներ չուներ, եւ սահմանված կարգով իրականացված հանրաքվեն կունենար իրավական նշանակություն, այդ կերպ կարող էր հասնել իր անկախությանը ու դրա միջազգային ճանաչմանը:*

վերջնաժամկետ նշանակել, այս ուղղությամբ բացատրական լայն աշխատանք էր տանում ՀՀՇ-ն: ԱԻՄ-ն աշխատում էր ճիշտ հակառակ ուղղությամբ՝ հանրահավաքներով, թռուցիկներով եւ այլ միջոցառումներով կոչ անելով «չծառայել զավթիչ բանակում»: Ընդ որում՝ ծառայությունից խուսափողներին խոստանում էր ԱԻՄ-ի պաշտպանությունը[538]: Նա համարում էր, որ դրանով ճնշում է գործադրում իշխանության վրա՝ արագացնելու համար ազգային բանակի (իր խոսքով «սպարապետության») հիմնումը: Գործնականում՝ դա այլ բան չէր, քան խոչընդոտել հայկական բանակի ստեղծմանը, իրավական առումով դա օրենքի խախտում էր, քրեական հանցանք, հակապետական գործունեություն:

ԱԻՄ-ի գործողությունները սպառնում էին վտանգավոր ընթացք ստանալ. զորակոչի վիժեցման վտանգին գումարվեցին նրա կողմից շենքեր գրավելու, հեռուստատեսության եւ ռադիոկոմիտեի աշխատանքները խանգարելու գործողությունները՝ դրանցում ներքաշելով զորակոչից խուսափած եւ իր «պաշտպանությանն» ապավինած երիտասարդներին: Պ. Հայրիկյանը գրավել էր ՀԿԿ Երեւանի քաղկոմի շենքը՝ (այժմյան Սահմանադրական դատարանի շենքը)՝ դա համարելով որպես հատուցում կոմունիստական իշխանության տարիներին իր ազատազրկման դիմաց[539]: Ակնհայտորեն նա օգտվում էր իր՝ խորհրդային տարիներին այլախոհ լինելու հանգամանքից, ինչը, թերեւս, որոշակիորեն կաշկանդում էր իշխանությանը՝ նրա ձեռնարկած ապօրինությունների դեմ կտրուկ գործողություններում: Հանրապետությունում ստեղծվում էր անկայուն վիճակ, ճիշտ այն, ինչի խորացումը կարող էր նաեւ Կենտրոնին առիթ եւ իրավական հիմք տալ ուժային միջամտության: Իրավիճակը սրվեց այնքան, որ ոստիկանությունը ստիպված էր մարտի 18-ին ձերբակալել շենքը զավթածներին:

Գերագույն խորհրդի նախագահությունը մարտի 18-ի լույս 19-ի գիշերը հրավիրած նիստում լսեց ԱԻՄ-ի անօրինական գործողությունների հետեւանքով ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի մասին ՆԳ նախարարության հաղորդումը: Ձեռնարկված միջոցառումներին հավանություն տալով՝ Նախագահությունը նաեւ տվյալ հարցով հաջորդ օրը Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրեց: Վերջինս, դատապարտելով ԱԻՄ-ի գործողությունները, բավարարվեց նրան նախազգուշացնելով զերծ մնալ հակաօրինական գործողություններից՝ արձանագրելով, որ դրանք

[538] *Տե՛ս օրինակ՝ ՀՀԱՆԱ, թղթ. 19/23.02.91:*

[539] *Տե՛ս «Ազգ», 20.03.1991:*

«նպաստում են հանրապետության քաղաքական կյանքի ապակայունացմանը, հանրապետության պաշտպանությանն ուղղված միջոցառումների ձախողմանը եւ հղի են վտանգավոր հետեւանքներով»: Կառավարությանն առաջարկվեց նման գործողությունների կրկնվելու դեպքում քննության առնել ԱԻՄ-ի կանոնադրության գրանցման մասին որոշումը չեղյալ համարելու հարցը[540]: Մեկ այլ որոշմամբ ծառայությունից խուսափած զինակոչիկների համար ծառայության ներկայանալու վերջնաժամկետ նշանակվեց՝ այդ ընթացքում ներկայացածներին ազատելով քրեական պատասխանատվությունից[541]:

Չնայած Գերագույն խորհրդի նախագահության որոշմանը եւ զգուշացմանը՝ ԱԻՄ-ը շարունակեց հանրահավաքներ կազմակերպել եւ ներկայացնել նույն պահանջները: Մարտի 22-ին եւ 23-ին նրա հրավիրած հանրահավաքների անունից Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված դիմումը պահանջում էր. «Ժողովուրդը կամենում է օր առաջ ազատագրվել կայսրության ճիրաններից եւ իշխանությունները պետք է իրականացնեն ժողովրդի կամքը կամ հեռանան քաղաքական ասպարեզից... Մենք պահանջում ենք հանրաքվե ապրիլի 21-ին»[542]: Այսինքն՝ ԱԻՄ-ը շարունակում էր գնալ ի սկզբանե իր որդեգրած ճանապարհով, այն է՝ առաջ էր քաշում անկախության ձեռքբերման եւ պետականության ստեղծման խնդիրները լուծելու՝ կենտրոնական իշխանության դեմ բացահայտ առճակատման տարբերակը: Եթե դա ԱԻՄ-ին պետք էր իր ներկայությունը քաղաքական դաշտում շեշտելու եւ ճանաչվածությունը մեծացնելու համար, ապա՝ օբյեկտիվորեն ձեռնտու էր Կենտրոնին, քանի որ նրան, մի կողմից՝ իր ուժային լծակների օգտագործման, մյուս կողմից՝ օրենքով

[540] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 6, հոդվ. 96:*

[541] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 6, հոդվ. 97:*

[542] *ՀՀԱՆԱ, թղթ. 19/23.03.91: Անկախության հանրաքվեն նշանակված ժամկետից շուտ անցկացնելու խնդիրը մեկ անգամ չէ, որ հարուցվեց՝ որպես իրավիճակը սրելու առիթ: Այս նախաձեռնության մեջ ընդգրկվեցին նաեւ այլ ուժեր, պատգամավորներ, ստորագրություններ հավաքվեցին բնակչության շրջանում: Ապրիլի 18-ին այն Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը ներկայացրին մի խումբ պատգամավորներ, այդ թվում նախագահության անդամներ Ռաֆայել Ղազարյանը եւ Նորայր Մանասերյանը՝ պահանջելով այն անցկացնել ապրիլ-մայիս ամիսներին: Նախագահությունը որոշեց, որ դրա համար հիմքեր չկան եւ մերժեց խնդիրը (Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 8, հոդվ. 8 եւ էջ 23):*

սահմանված ժամկետից շուտ իրականացված հանրաքվեի արդյունքները չճանաչելու իրավական հիմք կտար:

ե) Հայաստանի դեմ պատժամիջոցների նախապատրաստումը, իրավիճակը Լեռնային Ղարաբաղում

Առաջին հայացքից՝ կարող էր տպավորություն ստեղծվել, թե միութենական հանրաքվեին չմասնակցած եւ սեփական անկախության հանրաքվեներն իրականացրած հանրապետություններն ավելի արմատական քայլեր արեցին, քան Հայաստանը: Դրանք զուտ քաղաքական ակցիաներ էին եւ չէին կարող իրավական հետեւանքներ ունենալ ո՛չ ԽՍՀՄ, ո՛չ միջազգային իրավունքի հարթության վրա: Ուստիեւ Մոսկվան դրանցից մեծ անհանգստություն չուներ: Միութենական հանրաքվեին չմասնակցելու եւ անկախության սեփական հանրաքվեն ԽՍՀՄ գործող օրենքներին համապատասխան նշանակելու Հայաստանի քայլն էր, որ, միակ իրավականը եւ քաղաքական իմաստով հեռանկարայինը լինելով, նաեւ ամենաանհանգստացնողն էր Կենտրոնի համար:

Կենտրոնական իշխանությունը, բնականաբար, հակազդման քայլերի էր դիմելու, ու բնական է նաեւ, որ դրա միջոցն ու թիրախն, առաջին հերթին, լինելու էր Լեռնային Ղարաբաղը: Կարող է թվալ, թե նկատի ունենալով այս հանգամանքը, թերեւս, ավելի ճիշտ կլիներ, որ Հայաստանի իշխանությունը ձեռնպահ մնար անկախության գործընթացը զարգացնելուց, մասնակցեր միութենական նոր պայմանագրի մշակմանը եւ ստորագրեր այն՝ դրանով իսկ շահելով Կենտրոնի բարեհաճությունը նաեւ Ղարաբաղի հարցում: Այսինքն՝ վարվեր այնպես, ինչպես այդ շրջանում վարվում էր Ադրբեջանը: Բայց նախ՝ եղել էր նաեւ այդպիսի շրջան. ինչպես Շարժման սկզբում, այնպես էլ հետագա պայքարի ընթացքում փորձարկվել էին բոլոր ձեւերը: Կենտրոնի եւ Ադրբեջանի շահերն այս դեպքում օբյեկտիվորեն ընդհանուր հիմքեր ունեին, եւ նրանց դաշինքն ավելի քան բնական էր: Կենտրոնը սկզբից եւեթ արտահայտել էր իր դիրքորոշումը եւ բազմաթիվ փաստերով ապացուցել, որ դրանից երբեք չի նահանջելու: Իսկ այն ամենը, ինչի հնարավոր էր եղել հասնել այդ ընթացքում եւ ապահովել Լեռնային Ղարաբաղի գոյությունը, իրականացվել էր սահմանադրական օրինական պայքարի, ժողովրդավարությանն ապավինելու շնորհիվ, ինչը դարձել էր յուրատեսակ «հայկական գործոն» ու տվել իր անուրանալի առարկայա-

կան արդյունքները: Որեւէ նահանջ այս ճանապարհից կառաջացներ ծանր հետեւանքներ. Հայաստանում, ինչպես նաեւ Ղարաբաղում, կառաջանար հասարակական խոր հիասթափություն եւ դաշտ կբացեր իրոք ծայրահեղական ուժերի վտանգավոր ակտիվացման համար, Հայաստանը կկորցներ իր՝ ժողովրդավարության համար պայքարող առաջամարտիկի վարկանիշը եւ կզրկվեր ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության վճռական պաշտպանությունից: Այդպիսի նահանջից հետո Մոսկվայի վերաբերմունքը ղարաբաղյան խնդրում ոչ թե կմեղմանար, այլ, հաջողությունից ոգեւորված, կդառնար ավելի կոշտ: Այսինքն՝ Հայաստանն այլ կերպ վարվել չէր կարող, եթե չէր պատրաստվում հրաժարվել «հայկական գործոնից», ինքնիշխանության ձեռք բերած մակարդակից, անկախության գործընթացից, ինչից հետո ավելի էր վտանգվելու նաեւ Լեռնային Ղարաբաղը:

Հայաստանի ինքնիշխանության ամրապնդման եւ անկախության գործընթացը խոչընդոտելու համար Մոսկվան ակնհայտորեն օգտվելու էր ղարաբաղյան խաղաքարտից: Սակայն դա չէր նշանակում, թե 1991-ի գարնանը եւ ամռանը Լեռնային Ղարաբաղում Մոսկվայի ուժային ճնշումները նույն չափով ու մեթոդներով կդրսեւորվեին բոլոր դեպքերում: Դրանք շատ ավելի սահմանափակ կարող էին լինել եւ դրսեւորման այլ ձեւեր ունենալ, եթե ժամանակին հնարավոր լիներ վերացնել այդօրինակ ճնշումների համար Հայաստանում եւ Ղարաբաղում նպաստավոր հող ստեղծող հիմքերը:

Մոսկվայի եւ Ադրբեջանի համատեղ հարվածներից Լեռնային Ղարաբաղը հնարավորինս հեռու պահելու խնդիրը Հայաստանի նոր իշխանության համար առաջնային էր ի սկզբանե: Դրան մեծապես կնպաստեր մարզային իշխանության սահմանադրական մարմինների վերականգնված լինելը: Գիտակցելով դրա կարեւորությունը՝ Հայաստանի նոր իշխանության ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի դիվանագիտական ջանքերի շնորհիվ արդեն 1990թ. սեպտեմբերին նախնական համաձայնություններ էր ձեռք բերվել փոխհամաձայնության հիման վրա հասնել դրա լուծմանը: Սակայն այդ ծրագիրը խոչընդոտվեց տարբեր ուժերի կողմից, համապատասխան ըմբռնում չգտավ, մասնավորապես, ղարաբաղյան գործիչների կողմից[543], եւ հարցը չլուծվեց: Շարունակելով այդ ուղղությամբ ջանքերի գործադրումը՝ Հայաստանի ղեկավարն այդ խնդրի լուծմանը մոտեցել էր

---

[543] *Տեր-Պետրոսյան Լ. Ընտրանի, էջ 113-122 (հուլիս 1990 թ. սեպտեմբերի 3-ին, Գերագույն խորհրդի փակ նիստում):*

նաեւ 1991թ. փետրվարին, բայց ղարաբաղյան, տեղական որոշ ուժերի դիմադրության պատճառով այն կրկին հնարավոր չէր եղել իրականացնել[544]:

Ակնհայտ էր, որ Լեռնային Ղարաբաղում ուժի գործադրումը Հայաստանի անկախության գործընթացը խափանելու նպատակով Մոսկվայի համար անիմաստ ու անհեռանկար կլիներ, եթե նա Հայաստանում որպես դաշնակից չտեսներ անկախության դեմ գործող, ժողովրդավար իշխանությանն ընդդիմացող ուժերի՝ «հայկական ինտերֆրոնտը»: Իշխանությանը ծանր վիճակի մեջ դնելով այդ «ռեսուրսի» ակտիվացմամբ՝ նա հույս ուներ «ներսից» ստիպել Հայաստանին միանալ միութենական պայմանագրին: Այդ ուժերն էլ, որպես Մոսկվայի «5-րդ շարասյուն», պետք է ձգտեին անհրաժեշտ հող ու պայմաններ ստեղծել Կենտրոնի նախապատրաստվող ճնշումներն արդյունավետ դարձնելու համար: Անկախության դեմ ուղղակի քարոզչության համար հասարակական լայն բազա կամ լսարան չունենալով՝ նրանք դա պետք է անեին շրջանցիկ, քողարկված ճանապարհներով: Առաջին՝ կեղծ-ազգասիրության եւ կեղծ-հայրենասիրության դիրքերից «ապազգային» ներկայացնել նոր իշխանությանը: Այդ նպատակին էր ուղղված, օրինակ, ռուս-թուրքական պայմանագիրը չճանաչելու հարցը ԳԽ-ում քննարկելու նրանց նախաձեռնությունը: Երկրորդ՝ նպաստեին երկրի ներսում սոցիալական լարվածության սրմանը եւ դժգոհության առաջացմանը՝ ցույց տալու համար իր քաղաքացիների տարրական պահանջները բավարարելու՝ իշխանության անկարողությունը. այդ նպատակին էր ուղղված Թուրքիայի հետ որեւէ հարաբերություն չունենալու պահանջը, որի ճանապարհներն օգտագործելով՝ հնարավոր էր լինում ինչ-որ չափով մեղմել խուլ շրջափակման ծանրագույն հետեւանքները: Այս երկու հարցերում առաջամարտիկը Դաշնակցությունն էր: Երրորդ եւ ամենակարեւորը՝ քարոզել, թե անկախության գործընթացը շարունակելով ու միութենական պայմանագրին չմիանալով՝ վտանգվում է Լեռնային Ղարաբաղը: Այս գործին Դաշնակցությունից եւ կոմունիստներից բացի ակտիվորեն լծվել էր նաեւ նոմենկլատուրային մտավորականության մի խումբ: Այս ուժերն էին, որ ոգեշնչեցին Կենտրոնին անելու այն, ինչը հայտնի է «Կոլցո» գործողություն անվամբ: Իր հերթին՝ ուժային նման միջամտությունը ավելի արդյունավետ պետք է դարձներ անկախությունից հրաժարվելու եւ միութենական պայմանագրին միանալու նրանց քարոզը:

[544] *Տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 12/05.06.91, թ. 3բ (Լ. Տեր-Պետրոսյանի ելույթը ՀՀ ԳԽ նստաշրջանում 05.06.1991):*

Միութենական դաշնագրի կնքումը Գորբաչովը նախատեսել էր հունիսին, եւ ամեն ինչ պետք է աներ միութենական հանրաքվեին չմասնակցած հանրապետություններին պարտադրելու այդ քայլին: Մասնավորապես, նա սպառնացել էր միութենական պայմանագրի ստորագրումից հրաժարվող հանրապետությունների հետ տնտեսական բոլոր հարաբերությունները տեղափոխել միջազգային նորմերի հուն՝ համաշխարհային գներով եւ կայուն վալյուտայով[545]: Շրջափակումը խստացնելու եւ մատակարարումները դադարեցնելու միջոցներով սոցիալական իրավիճակի սրումը, ռազմական ուժի օգտագործմամբ Լեռնային Ղարաբաղը վտանգելու միջոցով ներքաղաքական անկայունությունը պետք է ապացուցեին եւ համոզեին հայ հասարակությանը, որ նոր իշխանությունն իր քաղաքական ուղեգծով անհաջողությունների է մատնվում եւ կորուստներ ունենում: Ըստ այդ հաշվարկի՝ դժգոհության աճը կա՛մ կստիպեր գործող իշխանությանը հրաժարվել անկախության ուղեգծից եւ ստորագրել միութենական պայմանագիրը, կա՛մ խորացած ճգնաժամը հնարավորություն կտար հակաանկախական ուժերին տապալել նոր հաստատված ժողովրդավար իշխանությունը:

Ներքին անկայունության հրահրումը միայն Կոմկուսի, Դաշնակցության եւ Միության պահպանման կողմնակից այլ ուժերի միջոցով դժվար էր, նրանց ձեռնարկումները հասարակական լայն հնչեղություն չէին ստանում, իսկ նոր իշխանության նկատմամբ հավատը եւ վստահությունը շարունակում էր մնալ բարձր: Հայաստանն, ի տարբերություն անկախության ուղին որդեգրած այլ հանրապետությունների, էթնիկապես միատարր էր, եւ այստեղ ազգամիջյան հակամարտություններ հրահրելու հող չկար, ինչպիսին կար, օրինակ, Մերձբալթիկայում: Հայաստանը չուներ ինքնավար կազմավորումներ, ինչպես Վրաստանն ու Մոլդովան, եւ հնարավոր չէր նաեւ այդ լծակն օգտագործել: Անկախության գործընթացը վարվում էր բացառապես սահմանադրական ճանապարհով, եւ այս առումով եւս Կենտրոնը միջամտության իրավական հիմք չէր կարող գտնել: Նոր իշխանության հեղինակազրկման նպատակին հասնելու ամենաազդու միջոցը կարող էր լինել Լեռնային Ղարաբաղում ուժի կիրառումը եւ հայ-ադրբեջանական հակամարտության սրումը, բռնագաղթվածների նոր հոսքը հանրապետություն: Դրա համար որպես իրավական ձեւական հիմք կարող էր ծառայել եւ ծառայեց դեռ 1990թ. հուլիսի 25-ին ԽՍՀՄ պրեզիդենտ

[545] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19.06.1991:*

Մ. Գորբաչովի հրամանագիրը «ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու եւ անօրինականորեն զենքը պահելու դեպքում այն առգրավելու մասին», ինչի գործադրումից Հայաստանը մինչ այդ կարողացել էր խուսափել դիվանագիտական աշխատանքի շնորհիվ:

* * *

Սովորական դարձած պարբերական եւ ամենօրյա ստուգումների, խուզարկությունների, կողոպուտների կողքին, որ հատկապես հաճախադեպ էին դարձել 1991թ. հունվարին, Լեռնային Ղարաբաղում աստիճանաբար կատարվում էին նոր սադրիչ գործողություններ: Հունվարի 2-ին Ադրբեջանի հեռուստատեսությամբ հաղորդվեց Նախագահ Մութալիբովի հրամանագիրը՝ Լեռնային Ղարաբաղում եւ հարակից շրջաններում նախագահական կառավարում մտցնելու մասին[546]: Հունվարի 14-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հայաբնակ Շահումյանի եւ հարեւան ադրբեջանաբնակ Կասում-Իսմայլովսկի վարչական շրջանները միավորելու մասին[547]: Ադրբեջանական ներքին գործերի նախարարության զինվորները հունվարի 22-ին Ստեփանակերտի օդանավակայանում թույլ չտվեցին Ռուսաստանի ԳԽ պատգամավորների մի խմբի մուտքը մարզկենտրոն (նրանք գործուղվել էին իրավիճակին ծանոթանալու համար) եւ նրանց ուղարկեցին Բաքու[548]: Հունվարի 21-ին փակվեցին Ամարասի եւ Գանձասարի վանքերը: Փետրվարի 15-ին «կազմկոմիտեի» շենքի վրա ԽՍՀՄ դրոշի կողքին բարձրացվեց Ադրբեջանի դրոշը: Մարտի 14-ին Գորբաչովը որոշեց մի նոր դիմում հղել «Ադրբեջանի ժողովրդին եւ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը»[549]: Կոչում արձանագրված առանցքային միտքը՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանի անբաժանելի մասն է», նույնպես ակնհայտորեն սադրիչ բնույթ ուներ: Այս վերջին առիթով ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության հայտարարու-

[546] *Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 4, январь 1991-январь 1993, Ереван, 1994. с. 7.*

[547] *Նույն տեղում, էջ 8:*

[548] *Տե՛ս նույն տեղում: Հունվարի սկզբից սկսած եւ մինչեւ բացահայտ ռազմական ագրեսիայի սկիզբը, Լեռնային Ղարաբաղում եւ հարակից հայաբնակ շրջաններում Ադրբեջանի իշխանության եւ կենտրոնի սադրիչ քայլերի ու գործողությունների ամբողջական նկարագրությունը տե՛ս նույն տեղում էջ 7-10:*

[549] *Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1991, 12, հոդվ. 342:*

թյան մեջ իրավացիորեն կանխատեսվում էր, որ «ԽՍՀՄ պրեզիդենտի մի շարք անհեռատես պնդումները Ադրբեջանական հանրապետությունում կարող են հանգեցնել այնպիսի հետեւանքների, ինչպես նույն Գորբաչովի՝ 1988 թվականի փետրվարի 26-ին Ադրբեջանի եւ Հայաստանի ժողովուրդներին հղած դիմումին հաջորդած «սումգայիթն էր»[550]:

Որ նոր բռնություններ էին ծրագրվում՝ կասկածից դուրս էր: Դրանք սկսվեցին ապրիլի առաջին օրերից եւ, իրոք, ունեցան նաեւ «սումգայիթյան» դրսեւորումներ: Շահումյանի շրջանում գլխատվեցին երկու բնակիչ, Գետաշենում ուղիղ նշանառության կրակոցով սպանվեց մի երեխա: Հայաստանի սահմանամերձ շրջանների եւ Ղարաբաղի բնակավայրերի ու ճանապարհների վրա հարձակումները, գնդակոծումները, մարդկանց առեւանգումները դարձան հաճախադեպ: Առաջին պաշտոնական դիմումն այս առիթով ԽՍՀՄ ՊԱԿ-ին, ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությանը հղեցին ՀՀ ՊԱԿ-ը եւ ՆԳ նախարարությունը՝ արձանագրելով, որ այդ գործողություններին մասնակցել են նաեւ ԽՍՀՄ զինված ստորաբաժանումները[551]: Ապրիլի 7-ին ստեղծված իրավիճակի մասին հայտարարությամբ հանդես եկավ Հայաստանի կառավարությունը՝ պահանջելով վերջ տալ ռազմական գործողություններին, վերականգնել ԼՂԻՄ իշխանության տեղական մարմինները եւ հարցերը նրանց հետ լուծել քաղաքական ճանապարհով[552]: Ապրիլի 8-ից ամբողջությամբ փակվեց Հայաստանի երկաթուղային հաղորդակցությունը, կտրուկ վատացավ գազամատակարարումը: ՀՀ Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունների՝ ապրիլի 12-ի համատեղ հայտարարությունը Հայաստանի նկատմամբ թափ առնող գործողությունները որակում էր որպես Ադրբեջանի բացահայտ ռազմական ագրեսիա Հայաստանի դեմ, իսկ Կենտրոնը համարվում էր ագրեսիայի եւ Լեռնային Ղարաբաղում իրականացվող բռնարարքների հովանավորն ու աջակցողը: Այդ ամենը գնահատվում էր որպես ահաբեկման միջոցով քաղաքական խնդիր լուծելու՝ անկախության գնացող Հայաստանի ժողովրդին դրանից հետ պահելուն ուղղված գործողություն[553]: Նույն օրերին վիճակը բարդացավ հատկապես նրանով, որ, ի պատասխան դարձյալ Մոսկվայի կողմից Վրաստանի

[550] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 6, հոդվ. 98:*

[551] *«Հայաստանի Հանրապետություն», 05.04.1991:*

[552] *«Հայաստանի Հանրապետություն», 09.04.1991:*

[553] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 7, հոդվ. 161:*

նկատմամբ կիրառվող ճնշումների, այստեղ գործադրվ էր հայտարարվել, ինչի հետեւանքով փակվել էր նաեւ Վրաստանով Հայաստան եկող գնացքների ճանապարհը: Գերագույն խորհրդի նախագահությունը պաշտոնական դիմումով ստիպված էր դիմել Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ջ. Գամսախուրդիային՝ Հայաստան եկող շարժակազմերը բաց թողնելու խնդրանքով[554]:

Կենտրոնն ակնհայտորեն սկսում էր Հայաստանի դեմ ճնշամիջոցների մի նոր համալիր, որը պետք է վերածվեր իրական պատերազմի, որտեղ կենտրոնականը ռազմական գործողությունների միջոցով Լեռնային Ղարաբաղից բռնազաղթվածների նոր հոսքերի ուղղորդումն էր դեպի Հայաստան:

զ) Անկախության գործընթացի դեմ Մոսկվայի սանձազերծած պատերազմը. «Կոլցո» գործողությունը

ԽՍՀՄ հանրաքվեին մասնակցած 9 հանրապետությունների ղեկավարները, Գորբաչովի հետ միասին, ապրիլի 23-ին Նովո-Օգարյովոյում հավաքվեցին քննարկելու միութենական պայմանագրի ստորագրման հարցը (9+1): Նույն օրը սկսվեցին խորհրդային բանակի հարձակումները Ղարաբաղի հայկական բնակավայրերի եւ Հայաստանի սահմանամերձ շրջանների վրա: Մոսկվան դրանով փաստական պատերազմ էր հայտարարում Հայաստանին:

Ռազմական այս գործողության նախապատրաստական քայլերն արվել, եւ ծրագրերը մշակվել էին շատ ավելի վաղ՝ նկատի ունենալով Հայաստանի ռազմավարական ուղենիշը անկախության եւ Լեռնային Ղարաբաղի հարցերում: Դեռ հունվարի սկզբին Մութալիբովը մի զեկուցագիր էր ուղարկել ԽՄԿԿ ԿԿ, որտեղ Հայաստանի Հանրապետությանը, մասնավորաբար, մեղադրում էր Լեռնային Ղարաբաղ զենք եւ ջոկատներ տեղափոխելու մեջ: Նա համարում էր, որ դա կարող է հանգեցնել լայնամասշտաբ պատերազմի: Նաեւ զգուշացնում էր, որ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում Ադրբեջանում կոմունիստական կուսակցությունը կարող է հեղինակազրկվել, իշխանության կարող է գալ ժողովրդական ճակատը եւ ձախողել միութենական պայմանագրի ստորագրումը: Այս զեկուցագրի առիթով ԽՄԿԿ ԿԿ-ի համապատասխան փորձագետը առաջարկում է, որ ԽՍՀՄ «Պաշտպանության նախարարությունը, ՆԳ նա-

[554] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 7, հոդվ. 163:*

խարարությունը եւ ՊԱԿ-ը անհապաղ հատուկ գործողություն իրականացնեն.... զինաթափելու համար ապօրինի զինված կազմավորումները»: Իսկ հունվարի 17-ին ԽՄԿԿ ԿԿ-ը համաձայնում է այս առաջարկների հետ[555]:

Ապրիլի 3-ին ադրբեջանական ուժերը հարձակում էին ձեռնարկել Գետաշենի, միաժամանակ՝ նաեւ Հայաստանի սահմանակից շրջաններից Մեղրիի եւ Գորիսի ուղղությամբ: Այդ հարձակումները հաջողությամբ ետ էին մղվել: Ապրիլի 16-ին Մութալիբովը հրավիրեց ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի եւ դատախազության համատեղ մի խորհրդակցություն, որտեղ պնդեց, որ ԽՍՀՄ ներքին զորքերը դուրս բերվեն Շահումյանից, Գետաշենից եւ Մարտունաշենից, իսկ այդտեղ պարետներ նշանակվեն ադրբեջանցի սպաներ: Նա նաեւ պահանջեց, որ այդ շրջանները եւ Լեռնային Ղարաբաղը ենթարկվեն Ադրբեջանի օրենքներին՝ սպառնալով հակառակ դեպքում արտաքսել հայ բնակչությանը: Նախատեսվում էր Ադրբեջանի սահմանների պաշտպանությունն իրականացնել խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումների միջոցով, որոնց ծառայող անձնակազմի 60%-ն արդեն ադրբեջանցիներ էին: Նախատեսվում էին նաեւ հայկական բնակավայրերի բնակչությունից զենքի առգրավման լայնածավալ գործողություններ եւ այլն: Այս խորհրդակցության արդյունքները հեռագրով ուղարկվեցին ԽՍՀՄ ՆԳՆ-ի, ՊԱԿ-ի եւ բանակի ղեկավարներին, իսկ Մութալիբովը պատրաստվում էր նույն հարցերն անձամբ քննարկել Գորբաչովի հետ[556]: Ապրիլի 16-ի այս խորհրդակցությունից, Մութալիբովի տված համապատասխան ցուցումներից եւ Պոլյանիչկոյի՝ Գետաշենի ենթաշրջան այցից անմիջապես հետո, հաջորդ օրերին սկսվեցին Գետաշենից, Մարտունաշենից եւ այլ բնակավայրերից հայ բնակչության տեղահանման լայնամասշտաբ գործողությունները, որոնք իրականացվում էին ԽՍՀՄ ներքին զորքերի հրամանատար Ց.Վ. Շատալինի ղեկավարությամբ: Իր հերթին՝ ԽՍՀՄ ՆԳ նախարար Պուգոն հայտարարեց, որ Գետաշենի ենթաշրջանի գյուղերում բնակչություն չկա, այնտեղ միայն «գրոհայիններ» են: Ապրիլի 19-ին Գետաշենից եւ Մարտունաշենից դուրս բերվեցին Լեռնային Ղարաբաղի հատուկ շրջանի պարետ Ժուկովի ստորաբաժանումները: Անմիջապես էլ սկսվեցին այս գյուղերը եւ Շահումյանը շրջափակելու գործողությունները:

[555] *Համապատասխան փաստաթղթերից բերված նյութը տե՛ս* ***Томас де Ваал****, Черный сад, Москва, 2005, с. 162-163.*

[556] *Այս խորհրդակցության մասին ամփոփ փաստաթուղթը տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 07/16.04.91:*

Կանխելու համար իրադարձությունների այսօրինակ ընթացքը, ապրիլի 22-ին ՀՀ ԳԽ նախագահ Լեռն Տեր-Պետրոսյանը նամակ հղեց Գորբաչովին[557]: Ներկայացնելով վերոհիշյալ փաստերը՝ նա կատարվածը գնահատեց որպես հանցագործություն, ինչի հետեւանքով՝ «Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը, Բերդաձորը հայտնվել են լիակատար շրջափակման մեջ, դադարեցված են նույնիսկ ուղղաթիռների թռիչքները, բնակչությանն էլեկտրաէներգիա, խմելու ջուր եւ սննդամթերք չի մատակարարվում: Անհնար է դարձել վիրավորների ու ծանր հիվանդների տեղափոխումը կենտրոնական հիվանդանոցներ»: Համարելով, որ կատարվող հանցավոր գործողությունները կարող են խախտել ձեւավորված «ստատուս-քվոն» եւ, դրանով իսկ, վտանգի տակ դնել հակամարտության քաղաքական կարգավորման հեռանկարը, նա մասնավորապես, առաջարկում էր. «Մինչեւ տարածաշրջանում կատարված հանցագործությունների հետաքննումը անհրաժեշտ է Գետաշենից ու Մարտունաշենից անմիջապես դուրսբերել ադրբեջանական օմոնականներին ու Ադրբեջանի ՆԳՆ ենթակայության տակ գտնվող բոլոր զինյալ կազմավորումները, եւ Գետաշենի ենթաշրջանը ենթարկել Արտակարգ դրության հրամանատարին»[558]:

Այլ էին, սակայն Կենտրոնի քաղաքական առաջնահերթությունները: Ինչպես ասվեց, բարձրագույն մակարդակով լայնամասշտաբ ռազմական գործողության իրականացման սանկցիան ստացվեց ապրիլի 23-ին՝ Նովո-Օգարյովոյում միութենական պայմանագրի օրակարգով «9+1» հանդիպման ժամանակ, անձամբ Գորբաչովից[559]: Այդ օրից սկսած, ավտոմատ զենքերից, տանկերից ու զրահամեքենաներից անընդհատ գնդակոծվում

[557] *ՀՀԱՆԱ, թղթ. 2/22.04.1991: Ռուսերեն բնօրինակից կատարված հայերեն թարգմանությունը տե՛ս՝ «Գիտնականը եւ Նախագահը...», էջ 507-508: Նամակը բացի Նախագահ Գորբաչովից, ուղղված էր նաեւ կենտրոնական իշխանության բոլոր այն պատասխանատու պաշտոնյաների անունով, ովքեր անմիջականորեն առնչվում էին խնդրին. փոխնախագահ Գ.Ի. Յանաեւին, կառավարության նախագահ Վ.Ս. Պավլովին, ՊԱԿ նախագահ Վ.Ա. Կրյուչկովին, պաշտպանության նախարար Դ.Տ. Յազովին, ՆԳ նախարար Բ.Կ. Պուգոյին, Գերագույն խորհրդի նախագահ Ա.Ի. Լուկյանովին, անվտանգության խորհրդի անդամներ Ե.Մ. Պրիմակովին, Վ.Վ. Բակատինին, Ա.Ն. Յակովլեւին:*

[558] *Նույն տեղում, էջ 508:*

[559] *Այս սանկցիայի մասին, փաստորեն, վկայում է Մութալիբովը՝ ադրբեջանական «Վիշկա» թերթի մայիսի 19-ի համարում (տե՛ս «Գիտնականը եւ Նախագահը...», էջ էջ 514):*

էին նաեւ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերը: Գործողությունն իրականացվում էր խորհրդային բանակի ստորաբաժանումների, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի եւ Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՕՆ-ի կողմից՝ տանկերի, ծանր հրետանու, ուղղաթիռների օգտագործմամբ: Այն անմիջապես ղեկավարում էին ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-գնդապետ Աչալովը եւ ԽՍՀՄ ՆԳՆ նախարարի տեղակալ, ԽՍՀՄ ներքին զորքերի հրամանատար, գեներալ-գնդապետ Շատալինը[560]:

Ադրբեջանի օրենքներին ենթարկվելու կամ իրենց բնակավայրերից հեռացվելու սպառնալիքը Մութալիբովը կրկնեց նաեւ հեռուստատեսային ելույթով, ապրիլի 27-ին[561]: Ապրիլի 30-ին Գետաշեն եւ Մարտունաշեն շրջափակված գյուղերի վրա սկսվեց խորհրդային բանակի, ներքին զորքերի եւ ադրբեջանական միլիցիայի համատեղ հարձակումը, որի հետեւանքով զոհվեց 36 խաղաղ բնակիչ: Դրանով սկսվեց, այսպես կոչված՝ «Կոլցո» ռազմական գործողությունը: Ըստ մշակված ռազմական պլանի՝ խորհրդային զորքերը շրջափակում էին հայկական բնակավայրերը՝ զրկելով նրանց օգնության որեւէ հնարավորությունից, իսկ ադրբեջանական միլիցիայի ջոկատներն իրականացնում էին բնակչության բռնի տեղահանումը: Մոսկվան խնդիր էր հետապնդում Ադրբեջանի օգնությամբ խոչընդոտել Հայաստանի անկախացման գործընթացը, իսկ Ադրբեջանը հույս ուներ Մոսկվայի օգնությամբ հասնել Լեռնային Ղարաբաղի «ազատագրմանը»: Հայ բնակչության բռնագաղթի ծրագրի իրականացումը պետք սկսվեր Գետաշենի ենթաշրջանից, ապա դատարկվեր Շահումյանը, իսկ այնուհետեւ՝ նաեւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը:

Ղարաբաղի վտանգված շրջաններին Հայաստանից ցույց էր տրվում հնարավոր բազմակողմանի օգնություն, մեծացվում էր նրանց պաշտպանունակությունը: Դա, անշուշտ, դժվարանում էր ինչպես խուլ շրջափակման, այնպես էլ հենց Հայաստանի սահմանամերձ շրջանները նույնպիսի ագրեսիայի, ռազմական հարձակումների ենթարկվելու պայմաններում: Մեծ ուշադրություն էր դարձվում հատկապես քաղաքական ու դիվանագիտական քայլերին:

Ապրիլի 25-ին հրավիրվեց Գերագույն Խորհրդի արտահերթ փակ նիստ: Առաջարկվեց որոշում ընդունել «Արցախում, Գետաշենում, Շահումյանի շրջանում ԽՍՀՄ ՆԳ նախարարության որոշ բարձրաստիճան ներ-

[560] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23.04.1991:*

[561] *Տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 07/27.04.91:*

կայացուցիչների կողմից հակաժողովրդական գործողություններ հրահրելու փաստերն ուսումնասիրելու եւ համապատասխան ընթացք տալու նպատակով Գերագույն խորհրդի համապատասխան հանձնախումբ կազմելու մասին»: Խոսքը վերաբերում էր ԽՍՀՄ ՆԳ նախարարության ներքին զորքերի հրամանատար, գեներալ-գնդապետ Շատալինին (որը նաեւ մայիսի 27-ի սադրանքի կազմակերպիչն էր) եւ ԽՍՀՄ ՆԳ նախարար Պուգոյին[562]: Ստեղծվեց պատգամավորական հանձնաժողով, որը պետք է ՀՀ ՆԳ նախարարության, դատախազության, ՊԱԿ-ի եւ Հատուկ ծրագրերի իրականացման պետական կոմիտեի հետ համատեղ ուսումնասիրեր Լեռնային Ղարաբաղում, Շահումյանի շրջանում եւ Գետաշենի ենթաշրջանում ԽՍՀՄ ՆԳ նախարարության «որոշ պաշտոնատար անձանց» կողմից հակաիրավական գործողությունների հրահրման փաստերը եւ Գերագույն խորհուրդ ներկայացներ համապատասխան տեղեկանք[563]: Մեկ այլ որոշմամբ, հենվելով ԽՍՀՄ Սահմանադրության 110 հոդվածի վրա, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջեւ հարց հարուցվեց՝ «Արցախում եւ Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության միջսահմանային գոտում ստեղծված իրադրությունը քննարկելու» օրակարգով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ հրավիրել[564]:

Ապրիլի 30-ին, թելադրված արտակարգ իրավիճակում ամենօրյա օպերատիվ որոշումներ ընդունելու անհրաժեշտությամբ, ստեղծվեց Արտակարգ իրավիճակի հանրապետական ժամանակավոր խորհուրդ: Վերջինիս կազմի մեջ մտնում էին Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունները, խորհրդակցական ձայնի իրավունքով նրա աշխատանքներին պետք է մասնակցեին նաեւ խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ղեկավարները: Խորհրդին իրավունք վերապահվեց ընդունել «հանրապետության անվտանգության եւ բնականոն կենսագործունեության ապահովմանն ուղղված որոշումներ», որոնք պետք է կատարման համար պարտադիր լինեին հանրապետության ողջ տարածքում: Անհրաժեշտության դեպքում (պատգամավորների 1/3-ի պահանջով)

[562] ՀՀԱՆԱ, թղթ. 12/25.04.91, թ. 1ա-1բ:

[563] Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 8, հոդվ. 148:

[564] Տեղեկագիր ՀՀ Գխ-ի 1991, 08, հոդվ.149: Այս դիմումն, իհարկե մերժվեց: Իր հերթին՝ ԽՍՀՄ Գխ էր դիմել նաեւ Ադրբեջանը՝ նման օրակարգով համագումարի հրավիրումը համարելով իր ներքին գործերին միջամտություն: ԽՍՀՄ Գխ-ը «անհապաղակահարմար» համարեց նման օրակարգով համագումարի հրավիրումը (Տեղեկագիր ԽՍՀՄ Գխ-ի, 1991, 20, հոդվ. 576):

այս մարմնի ընդունած որոշումները կարող էին քննարկվել եւ հաստատվել խորհրդարանում: Խորհուրդը պետք է գործեր մեկ ամիս, եթե խորհրդարանն այլ որոշում չընդուներ[565]:

Նույն օրը՝ ապրիլի 30-ին ընդունած հայտարարությամբ Գերագույն խորհուրդն ազդարարում էր, որ Ադրբեջանի կոմունիստական վարչակարգը ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության թողտվությամբ եւ ԽՍՀՄ ներքին զորքերի անմիջական մասնակցությամբ, ոտնահարելով համամարդկային արժեքները եւ մարդու իրավունքների միջազգային նորմերը, շարունակում է իրականացնել իր բնօրրանից՝ Լեռնային Ղարաբաղից, Շահումյանի շրջանից եւ Գետաշենի ենթաշրջանից հայ ազգաբնակչության բռնի տեղահանման գործողություններ: Ադրբեջանի եւ Հայաստանի միջսահմանային գոտում ստեղծված պատերազմական իրադրությունը գնահատվում էր որպես Հայաստանի օրինական իշխանությունների դեմ ուղղված պետական ահաբեկչություն, ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության դեմ: Գերագույն խորհուրդը պնդում էր ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ հրավիրելու իր սահմանադրական պահանջը՝ որպես ստեղծված իրավիճակից դուրս գալու անհրաժեշտ միջոց: Հայտարարությունը նաեւ դիմում էր «աշխարհի ժողովուրդներին, պետությունների պառլամենտներին եւ կառավարություններին, միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին, բարի կամքի տեր մարդկանց»՝ կոչ անելով հնարավոր ջանքերը գործադրել հայ ժողովրդի դեմ ուղղված ագրեսիվ գործողությունները դադարեցնելու համար[566]:

Հայ բնակչությանը Հյուսիսային Արցախից բռնագաղթի ենթարկելու գործողությունները մեծ հուզումներ առաջացրին Հայաստանում: Մայիսի 1-ին Ազատության հրապարակում տեղի ունեցավ բողոքի մեծ հանրահավաք: Չնայած դժվարություններին եւ վտանգներին՝ օրական 3-4 ուղղաթիռ էր ուղարկվում Գետաշեն՝ վիրավորներին տեղափոխելու եւ բնակչությանը անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար: Գործի էին դրվում հնարավոր բոլոր քաղաքական լծակները՝ թույլ չտալու համար Գետաշենի եւ Մարտունաշենի բնակչության տեղահանումը: Շարունակվում էր պաշտոնական բողոքների, դիմումների եւ հայտարարությունների շարքը: Մայիսի 2-ին Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերում կատարված բռնությունների

[565] Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 08, հոդվ. 151:

[566] Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 08, հոդվ. 152:

կապակցությամբ հայտարարություն ընդունեցին Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունները[567]: Գերագույն խորհրդի նախագահն այս խնդրի շուրջ մայիսի 1-2-ին Գորբաչովի, փոխնախագահ Գ. Յանաեւի եւ Միության այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հեռախոսազրույցներ ունեցավ, հանդիպումներ եւ բանակցություններ ունեցավ ԽՍՀՄ Պաշտպանության նախարարի տեղակալներ Աչալովի եւ Կոլեսնիկովի հետ: Մայիսի 3-ին նա հանդիպում ունեցավ Մ. Գորբաչովի հետ[568]: Հանդիպման ընթացքում կազմվեց համատեղ արձանագրություն, որտեղ Լեւոն Տեր-Պետրոսյանի պնդմամբ պրեզիդենտական երաշխիքներ արձանագրվեցին՝ Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերի բնակիչների բռնի տեղահանությունը կանխելու հարցում, ինչպես նաեւ ապահովելու դեպի այս գյուղեր ուղղաթիռների անխափան թռիչք, Գետաշենը եւ Մարտունաշենը ընդգրկելու Շահումյանի շրջանի կազմում եւ դրանց վրա տարածելու ԼՂԻՄ-ի հատուկ շրջանի պարետի լիազորությունները: Այդ պայմանների «ճշտիվ եւ անշեղ» կատարման դեպքում հայկական կողմը խոստանում էր առավելագույն ջանքեր գործադրել զինված դիմակայությունը դադարեցնելու համար [569]: Հանդիպումից հետո Մոսկվայում ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի մամուլի ասուլիսին ներկա էին աշխարհի գրեթե բոլոր խոշոր լրատվական գործակալությունների մեծ թվով թղթակիցներ: Լեւոն Տեր-Պետրոսյանն այստեղ մասնավորապես արձանագրեց, որ ի տարբերություն Սումգայիթի եւ Բաքվի կոտորածների, որ իրականացվեցին գազազած ամբոխի կողմից, Գետաշենում ապրիլի 30-ին տեղի ունեցածը պետական տեռոր էր, քանզի այն իրականացվեց խորհրդային բանակի եւ ներքին զորքերի կողմից[570]:

Մի քանի օր անց Լեւոն Տեր-Պետրոսյանը մի այլ նամակ հղեց Մ. Գորբաչովին, որում մանրամասն շարադրում էր, թե ինչ պայմանների դեպքում հնարավոր կլինի հանդիպման ժամանակ համաձայնեցված ար-

567 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 9, հոդվ. 171:*

568 *Լ. Տեր-Պետրոսյանի վկայությամբ Գորբաչովը տեւական ժամանակ խուսափել է նման հանդիպումից. «Ես փորձում էի նրա հետ կապվել ապրիլի 22-ից: Իրադարձությունները շատ արագ էին զարգանում, եւ ինձ անհրաժեշտ էր շտապ իմանալ նրա գիրքորոշումը: Իսկ նա թաքնվում էր ինձնից, խուսափում խոսակցությունից: Նա ինձ ընդունեց միայն այն ժամանակ, երբ ողբերգությունն արդեն տեղի էր ունեցել» (**Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, էջ 208):*

569 *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 07.05.1991:*

570 *Տե՛ս ՀՀԱՆԼ, թղթ. 12/03.05.91:*

ձանագրության՝ հակամարտության լուծման մեխանիզմների արդյունավետ գործողության իրականացումը[571]: Շուտով ՊԱԿ-ի նախագահ Կրյուչկովի միջոցով հավաստիացում ստացվեց, որ «Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերի բնակչության տեղահանման հարցը հանված է, եւ ոչ ոք իրավունք չունի այդ գյուղերի բնակիչներին ստիպել լքելու իրենց բնակավայրերը»[572]:

ԽՍՀՄ բարձրագույն պաշտոնյաները չպահեցին իրենց հրապարակային խոստումներն ու պաշտոնական հավաստիացումները: Մայիսի 4-ին ռազմական ուղղաթիռներով Երեւան մտցվեցին մեծ թվով դեսանտայիններ՝ իբր ռազմական օբյեկտները պաշտպանելու նպատակով: Դա շատ նման էր հարմար առիթի դեպքում հանրապետությունն օկուպացնելու նախապատրաստության: Արտակարգ իրավիճակների հանրապետական խորհուրդն, իր հերթին, հրահանգեց հանրապետության ՆԳ նախարարությանը՝ ուժեղացնել մայրաքաղաքի քաղաքացիական կարեւոր օբյեկտների հսկողությունը:

Մայիսի 6-ին Գերագույն խորհուրդը փակ նիստում ընդունեց մի շարք կարեւոր փաստաթղթեր: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դը Կուելյարին ուղղված դիմումով տեղյակ էր պահվում, որ «Հայաստանի դեմ ներկայումս հրահրվող սադրանքները հիմք են տալիս ենթադրելու, որ ամեն միջոց կգործադրվի խափանելու Հայաստանի Հանրապետության հանրաքվեն», ապա խնդրվում էր դիտորդներ ուղարկել Անկախության հանրաքվեի նախապատրաստմանը եւ անցկացմանը ներկա լինելու համար[573]: Մի այլ դիմում հղվեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին, որտեղ Մոսկվայի գործողությունները գնահատելով որպես անմարդկային դաժանություններով ուղեկցվող բացահայտ ագրեսիա, մասնավորապես ընդգծվում էր. «Մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումը, պետության կողմից կատարվող ոճրագործությունները մարդկության դեմ, ինչպես նաեւ ժողովուրդների ինքնորոշման գործընթացի բռնի միջամտությունը հանդիսանում են ոչ թե ներքին հարց, այլ ՄԱԿ-ի կանոնադրության եւ միջազգային պայմանագրերի խախտում, ուստի միջազգային հան-

571 *Նամակի ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԼ, թղթ. 02/07.05.1991, հայերեն թարգմանությունը տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 07.05.1991թ., հրատարակված նաեւ՝ «Գիտնականը եւ Նախագահը...», էջ 508-509:*

572 *«Հայաստանի Հանրապետություն», 07.05.1991:*

573 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 9, հոդվ. 167:*

ության համար հղի են ծանր հետեւանքներով»: Քանի որ նման դեպքերը թելադրում են ՄԱԿ-ի միջամտությունը, ուստի Հանձնաժողովին խնդրվում էր դիտորդներ ուղարկել Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ[574]: Նույն օրը Գերագույն խորհուրդն իր հայտարարությամբ տվեց ծավալվող իրադարձությունների քաղաքական գնահատականը. ԽՍՀՄ զինված ուժերի անմիջական մասնակցությունը Ադրբեջանի կողմից հայ բնակչության բռնի տեղահանման գործողություններին նպատակ ունի «Հանրաքվեից առաջ ապակայունացնել իրադրությունը Հայաստանում, հիմքեր ստեղծել հանրապետության ներքին գործերին միջամտելու, ժողովրդավարական գործընթացը խոչընդոտելու համար»[575]: Ընդունվեց նաեւ մի դիմում հայ ժողովրդին, որը կոչ էր անում «պատմության այդ շրջադարձային պահին համախմբվել Հայոց պետականության շուրջ»[576]:

Նույն օրը Լեւոն Տեր-Պետրոսյանը նաեւ մամուլի համար արեց հետեւյալ հայտարարությունը.

«Խորհրդային Միությունը փաստորեն պատերազմ է հայտարարել Հայաստանի Հանրապետությանը: Խորհրդային բանակը շարունակում է իր պատժիչ գործողությունները Հայաստանի տարածքում: Ադրբեջանի տարածքում տեղաբաշխված ԽՍՀՄ զինված ուժերի 4-րդ բանակի ստորաբաժանումները այսօր հիմնահատակ ոչնչացրել են Հայաստանի Հանրապետության Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղը: Ավերվել են բոլոր տները, հրկիզվել մերձակա այգիներն ու անտառները: Կան տասնյակ սպանվածներ:

Ուղղաթիռներից գնդակոծվել են նաեւ Հայաստանի Գորիսի շրջանի մի քանի գյուղեր:

Անդրկովկասի զինվորական օկրուգի հրամանատար գեներալ-գնդապետ Պատրիկեեւը գեներալ-լեյտենանտ Պիշչեւի միջոցով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Աշոտ Մանուչարյանին հաղորդել է, որ այդ գործողությունը կատարել է ոչ թե խորհրդային բանակը, այլ ադրբեջանական իշխանություններին ենթակա ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը»[577]:

---

574 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 9 հոդվ. 168:*

575 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 9, հոդվ. 169:*

576 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 9, հոդվ. 170:*

577 *«Հայաստանի Հանրապետություն», 07.05.1991թ., տե՛ս նաեւ՝ «Գիտնականը եւ նախագահը...», էջ 510:*

Հաջող ջանքեր էին գործադրվում Կենտրոնին հակազդման համար ստանալու մյուս հանրապետությունների աջակցությունը: Ուկրաինայի ԳԽ նախագահ Լ. Մ. Կրավչուկին հասցեագրված նամակում Լեւոն Տեր-Պետրոսյանը, ներկայացնելով ստեղծված վիճակը, խնդրում է պատգամավորական խումբ ուղարկել՝ մանրամասն տեղեկանալու իրողություններին, ինչպես նաեւ՝ նպաստել այդ հարցով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար հրավիրելուն[578]: Մինչ այդ Ուկրաինայի խորհրդարանը արդեն իսկ որոշել էր թույլ չտալ ուկրաինացի զինծառայողների մասնակցությունը ազգամիջյան կոնֆլիկտների լուծմանը:

Չնայած գործադրված բոլոր քաղաքական ջանքերին, տեղում կազմակերպված ինքնապաշտպանությանը, չնայած այն բանին, որ հարցը միջազգային լայն հնչեղություն էր ստացել, այնուամենայնիվ, հնարավոր չեղավ կանխել Գետաշենի եւ Մարտունաշենի բնակչության բռնագաղթը: Այն վերջնականապես իրականացվեց մայիսի 7-ին՝ նախապես կազմված պլանի համաձայն: Տեղահանվեց շուրջ 3500 բնակչություն: Այդ պլանի մասին վկայող փաստաթղթերը հայտնաբերվեցին Գետաշենում պատանդ վերցված գնդապետ Մակաշովի մոտ[579]: Սակայն բռնությունների ալիքը դրանով չավարտվեց: Այն շարունակվեց նաեւ Հադրութի եւ Շուշիի շրջաններում, որտեղից մայիսի կեսերին տեղահանվեցին ավելի քան մեկուկես տասնյակ գյուղերի բնակիչները:

է) Պատերազմը Հայաստանի սահմանամերձ շրջաններում

Եթե Լեռնային Ղարաբաղում ծրագրված ագրեսիան ուղղված էր Հայաստանի Հանրապետության անկախության ընթացքը վիժեցնելուն, բնական է, որ զուգահեռ նույնպիսի գործողություններ պետք է ձեռնարկվեին նաեւ հենց Հայաստանի դեմ: Պատրվակը նույնն էր՝ ԽՍՀՄ նախագահի՝ «ապօրինի զինված կազմավորումների զինաթափման մասին» հրամանագիրը: Հայաստանի սահմանամերձ շրջանների վրա հարձակումները նպատակ ունեին նաեւ խոչընդոտել այն հնարավոր օգնությունը, որ ցույց էր տրվում Լեռնային Ղարաբաղին՝ ինքնապաշտպանություն կազմակերպելու

---

578 *Նամակի ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 02/07.05.1991, հայերեն ամբողջական թարգմանությունը տե՛ս «Գիտնականը եւ նախագահը...», էջ 510-511:*

579 *Այդ մասին հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը մայիսի 7-ին տված մամուլի ասուլիսում (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 08.05.1991):*

համար: Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի վրա կատարված հարձակումները տանկերի, զրահամեքենաների, ռազմական ուղղաթիռների ուղեկցությամբ նույնպես իրական պատերազմական գործողություններ էին հիշեցնում: Բազմաթիվ բնակավայրեր, այդ թվում՝ Պառավաքարը, Արծվաշենը, Ոսկեպարը, Կիրանցը, Տեղը, Կոռնիձորը, Շուռնուխը, Խոզնավարը ավերածությունների ենթարկվեցին ռմբակոծությունների եւ գնդակոծումների հետեւանքով: Պառավաքար գյուղի դեմ դուրս էր բերվել 50 տանկ եւ զրահամեքենա, 10 ռազմական ուղղաթիռ: Ապրիլի 30-ին սահմանային Ոսկեպար գյուղ իջեցված խորհրդային բանակի դեսանտայիններ-ը փակեցին գյուղի բոլոր ճանապարհները, սպանեցին 2 խաղաղ բնակչի: Մայիսի 6-ին գյուղին օգնության շտապող հայկական միլիցիայի ջոկատը շրջափակվեց եւ դաժան կոտորածի ենթարկվեց խոհրդային զինվորների եւ ադրբեջանական միլիցիայի կողմից, զոհվեցին Հայաստանի ՆԳ նախարարության 14 աշխատակիցներ, մյուսներին գերի վերցրին եւ տեղափոխեցին Ադրբեջան[580]: Ընդհանուր առմամբ՝ հանրապետության սահմանամերձ շրջաններում զոհվածների թիվը հասավ 24-ի: ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունն այս առիթով մայիսի 8-ին ընդունած իր հայտարարությամբ արձանագրում էր, որ, պատերազմ մղելով հանդերձ Հայաստանի դեմ, Խորհրդային Միությունը չի պահպանում նույնիսկ պատերազմական վիճակին վերաբերող, իր իսկ կողմից ստորագրած միջազգային պարտավորությունները[581]: ՀՀ Գերագույն խորհուրդը ստիպված էր ընդհատել իր աշխատանքները եւ պատգամավորական խմբեր գործուղել սահմանամերձ շրջաններ: Այդ խմբերից մեկը, որ Էդուարդ Եգորյանի գլխավորությամբ մեկնել էր Տավուշի շրջան, ճանապարհին գնդակոծվեց: Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունների՝ մայիսի 11-ին ընդունած հայտարարության մեջ արձանագրվում է, որ Հայաստանի տարածքում իրականացված ագրեսիային արդեն զոհ է դարձել հանրապետության 24 քաղաքացի, այդ թվում՝ 14-ը ՆԳ նախարարության աշխատակիցներ, 104 հոգի էլ առեւանգվել է խորհրդային զորքերի կողմից եւ տարվել անհայտ ուղղությամբ[582]:

[580] *Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994) հանրագիտարան, Երեւան, 2004: էջ 542-543:*
[581] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 9, հոդվ. 172:*
[582] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 9, հոդվ. 177:*

Մայիսի 16-ին Գերագույն խորհրդի ընդունած հերթական ընդարձակ հայտարարությունը կոչվում էր «Հայաստանի եւ հայ ժողովրդի դեմ պետական ահաբեկչության քաղաքականության գնահատման մասին»: Կրկին շեշտելով, որ Կենտրոնի գործողություններն ուղղված են ներքին անկայունություն հրահրելու, օրինական իշխանությունները տապալելու եւ հանրապետությունը անկախության ուղուց հետ պահելու նպատակին, արձանագրվում էին Մոսկվայի կողմից միջազգային իրավունքի նորմերի, ԽՍՀՄ Սահմանադրության եւ կարեւորագույն օրենքների տասնյակ կոպիտ խախտումներ, ծանր հանցագործություններ[583]: Նույն օրը երկրորդ դիմումը հղվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որտեղ տեղեկացվում է, որ վտանգավոր արագությամբ ծավալվող դեպքերն իրենց հետեւանքներով սպառնում են վերածվել զանգվածային ցեղասպանության, եւ արյունահեղության հետագա ծավալումը կանխելու նպատակով խնդրում են շտապ ՄԱԿ-ի դիտորդներ ուղարկել Լեռնային Ղարաբաղ[584]:

Քաղաքական փաստաթղթերի ընդունումը շարունակվեց նաեւ հետագա օրերին: Մայիսի 17-ին կայացված որոշումը մի ամբողջ շարք պահանջներով դիմում էր՝ ուղղված ԽՍՀՄ պրեզիդենտին[585]: Նույն օրը դիմում հղվեց ԽՍՀՄ գլխավոր դատախազին՝ պահանջելով ապահովել Ստեփանակերտում ապօրինի ձերբակալված ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանի պատգամավորական անձեռնմխելիությունը[586]: Մայիսի 20-ին Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը դիմում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ առեւանգված 500 հայազգի քաղաքացիներին անհապաղ Ադրբեջանի տարածքից դուրս բերելու, ազատ արձակելու, իսկ հարուցված գործերը երրորդ կողմի վարույթ հանձնելու համար[587]: ՀՀ Գերագույն խորհուրդը մայիսի 20-ին մեկ այլ դիմում հղվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի, միութենական եւ ինքնավար հանրապետությունների Գերագույն խորհուրդների նախագահություններին՝ խնդրելով «ներկայացուցիչներ ուղարկել ԼՂԻՄ եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններ, ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու համար բռնի տեղահանվածների վերադարձն իրենց

[583] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 10, հոդվ. 179:*
[584] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 10, հոդվ. 180:*
[585] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 10, հոդվ. 182:*
[586] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 10, հոդվ. 183:*
[587] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 10, հոդվ. 190:*

բնակավայրերը եւ կանխելու հայ ժողովրդի դեմ գործադրվող հետագա բռնությունները»[588]: Հայաստանից եւ ԼՂԻՄ-ից առեւանգված քաղաքացիների ճակատագրի նկատմամբ մտահոգությամբ էր թելադրված Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված՝ մայիսի 22-ի թվակիր դիմումը, որով խնդրվում էր հարուցված քրեական գործերը տեղափոխել ՌԽՖՍՀ համապատասխան մարմինների վարույթ, իսկ գործերով անցնող անձանց՝ ՌԽՖՍՀ տարածք[589]: ԽՍՀՄ պրեզիդենտին եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված դիմումը վերաբերում էր Հայաստանից առեւանգված ներքին գործերի 10 աշխատակիցների սահմանադրական իրավունքների պաշտպանությանը, որոնց նկատմամբ Ադրբեջանում քրեական գործեր էին հարուցվել[590]:

Լեռնային Ղարաբաղում կատարվող ապօրինությունների մասին, բնականաբար, նույնպիսի հայտարարություններ էին արվում եւ տարբեր հասցեներով, ընդհուպ՝ ՄԱԿ, դիմումներ էին հղում նաեւ մարզային իշխանության մարմինները[591]:

Ադրբեջանի բանտերում խոշտանգումների ենթարկվող հայազգի պատանդների խնդրով հունիսի 10-ին Գորբաչովին նամակ հղեց ԳԽ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նամակում, մասնավորապես, արձանագրվում էր, որ «Ադրբեջանական կողմից կոպտորեն խախտվում են ԽՍՀՄ օրենքները, ինչպես նաեւ Խորհրդային Միության կողմից վավերացված ՄԱԿ-ի 1984թ. դեկտեմբերի 10-ի «Խոշտանգումների...» վերաբերյալ կոնվենցիան: Հայաստանի Հանրապետության Դատախազության կողմից արձանագրված են Ադրբեջանի բանտերում ազգությամբ հայ քաղաքացիների նկատմամբ դաժան վերաբերմունքի բազմաթիվ փաստեր»: Իսկ պահանջը նույնն էր.«...անհապաղ միջոցներ ձեռնարկել ձերբակալվածներին ազատ արձակելու, բնության ենթակա անձանց «երրորդ կողմի» բանտեր տեղափոխելու եւ բոլոր գործերը ԽՍՀՄ Դատախազության տնօրինությանը փոխանցելու համար»[592]:

[588] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 10, հոդվ. 191:*

[589] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 10, հոդվ. 192:*

[590] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 10, հոդվ. 193:*

[591] *Տե՛ս* ***Арутюнян В.Б.****, События в Нагорном Карабахе, хроника, часть 4, ст. 18-19:*

[592] *Նամակի ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 02/10.06.1991; հայերեն ամբողջական թարգմանությունը՝ «Գիտությունը եւ նախագահը..., էջ 512-513:*

Հսկայածավալ քաղաքական այս աշխատանքը, եթե ինչ-որ դրական տեղաշարժեր էր արձանագրում, սակայն դեռեւս ցանկալի վերջնական արդյունքի չէր հանգեցնում:

Հունիսի 20-ին Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը դիմեց ավելի կտրուկ քայլի: Նա նամակ հղեց ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ.Ա. Կրյուչկովին (պատճենները՝ ԽՍՀՄ փոխնախագահ Գ.Ի. Յանաեւին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա.Ի. Լուկյանովին, ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Տ. Յազովին, ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ.Կ. Պուգոյին, ԽՍՀՄ Անվտանգության խորհրդի անդամներ Ե.Մ. Պրիմակովին, Վ.Վ. Բակատինին, Ա.Ն. Յակովլեւին): Նամակում զգուշացվում է, որ մի քանի հարյուր պատանդներին ազատ չարձակելու դեպքում կիրապարակի դրան կցված՝ **«Պետական տեռոր եւ չհայտարարված պատերազմ՝ հրահանգված ԽՍՀՄ պրեզիդենտի կողմից»** վերնագիրը կրող Հայտարարությունը, որում մանրակրկիտ ներկայացվում էին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ավելի քան մեկամսյա պատերազմը՝ դրա ծանր հետեւանքները, ինչպես նաեւ՝ համարելով, որ այն սկսվել է Գորբաչովի անձնական հրահանգով՝ կասեցնելու համար Հայաստանի անկախացման գործընթացը[593]: Վճռական այս զգուշացումը ինչպես նաեւ կազմակերպված միջազգային ճնշումը[594], խաղում են իրենց դերը: Կրյուչկովը խնդրում է չհրապարակել հայտարարությունը, եւ քիչ անց սկսում են լուծվել ինչպես պատանդների ազատ արձակման հարցերը, այնպես էլ մեղմանում, դադարում են «անձնագրային ռեժիմի» ստուգման պատրվակով ռազմական գործողություններն ու տեղահանումները[595]:

Ըստ ՀՀ ԳԽ-ի՝ հուլիսի 7-ին ընդունած հայտարարության՝ ապրիլից սկսված Մոսկվա-Ադրբեջան համատեղ ագրեսիայի հետեւանքներն այսպիսին էին. ԼՂԻՄ-ում, Գետաշենում եւ Մարտունաշենում զոհվել էր 41, վիրավորվել 70 մարդ: Պատանդ էր վերցվել 335 խաղաղ բնակիչ (որոնցից արդեն ազատ էին արձակվել 189-ը): Երեք պատանդ տանջամահ էին արվել ադրբեջանական բանտերում: Ամբողջությամբ դատարկվել էր 20 բնակավայր, որոնցից տեղահան էր արվել 5000 հայազգի քաղաքացի, երեք

[593] *Տե՛ս «Գիտությունը եւ նախագահը...», էջ 513-516:*

[594] *Լեւոն Տեր-Պետրոսյանը նույնաբովանդակ նամակներ էր հղել նաեւ «Մեծ Յոթնյակի» պետությունների ղեկավարներին (տե՛ս նույն տեղում, էջ 516, ծթ.):*

[595] *Տե՛ս նույն տեղում:*

հայկական գյուղ բնակեցվել էր ադրբեջանցիներով: Նույն ժամանակ Հայաստանի սահմանամերձ շրջանների վրա կատարված հարձակումների հետեւանքով զոհվել էր 35, վիրավորվել 44 մարդ, պատանդ էին վերցվել ՆԳ 60-ից ավելի աշխատակից, տեղական խորհուրդների տասնյակ պատգամավորներ, տնտեսությունների ղեկավարներ, խաղաղ բնակիչներ: 28 գյուղում վնասվել էին տներ ու շինություններ, շարքից դուրս էին եկել ցանքսերը, հափշտակվել էր 1000 գլուխ անասուն: Հրետակոծության հետեւանքով վնասվել էր Կապանի օդանավակայանը, փակվել էր Գորիս-Կապան ավտոճանապարհը: Ուղղակի նյութական վնասը կազմում էր շուրջ 50 միլիոն ռուբլի[596]:

Ի հեճուկս Հայաստանում գործող հակաանկախական ուժերի՝ Դաշնակցության, Կոմկուսի եւ մտավորականության նեղ մի շերտի, որոնք նաեւ ռազմական գործողությունների ամբողջ ընթացքում բոլոր հնարավոր միջոցներով (քարոզչություն, հերյուրանքների տարածում հրապարակային զանազան ակցիաներ) խոչընդոտներ էին հարուցում ծանրագույն խնդիրների առջեւ հայտնված իշխանության դեմ, հնարավոր եղավ չեզոքացնել Կենտրոնի ճնշումը, խափանել նրա ծրագրերը, շարունակել անկախության գործընթացը:

ը) Ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության օժանդակությունը

Կենտրոնի եւ Ադրբեջանի փաստական ագրեսիան, ճիշտ է, հանդիպեց համառ ինքնապաշտպանության, սակայն, հասկանալի պատճառով, միայն այս միջոցին ապավինելով՝ այն կանխել հնարավոր չէր, ավելին՝ դա կարող էր բռնությունների սաստկացման եւ ներքաղաքական իրավիճակի անվերահսկելիության առաջացման առիթ տալ: Ուստի դրան, բացի ինքնապաշտպանական զինական միջոցառումներից, որպես հիմնական միջոց, Հայաստանի իշխանությունը հակադրեց քաղաքական ակտիվ պայքարը, դիվանագիտական ջանքերը: Այս ընթացքում միայն Գերագույն խորհուրդն ընդունեց երկու տասնյակից ավելի քաղաքական հայտարարություններ եւ դիմումներ: Հասկանալի է, որ դրանք ոչ միայն ուղարկվում էին հասցեատիրոջը, այլ նաեւ տարածվում էին աշխարհով մեկ: Նույնպիսի փաստաթղթեր ընդունվեցին եւ տարածվեցին նաեւ գործադիր իշխա-

[596] *Տեղեկագիր ՀՀ-ի, 1991, 13, հոդվ. 280:*

նության մարմինների կողմից: Հանրապետության ղեկավարը հաճախակի հանդես էր գալիս ելույթներով, մամուլի ասուլիսներով, ընդունում այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, նրանց ներկայացնում իրական վիճակը եւ խնդիրները: Ակտիվ աշխատանք էր տարվում իրականությունը ներկայացնելու համաշխարհային հանրությանը, ԽՍՀՄ հանրապետություններին եւ դրանցում գործող ժողովրդավարական ուժերին՝ ապահովելու համար նրանց պաշտպանությունը եւ ճնշումը Կենտրոնի վրա:

Ամենանշանակալից քաղաքական օգնությունը, թերեւս, եկավ Ռուսաստանից: Մայիսի սկզբին, Լեւոն Տեր-Պետրոսյանին տված իր խոստման համաձայն, Բ. Ելցինը Հայաստան ուղարկեց պատգամավորական հանձնախումբ՝ Շելով-Կովեդյաեւի գլխավորությամբ: Հանձնախումբը եղավ ամենաթեժ կետերում, մասնավորապես՝ օժանդակեց դուրս բերել Ոսկեպարում զոհվածների դիակները[597]: Հայաստանին եւ ԼՂԻՄ-ին պաշտպանելու միջոցառումներով հանդես եկավ Ռուսաստանի Սահմանադրական ժողովրդավարների կուսակցությունը: Կենտրոնի ագրեսիան դատապարտող հայտարարություններով հանդես եկավ «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման համակարգող խորհուրդը: Ակտիվ աշխատանք էր տանում «Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեն», որ կազմավորվել էր դեռ 1991թ. մարտին եւ Ղարաբաղի հարցում, փաստորեն, ամբողջությամբ պաշտպանում էր ՀՀ իշխանության պաշտոնական դիրքորոշումները եւ պահանջները: Վճռական դիրքորոշում ցուցաբերեց Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների 4-րդ համագումարը[598]: Մ. Գորբաչովին ուղղված դիմում հղվեց ԽՍՀՄ գիտական մտավորականության անունից: Կենտրոնի քաղաքականության նկատմամբ իրենց վճռական բողոքն արտահայտեցին եւ խորհրդային բանակի ստորաբաժանումները խաղաղ բնակչության դեմ օգտագործելը դատապարտող որոշումներ ընդունեցին Ուկրաինայի Գերագույն խորհուրդը, Լիտվայի եւ Լատվիայի Գերագույն խորհուրդների նախագահությունները, Լենինգրադի քաղաքային եւ մարզային խորհուրդների նախագահությունները եւ այլն[599]:

[597] *«Հայաստանի Հանրապետություն», 16.05.1991:*

[598] *«Հայաստանի Հանրապետություն», 25.05.1991:*

[599] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21.05.1991:*

Դիվանագիտական եւ քաղաքական լուրջ աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ստանալ նաեւ միջազգային հանրության, աշխարհի խոշոր երկրների գործուն աջակցությունը: Այս իմաստով կարեւոր էր Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանի այցը Ֆրանսիա մայիսի 7-ին, նրա հանդիպումները քաղաքական ուժերի ղեկավարների եւ բարձրաստիճան պաշտոնյաների հետ[600]: Շուտով Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում արձանագրվում էր, որ Հայաստանի նկատմամբ կիրառվող ճնշամիջոցները իրականում ուղղված են անկախության օրինական գործընթացի դեմ[601]: Մինչ այդ՝ մայիսի 6-ին, Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանը Մոսկվայում անսահման աջակցություն էր հայտնել Գորբաչովին եւ նրա վարած քաղաքականությանը: Քիչ անց, սակայն, Փարիզում զանգվածային ցույցերից հետո, արտաքին գործերի նախարար Ռ. Դյուման Հայաստանի իրադրությունը գնահատեց որպես «ծայրահեղ վտանգավոր» եւ հայտարարեց, որ Ֆրանսիան մտադիր է բացատրություն պահանջել ԽՍՀՄ իշխանություններից[602]: Մայիսի 15-ին Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանը դիվանագիտական դեմարշ կատարեց ԽՍՀՄ ԱԳՆ-ում: Օրեր անց՝ մայիսի 22-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական ընդունելությունը Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանի կողմից արդեն կարեւոր վկայությունն էր այն հանգամանքի, որ միջազգային հանրությունը սկսել է ավելի լուրջ վերաբերվել անկախության ուղին բռնած հանրապետություններին եւ կարող է այլեւս այդքան հանդուրժող չլինել Գորբաչովի ներքին քաղաքականության մեջ դրսեւորվող բռնությունների նկատմամբ: Հանդիպման ընթացքում, բնականաբար, քննարկվել էր նաեւ Կենտրոնի կողմից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վրա գործադրվող բռնաճնշումների հարցը[603]: Հունիսի սկզբներին խնդրին միջամտել էին նաեւ Եւրոպական Միության անդամ 12 պետությունները, որոնք ԽՍՀՄ-ից պաշտոնապես տեղեկություններ էին պահանջվել Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտում խորհրդային զորքերի գործողությունների վերաբերյալ[604]: ԱՄՆ-ի Սենատը մայիսի 17-ին ԽՍՀՄ իշխանություններին ուղղված խիստ դատապարտող բանաձեւ ընդունեց Ադրբեջանում եւ Հայաստանում հայ քաղաքացիների նկատմամբ բռնությունների առիթով՝ կոչ անելով առաջացած հարցերը լուծել բանակցությունների միջոցով[605]: Իսկ ԱՄՆ-ի Կոնգրեսը հունիսի 15-ին կրկին դատապարտեց այդ գործողությունները, նաեւ «խոր մտահոգություն» հայտնեց անկախության ձգտող հանրապետություններին ճնշելու քաղաքականության առիթով[606]: Մոսկվայի համար ոչ բարենպաստ կարծիք արտահայտեց ԱՄՆ Պետդեպարտամենտը: Խնդրի մասին սկսեցին գրել եւ մեկնաբանություններ անել աշխարհի ազդեցիկ թերթերը: Քաղաքական փաստաթղթերը, ակտիվ տեղեկատվությունը եւ դեպքերի մասին միջազգային կարծիք ստեղծելը կարեւոր զսպող նշանակություն ունեցան:

Բռնի ուժին հակադրած ինքնապաշտպանական եւ քաղաքական միջոցներով պայքարի զուգակցումը ավարտվեց հաջողությամբ: Կարելի է ասել, որ այդ պայքարում Հայաստանի իշխանությունները տարան շատ կարեւոր քաղաքական հաղթանակ: Բնականաբար, եղան կորուստներ, սակայն ռազմական ճնշման պիկը էականորեն տեղի տվեց: Հունիս-հուլիս ամիսներին Լեռնային Ղարաբաղի տարբեր բնակավայրերում ճնշումներ եւ տեղահանման փորձեր եթե լինում էին, ապա՝ ապարդյուն: Ավելին՝ օմոնականների կողմից գրավված մի շարք բնակավայրեր հնարավոր եղավ ազատագրել: Կենտրոնը այս փուլում չհասավ իր առջեւ դրած նպատակին՝ ո՛չ ծրագրված զանգվածային տեղահանությունների, ո՛չ էլ Հայաստանում ներքաղաքական վիճակը ապակայունացնելու եւ նրան անկախության ճանապարհից հետ պահելու հարցում: Երկրի ներքին կայունությունը չխաթարվեց, նոր իշխանությունների քաղաքականությունը եւ քաղաքական գիծը հաջողությամբ դիմագրավեցին ծանր փորձությունը եւ կարեւոր ու դժվարին քննություն բռնեցին: Դրա յուրօրինակ ապացույցը, թերեւս, հունիսի 5-ին Գերագույն խորհրդի նիստում հարուցված՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին անվստահություն հայտնելու հարցի քվեարկության արդյունքն էր: Երկրի օրենսդիր մարմինը, փաստորեն՝ միաձայն, վստահության քվե տվեց նրա վարած քաղաքականությանը[607]:

---

[600] *Այդպես է գնահատում այցը նաեւ Փարիզում հրապարակվող «Յառաջ» թերթը. «Մայիսի սկզբի օրերուն հոս կգտնվեր Գերագույն խորհրդի փոխնախագահը՝ Բաբկեն Արարքցյան.... ան իր տեղեկատվությամբ, լուսաբանություններով որոշապես օժանդակեց ֆրանսիական հանրային կարծիքին մոտ հարցին մասին ճիշտ ընկալում ստեղծելուն ու հետաքրքրության» («Յառաջ» 12.06.1991):*

[601] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն, 14.05.1991:*

[602] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21.06.1991:*

[603] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 207-215:*

[604] *«Հայաստանի Հանրապետություն», 31.08.1991:*

[605] *Տե՛ս «Ազգ» 22.05.1991:*

[606] *Տե՛ս «Ազգ», 29.07.1991:*

[607] *Մանրամասն տե՛ս հաջորդ վերնագրի տակ:*

Մոսկվան չլուծեց «Կոլցո» գործողությամբ ծրագրած իր հիմնական՝ Լեռնային Ղարաբաղը հայությունից դատարկելով, կամ նման իրական սպառնալիք ստեղծելով, Հայաստանի անկախության գործընթացը խաթարելու խնդիրը: Եւ այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի նկատմամբ Մոսկվայի եւ Ադրբեջանի բացահայտ ագրեսիան հանրապետությունում որոշ չափով մեծացրեց ներքաղաքական լարվածությունը, նպաստեց հակաանկախական ուժերի ակտիվացմանը:

թ) Հանրապետության քաղաքական իրավիճակի եւ նրա կարգավորման մեխանիզմների քննարկումները Գերագույն խորհրդում

Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում Մոսկվայի ռազմական ճնշումները, ինչպես ասվեց, նպատակ ունեին կասեցնել Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը եւ ստիպել նրան ստորագրել միութենական պայմանագիրը: ԽՍՀՄ-ում տեղի ունեցող իրադարձությունները գտնվում էին միջազգային հանրության ուշադրության կիզակետում, ուստիեւ, հասկանալի է, որ Մոսկվան իր այս նպատակը բացեիբաց ո՛չ պետք է խոստովաներ, ո՛չ էլ նման պայման դներ: Նա այդ նպատակին հույս ուներ հասնել միջնորդավորված ձեւով՝ ժողովրդավարական իշխանության դեմ հասարակական դժգոհությունների ալիք բարձրացնելու, հանրապետությունում ներքին իրավիճակի ապակայունացման ճանապարհով: Իսկ հայաստանյան հասարակությունն ամենից ավելի զգայուն էր հենց Ղարաբաղի հարցի նկատմամբ: Այստեղ էական կորուստները եւ անհաջողությունները կարող էին բերել մի քանի կարեւոր քաղաքական հետեւանքների: Առաջին՝ դրանք կհեղինակազրկեին անկախության ընթացք որդեգրած իշխանությանը: Երկրորդ՝ կծառայեին որպես փաստարկ ու հաղթաթուղթ՝ միութենական պայմանագիրը ստորագրելու կողմնակից քաղաքական եւ հասարակական ուժերի ակտիվացման համար: Երրորդ՝ դրանք կարող էին ծայրահեղ քայլերի առիթ տալ «արմատականներին»՝ որոնք, արտաքինից համարձակ, «հայրենասիրական» ու տպավորիչ լինելով, իրականում կարող էին Կենտրոնին նոր իրավական հիմք մատուցել՝ առավել կոպիտ միջամտության, ընդհուպ՝ հանրապետության ողջ տարածքի օկուպացիայի համար: Այսինքն՝ եթե Հայաստանում անկախության դեմ գործող ուժերը՝ գիտակցված, ապա «արմատականները»՝ գուցե ակամա, իրենց գործողություններով, վերջին հաշվով, նպաստելու էին Կենտրոնի քաղաքական ծրագրեր իրականացմանը: Եւ վերջապես՝ Ղարաբաղում անհաջողությունները, բռնագաղթվածների նոր մեծ հոսքով, կարեին Հայաստանում առանց այն էլ ծանր սոցիալական իրավիճակը: Եւ այս ամենը ուղղվելու էր անկախության գործընթացը խաթարելուն, հանրաքվեի անցկացումը վիժեցնելուն:

Մոսկվայի հաշվարկները մասամբ արդարացան, բայց ոչ այն չափով, որ վճռական նշանակություն ունենային հետագա քաղաքական գործընթացների համար: Իրոք, այդ շրջանում ակտիվացան միութենական պայմանագրին միանալու եւ անկախության հանրաքվեից հրաժարվելու կողմնակից հայտնի ուժերը՝ Կոմկուսը եւ ՀՅԴ-ն: Նրանք ավելի համարձակ սկսեցին պնդել, որ Ղարաբաղը կկորցնենք, եթե շարունակենք համառել անկախության գործընթացի հարցում: Ինչպես միշտ նման դեպքերում, այս ուժերի հետ էր նաեւ իր դիրքերն ու արտոնությունները կորցրած նախկին նոմենկլատուրային մտավորականությունը:

Սակայն այս մարտահրավերին դիմակայելու իր հաշվարկներն ուներ նաեւ Հայաստանի իշխանությունը՝ հենված սեփական ուժերի եւ այլ ռեսուրսների վրա, եւ, ի տարբերություն Մոսկվայի, այդ հաշվարկները, վերջին հաշվով, արդարացան ոչ թե մասամբ, այլ ամբողջովին:

Ապրիլի վերջին տասնօրյակից սկսած, շուրջ մեկ ամիս, հանրապետության օրենսդիր մարմինը, փաստորեն, ստիպված էր մի կողմ թողնել իր օրինաստեղծ գործունեությունը եւ զբաղվել միայն կատարվող դեպքերին հայտարարություններով ու դիմումներով արձագանքելով, տեղերում լինելով եւ գործնական օգնությամբ: Քաղաքական ընդդիմությունը, որ Լեռնային Ղարաբաղում շարունակվող իրադարձությունները փորձում էր ներկայացնել որպես Հայաստանի իշխանությունների վարած սխալ քաղաքականության հետեւանք, մայիսի կեսերին, երբ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում իրադարձությունները դեռ բարձրակետի վրա էին, պահանջեց հանրապետության ներքաղաքական իրավիճակի խորհրդարանական քննարկում[608]: Այս պահանջն ամբողջությամբ տեղավորվում էր Կենտրոնի ծրագրի շրջանակներում: Դրանով, թերեւս, պետք է ստուգվեր մի կողմից՝ Մոսկվայի ռազմական ճնշումների հետեւանքով առարկայացած քաղաքական արդյունքը, մյուս կողմից՝ փորձ արվեր լրացուցիչ ազդակ տալ ներքաղաքական իրավիճակի ապակայունացմանը: Հարցը հնարավոր եղավ հետաձգել եւ քննարկման առարկա

[608] *Տե՛ս «Ավանգարդ», 25.05.1991:*

դարձնել ավելի ուշ՝ հունիսի 5-ին: Գերագույն խորհրդի օրակարգում այն ընդգրկվել էր՝ «Հանրապետության քաղաքական իրավիճակի մասին» ձևակերպմամբ[609]:

Կոմունիստների եւ Դաշնակցության հարցադրումը, ինչպես եւ կարելի էր սպասել, վերաբերում էր միութենական պայմանագրին միանալուն՝ դա համարելով միակ միջոցը, որով կարելի էր կանխել Մոսկվայի ռազմական ճնշումները Ղարաբաղում եւ Հայաստանում: Դաշնակցության պաշտոնական տեսակետը, որ ներկայացրեց այս կուսակցության խմբակցության նախագահ Մեխակ Գաբրիելյանը, այսպիսին էր. հրաժարվել սեպտեմբերի 21-ին նշանակված հանրաքվեից, կազմել տնտեսական զարգացման ծրագիր, այն իրագործել եւ նոր միայն մտածել հանրաքվեի մասին: Մինչ այդ՝ բանակցություններ վարել Կենտրոնի հետ՝ «քննելու կարելիությունները ամենից նպաստավոր այն դրվածքի, որի շնորհիվ, ներկա փուլում, **Հայաստանի մասնակցությունը գերիշխան հանրապետությունների միությանը** ընդունելի կարող է լինել հայ ժողովրդի համար եւ չհակասել անկախության գաղափարին»[610]:

«Արմատական» թայլերի կողմնակից պատգամավորների կողմից հնչում էին իշխանությանն ուղղված տրամագծորեն հակառակ բնույթի պահանջներ եւ մեղադրանքներ. թե իբր՝ Լեռնային Ղարաբաղի հարցում քաղաքականությունը գաղտնի է տարվում, արտաքին քաղաքականությունն ընդհանրապես միագիծ է եւ ոչ ճկուն, ինչի հետեւանքով անտեղի հարվածներ ստացանք Մոսկվայից: Իսկ որպես ներքաղաքական իրավիճակի կայունացման միջոց՝ պահանջում էին կոալիցիոն կառավարության ստեղծում[611]:

Քննարկման վերջում Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հիմնավորապես եւ փաստերով մերժեց բոլոր մեղադրանքները եւ արտահայտեց անկախության ընտրված ճանապարհով առաջ գնալու՝ իշխանության աներեր վճռականությունը: Նա նաեւ հայտարարեց, որ իշխանությունները չեն ենթարկվելու անօրինական ճնշումների որեւէ ուժի կողմից.

«Մեզ հիմա կողքից փորձում են ճնշել խորհրդարանից դուրս գտնվող ուժերը: Դրանք մտավորականներն են, Արցախի ներկայացուցիչները,

[609] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 10, հոդվ. 197:*
[610] *«Հորիզոն», 17.07.1991:*
[611] *Տե՛ս «Հայք» 19.06.1991:*

Սփյուռքում՝ դաշնակցականները, որոնք փորձում են մեզ քաղաքականություն թելադրել: Մենք պատրաստ ենք լսել ցանկացած քննադատություն, ցանկացած հայհոյանք, վարկաբեկիչ խոսքեր: Մենք պատրաստ ենք լսել ցանկացած առաջարկ՝ մեր քաղաքականության մեջ օգտագործելու համար: Բայց ոչ ոք թող չհավակնի, որ ժողովրդի կողմից ընտրված իշխանություններին հնարավոր է քաղաքականություն թելադրել: Քաղաքականություն վարելու այլ ձեւ չկա. քաղաքականությունը վարում են միայն ժողովրդի կողմից ընտրված իշխանությունները: Կուսակցություններն ունեն հնարավորություններ, մամուլ, ակումբներ, միտինգների հնարավորություններ: Այդ միջոցներով նրանք պետք է կարողանան համոզել ժողովրդին, որպեսզի մյուս ընտրություններում իրենք ընտրվեն իշխանության գլուխ եւ տանեն իրենց քաղաքականությունը: Կա նաեւ մի այլ ձեւ՝ դա այն ձեւն է, որ ՀՀՇ-ն էր իրականացնում: Մենք կարողանում էինք ազդել զանգվածների վրա, զանգվածների ճնշումով ստիպել այն խորհրդարանին, որ ժողովրդավարական ընտրություններով չէր ընտրված, իրականացնել մեր ծրագիրը, իրականացնել այնպիսի որոշումներ, որոնք բխում էին մեր ծրագրից: Խնդրեմ, կազմակերպեք միտինգներ, համոզեք ժողովրդին, որ խորհրդարանը լավ չի աշխատում, թող օրինականության սահմաններում գան, ճնշում գործադրեն խորհրդարանի վրա: Օրենքի ոչ մի խախտում մենք թույլ չենք տա»[612]:

Քննարկման ավարտին ՀՅԴ խմբակցության անդամ Իգոր Մուրադյանն առաջարկեց անվստահություն հայտնել Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Անգամ տեղի ունեցած բուռն քննարկման եւ հնչած բազմազան քննադատական ելույթների ֆոնի վրա առաջարկն անակնկալ էր ու անտրամաբանական: Այն, անշուշտ, նախապես մշակած ծրագրի ավարտական քայլն էր, կուլմինացիան, որը պետք է պարզեր, թե այդ մեկուկես ամսվա ճնշումները եւ լարված իրադարձություններն ինչպիսի արդյունք են տվել իշխանությունների ու նրա ղեկավարի հեղինակության ու վստահության նվազման առումով: Խորհրդարանը մերժեց հարցն օրակարգ մտցնել[613]: Սակայն հենց Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի պնդմամբ անվստահություն հայտնելու հարցը դրվեց քվեարկության: Բուռն քննարկումների ընթացքում բարձրացված աղմուկի

[612] *ՀՀԱՆԱ, թղթ. 12/05.06.91, թ. 7բ (Լ. Տեր-Պետրոսյանի ելույթ ՀՀ ԳԽ նստաշրջանում 05.06.1991):*
[613] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 11, հոդվ. 230:*

ֆոնին ավելի անսպասելի էին քվեարկության արդյունքները. անվստահություն հայտնելուն կողմ քվեարկեց 3, դեմ՝ 153 եւ ձեռնպահ՝ 8 պատգամավոր[614]: Լեւոն Տեր-Պետրոսյանն, փաստորեն, 95%-ով վստահության քվե ստացավ, ինչը նշանակում էր, որ իշխանության բարձրագույն մարմինը լիակատար հավանություն է տալիս երկրի ղեկավարի վարած ընդհանուր քաղաքական կուրսին, այդ թվում՝ նաեւ Ղարաբաղի հարցում, ինչը նշանակալից էր երկրի համար հենց այդ ամենածանր պահին: Այն նաեւ հստակ ցույց տվեց, որ գործող ընդդիմադիր ուժերը ոչ թե պայքարում են իշխանության գալու եւ իրենց վրա քաղաքական պատասխանատվություն վերցնելու, այլ ընդամենը (ոմանք՝ հասկանալով, ոմանք՝ գուցե ակամա) ներքաղաքական իրավիճակի ապակայունացման նպատակ ունեին, որից հետո հաջորդ քայլերը պետք է անեին բոլորովին ուրիշները: Իսկ երկրի ղեկավարի նկատմամբ վստահության չափի որոշման խնդիրը ստանձնել էր Դաշնակցությունը: Մինչդեռ ստացվեց ճիշտ հակառակ արդյունքը: Ստացվեց, որ Կենտրոնի գործադրած ճիգերը՝ պետական ահաբեկչությունն ու ռազմական ագրեսիան, քաղաքական առումով որեւէ արդյունք չէին տվել, եւ Մոսկվան չէր կարող դա հաշվի չառնել: Այս փաստն, անշուշտ, տպավորիչ նշանակություն պետք է ունենար նաեւ ԽՍՀՄ-ի ներքաղաքական զարգացումներին ուշադրությամբ հետեւող միջազգային հանրության համար: Կարելի է չկասկածել, որ անվստահության հարցի քվեարկությամբ իր համար ավելի բարենպաստ արդյունք ստանալու դեպքում Կենտրոնը պետք է համարեր, որ իր ուժային քաղաքականությունը հաջողության է հանգեցրել անկախության գնացող հանրապետության դեմ, ոգեւորվեր դրանով եւ Ղարաբաղում ու Հայաստանում ճնշումների չափը ավելի մեծացնելու հիմքեր ստանար: Գերագույն խորհրդի նախագահի նկատմամբ արտահայտված բացարձակ վստահությունը Մոսկվային նման հիմքեր չտվեց:

ժ) Կառավարման արդյունավետությանն ուղղված քայլեր

Հունիսի 5-ի քաղաքական քննարկումների ընթացքում օրակարգային հարցի երկրորդ մասի՝ «կարգավորման մեխանիզմների» հետ կապված՝ արվել էին բազմաթիվ առաջարկություններ: Խնդիրը, որպես այդպիսին,

[614] *Տե՛ս «Հայք» 19.06.1991; «Ազգ» 08.06.1991:*

իրոք, օբյեկտիվորեն գոյություն ուներ: Իշխանական համակարգում Անկախության հռչակագրի դրույթների հիման վրա կատարվել էին որոշ բարեփոխումներ: Սակայն խորհրդային այդ համակարգն ամբողջությամբ, մասնավորապես՝ իշխանության թեւերի, հանրապետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ հարաբերություններն ու իրավասությունները հստակեցման կարիք ունեին: Նախկինում իշխանության սահմանադրական մարմինների իրավասություններն ու նրանց փոխհարաբերությունները կանոնակարգված էին այն հաշվով, որ իրական իշխանությունը գտնվում էր իշխող կոմունիստական կուսակցության մարմինների ձեռքում, եւ վերջիններս էին նրանց միջեւ կապի, համաձայնեցնողի, կարգավորող-կարգադրողի դեր խաղում: ՀՀԾ-ն կուսակցապետության մերժման եւ ժողովրդավարության հաստատման իր սկզբունքներից ելնելով, բնականաբար, հրաժարվեց կարգավորող-կարգադրողի այդ դերից: Եւ այժմ իշխանական համակարգում այս առանցքային կուսակցական օղակը չկար, ինչի հետեւանքով իշխանության իրականացման ու կառավարման արդյունավետության մակարդակը մնում էր ցածր, իսկ օրենքները շրջանցելու, բյուրոկրատական քաշքշուկի, չինովնիկական կամայականությունների, նույնիսկ նենգադուլի հնարավորության դաշտը բավականին մեծ էր: Վերջին երեւույթներին հատկապես նպաստել էին խորհրդարանի կողմից Նախարարների խորհրդի նախագահին 1990 թ. նոյեմբերի 30-ին տված՝ փաստորեն արտակարգ լիազորությունները: Կառավարությունը միանձնյա կազմավորելուց հետո Վ. Մանուկյանն այդ լիազորություններն օգտագործում էր խորհրդարանական վերահսկողությունից դուրս գալու եւ գործադիր իշխանության կառույցը յուրատեսակ քաղաքական կազմակերպության վերածելու համար: Գործող Սահմանադրությամբ բարձրագույն իշխանության կրողը մնալով հանդերձ՝ Գերագույն խորհուրդը հաճախ մնում էր խաղից դուրս վիճակում:

Խնդրի հրատապությունը եւ շուտափույթ լուծելու անհրաժեշտությունը շեշտվեց հատկապես վերջին մեկ-մեկուկես ամսվա լարված իրադարձությունների ֆոնին: Ամենօրյա օպերատիվ քաղաքականություն իրականացնելու համար, մեկ ամիս լիազորությունների ժամկետով, Գերագույն խորհուրդն ապրիլի 30-ին ստեղծել էր արտակարգ մի մարմին (Արտակարգ իրավիճակի հանրապետական ժամանակավոր խորհուրդ)՝ Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունների կազմով եւ խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ղեկավարների մասնակցությամբ: Այդ ժամկետն ավարտվել էր, մինչդեռ իրավիճակում

փոփոխություններն առայժմ էական չէին, եւ նույն անհրաժեշտությունը դեռ պահպանվում էր: Գերագույն խորհուրդն իր մեծ կազմով ծանրաշարժ էր՝ այդ խնդիրն իրականացնելու համար, բացի այդ, նա չէր հասցնում կատարել իր հիմնական՝ օրինաստեղծ գործառույթները: Գործնական քաղաքականության ամենօրյա հարցերով կարող էր զբաղվել նրա Նախագահությունը: Սակայն վերջինս էլ, մի կողմից՝ չուներ դրա համար անհրաժեշտ լիազորություններ, բացի այդ, կազմված լինելով հիմնականում պարզ մասնագիտական հատկանիշների հիման վրա ընտրված մշտական հանձնաժողովների նախագահներից՝ այն դժվարություն պիտի ունենար կատարելու ամենօրյա գործնական քաղաքականություն վարելու գործառույթը: Այսինքն՝ ավելի քան բնական էր, որ վերոհիշյալ հարցի քննարկման ժամանակ պետք է արվեին առկա այս խնդիրն ինչ-որ կերպ լուծելու, վիճակը շտկելու արդյունավետ ձեւերի անցնելու առաջարկներ: Արված առաջարկների հիմնական մասը վերաբերում էր Գերագույն խորհրդի նախագահության կազմավորման սկզբունքների վերանայմանը, նրա կազմի ընդլայնմանը եւ լիազորությունների ընդարձակմանը: Գոյություն ունեցող տնտեսական եւ քաղաքական շարունակվող անկայուն իրավիճակում այդպիսի մարմնի օգնությամբ ՀՀ Գերագույն խորհրդի աշխատանքը կդառնար առավել ճկուն, կմեծանար հարափոփոխ իրադարձություններին արագ արձագանքելու, հրատապ տնտեսական, քաղաքական եւ ազգային անվտանգության խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելու, ընդհանրապես՝ նրա աշխատանքի արդյունավետությունը: Այսինքն՝ առաջարկվող փոփոխությունները պայմանավորված էին օբյեկտիվորեն գոյություն ունեցող մի շարք իրական հանգամանքներով: Սահմանադրական հանձնաժողովը արված առաջարկների հիման վրա էլ մշակել էր օրենքի նախագիծ. «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության կազմավորման կարգի փոփոխության եւ նրա լիազորությունների ընդլայնման մասին»: Նախագահությանը տրվող լրացուցիչ լիազորությունները նախատեսվում էին մինչեւ նոր Սահմանադրության ընդունումը, բայց ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով:

Քաղաքական ընդդիմությունը՝ թե՛ «արմատականները», թե՛ միութենական պայմանագրի կողմնակիցները, որպես կարգավորման այս մեխանիզմի այլընտրանք՝ պահանջում էին կառավարության հրաժարական եւ կոալիցիոն կառավարության ստեղծում: Որոշ ուժեր՝ ԱԻՄ-ը, ՀՀԿ-ն եւ ՀՔԴՄ-ն, առաջարկում էին նաեւ Հանրապետության Նախագահի պաշտոն հիմնել:

Բուռն քննարկումներից հետո հունիսի 19-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանձնարարել Սահմանադրական հանձնաժողովին՝ լրամշակել «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության կազմավորման կարգի փոփոխության եւ նրա լիազորությունների ընդլայնման մասին» օրենքի նախագիծը[615]: Հինգ քաղաքական կազմակերպությունների՝ ՀՅԴ, ԱԻՄ, ՍԻՄ, ՀՔԴՄ, ՀՀԿ, ներկայացուցիչները, որպես բողոքի նշան, բոյկոտեցին քվեարկությունը եւ լքեցին դահլիճը: Սույն ակտից առաջ Դաշնակցության խմբակցության ղեկավար Մեխակ Գաբրիելյանը հայտարարեց խորհրդարանում եւս հինգ պատգամավորների՝ որպես ՀՅԴ անդամներ «բացահայտվելու» մասին: Կոմունիստական եւ դաշնակցական մամուլը կատաղի քարոզարշավ սկսեց ԳԽ օրենսդրական այս նախաձեռնության դեմ[616]: Օրինագծի վերջնական ընդունումը հունիսի 24-ի նիստում տապալվեց: Դրան մեծապես նպաստեց կառավարության նախագահ Վազգեն Մանուկյանի անսպասելի ելույթը[617]:

Հունիսի 24-25-ին քննարկման առարկա դարձավ նաեւ մինչ այդ Գերագույն խորհրդի նախագահության կողմից նախապատրաստված առաջարկությունը՝ Հանրապետության Նախագահի պաշտոն հիմնելու մասին: Խնդիրը թելադրված էր նույն՝ իշխանության համակարգի հստակեցման եւ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ: Սակայն մինչեւ Նախագահի ընտրությունը չէր կարելի պահպանել կառավարման համակարգի այն վիճակը, ինչ գոյություն ուներ հանրապետությունում: Օպերատիվ կառավարման քաղաքական մարմնի անհրաժեշտությունը չէր վերացել, քանի որ չէր վերացել դրա հիմքը. Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում իրավիճակը շարունակում էր մնալ տագնապալի եւ ամեն պահի կարող էր վերադառնալ մայիսյան ծանրագույն օրերին: Այդ հանգամանքն իր հերթին նպաստում էր հանրապետության ներսում կարգուկանոնի եւ կայունության թուլացմանը: Ուստիեւ խորհրդարանում կրկին բարձրացվեց նույն հարցը, եւ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը խորհրդարանին առաջարկվեց ընտրություն կատարել հնարավոր երեք տարբերակների միջեւ. ա) լրացուցիչ լիազորություններով օժտել ԳԽ նախագահին կամ ԳԽ գործող նախագահությանը, բ) խորհրդարանը պետք է աշխատի առանց արձակուրդի՝

---

615 Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 12, հոդվ. 246:

616 Տե՛ս հատկապես «Դրոշակ», 03.07.1991:

617 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն»:

մինչեւ Հանրապետության Նախագահի ընտրությունը, գ) հետ վերցնել Գերագույն խորհրդի՝ 1990թ. նոյեմբերի 30-ին կառավարությանը եւ նրա նախագահին տված արտակարգ լիազորությունները[618]: Գերագույն խորհուրդը քվեարկեց երրորդ տարբերակի օգտին՝ չեղյալ հայտարարելով 1990 թ. նոյեմբերի 30-ի իր որոշումը[619]:

ժա) Հանրապետության Նախագահի պաշտոնի հիմնումը

Հանրապետության Նախագահի պաշտոն հիմնելու գաղափարը նոր չէր: ԽՍՀՄ Նախագահի պաշտոն հիմնելուց հետո հանրապետությունները նույնպես հետեւում էին այդ օրինակին: Դեռ Հայաստանի կոմունիստական խորհրդարանը նախագահական պաշտոն հիմնելու օրենք էր նախաձեռնել, սակայն այդպես էլ չհաստատեց այն ընդունել եւ ընտրություն իրականացնել: Այդ ճանապարհով էին գնացել Ռուսաստանը, Վրաստանը, Մերձբալթյան հանրապետությունները: Նախագահական հանրապետության գաղափարը անվերապահորեն պաշտպանեցին ՀՀՇ-ն եւ ԱԻՄ-ը: Իշխանության գործող կառուցվածքի անարդյունավետության եւ նախագահական հանրապետության իշխանական համակարգի օգտին էր մինչ այդ արտահայտվել նաեւ Վազգեն Մանուկյանը. «Մեր հանրապետության իշխանության կառուցվածքը չի համապատասխանում այն խնդիրներին, որոնք դրված են մեր ազգի առջեւ: Իմ կարծիքով՝ Հայաստանին հիմա պետք է միաձույլ իշխանություն. պրեզիդենտական հանրապետություն պետք է դառնանք, որպեսզի կարողանանք մանեւրել...»[620]:

ՀՀՇ վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը ներկայացրեց նախագահական համակարգի անցնելու մասին կազմակերպության հանրապետական խորհրդի դրական որոշումը: Պ. Հայրիկյանն, իր հերթին, ներկայացրեց ԱԻՄ-ի նույնպիսի որոշումը: Նախագահի պաշտոն հիմնելուն

[618] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 12, էջ 18:*

[619] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 12, հոդվ. 251:*

[620] *«Հայաստանի Հանրապետություն», 14.05.1991: Քիչ անց, երբ պարզ դարձավ, որ այդ պաշտոնում իր ընտրվելու հնարավորությունը չկա, Վազգեն Մանուկյանը եւ իր նոր ստեղծած ԱԺՄ կուսակցությունը անցան հակառակ՝ խորհրդարանական հանրապետություն ունենալու տեսակետին:*

դեմ էին Կոմկուսը[621] եւ Դաշնակցությունը: Այս հարցով հունիսի 24-ին սկսված քննարկումը շարունակվեց նաեւ հաջորդ օրը եւ ավարտվեց Հայաստանի Հանրապետությունում Նախագահի պաշտոն հիմնելու որոշման ընդունմամբ[622]: Սահմանադրական հանձնաժողովը եւ Գերագույն խորհրդի համապատասխան հանձնաժողովները հանձնարարություն ստացան 20 օրվա ընթացքում ներկայացնել Հանրապետության Նախագահի մասին օրենքի եւ համապատասխան սահմանադրական փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր: Որոշվեց նաեւ Հանրապետության Նախագահի ընտրությունները նշանակել 1991թ. հոկտեմբերի 16-ին[623]: Հանրապետության Նախագահի մասին օրենքն առաջին ընթերցմամբ ընդունվեց հուլիսի 22-ին՝ չորսօրյա բուռն քննարկումներից հետո, իսկ օգոստոսի 1-ին՝ ընդունվեց ամբողջությամբ: Օրենքը սահմանեց, որ Հանրապետության Նախագահը պետք է ընտրվի համաժողովրդական ուղիղ քվեարկությամբ, իսկ թեկնածու կարող են լինեն միայն նրանք, ովքեր նվազագույնը 10 տարվա մշտական բնակություն ունեն Հայաստանում[624]:

ժբ) Ռազմական ճնշումների նոր փուլը Շահումյանի շրջանում, «Կոլցո» գործողության քաղաքական նպատակի ձախողումը

Հարաբերական որոշ դադարից հետո հայկական բնակավայրերից բնակչության տեղահանման փորձերը Լեռնային Ղարաբաղում եւ Շահումյանի շրջանում նորից ակտիվացան: Մոսկվան, որքան էլ որ հաջողություններ չէր հասել, վերջնականապես չէր հրաժարվել Ղարաբաղի վրա Ադրբեջանի հետ միասին ռազմական ճնշում գործադրելով՝ Հայաստանի անկախության ընթացքը խոչընդոտելու իր ծրագրից: Ազդակները, որ նրան նոր հույս էին ներշնչել, Հայաստանում քաղաքական այն ուժերի նոր ակտիվացումն էր, որոնց մի մասը պահանջում էր «Ղարաբաղը փրկելու հա-

[621] *Եւ դա այն դեպքում, երբ ընդամենը մեկ տարի առաջ կոմունիստական ԳԽ-ը ընդունել էր Նախագահի մասին օրենք եւ ջանում էր հապշտապ կազմակերպել նաեւ նախագահի ընտրություններ:*

[622] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 12, հոդվ. 248: Ջնայած քննարկումների ընթացքում ընդդիմադիրների բուռն հակազդեցությանը՝ կողմ քվեարկեց 154, դեմ 8, ձեռնպահ 11 պատգամավոր (տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 12/25.06.91, թ. 16բ):*

[623] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 12, հոդվ. 249:*

[624] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 15, հոդվ. 316:*

մար» հրաժարվել անկախության հանրաքվեից եւ մասնակցել միութենական պայմանագրին (կոմունիստներ, դաշնակցականներ, հայաստանաբնակ ղարաբաղցի պաշտոնյաներ ու մտավորականներ եւ այլն): Այդ ուժերի՝ Մոսկվայի եւ Ադրբեջանի բռնաճնշումներին նպաստող վարքագծի մասին հերթական անգամ զգուշացրեց Լեւոն Տեր-Պետրոսյանը Գերագույն խորհրդի նստաշրջանում. «Ես կարծում եմ հակառակը՝ Արցախում բռնությունները շարունակվում են, խորանում են հենց այդ մարդկանց պատճառով, որոնք այսպիսի կոչերով, այսպիսի զգացմունքներ առաջացնելով մեր ժողովրդի մեջ՝ Մոսկվային հույսեր են ներշնչում, որ Հայաստանում կարող է ստեղծվել այնպիսի սոցիալական բազա, որի վրա Մոսկվան կարող է հենվել եւ պահպանել Հայաստանը Խորհրդային Միության կազմում: Մոսկվան միայն այն ժամանակ կդադարեցներ ճնշումները, երբ համոզվեր, որ Հայաստանում ոչ մի սոցիալական բազա չունի»[625]: Ընդ որում՝ նրանց տեղեկացվեց նաեւ, որ հենց Միութենական այդ պայմանագիրը ստորագրելով մենք կկորցնենք Ղարաբաղը՝ նույն այդ պայմանագրում առկա դրույթների շնորհիվ. «Այնտեղ երկու կետ կա, որով, փաստորեն, մենք մեր ձեռքով թաղում ենք Արցախի հարցը: Առաջին կետն այն է, որ յուրաքանչյուր հանրապետություն ինքն է որոշում իր վարչատարածքային միավորների հարցը: Եթե մենք սա ստորագրենք, Ադրբեջանը վաղը պարզապես կարող է ավտոնոմիան ցրել՝ ստացած լինելով նաեւ մեր համաձայնությունը: Երկրորդ կետն այն է, որ պայմանագիրը ստորագրում են այն հանրապետությունները, որոնք ճանաչում են այն սահմանները, որոնք գոյություն ունեն այսօր: Եթե մենք ստորագրենք այս պայմանագիրը, մենք վերջնականապես կորցնում ենք Արցախը՝ արդեն իրավական հիմք տալով Ադրբեջանին»[626]:

Ընդդիմության մյուս մասը՝ «արմատականները», թե՛ Ղարաբաղի, թե՛ անկախության հարցում առաջ էր քաշում բացահայտ առճակատման, ծայրահեղական եւ վտանգավոր պահանջներ: Դժվար է ասել, թե բացի սեփական ինքնահաստատման խնդրից, նրանք գիտակցո՞ւմ էին արդյոք, որ այդօրինակ քաղաքականությունը նույնպես, վերջին հաշվով, օգտակար կլինի հենց Մոսկվայի համար, որն առավել բացահայտ ու լայնամասշտաբ ռազմական ճնշումներ գործադրելու համար իրավական հիմքեր կստանա: Բոլոր դեպքերում, ընդդիմադիր այս ուժերից թե՛ առաջինը, թե՛ երկրորդը

[625] ՀՀԱՆԱ, թղթ. 12/05.06.91 (ելույթ ՀՀ ԳԽ նստաշրջանում 05.06.1991):
[626] ՀՀԱՆԱ, թղթ. 12/25.06.91 (ելույթ ՀՀ ԳԽ նստաշրջանում 25.06.1991):

նույն դիրքերից շարունակեցին իրենց պայքարն իշխանության դեմ, ինչը եւ հույս ներշնչեց Կենտրոնին շարունակել ռազմական ճնշումները Լեռնային Ղարաբաղում:

ԽՍՀՄ Նախագահ Գորբաչովը հուլիսի 4-ին հրամանագիր ստորագրեց Շահումյանի շրջանում հաստատված հատուկ դրությունը վերացնելու մասին: Դա, ըստ էության, հանդիսացավ ռազմական նոր ճնշումների ազդանշանն ու մեկնարկը: Հատուկ դրության ռեժիմ ապահովող ներքին զորքերի ստորաբաժանումները հուլիսի 6-ին դուրս բերվեցին հայկական բնակավայրերից, եւ անմիջապես էլ սկսվեցին ադրբեջանական զինված ջոկատների հարձակումները Շահումյանի շրջանի Բուզլուխ, Էրքեջ եւ Մանաշիդ գյուղերի վրա: Ընդ որում՝ հարձակումները ղեկավարում էր Շահումյանի կուսշրջկոմի ադրբեջանցի քարտուղարը: Գրոհները ինքնապաշտպանական ուժերի կողմից հաջողությամբ ետ մղվեցին: Հուլիսի 8-ից ԽՍՀՄ պաշտպանության նախարար Յազովի հրամանով արգելվեցին Հայաստանից դեպի Շահումյանի շրջան ուղղաթիռային թռիչքները, ինչով, փաստորեն, անհնար էր դառնում նույնիսկ վիրավորների տեղափոխումը: Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ գրոհի թիրախ դարձած բնակավայրերից յուրաքանչյուրում գտնվում էր 300 հայ «գրոհային»: Հետագա օրերին գրոհները շարունակվեցին: Հարձակումների ենթարկվեցին նաեւ Կարաչինար եւ Վերիշեն գյուղերը: Ընդ որում՝ գրոհներին բացահայտ մասնակցում էին նաեւ ԽՍՀՄ 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի ստորաբաժանումները՝ օգտագործելով զրահամեքենաներ, տանկեր, «Գրադ» կայանքներ, ռազմական ուղղաթիռներ, անգամ «Միգ» կործանիչ: Ինքնապաշտպանության ջոկատներին հաջողվեց հետ մղել նաեւ ծանր տեխնիկայի ուղեկցությամբ ձեռնարկված գրոհները: Միաժամանակ «անձնագրային ռեժիմի ստուգման» պատրվակով բռնությունների ու ավազակային կողոպուտի էին ենթարկվում նաեւ Լեռնային Ղարաբաղի այլ հայկական բնակավայրեր[627]:

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունն անմիջապես հրավիրեց Գերագույն խորհրդի արտահերթ նիստ՝ քննության առնելու Շահումյանում ստեղծված իրավիճակը: Ընդունված ընդարձակ հայտարարությամբ եւս

[627] *Ահա այդ օրերին կազմված օպերատիվ տեղեկանքից մի վկայություն Ննգի գյուղում հուլիսի 4-ին կատարված այդպիսի մի ստուգման մասին. «ՕՄՕՆ-ականները եւ ռուս զինվորները ներխուժում էին տները, թալանում գյուղի բնակիչներին՝ ուժով խլելով թանկարժեք իրերը, ոսկին, փողը: Հարեւան ֆերմայում թափեցին ամբողջ կաթը՝ դեռին տապալելով եւ վիրավորելով ֆերմայի ղեկավար կնոջը» (ՀՀԱՆԱ, թղթ. 08/07.07.91, թ. 1):*

մեկ անգամ քաղաքական գնահատական էր տրվում ապրիլից ի վեր Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի նկատմամբ կենտրոնական իշխանությունների եւ Ադրբեջանի համատեղ ռազմական գործողություններին՝ դրանք համարելով «հայ ժողովրդի ահաբեկում, ճնշում Հայաստանի Հանրապետության իշխանությունների վրա՝ անկախ ժողովրդավարական պետություն կառուցելու իր քաղաքական կուրսի համար, Արցախի հայ բնակչության բռնի տեղահանմամբ ղարաբաղյան պրոբլեմի լուծում՝ հօգուտ Ադրբեջանի կոմունիստական վարչակարգի»: Կենտրոնական իշխանությունը, նրա ղեկավար Գորբաչովը եւ Ադրբեջանը մեղադրվում էին Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների եւ ՀՀ իշխանությունների բազմիցս ներկայացրած խաղաղ կարգավորման առաջարկություններից ու նախաձեռնություններից խույս տալու մեջ: Միութենական հանրապետություններին կոչ էր արվում՝ պահանջել ԽՍՀՄ ղեկավարությունից՝ դադարեցնել զինվորական ծառայության մեջ գտնվող իրենց քաղաքացիների օգտագործումը խաղաղ բնակչության դեմ պատժիչ գործողություններում: Հայտարարությունը հասցեագրված էր նաեւ Մեծ յոթնյակի երկրներին եւ նրանց ուշադրությունն էր հրավիրում «ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների բացահայտ խախտումների փաստի վրա՝ հատակ ընդգծելով դրանց ակնհայտ քաղաքական ուղղվածությունը»[628]: Երեք օր անց ՀՀ Գերագույն խորհուրդը պաշտոնապես դատապարտեց ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ. Պուգոյի հայտարարությունն այն մասին, թե, իբր, Շահումյանի շրջանի հարձակման ենթարկված բնակավայրերում խաղաղ բնակիչներ չկան, եւ դրանք վաղուց արդեն վեր են ածվել գրոհայինների հենակետերի[629]: Խաղաղ բնակչության փոխարեն «գրոհայիններ» տեսնելը կենտրոնական իշխանության մշակած ստանդարտ ձեւակերպումն էր բոլոր այն դեպքերում, երբ պատրաստվում էր բռնագաղթի ենթարկել հայկական բնակավայրերի բնակչությանը:

Հուլիսի 13-19-ին խորհրդային զորքերն ու ադրբեջանական օմոնականները, հաղթահարելով ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը, ներխուժեցին Էրքեջ, Մանաշիդ եւ Բուզլուխ, դուրս քշեցին բնակիչներին, գյուղերը ենթարկեցին կողոպուտի ու թալանի եւ հանձնեցին ադրբեջանական իշխանություններին [630]: Հուլիսի 19-21-ին զրահամեքենաներով,

[628] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 13, հոդվ. 280:*

[629] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 13, հոդվ. 285:*

[630] *Ըստ ԳԽ պատգամավոր Երջանիկ Աբգարյանի (որն այդ օրերին Գերագույն խորհրդի նախագահի կողմից գործուղված էր ռազմական գործողությունների*

տանկերով եւ ուղղաթիռներով դաժան գնդակոծության ենթարկեցին Վերին Աղջաքենդ գյուղը, ապա գրավելով՝ հանձնեցին ադրբեջանական վերաբնակիչներին: Օգոստոսի 20-21-ին նույնպիսի գրոհներով փորձ էր արվում գրավել Վերիշեն գյուղը, որտեղ ապրում էր շուրջ 5000 բնակիչ[631]: Միաժամանակ՝ ռազմական ինքնաթիռներով Լեռնային Ղարաբաղից տեղահանված մարդկանց զինվորականները բերում եւ իջեցնում էին Հայաստանի տարածքում:

Հայաստանի իշխանության հակազդեցության ձեւերն այս անգամ էլ նույնն էին՝ ըստ հնարավորին ինքնապաշտպանության գործին օժանդակելուց զատ, հիմնական ուշադրությունը դարձնել ագրեսիան կանխելու քաղաքական միջոցների վրա: Գերագույն խորհրդի նախագահը դիմում հղեց այդ օրերին Լոնդոնում հավաքվող Մեծ յոթնյակի երկրների ղեկավարներին, որպեսզի վերջիններս միջնորդեն Գորբաչովի առջեւ՝ ազատ արձակելու խորհրդային զորքերի եւ ադրբեջանական միլիցիայի կողմից պատանդ վերցրած հայազգի քաղաքացիներին կամ նրանց դեմ հարուցված քրեական գործերը տեղափոխվեն ԽՍՀՄ դատախազության վարույթ[632]: Կարեւոր էր հատկապես հուլիսի 16-ին ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած հայտարարությունը, որով պաշտպանում էր Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների՝ սահմանադրական կարգի վերականգնման միջոցով հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու կառուցողական նախաձեռնությունը[633]: Անգլիայի վարչապետ Ջ. Մեյջորը պատասխան նամակում զգուշացնում է Գորբաչովին. ԽՍՀՄ-ում կատարվող բարեփոխումներին Արեւմուտքի աջակցությունը չի կարող երկար լինել, եթե վստահ չլինեն, որ այդ փոփոխություններում կապահովվեն ժողովրդավարությունը եւ խաղաղ ընթացքը, եւ որ «բռնությունները կամ խտրականության քաղաքականությունն Անդրկովկասում կարող են միայն խարխլել այդ վստահությունը»[634]: Նույնպիսի դիրքորոշում է արտահայտում նաեւ Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանը՝ խոստանալով, որ իր

շրջան), ինքնապաշտպանության ռազմական գործը հաջողությամբ կազմակերպում էր Ֆելիքս Գզոզյանը, նրան օգնում էր Սմբատ Այվազյանը:

[631] *Այս իրադարձությունները մանրամասներն արտացոլված են դեպքերի վայր գործուղված ՀՀ ԳԽ պատգամավորներ Ե. Աբգարյանի եւ Ս. Այվազյանի կազմած օգոստոսի 24-ի թվակիր զեկուցագրում (տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 07/24.08.91):*

[632] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 02.07.1991:*

[633] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 14, հոդվ. 288:*

[634] *«Հայաստանի Հանրապետություն» 14.08.1991:*

երկիրը «կշարունակի շատ ուշադիր հետեւել Հայաստանի իրադրությանը եւ չի զլանա խորհրդային իշխանություններին ցուցադրել իր հավատարմությունը՝ սահմանային վեճերի եւ փոքրամասնությունների հարցերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների պաշտպանության» հարցերում: Նա խոստանում է նաեւ հետաքրքրվել հայազգի պատանդների ճակատագրով[635]: Կարելի է ենթադրել, որ Մեծ յոթնյակի երկրների ղեկավարներն այս հարցերով լուրջ խոսակցություն էին ունեցել Գորբաչովի հետ: Նույն հանդիպմանը մասնակցած ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշի հայտարարությունն ավելի հստակ էր արտահայտում աշխարհի վերաբերմունքի փոփոխվող ուղղությունը. «Ուկրաինայում, Ռուսաստանում, Մերձբալթիկայում եւ Հայաստանում ծաղկում է ազատության ոգին: Մենք կլինենք նրանց կողմը, ովքեր Կենտրոնում թե հանրապետություններում ձգտում են ազատության, ժողովրդավարության եւ տնտեսական ազատականության: Մեր օգնության մասին որոշումներ կընդունենք՝ հիմնվելով ոչ թե անձնավորությունների, այլ սկզբունքների վրա»[636]:

Հաջողվեց Կենտրոնի բռնությունների դեմ կրկին ոտքի հանել Ռուսաստանի ժողովրդավարական ուժերին եւ իրավապաշտպան կազմակերպություններին: Մոսկվայում այդ նպատակով հաջողությամբ աշխատում էր Հայաստանի ԳԽ-ի պատգամավորների մի խումբ: Այդ աշխատանքի շնորհիվ «Մոսկովսկի Մեմորիալ» ընկերության «Մեմորիալ» իրավապաշտպան կենտրոնը կոչ հղեց Մեծ յոթնյակի լոնդոնյան հանդիպման մասնակից երկրների ղեկավարներին, որպեսզի նրանք ազդեն նույն հավաքի մասնակից Գորբաչովի վրա՝ Լեռնային Ղարաբաղում Կենտրոնի եւ Ադրբեջանի բռնություններն ու ապօրինի գործողությունները վերացնելու համար եւ այդ տարածքում միջազգային վերահսկողություն հաստատել[637]: Հայտնի այս կազմակերպությունը մի այլ փաստաթղթով դիմեց այն հանրապետությունների ղեկավարներին, որոնք պատրաստվում էին ստորագրել միութենական պայմանագիրը: Նրանց կոչ էր արվում Ադրբեջանի հետ չստորագրել որեւէ պայմանագիր, քանի դեռ վերջինս չի դադարեցրել հայ բնակչության բռնագաղթը, բռնագաղթվածները չեն վերադարձել իրենց տները, եւ ադրբեջանական իշխանությունները չեն ապահովում մարդու

[635] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 31.08.1991:*

[636] *«Հայք» 14.08.1991:*

[637] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18.07.1991:*

իրավունքների կայուն երաշխիքներ[638]: Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանակից շրջաններում տիրող իրավիճակը ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դե Կուելյարին եւ Յոթնյակին ներկայացրեց նաեւ «Մոսկովսկայա Տրիբունա» կազմակերպությունը՝ խնդրելով միջնորդել խաղաղ բնակչության տեղահանությունները կանխելու, խոշտանգումներին վերջ տալու եւ պատանդների ազատման հարցերով: Այդ օրերին Ղարաբաղում եղավ եւ իր եզրակացությունների մասին ծավալուն մի փաստաթղթով հանդես եկավ Սախարովյան միջազգային կոնգրեսի մի պատվիրակություն՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ճապոնիայից, ԽՍՀՄ-ից[639]: Դատապարտող հայտարարություններով կրկին հանդես եկան Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների համագումարի պատգամավորական խմբակցությունները, «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժումը[640]: Ռուսաստանյան մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Կ.Մ. Ալեքսեեւսկու ստորագրած մի «Ինֆորմացիոն հաղորդագրություն» (թվագրված 08.08.1991) այսպիսի ահազանգ էր հնչեցնում. «Խորհրդային բանակը շարունակում է կրակային ապահովումը Մութալիբովի ծառաներին՝ բերքահավաքի դուրս եկած հայ գյուղացիների դեմ: Շրջափակումը վերացնելու՝ ՊՆ նախարար Դ. Յազովի խոստման փոխարեն, զորքերը սովով խեղդում են Վերիշեն գյուղի բնակիչներին եւ Մանաշիդ, Բուզլուխ, Էրքեջ գյուղերի փախստականներին, որոնց մեջ գտնվում է շուրջ 1000 երեխա: Բաքվի հեռուստատեսությամբ մեկնաբանում են Մութալիբովի երեսպաշտ դիմումները Օզալին՝ փոքրաթիվ բնակչությամբ ԼՂԻՄ-ի դեմ պայքարելու համար: Անհնար է նայել ռուսական հեռուստատեսությունը: Ժամանակը չէ՞ արդյոք դիմել ինտերբրիգադների օգնությանը՝ հայկական բնակավայրերը Մութալիբովի եւ Բուդեյկինի զինվորների սպանություններից ու թալանից պաշտպանելու համար»[641]:

Այդ օրերին Բորիս Ելցինը համաժողովրդական ընտրությամբ ընտրվել էր Ռուսաստանի Դաշնության Նախագահ: Նոր պաշտոնում նա իր առաջին պաշտոնական հանդիպումն ունեցավ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Ժողովրդավարական ուժերի մեջ մեծ հեղինակություն վայելող եւ երկրի իրական իշխանության լծակները հաջողությամբ իր ձեռքում հավաքող

[638] *Տե՛ս «Հայք», 30.08.1991:*

[639] *Տե՛ս «Հայաստան», 20.07.1991:*

[640] *Տե՛ս «Հայք», 30.08.91, «Հայաստանի Հանրապետություն» 19.07.1991 եւ այլն:*

[641] *ՀՀԱՆԱ, թղթ. 08/08.08.91:*

գործչի այս քայլը եւ ընդհանրապես՝ նրա անձնական ջերմ վերաբերմունքը Լեռն Տեր-Պետրոսյանի նկատմամբ չէին կարող գործնական նպաստավոր նշանակություն եւ հետեւանքներ չունենալ Հայաստանի համար: Ելցինի հանձնարարականով հուլիսի վերջին պատգամավորական մի խումբ մեկնեց հակամարտության գոտի՝ ուսումնասիրելու համար դրա խաղաղ կարգավորման հնարավորությունները[642]: Խմբի անդամներին Բաքվում թույլ չտվեցին մեկնել Լեռնային Ղարաբաղ, սակայն Մութալիբովը նրանց խոստացավ, որ Լեռնային Ղարաբաղում եւ հարակից շրջանների հայկական գյուղերում կդադարեցվեն անձնագրային ռեժիմի ստուգումները[643]:

Միաժամանակ՝ հայկական ինքնապաշտպանական ուժերը հուլիսին տարբեր վայրերում էական հաջողությունների հասան: Նրանք տիրացան Սարսանգի հիդրոհանգույցին, ազատագրեցին Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ գյուղը, ապա Հաթերքը, Մաղավուզը, Հոռաթաղը, Չափարը, Զարդախաչը, Իմերեթ-Քերեվանդը[644]: Օգոստոսի առաջին տասնօրյակում ազատագրվեցին Հադրութի շրջանի գրավված բնակավայրերը[645]: Մոսկվայում պետական հեղաշրջման փորձի տապալումից հետո Մութալիբովի դիրքերն էականորեն թուլացան: Խորհրդային բանակն այլեւս չէր կարող որպես գործիք ծառայել հայ բնակչության դեմ: Սեպտեմբերի 14-18-ին հայկական ինքնապաշտպանական ուժերը կարողացան ազատագրել Շահումյանի գրավված Բուզլուխ, Էրքեջ եւ Մանաշիդ գյուղերը[646]:

Ձախողվեց Ղարաբաղի վրա ռազմական ճնշումներ գործադրելու միջոցով հայ բնակչությանն իր բնակավայրերից դեպի Հայաստան բռնի արտագաղթի ենթարկելու այս փուլը եւս: Կենտրոնին չհաջողվեց բռնությունների միջոցով կոտրել հայ ժողովրդի եւ նրա քաղաքական ղեկավարների կամքը, ավելին՝ այս փուլն ավարտվեց մինչ այդ գրավված մի ամբողջ շարք հայկական բնակավայրերի ազատագրմամբ: Վստահ կարելի է ասել, որ Հայաստանի անկախության դեմ Կենտրոնի նախաձեռնած, այսպես կոչված՝ «Կոլցո» ռազմական գործողությունը, չնայած պատճառած որոշակի կորուստների, վերջնականապես ձախողվեց ե՛ռազմական, ե՛ւ,

642 *Խմբի կազմում ընդգրկված էին ՌՍՖՍՀ ժողովրդական պատգամավորներ Լ. Ա. Պոնոմարյովը, Ա. Ե. Շաբադը, Վ. Լ. Շեյնիսը, ինչպես նաեւ երկու բարձրաստիճան սպաներ ԽՍՀՄ պաշտպանության եւ ներքին գործերի նախարարություններից:*

643 *ՀՀԱՆԱ, թղթ. 08/01.08.91, թ. 2:*

644 *Տե՛ս Ալուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, Երեւան, 1997, էջ 252:*

645 *Նույնը, էջ 258:*

646 *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, էջ 148:*

առավել եւս, քաղաքական առումով[647]: Դա դե-ֆակտո անկախ Հայաստանի Հանրապետության առաջին լուրջ հաղթանակն էր, նրա ժողովրդավարական իշխանության քաղաքական կամքի եւ հասունության ապացույցը, դիվանագիտական հմտության առաջին լուրջ քննությունը, Հայաստանի՝ որպես միջազգային հանրության անդամ ճանաչվելու համար ներկայացրած լուրջ հայտը:

ժգ) Ղարաբաղի հարցում քաղաքական ուղեգծի ամրապնդումը: Հայաստանը արկածախնդրության մեջ ներքաշելու նոր փորձերի ձախողումը

Իշխանության դեմ ուղղված մեղադրանքներն ընդդիմությունը, բնականաբար, աշխատում էր կապել ամենանուրբ հարցի՝ Ղարաբաղի խնդրի հետ, եւ Գերագույն խորհրդի հունիսի 5-ի նիստի քաղաքական քննարկումներում ընդդիմադիրների կեցվածքը բխում էր, առաջին հերթին, այս ելակետից: Քննադատները համարում էին, որ իշխանությունը Ղարաբաղի հարցում մշակված քաղաքական ծրագիր չունի, կամ, եթե անգամ ունի, ապա այդ ծրագիրը գաղտնի է պահում, իսկ Լեռնային Ղարաբաղի վրա Կենտրոնի ճնշումները համարում էին ծրագիր չունենալու եւ ոչ ճկուն քաղաքականության արդյունք: Հարուցելով այս մեղադրանքները՝ դաշնակցականները եւ կոմունիստները լուծումը տեսնում էին կոալիցիոն կառավարություն կազմելու եւ միութենական պայմանագիրը ստորագրելու մեջ:

Ղարաբաղի հարցում իշխանությունը ոչ միայն ուներ որոշակի ծրագիր եւ ուղեգիծ, այլեւ արդեն մի քանի անգամ Գերագույն խորհրդի նախագահը դա ներկայացրել էր խորհրդարանին: Նա ստիպված էր կրկին անդրադառնալ այդ խնդրին՝ հիշեցնելով, որ դա անում է արդեն չորրորդ անգամ, իսկ առավել մանրամասն շարադրել է դեռ 1990թ. սեպտեմբերի 3-ին[648]: Ծրագիրը հենվում էր հետեւյալ երեք դրույթների վրա.

647 *Անգամ մասնավոր տեսանկյունով «Կոլցո» գործողության ձեռնարկումը Թոմաս դե Վաալը դնահատում է ի մեծս Ադրբեջանի. «Կարճաժամկետ հեռանկարում այս որոշումը ձեռնտու էր ադրբեջանական ղեկավարությանը.... սակայն երկարաժամկետ հեռանկարում այս որոշումը կործանարար էր Ադրբեջանի համար, քանի որ հանրապետությունը դրանով զգալիորեն հետ մնաց իր սեփական ուժային կառույցների ստեղծման ասպարեզում» (տե՛ս* **Томас де Ваал**, *Черный сад, с. 163):*

648 *1990 թ. սեպտեմբերի 3-ին Գեր փակ նիստում ելույթը (տե՛ս* **Տեր-Պետրոսյան Լ.**, *Ընտրանի, էջ 113-122:*

ա) Առճակատման ռազմավարությունն այլեւս չի կարող արդյունքի բերել, եւ անհրաժեշտ է անցնել բանակցությունների միջոցով հարցը փոխզիջումներով, համաձայնությամբ կարգավորելու գործելակերպին.

բ) Հակամարտության բոլոր կողմերը՝ Ղարաբաղը, Հայաստանը, Ադրբեջանը եւ Մոսկվան, պետք է վերանայեն 1988-ից ի վեր կայացրած, հարցին վերաբերող բոլոր որոշումները, վերականգնեն ստատուս-քվոն.

գ) Ստատուս-քվոյի հաստատման մաս պետք է լինի մարզային իշխանությունների վերականգնումը[649]:

Որպես այդ պահին Կենտրոնի եւ Ադրբեջանի համատեղ վտանգավոր հարվածներից մարզը դուրս բերելու միջոց՝ այս ծրագրին արդեն հավանություն էր տվել Հայաստանի խորհրդարանը, հավանություն են տվել նաեւ Ղարաբաղում Շարժումը ղեկավարող ուժերը: Դրա չիրագործվելը պայմանավորված է եղել Մոսկվայի եւ Ադրբեջանի խուսանավումներով: Իսկ երբ համապատասխան դիվանագիտական աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել այդ խոչընդոտները հաղթահարել եւ երկու անգամ ընդհուպ հասնել ԽՍՀՄ Նախագահի հրամանագրի տեսքով քաղաքական որոշման կայացմանը, խանգարիչ դեր են խաղացել Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում եւ Մոսկվայում գործող որոշակի ուժեր ու գործիչներ, որոնց հաջողվել է խափանել համապատասխան հրամանագրի ստորագրումը:

1991թ. գարնան ամիսների իրադարձությունները շատերին համոզեցին, որ նախորդ տարվա սեպտեմբերին Գերագույն խորհրդի նախագահի կողմից ներկայացրած եւ հետեւողականորեն պաշտպանած քաղաքական վերոհիշյալ ուղեգիծն է ճիշտ ճանապարհը: Այն արդեն ավելի ու ավելի էր ընդունելություն գտնում նաեւ ղարաբաղյան գործիչների եւ բնակչության շրջանում: Որպես դրա արդյունք՝ ԼՂԻՄ աշխատավորության լիազոր ներկայացուցիչները մայիսի 16-ին ընդունեցին մի հայտարարություն, որում պատրաստակամություն էր հայտնվում քաղաքական բանակցություններ սկսել ադրբեջանական իշխանությունների հետ եւ փոխզիջումային լուծումներ որոնել ԽՍՀՄ Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում: Այս փաստաթուղթը ստորագրված էր մարզային խորհրդի, մարզային խորհրդի գործկոմի, կուսակցության մարզկոմի բյուրոյի, Ստեփանակերտի քաղաքային խորհրդի եւ կուսակցության քաղաքային բյուրոյի կողմից: Հիմնական դրույթներն էին.

[649] ՀՀԱՆԽ, թղթ. 12/05.06.91, թ. 3:

- «ԼՂԻՄ-ը հավատարիմ է մնում սահմանադրական կարգին եւ իր հետագա լիիրավ գոյությունը տեսնում է նորացվող Միութենական դաշնության մեջ»,
- «դիմում է ԽՍՀՄ բարձրագույն իշխանության մարմիններին՝ անմիջապես միջամտել եւ ապահովել հայ բնակչության կյանքի պաշտպանությունը, արժանապատվությունը եւ տարրական իրավունքները», -
- արտակարգ իրավիճակի ռեժիմն անհրաժեշտ է ապահովել միայն ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի միջոցով»,
- «Մարզի ադրբեջանական համայնքին կոչ է անում բանակցություններ սկսել իշխանության սահմանադրական մարմինների վերականգնման, երկու համայնքների միջեւ կուտակված խնդիրները լուծելու համար»,

«հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերի բանակցությունների հիմքի վրա վերանայել ԼՂԻՄ-ի հարցով ընդունված բոլոր հակասահմանադրական որոշումները»[650]:

Հունիսի 19-ին այս փաստաթղթի դրույթները կրկնվեցին նաեւ մարզխորհրդի գործկոմի որոշման տեսքով: Մայիսի 16-ին ընդունված փաստաթղթի ոգով՝ առճակատումից բանակցությունների անցնելու մասին որոշում էր ընդունել մարզային խորհրդի գործադիր կոմիտեն, ինչին հունիսի 20-ին հավանություն էր տվել նույն լիազոր ներկայացուցիչների՝ ժողովրդական պատգամավորների մարզային եւ շրջանային պատգամավորների, խորհրդային, պետական եւ կուսակցական մարմինների ղեկավարների, աշխատողների խորհրդակցությունը[651]: Առճակատման քաղաքականությունից երկխոսության քաղաքականության անցնելու անհրաժեշտության հիմնավորմամբ հանդես եկավ Ղարաբաղյան շարժման հայտնի գործիչներից Հենրիկ Պողոսյանը[652]: Ավելի ուշ՝ հունիսի 29-ին, Ղարաբաղի մի շարք գործիչներ՝ ԽՍՀՄ ժող. պատգամավոր Հենրիկ Պողոսյանի գլխավորությամբ, Գորբաչովին ուղղված նամակում, վկայակոչելով վերոհիշյալ հայտարարությունն ու մարզգործկոմի որոշումը, կրկին հիմնավորում են «առճակատման քաղաքականությունից երկխոսության եւ բանակցությունների» անցնելու հրատապ անհրաժեշտությունը, խնդրում են նրան կազմա-

[650] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17.07.1991:
[651] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22.06.1991:
[652] Տե՛ս «Հայաստան», 19.06.1991:

կերպել այդ երկխոսությունն ու բանակցությունները: Այստեղ նույնպես խնդիրների թվում շեշտվում է բոլորի կողմից «ԽՍՀՄ Սահմանադրության հակասող որոշումների վերանայումը», «մարզի սահմանադրական ատատուս-քվոյի վերականգնումը», «փախստականների վերադարձը» եւ այլն [653]:

Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը 1991թ. մայիսի կեսից ի վեր ամբողջությամբ պաշտպանում էր հակամարտության կարգավորման քաղաքական այն ուղեգիծն ու ծրագիրը, որը Հայաստանի ԳԽ նախագահը ներկայացրել էր 1990-ի սեպտեմբերի 3-ին, երկու անգամ ընդհուպ մոտեցել դրա իրականացմանն ուղղված կարեւոր քայլեր կատարելուն, սակայն հենց Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում գտնվել էին ուժեր, որոնք խոչընդոտել էին այդ քայլերի իրականացմանը: Լեռնային Ղարաբաղի նոր դիրքորոշման հետ կապված՝ նա համառոտ արձանագրում է այդ իրողությունը. «.... այդ հարցը բազմիցս քննարկվել է նաեւ նախագահությունում՝ Արցախի պատգամավորների ներկայությամբ, ստացվել է նրանց համաձայնությունը, թեեւ եղել են մարդիկ, որոնք կողմ չեն եղել դրան: Դրա հիման վրա կազմվել է այն հրամանագիրը, որը պետք է փետրվարի 18-ին ստորագրեր Գորբաչովը, բայց ինչ-ինչ ուժեր դա խանգարեցին: Այնպես որ՝ այդ քաղաքական ծրագիրը միանգամայն արդարացավ նրանով, որ Արցախը վերջապես որդեգրեց այդ ծրագիրը.... Ադրբեջանի հետ բանակցությունները.... արդյունք կտան միայն այն դեպքում, եթե բանակցություններում Արցախը հանդես գա որպես սուբյեկտ: Արցախը հայտնել է իր պատրաստակամությունը եւ այսօր Արցախի հարցի տեղաշարժի միակ հնարավորությունը Արցախի այս նախաձեռնությունն է»[654]:

Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը նաեւ գործնական քայլերի դիմեց խաղաղ կարգավորման այս գիծն առաջ տանելու համար: Մոսկվա ուղարկվեց ներկայացուցչական մի պատվիրակություն՝ այս հիմքով կենտրոնական իշխանության եւ Ադրբեջանի համազոր մի պատվիրակության հետ Մոսկվայում բանակցություններ վարելու համար: Տեւական աշխատանքից հետո, երբ Ադրբեջանը չհամաձայնեց դրան եւ առաջարկեց այդ

[653] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17.07.1991: Նամակը ստորագրել էին նաեւ Ստեփանակերտի քաղգործկոմի նախագահ Մաքսիմ Միրզոյանը, մարզգործկոմի նախագահի տեղակալ Շ. Պետրոսյանը, բաժինների վարիչներ:*

[654] *Տեր-Պետրոսյան, Ելույթ 22 ԳԽ նստաշրջանում 05.06.1991, 22ԱՆԱ, թղթ. 12/05.06.91, թ. 3բ:*

հանդիպումը կազմակերպել Բաքվում, հուլիսի 20-ին պատվիրակությունը մեկնեց Բաքու[655]: Հանդիպումը նպաստեց կարեւոր մի ժամանակահատվածում լարվածության թուլացմանը[656]: Ավելին, ըստ դեպքերի եւ իրադարձությունների ականատես եւ ժամանակագիր Վ. Հարությունյանի՝ ժամանակավոր խաղաղության այդ շրջանում «Մարզը Ադրբեջանից ստացավ հազարավոր տոննա ալյուր, շաքար, կարտոֆիլ, այլ սննդամթերքներ եւ վառելիքա-քսուքային նյութեր, որի մի մասը պահեստավորվեց ապագայում պաշտպանական կարիքների համար: Այդ ընթացքում նաեւ ձեռք բերվեց մարզի պաշտպանության կազմակերպման համար ռազմամթերք... 1991թ. դեկտեմբերի վերջին ԼՂԻՄ ինքնապաշտպանական ուժերն արդեն ունեին 3500 «Կալաշնիկով» ինքնաձիգ եւ շատ այլ զինատեսակներ...»[657]:

Հակամարտության քաղաքական կարգավորման ուղղությամբ Լեռնային Ղարաբաղի նախաձեռնությանն անմիջապես արձագանքեց Վրաստանը՝ պատրաստակամություն հայտնելով հանդես գալ որպես միջնորդ եւ Թբիլիսիում կազմակերպել անդրկովկասյան հանրապետությունների բարձր մակարդակի հանդիպում[658]:

Չնայած ծրագրի հստակությանը եւ կարեւորագույն այս հարցում Հայաստանի իշխանության եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության՝ արդեն իսկ ձեռք բերված միասնականությանը, «արմատական» ընդդիմությունը շարունակում էր իշխանությանը մեղադրել Ղարաբաղի հարցում ծրագիր եւ ուղեգիծ չունենալու համար: Ավելին՝ պահանջում էր կատարել որդեգրված ուղեգծին տրամագծորեն հակադիր քայլեր, որոնք առավել

[655] ***Арутюнян В.Б.**, События в Нагорном Карабахе, часть 4, ст, 32. Պատվիրակության կազմում էին մարզխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնակատար Լեոնարդ Պետրոսյանը, շրջգործկոմների նախագահներ Վիլեն Քոչարյանը, Էմիլ Նավասարդյանը, Վահան Գաբրիելյանը, Սլավիկ Սեյրանյանը եւ ուրիշներ:*

[656] *Նույն տեղում, էջ 32, 37-38: Բաքվում կայացած այս հանդիպումը եւ մանավանդ դրա մասին Կենտրոնական հեռուստատեսության հաղորդումը բուռն դժգոհություն առաջացրեցին Լեռնային Ղարաբաղում, ընդհուպ՝ դրա մասնակիցներին Մութալիբովի դրածոներ համարեցին (տե՛ս նույն տեղում, էջ 56-57): Մինչդեռ ստացված դադարը ու այդ ընթացքում ձեռքբերվածը կենսականորեն կարեւոր էր Ղարաբաղի գոյատեւման եւ առաջիկա պաշտպանական խնդիրների լուծման համար:*

[657] *Նույն տեղում, էջ 33: Վ. Հարությունյանն անտեղյակ է, թե ինչպես են այդ քանակի ինքնաձիգներն ու այլ զինատեսակները հայտնվել Ղարաբաղում: Դա գաղտնիք էր, որին տիրապետել են միայն Լեւոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը եւ Վազգեն Սարգսյանը:*

[658] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 04.06.1991:*

կխորացնեին առճակատումը: ՀՀԿ-ի ղեկավար Աշոտ Նավասարդյանի կարծիքով՝ իշխանությունը հետեւողական չի եղել 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշման իրականացման հարցում: Նա առաջարկում էր Ղարաբաղում Հայաստանի իշխանության կառույցներ ստեղծել: ՍԻՄ-ի ղեկավար Հ-րանտ Խաչատրյանը համարում էր, որ անկախությունը պետք է ոչ թե նպատակ լինի, այլ միջոց՝ լուծելու «հրատապ ազգային խնդիրները»[659]: ԱԻՄ-ը եւ ՍԻՄ-ը պահանջում էին փոփոխություն կատարել Սահմանադրության մեջ եւ արձանագրել, որ ԼՂԻՄ-ը, Շահումյանը եւ Գետաշենի ենթաշրջանը Հայաստանի կազմում են: Երկու ամիս առաջ՝ մարտին, 1921թ. ռուս-թուրքական պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերը չեղյալ հայտարարելու պահանջից հետո սա երկիրը նոր, ավելի լայնամասշտաբ առճակատման, արկածախնդրության մղելուն ուղղված հերթական փորձն էր:

Հունիսի 5-ի քաղաքական քննարկումների ավարտին, Գերագույն խորհրդի նախագահին անվստահություն հայտնելու առաջարկի քվեարկության արդյունքով, Անկախության հանրաքվեի, Ղարաբաղի եւ այլ հարցերում իշխանության քաղաքական ուղեգծին ընդդիմացողները ծանր պարտություն կրեցին, սակայն դրանով նրանց քարոզչական պայքարը չդադարեց: Եւ ակնհայտ էր, որ այն ուղղված էր ոչ այնքան որդեգրված քաղաքական ուղեգծում փոփոխության հասնելու, որքան կեղծ-հերոսական ու կեղծ-ազգայնական զայթակղիչ կարգախոսներով հասարակության պակաս տեղեկացված մասի վրա ազդելու, փաստորեն՝ ապակայունություն ստեղծելու խնդրին: Եւ ոչ մի նշանակություն չունի այն հանգամանքը, թե Կենտրոնի եւ «արմատականների» անմիջական կամ միջնորդավորված կապը հաստատող ապացույցներ կան թե չկան: Նրանց գործողությունները նույնպես օբյեկտիվորեն նպաստեցին հուլիսի սկզբներից Մոսկվայի եւ Ադրբեջանի սկսած բռնությունների նոր ալիքի ձեռնարկմանը Շահումյանում եւ Ղարաբաղում: Հայաստանի իշխանությունը կարճատեւ եւ հարաբերական մի դադարից հետո կրկին ստիպված էր գերլարված օրեր ապրել՝ ինչպես ինքնապաշտպանական խնդիրներին օժանդակելու, այնպես էլ քաղաքական ու դիվանագիտական միջոցներով պայքարը շարունակելու համար:

Միաժամանակ ընդդիմությունն առաջ քաշեց նաեւ մի այլ հարցադրում, որ արտաքուստ թվում էր «արժանի պատասխան» Կենտրոնի նոր բռնություններին, իսկ իրականում բխում էր նրանց ի սկզբանե որդեգրած

[659] *Տե՛ս «Հայք», 28.05.1991:*

առճակատման «կուրսից», հետեւանքն էլ հստակ կանխատեսելի էր: Հուլիսի 6-ի արտահերթ նիստում, որը հրավիրվել էր Շահումյանում եւ Ղարաբաղում ծավալված նոր բռնությունների առիթով, ՀՅԴ խմբակցության անդամ Իգոր Մուրադյանը առաջարկեց Լեռնային Ղարաբաղի հայության պայքարը ճանաչել եւ հայտարարել որպես ազգային-ազատագրական պայքար[660]: Նման որոշման ընդունումն, անշուշտ, այլ բան չէր կարող նշանակել, քան ըստ էության պատերազմի հայտարարում Ադրբեջանին եւ Կենտրոնին՝ իր հստակ կանխատեսելի հետեւանքներով: Դրանով ազատ կարձակվեին երկուսի ձեռքերն էլ՝ «լուծելու» թե՛ Ղարաբաղի հարցը, թե՛ Հայաստանի: Առաջարկի մերժումն, իր հերթին, որպես քարոզչական նյութ եւ առիթ՝ հիանալի կշահարկվեր Հայաստանի իշխանություններին «Ղարաբաղը ծախող» կամ «պարտվողական» պիտակներով վարկաբեկելու համար[661]:

Գերագույն խորհուրդը կարողացավ խուսափել հերթական ծուղակից՝ հարցն ուղարկելով համապատասխան մշտական հանձնաժողովի ուսումնասիրմանը: Զսպասելով արդյունքին՝ նույն հարցը ներկայացվեց նաեւ հուլիսի 9-ին, այս անգամ արդեն մի խումբ պատգամավորների անունից: Խորհրդարանը կրկին որոշում կայացրեց հարցը հանձնել մշտական հանձնաժողովների ուսումնասիրմանը: Խնդիրը քննարկվեց Գերագույն խորհրդի՝ հուլիսի 15-ի դռնփակ նիստում՝ ունենալով որոշման երկու՝ իրարամերժ նախագիծ: Առաջինը ներկայացրել էր Իգոր Մուրադյանը, որը, մասնավորապես նախատեսում էր. «Ինքնապաշտպանությունը Լեռնային Ղարաբաղում համարել ԽՍՀՄ եւ ադրբեջանական սպառնալիքը կանխելուն ուղղված միջոց՝ զինված ինքնապաշտպանության մասնակիցներին համարելով կոմբատանտներ»: Երկրորդ նախագիծը նախատեսում էր հավանություն տալ ԼՂԻՄ աշխատավորների լիազոր ներկայացուցիչների քաղաքական նախաձեռնությանը, որով պատրաստակամություն էր հայտնվում ադրբեջանական իշխանությունների հետ քաղաքական բանակցությունների միջոցով լուծումներ որոնել ԽՍՀՄ Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում: Առաջին նախագծի տակ նախապես հնա-

[660] *Տեքստը տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.07.1991:*

[661] *Այս որակումները ՀՅԴ-ն արդեն մինչ այդ շրջանառության մեջ էր դրել եւ շարունակելու էր օգտագործել ընդհուպ մինչեւ 1998 թվականը՝ թե՛ պատերազմի ընթացքում, թե՛ հաղթանակներից ու Լեռնային Ղարաբաղի ազատագրումից ու փաստական անկախության ձեռքբերումից հետո, թե՛ զինադադարի ու դրան հաջորդած կարգավորման բանակցությունների ընթացքում:*

րավոր էր եղել հավաքել 59 պատգամավորի ստորագրություն: Դոնփակ նիստում տրված բացատրություններից ու պարզաբանումներից հետո այդ նախագիծը ստորագրած պատգամավորների մեծագույն մասը ետ վերցրեց իր ստորագրությունը[662]: Գերագույն խորհուրդը մերժեց այն եւ ընդունեց մի հայտարարություն, որով պաշտպանում էր ԼՂԻՄ աշխատավորության լիազոր ներկայացուցիչների 1991 թվականի մայիսի 16-ի հայտարարությանն ու հունիսի 29-ին ԽՍՀՄ Նախագահ Գորբաչովին ուղղված նամակը՝ որոնցում հայտնվում է առճակատումից խուսափելու եւ ԽՍՀՄ Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում բանակցությունների միջոցով փոխզիջումային լուծումներ գտնելու իր պատրաստակամության մասին[663]: Այսինքն՝ Գերագույն խորհուրդը քվեարկեց Լեռնային Ղարաբաղի խնդրի՝ փոխզիջումների միջոցով խաղաղ կարգավորման քաղաքական ուղեգծի օգտին: Քվեարկության արդյունքներից երեւում է, որ սադրիչ այդ նախաձեռնության իրական նախաձեռնողները եղել էին ՀՅԴ-ն, ՀՔԴՄ-ն, ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը, ՀՀԿ-ն, որոնք էլ (բայց բոլորը միասին՝ ընդամենը 10 ձայն) դեմ էին քվեարկել ընդունված հայտարարությանը[664]:

Հաջողվեց խուսափել եւս մի վտանգավոր որոգայթից, ինչը լավագույն պատրվակը կլիներ Կենտրոնի համար՝ որպես իրավական հիմք օգտագործելու իր ձգտումների եւ ձեռնարկումների նպատակով: ՀՅԴ-ն, որ Կոմկուսի հետ համագործակցությամբ չկարողացավ լուծել անկախության ուղեգիծը խափանելու եւ միութենական պայմանագիրը ստորագրելու խնդիրը, այժմ ճիշտ հակառակ դիրքերից, «արմատականների» հետ դաշնակցած, նույն այդ Կենտրոնին փաստական պատերազմ հայտարարելու նախագիծ էր ներկայացնում, իսկ իրականում՝ փորձում նրա համար Հայաստանի վրա մասշտաբային ռազմական ճնշումների իրավական հիմք ստեղծել:

Թվացյալ այն հակասությունը, որ, մի կողմից՝ ՀՅԴ-ն միութենական պայմանագրի ստորագրման ամենամոլի կողմնակիցն էր, մյուս կողմից՝

[662] *Առաջին խորհրդարանում ոչ փոքր թվով պատգամավորներ կային, որոնք հեշտությամբ էին տրվում «ազգայնական-հայրենասիրական» մանիպուլյացիաների, բայց նաեւ, ի պատիվ իրենց, լրջմիտ ու հիմնավոր բացատրություններ ստանալուց հետո (որպես կանոն՝ նման բացատրություններ տալիս էր Լեւոն Տեր-Պետրոսյանը) կարողանում էին ընկալել խնդիրը եւ փոխել դիրքորոշումը: Այս իմաստով խորհրդարանը քաղաքական գիտելիքների մի համալսարան էր շատերի համար:*

[663] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 14, հոդվ. 288:*

[664] *Տես «Հայաստանի Հանրապետություն», 16.07.1991:*

նրա հետ ռազմական առճակատման էր մղում երկիրը, այս դեպքում ունի իր պարզ բացատրությունը: Երկուսն էլ հավասարապես ձեռնտու էին Մոսկվային՝ նույն խնդիրը լուծելու համար: Երկու դեպքում էլ նպատակը Հայաստանի ընտրված իշխանությունը տապալելը, կամ, առնվազն, նրանց հարկադրելն էր հրաժարվել անկախության հանրաքվեից եւ ստորագրել միութենական պայմանագիրը: Դժվար է նաեւ հավատալ, թե նախաձեռնողները չէին հասկանում այս չափազանց պարզ իրողությունը, պարզապես, իրենց հետապնդած նպատակի համար զոհասեղանին էին դնում ե՛ւ Ղարաբաղը, ե՛ւ Հայաստանը[665]:

[665] *Ի դեպ, ՀՅԴ-ի ղեկավարների նման վարքագիծը զարմանք ու տարակուսանք էր առաջացրել նաեւ այս կազմակերպության շարքերում, ինչի մասին կան բազմաթիվ հրապարակված վկայություններ (տե՛ս «Հայք», 10.07.1991; 25.09.1991 եւ այլն):*

5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ԵՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ

ա) ՀՀՇ-ն որպես իշխող քաղաքական ուժ

1990 թվականի երկրորդ կեսին եւ 1991-ի առաջին ամիսներին կենտրոնական իշխանությունն ամեն ինչ արեց անկախության ուղին բռնած հանրապետություններին նոր միութենական պայմանագրի քննարկումներին մասնակից դարձնելու համար, սակայն որեւէ հաջողության չհասավ: Դրան որեւէ կերպ չօգնեց նաեւ 1991-ի մարտի 17-ի միութենական հանրաքվեն: Մոսկվայի հաջորդ քայլը եղավ նախնական մի համաձայնագրի ստորագրում՝ այդ պայմանագրի վրա աշխատանքը շարունակելու համար: Ապրիլի 23-ին այն ստորագրեցին 9 հանրապետություններ եւ Կենտրոնը («9+1»): Մերձբալթյան երեք հանրապետությունները, Հայաստանը, Վրաստանը եւ Մոլդովան, որոնք չէին մասնակցել միութենական հանրաքվեին, նաեւ չէին հրավիրվել այս հավաքին: «9+1»-ի համատեղ պաշտոնական հայտարարությունն այդ առիթով արձանագրում էր. «Ընդունելով Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Մոլդովայի, Վրաստանի եւ Հայաստանի՝ միութենական պայմանագրին միանալու հարցը ինքնուրույն լուծելու իրավունքը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում առավել բարենպաստության ռեժիմի սահմանումը այն հանրապետությունների համար, որոնք ստորագրել են միութենական պայմանագիրը, իրենց կազմած միասնական տնտեսական տարածքի սահմաններում»[666]: Սա այլ բան չէր, քան տնտեսական պատժամիջոցների սպառնալիք՝ անկախության հասնելու իրենց սահմանադրական եւ օրինական իրավունքներից օգտվել ցանկացող հիշյալ հանրապետությունների նկատմամբ, ԽՍՀՄ գործող Սահմանադրության եւ համապատասխան օրենքի կոպիտ խախտում:

---

666 *«Հայաստան», 27.04.1991:*

Միութենական հանրաքվեին չմասնակցած եւ անկախության ճանապարհին ընտրած վեց հանրապետությունները իրենց հերթին համախմբվեցին եւ հիմնեցին «Քիշինյովյան հանձնաժողովը»: Առայժմ դա իրականացվեց իշխող քաղաքական ուժերի ներկայացուցիչների մակարդակով: Էստոնիայի, Լատվիայի եւ Մոլդովայի ժողովրդական ճակատների, Վրաստանի «Կլոր սեղանի», Լիտվայի «Սայուդիսի» եւ Հայաստանից ՀՀՇ-ի ներկայացուցիչները մայիսի 25-ին Քիշինյովում հիմնեցին միութենական պայմանագրին չմիացող երկրների ժողովրդական ճակատների եւ շարժումների ասամբլեա: ՀՀՇ-ի կողմից մասնակցում էր եւ պայմանագիրը ստորագրեց Դավիթ Շահնազարյանը:

Իր պաշտոնական դիրքորոշումը միութենական պայմանագրի նկատմամբ ՀՀՇ-ն եւս մեկ անգամ հրապարակեց մայիսի 28-ի առթիվ ընդունած հայտարարության մեջ. «... Մենք կանգնած ենք բախտորոշ ընտրության առջեւ՝ կա՛մ, անտեսելով պատմական փորձը, հատկապես 1920 թվականը, նորից մեզ հանձնել ստրկատիրոջ ողորմածությանը, կա՛մ պատմությամբ ու մեր ժողովրդի ազատագրական պայքարով ընձեռված հնարավորությունից օգտվելով, հաստատակամորեն գնալ անկախության ուղիով: Առաջին ճանապարհը մենք արդեն փորձել ենք, եւ հիմա քաղում ենք դրա դառը պտուղները: «Նորացված» Խորհրդային միության մեջ մտնելը շատ մոտ ապագայում արդեն մեզ կզրկի վերածնվելու, զարգանալու եւ հզորանալու, ուրեմն՝ մեր ազգային կենսական որեւէ հիմնահարց լուծելու հնարավորությունից: Հայոց համազգային շարժումը, մերժելով այդ ազգակործան ճանապարհը, հաստատակամորեն կշարունակի պայքարը հանուն անկախության»[667]: Իշխող քաղաքական ուժի գնահատականները բխում էին այն իրողությունից, որ, պայմանագրի առաջարկվող նախագիծը հիմնականում պահպանում էր այն նույն մեխանիզմները, որոնց միջոցով Միության մեջ մտնող հանրապետությունները հայտնվելու էին ճիշտ նույն վիճակում, ինչ նախկինում էին: Միայն այն հանգամանքը, որ կամավորության սկզբունք հռչակելով հանդերձ, Կենտրոնը հանրապետությունների վրա տարաբնույթ ճնշումներ էր գործադրում, փաստորեն՝ բռնությամբ եւ ուժով էր աշխատում հասնել պայմանագրի ստորագրմանը, արդեն իսկ դրա լավագույն եւ զգաստացնող ապացույցն էր[668]:

[667] *«Հայք», 28.05.1991:*

[668] *Ճիշտ նույն կերպ՝ կամավոր-պարտադիր սկզբունքով էր կազմավորվել ԽՍՀՄ-ը 1922 թվականին:*

Քաղաքական ընդդիմության քարոզչությունը, նենգափոխելով իրականությունը, ՀՀՇ-ի եւ իշխանության դիրքորոշումները համառորեն ներկայացնում էր որպես «անմիջական անջատում» եւ Մոսկվայի հետ «առճակատում»: Այնքան մեծ տարածում ստացավ հանրաքվեի էության եւ ՀՀՇ-ի դիրքորոշումների կեղծման հիման վրա քարոզչությունը, որ իշխող կուսակցությունը ստիպված էր այդ առիթով հանդես գալ նոր մի հայտարարությամբ.

«... Ամեն գնով փորձեր են արվում տպավորություն ստեղծել, թե իբր սեպտեմբերի 21-ին հօգուտ անկախության քվեարկելով, Հայաստանի Հանրապետությունը խզելու է իր բոլոր քաղաքական ու տնտեսական կապերը Խորհրդային Միության հետ, ինքնամեկուսանալու է, եւ, լավագույն դեպքում, «կողմնորոշումը փոխելով», դառնալու է հարեւան Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կցորդը: Հանրաքվեի նպատակների եւ ՀՀՇ-ի դիրքորոշման նման մեկնաբանությունը գիտակցված կեղծիք է: Այսօրվա ԽՍՀՄ կազմից Հայաստանի անջատումը բնական եւ նպատակահարմար համարելով հանդերձ, Հայոց համազգային շարժումը լիովին հաշվի է առնում, որ, պատմական հանգամանքների բերումով, Հայաստանը սերտ տնտեսական, մշակութային, ինչպես նաեւ քաղաքական առնչություններ ունի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ մի շարք միութենական հանրապետությունների հետ, բնական է՝ հավասար կարեւորություն տալով մյուս ուղղություններով իրականացվող տնտեսական եւ քաղաքական կապերին»[669]:

Այսինքն՝ Հայաստանի իշխանությունների եւ ՀՀՇ-ի պաշտոնական դիրքորոշումը հետեւյալն էր. պետք է մասնակցել Միության ճակատագրին վերաբերող բոլոր միջոցառումներին եւ քննարկումներին, բայց նաեւ չհրաժարվել նույն Միության Սահմանադրությամբ եւ օրենքներով ընձեռված իրավունքների իրացման, տվյալ դեպքում՝ անկախության գործընթացը շարունակելու քաղաքական ուղեգծից: Ինչպես այդ գործընթացը, այնպես էլ անկախության վերջնական ձեռքբերումը ամենեւին չեն բացառում Հայաստանի մասնակցությունը որեւէ միության, եթե առաջարկվող պայմաններն, իրոք, չեն ոտնահարի հանրապետության ինքնիշխան իրավունքները: Ավելին, մերժելով պայմանագրի տվյալ նախագիծը՝ ՀՀՇ-ն եւ նրա իշխանությունը չէին բացառում, որ կարող են լինել իրավիճակներ, երբ ծանր հարկադրանքների դեպքում եւ առավել վատթար հետեւանքներից խուսա-

[669] *«Հայք», 17.07.1991:*

փելու համար հանրապետությունը, որպես ընկերակից անդամ, ստորագրի որեւէ ժամանակավոր պայմանագիր[670]: Իսկ իր պաշտոնական պատասխանը եւ վերջնական դիրքորոշումը Հայաստանի իշխանությունը իրավացիորեն պայմանավորում էր սեպտեմբերին կայանալիք հանրաքվեի արդյունքներով: Այսինքն՝ ՀՀՇ-ի քաղաքական ուղեգիծը եւ գործնական քաղաքականությունը, նպատակաուղղված լինելով փաստական եւ իրավական առումով անկախության վերջնական նվաճմանը, միաժամանակ նկատի էր առնում իրադարձությունների հնարավոր եւ անակնկալ զարգացումների բոլոր տարբերակները:

Մայիսի վերջերին Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի անունով հրավեր ստացվեց ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովից՝ հունիսի 2-ին մասնակցելու միութենական պայմանագրի նախագծի վրա աշխատանքը շարունակելու համար նախապատրաստական կոմիտեի նիստին՝ Նովո Օգարյովոյում: Ղարաբաղի եւ Հայաստանի նկատմամբ դեռ չավարտված ագրեսիայի պայմաններում, բնական էր, որ սույն հրավերը չէր կարող ընդունվել: Պատասխանը մայիսի 31-ին հեռագրով ուղարկվեց Գերագույն խորհրդի նախագահության որոշման տեսքով.

«Վերջին մեկ ամսում տեղի ունեցած հայտնի դեպքերի հետեւանքով իրադրությունը տարածաշրջանում շարունակում է մնալ անչափ լարված: Փաստորեն՝ որեւէ ներգործուն միջոց չի ձեռնարկվում Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի եւ ԼՂԻՄ Հադրութի շրջանի գյուղերի՝ ս.թ. մայիսին տեղահանված հայ բնակչությանը իր մշտական բնակության վայրերը վերադարձնելու համար, չեն ազատված հարյուրավոր պատանդները: Ավելին՝ 5 կիլոմետրանոց գոտու առկայության պայմաններում Ադրբեջանի տարածքից այսօր էլ պարբերաբար հրետակոծվում են Հայաստանի Հանրապետության գյուղերը, Հայաստանի տարածք են թափանցում զինված ավազակախմբեր, որոնք ահաբեկում են խաղաղ բնակչությանը, շարունակելով բազմապատկել սպանվածների եւ վիրավորների թիվը: Ստեղծված իրադրության մեջ, վերոհիշյալ հիմնահարցերի լուծմանն ուղղված՝ հանրապետության ղեկավարության կոնստրուկտիվ առաջարկությունների պատասխանի բացակայության պայմաններում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունն այդ նիստին

[670] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24.08.1991:*

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի մասնակցությունը համարում է աննպատակահարմար»[671]:

Միութենական պայմանագրի վերջնական քննարկման նպատակով հաջորդ հանդիպումը նշանակված էր հուլիսի 23-ին: Մոսկվան, հավանաբար տեսնելով ԽՍՀՄ պահպանման հանրաքվեին չմասնակցած վեց հանրապետությունների հաստատակամությունը, հուլիսի 12-ին շատ ավելի մեղմացված ու բարեկամական տոնով, Գերագույն խորհրդի հատուկ մի ուղերձով դիմեց «Վրաստանի, Լիտվայի, Մոլդովայի, Լատվիայի, Հայաստանի, Էստոնիայի Գերագույն խորհուրդներին եւ ժողովրդական պատգամավորներին»՝ համոզելու համար միանալ միութենական պայմանագրին[672]: Պաշտոնական հրավեր ստացվեց այն ժամանակ, երբ Ղարաբաղում եւ Շահումյանի շրջանում բռնությունների եւ տեղահանման փորձերի նոր ալիք էր սկսվել խորհրդային բանակի եւ ադրբեջանական զինուժի կողմից: Գերագույն խորհրդի նախագահությունը, նկատի ունենալով իրադրությունը, հուլիսի 18-ին ընդունած իր որոշմամբ կրկին ձեռնպահ մնաց Նովո-Օգարյովո լիազոր ներկայացուցիչներ ուղարկելուց[673]: ԳԽ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն այդ հանդիպմանը մասնակցեց դիտորդի կարգավիճակով:

Նախատեսվող միութենական պայմանագրի հետագա հավանական ճակատագրի հարցն ավելի պարզորոշ էր դառնում: Ուկրաինան, օրինակ, հայտարարել էր, որ դրա քննարկումը հետաձգում է մինչեւ սեպտեմբերի կեսերը՝ նախագիծը հարմարեցնելու համար իր Անկախության հռչակագրի դրույթներին[674]: Ռուսաստանի նոր, ժողովրդավար իշխանության դիրքորոշումը նույնպես ավելի արմատական էր. նա անընդունելի էր համարում պայմանագրի նախագծի շատ կարեւոր դրույթներ: «Ժողովրդական Ռուսաստան» շարժման համակարգող խումբը կոչ էր անում Ելցինին՝ միաժամանակ հրաժարվել միութենական պայմանագրի ստորագրումից՝ հակառակ դեպքում սպառնալով ընդդիմանալ նրան «պառլամենտական

[671] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 10, հոդվ. 198:*

[672] *Ведомости съезда народных депутатов СССР и Верховного совета СССР, 29, ст. 854.*

[673] *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 14, հոդվ. 299:*

[674] *Ի դեպ՝ Հայաստանը դեռ 1990-ի օգոստոսի վերջին, որպես միութենական պայմանագրի համար պաշտոնական փաստաթուղթ ներկայացրել էր իր Անկախության հռչակագիրը:*

եւ ոչ պառլամենտական միջոցներով»[675]: Այնպես որ, գտնվելով Նովո-Օգարյովոյում, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահն առիթն օգտագործեց հանրապետությունների ղեկավարների հետ հանդիպելու եւ Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած փաստաթղթերը նրանց ներկայացնելու համար: Դրանք, որպես պաշտոնական փաստաթղթեր, տարածվեցին հանդիպման մասնակիցների մեջ: Վերջիններս դրականորեն գնահատեցին հակամարտությունը բանակցությունների միջոցով եւ խաղաղ ճանապարհով լուծելու՝ Հայաստանի քաղաքական դիրքորոշումն ու ջանքերը: Բոլոր դեպքերում՝ հաջորդ օրերին Ղարաբաղում ճնշումներն անհամեմատ մեղմացան, անձնագրային ռեժիմի ստուգման միջոցառումներին ադրբեջանական միլիցիան այլեւս չէր մասնակցում:

բ) Կոմկուս

Հայաստանի կոմկուսի քաղաքական դիրքորոշումը բխում էր ԽՍՀՄ-ի հարատեւման միակ ելակետից, ինչը նրա համար համոզմունք եւ քաղաքական նպատակ էր[676]: Այսպես, ՀԿԿ-ն հայտարարում էր, որ «սկզբունքորեն պաշտպանում է միութենական պայմանագիրը կնքելու գաղափարը»[677]: Սակայն, նկատի ունենալով, որ անկախության գաղափարը հասարակության մեջ շատ լայն տարածում էր ստացել, քիչ անց վերջնական ձեւակերպում ստացած նրա հիմնական կարգախոսը փորձեց իր մեջ ինչ-որ կերպ ներառել այդ իրողությունը: Ըստ այդմ՝ միութենական պայմանագրին միանալը բխում է հենց... Հայաստանի անկախության շահերից. «Ստեղծված պայմաններում ՀՀ գտնվելը ինքնիշխան պետությունների միության կազմում հանդիսանում է անկախության գործընթացի փուլերից մեկը»[678]: Այս կարգախոսի ՀՅԴ-ական տարբերակը հնչում էր այսպես. «անջատման մարտավարությունը կվնասե Հայաստանի անկախության վերանվաճումին»[679]: Դժվար չէ նկատել, որ սրանք երկվորյակ մտքեր էին՝

[675] *Տե՛ս «Ազգ», 10.08.1991:*

[676] *Այս կուսակցության դեպքում խոսքը վերաբերում է նրա ղեկավարությանն ու անդամների մի մասին: Բազմամարդ այս կազմակերպությունից զանգվածարար հեռանում էին, իսկ մնացածների մեծ մասն էլ պաշտպանում էր նոր իշխանությանը:*

[677] *«Հայաստան», 01.03.1991:*

[678] *Նույն տեղում*

[679] *«Դրոշակ», 22.05.1991, էջ 19:*

ձեւակերպած տարբեր բառերով: Ճիշտ այնպես, ինչպես այս երկու կուսակցությունների հիմնական կարգախոսները նույնպիսի հարազատություն էին դրսեւորում մեկ տարի առաջ՝ Անկախության հռչակագրին նախորդող շրջանում:

Ղարաբաղի եւ Հայաստանի նկատմամբ Մոսկվայի եւ Ադրբեջանի համատեղ ագրեսիայի ամենածանր օրերին, անշուշտ, Կոմկուսն էլ պետք է հանդես գար հայտարարությամբ՝ մատնացույց անելու իր քաղաքական դիրքորոշման համար ստացած կարեւոր հիմքերը: Մայիսի 2-ին հրապարակած հայտարարության մեջ այդ ագրեսիայի պատճառը համարվում է այն, որ նոր իշխանությունները «չկարողացան ճիշտ հարաբերություններ կառուցել Կենտրոնի հետ», «չկամեցան ստորագրել միութենական պայմանագիրը»[680]: Կոմկուսը հունիսին նույնպես, իրավիճակից ելքեր փնտրող քաղաքական թեժ քննարկումների ժամանակ, պաշտոնապես դեմ էր Գերագույն խորհրդի նախագահության կազմի ընդլայնման ու նոր լիազորություններ տալով օժտելու նախաձեռնությանը եւ առաջարկում էր «քաղաքական տարբեր ուժերի մասնակցությամբ, ազգային համաձայնության հիմքի վրա անհապաղ հակաճգնաժամային ծրագրի մշակումն ու գործողության մեջ դնելը, որի հաստատուն երաշխիքը միութենական նոր դաշնագրի քննարկմանը մասնակցելն է ու ստորագրումը»[681]:

Ճիշտ այնպես, ինչպես ՀՅԴ-ն եւ նրա բարձրաստիճան գործիչները, կոմունիստները կայսրության փլուզումից ընդամենը շաբաթներ առաջ իրենց պարտքն էին համարում վստահ արձանագրել, որ ԽՍՀՄ-ը հաստատուն է եւ հարատեւելու է: Ըստ նրա ղեկավար Արամ Սարգսյանի՝ «Զարդարացան Միության շուտափույթ փլուզման մասին կանխատեսումները. կազմավորվում է ինքնիշխան պետությունների նոր միություն, եւ դաշնագրի ստորագրումից հետո կստեղծվի քաղաքական միանգամայն նոր իրավիճակ, որում սթափ կողմնորոշվելու եւ իր տեղն ու դերը գիտակցելով միայն մեր հանրապետությունը կարող է խուսափել ճգնաժամի էլ ավելի խորացումից»[682]:

Անկախության դեմ եւ միութենական պայմանագրի օգտին լայն քարոզչություն էր ծավալել կոմունիստական մամուլը՝ ընդհուպ, կոպտորեն վարկաբեկելով առաջիկա հանրաքվեն քարոզվում էր, թե Սեպտեմբերի 21-ի

[680] *«Հայաստան», 02.05.1991:*

[681] *«Հայաստան», 20.06.1991:*

[682] *«Հայաստան», 25.06.1991:*

հանրաքվեն պրոպագանդիստական խաղ է ընդամենը, այն ուղղված է ոչ թե անկախության գործընթացի խորացմանը, այլ ներկայիս իշխանությունների հորինած խաղն է՝ սեփական գործունեության քաղաքական արդյունքներին կեղծ նշանակություն հաղորդելու նպատակով: Թերթերից մեկը նաեւ հրապարակեց ՀԽՍՀ Կոմկուսի կենտկոմի նախկին երկրորդ քարտուղար Օ. Լոբովի մի հոդվածը՝ իբր գրված մարտի 17-ի միութենական հանրաքվեից առաջ, որտեղ հիմնավորում է ԽՍՀՄ պահպանման անհրաժեշտությունը[683]:

գ) ՀՅԴ

ԽՍՀՄ-ի պահպանումը ու միութենական նոր պայմանագրի ստորագրումը ՀՅԴ-ի համար եւս ոչ միայն համոզմունք էր, այլ նաեւ իր գոյությունը պայմանավորող նպատակ, հանուն որի էլ, առանց միջոցների միջեւ խտրություն դնելու, անմնացորդ պայքար էր ծավալել ի սկզբանե: Ավելին՝ Հայաստանի անկախացումը փլուզում էր նրա հայդատական/պահանջատիրական դավանանքը՝ հիմնված պանթյուրքիզմի վտանգի հանդեպ Ռուսաստանի եւ Հայաստանի շահերի համընկնման ենթադրյալ իրողության վրա: Ուստի նույն եռանդով, ինչպես ՀՅԴ-ն պայքարել էր 1988-ից՝ ՀՀՇ-ի ծրագրում հաստատված անկախության գաղափարի, իսկ այնուհետեւ՝ անկախության գործընթացի սկիզբն ազդարարող Անկախության հռչակագրի դեմ, այնպես էլ այժմ, հանուն միութենական նոր պայմանագրի կնքման, պայքարում էր Անկախության հանրաքվեի դեմ:

Իրադարձությունների ընթացքի, Շարժման ձեռք բերած առարկայական քաղաքական նվաճումների հանդիման նաեւ այս կուսակցության մեջ գտնվեցին բազմաթիվ անհատներ, անգամ ամբողջական կառույցներ, որոնք ոչ միայն բարձր գնահատեցին Շարժման ձեռքբերումները, այլեւ կարողացան օբյեկտիվորեն գնահատել սեփական կուսակցության տարօրինակ պահվածքը[684]:

Այն հիմքերը, որոնց վրա ՀՅԴ-ն հենում էր իր քարոզչական պայքարը, իրականության մի քանի բացահայտ խեղաթյուրումներն էին: Այսպես,

[683] *Տե՛ս «Голос Армении» 07.06.1991*

[684] *Հմմտ. «Հնչակ Հայաստանի», 24.12.1994; https://www.1in.am/2688595.html (1in.am 19.01.2020); https://www.1in.am/2684603.html (1in.am 11.01.2020) եւ այլն:*

դաշնակցականները նույնպես համարում էին, որ ՀՀՇ-ն ԽՍՀՄ-ից «անմիջական անջատման» հարց է դնում, եւ դրանով իսկ գնում է Կենտրոնի հետ առճակատման: Սակայն ինչպես Անկախության հռչակագրի ընդունումը, այնպես էլ Անկախության հանրաքվեն, ենթադրում էին վերջնական անկախության ձեռքբերում աստիճանական քայլերով, ինչպես դա նախատեսված էր ԽՍՀՄ օրենքներով: Սահմանադրական իրավունքների իրացումը օրինական ճանապարհով չէր կարող առճակատում համարվել Կենտրոնի հետ: Համենայնդեպս, անհերքելի փաստ է, որ Հայաստանը միակ հանրապետությունն էր, որ մինչեւ վերջ պահպանեց անկախություն ձեռք բերելու ԽՍՀՄ օրենքի տառը: Ընդհակառակը՝ ՀՀՇ-ի իշխանությունն ինքն էր պայքարում ընդդիմադիր այն ուժերի դեմ, որոնք պահանջում էին վերջնական անկախություն հռչակել՝ անտեսելով միութենական օրենքները, ինչը, իրոք, կնշանակեր առճակատում: Ուրեմն՝ իշխանությանը քննադատելու այս հիմքը ակնհայտ կեղծիք էր, սակայն դա ամենեւին չէր խանգարում այն իշխանության դեմ քարոզչության հիմնասյուներից մեկը դարձնելուն ու քիչ տեղյակ լսարանի համար անընդհատ կրկնելուն:

Նույնպիսի կեղծիք էր նաեւ ՀՀՇ-ի եւ նրա իշխանության «պրոթուրքական կողմնորոշում» որդեգրած լինելու մասին մեղադրանքը: Խոսքն ընդամենը այն մասին էր, որ Հայաստանը բնականոն եւ, առաջին հերթին, տնտեսական հարաբերություններ պետք է հաստատի բոլոր, մանավանդ՝ անմիջական հարեւան երկրների հետ, որ՝ պետական քաղաքականության հիմքում ու որպես Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու նախապայման չպետք է դրվի պահանջատիրությունը: Ինչ վերաբերում է պատմությունից ժառանգված խնդիրներին, այդ թվում նաեւ Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչմանը, ապա այդ հարցերը հնարավոր էր համարվում քննարկել եւ լուծել միայն երկկողմ բանակցություններում, նորմալ փոխհարաբերությունների հիմքի վրա: Քաղաքական այս ուղեգիծը, սակայն, խարխլում էր ՀՅԴ գաղափարախոսության երկրորդ հիմնասյունը՝ «հավերժական թշնամու» գաղափարը:

ՀՅԴ-ի քարոզչական պայքարի երրորդ հիմքն այն էր, թե ՀՀՇ-ն անկախության իր ծրագրերը կառուցել է ԽՍՀՄ փլուզման հեռանկարի վրա, իսկ դա տեղի չի ունենալու: Կեղծիք էր դրված նաեւ այս պնդման հիմքում: Անկախության ծրագիրը նախատեսում էր հնարավոր զարգացումների բոլոր տարբերակները, կարող էր կենսունակ լինել ե՛ւ այն դեպքում, եթե ԽՍՀՄ-ի հոգեվարքը երկարեր, ե՛ւ այն դեպքում, եթե կայսրության փլուզումը տեղի ունենար հանկարծակի, նույնիսկ այն դեպքում, եթե այն ժա-

մանակավորապես ամրապնդվեր: Մինչդեռ նույնը չէր կարելի ասել հենց ՀՅԴ-ի ծրագրերի դեպքում: Օրինակ՝ պահանջատիրական կուրս որդեգրած լինելու եւ, ինչպես նրանք էին պահանջում, ռուս-թուրքական պայմանագրերը չեղյալ հայտարարելու եւ ԽՍՀՄ-ի անկառավարելի փլուզման դեպքում Հայաստանը «անակնկալ» անկախության հետ միասին կհայտնվեր Թուրքիայի հետ հայտարարված պատերազմական վիճակում: Նման որեւէ անակնկալ ՀՀՇ ծրագրով բացառվում էր:

Անկախության դեմ քարոզչության մյուս հիմքն այն թեզն էր, թե անկախությունից չհրաժարվելու եւ միութենական պայմանագրին չմիանալու պատճառով է, որ կորցնում ենք Կենտրոնի համակրանքը Ղարաբաղի հարցում եւ տեղիք տալիս նրա ճնշումներին: Ինչպես տեսանք, նույնն էին պնդում նաեւ կոմունիստները: Սա եւս իրականության հետ կապ չուներ. անցած տարիների փորձը ցույց էր տվել, որ այս հարցում Կենտրոնի ադրբեջանամետ դիրքորոշումը նախ եւ առաջ սկզբունքային էր, նա չէր լուծելու Ղարաբաղի հարցը: Եւ, ինչպես ցույց տվեցին հետագա տարիները, Ղարաբաղի հարցի փաստացի լուծումն, իրոք, կարողացան ապահովել հենց անկախ Հայաստանի իշխանությունները:

Դաշնակցությունը, անկախության հանրաքվեին ընդառաջ, բազմապատկեց իշխանության դեմ այս հարցերի շուրջ իր քարոզարշավը: Այսպես՝ հունիսի 19-ի «Դրոշակի» նյութերի կեսից ավելին մեղադրանքներ են Հայաստանի իշխանությունների եւ անձամբ Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ:

* * *

ՀՅԴ-ն իր «կազմակերպական ներկայությունը» Հայաստանում հայտարարել էր այն պահին, երբ սկսվել էին Անկախության հռչակագրի բուռն քննարկումները, սակայն չէր բացահայտել իր կառույցները եւ խորհրդարանում հավաքագրած անդամներին: Այդ բանը նա արեց մոտ մեկ տարի անց՝ խորհրդարանի 1991թ. հունիսի 5-ի նիստում, երբ քննարկվում էր երկրի ներքաղաքական իրավիճակի հարցը. հայտարարվեց չորս անուն, խոստանալով առաջիկայում հայտարարել եւս վեց անուններ[685]: Այս անգամ էլ պահը պատահական չէր ընտրված. այժմ էլ անկախության հանրաքվեի նախօրյակն էր: Կենտրոնի «հրետանային նախապատրաստությունից»՝ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վրա բացահայտ զինված ագրեսիայից հետո, անկախության հանրաքվեից հրաժարվելու եւ միութենական պայմանագիրը ստորագրելու օգտին հարձակման պետք է անցներ նրա տեղական դաշնակիցների քարոզչության «հետեւակը»: Վճռական պահին՝ առաջիկա երկու-երկուսուկես ամսում երկու կարեւոր իրադարձությունների՝ միութենական պայմանագրի եւ Անկախության հանրաքվեի դեմ-դիմաց այլեւս անիմաստ էր իր պատգամավորներին չբացահայտված պահելը:

ՀՅԴ գործիչները հավաստիացնում եւ քարոզում էին, որ ԽՍՀՄ փլուզումը ցնորք է, եւ որ ԽՍՀՄ-ը հարատեւելու է: Ըստ ՀՅԴ բյուրոյի ղեկավար Հ. Մարուխյանի՝ «...տրամաբանել, թե Խորհրդային Միության տնտեսական սուր տագնապը կմնա անլուծելի... ի վերջո պետք է փլուզման առաջնորդե, գեթ անոնց համար, որոնք ծանոթ են միջազգային քաղաքական խոհանոցին, նույնքան եւ ավելիով անհեթեթ է»[686]: Կուսակցության գործիչներն այս պնդումը շարունակեցին կրկնել եւ դրա համար պայքարել նաեւ հետագա ամիսներին՝ մեղադրելով իշխանությանը «Միության փլուզման հավանականության «մեծ եթե»-ի վրա ռազմավարություն մշակելու», «Արցախի դատը առժամաբար «սառնարան դնելու» եւ Հայաստանի «անկախացման գործընթացը շիկացնելու» մեջ[687]: Դաշնակցության մի այլ տեսաբան՝ Է. Հովհաննիսյանը նույնպես համարում էր, որ «Միության քայքայման նշաններ առայժմ չեն երեւում» եւ որ «մի՞թե պարզ չէ, որ Հայաստանը պարտավոր է այդ պայմանագիրը ստորագրել.... ստեղծված պայմաններում դա լավագույն ընտրությունն է»[688]: Ավելին՝ նա պնդում էր, որ՝ **«եթե մեր ազգային եւ մարդկային նպատակներին կարելի է հասնել ուղիղ ճանապարհով, ապա ժամանակավոր կամ նույնիսկ ընդմիշտ կարելի է հրաժարվել անկախությունից»**[689]:

Միութենական պայմանագրին Հայաստանի միանալու անհրաժեշտության մասին (այն կապելով Ղարաբաղի հարցի հետ) ավելի հախուռն սկսեցին գրել մայիսին, երբ նույն նպատակով մոլեգնում էին Կենտրոնի եւ Ադրբեջանի ռազմական ճնշումները: Բյուրոյի պաշտոնաթերթի հոդվածագիր ՀՅԴ գործիչները վստահ էին, որ Մոսկվան միեւնույն է՝ թույլ չի տա

[685] *Այդ անունները հրապարակվեցին հունիսի 19-ին. Գագիկ Հովհաննիսյան, Հովիկ Ադազարյան, Գառնիկ Խաչատրյան, Գեորգի Պետրոսյան, Ռաֆիկ Ղազինյան, Նորայր Մանասերյան (տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի 1991, 12, էջ 16):*

[686] *«Դրոշակ», 02.01.1991, էջ 14:*

[687] *Տե՛ս «Դրոշակ», 13.03.1991:*

[688] *«Դրոշակ», 24.04.1991, էջ 4-6:*

[689] *«Դրոշակ», 13.03.1991, էջ 28:*

անկախանալ եւ ստիպելու է պայմանագրին միանալ ուժով, որ՝ անկախության հարց չի կարելի դնել, քանի դեռ չի լուծվել Ղարաբաղի հարցը[690]: Հատկանշական է, որ այժմ էլ, ինչպես ուղիղ մեկ տարի առաջ, Անկախության հռչակագրի նախօրյակին, նորից շրջանառության մեջ դրվեց նույն տարօրինակ կարգախոսը. «Անջատման մարտավարությունը կվնասե Հայաստանի անկախության վերանվաճումին»[691]: Նույն այս ժամանակ է, որ կրկին փորձ արվեց (ինչպես դարձյալ մեկ տարի առաջ) շրջանառության մեջ դնել «համազգային» ինչ-որ մարմին ստեղծելու գաղափարը. «ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ը հանրապետության խորհրդարանին առաջարկում է հայ իրականության մեջ գործող բոլոր ուժերի մասնակցությամբ այնպիսի մի քաղաքականություն մշակել, որը կկասեցնի Արցախի շարունակվող տագնապը եւ այդ հիմնահարցի լուծման ելք կգտնի»[692]:

Հաջորդ հարցը, որում ՀՅԴ-ն մեղադրում էր Հայաստանի իշխանություններին, այն էր, որ «Հայ դատը» չի դրվում պետական քաղաքականության հիմքում: Մասնավորապես՝ այդ էր շեշտված ապրիլի 24-ի առիթով ՀՅԴ հայաստանյան ԿԿ-ի հայտարարության մեջ. «Ներկա հանգրվանում Հայ դատի հետապնդումը պետք է պետական քաղաքականություն դառնալով նոր թափ եւ որակ ստանար....»[693]: Սա, ըստ էության, այլ բան չէր, քան նույն՝ անկախությունից հրաժարվելու եւ միութենական պայմանագիրը ստորագրելուն հարկադրող յուրատեսակ «մեխանիզմ»: Այս հիմքի վրա էր շրջանառության մեջ դրվել, այսպես կոչված՝ «չարյաց փոքրագույնի» գաղափարը, ըստ որի՝ Հայաստանն ունի երկու այլընտրանքի հնարավորություն եւ ստիպված է խորհրդային կայսրությունը գերադասել «առավել բարբարոս թուրքերից»:

ՀՅԴ-ի դիրքորոշումը սկզբունքային էր եւ ուղղված էր ընդհանրապես Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում ծավալված ժողովրդավարական շարժումների եւ ուժերի դեմ: ՀՀԾ-ն համարվում էր որպես այդ «անհեռանկար» ուժերի մաս եւ դաշնակից՝ «Հայաստանի եւ Արցախի բախտը կապել փորձելով խորհրդային համամիութենական ուժերի դեմոկրատական եւ անջատողական հոսանքին հետ»[694]:

690 *Տե՛ս «Դրոշակ», 22.05.1991, էջ 14-18:*

691 *Նույն տեղում, էջ 19-22: Անկախության հռչակագրից առաջ այն հնչում էր «անկախական ըլլալով անջատման դեմ կմնանք» տեսքով, որ դարձել էր զավեշտական թեւավոր խոսք:*

692 *«Դրոշակ», 05.06.1991, էջ 43:*

693 *«Դրոշակ», 22.05.1991 էջ 44:*

ՀՅԴ-ի պայքարը Անկախության հանրաքվեի դեմ, միութենական պայմանագրին միանալու համար եւ այդ նպատակով Հայաստանում ներքաղաքական իրավիճակի ապակայունացման փորձերը միայն քարոզչական գործունեությամբ չէր սահմանափակվում, դրանք ունեին նաեւ գործնական քայլերի դրսեւորումներ: Տեղեկություններ կային, որ դաշնակցականները եւ կոմունիստները Մոսկվայում գաղտնի բանակցություններ էին վարում, նախաձեռնում էին այնտեղ «ստվերային» կառավարություն կազմել եւ այլն: Հայաստանում, համենայնդեպս, որոշ նախկին պաշտոնյաների այդ կառավարության կազմում աշխատելու առաջարկներ էին արվել[695]:

դ) «Արմատականներ»

Անկախության հանրաքվեի մասին տրամազծորեն հակառակ դիրքորոշում էին որդեգրել ընդդիմադիր մյուս ուժերը՝ Պարույր Հայրիկյանի գլխավորությամբ: Վերջինս հանրաքվե կազմակերպելու հարց էր բարձրացնում դեռ 1989-ի աշնանը: Երբ 1991-ին Գերագույն խորհուրդը որոշում կայացրեց չմասնակցել միութենական հանրաքվեին եւ նշանակեց սեփական հանրաքվեն, նա պահանջում էր այն կազմակերպել եւ անցկացնել նախքան մարտի 17-ի միութենական հանրաքվեն եւ հռչակել «Ազատ, Անկախ Հայաստան»: Դրանից հետո էլ նա պարբերաբար հանրահավաքներ էր հրավիրում՝ Հայաստանի անկախության հարցով հանրաքվեն ոչ թե սեպտեմբերի 21-ին, այլ ավելի վաղ՝ ապրիլի 21-ին, ապա՝ 28-ին անցկացնելու պահանջով: Դա Մոսկվայի հետ անիմաստ առճակատման ճանապարհն էր, այսինքն՝ այն, ինչն ուրիշները վերագրում էին ՀՀԾ-ի իշխանությանը: Բայց ոչ միայն. դրա իրավական հետեւանքն էլ կլիներ այն, որ, քանի դեռ ԽՍՀՄ-ը գոյություն ունենար, անորոշ կմնար Հայաստանի հռչակած անկախության ճանաչման հեռանկարը, կամ՝ այդ հանրաքվեն կգնահատվեր որպես «վիճակագրական հարցում», ինչպես դա համարվեց Մերձբալթյան հանրապետությունների դեպքում: Այս պահանջը ներկա-

694 *Հետագայում ՀՅԴ-ն, թեեւ ոչ հրապարակավ, պետք է խոստովաներ, որ ժամանակին չի կարողացել ճիշտ գնահատել քաղաքական իրավիճակն ու հնարավոր զարգացումները եւ «գրավը գրել է» դատապարտված ուժերի վրա (ՀՅԴ 26-րդ համագումարի գաղտնի որոշումները), տես՝ «Հայք», 2-10. 04.1996:*

695 *Տե՛ս «Հայք», 19.06.1991:*

յացվեց Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը: Նախագահությունը, որ Գերագույն խորհրդից ստացել էր չնախատեսված իրավիճակներում հանրաքվեն ավելի վաղ ժամկետի տեղափոխելու իրավասություն, մերժեց այս առաջարկը՝ համարելով, որ դրա համար անհրաժեշտ հիմքեր չկան[696]: Իսկ երբ 1991թ. սեպտեմբերի 21-ին համաժողովրդական ամենաբուռն ոգեւորության եւ աջակցության պայմաններում հանրաքվեն իրականացվեց օրենքի տառի պահպանմամբ, այսինքն՝ իրավականորեն անխոցելի եւ անբեկանելի ընթացակարգով, Հայրիկյանը կարծես թե միակն էր, որ փորձեց նսեմացնել նրա արժեքը՝ այն գնահատելով որպես «վերացական» ու «պարզ հարցում», քանի որ դրան հենց հաջորդ օրը չի հաջորդել արմատական գործողությունների շարք՝ չորոշակիացնելով, սակայն, թե ինչ գործողություններ նկատի ունի[697]:

զ) ԱԺՄ

1991թ. ամռանը Հայաստանի ներքաղաքական դաշտում հակաանկախական ուժերի ջանքերով լարումը հետզհետե մեծանում էր: Չէին ավարտվել Կենտրոնի ռազմական ճնշումները, շարունակվում էին քաղաքական բուռն քննարկումներն այնպիսի կարեւոր հարցերի շուրջ, ինչպես Անկախության հանրաքվեն, նախագահական ընտրությունները, միութենական պայմանագրի նկատմամբ վերաբերմունքը: Հանրապետությունը նախապատրաստվում էր կարեւորագույն քաղաքական քայլերի եւ իրադարձությունների, երբ վարչապետ Վազգեն Մանուկյանը հուլիսի կեսերին հայտարարեց իր գլխավորությամբ նոր քաղաքական կազմակերպության՝ «Ազգային ժողովրդավարական միություն» (ԱԺՄ) անունով կուսակցու-

[696] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 08, հոդվ. 159:*

[697] *Տե՛ս «Հայք», 25.09.1991: Նման պահվածքը, սակայն, զարմանք չպետք է առաջացնի, քանի որ այն բնորոշ էր հայրիկյանականների գործելակերպին, որոնց պահանջները երբեմն նույնիսկ հասնում էին զավեշտի աստիճանի: Այսպես, մայիսի կեսերին, Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմի ամենաթեժ շրջանում, ԱԻՄ-ի եւ ՍԻՄ-ի համատեղ թռուցիկը իշխանությունից պահանջում էր. 1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարել փոփոխություններ եւ հանրապետության վարչատարածքային կազմում ընդգրկել Շահումյանը, Գետաշենը, ԼՂԻՄ-ը, 2) Հանձնարարել քարտեզագրության ինստիտուտին՝ ստեղծել ՀՀ նոր քարտեզ այդ սահմաններով, 3) Պահանջել ՄԱԿ-ից իր զորքերը տեղաբաշխել ՀՀ նոր սահմանների երկայնքով եւ ապահովել վերամիավորված Հայաստանի անկախությունը (տե՛ս «Հայք», 15.05.1991):*

թյան ստեղծման մասին: Որքան էլ սակավաթիվ էր նրա հետեւից գնացող ՀՀՇ անդամների թիվը, այնուամենայնիվ, այս քայլն, անշուշտ, չէր նպաստելու վերոհիշյալ ճակատագրական խնդիրների բարեհաջող լուծմանը, ընդհակառակը՝ լրացուցիչ լարում, դժվարություններ եւ խոչընդոտներ էր ստեղծելու երկրի առջեւ ծառացած դժվարագույն հարցերի լուծման համար: Այնուամենայնիվ, քաղաքական դաշտում հայտնվում էր նոր ուժ՝ նոր մի ընդդիմություն դառնալու հայտով: Ընդ որում՝ այդ ուժը պոկվում էր ՀՀՇ-ից՝ նախկին «Ղարաբաղ» կոմիտեի հայտնի անդամներից մեկի գլխավորությամբ:

Հիշեցնենք, որ ՀՀ ԳԽ նախագահ ընտրվելուց հետո Լեւոն Տեր-Պետրոսյանը Վ. Մանուկյանին առաջարկեց կառավարության ղեկավարի՝ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը: Նա համաձայնեց, եւ խորհրդարանը հաստատեց նրան այդ պաշտոնում: Քիչ անց կառավարության կազմավորման հարցում դժվարություններ առաջացան. Վ. Մանուկյանի առաջարկած նախարարի թեկնածուները չէին անցնում Գերագույն խորհրդում, մինչդեռ նա նույն մարդկանց ներկայացնում էր մի քանի անգամ: Նա դիմեց Գերագույն խորհուրդ՝ առանց խորհրդարանի հաստատման, միանձնյա կառավարություն կազմելու՝ նախարարներին նշանակելու եւ ազատելու լիազորություն ստանալու համար: Գործադիր իշխանության կազմավորման հարցում առաջացած ճգնաժամը հաղթահարելու համար Գերագույն խորհուրդն ընդառաջեց եւ, դեմ գնալով Հայաստանում գործող խորհրդարանական կառավարման տրամաբանությանը, մինչեւ մեկ տարի ժամկետով տվեց այդ լիազորությունը: Միաժամանակ, նույն որոշմամբ, կառավարությունը մեծ լիազորություններ ստացավ նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման հարցում, որտեղ նույնպես դժվարություններ էին առաջացել[698]: Դրանով՝ կառավարման խորհրդարանական համակարգի պայմաններում գործադիր իշխանությունն ամբողջությամբ դուրս եկավ օրենսդիր մարմնի վերահսկողությունից:

Ընդամենը կես տարվա գործունեության ընթացքում ակնհայտ դարձավ, որ Վ. Մանուկյանը իրեն տրված գերլիազորություններն օգտագործում է ոչ միայն գործադիր իշխանության կազմավորման հարցում ճգնաժամը հաղթահարելու, այլեւ քաղաքական իշխանության ծանրության կենտրոնը գործադիր իշխանություն տեղափոխելու համար:

[698] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ, 1990, 22, հոդվ. 440:*

«Կոլցո» գործողության, դրա շարունակման եւ խորացման վտանգի լիակատար բացառման, անկախության հանրաքվեի նախապատրաստման եւ օրակարգային այլ սուր հարցերի պայմաններում անհրաժեշտություն էր առաջացել ունենալ ամենօրյա քաղաքական աշխատանքով զբաղվող մի մարմին, ինչը չէր կարող լինել Գերագույն խորհուրդն իր ողջ կազմով, չէր կարող լինել նաեւ ԳԽ մշտական հանձնաժողովների նախագահներից մեխանիկորեն կազմված նախագահությունը: Այդ նպատակով Սահմանադրական հանձնաժողովը մշակել եւ խորհրդարանի քննարկմանն էր ներկայացրել ԳԽ նախագահության կազմն ու իրավասությունները ընդլայնելու մի օրինագիծ, որի քննարկումները տեղի ունեցան հունիսի 18-24-ը: Սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած նախագծի վերջնական քվեարկության, ապա նաեւ ԳԽ գործող նախագահությանը լրացուցիչ լիազորություններ տալու հարցի կապակցությամբ խիստ բացասական կարծիքով Վ. Մանուկյանի անակնկալ ելույթը խորհրդարանում, մոտ մեկ տասնյակ ձայն խլելով, վճռական նշանակություն ունեցավ նախագծի տապալման հարցում: Հավանաբար մտածելով, որ այդ նախաձեռնությունն իր դեմ է ուղղված, նա առաջարկեց դրա փոխարեն ավելացնել կառավարության լիազորությունները կամ իրեն անվստահություն հայտնել[699]: Խորհրդարանը մերժեց նրան անվստահություն հայտնելու հարցը մտցնել օրակարգ, բայց նաեւ ետ վերցրեց միանձնյա, առանց խորհրդարանի հաստատման կառավարություն կազմելու՝ կես տարի առաջ վերջինիս տրված լիազորությունը:

Իշխող քաղաքական ուժն ստիպված էր հատուկ քննության առարկա դարձնել կառավարության արդեն չվերահսկվող գործունեության հետեւանքով հանրապետության ներքին քաղաքական իրավիճակի սուր խնդիրները: ՀՀՇ հանրապետական խորհրդի հուլիսի 14-ի ընդարձակ հայտարարությունը կառավարության գործունեությանը տրված քաղաքական խիստ գնահատական էր: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է, որ կառավարությունը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից եւ վերածվել քաղաքական կազմակերպության: Այն դուրս է եկել ամեն տեսակի, այդ թվում՝ նաեւ խորհրդարանի վերահսկողության շրջանակներից, իսկ վերջինիս ընդունած օրենքները կառավարությունն իրագործում էր վերապահումներով: Կառավարությունը մեղադրվում էր

[699] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ, 1991, 12, էջ 17:*

նախկին վարկաբեկված կառույցները պահպանելու, դրանց օգնությամբ նախատեսված բարեփոխումները ձախողման ենթարկելու, ինչպես նաեւ հասարակական այն խավերի շահերն անտեսելու մեջ, որոնք նոր իշխանության ծրագրերի իրականացման սոցիալական հենարանն են, մինչդեռ լայն արտոնություններ եւ իշխանական լծակներ են ստացել՝ «անկախ պետականության գաղափարներին օտար, վարկաբեկված կլաններ եւ նոր առաջացող, նույնքան վտանգավոր մաֆիական շրջաններ»: Արձանագրվում էր, որ խիստ սահմանափակվել են ընտրողի մարմինների լիազորությունները, նրանք դրվել են չինովնիկների ենթակայության տակ, ինչի պատճառով վարկաբեկվում է ընտրությունների գաղափարն ընդհանրապես: Այս ամենը ՀՀՇ հանրապետական խորհուրդը գնահատում էր որպես իշխանության վտանգավոր խեղումներ՝ հղի ժողովրդավարության կասեցման վտանգով: Այս վիճակը հաղթահարելու համար ՀՀՇ հանրապետական խորհուրդն առաջարկում էր Գերագույն խորհրդին իրականացնել մի շարք կտրուկ միջոցառումներ[700]:

Նորմալ քաղաքական պրակտիկայում, նման գնահատականին պետք է հետեւեր համապատասխան պաշտոնյայի հրաժարականը: Վ. Մանուկյանը ոչ միայն դա չարեց, այլեւ, ի պատասխան՝ 1991թ. հուլիսի 18-ին հայտարարեց իր կողմից նոր քաղաքական կազմակերպության ստեղծման մասին[701]: ՀՀՇ-ն չգնաց իրավիճակի ավելի սրման:

Միայն անձնական հավակնությունն՞րն էին պատճառը, թե՞ պետականության եւ նրա հիմնադրույթների մասին Վազգեն Մանուկյանն ուներ նաեւ սկզբունքորեն այլ պատկերացումներ ու գաղափարներ, որոնք արտահայտված չտեսնելով ՀՀՇ ծրագրում եւ չկարողանալով դրանք այդտեղ ներմուծել, որոշեց իր դավանած ու փայփայած սկզբունքների վրա նոր քաղաքական կազմակերպություն ստեղծել: Մինչ այդ նա նման խնդիր չէր ունեցել ո՛չ 1988թ. ամռանը, երբ ստեղծվեց եւ հրապարակվեց Շարժման առաջին ծրագիրը, ո՛չ 1989-ի աշնան ամիսներին, երբ այն լրամշակվում էր Շարժման առաջին համագումարին ներկայացվելու համար, ո՛չ նույն թվա-

[700] *Տե՛ս «Հայք», 17.07.1991:*

[701] *Տե՛ս «Ազգ», 20.07.1991: ՀՀՇ վարչության նախագահ Վ. Միրզոյանի ճշգրիտ դիտարկմամբ՝ ՀՀՇ պաշտպանությամբ պատգամավոր, ապա գործադիր իշխանության դեկավար դարձած Վ. Մանուկյանը, իր կուսակցության տված գնահատականներից (հուլիսի 14-ի հայտարարությունից), առավել եւս՝ իր կողմից նոր կուսակցություն հիմնելուց հետո, «էթիկան պահանջում էր», որ հրաժարական տար (տե՛ս «Հայք», 30.08.1991):*

կանի նոյեմբերին, երբ այն ընդունվեց ՀՀՇ հիմնադիր համագումարում: Քաղաքական հայացքների շատ թե քիչ էական շեղում ՀՀՇ ծրագրից չնկատվեց նաեւ 1990 թ. գարնանը հրապարակված «Գնացքից թռչելու ժամանակն է» վերնագիրը կրող նրա ծավալուն հոդվածում[702]: ՀՀՇ ծրագրի մեջ փոփոխություն կատարելու որեւէ սկզբունքային առաջարկ նա չներկայացրեց նաեւ կուսակցության 2-րդ համագումարում՝ 1990թ. նոյեմբերին:

Ավելին, նա, ըստ առիթի, բարձր էր գնահատել ՀՀՇ-ի՝ որպես քաղաքական կառույցի պատմական դերակատարությունը. «ՀՀՇ-ն շատ հետեւողականորեն իրականացնում էր մի ծրագիր, որի որոշ դրույթներ դժվար ըմբռնելի էին մեր ժողովրդի համար: Անկեղծ ասած, անկախության գաղափարը խոր նստած չէր հայերիս մեջ: Դժվարին խնդիր էր հայերիս միջից հանել զգացմունքային քաղաքականության հակումը եւ արմատավորել յուրաքանչյուր պետությանը բնորոշ հավասարակշռված քաղաքականություն: ՀՀՇ-ն իր առջեւ դրեց այդ բարդ խնդիրը եւ լուծեց այն: Այնպես որ ՀՀՇ-ն հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի կյանքում... ՀՀՇ-ն թույլ է կառուցվածքով[703], բայց շատ ուժեղ է եղել իր գործունեությամբ»[704]: Մինչդեռ, այն բանից հետո, երբ իշխող ուժը բացասական գնահատական տվեց կառավարության գործունեությանը, Վ. Մանուկյանի՝ ՀՀՇ-ին տված գնահատականները դարձան տրամագծորեն հակառակը: Ամենաբարդ խնդիրը լուծած քաղաքական կառույցը դարձավ «չկայացած». «Ցավոք, ես պետք է խոստովանեմ, որն այժմ իրեն անվանում է ՀՀՇ, չկայացավ...»[705]:

Քաղաքական նոր կազմակերպություն հիմնադրելու համար անհրաժեշտ էր մշակել նոր ծրագիր ու գտնել նոր գաղափարական հիմք: Վերջինս պետք է բավարարեր մի քանի պայմանի: Այն չէր կարող արտաքնապես կտրուկ հակադրվել ՀՀՇ-ի ծրագրի հայտնի դրույթներին, քանի որ ինքը մինչ այդ որեւէ վերապահություն չէր ունեցել դրանց նկատմամբ: Այն չէր կարող նաեւ նույնությամբ կրկնել ՀՀՇ հայտնի ծրագիրը, քանի, որ այդ դեպքում անհասկանալի կմնար նրանից բաժանվելու ու նրան հակադրվելու պատճառը: Այս հարցը նա փորձեց լուծել մերկապարանոց հայ-

[702] *«Հայք», 19.05.1990, 27.05.1990, 10.06.1990, 10.06.1990:*

[703] *«Թույլ է կառուցվածքով»-ի տակ նկատի ունի ՀՀՇ կանոնադրությամբ սահմանված մեծ ազատությունները:*

[704] *«Հայաստանի Հանրապետություն», 12.02.1991:*

[705] ***Վ. Մանուկյան**, Հայկական երազանքը զոյատեւման փակուղում, Երեւան, 2002, էջ 139:*

տարարությամբ, թե՝ ՀՀՇ-ն նահանջել է սեփական ծրագրային դրույթներից՝ առանց մատնանշելու նման նահանջի որեւէ փաստ[706]: ԱԺՄ-ի ծրագիրը օրիգինալ չէր լինի նաեւ այն դեպքում, եթե այն նույնությամբ կրկներ դեռեւս ժողովրդահաճ՝ հայդատական/պահանջատիրական գաղափարները, որովհետեւ, նախ՝ այդպիսի բազմաթիվ կազմակերպություններ արդեն կային, եւ երկրորդ՝ ինքը բազմիցս հանդես էր եկել այդ գաղափարախոսության քննադատությամբ, այն պետական քաղաքականության հիմքում դնելու դեմ[707]: Հիմա նա խնդիր ուներ իր իսկ կողմից սուր քննադատության արժանացրած գաղափարների մասին ճիշտ հակառակն ասելու՝ շահելու համար, մասնավորաբար, Դաշնակցության աջակցությունը՝ ընդհուպ ուրանալով այն իրողությունը, որ վերջինս պայքարում է Հայաստանի անկախության դեմ[708]: Այսինքն՝ Վ. Մանուկյանն իր առջեւ խնդիր ուներ ստեղծել այնպիսի մի ծրագիր, որը, մի կողմից, ազատական, ժողովրդա-

[706] *Այդ դեպքում բնական կլիներ խնդիրը բարձրացնել կազմակերպության հերթական համագումարում, կամ պահանջել այդ խնդրով արտահերթ համագումար, կամ էլ առնվազն հրապարակավ հիմնավորել, թե խոսքն ինչին է վերաբերում:*

[707] *Հայդատականության առանցքը կազմող «պահանջատիրության» մասին նրա ուշնշանող խոսքը. «Այդ ծիծաղելիության աստիճանի գոռոզ բառի տակ, ըստ իս, թաքնված է խղճուկ քաղաքականություն. դիմել ողջ աշխարհին՝ պահանջելով արդարություն» (**Մանուկյան Վ.**, Հայկական երազանքը, էջ 46): Կամ նրա նույնքան դաժան գնահատականը Շարժման տարիներին եւ այդ պահին հայդատականության «բանաձեւի» մասին. «Այն հուսերը, թե Ռուսաստանը մի օր կվերադառնա իր ծավալապաշտական քաղաքականությանը, հնարավորություն կունենա խլել Թուրքիայից մեր հողերը, դրանից հետո այդ հողերը կտա մեզ եւ հետո կքանդվի որպես կայսրություն՝ հնարավորություն տալով մեզ ունենալ Միացյալ Անկախ Հայաստան, լիովին անհիմն են, մեր ժողովրդին տանում են դեպի անգործություն եւ ստրկություն՝ աշխարհի երեսից մեզ որպես ազգ վերացման դատապարտելով» («Հայք, 17.06.1990):*

[708] *«Ես համաձայն չեմ, թե Դաշնակցությունը դեմ է Հայաստանի անկախությանը: Այո, դաշնակցական շատ ղեկավար գործիչների ելույթներն ու հոդվածները իրենց մեջ պարունակում են այդ անհանգստությունն առաջացնող մտքեր: Բայց, ընդհանուր առմամբ, դաշնակցականները նույնպես հայ, ազգային մարդիկ են: Շատ հարցերում համաձայն են մեր հայացքներին: Ի վերջո, ՀՀՇ-ի գաղափարները, որոնք հարազատ էին Դաշնակցությանը, ինչ-որ փուլում նորից սողոսկելու են այսօրվա Դաշնակցության մեջ: Գուցե Դաշնակցությունը դառնալու է վաղվա ՀՀՇ-ի կազմակերպված ձեւը: Բոլոր դեպքերում, ես կարծում եմ, որ ՀՀՇ-ի հիմքի վրա կստեղծվի մի հզոր ազգային կուսակցություն, որն իր ձեռքը կվերցնի մեր ժողովրդի բախտը» (**Մանուկյան Վ.**, Հայկական երազանքը, էջ 126):*

վարական հատկանիշներով արտաքնապես նմանվեր ՀՀՇ-ի Ծրագրին, մյուս կողմից՝ ունենար հայդատականություն/պահանջատիրականությունն իր մեջ ներառող, մարդկանց ազգային զգացումները շոյող-շահարկող «հույժ ազգային» դրույթներ: Եւ նորաստեղծ «Ազգային ժողովրդավարական միություն» (ԱԺՄ) անվան ընտրությունն արդեն հենց այս նպատակն է մատնանշում: Այսօրինակ «սինթեզը» նրա հաշվարկով, չէր խրտնեցնի ազատական-ժողովրդավարական մտածելակերպ ունեցողներին, բայց նաեւ կապահովեր Դաշնակցական կուսակցության եւ պահանջատիրականության հիմքով «ազգային» համարվող այլ ուժերի աջակցությունը: Բայց դա էլ դեռեւս բավարար չէր օրիգինալ երեւալու համար[709]: Ավելի լայն հասարակական աջակցություն ստանալու համար նա այս «սինթեզին» ավելացրեց, իսկ ավելի ճիշտ՝ իր ծրագրի հիմքում որպես առանցքային թեզ դրեց հետեւյալ գաղափարը. հայությունն իր պատմությամբ, ներկայով, որպես ազգ՝ իր յուրահատուկ ունակություններով, հոգեբանությամբ եւ այլն, ***առանձնահատուկ ազգ է***, ճիշտ ղեկավարելու դեպքում նրանից կարելի է կերտել ***«համաշխարհային ազգ»***, ինչը նրան հնարավորություն կտա կատարել իր ***«պատմական առաքելությունը»***: Այդ ճանապարհին, ահա, կարելի է լուծել ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլ նաեւ «Հայ դատի» խնդիրները[710]: Նա համարում էր, որ մինչեւ 1988թ. հայ քաղաքական միտքն, ի դեմս Սփյուռքի կուսակցությունների եւ հայ մտավորականության, «քաղաքական ռոմանտիզմի» անհեռանկար դրսեւորում էր, եւ դրան հակադրում էր իր ***«ազգային ռոմանտիզմը»*** եւ ***«առողջ ազգայնականությունը»***:

Բնական է, որ Վ. Մանուկյանի այս կտրուկ շեղումը ՀՀՇ-ի ծրագրից չէր կարող չնկատել ՀՅԴ-ն, չէր կարող չնկատել նաեւ այդ շեղումների հետ իր արյունակցական կապը: Եւ վերջապես՝ չէր կարող չնկատել, որ ի դեմս Վ. Մանուկյանի՝ փայլուն դաշնակից է գտնում իր ամենավտանգավոր ախոյանի՝ ՀՀՇ-ի դեմ, դաշնակից՝ հենց ՀՀՇ-ի միջից: Ուստի ՀՅԴ բյուրոյի օրգանը Վ. Մանուկյանի «համաշխարհային ազգի» գաղափարի առաջին իսկ հրապարակմանը իսկույն հրճվանքով արձագանքեց. «Հայ

709 Ռամկավարների ծրագիրը եւս այլ բան չէր, քան ազատական տնտեսություն, գումարած՝ ժողովրդավարություն, գումարած՝ «Հայ դատ»-պահանջատիրություն:

*710 ԱԺՄ-ի գաղափարների ավելի մանրամասն վերլուծությունը տես նաեւ **Լիպարիտյան Ժ.**, Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախության ի վեր, Երեւան, 1999, էջ 96-98:*

քաղաքական միտքն ամբողջ տասնամյակներ, փաստորեն Հայաստանի խորհրդայնացումեն ի վեր, երկա՛ր սպասեց այս օրվան, որպեսզի հայ ժողովրդի մայրաքաղաք Երեւանեն լսելի դառնային համազգային մեր տենչերուն եւ տեսլականներուն հարազատ հնչող նման կոչ մը... Հայրենի պետական մտածողության մեջ այսօր ձեւավորվող համազգային դիտանկյունի վերահաստատումը ոչ միայն ողջունելի է ըստ ամենայնի, այլեւ պաշտոնապես դուռը կբանա միեւնույն լեզվով խոսելու եւ ազգային միասնության հասնելու ճիգերուն առջեւ»[711]: Դաշնակցությունը ճիշտ էր նկատել՝ Վ. Մանուկյանը խոսում էր նույն՝ նրանց լեզվով[712]:

Պատգամավորները, որոնք որոշեցին հետեւել Վ. Մանուկյանին եւ մտան նրա ստեղծած նոր կազմակերպության մեջ, շատ չէին[713]: Հետագայում էլ ԱԺՄ-ն մնաց փոքրաթիվ, բայց աղմկարար կազմակերպություն՝ «անձի կուսակցության» ցայտուն արտահայտված հատկանիշներով:

Վ. Մանուկյանի բացատրություններն իր կատարած քայլի մասին յուրօրինակ էին. «ՀՀՇ-ի «արժեքավոր մարդիկ» հավաքվել են նոր միության մեջ, որպեսզի համախմբեն «ազգի առողջ ուժերը»[714]: Ավելին, ինքը ստեղծելով քաղաքական նոր կազմակերպություն՝ մեղադրանք ներկայացրեց ՀՀՇ-ին, որ վերջինս վերածվել է քաղաքական կազմակերպության, մինչդեռ այն մտահղացվել էր եւ պետք է մնար որպես կազմակերպությունների հավաքատեղի, ինչը «հնարավորություն կստեղծեր, որ մենք դառնանք

711 «Դրոշակ», 13.02.1991, էջ 2:

712 Այնքան բուռն էր Դաշնակցության ուրախությունն ու ոգեւորությունը, որ նրանց համար ոչ մի նշանակություն չունեցավ այն փաստը, որ Վ. Մանուկյանը պարբերաբար եւ ամենակոպիտ ձեւով ընդամենը մեկ տարի առաջ պարզապես ոչնչացրել էր իրենց հիմնական, փայփայած քաղաքական բանաձեւը, այն է՝ Հայաստանը պետք է մնա ԽՍՀՄ կազմում, նրա միջոցով հասնի Թուրքիայից հայկական պատմական տարածքների ազատագրմանը, ապա միայն անկախանա (տե՛ս «Հայք», 17.06.1990): Եւ իրոք՝ «միեւնույն լեզվով խոսելու» ու միմյանց հասկանալու արդյունքն էր, որ ՀՅԴ-ն 1996-ի խորհրդարանական ընտրություններում ոչ միայն պաշտպանեց Վ. Մանուկյանի թեկնածությունը, այլեւ իր վրա վերցրեց նրա ընտրապայքարի նյութական եւ կազմակերպական ողջ բեռը:

713 «Ազգային ժողովրդավարներ» պատգամավորական խմբին անդամակցեցին. Նավարշ Քոչարյան, Սեյրան Ավագյան, Լյուդվիգ Խաչատրյան, Ամբոտ Հակոբյան, Սամսոն Ղազարյան, Վազգեն Մանուկյան, Սամվել Շահինյան, Արշակ Սադոյան, Տիգրան Սարգսյան, Դավիթ Վարդանյան (տե՛ս Տեղեկագիր ՀՀ Դխ-ի, 1991, 22, հոդվ. 482):

714 «Դրոշակ», 14.08.1991:

ազգ-կազմակերպություն»[715]: Այս մեղադրանքն էլ նորություն չէր, այն հնչել էր դեռ ՀՀՇ-ի առաջին եւ երկրորդ համագումարների առիթով, մասնավորապես՝ Դաշնակցության կողմից, եւ այն ժամանակ Վ. Մանուկյանն, իհարկե, չէր պաշտպանել այդ տեսակետը:

Այսպիսով՝ անկախությունը, պետականությունը, քաղաքացին ոչ որպես առաջնային արժեք համարելու, ՀՀՇ-ն ոչ որպես քաղաքական կազմակերպություն, այլ «կազմակերպությունների հովանոց» համարելու, «ազգային» խնդիրները պետականից տարբերակելու ու վեր դասելու, ազգ-կազմակերպություն ստեղծելու եւ այլ գաղափարներով ԱԺՄ-ն, ըստ էության, կրկնում էր ՀՅԴ գաղափարական սկզբունքները եւ կանգնում նրա կողքին, իսկ ընտրյալ ազգ լինելու եւ համաշխարհային առաքելություն ունենալու գաղափարով էլ նրանից մի քայլ առաջ էր անցնում:

[715] *«Հայք», 14.08.1991:*

6. ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԵՒ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁ

ա) Օգոստոսի 18-ի պետական հեղաշրջումը Մոսկվայում

Ժողովրդավարական ուժերի նվաճումները եւ խորհրդային կենտրոնական իշխանության զանազան ձեռնարկումներն ավելի ու ավելի հստակ էին ցույց տալիս, որ ճգնաժամն արագ թափով խորանում է, եւ դրա տրամաբանական ավարտը պետք է լինի կայսրության հոգեվարքն ու ավարտը: Նախորդ մեկ տարվա ընթացքում ծավալված իրադարձությունների բնույթը եւ գլխապտույտ արագությունը դրա պերճախոս վկայությունն էին: Հետադիմական ուժերի հնարավոր հակազդեցություններից մեկը կարող էր լինել պետական հեղաշրջման իրականացումը, խորհրդային դասական բռնապետական ռեժիմի վերականգնման փորձը: Այդպիսի սպառնալիք կանխատեսելով՝ համապատասխան ուժերի տեղաշարժի ու նրանց վարքագծի մասին իր կանխատեսում-մտահոգությունը հայտնեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Գերագույն խորհրդի ապրիլի 25-ի դռնփակ նիստում. «Առայժմ ողջ երկրի մասշտաբով, մասնավորապես Կենտրոնում, տեղի է ունենում ուժերի լուրջ վերաբաշխում, եւ կարծեք թե կողմերը նախապատրաստվում են լուրջ ճակատամարտի: Նկատվում է աջ վտանգի լուրջ սպառնալիք, որի արդյունքը պետք է համարել «Միություն» պատգամավորական խմբի գործունեությունը, որն, ինչպես գիտեք, պահանջում է հրավիրել արտահերթ համագումար՝ քննարկելու Գորբաչովի անձնական պատասխանատվության հարցը երկրի վիճակի համար: Մյուս կողմից՝ նույնպիսի դժգոհություն կա Գորբաչովի նկատմամբ նաեւ դեմոկրատական ուժերի կողմից, եւ, կարծեք թե, երկու կողմերը տարբեր նկատառումներով պահանջում են նույն բանը.... Աջ ուժերի սպառնալիքի արդյունք պետք է համարել նաեւ այս պահին Մոսկվայում ընթացող ԽՄԿԿ կենտկոմի պլենումը.... որտեղ կարող է դրվել նրա հրաժարականի հարցը»[716]: Միա-

[716] *ՀՀԱՆԱ, թղթ. 12/25.04.91, թ. 1բ 2ա (ելույթ ՀՀ Գխ նստաշրջանում 25.04.1991):*

ժամանակ, նույն թեզով ՀՀ ԳԽ նախագահը հանդես եկավ նաեւ հրապարակավ՝ ամերիկյան թերթերից մեկին տված կարճ մի հարցազրույցով[717]:

Իսկ իրավիճակը 1991թ. ամռանն այսպիսին էր:

Մոսկվայի ազդեցության ոլորտից վերջնականապես ու շատ կարճ ժամանակում դուրս էին եկել Արեւելյան Եւրոպայի երկրները: Իր գոյությունը դադարեցրեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը, եւ 1990թ. հոկտեմբերի 3-ին Ռայխստագի վրա բարձրացվեց միավորված Գերմանիայի դրոշը[718]: Չնայած գործադրած բոլոր ջանքերին, Մոսկվային չհաջողվեց պահել ոչ միայն քաղաքական ազդեցության հիմքը՝ «սոցիալիստական ճամբարը», այլեւ կորցրեց իր ռազմական ազդեցությունը՝ Վարշավյան պայմանագիրը՝ որպես ռազմա-քաղաքական դաշինք, ինչպես նաեւ իր ազդեցության տնտեսական հիմք հանդիսացող կառույցը՝ Տնտեսական փոխօգնության խորհուրդը:

---

[717] *Հարցազրույցը հրապարակվել է Christian Science Monitor թերթում (01.05.1991): Թերթի թղթակիցը, նախապես արձանագրելով, որ «Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտնի է որպես խորհրդային անցուդարձերի սուր դիտորդ-մեկնաբան», նրան, ըստ էության, ուղղում է մեկ հարց՝ ԽՍՀՄ-ում առաջացած ճգնաժամից ելքերի մասին, այն է՝ աջ ուժերը կդիմե՞ն բռնի ուժի գործադրման Խորհրդային Միության ամբողջականությունը պահպանելու համար, թե՞ կխորանան ժողովրդավարական գործընթացները, եւ՝ երկու դեպքում էլ ինչպիսին կլինի Գորբաչովի դիրքորոշումն ու հնարավոր դերակատարությունը: Լեւոն Տեր-Պետրոսյանի կանխատեսումն այսպիսին էր. «Հնարավոր է, որ զինվորականների, պետանվտանգության կամ ուրիշների կողմից դավադիր փորձեր արվեն, սակայն այդպիսի փորձերը դատապարտված են ձախողության: Ես չեմ հավատում, թե Գորբաչովն ինքն այդպիսի կուրս վերցնի....» (Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 191): Նա Գորբաչովի դերը որոշ իմաստով գնահատում է որպես «հավասարակշռող», սակայն այդ առումով շատ ավելի կարեւոր եւ վճռական է գնահատում ելցինի դերը: Իսկ առաջացած ճգնաժամի համար տեսնում է միայն մեկ ճանապարհ. «....դեմոկրատական ուժերը պետք է ամրապնդվեն, իսկ Կենտրոնը պետք է հեռանա բեմից.... Կենտրոնը դատապարտված է փլուզման, եւ նա չի կարող վերականգնել իր ֆունկցիան» (Նույնը, էջ 192): Կանխատեսումների հենց այս սցենարով էլ ընթացան հաջորդ 7-8 ամիսներին ԽՍՀՄ-ում ծավալված իրադարձությունները, ընդհուպ՝ մինչեւ Կենտրոնի՝ բեմից հեռանալը:*

[718] *Գերմանիայի վերամիավորման «Գերմանիայի նկատմամբ վերջնական կարգավորման մասին» պայմանագիրը, ստորագրված ԳՖՀ-ի, ԳԴՀ-ի, Անգլիայի, ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Ֆրանսիայի կողմից, ուժի մեջ է մտել 1991թ. մարտի 15-ին (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 452):*

Միաժամանակ, Կենտրոնի եւ անկախության ուղին բռնած հանրապետությունների միջեւ շարունակվում էր «օրենքների եւ որոշումների պատերազմը»: Մերձբալթյան հանրապետությունները Խորհրդա-գերմանական 1939թ. գաղտնի պայմանագրի ապօրինի եւ անվավեր ճանաչելու ուժով իրենց անկախ էին համարում եւ քայլ առ քայլ առարկայացնում այդ անկախությունը: 1990թ. հունիսին Էստոնիայի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց դադարեցնել հանրապետական բյուջեից ՊԱԿ-ի, գլավլիտի, զինվորական կոմիսարիատի ֆինանսավորումը: Լիտվայում ընդունված օրենքը հանրապետության ոստիկանությունը անջատում էր ԽՍՀՄ ՆԳ համակարգից: Հուլիսի 21-ը, Լատվիայի եւ Լիտվայի խորհրդայնացման օրը, այս հանրապետությունները նշեցին սեւ դրոշներով եւ անվավեր հայտարարեցին 1940թ. ԽՍՀՄ կազմի մեջ մտնելու իրենց օրենսդիր մարմինների ընդունված որոշումները: Կենտրոնական իշխանությունը պարբերաբար «հակասահմանադրական» ու «անվավեր» էր ճանաչում վերջիններիս ընդունած, ինքնիշխանության հիմքերը դնող որոշումներն ու օրենքները, սակայն նրա արգելանքները գործնական որեւէ նշանակություն չէին ունենում: Հանրապետությունների ներսում շարունակում էին աշխատել ու կենսագործվել իշխանության իրենց մարմինների ընդունած օրենքներն ու որոշումները: Մեկը մյուսի հետեւից իրենց ինքնիշխանությունն էին հռչակում նաեւ մյուս հանրապետությունները:

Մոսկվայի գործադրած քողարկված ու անսքող ուժային ռազմական միջամտությունները, որոնք շատ դեպքերում արյունալի ավարտ էին ունենում, ոչ միայն չէին կասեցնում անկախության ուղին բռնած հանրապետությունները ընթացքը, այլեւ հակառակ արդյունքն էին ունենում: Թեեւ արեւմտյան խոշոր տերությունների ղեկավարներն աշխատում էին հնարավորինս մատների արանքով նայել Մոսկվայի ապօրինություններին եւ ուժային ճնշումներին, շարունակում էին պաշտպանել Գորբաչովին, այնուամենայնիվ, այդօրինակ իրադարձությունները դատապարտվում էին միջազգային հասարակական կարծիքի կողմից, եւ աճում էր համակրանքը ժողովրդավարական շարժումների ու «ըմբոստ» հանրապետությունների նկատմամբ: Ժողովրդավարական պայքարը ծավալվել էր նաեւ մյուս՝ մինչ այդ ավելի պասիվ հանրապետություններում: Մասնավորապես՝ 1990թ. հունիսին ինքնիշխանության հռչակագիր էր ընդունել Մոլդովան, հուլիսին՝ Ուկրաինան եւ Բելառուսը, սեպտեմբերին՝ Ղազախստանը եւ Ղրղզստանը: Հայաստանը՝ ԽՍՀՄ հանրապետություններից միակը, խորհրդարանական ընտրություններում ժողովրդավարական, ոչ կոմունիստական ուժերի հաղ-

թանակից հետո ընտրել էր անկախության հասնելու հենց ԽՍՀՄ համապատասխան օրենքով առաջնորդվելու ուղին. 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը» ազդարարում էր այդ գործընթացի սկիզբը, եւ հանրապետությունը դրա դրույթների իրականացմամբ գործում էր որպես դե-ֆակտո լիարժեք անկախ պետություն:

Չնայած Կենտրոնի գործադրած բոլոր ջանքերին՝ տասնհինգ հանրապետություններից վեցը չմասնակցեցին 1991թ. մարտին անցկացված միութենական հանրաքվեին, որի արդյունքները, սակայն, իրավական հետեւանքներ չունեցան, իսկ քաղաքական հետեւանքները գործնականում իրացնելու հնարավորությունները խիստ կասկածելի էին: Միութենական հանրաքվեին չմասնակցած հանրապետությունների մի մասը տարբեր ձեւակերպումներով անցկացրեց սեփական հանրաքվեն, Հայաստանը, առաջնորդվելով ԽՍՀՄ համապատասխան օրենքով, նշանակեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու իր հանրաքվեն 1991թ. սեպտեմբերի 21-ին: Վրաստանում 1991թ. ապրիլի 14-ին, ուղղակի ընտրություններով հանրապետության Նախագահ ընտրվեց վրացական ժողովրդավարական շարժման առաջնորդ Զվիադ Գամսախուրդիան:

Հատկապես կարեւոր նշանակություն էր ձեռք բերում այն հանգամանքը, որ Ռուսաստանում իշխանության էին եկել ժողովրդավարական ուժերը: Ելցինը 1990-ի մայիսի 29-ին Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարում ընտրվել էր ՌՍՖՍՀ ԳԽ նախագահ: Երկու մայրաքաղաքներում հաղթանակ էին տարել նրա համախոհները՝ Մոսկվայում Գավրիլ Պոպովը, եւ Սանկտ Պետերբուրգում՝ Անատոլի Սոբչակը: 1990թ. հունիսի 12-ին ՌՍՖՍՀ ժող. պատգամավորների համագումարն ընդունել էր «Ռուսաստանի պետական ինքնիշխանության մասին հռչակագիրը»: Հաճախ հենց Ռուսաստանի իշխանությունն էր կոչտ հակադրվում Կենտրոնին: Նույն թվականի սեպտեմբերին ՌՍՖՍՀ Գերագույն խորհուրդը ԽՍՀՄ կառավարությանն առաջարկեց հրաժարական տալ՝ քանի որ կորցրել է իր հեղինակությունը եւ չի կարողանում հաղթահարել խորացող ճգնաժամը[719]: Հատկանշական էր նաեւ Մերձբալթյան հանրապետություններում ուժի գործադրման առիթով Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահության սուր հակազդեցությունը եւ Ելցինի կողմից Գորբաչովի հրաժարականի պահանջը: Ռուսաստանը քայլեր էր անում քաղաքական կյանքի ժողովրդավարացման, տնտեսական կյանքի

[719] *Տե՛ս* ***Ельцин Б.***, *Записки президента, с. 26.*

ազատականացման ուղղությամբ. 1990թ. հունիսին ՌՍՖՍՀ ժող. պատգամավորների համագումարն օրենք ընդունեց ժողովրդապետության մասին, որով արգելվում էր պետական իշխանության մարմինների եւ այլ ղեկավար աշխատողների պաշտոնների համատեղումը քաղաքական ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարության հետ[720]: 1990թ. դեկտեմբերին Ռուսաստանն ընդունեց «Սեփականության մասին օրենքը», որով թույլ էր տրվում մասնավոր սեփականության գոյությունը, իսկ 1991թ. մարտի 21-ին «Մրցակցության եւ ապրանքային շուկայում մենաշնորհային գործունեության սահմանափակման մասին» օրենքը[721], որով ազատ շուկայական հարաբերությունների զարգացման հիմքն էր դրվում: Այսինքն՝ Ռուսաստանը կատարում էր այնպիսի քայլեր, որոնք մինչ այդ կատարվել էին Հայաստանում, Մերձբալթյան հանրապետություններում եւ արժանացել Կենտրոնի սուր հակազդեցությանը: 1991թ. հունիսի 12-ին Բ. Ելցինը համաժողովրդական ուղիղ ընտրություններով ընտրվեց ՌՍՖՍՀ Նախագահ: Միայն որպես այդպիսին արդեն իսկ նրա քաղաքական կշիռը բարձրանում էր Գորբաչովի նկատմամբ, որը ԽՍՀՄ Նախագահ էր ընտրվել ոչ ուղիղ ընտրություններով: Հուլիսի 20-ին Ելցինն իր առաջին հրամանագրերից մեկով հանրապետության տարածքում դադարեցրեց պետական մարմիններում, հիմնարկներում եւ կազմակերպություններում քաղաքական կուսակցությունների եւ զանգվածային հասարակական շարժումների կազմակերպական կառույցների գործունեությունը[722]: Կենտրոնի համար, անշուշտ, դժվար էր, առավել եւս՝ անհեռանկար, նույն կերպ վարվել Ռուսաստանի «հակասահմանադրական» որոշումների հետ, մանավանդ, որ այդպիսիք որեւէ արդյունքի չէին հանգեցնում անգամ փոքր հանրապետությունների դեպքում: Ճիշտ է՝ Ելցինը չէր հրաժարվում Միութենական նոր պայմանագրի ստորագրումից, սակայն ակնկալում էր, որ դրանում հանրապետությունները, եւ առաջին հերթին՝ Ռուսաստանը, պետք է «ձայնի իրավունք ունենա ռազմավարական խնդիրներ լուծելիս»[723]:

Կենտրոնական իշխանությունն անընդհատ կորցնում էր իր ավանդական ազդեցությունն ու լծակները: Գորբաչովը ոչ միայն չէր կարողանում

[720] *Տե՛ս նույն տեղում, էջ 23:*
[721] *Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 499:*
[722] *Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ-ի, 1991, 31, հոդվ. 1035:*
[723] ***Ельцин Б.***, *Записки президента, с. 73.*

տիրապետել ընդհանուր իրավիճակին, այլեւ կենտրոնական իշխանության համակարգում ունեցած իշխանական լծակներին: Նա այդպես էլ չկարողացավ հրաժարվել հետադիմական ուժերին հենարան ունենալուց եւ հասարակական պատկերացումներում այլեւս չէր դիտվում որպես հոչակված բարեփոխումների առաջնորդ: Ուստի հասարակական դժգոհությունը, հաճախադեպ դարձած հանրահավաքներն ու զանգվածային այլ միջոցառումներն ուղղված էին հենց Գորբաչովի դեմ: Բոլորովին այլ տեսանկյունից, նրանից դժգոհ էին նաեւ իր հենարանը հանդիսացող հետադիմական ուժերը: Սրանք, մասնավորապես, ուժային նախարարները նրանից դժգոհ էին իշխանության իրացման՝ իրենց չափանիշներով մեղմ կուրսի, երկրում ծավալված անջատողական գործընթացների հանդեպ դրսեւորած անվճռականության պատճառով: Նրանք վաղուց արդեն ուղիներ էին փնտրում վերականգնելու նախկին բռնատիրական վարչակարգը: Դեռ 1990թ. հուլիսին ԽՄԿԿ 28-րդ համագումարում Գորբաչովը նրանց դեմ մեծ դժվարությամբ կարողացավ պահպանել կուսակցության Գլխավոր քարտուղարի իր պաշտոնը:

Հետադիմական ուժերի համար կայսրության փլուզման եւ իշխանության կորստի հեռանկարի նոր մի ահազանգ պետք է լինեին, բնականաբար, Ռուսաստանում ժողովրդավարական ուժերի հաջողությունները՝ Ելցինի ՌԴ Նախագահ ընտրվելը եւ երկու մայրաքաղաքներում նրա համախոհների հաղթանակները: Փաստական իշխանության աստիճանական անցումը ժողովրդավար ուժերի ձեռքը այլեւս կասկած չէր հարուցում: Կայսերապետական գաղափարախոսության հիմքի վրա նոր Միության կազմավորման հեռանկարը այս պայմաններում դարձավ առավել մառախլապատ: Հանրապետությունների, այդ թվում՝ նաեւ Ռուսաստանի պահանջները լիակատար ինքնիշխանություն ունենալու հարցում հետեւողականորեն շեշտվում եւ ավելանում էին[724]: Ելցինը Ռուսաստանի մասնակցությունը միութենական պայմանագրին պայմանավորում էր նաեւ Գորբաչովի հենարան հանդիսացող բարձրաստիճան հետադիմական գործիչների հեռացմամբ[725]: Իսկ ինքնիշխան պետությունների որեւէ դաշինքում տրամա-

[724] *Հատկանշական մի օրինակ. Ռուսաստանի ԳԽ նախագահությունը պաշտոնական բողոք հայտնեց այն բանի համար, որ առանց իր համաձայնության ստորագեցնյա միջուկային փորձարկումներ են կատարվել իր տարածքում (տե՛ս* **Ельцин Б.**, *Записки президента, с. 27.*

[725] *Թերեւս, դեր է խաղացել նաեւ այն հանգամանքը, որ Գորբաչովը Ելցինի՝ Ռուսաստանի նախագահ ընտրվելուց հետո փակ խորհրդակցություններ էր ունեցել վերջինիս հետ: Այդպիսի խորհրդակցություններից մեկի ժամանակ, Ելցինի*

բանորեն անհասկանալի էր դառնալու Կենտրոնի՝ որպես միավորի անհրաժեշտության հարցը: Նման պայմաններում ամենեւին անակնկալ չպետք է լիներ իրավիճակը փրկելու՝ կայսերապետական ուժերի վերջին ճիգերի գործադրումը: Նրանք 1991-ի ամռանը փորձեցին Գերագույն խորհրդից իրենց համար հատուկ լիազորություններ ստանալ, սակայն դա չստացվեց[726]: Ուստիեւ՝ մնում էր վերջին տարբերակը՝ դիմել բացահայտ պետական հեղաշրջման:

Օգտվելով Գորբաչովի՝ Մոսկվայից բացակայելու հանգամանքից[727], բարձրաստիճան պաշտոնյաների մի խումբ իշխանությունը գրավելու եւ երկրում բռնապետական ռեժիմ հաստատելու փորձ կատարեց: Դավադիրների խմբում էին ԽՍՀՄ փոխնախագահ Գենադի Յանաեւը, վարչապետ Վալենտին Պավլովը, ՊԱԿ-ի նախագահ Վլադիմիր Կրյուչկովը, ՆԳ նախարար Բորիս Պուգոն, պաշտպանության նախարար Դմիտրի Յազովը եւ էլի մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ: ԽՍՀՄ ԳԽ նախագահ Անատոլի Լուկյանովը թեեւ պաշտոնապես չէր մտել նրանց կազմած «կոմիտեի» մեջ, սակայն ի սկզբանե սերտորեն համագործակցում էր նրանց հետ: Ելցինի վերլուծությամբ՝ դավադիրները կարող էին պահը հարմար համարել հեղաշրջման համար՝ նկատի ունենալով հետեւյալ հանգամանքները: Գորբաչովից դժգոհ էր բանակը՝ Արեւմուտքին արված զիջումների, Գերմանիայից զորքերի անկազմակերպ դուրս բերման, ազգամիջյան հակամարտություններում բանակի ուժերի ներգրավման ու դրա հետեւանքով տված զոհերի պատճառով: Գերագույն խորհուրդն իր հիմնական մասով կազմված էր խորհրդային նոմենկլատուրայից եւ վերահսկվում էր ոչ թե Գորբաչովի, այլ Լուկյանովի կողմից, իսկ վերջինս իր քաղաքական կեցվածքով հետադիմական ուժերի ներկայացուցիչն էր: Նույն տիրույթում էր նաեւ կառավարության նախագահ Պավլովը, որը նույնպես իրեն բավականին կոշտ էր պահում Գորբաչովի հետ հարաբերություններում: Երկրի քաղաքական կյանքում որեւէ դեր չէր խաղում ո՛չ ԽՄԿԿ քաղբյուրոն, ոչ էլ Նախագահական խորհուրդը[728]: Այսինքն՝ կարծես թե երկրի բոլոր ուժա-

վկայությամբ, նա խոստացել էր Միութենական պայմանագրի ստորագրումից հետո իշխանությունից հեռացնել ՊԱԿ-ի նախագահ Կրյուչկովին եւ ՆԳ նախարար Պուգոյին (տե՛ս **Ельцин Б.**, *Записки президента, с. 55.*

[726] *Տե՛ս «Հայաստան», 24.08.1991:*

[727] *Գորբաչովը հանգստանում էր Ղրիմում, «Ֆորոս» հանգստավայրում, որտեղ էլ նա օգոստոսի 18-ին դավադիրների կողմից տնային կալանքի էր ենթարկվել:*

[728] *Տե՛ս* **Ельцин Б.**, *Записки президента, с. 75-76.*

յին կառույցները, օրենսդիր եւ գործադիր իշխանությունները, ի դեմս իրենց ղեկավարության, մի ճամբարում էին, ուստիեւ պետական հեղաշրջման հաջողությունը պետք է որ կասկած չհարուցեր[729]: Ինչ վերաբերում է Արեւմուտքի հնարավոր հակազդեցությանը, այն էական լինել չէր կարող, քանզի նրանք այդպես էլ Գորբաչովին չտրամադրեցին այն ֆինանսական օգնությունը, որով հնարավոր կլիներ երկիրը դուրս բերել ճգնաժամային վիճակից: Ըստ Կրյուչկովի տվյալների՝ Արեւմուտքն արդեն Գորբաչովին համարում էր սպառված գործիչ:

Օգոստոսի 20-ին Գորբաչովը պետք է վերադառնար Մոսկվա եւ մասնակցեր նույն օրը նշանակված Միութենական նոր պայմանագրի ստորագրման արարողությանը, որին պետք է մասնակցեին Ռուսաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Բելառուսը եւ Տաջիկստանը: Նախատեսվում էր, որ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պայմանագրին պետք է միանային նաեւ Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը եւ Ուկրաինան[730]: Դավադիրները կամ շտապում էին կանխել այս իրադարձությունը, կամ պարզապես որոշել էին, որ Գորբաչովի բացակայությունն է հարմար պահը: Օգոստոսի 18-ին նրանք պատվիրակություն ուղարկեցին Գորբաչովի մոտ՝ առաջարկելով «առողջական վիճակի պատճառով» իր լիազորությունները փոխանցել փոխնախագահ Յանաեւին: Երբ Գորբաչովը հրաժարվեց, նրան ենթարկեցին տնային կալանքի եւ զրկեցին կապի միջոցներից: Ապա օգոստոսի լույս 19-ի գիշերը նրանք հայտարարեցին, թե առողջական վիճակի պատճառով Գորբաչովի կողմից անհնար է դարձել ԽՍՀՄ Նախագահի պարտականությունների կատարումը, եւ նրա լիազորություններն անցել են փոխնախագահին: Վերջինս էլ, ահա, բարձր պաշտոնյաների այդ խմբի հետ ստեղծել է ժամանակավոր մի մարմին՝ Արտակարգ դրության պետա-

729 *Ըստ Ջ. Բոֆֆայի, նախորդ ամիսներին երկու անգամ, ԿԿ-ի պլենումում եւ Գխ-ի նախագահության փակ նիստի ժամանակ Գորբաչովին առաջարկվել է կա՛մ ճգնաժամը հաղթահարելու համար երկրում արտակարգ դրություն մտցնել, կա՛մ հրաժարական տալ: Նա երկու դեպքում էլ չէր համաձայնել (տե՛ս* **Боффа Джузеппе**, *От СССР к России. История неоконченного кризиса, 1964-1994, М. 1996, с. 237): Այսինքն՝ հեղաշրջման մասին նա չէր կարող առնվազն չենթադրել: Ավելին, ըստ նույն հեղինակի, նրան դեռ հունիսին այդ մասին շտապ տեղեկացրել էր ԱՄՆ նախագահ Բուշը՝ վկայակոչելով ամերիկյան հետախուզության հավաստի տվյալները (տե՛ս նույն տեղում, էջ 234):*

730 *Տե՛ս* **Ельцин Б.**, *Записки президента, с. 63.*

կան կոմիտե (ԳԿՉՊ)՝ երկիրը ծանր ճգնաժամից դուրս բերելու համար: Օգոստոսի 19-ին լույս տեսավ միայն «Պրավդա» թերթը:

Օգոստոսի 18-ի ուշ երեկոյան արված հայտարարության մեջ հակասահմանադրական այս մարմինը օգոստոսի լույս 19-ի ժամը 4-ից «ԽՍՀՄ առանձին վայրերում» վեց ամիս ժամկետով արտակարգ դրություն հայտարարեց: Մեծ քանակությամբ զորք ու ծանր տեխնիկա մտցվեց Մոսկվա: Հայտարարվեց, որ ԽՍՀՄ ողջ տարածքում գործում են միայն ԽՍՀՄ Սահմանադրությունը, միութենական օրենքները եւ պարտադիր են կատարման միայն իր՝ ԳԿՉՊ-ի ընդունած որոշումները: Վերջինիս ընդունած թիվ 1. Որոշմամբ, մասնավորապես նախատեսվում էր՝ «անհապաղ կազմացրել ԽՍՀՄ Սահմանադրությանը եւ օրենքներին հակառակ գործող իշխանության եւ կառավարման կառուցվածքները, ռազմական կազմավորումները...»[731]: Միաժամանակ՝ հրապարակվեց նաեւ ԽՍՀՄ ԳԽ նախագահ Լուկյանովի հայտարարությունը՝ միութենական պայմանագրի ստորագրումը հետաձգելու մասին:

Բոլորի առաջին ռեակցիան զգուշավորությունն էր: Ելցինի վկայությամբ՝ սպասողական կեցվածք էին ընդունել նաեւ այն «մեծ հանրապետությունները», որոնց ղեկավարների հետ իրեն հաջողվել էր կապվել օգոստոսի 19-ին: Նրա ունեցած տեղեկությունների համաձայն՝ Մոսկվայում արտասահմանյան երկրների դեսպաններն իրենց պաշտպանությունն էին հայտնել ԳԿՉՊ-ին[732]: Եւ, այնուամենայնիվ, դեռ մինչեւ այս ամենը պարզելը, Ռուսաստանի Նախագահ Ելցինը վերցրեց նետված ձեռնոցը: Նրա անմիջական արձագանքը անվերապահ կտրուկ էր եւ իրավիճակին համարժեք: Օգոստոսի 19-ի վաղ առավոտյան նա, դեռ իր շրջափակված բնակարանից, տարածեց մի հայտարարություն, որով ապօրինի էր համարում «այսպես կոչված Կոմիտեն», նույն կերպ ապօրինի էր համարում նրա բոլոր որոշումներն ու կարգադրությունները[733]: Ապա նա, դժվարությամբ կարողանալով հասնել Սպիտակ տուն, ելույթ ունեցավ այստեղ հավաքված բազմության առջեւ, կոչ արեց քաղաքական գործադուլի, որին, սակայն, արձագանքեցին Մոսկվայի եզակի ձեռնարկություններ եւ Կուզբասում երեք հանքահոր: Երեկոյան, համոզված, որ նախապատրաստվում է գրոհ Սպիտակ տան վրա, նա կոչ արեց մոսկվացիներին հավաքվել ու պաշտ-

731 *«Հայաստանի Հանրապետություն» 20.08.1991:*

732 **Ельцин Б.**, *Записки президента, с. 106.*

733 *Նույն տեղում, էջ 63.*

պանել այն: Իրավիճակի դեռեւս լրիվ անորոշության պայմաններում նա ստորագրեց մի քանի հրամանագրեր, որտեղ կատարվածը գնահատվում էր որպես պետական հեղաշրջման փորձ եւ պետական հանցագործություն, իսկ ստեղծված մարմինը՝ հակասահմանադրական: Համարելով, որ դրա հետեւանքով կաթվածահար է եղել ԽՍՀՄ ողջ գործադիր իշխանությունը, Ելցինը մինչեւ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարի գումարումը, իր ենթակայության տակ հայտարարեց Ռուսաստանի տարածքում գործող ԽՍՀՄ գործադիր իշխանության բոլոր մարմինները, ներառյալ ԽՍՀՄ ՊԱԿ-ը, ՆԳՆ-ն, պաշտպանության նախարարությունը՝ վերջիններիս գործառույթները հանձնարարելով հանրապետական համապատասխան նախարարություններին եւ գերատեսչություններին: Ուժային կառույցների բոլոր ստորաբաժանումներին հրամանագիրը պարտավորեցնում էր անհապաղ իրականացնել Ռուսաստանի Նախագահի հրամանագրերը եւ հրահանգները: ԳԿՀՊ-ի բոլոր որոշումները Ռուսաստանի տարածքում հայտարարվում էին անօրինական եւ ուժ չունեցող, իսկ այդ որոշումները կատարողներին սպառնում էր օրենքով նախատեսված պատիժ[734]: Նա կոչով դիմեց Ռուսաստանի քաղաքացիներին՝ «արժանի պատասխան տալ խռովարարներին եւ պահանջել երկիրը վերադարձնել բնականոն սահմանադրական զարգացման ուղի»: Նա նաեւ համոզմունք հայտնեց, որ «համաշխարհային հանրությունը կտա աջ հեղաշրջման այս լկտի փորձի ճշմարիտ գնահատականը»[735]:

Ռուսաստանի Նախագահի վճռականությունը տպավորիչ էր, իսկ հեղաշրջման կազմակերպիչների համար տասնյակ հազարավոր մոսկվացիների կողմից Ռուսաստանի խորհրդարանի շենքի վճռական պաշտպանությունը՝ անակնկալ: Վերջիններիս էր միացել նաեւ Թամանյան դիվիզիայի 10 տանկ: Շուտով Ելցինին սկսեցին իրար հետեւից իրենց հավատարմությունը հայտնել զինվորական ստորաբաժանումներ[736], տարածաշրջանների ղեկավարներ: Ուժերի հարաբերակցությունը ժամ առ ժամ փոխվում էր հօգուտ նրա: Պարզվեց, որ խորհրդարանի շենքը գրոհել հնարավոր է միայն

[734] *Տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ Գխ, 1991, 34, հոդվ. 1132,1133, 1134, 1135, 1136:*

[735] *«Հայաստանի Հանրապետություն», 21.08.1991:*

[736] *Դրա համար կարեւոր նշանակություն ունեցավ օգոստոսի 20-ի հրամանագիրը, որով Ելցինը «մինչեւ պետական իշխանության սահմանադրական մարմինների գործունեության ամբողջ ծավալով վերականգնումը» իր վրա էր վերցնում ՌՍՖՍՀ-ի տարածքում ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը (Տեղեկագիր, ՌՍՖՍՀ Գխ-ի, 34, հոդվ. 1138):*

այն շրջափակած բազմության հոծ շարքերը ճեղքելով՝ արյունահեղության, բազմաթիվ զոհերի գնով: Մինչ այդ, գիշերն արդեն զոհվել էին երեք հոգի: Այս պայմաններում պաշտպանության նախարար Յազովն իր տեղակալների ճնշմամբ զորքերը Մոսկվայից դուրս հանելու հրաման տվեց:

Պետական հեղաշրջման փորձը տապալվեց: Օգոստոսի 21-ին բացվեց ՌՍՖՍՀ ԳԽ-ի նախապես հրավիրված նստաշրջանը: Նույն օրն ուշ երեկոյան Գորբաչովը վերադարձավ Մոսկվա: Հեղաշրջման ղեկավարները եւ կազմակերպիչները ձերբակալվեցին[737]: Հեղաշրջման դավադիր փորձը, բարեբախտաբար, կասեցվեց, եւ դա՝ առաջին հերթին Ելցինի գլխավորությամբ ժողովրդավարական ուժերի վճռական ընդդիմացման եւ համաժողովրդական ընդվզման շնորհիվ:

բ) Հայաստանի դիրքորոշումը ԳԿՀՊ-ի օրերին

Պետական հեղաշրջման մասին հայտարարությունից անմիջապես հետո «Արտակարգ կոմիտեի» լիազորություններով Մոսկվայից Հայաստան ժամանեցին 10 գեներալ: Հանրապետության ղեկավարությունը տիրապետում էր ստույգ տեղեկատվության, որ Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը նախատեսված էին այն տարածքների թվում, որտեղ իշխանությունը զավթած «կոմիտեն» պետք է արտակարգ դրություն հաստատեր ու փորձարկեր իր ուժը: Հայաստանը եւ Ղարաբաղը ամենահարմար վայրերն էին, որտեղ ամենափոքր առիթի դեպքում հնարավոր էին ուժի ցուցադրման այնպիսի ակտեր, որոնք տպավորիչ եւ զգաստացնող «դաս» լինեին ուրիշների համար Խորհրդային Միության մասշտաբով: Կասկածից դուրս էր նաեւ, որ այդօրինակ մի «փորձարկում» կարող էր ծանր եւ անդառնալի հետեւանքներ ունենալ Հայաստանի եւ Ղարաբաղի համար: Ըստ այսմ՝ Հայաստանի իշխանությունները երեք կարեւոր խնդիր ունեին. առաջին՝ ապահովել, որ բացառվի պատժիչ գործողության դիմելու որեւէ առիթ, երկրորդ՝ փորձել Հայաստանը դուրս բերել արտակարգ դրություն հաստատելու փորձարկման համար նախատեսված տարածքների ցուցակից, երրորդ՝ հնարավորինս օժանդակել Ռուսաստանի ժողովրդավարական ուժերին, նպաստել պետական հեղաշրջման տապալմանը:

Երեք խնդիրներն էլ հաջողությամբ լուծվեցին:

[737] *Հեղաշրջման կազմակերպիչներից եւ ակտիվ մասնակիցներից երեք հոգի՝ մարշալ Սերգեյ Ախրոմեեւը, ԽՄԿԿ ԿԿ-ի գործերի կառավարիչ Նիկոլայ Կրուչինան եւ ՆԳ նախարար Պուգոն ինքնասպանությամբ վերջ տվեցին իրենց կյանքին:*

Նույն օրը՝ օգոստոսի 19-ին, կատարվեցին մի քանի կարեւոր քայլեր:

Ա) Լեւոն Տեր-Պետրոսյանը Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինին ուղարկեց կատարված հեղաշրջումը դատապարտող եւ աջակցական գաղտնի նամակ[738]:

Բ) Գերագույն խորհրդի նախագահը ուղերձով դիմեց Հայաստանի քաղաքացիներին: Ջգուշացնելով, որ երկրում տեղի են ունենում լուրջ իրադարձություններ եւ փոփոխություններ, նա կոչ արեց զսպվածության, սառնասրտության, օրինապահության, հասարակական կարգուկանոնի պահպանման, ինքնագործ արարքների բացառման[739]:

Գ) Նույնպիսի կոչով հանդես եկան Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունները՝ հայտարարելով, որ իրենք համատեղ աշխատում են անընդհատ ռեժիմով եւ ուշադրությամբ հետեւում իրադարձությունների զարգացմանը[740]:

Դ) Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպում ունեցավ կուսակցությունների եւ լրատվամիջոցների ղեկավարների հետ՝ կանխելու համար նրանց գործողություններում եւ հրապարակումներում հնարավոր սայթաքումները:

Ե) Անմիջապես բանակցություններ սկսվեցին Մոսկվայից ժամանած գեներալների հետ: Նրանց հնարավոր եղավ համոզել, որ նպատակահարմար եւ ճիշտ չէ արտակարգ դրություն մտցնել մի հանրապետությունում, որտեղ ներքաղաքական իրավիճակն ավելի քան կայուն է, եւ, որ նրանց էլ

---

[738] *«Հարգելի Բորիս Նիկոլայեւիչ, Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ամբողջապես ու լիովին պաշտպանում է Ձեր դիրքորոշումը, այսպես կոչված, ԳԿՊՊ-ի (Արտակարգ դրության պետական կոմիտեի) նկատմամբ: Նկատի ունենալով այն փաստը, որ Հայաստանի բացահայտ դիմակայությունը խուստային կարող է հանգեցնել արյունալի սպանդի Ղարաբաղում, որտեղ վերջին օրերին խորհրդային բանակի ու ներքին զորքերի բարձր ակտիվություն է նկատվում, հանրապետական ղեկավարությունը առայժմ հակված է սպասողական դիրքորոշման՝ ձգտելով պահպանել հանրապետության սոցիալ-քաղաքական կայունությունը եւ իրավիճակը պահել օրինականորեն ընտրված իշխանությունների հսկողության տակ: Մեր հետագա գործողությունները Ձեզ հետ համաձայնեցնելու եւ կոորդինացնելու նպատակով Ձեզ մոտ եմ ուղարկում Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանին: Մեր ժողովուրդների համար այս դժվարին ժամին Ձեզ հավաստիացնում եմ, որ Հայաստանի ժողովուրդը կլինի Ռուսաստանի դեմոկրատական ուժերի կողքին» (նամակի ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 2/19.08.1991, հայերեն թարգմանությունը տե՛ս «Գիտնականը եւ նախագահը...», էջ 518-519):*

[739] *«Հայաստանի հանրապետություն», 20.08.1991:*

[740] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 347:*

է ձեռնտու ԽՍՀՄ տարածքում ավելի շատ վայրերում կայուն իրավիճակ ունենալը:

Բանակցությունների միջոցով հաջողվեց կանխել Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների վտանգավոր զարգացումները, ինչի համար առիթ կարող էին ծառայել նախորդ օրերի մի քանի դեպքեր: Նույն օրը՝ օգոստոսի 19-ին, հաջողվեց արագ կարգավորել չափազանց վտանգավոր մի իրավիճակ Լեռնային Ղարաբաղի Հաթերք գյուղում: Այստեղ դեռ օգոստոսի 13-ին բնակչության կողմից զինաթափվել եւ պատանդ էին վերցվել մի քանի տասնյակ խորհրդային զինվոր եւ սպա: Գյուղացիները պահանջում էին նրանց փոխանակել հայ պատանդների հետ: Միջադեպը կարգավորելու համար Հաթերք էին եկել ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավորներ, Հայաստանի ԳԽ-ի պատգամավորներ Վազգեն Սարգսյանը եւ Սերժիկ Սարգսյանը, սակայն որեւէ հաջողության չէին հասել: Այժմ դա կարող էր չափազանց վտանգավոր առիթ հանդիսանալ, բայց հարթվեց հենց օգոստոսի 19-ին՝ այդ նպատակով այստեղ ժամանած ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանի ջանքերով:

Օգտվելով կատարված հեղաշրջման փաստից՝ Ադրբեջանը փորձեց խորհրդային զորքերի օգնությամբ ետ բերել կորցրածը եւ տեղահանել նաեւ Վերիշեն գյուղը: Փորձն անհաջող անցավ. Հայաստանի գրաված դիրքի շնորհիվ հաջողվեց խորհրդային զորքերի հրամանատարությանը համոզել հետ քաշել զորքը:

Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում ԳԿՊՊ-ի հնարավոր վտանգավոր նախաձեռնություններն ու քայլերը կանխելուց հետո, օգոստոսի 20-ին, ուշ երեկոյան, Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց մի հայտարարություն, եւ այն ուղարկվեց ԽՍՀՄ ֆեդերացիայի խորհրդի անդամներին: Դրանում պաշտոնապես մերժվում էին Արտակարգ դրության պետական կոմիտեի իրավազորությունները, այն գնահատվում հակասահմանադրական եւ առաջարկվում անհապաղ հրավիրել ֆեդերացիայի խորհրդի նիստ՝ համատեղ ուժերով իրավիճակից դուրս գալու ելք գտնելու համար[741]: Նույն օրը հայտարարությամբ հանդես եկավ ՀՀՇ-ն՝ նշելով, որ իրադարձությունները կարող են արհեստականորեն արագացնել կայսրության փլուզման բնական ընթացքը՝ տանելով այն ցավագին, բացառված չէ՝ արյունոտ ճանապարհով: Բոլոր դեպքերում իշխանությունը կրող ուժն իր պատրաստակամությունն էր հայտնում, հնա-

---

[741] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 349:*

րավորինս կորուստներից խուսափելով, օրինական բոլոր միջոցներով շարունակել պայքարը «ի նպաստ Հայոց անկախ ժողովրդավարական պետության եւ արցախահայության ինքնորոշման իրավունքի»[742]: Իսկ օգոստոսի 21-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի ստորագրությամբ Ռուսաստանի Դաշնության Նախագահ Ելցինին հղված պաշտոնական փաստաթղթում մասնավորապես նշվում էր. «Մեր հիացմունքն ենք արտահայտում Ռուսաստանի ղեկավարության արիության կապակցությամբ, որի վճռական եւ անսխալ գործողությունների շնորհիվ հաջողվեց կանխել երկիրն արյունահեղ քաղաքացիական պատերազմի հասցնելու ընդունակ հակասահմանադրական վարչակարգի հաստատումը»[743]:

Գտնվելով ամենաբարդ պայմաններում, ճկուն վարքագծի ու ճշգրիտ քայլերի միջոցով Հայաստանը կարողացավ բացարձակապես անկորուստ դուրս գալ ամենաճգնաժամային ու ամենավտանգավոր իրավիճակից: Հեղաշրջման լուրը ստանալուց անմիջապես հետո պատգամավորական մի խումբ էր ուղարկվել Մոսկվա՝ Ռուսաստանի իշխանությանը հայտնելու Հայաստանի աջակցությունը: Միաժամանակ, հանրապետության Պաշտպանության կոմիտեն գաղտնի որոշում էր ընդունել եւ նախապատրաստվել՝ իրերի վատթարագույն զարգացման դեպքում համապատասխան գործողությունների դիմելու համար: Ստեղծվել էր գաղտնի ռադիոկայան՝ արտակարգ դրություն հայտարարելու դեպքում հանրապետական հաղորդումներ վարելու համար: ՀՀՇ-ի եւ Հայաստանի ՌԱԿ-ի կապի եւ տեխնիկական այլ միջոցները թաքցվել էին, ըստ անհրաժեշտության՝ ընդհատակյա պայմաններում գործելու եւ Շարժումը պահպանելու նպատակով[744]:

գ) Կենտրոնական իշխանության փաստական վերացումը

Օգոստոսյան հեղաշրջման փորձը մեծ թափ հաղորդեց Խորհրդային կայսրության քայքայման գործընթացին: Միության պահպանման այն չնչին, ըստ էության, անհեռանկար վերջին ռեսուրսները, որ կային, եւ որ ստացվել էին միութենական հանրաքվեից եւ նոր միութենական պայմանագրի մշակման գործընթացից, հօդս ցնդեցին: Կենտրոնական իշխանությունը, մասնավորապես՝ նրա ուժային կառույցները, առավելագույնս

742 «Հայք» 21.08.1991:

743 «Հայաստանի Հանրապետություն», 22.08.1991:

744 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24.08.1991:

վարկաբեկվեցին: Իրադարձությունները սկսեցին իրար հաջորդել գլխապտույտ արագությամբ:

Միութենական ուժային կառույցները, որոնց ղեկավարներն անմիջապես մասնակցել, կամ որեւէ կերպ աջակցել էին հեղաշրջմանը եւ հեռացվել պաշտոնից, նոր նշանակումներ չստացան, նրանց իրավասությունները «ժամանակավորապես» անցան Ռուսաստանի համապատասխան նախարարություններին: Օգոստոսի 23-ին Ելցինը հրամանագիր ստորագրեց ՌՍՖՍՀ կոմունիստական կուսակցության գործունեության կասեցման, իսկ երկու օր անց՝ նոր հրամանագիր՝ նրա գույքի ազգայնացման մասին[745]: Կատարված իրադարձությունների եւ ուժերի նոր վերադասավորության ճնշման տակ Գորբաչովը նույնպես ստիպված էր կատարել քայլեր, որոնք մի շաբաթ առաջ աներեւակայելի էին նրա համար: Պետական հեղաշրջման փաստին որեւէ գնահատական չէր տվել ԽՄԿԿ ԿԿ-ը, իսկ նրա շատ բարձրաստիճան գործիչներ էլ աջակցել էին հեղաշրջմանը եւ հակասահմանադրական մարմնին: Գորբաչովն ստիպված էր պաշտոնական հայտարարությամբ իր վերաբերմունքն արտահայտել այդ իրողության նկատմամբ: Օգոստոսի 25-ին նա հրաժարվեց ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղարի պարտականություններից եւ հայտարարեց, որ՝ «ԽՄԿԿ ԿԿ-ը պետք է դժվարին որոշում կայացնի կուսակցության ինքնալուծարման մասին», իսկ հանրապետությունների կոմկուսներին կոչ արեց ինքնուրույն որոշել իրենց ճակատագիրը[746]: Սա նշանակում էր կայսերապետության հիմք հանդիսացող քաղաքական ուժի՝ ԽՄԿԿ-ի վախճանը:

Հեղաշրջման փորձի տապալման հետ միասին հօդս ցնդեցին նաեւ միութենական պայմանագրի ստորագրման հեռանկարները, համենայնդեպս՝ այն սկզբունքներով, ինչպես մինչ այդ նախատեսվում էր: Այլեւս ակնհայտ էր, որ Կենտրոնը չէր կարող հանդես գալ որպես որեւէ պայմանագրի կողմ: Ակնհայտ էր նաեւ, որ որեւէ պայմանագրի ստորագրման պետք է նախորդեր հանրապետությունների անկախությունների հռչակումը, ինչը եւ

745 Տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ Գեր-ի, 1991, 35, հոդվ. 1149, 1164: Հրամանագրի համար հիմք էին ծառայում այն փաստերը, որ ՌՍՖՍՀ կոմունիստական կուսակցությունը սահմանված կարգով գրանցում չուներ, պաշտպանել էր ԳԿՉՊ-ն, չէր կատարել պետական ձեռնարկություններում, հիմնարկներում ու կազմակերպություններում իր կազմակերպական կառույցների գործունեությունը դադարեցնելու մասին ՌՍՖՍՀ Նախագահի հրամանագիրը: Խնդրի վերջնական լուծման համար նյութերը պետք է ուղարկվեին դատական մարմիններին:

746 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» 28.08.1991:

տեղի ունեցավ հաջորդ օրերին: Իսկ վերջիններիս կազմած որեւէ միություն կամ դաշինք արդեն որակապես բոլորովին այլ բան էր լինելու:

Մոսկվայում պետական հեղաշրջման արկածախնդրության ձախողումից հետո, բնականաբար, որոշակի տեղաշարժեր արձանագրվեցին նաեւ միջազգային հանրության վարքագծում: Այսպես՝ Եւրոպական Ընկերակցության երկրների 12 արտգործնախարարներ օգոստոսի 29-ին Բրյուսելում հայտարարեցին, որ իրենց երկրները պետք է դիվանագիտական կապեր հաստատեն Լիտվայի, Լատվիայի եւ Էստոնիայի հետ: Իհարկե, դա արվեց միայն այն բանից հետո, երբ Ռուսաստանը օգոստոսի 24-ին արդեն ճանաչել էր Էստոնիայի եւ Լատվիայի անկախությունը: ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջ. Մեյջորը, Գերմանիայի արտգործնախարար Հ. Գենշերը, Փարիզի քաղաքապետ Ժ. Շիրակը եւ ուրիշներ, հրապարակավ հայտարարեցին այն մասին, որ օգնությունը պետք է ուղղել ոչ թե դեպի ճգնաժամ ապրող Կենտրոն, այլ տնտեսական բարեփոխումներ իրականացնող եւ ժողովրդավարական սկզբունքներ որդեգրած հանրապետություններին[747]: Շուտով հանրապետությունները մեկը մյուսից հետո իրենց Գերագույն խորհուրդների որոշմամբ անկախ հռչակվեցին: Սակայն քանի դեռ իրավական առումով ԽՍՀՄ-ը գոյատեւում էր, միջազգային հանրությունն ընդհանուր առմամբ շարունակում էր իր զգուշավոր կեցվածքը: Զգուշավորության հիմքը ԽՍՀՄ-ի միջուկային զենքի եւ իրավահաջորդության խնդիրն էր, իսկ չվերահսկվող փլուզումը դեռեւս կարող էր անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Փլուզման գործընթացը վերահսկելի եւ կառավարելի կազմաքանդում դարձնելն ակնհայտորեն բխում էր ոչ միայն բոլոր հանրապետությունների, այլեւ միջազգային հանրության շահերից:

Հեղաշրջման փորձի տապալումից հետո ամենակարեւոր խնդիրը կատարվածին ճիշտ քաղաքական գնահատական տալն էր: Դա պետք է անեին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ նիստը եւ Ժողովրդական պատգամավորների համագումարը, ու դրան պետք էր նախապատրաստվել: Հեղաշրջման փորձին տրված քաղաքական գնահատականով էր մեծապես պայմանավորվելու ամենակարեւորը՝ հետագա իրադարձությունների ուղղվածությունն ու ընթացքը: Այսինքն՝ էականորեն նաեւ այդ գնահատա-

[747] *Տե՛ս «Հայք», 11.09.1991: Այսինքն՝ արեցին այն, ինչ մի քանի ամիս առաջ նրանց առաջարկում էր Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ որպես փաստարկ բերելով ԽՍՀՄ-ի անհեռանկար լինելու հանգամանքը:*

կանից էր կախված կենտրոնական իշխանության հետագա ճակատագիրը. այն կարող էր ծառայեցվել ինչպես Կենտրոնի կազմաքանդման, այնպես էլ նրա վերակենդանացման, ամրապնդման համար: Իսկ խնդիրն, ըստ էության, հանգում էր «պուտչիստների» եւ Գորբաչովի հարաբերություններին. վերջինս պետք է համարվեր առաջինների գործակի՞ցը, թե՞ զոհը:

Առաջին գնահատականներից մեկը տվեց Հայաստանի ԳԽ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ օգոստոսի 22-ի մամուլի իր ասուլիսում այն գնահատելով որպես «ռազմական հեղաշրջում, պետական հանցագործություն», որի գործող ուժերն են եղել՝ «ԽՄԿԿ ղեկավարությունը, Կոմկուսի ողջ պահպանողական ուժերը, ԽՄԿԿ-ի պատժիչ մեքենան՝ բանակը, պետական անվտանգության կոմիտեն, ներքին գործերի ուժերը, վարչահրամայական ապարատը՝ հանձին Պավլովի գլխավորած կառավարության, եւ ռազմա-արդյունաբերական համակարգի մի զգալի մասը»: Նա հայտարարեց, որ այդ հեղաշրջման մեջ Գորբաչովին պետք է դիտել ոչ թե որպես զոհ, այլ որպես մեղակից եւ հեղաշրջման հիմնական պատասխանատու, քանի որ նա ինքն էր այդ հետադիմական ուժերն ընտրել որպես իր հենարան ու մինչ այդ քաջալերել նրանց ապօրինի գործողությունները: Ըստ այդմ էլ՝ հեղաշրջման փորձի ձախողումը պետք է դիտվի ոչ թե որպես Գորբաչովի, այլ ժողովրդավարական ուժերի հաղթանակ՝ Ելցինի գլխավորությամբ, ուստիեւ՝ «Գորբաչովը չպետք է տիրի այն դափնիներին, որոնց արժանի է միայն ու միայն Ելցինը»[748]:

Կատարվածի ճիշտ քաղաքական գնահատականն անհրաժեշտ էր ոչ միայն ներքաղաքական ընկալման տեսակետից: Այն կարեւոր էր նաեւ կատարվածի նկատմամբ միջազգային վերաբերմունքը եւ մթնոլորտը ձեւավորելու համար, ինչը նույնպես որոշակի ազդեցություն ուներ տվյալ հարցում: Հայաստանի ԳԽ նախագահի՝ հեղաշրջման արդյունքների հետ կապված մի այլ ելույթ՝ հրապարակված «Լոս Անջելես Թայմսում», ուղղված էր Արեւմտյան երկրներին[749]: Իսկ հիմնական ասելիքը հետեւյալն էր. աշխարհի ժողովրդավարական երկրները կատարվածից հետո պետք է

[748] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24.08.91:*

[749] *«Հայաստանի Հանրապետություն», 25.08.1991: Վերջիններս շարունակում էին նախապատվություն տալ Գորբաչովի հետ համագործակցելուն, ըստ հնարավորին՝ պաշտպանում նրա նախաձեռնությունները (այդ թվում նոր Միութենական պայմանագիրը): Ըստ Ելցինի՝ դրանց դեսպանությունները Մոսկվայում նույնիսկ համաձայնել էին ճանաչել ԳԿՉՊ-ն եւ համագործակցել նրա հետ (տե՛ս* **Ельцин Б.**, *Записки президента, с. 106):*

ընդունեն, որ ԽՍՀՄ-ում՝ «....միայն ժողովրդավարական ուժերը եւ ընտրովի կառավարություն ունեցող իսկապես ազատ ժողովուրդները կարող են երաշխավորել բարեփոխումները.... Ժամանակն է, որ Արեւմտյան պետությունները վերատեսության ենթարկեն իրենց նեցուկը կենտրոնական իշխանության նկատմամբ, որի գլխավոր դերը կայանում էր արգելակելու եւ ճնշման միջոցներ գործադրելու մեջ, որտեղ ֆաշիզմն ու ամբողջատիրությունը տիրապետող բնազդներ էին.... Հայաստանը չի կարող իր ապագան կապել մի Միության հետ, որտեղ տիրապետող գաղափարախոսությունն իմպերիալիզմն է, եւ որտեղ ճնշումը մնում է կառավարելու նախընտրելի միջոցը»: Համարելով, որ հեղաշրջման փորձի տապալումից եւ սահմանադրական կարգի վերականգնումից հետո նույնպես ոչ մի երաշխիք չկա, թե կենտրոնական իշխանությունը կարող է փոխել իր էությունը, նա հայտարարում էր, որ Հայաստանը շարունակելու է սահմանադրական ճանապարհով անկախության հասնելու իր ուղեգիծը եւ իրականացնելու է անկախության իր հանրաքվեն[750]: Նույն դրույթներով նա մի այլ հոդված հրապարակեց ֆրանսիական «Ֆիգարո» թերթում՝ «Գորբաչովը պետք է կրի ողջ պատասխանատվությունը» վերնագրով՝ ավելի ընդարձակ հիմնավորելով Գորբաչովի օրգանական կապը «պուտչիստների» հետ եւ շեշտելով նրա պատասխանատվությունը կատարվածի մեջ: Դրանում, իմիջիայլոց, արձանագրեց նաեւ Արեւմտյան պետությունների պատասխանատվության բաժինը, որոնք մինչ այդ հանդուրժել, ու, փաստորեն հովանավորել էին հետադիմական ուժերին պաշտպանելու եւ իր հենարանը դարձնելու՝ Գորբաչովի քաղաքականությունը[751]:

Իրոք, հեղաշրջման տապալումից հետո էլ հետադիմության ռեստավրացիայի եւ կենտրոնական իշխանության ամրապնդման հետ կապված մտավախությունը դեռեւս լայն հիմքեր ուներ, եւ դա գիտակցում էին ժողովրդավարական ուժերի նաեւ այլ ներկայացուցիչներ: Այսպես՝ օգոստոսի 23-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի խումբ առաջադեմ պատգամավորների անունից հատուկ մի դիմում հղվեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին եւ այն հանրապետությունների պառլամենտներին, որոնք, պաշտոնապես անկախության ուղեգիծ հռչակած լինելով, չէին մասնակ-

[750] *Տեր-Պետրոսյան Լ., «Նախկին համակարգին վերադարձ չկա» (Los Angeles Times, 25.08.1991 հայերեն թարգմանությունը՝ «Ազգ», 28.08.1991):*

[751] *Օգտվում ենք չհրապարակված հայերեն ձեռագիր թարգմանությունից (ՀՀԱՆԱ, թղթ. 12/26.08.91):*

ցում միութենական պայմանագրի ստորագրմանը: Դիմումի հեղինակները թախանձագին խնդրում էին մասնակցել ԽՍՀՄ ԳԽ առաջիկա արտահերթ նիստին՝ հավաստիացնելով, որ դա ոչ մի դեպքում չի դիտվի որպես նրանց անկախության ուղեգծից շեղում: Իսկ նրանց մտավախությունն այն էր, որ «խունտան» դեռ վերջնականապես ջախջախված չէ. «Եթե մեզ միասնական ջանքերով չհաջողվի ոչնչացնել մեր կողմից ջախջախված տոտալիտար պետության՝ ինքնավերականգնման ունակ բեկորները, ապա ոչ մի ժողովուրդ, տոտալիտար պետության կազմի մեջ մտնող հանրապետություններից ոչ մեկը չի կարող լինել ինքնիշխան եւ ունենալ խաղաղ ապագա: Ոչ մի մայր չի կարող հանգիստ քնել՝ չանհանգստանալով իր երեխայի ճակատագրի համար»[752]: Նամակի հեղինակները միանգամայն իրավացի էին տոտալիտար պետության բեկորների «ինքնավերականգնման» ունակության հետ կապված:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ օգոստոսի 26-ին հրավիրված արտահերթ նիստում պարզ դարձավ, որ, այդ մտավախությունն ավելի քան տեղին էր: Շատերն, իրոք, փորձում էին դա ծառայեցնել Գորբաչովի հեղինակությունը բարձրացնելու եւ կենտրոնական իշխանությանը երկրորդ շնչառություն տալու նպատակին: Ճիշտ է՝ կատարվածը գնահատվեց որպես պետական հեղաշրջում[753], սակայն տեղի չունեցավ այն, ինչը, թվում էր, պետք է լիներ կատարվածի տրամաբանական շարունակությունը: Պուտչից հետո մինչեւ ԽՍՀՄ ԳԽ օգոստոսի 26-ի արտահերթ նիստը եւ դրա ընթացքում Ելցինին պաշտպանող ռուսական ժողովրդավարական գործիչներն ու ուժերը, ունենալով հանդերձ Կենտրոնական իշխանության կառույցները վերացնելու իրական հնարավորություն, եւ այդ ուղղությամբ արդեն իսկ կատարած լինելով որոշակի քայլեր, հանկարծ տեղի տվեցին եւ հակվեցին կենտրոնական իշխանության մարմիններն իրենց լիազորություններով վերականգնելու տեսակետին. «Մի նոր երեւույթ էր սկսում ուրվագծվել Կենտրոնում,— նկատում է Լեւոն Տեր-Պետրոսյանը,— դեմոկրատները, որոնք մինչ այդ պայքարում էին կենտրոնական իշխանությունների դեմ, սկսեցին հանդես գալ որպես իշխանության կենտրոնական կառուցվածքների ջատագովներ: Ի՞նչ էր թաքնված սրա տակ: Սրա տակ թաքնված էր Ելցինի դիրքի երկակիությունը: Մի կողմից՝ հանդես գալով

[752] *ՀՀԱՆԱ, թղթ. 19/23.08.91:*

[753] *Ведомости съезда народных депутатов СССР и Верховного совета СССР, 991, 36, ст. 1038.*

որպես դեմոկրատական ուժերի առաջնորդ, Ելցինը պարտավոր էր ջախջախել իշխանության նախկին կառուցվածքները, որոնց դեմ ինքը բազմիցս արտահայտվել, պայքարել էր.... մյուս կողմից՝ Ելցինը չէր կարող պատմական պատասխանատվություն վերցնել իր վրա եւ պատմության մեջ մտնել որպես այս երկրի (ԽՍՀՄ-ի Ա. Ս.) փլուզման հեղինակ.... Ելցինը ընտրեց երկրորդ ճանապարհը, այն է՝ ինչ-որ ձեւով պահպանել իշխանության կենտրոնական կառուցվածքները, բայց այն հույսով, որ այդ կառուցվածքները մշտապես կգտնվեն հսկողության տակ, այսինքն՝ ունենալ ընտելացված կենտրոնական իշխանություն: Ահա այս ճանապարհն էր ընտրված ԳԽ-ի նստաշրջանում»[754]: Նկատի ունենալով այդ մթնոլորտը՝ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահն, այդ նիստի համար պատրաստած իր ելույթը հետաձգելով համագումարին, այստեղ արեց ամենակտրուկ եւ զգաստացնող հայտարարությունը.

«Պահի գլխավոր խնդիրը տեղի ունեցածի գնահատականը չէ, հետեւանքները չեն: Պահի գլխավոր խնդիրը Կենտրոնի ճակատագիրն է, իշխանության միութենական մարմինների ճակատագիրը: Ես կարծում եմ՝ հեղաշրջման հետեւանքով Կենտրոնը սպառեց իրեն: Կենտրոնը մեռած է, Կենտրոնն ինքնասպան եղավ: Եւ հիմա վերակենդանացնել այդ մեռյալին, նշանակում է վերատեղծել այն աղետի վտանգը, ինչ տեղի ունեցավ»[755]: Լեւոն Տեր-Պետրոսյանի այս կոչը լայն արձագանք գտավ ոչ միայն Խորհրդային Միությունում, այլեւ միջազգային ասպարեզում՝ հաճախ դառնալով ամենահեղինակավոր լրագրերի՝ այդ իրադարձությունների մասին պատմող նյութերի վերնագիր:

Նույն օրերից, կենտրոնական իշխանության ճակատագրի նկատմամբ զգուշավորության հետ մեկտեղ, նույն դեմոկրատական շրջանակներում, սկսեց նաեւ մտավախություն առաջանալ, որ կենտրոնական իշխանության վերականգնվող մարմիններն, իրոք, կարող են աստիճանաբար կազդուրվել եւ վերականգնել իրենց նախկին կշիռը եւ ճնշիչ ֆունկցիաները, ինչով կպահպանվեր նաեւ նոր մի հեղաշրջման, բռնատիրության վերականգնման վտանգը: Սրան գումարվեց հանրապետությունների, մասնավորապես՝ Ուկրաինայի եւ Ղազախստանի վճռական հակազդեցությունը Ելցինի եւ ուրիշների մի քանի անգգույշ հայտարարություններին, որոնցում ակնարկվում էր այս անգամ արդեն Ռուսաստանի կայսերապետա-

[754] *Տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 12/09.09.91, թ. 2ա-2բ:*

[755] ***Տեր-Պետրոսյան Լ.***, *Ընտրանի, էջ 221:*

կան հավակնությունների մասին: Մյուս հանրապետությունները նույնպես ասացին իրենց վճռական խոսքը: Չվտանգելու համար իր դիրքերը՝ Ելցինը հարկադրված էր վերանայել իր գրաված միջանկյալ դիրքը եւ միանալ նրանց: Ժողովրդավարական ուժերին, վերջին հաշվով, հաջողվեց տալ կատարվածի ճիշտ քաղաքական գնահատականը եւ ապահովել իրադարձությունների տրամաբանական շարունակությունն այն հունով, որ կանխարգելվի երբեւէ նոր աղետի վտանգը:

Քաղաքական օրակարգի հիմնական եւ հրատապ լուծում պահանջող հարց դարձավ կենտրոնական իշխանության եւ նրա արդեն չգործող մարմինների անվտանգ ապամոնտաժման, կազմաքանդման խնդիրը[756]: Սեպտեմբերի 2-ին նշանակված ԽՍՀՄ ժողպատգամավորների արտահերթ համագումարում[757] հենց այս հարցը պետք է մտներ օրակարգ ու դառնար հիմնական: Խնդիրը համագումարի քննարկմանը ներկայացվեց 10 հանրապետությունների ղեկավարների եւ Գորբաչովի կողմից ստորագրված համատեղ հայտարարություն տեսքով (կոչվում էր «10+1»)[758]: Սրանով Ելցինը նաեւ խուսափեց ԽՍՀՄ կազմաքանդման համար միայնակ, անձնական պատասխանատվություն վերցնելու վտանգից: Իսկ համատեղ այդ հայտարարությունը վերաբերում էր օրվա կարեւորագույն խնդիրներին: Հայտարարությունը կազմվեց նախորդ օրը գիշերը Կրեմլում՝ հանրապետությունների ղեկավարների եւ Գորբաչովի մասնակցությամբ[759]: Դրանում նախ ասվում էր, որ կատարված պետական հեղաշրջման փորձը ձախողեց միջհանրապետական հարաբերությունների մշակման գործընթացը, ուստիեւ որեւէ Միության մաս կազմելը ամբողջությամբ թողնվում էր ամեն մի հանրապետության ցանկությանը: Նրանք Միության մեջ մտնելիս իրենք կարող էին որո-

[756] *Մինչ այդ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը օգոստոսի 28-ին արդեն անվստահություն էր հայտնել կառավարությանը (Ведомости съезда народных депутатов СССР и Верховного совета СССР, 1991, 36, ст. 1033):*

[757] *Այն նշանակվել էր օգոստոսի 26-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ (տե՛ս Ведомости съезда народных депутатов СССР и Верховного совета СССР, 1991, 35, ст. 981):*

[758] *Հայտարարության տեքստը տե՛ս «Известия», 02.09.1991: Հայտարարությունը չէին ստորագրել Բալթյան հանրապետությունները, Վրաստանը եւ Մոլդովան:*

[759] *Ելցինը հիշում է. «Փաստաթղթի վրա աշխատելու ընթացքում Գորբաչովն ամբողջ ընթացքում կոմպրոմիսների էր գնում ուշադրություն չդարձնելով մանրուքների վրա.... Նա խիստ փոխված էր Օգոստոսից հետո» (**Ельцин Б.**, Записки президента, с. 147):*

շել իրենց անդամակցության ձեւը, կարող էին լինել լիիրավ անդամ, ընկերակից անդամ, դիտորդ անդամ եւ այլն: Այսինքն՝ վերջնականապես մի կողմ էր դրվում ֆեդերացիայի գաղափարը, նախատեսվում էր, որ այն կարող է լինել միայն որպես ազատ եւ իրավահավասար պետությունների ընկերակցություն: Երկրի անկառավարելի փլուզումն ու խառնաշփոթը կանխելու նպատակով համագումարին առաջարկվում էր մինչեւ ԽՍՀՄ նոր Սահմանադրության ընդունումը, անցման շրջանի համար, ստեղծել իշխանության նոր՝ միջհանրապետական կառույցներ, իսկ հին կառույցներին առաջարկվում էր ինքնալուծարվել: Հայտարարությունը, միաժամանակ, խնդրում էր համագումարին՝ պաշտպանել միութենական հանրապետությունների դիմումը ՄԱԿ՝ նրանց միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելու եւ այդ կազմակերպությանը նրանց անդամակցության հարցը քննարկելու համար: Դրանով, ըստ էության, համագումարին առաջարկվում էր դադարեցնել ԽՍՀՄ Սահմանադրության որոշ հոդվածների գործողությունը, իշխանությունը հանձնել պետությունների ղեկավարների խորհրդին, որի մեջ մտնում էին ԽՍՀՄ Նախագահը եւ հանրապետությունների ղեկավարները, ինչպես նաեւ ավարտված համարել Ժողովրդական պատգամավորների համագումարի իրավասությունները:

Սեպտեմբերի 2-ին սկսված համագումարում «Համատեղ հայտարարությունը» ներկայացրեց Ն. Նազարբաեւը: Որքան էլ այսօրինակ շարունակությունն անսպասելի չէր շատերի համար, այնուամենայնիվ, համագումարում փորձ արվեց դիմադրություն ցույց տալ: Այդ դիմադրությունը, սակայն, հաղթահարվեց, եւ ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնցով կենտրոնական իշխանության մարմինները վերացվում էին, իսկ անցման շրջանի համար ստեղծվում էին միջհանրապետական համակարգիչ մարմիններ: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը պահպանվեց միայն ձեւականորեն: Ստեղծվեց հանրապետությունների խորհրդարանների կողմից որոշված 20-ական պատգամավոր ներկայացուցիչներից կազմված Հանրապետությունների կամ Վերին պալատ, որ ունենալու էր սկզբունքային կարեւոր հարցեր լուծելու լիազորություն: Առանց այս պալատի հավանության ԽՍՀՄ ԳԽ-ի որեւէ որոշում չէր կարող գործել: Մինչ այդ գործող Ֆեդերացիայի խորհուրդը Գորբաչովը կազմել էր որպես հակակշիռ Ելցինի՝ ոչ միայն հանրապետությունների, այլ նաեւ ինքնավար կազմավորումների ղեկավարների կազմով: Դա եւս կազմալուծվեց, եւ փոխարենը ստեղծվեց Պետական խորհուրդ, որի մեջ մտնում էին ԽՍՀՄ Նախագահը եւ հանրապետությունների առաջին դեմքերը, ճշգրտվեցին այս մարմնի

լիազորությունները: Վերացավ նաեւ միութենական կառավարությունը: Տնտեսական բարեփոխումները եւ տնտեսության ղեկավարումը համաձայնեցված իրականացնելու համար կազմավորվեց Միջպետական տնտեսական կոմիտե, որի մեջ բոլոր հանրապետությունների ներկայացուցիչները պետք է մտնեին հավասար իրավունքներով[760]: Այն պետք է ապահովեր, որ արտաքին եւ ներքին քաղաքականության հարցերում որոշումները լինեն համաձայնեցված: Նախատեսվում էր կոլեկտիվ անվտանգության սկզբունքներով համաձայնագիր ստորագրել, պահպանել ընդհանուր զինված ուժերը եւ ռազմաստրատեգիական տարածքը: Նախատեսվում էր նաեւ ընդհանուր Սահմանադրություն, որը, սակայն նախապես պետք է հաստատվեր հանրապետությունների օրենսդիր մարմինների կողմից[761]:

Հայաստանը թեեւ ստորագրել էր 10+1 հայտարարության տակ՝ նկատի ունենալով դրանում հիմնական խնդիրների հույժ կարեւորությունը, սակայն նաեւ լուրջ վերապահումներ էր արձանագրել: Լեւոն Տեր-Պետրոսյանը համագումարում արձանագրեց, որ այդ փաստաթղթով լուծվում է հիմնական խնդիրը, այն է՝ վերանում է միութենական հին, «իրենց սնանկությունն ապացուցած կառույցների վերակենդանացման վտանգը»: Բայց նաեւ իր անհամաձայնությունը հայտնեց ընդհանուր Սահմանադրություն եւ օրենքներ ունենալու՝ Հայտարարության մեջ տեղ գտած դրույթին[762], ինչպես նաեւ առաջարկեց այն լրացնել նոր դրույթով, որը պետք է ապահովեր ինքնավար կազմավորումների իրավունքները, իսկ ինքնավար մարզերին տրվեր ինքնավար հանրապետությունների կարգավիճակ[763]:

---

760 *Խորհրդային Միությունում կենտրոնական իշխանության ճգնաժամը հաղթահարելու համար դեռ ամիսներ առաջ՝ 1990թ. նոյեմբերի 16-ի եւ 1991թ. փետրվարի 28-ի իր ելույթներում հենց այսպիսի վերափոխումներ եւ այսօրինակ մարմիններ է առաջարկում ստեղծել Լեւոն Տեր-Պետրոսյանը (տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 155-156 եւ 175):*

761 *Տե՛ս Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного совета СССР, 1991, 37, ст. 182.*

762 *Դեռ 1991 թ. փետրվարին Լեւոն Տեր-Պետրոսյանը բացառել էր ընդհանուր Սահմանադրությամբ որեւէ միության հնարավորությունը (տե՛ս* ***Տեր-Պետրոսյան Լ.****, Ընտրանի, էջ 175):*

763 *Համագումարում ելույթն ամբողջությամբ տե՛ս նույն տեղում, էջ 223-226: Այս ելույթի՝ պատգամավորների վրա ունեցած ներգործության մասին ԽՍՀՄ ժող. պատգամավոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Դերենիկ Աբրահամյանը արձանագրում է. «Ձեր ելույթը ոչ միայն նպաստեց համագումարում մասսայական*

Եւ այնուամենայնիվ, ԽՍՀՄ Նախագահի եւ հանրապետությունների ղեկավարների համատեղ այս հայտարարությունը եւ դրա հիման վրա համագումարի ընդունված որոշումները պատմական նշանակություն ունեին: Դրանով պետք է կանխվեր Կենտրոնի վերակենդանացումը, իսկ կայսրության փլուզումն ըստ հնարավորին վերածել անվտանգ կազմաքանդման: Մյուս հարցերն առաջիկայում կարող էին քննարկվել եւ լուծվել: Պետական խորհուրդը հաջորդ օրերին ճանաչեց Մերձբալթյան հանրապետությունների անկախությունը:

* * *

Հեղաշրջման փորձի տապալումից անմիջապես հետո իրավիճակից բխող վճռական քայլերի դիմեցին նաեւ Հայաստանի իշխանությունները: ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, նկատի ունենալով իրականացված դավադրությանը ԽՄԿԿ ղեկավարության մասնակցության փաստը, օգոստոսի 23-ին քննարկման առարկա դարձրեց անմիջապես նրա կողմից ղեկավարվող Հայաստանի կոմկուսի՝ որպես ԽՄԿԿ մի ստորաբաժանման հարցը: ՀԿԿ-ն, ի հեճուկս գործող օրենքի եւ իր իսկ հավաստիացումների, շարունակում էր մնալ որպես ԽՄԿԿ-ի մի մաս, ղեկավարվել եւ ֆինանսավորվել նրա կողմից: Առաջարկություններ եղան այն օրենքից դուրս հայտարարել կամ կասեցնել նրա գործունեությունը[764]: Նախագահության որոշմամբ պատգամավորական հանձնաժողով ստեղծվեց (պատգամավոր Ռաֆայել Պապայանի նախագահությամբ) ՀԿԿ-ի գրանցման օրինականությունը ստուգելու եւ ԽՄԿԿ-ի հետ նրա կապերը պարզելու համար[765]: ՀՀ-ը հայտարարվեց ԽՄԿԿ-ի ունեցվածքի մեջ ՀԿԿ-ի մասնաբաժնի սեփականատերը, իրականացվեց Կոմկուսի ունեցվածքի ազգայնացման որոշումը, որ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել էր դեռ ապրիլի 17-ին եւ ամբողջությամբ չէր իրականացվել: Ազգայնացվեց նրա հրատարակչությունը, սառեցվեցին բանկային հաշիվները, փաստաթղթերը հանձնվեցին արխիվ[766]: Հայաստանի կոմկուսի հերթական համագումարը, որ սկսվել էր վաղուց եւ ժամանակ առ ժամանակ նիստեր էր գումա-

գիտակցության շրջադարձին դեպի ռեալիզմ, այլ նաեւ շատերիս գիտակցության եւ հավատի վերափոխմանը» (Գիտնականը եւ նախագահը... էջ 128):

764 Ռուսաստանը, Մերձբալթյան հանրապետությունները, Մոլդովան եւ Վրաստանը այդպես էլ վարվել էին:

765 Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 353:

766 Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 361:

րում, սեպտեմբերի 7-ի հերթական նիստում կուսակցության ինքնալուծարման որոշում կայացրեց[767]:

Քննարկման առարկա դարձավ նաեւ կենտրոնական իշխանության ամենակարեւոր կառույցներից մեկի՝ Պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) հարցը: Օգոստոսի 23-ին ստեղծվեց հատուկ մի հանձնաժողով (ՀՀ Ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Աշոտ Մանուչարյանի նախագահությամբ), որին հանձնարարվեց ուսումնասիրել այս կառույցի գործունեությունը եւ առաջարկներ նախապատրաստել[768]: Միաժամանակ, Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ու նրա անունից դիմում հղվեց ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Բակատինին՝ դեռ 1990թ. գարնանը Հայաստանի Հանրապետության ՊԱԿ-ից Սմոլենսկ դուրս բերված արխիվային եւ գործող նյութերը վերադարձնելու պահանջով[769]:

դ) Ժելեզնովոդսկի հանդիպումը, Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնացման սկիզբը

Առճակատումից բանակցությունների անցնելու եւ փոխզիջումների հիման վրա հարցը խաղաղ կարգավորելու՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների որդեգրած քաղաքական ուղեգիծը լայն պաշտպանություն էր գտնում ոչ միայն հայ հասարակության մեջ, այլեւ Խորհրդային Միության ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության կողմից: Վերջին երկուսը կարեւոր գործոններ էին. նրանք Ղարաբաղյան ժողովրդավարական շարժման դաշնակիցն էին ի սկզբանե, ու նաեւ նրանց քաղաքական աջակցությամբ էր, որ հաջողվել էր նվազագույն

767 Այս վերջին նիստին համագումարի 472 պատվիրակներից 65-ը արդեն լքել էին կուսակցությունը, 73-ը հրաժարվել էին մասնակցել համագումարին, մնացածներից էլ նիստին ներկա էին 169-ը: Ինքնալուծարումից հետո Կոմկուսը բաժանվեց երկու մասի: Համագումարի պատվիրակների մի մասը՝ Կոմկուսի ԿԿ-ի վերջին առաջին քարտուղար Արամ Մարգսյանի գլխավորությամբ, հայտարարեց նոր՝ «Սոցիալ-դեմոկրատական» կուսակցության ստեղծման մասին, մյուս մասը՝ ավելի տարիքավորների խումբը, առայժմ ձեռնպահ մնաց որեւէ որոշում կայացնելուց (տես «Հայք», 11.09.91): Ավելի ուշ, նույն հիմքի վրա կազմավորվեց նոր Կոմունիստական կուսակցություն՝ Սերգեյ Բաղալյանի գլխավորությամբ:

768 Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 355:

769 Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 357: Հայաստանի ՊԱԿ-ի (ինչպես նաեւ մյուս հանրապետությունների) Սմոլենսկ տարված արխիվներն, իհարկե, չվերադարձվեցին:

կորուստներով դիմագրավել Կենտրոնի եւ Ադրբեջանի համատեղ ագրեսիան ապրիլ-հուլիս ամիսներին Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ: Իսկ այդ աջակցությունն իր հերթին էականորեն պայմանավորված էր եղել նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հիշյալ կառուցողական դիրքորոշումներով: Ճիշտ է՝ եղել էին ցավալի կորուստներ ու զոհեր, սակայն հայկական կողմը քաղաքական իմաստով բացարձակ շահած էր դուրս եկել, իսկ տարածքային կորուստների մեծ մասը՝ ետ բերել: Ուստի հակամարտության խաղաղ կարգավորման համար միջոցներ փնտրելը Հայաստանի իշխանության համար շարունակում էր մնալ որպես առաջնահերթ օրակարգային հարց:

Կենտրոնին արված դիմումները՝ հակամարտության խաղաղ կարգավորման եւ սահմանադրական իրավիճակի վերականգնման խնդրում որպես միջնորդ հանդես գալու, որեւէ արդյունքի չէին հանգեցրել. վերջինս, այնուամենայնիվ, դժվարանում էր որպես չեզոք կողմ հանդես գալ, գուցեեւ չէր ուզում կորցնել անկախության գնացող Հայաստանի վրա ազդելու իր լծակը: Ակնհայտ էր դառնում նաեւ, որ օր օրի թուլացող Գորբաչովը, անգամ ցանկության դեպքում, այլեւս չպիտի կարողանար միջնորդի ու երաշխավորի դեր խաղալ: Ուստիեւ՝ որպես միջնորդ հանդես գալու առաջարկով Լեւոն Տեր-Պետրոսյանը դիմել էր Ռուսաստանի Նախագահ Ելցինին եւ Ղազախստանի նախագահ Նազարբաեւին: Նրանք դեռ օգոստոսի 17-ին պաշտոնապես հայտարարել էին, որ հակամարտության կարգավորման մեջ պատրաստ են ստանձնել միջնորդի եւ երաշխավորի դերը: Ադրբեջանին այլ բան չէր մնում, քան նույնպես համաձայնել նրանց միջնորդական եւ խաղաղարար առաքելությանը:

Օգոստոսյան հեղաշրջման փորձից հետո էականորեն փոխվեց իրավիճակը, շեշտակի արագացավ կայսրության փլուզման գործընթացը: ԽՍՀՄ-ի ճակատագրի անկանխատեսելի հետեւանքներից Ղարաբաղն ապահովագրելու համար քաղաքական օրակարգ մտած խաղաղ կարգավորման, սահմանադրական իրավիճակի եւ մարզային իշխանությունների վերականգնման հարցերը, որպես անվտանգության կարեւոր երաշխիք, դարձան առավել հրատապ:

Հեղաշրջման անհաջող փորձից հետո, շատերի հետ նաեւ Ադրբեջանն իր Գերագույն խորհրդի որոշմամբ օգոստոսի 30-ին անկախության

հռչակեց[770]: Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի եւ Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ)՝ մարզի եւ Շահումյանի շրջանի ընդհանուր տարածքով: Մարզային խորհրդի գործադիր կոմիտեն հռչակվեց որպես ԼՂՀ պետական եւ վարչական ժամանակավոր բարձրագույն մարմին՝ Լեոնարդ Պետրոսյանի գլխավորությամբ: Ընդունվեց նաեւ չորս պաշտոնական դիմում՝ ուղղված ԼՂՀ ժողովրդին, ադրբեջանական ժողովրդին, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարին, Ռուսաստանի Նախագահ Ելցինին[771]:

Այնուամենայնիվ, դեռ ակնհայտ էր, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը շարունակում է մնալ փակուղում, եւ հրատապ քայլեր են պետք՝ քաղաքական տեսակետից տեղաշարժ արձանագրելու համար: Առճակատման ճանապարհով հակամարտության հետագա խորացումն անհեռանկար էր, եւ խաղաղ կարգավորման ուղեգիծը նախկինի պես չուներ անայլընտրանք: Սեպտեմբերի 16-ին Ղարաբաղի հարցը քննարկման առարկա դարձավ ԽՍՀՄ Պետխորհրդի նիստում: Այդ թեմայով քննարկվող հրամանագրի նախագծի դրույթներից Ադրբեջանը դեմ էր հատկապես Ղարաբաղում իշխանության սահմանադրական մարմինների իրավասությունների վերականգնմանը: Սակայն այդ կետն ընդունվեց Ելցինի եւ Նազարբաեւի օժանդակության շնորհիվ: Ճիշտ է՝ Գորբաչովի համապատասխան հրամանագիրն այս անգամ էլ չստորագրվեց, սակայն Պետական խորհուրդը հավանություն տվեց Ռուսաստանի եւ Ղազախստանի՝ հակամարտության կարգավորման մեջ որպես միջնորդ հանդես գալու ծրագրին:

Ելցինը եւ Նազարբաեւը, պայմանավորվածության համաձայն, սեպտեմբերի 20- 22-ին ժամանեցին, նախ՝ Բաքու, այնտեղից՝ Ստեփանակերտ, ապա՝ Երեւան: Իսկ հանդիպումը եւ առաջին բանակցությունները տեղի ունեցան սեպտեմբերի 23-ին, Ժելեզնովոդսկ առողջարանային քաղաքում, Ելցինի, Նազարբաեւի, Տեր-Պետրոսյանի, Մութալիբովի մաս-

---

[770] *Իսկ քիչ անց՝ 1991թ. հոկտեմբերի 18-ին, ընդունեց նաեւ անկախության մասին Սահմանադրական օրենք (Տե՛ս Независимый Азербайджан: Новые ориентиры, с. 14):*

[771] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 03.09.91:* ***Арутюнян В.Б.,*** *События в Нагорном Карабахе, ч. 4, с. 72-73.*

նակցությամբ[772]: Հանդիպմանը ներկա էին նաեւ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի Ժողճակատի ներկայացուցիչները:

Ժելեզնովոդսկյան հանդիպումն առճակատումից խուսափելու, բանակցային գործընթաց սկսելու, փոխադարձ զիջումների հիման վրա հակամարտությունը խաղաղ կարգավորելու ուղղությամբ առաջին կարեւոր քայլն էր, առաջին փորձը: Դրանով գործնական սկիզբ դրվեց հակամարտության քաղաքական կարգավորման ուղուն, ինչը վերջին հաշվով պետք է լիներ միակ հեռանկարայինը եւ հնարավորը: Մեկօրյա լարված բանակցություններն ավարտվեցին համատեղ հայտարարագրի ստորագրմամբ. առաջին փաստաթուղթը, որի տակ դրված էին Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների եւ միջնորդ պետությունների (Ռուսաստանի եւ Ղազախստանի) ստորագրությունները: Ըստ էության, սա նաեւ Ղարաբաղի հարցի միջազգայնացման, խնդրի խաղաղ կարգավորման, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության եւ բանակցությունների կողմ ներկայանալու առաջին նախապատրաստական քայլն էր[773]:

Համատեղ հայտարարագրում կարեւոր քաղաքական գնահատական էր տրվում կենտրոնական իշխանության՝ ղարաբաղյան խնդրում խաղացած բացասական դերին, արձանագրելով, որ մինչ այդ նա ոչ միայն ի վիճակի չի եղել արդյունավետ միջոցներ գտնել չորս տարի ձգված հակամարտությունը կարգավորելու համար, այլ նաեւ բազմաթիվ սխալ քայլերով նպաստել է դրա խորացմանը: Հայտարարագիրը նախատեսում էր այն անհրաժեշտ ու պարտադիր պայմանները, որոնց իրականացմամբ մինչեւ հունվարի 1-ը պետք է կարգավորվեր հակամարտությունը: Այդ պայմաններն էին. կրակի դադարեցում, ԼՂԻՄ-ի վերաբերյալ Ադրբեջանի եւ Հայաստանի բոլոր հակասահմանադրական որոշումների վերացում, Լեռնային Ղարաբաղի իշխանության օրինական մարմինների վերականգնում եւ նրանց լիազորությունների ճանաչում, հակամարտության գոտուց բոլոր

772 Հայաստանից բանակցություններին մասնակցում էին նաեւ Վազգեն Մանուկյանը եւ Դավիթ Վարդանյանը:

773 Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչը չստորագրեց փաստաթուղթը միայն այն պատճառով, որ համաձայնություն չկայացավ ստորագրողի պաշտոնի անվանման հարցում: ԼՂ պատվիրակությունը պնդում էր, որ Լեոնարդ Պետրոսյանը այն ստորագրի որպես ԼՂՀ նախագահ, ինչին ոչ մի կերպ չհամաձայնեց ադրբեջանական կողմը: Մյուս կողմից, սակայն, հնարավոր եղավ շեղոքացնել ադրբեջանական կողմի՝ Լեռնային Ղարաբաղը որպես մեկ միավոր՝ իր հայ եւ ադրբեջանցի բնակչությամբ արձանագրելու ջանքերը:

զինված խմբավորումների դուրսբերում (բացառությամբ ԽՍՀՄ ՆԳՆ եւ ՊՆ զորամասերի): Մինչեւ հոկտեմբերի 1-ը Ռուսաստանի եւ Ղազախստանի լիազոր ներկայացուցիչների կազմով ստեղծվում էր դիտորդ խումբ, որը պետք է ապահովեր հակամարտության կարգավորման փոխհամաձայնեցված գործողությունները: Նախատեսվում էր փախստականների վերադարձ՝ սկսելով դատարկ գյուղերից: Անհապաղ, որպես առաջին քայլերից մեկը, պետք է ազատ արձակվեին պատանդները: Երկշաբաթյա ժամկետում նախատեսվում էր երկաթգծի, օդային փոխադրամիջոցների, կապի եւ հաղորդակցության համակարգերի բնականոն գործունեության վերականգնումը: Որոշվեց, որ հակամարտության գոտուց պաշտոնական տեղեկատվությունը տրվի միայն Ռուսաստանի եւ Ղազախստանի լիազոր ներկայացուցիչների կազմած իրազեկման խմբի կողմից[774]:

Ժելեզնովոդսկի հանդիպման արդյունքներն, անշուշտ, շատ հեռու էին կողմերին ամբողջությամբ բավարարելուց: Սակայն նաեւ անուրանալի է նրա նշանակությունը: Դրանով, փաստորեն, փորձ արվեց Լեռնային Ղարաբաղի հարցը հանել փակուղուց, եւ դրվեց խաղաղ կարգավորման ճանապարհի սկիզբը: Հենց որպես այդպիսին այն ողջունեց նաեւ ԱՄՆ կառավարությունը[775]: Քայլ կատարվեց Լեռնային Ղարաբաղի սահմանադրական մարմինների իրավասությունների, այլ խոսքով՝ մարզային իշխանությունների գոյության սահմանադրական երաշխիքների վերականգնման ուղղությամբ: Որպես երաշխավոր, քայքայվող եւ տվյալ հարցում միշտ կողմնապահ Կենտրոնին փոխարինեցին նոր կազմավորվող երկու հզոր եւ անկախ երկրներ՝ Ռուսաստանը եւ Ղազախստանը: Դա, ըստ էության, լրացուցիչ երաշխիք էր բնակչության հետագա տեղահանման վտանգը կանխելու հարցում, ինչն այդ պահին ամենակարեւոր խնդիրն էր: Ադրբեջանը, եթե պիտի շարունակեր գնալ հայտարարագրի պայմանների խախտմանը[776], ապա դա, այսպես թե այնպես, զգելու էր նրա միջազգային վարկը եւ քաղաքական շահ էր բերելու հայկական կողմին:

*774 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» 25.09.1991: Որպես հիմնախնդրի կարգավորման հետ կապված կարեւոր փաստաթղթերից մեկը՝ Կոմյունիկեի ռուսերեն տեքստը հրապարակվել է. **Абасов А., Хачатрян А.**, Карабахский конфликт, варианты решения: идеи и реальность, Москва, 2004, ст. 116-117)*

775 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23.09.1991:

776 Մանրամասն մի տեղեկանք օր օրի ներկայացնում է Ժելեզնովոդսկյան կոմյունիկեի ստորագրումից հետո մինչեւ հոկտեմբերի 14-ը ԼՂ-ում տեղի ունեցած այդօրինակ խախտումները: Այդ ընթացքում Ադրբեջանի ՕՄՕՆ-ը եւ ադրբեջա-

Հոկտեմբերի 16-ին Լեռնային Ղարաբաղ ժամանեցին Ժելեզնովոդսկում ստորագրված հայտարարագրով նախատեսված պատվիրակությունները Ռուսաստանից եւ Ղազախստանից: Հոկտեմբերի 25-ին նրանց մասնակցությամբ՝ Իջեւանում, իսկ նոյեմբերի 17-ին՝ ադրբեջանական Ղազախ քաղաքում տեղի ունեցան հայկական եւ ադրբեջանական պատվիրակությունների բանակցությունները: Հայկական պատվիրակությունը գլխավորում էր ԳԽ նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանը: Վերջին հանդիպման ժամանակ, մասնավորապես, պայմանավորվածություն ձեռք բերվեց նոյեմբերի 19-ին բացել Հայաստան մտնող գազամուղը: Սակայն հենց այդ օրերին առավել հաճախադեպ էին դարձել ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի թողտվությամբ ադրբեջանցիների կողմից իրականացվող ազգամիջյան ընդհարումները: Այնքան, որ այդ առիթով ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը նոյեմբերի 19-ին ստիպված էր դատապարտող հայտարարություն ընդունել[777]: Իսկ նույն օրը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ուղղաթիռի վթարը առիթ ծառայեց Ադրբեջանի համար ետ կանգնել ամեն տեսակ պայմանավորվածություններից եւ ավելի կոշտացնել իր դիրքորոշումները:

նական զինված խմբավորումները Շահումյանի շրջանում եւ Լեռնային Ղարաբաղում 40 անգամ հրաձգության կամ հարձակման են ենթարկել հայկական բնակավայրերը, որի ընթացքում զոհվել էր 13 եւ վիրավորվել 29 հայ բնակիչ (տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 08/15.10.91):

[777] *Տե՛ս Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 22, հոդվ. 441:*

7. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ ԵՒ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ա) Իրավիճակը եւ հանրաքվեի նախապատրաստական միջոցառումները

Անկախության հանրաքվեի նախապատրաստումը, օրենսդրական-կազմակերպական աշխատանքներից բացի, ընթանում էր նաեւ որպես գաղափարական-քարոզչական պայքար այն ուժերի դեմ, որոնք անկախությունը համարում էին վտանգավոր, անիմաստ, աննպատակահարմար, որպես «Թուրքիայի գիրկն ընկնելու» հեռանկար եւ այլն: ՀՀՇ-ն պարբերաբար պատասխանում էր կրկնվող անհիմն մեղադրանքներին՝ հստակ ներկայացնելով իր քաղաքական ուղեգիծը, այն է՝ Անկախության հանրաքվեն դեռ ո՛չ «անմիջական անջատում» է նշանակում, ո՛չ «առճակատում» Կենտրոնի հետ, ո՛չ էլ «Թուրքիայի գիրկն ընկնել», այլ գործող խորհրդային օրենքներով նախատեսված՝ անկախացման օրինական գործընթացի հերթական փուլ: Միաժամանակ՝ նախաձեռնվեց հանրաքվեի հարցում միասնական պլատֆորմի շուրջ համախմբել այն քաղաքական ուժերին, որոնք, անկախ իրենց «ուրույն» մոտեցումներից, գեթ հանրաքվեի դրված հարցի հետ կապված, չէին կարող այլ պատասխան քարոզել: Գերագույն խորհրդի Անկախ պետականության եւ ազգային քաղաքականության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Եգորյանի նախաձեռնությամբ այս թեմայով կազմակերպվեցին լայն քաղաքական քննարկումներ: Քննարկումների արդյունքում վեց կազմակերպություն հուլիսի 10-ին միասնական հայտարարությամբ հրապարակեց սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցելու եւ դրական պատասխան տալու հետեւյալ կոչը.

«Խորհրդային Միության քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամով պայմանավորված իրադրությունը եզակի հնարավորություն է ընձեռում հայ ժողովրդին իր ազատասեր զավակների կյանքի գնով վառ պահած եւ ազգային-ազատագրական շարժումով ոգեկոչված համաժողովրդական պայքարն իր տրամաբանական հանգրվանին հասցնելու՝ Հայաստանի

Հանրապետության ազգային անկախ պետականություն հաստատելու համար: Ինքնուրույն քաղաքական կառուցվածքներ հիմնադրելուց, հողի սեփականության վերաբերյալ որոշումներ ընդունելուց եւ դրանք իրականացնելուց, ժողովրդավարական համակարգի ստեղծմանն ուղղված մի շարք այլ քայլերից հետո անկախ պետականության հաստատման ճանապարհին հաջորդ կարեւորագույն քայլը Հայաստանի Հանրապետության անկախության հանրաքվեն է: Մեր վճռական «Այո»-ն զգալիորեն կբարելավի մեր դիրքերը միջազգային ասպարեզում, այլ երկրների հետ քաղաքական, տնտեսական սերտ կապերի հաստատման հնարավորություն կընձեռի, կտիպի ԽՍՀՄ ղեկավարությանը հաշվի նստել հայ ժողովրդի կամքի հետ: Միայն անկախ պետականության պայմաններում է հնարավոր ապահովել ազգի զարգացումը, բարգավաճումը, ազգային իղձերի իրականացումը...»[778]:

Հայտարարությունը կարեւոր էր նրանով, որ դրա տակ բացի ՀՀՇ-ից ստորագրել էին նաեւ տարբեր հարցերում ՀՀՇ-ին սուր ընդդիմադիր դերում հանդես եկող ԱԻՄ-ը, ՀՀԿ-ն, ՀՌԱԿ-ը, Հայաստանի Ազգային պահպանողական կուսակցությունը, ՀՔԴՄ-ն, որոնք մինչ այդ հանրաքվեի անցկացման ժամկետների հարցում տարբեր մոտեցումներ ունեին: Չնայած քննարկումներին մասնակցում էին, սակայն այս հայտարարությունը չստորագրեցին ՀԿԿ-ն եւ ՀՅԴ-ն: Հանրաքվեին մասնակցելու եւ դրական պատասխան տալու կոչով քուրդ ազգաբնակչության անունից հանդես եկավ Հայաստանի գրողների միության քուրդ գրողների մասնաճյուղը:

ԽՍՀՄ իրավական գոյության պայմաններում, նրա օրենքներով անկախության ձեռք բերման՝ Հայաստանի իշխանությունների որդեգրած ուղին, ԽՍՀՄ 15 հանրապետությունների մեջ միակը լինելով, բարձր գնահատականի էր արժանանում միջազգային հանրության կողմից, քանզի վերջինիս ամենամեծ մտահոգություն այն էր, որ, կայսրությունում ընթացող գործընթացները մնան վերահսկելի ու չվերաճեն անկանխատեսելի, վտանգներով հղի փլուզման: Մյուս կողմից՝ Հայաստանի ու նրա իշխանությունների միջազգային վարկը բարձրացնում էին կատարվող կառուցվածքային բարեփոխումները եւ ժողովրդավարության հաստատմանն ուղղված

[778] *«Հայաստանի Հանրապետություն» 11.07.1991: Կոչը ստորագրել էին՝ Հայոց համազգային շարժումը, Ազգային ինքնորոշում միավորումը, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցությունը, Հայաստանի Ազգային պահպանողական կուսակցությունը, Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությունը:*

արմատական ու վստահ քայլերը: Այսպես՝ «Վաշինգտոն Թայմսը» գոհունակությամբ արձանագրում էր, որ «ՀՀ ԳԽ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը պատրաստակամություն է հայտնել պահպանելու այն դրույթները, որոնք նախատեսված են Խորհրդային Միության կազմից դուրս գալու՝ խորհրդային Նախագահ Գորբաչովի ընդունած օրենքով»[779]: Իսկ «Նյու Յորք Թայմսը» այդ իրողությունը ներկայացնում է բարձր գնահատականով. «Լ. Տեր-Պետրոսյանի ղեկավարած հեղափոխությունը խաղաղ է, գթասրտորեն, ռազմականորեն խաղաղ: Մինչ խորհրդային ժողովուրդը զանգվածաբար ներքաշվել է քաղաքական կատաղի պայքարի ու թոհուբոհի մեջ, ՀՀ նորընտիր նախագահ[780] Լ. Տեր-Պետրոսյանն անկախության հասնելու միանգամայն այլ ուղի է ընտրել: Հայ առաջնորդը պառլամենտական քաղաքական գործչի այն նոր տեսակն է ներկայացնում, որը ժպտալով ընդունում է, որ պարոն Գորբաչովը, կոմունիզմի հոգնատանջ վագրին հեծած, դեռ կարող է դիմել ամբողջատիրական կառավարմանը: Այստեղ, անխնամ մայրաքաղաքի փոշոտ փողոցներում, անհերքելի է նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի վարած նոր քաղաքականության հաջողությունը, որը վերստին ոգեշնչում է այս հարավային հանրապետության ժողովրդին: Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջարկած հանրաքվեն նաեւ միանշանակորեն հաստատելու է այն փաստը, որ ի տարբերություն այլ հանրապետությունների, Հայաստանը պատրաստվում է մի քանի տարվա ընթացքում ավարտել անկախության գործընթացն ու կառուցել ազատ շուկայական նոր տնտեսական հարաբերություններ ԽՍՀՄ-ի հետ: Պարոն Տեր-Պետրոսյանն այն կարծիքին է, որ միայն հոետորականությունը չի կարող հիմք հանդիսանալ անկախ գոյատեւման համար»[781]:

Եւ այնուամենայնիվ, հակաանկախական քարոզչությունը՝ իրականացված Կոմկուսի, Դաշնակցության, մտավորական նախկին նոմենկլատուրայի միջոցով, ինչը ապրիլ-հուլիս ամիսներին զուգակցվել եւ ավելի արդյունավետ էր դարձել Կենտրոնի եւ Ադրբեջանի կողմից իրականացվող ռազմական ճնշումներով, որոշակի արդյունքի հասել էր: Այդ էր վկայում տարբեր խավերի եւ տարիքի 10.000 հարցվողներից 1991թ. մարտին եւ օգոստոսի կեսերին կատարված հարցման արդյունքների համեմատությունը: Հանրաքվեի համար նախատեսված «Համաձա՞յն եք արդյոք, որ Հա-

[779] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 03.08.1991:*

[780] *Նկատի ունի Գերագույն խորհրդի նախագահի նրա պաշտոնը:*

[781] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 03.08.1991:*

յաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս» հարցին ստացված պատասխանները տոկոսային առումով ներկայացնում էին այսպիսի պատկեր[782].

	1991թ. օգոստոսի 5-13			1991թ. մարտ		
Հարցվածների խմբերը	**այո**	**ոչ**	**դժվարանում եմ պատասխանել**	**այո**	**ոչ**	**դժվարանում եմ պատասխանել**
ընդամենը	62,8	18,2	19	68,6	15,7	15,7
տղամարդիկ	67,9	16,1	16	74,4	13,8	11,8
կանայք	58,2	20,1	21,7	63,9	17,4	19,3
18-30 տարեկ.	68,5	14,5	17	72,4	13,9	13,7
30-45 տարեկ.	66,4	15,3	18,3	71,1	13,9	15
40-60 տարեկ.	58,3	21,9	19,8	66,6	16,8	16,6
60 եւ ավելի տ.	49,9	27,1	23,4	57,1	22,2	20,6
միջն. կրթ.	63	17,9	19,1	65,1	17	17,9
բարձրագ. կրթ.	63,4	18,7	18	75,4	13,3	11,4
բանվոր	70,1	14,9	14,5	70,5	15,8	13,7
գյուղացի	58,1	20,9	21,1	59,6	16,7	23,8
ծառայող, մտավ.	63,8	18,6	17,6	70,9	15,1	13,9
ղեկավ. աշխ.	72,8	13,9	13,3	78,6	9,9	11,5
թոշակառու, տն. տնտեսուհի	45,2	25,2	29,7	57,9	19,5	22,7
ուսանող	71,6	11,4	17,1	78,8	12,3	8,9
չաշխատող եւ փախստական	21,7	35,9	42,4	66,9	15,4	17,6

Դժվար չէ նկատել մի քանի կարեւոր իրողություն: Առաջին՝ հասարակության առանձնացված բոլոր տարիքային եւ սոցիալական խմբերում հարցադրմանը «Այո» պատասխանողների տոկոսը մարտից մինչեւ օգոստոս ընկել էր, իսկ ամենամեծ անկումը տեղի էր ունեցել փախստականների (հիմնականում՝ նախկին ղարաբաղցիներ) շրջանում: Երկրորդ՝ այդ անկումն, այնուամենայնիվ, էական չէր եւ չէր կարող ազդել հանրաքվեի վերջնական արդյունքի վրա, եթե այն տեղի ունենար այդ օրը: Սա նշանակում է, որ Մոսկվա-Ադրբեջան բլոկի կողմից մի քանի ամիս կիրառվող ռազմական ճնշումները եւ այդ ընթացքում ու դրան զուգահեռ Հայաստանում հակաանկախական ուժերի կողմից քարոզչական եւ քաղաքական բուռն պայքարն ապարդյուն էին անցել: Ժողովրդի բացարձակ մեծամասնությունը հիմնական քաղաքական հարցում պաշտպանում էր ժողովրդավարական իշխանության անկախության հասնելու ուղեգիծը:

Օգոստոսյան հեղաշրջման փորձը, դրա դեմ ծառացած ժողովրդավարական ուժերի տարած հաղթանակը, Մերձբալթյան հանրապետությունների անկախության ճանաչումը, տարբեր հանրապետություններում ԳԿՉՊ-ի ձախողումից անմիջապես հետո իրենց Գերագույն խորհուրդների կողմից անկախության հռչակումը, Հայաստանի իշխանության կտրուկ դիրքորոշումը եւ ընդհանուր մթնոլորտը շատ բան փոխեցին: Հօգուտ անկախության փաստարկների հիմքերը բազմապատկվեցին: Հասարակական տրամադրության կտրուկ փոփոխման պայմաններում անկախության դեմ պայքարողները, մի տեսակ անաղմուկ, անցան ընդհատակ:

Սեպտեմբերի առաջին եւ երկրորդ տասնօրյակները հանրաքվեին «Այո» պատասխանելու քարոզարշավի ամենաբուռն օրերն էին: Հօգուտ անկախության՝ հայտարարություններով ու կոչերով կրկին հանդես եկան ՀՀՇ 3-րդ արտահերթ համագումարը[783], ՀՀ Գերագույն խորհուրդը[784], Ամենայն Հայոց վեհափառ հայրապետ, կաթողիկոս Վազգեն Ա-ն[785]: Ի հեճուկս օրեր առաջ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի կողմից հրապարակված տարտամ կոչի, Ակադեմիայի դահլիճում գումարված՝ մտավորականության ներկայացուցչական հավաքը (կազմակերպվել էր պատգամավոր Կարեն Յուզբաշյանի նախաձեռնությամբ) հանրապետության քաղաքացիներին ուղղված հստակ կոչով դիմում ընդունեց՝ քվեարկել հօգուտ անկախության[786]: Նույնպիսի բովանդակությամբ կոչեր ընդունեցին Մշակույթի աշխատողների միությունը, Գրողների միությունը, հայրենակցական միություններ եւ այլն: Հօգուտ անկախության քվեարկելու

782 *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 07.09.1991:*

783 *«Հայք» 30.08.1991:*

784 *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 17, հոդվ. 376:*

785 *«Հայաստանի Հանրապետություն», 17.09.1991:*

786 *Սեպտեմբերի 20-ին հրապարակվեց ԳԱ ընդհանուր ժողովի անունից ընդունված նույնաբովանդակ հայտարարություն՝ սեպտեմբերի 18-ով թվագրված եւ Վ. Համբարձումյանի ստորագրությամբ («Հայաստան», 20.09.1991):*

կոչ արեցին ճանաչված մտավորականներ, արվեստի եւ մշակույթի գործիչներ՝ Հրանտ Մաթեւոսյանը, Սերո Խանզադյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Խաչիկ Սաֆարյանը, Աղասի Այվազյանը, Վարդգես Պետրոսյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Գոհար Գասպարյանը, Օհան Դուրյանը, Տիգրան Լեւոնյանը, Տաթեւիկ Սազանդարյանը, Հովհաննես Չեքիջյանը, Լեւոն Թոքմաջյանը, Էդուարդ Միրզոյանը, Լորիս Ճգնավորյանը, Մարո Մարգարյանը, Հովհաննես Զարդարյանը, Վարագ Առաքելյանը, Հակոբ Հակոբյանը (նկարիչ), Տիգրան Մանսուրյանը, Խորեն Աբրահամյանը, Վիկտոր Համբարձումյանը եւ բազմաթիվ ուրիշներ[787]:

ՀՀՇ-ի նախաձեռնությամբ հանրաքվեի նախորդող օրերին «Այո՛» կարգախոսով քարոզչական չորս ավտոշարասյուն՝ երաժշտական համույթների, դերասանների ու երգիչների ուղեկցությամբ, ուղեւորվեց դեպի հանրապետության շրջանները՝ աշխատելով անցնել բոլոր բնակավայրերով: Այս ամենի շնորհիվ առաջացած ոգեւորության եւ խանդավառության հուժկու ալիքով հասարակության միջից արագորեն դուրս էին գալիս ամեն տեսակ վերապահումները: Հանրաքվեին մասնակցելու եւ դրական պատասխան տալու հաստատակամությունը դառնում էր համընդհանուր: Սեպտեմբերի 19-ին, ուշ երեկոյան, ոչ այնքան հորդորական, որքան շնորհավորական խոսքով ժողովրդին դիմեց նաեւ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը. «....Մենք կատարում ենք վճռական քայլ, որին անմիջապես պետք է հետեւի Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակումը: Բայց մենք բոլորս էլ գիտակցում ենք, որ անկախությունը մեզ համար ինքնանպատակ չէ: ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ընդամենը միջոց է ԱԶԱՏՈՒԹՅԱՆ հասնելու համար, որովհետեւ գերագույն նպատակն ազատությունն է: Եւ միայն ազգի անկախ պետականությունն է, որ կարող է ապահովել յուրաքանչյուր անհատի եւ հավաքական ժողովրդի

[787] *Հանրաքվեի հետ կապված նյութերը, այդ թվում նաեւ բազմաթիվ մտավորականների եւ հայտնի գործիչների կոչերն ու հորդորները համահավաք հրատարակել է Գագիկ Մինասյանը (**Մինասյան Գ.**, Հանրաքվե, Երեւան, 1992): Փաստաթղթերի մի այլ ժողովածու, նկատի ունենալով անկախության քաղաքական ուղեգիծը, 1988թ. Օգոստոսից՝ Հայոց համազգային շարժման առաջին ծրագրից մինչեւ անկախության հանրաքվե, հրատարակվել է Հայ ազգային կոնգրես կուսակցության եւ «Արմատ» ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի կողմից, Հայաստանի անկախության 25-ամյակի առթիվ (տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակը, փաստաթղթերի ժողովածու, Երեւան, 2016):*

ազատությունը: Մենք անկախության ենք գնում ոչ թե զգացմունքներով. մենք գնում ենք գիտակցությամբ, բանականությամբ, քաղաքական ստույգ հաշվարկով....»[788]:

Անկախության հանրաքվեին որպես դիտորդ մասնակցելու համար պաշտոնական հրավեր էր ուղարկված 57 երկրների, միջազգային կազմակերպությունների: Իրենց կողմից դիտորդներ էին հրավիրել նաեւ կուսակցությունները: Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի որոշմամբ՝ այն քաղաքացիները, որոնք քվեարկության օրը պետք է բացակայեին հանրապետությունից, կարող էին քվեարկել նախապես՝ սկսած սեպտեմբերի 10-ից:

բ) Վերջին խոչընդոտների հաղթահարումը, Անկախության հանրաքվեի իրականացումը

Օգոստոսյան հեղաշրջման փորձի ձախողումից հետո նաեւ այն հանրապետությունները, որոնք պատրաստ էին ստորագրել միութենական պայմանագիրը, իրենց օրենսդիր մարմինների որոշմամբ հապշտապ անկախություն հռչակեցին: Թվում էր, թե այլեւս անիմաստ է հանրաքվեի անցկացումը կապել ԽՍՀՄ համապատասխան օրենքի պահանջների հետ, եւ որ նույն բանը կարող է անել նաեւ Հայաստանը: Սակայն հանրապետությունների Գերագույն խորհուրդների՝ նման որոշումներով անկախությունների հռչակումներն, ըստ էության, կմնային որպես քաղաքական քայլեր չէին կարող իրավական հետեւանքներ ունենալ, եթե ինչ-որ կերպ ԽՍՀՄ-ը, թեկուզ ձեւական, շարունակեր գոյատեւել, ինչի հնարավորությունը դեռ պահպանվում էր, եւ դրա համար ջանքեր էին թափվում: Այն հույսերը, թե Ժողովրդական պատգամավորների առաջիկա համագումարը կճանաչի այդ կերպ հռչակված անկախությունները, իհարկե, չարդարացան: Հայաստանը, նշանակած լինելով Անկախության իր հանրաքվեն սեպտեմբերի 21-ին, չտրվեց գայթակղությանը եւ չգնաց այդ ճանապարհով: Սակայն առիթը եւ ստեղծված մթնոլորտը չէր կարող չօգտագործվել քաղաքական ընդդիմության կողմից, հիմք ծառայել նրա նոր ակտիվացման համար: Նրանք հիմա է՛լ ավելի վճռականորեն սկսեցին պնդել առանց հանրաքվեի, միայն Գերագույն խորհրդի որոշմամբ, օր առաջ անկախության հռչակման իրենց պահանջը, այն դեպքում, երբ հանրաքվեին մնացել էր ընդամենը 20-25 օր: Ընդ որում՝ այդ պահանջին միացան նաեւ

[788] ***Մինասյան Գ.***, *Հանրաքվե, էջ 51:*

սկզբունքորեն անկախության դեմ գործող ուժերը՝ այդ օրերին կիսամեռ, ինքնալուծարման առջեւ կանգնած ՀԿԿ-ն եւ ՀՅԴ-ն: Այս ուժերը ակնհայտորեն մի նպատակ էին հետապնդում. մի վերջին փորձը կատարել հանրաքվեն ձախողելու ու դրանով իսկ անկախությունը իրավական առումով խոցելի դարձնելու համար:

Դեռ օգոստոսի 20-22-ի ծանր ու պատասխանատու օրերին Գերագույն խորհրդի մի քանի պատգամավորներ[789] առանց հանրաքվեի, միայն Գերագույն խորհրդի որոշմամբ անկախություն հռչակելու հարցով արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջ էին ներկայացվել ԳԽ նախագահությանը: Նույն հարցը, այս անգամ արդեն՝ նրանց միացած եւս մի քանի պատգամավորների եւ նախագահության անդամների[790] ստորագրությամբ, մտցվեց Նախագահության նիստի օրակարգ եւ եռօրյա բուռն քննարկում ունեցավ օգոստոսի 26-28-ին[791]: Ըստ էության, նույն պահանջի կողմ էր քարոզում նաեւ Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը՝ հորդորելով «պահը չկորցնել»[792]: Նրանց ներկայացրած նախագիծը չանցավ: Դրա փոխարեն Գերագույն խորհրդի նախագահությունն օգոստոսի 29-ին հայտարարություն ընդունեց պետական հեղաշրջման ձախողումից հետո ԽՍՀՄ-ում ստեղծված իրավիճակի մասին՝ արձանագրելով, որ հեղաշրջումից հետո այն քայլերն ու փոփոխությունները, որ անում են մյուս հանրապետությունները, Հայաստանում վաղուց արդեն իրականացված են: Նախագահությունը, միաժամանակ, համարում էր, որ փոփոխված իրադրությունում եւս կայանալիք հանրաքվեն հույժ անհրաժեշտ է, քանզի այն «ապագա անկախ պետականության հաստատման, ճանաչման եւ հաստատման համար իրավական եւ քաղաքական կայուն հիմք է ապահովում»[793]:

Իշխանությունը շարունակեց հավատարիմ մնալ այն սկզբունքին, որ պետականության նվաճման կարեւորագույն խնդրի լուծման ճանապարհը պետք է լինի այնպիսին, որ բավարարի դեպքերի եւ իրադարձությունների

[789] *Սա փաստորեն Վ. Մանուկյանի հիմնած ԱԺՄ-ի նախաձեռնությունն էր. այն ստորագրել էին Արշակ Սադոյանը, Տիգրան Սարգսյանը, Դավիթ Վարդանյանը, Սարգիս Մուրադյանը:*

[790] *Միացել էին Կիմ Բալայանը, Ռաֆայել Ղազարյանը, Սամվել Շահինյանը, Սեյրան Բաղդասարյանը, Ստեփան Գրիգորյանը:*

[791] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29.08.1991:*

[792] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29.08.1991:*

[793] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 16, հոդվ. 362:*

հետագա հնարավոր զարգացման բոլոր, այդ թվում՝ նաեւ վատթարագույն տարբերակներին, այսինքն՝ երկրի անկախությունն իրավական առումով անխոցելի եւ ընդունելի լինի ե՛ւ տվյալ պահի համար, ե՛ւ հետագայի՝ իրադարձությունների ցանկացած զարգացման դեպքում: Եթե ԽՍՀՄ-ը կազմաքանդվեր հենց այնպես, ինչպես դա տեղի ունեցավ հաջորդ 3-4 ամիսներին, ապա կայացված հանրաքվեն ոչնչի չէր խանգարի, ընդհակառակը, իրավական առումով կլիներ անկախության ճանաչման համար շատ ավելի ծանրակշիռ հիմք, քան մյուս հանրապետությունների օրենսդիր մարմինների ընդունած որոշումները[794]: Բայց հնարավոր էր, որ, թեկուզ կենտրոնական իշխանության ձեւական պահպանմամբ ԽՍՀՄ-ը շարունակեր առժամանակ գոյատեւել, ինչին միտված էին նաեւ Արեւմուտքի դիրքորոշումը եւ ջանքերը: Այդ դեպքում Հայաստանի անկախության հռչակման հիմքը օրինական կլիներ եւ միջազգային ճանաչման հարցում խոչընդոտի առիթ չէր դառնա: Այսինքն՝ հենց այս հնարավորությունը բացառելուն էր ուղղված առանց հանրաքվեի, ԳԽ-ի որոշմամբ օր առաջ անկախություն հռչակելու ընդդիմության պահանջը:

Համապատասխան բացատրություններն, անշուշտ, զանազան քննարկումների ժամանակ մատուցվել էին ընդդիմությանը, սակայն առանց հանրաքվեի անկախություն հռչակելու կողմնակիցները ո՛չ բացատրություններին անսացին, ո՛չ էլ կրած անհաջողություններից հետո հուսահատվեցին: Նրանք փորձեցին նույն հարցով Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով հավաքել պատգամավորների 1/3-ի ստորագրությունները, ինչը նրանց չհաջողվեց: Դրանից հետո էլ գործի դրվեց հանրահավաքներով ճնշում գործադրելու եւ սպառնալիքի միջոցը: Հինգ կուսակցություններ՝ ՀՅԴ-ն, ԱԻՄ-ը, ՀՀԿ-ն, ՍԻՄ-ը, ՀՔԴՄ-ն, օգոստոսի 31-ին համատեղ հանրահավաք կազմակերպեցին: Այստեղ դաշնակցական Վահան Հովհաննիսյանը հետին թվով մեղադրում էր իշխանությանը, որ Մոսկվայում տեղի ունեցած հեղաշրջման օրերին զսպվածության եւ խոհեմության կոչ արեց, մինչդեռ իրենք արտահերթ

[794] *Սա չի նշանակում, թե մյուս հանրապետությունները չէին գիտակցում այս խնդրի կարեւորությունը: Պարզապես նրանք բոլորը, Հայաստանից բացի, ունեին կամ ինքնավար կազմավորումներ, կա՛մ հոծ ազգային փոքրամասնություններ, որոնք անկախացման օրինական գործընթացի դեպքում կարող էին Կենտրոնի կողմից օգտագործվել որպես խոչընդոտներ: Բալթյան հանրապետությունների անկախությունները ճանաչվեցին բոլորովին այլ հիմքերով:*

նստաշրջան եւ կտրուկ հայտարարություններ էին պահանջում[795]: Նույն կուսակցության մի այլ անդամ՝ Հրայր Կարապետյանը համարում էր, որ Հայաստանը պետք է առաջնորդվի պահանջատիրության սկզբունքներով եւ անկախություն հռչակի Արցախի հետ միասին[796]: Հանրահավաքում «ընդունված» փաստաթուղթը պահանջում էր սեպտեմբերի 2-ին արտահերթ նստաշրջան հրավիրել եւ կայացնել հետեւյալ որոշումները.

ա) Սահմանադրական փոփոխություն կատարել եւ Արցախի շրջանները մտցնել ՀՀ վարչատարածքային կազմի մեջ: Հանրաքվեն եւ նախագահական ընտրությունները անցկացնել նաեւ Լեռնային Ղարաբաղում.

բ) Չեղյալ հայտարարել 1921թ. հոկտեմբերի 16-ի Կարսի, 1920թ. դեկտեմբերի 2-ի խորհրդայնացման, 1922թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ կազմավորման պայմանագրերը, ապօրինի ճանաչել 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը.

գ) Հռչակել ՀՀ անկախության վերականգնումը (այսինքն՝ առանց հանրաքվեի, Գերագույն խորհրդի որոշմամբ),

դ) Նշանակել Սահմանադիր ժողովի ընտրություններ,

ե) Հայտարարել զորակոչ եւ կազմակերպել ազգային բանակ:

Փաստաթուղթն ավարտվում էր սպառնալիքով. այս պահանջները չկատարելու դեպքում կպահանջվի Գերագույն խորհրդի ղեկավարության հրաժարականը[797]:

Ինչպես դժվար չէ նկատել, այստեղ խոսքը ոչ միայն այդ օրերին քաղաքական օրակարգի հիմնական խնդրի մասին էր, այլեւ մի վերջին անգամ ի մի էին հավաքված այն բոլոր պահանջները, որոնք տարվա ընթացքում տարբեր ժամանակներում ու տարբեր ուժերի կողմից օգտագործվել էին իշխանության քաղաքական ուղեգծի դեմ որպես խոչընդոտ ծառայեցնելու համար: Ինչ վերաբերում է հիմնական՝ առանց հանրաքվեի Գերագույն խորհրդի միջոցով անկախության հռչակման հարցին, ապա հասկանալի էր դրա քաղաքական ենթատեքստը: Հանրաքվեին մնացել էին հաշված օրեր: Մթնոլորտն այնպիսին էր, որ այդ ընթացքում ընդհանուր իրա-

795 *Իրականում պետական հեղաշրջման հետ կապված հայտարարությունը միաձայն ընդունվել էին Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահությունների համատեղ նիստում, որին այնուհետեւ, դարձյալ՝ առանց վերապահումների, հավանություն էր տվել բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հրավիրված նիստը:*

796 *Տե՛ս «Երկիր», 03.09.1991:*

797 *Նույն տեղում:*

վիճակի անբարենպաստ փոփոխությունները բացառվում էին: Որեւէ մեկը չէր կասկածում, որ հանրաքվեն անցնելու է մեծ ոգեւորության պայմաններում եւ բացարձակ դրական արդյունք է արձանագրելու՝ բարձրացնելով իշխող քաղաքական ուժի վարկանիշը:

Ուրեմն ի՞նչ նպատակ էին հետապնդում ընդդիմադիր ուժերի այս հախուռն պահանջները:

Քաղաքական իմաստով՝ այդ պահանջները բխում էին, առաջին հերթին, Դաշնակցության շահերից՝ նկատի ունենալով հետեւյալը.

Ա) ՀՅԴ-ի հայդատական գաղափարախոսությունը, ինչպես հայտնի է, բացառում էր Հայաստանի անկախությունը եւ ենթադրում էր նրա գոյությունը ԽՍՀՄ կամ Ռուսաստանի կազմում (քանի դեռ նրա միջոցով չեն ազատագրվել հայկական պատմական հողերը): Հանրաքվեով ընդունված որոշումը հետագայում կարելի էր փոխել միայն հանրաքվեով, մինչդեռ Գերագույն խորհրդի որոշումը կարող էր վերանայել նույն մարմինը: Ուստի երբեւէ իշխանության գալով ու խորհրդարանում մեծամասնություն ունենալով՝ նա կարող էր վերանայել անկախություն հռչակելու՝ Գերագույն խորհրդի որոշումը եւ մտնել Ռուսաստանի (կամ նրա գլխավորած ինչ-որ միության) կազմի մեջ: Հանրաքվեով ընդունված որոշումը փոխելը նոր հանրաքվեի միջոցով անհամեմատ դժվար, ավելի ճիշտ՝ անհնար կլիներ[798]:

Բ) ԽՍՀՄ կազմավորման պայմանագրի չեղյալ հայտարարելու դեպքում կստացվեր, որ անկախությունը ոչ թե **ձեռք է բերվում** ժողովրդի կամքով եւ ՀՀՇ-ի քաղաքական ղեկավարությամբ (ինչում ՀՅԴ-ն ոչ մի դեր չուներ, ընդհակառակը՝ պայքարել էր դրա դեմ), այլ պարզապես **վերականգնվում է** 1920թ. կորսված անկախությունը (ինչը կապված էր ՀՅԴ-ի անվան հետ):

Գ) Ռուս-թուրքական պայմանագրերը չեղյալ եւ ապօրինի համարելով՝ Հայաստանն, ըստ էության, հայտնվում էր Թուրքիայի հետ պատերազմական վիճակում, իսկ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մաս

798 *1993-94թթ. ՀՅԴ-ն եւ Կոմկուսը, օգտվելով պատերազմական ծանրագույն իրավիճակից, կրկին Ռուսաստանին միանալու խնդիր էին հարուցում: Եթե նրանք կարողանային խորհրդարանում անհրաժեշտ ձայներ ապահովել, ապա միակ անհաղթահարելի պատնեշը կմնար այն, որ անկախությունը հռչակվել է հանրաքվեով: Հետագայում 1995թ. ընդունված Սահմանադրությամբ ամրագրվեց, որ հանրապետության անկախությանը վերաբերող նորմը անփոփոխելի է անգամ հանրաքվեի միջոցով:*

հոչակելով՝ պատերազմական վիճակում էր հայտնվում Ադրբեջանի դեմ: Դրանով, մի կողմից՝ խիստ վտանգավոր (ուստի անիմաստ) էր դառնում անկախությունը, մյուս կողմից՝ դժվարացվում էր միջազգային հանրության կողմից անկախության ճանաչման հարցը:

Դ) Եթե ԽՍՀՄ-ը առժամանակ, թեկուզ՝ ձեւական, շարունակեր գոյատեւել, ապա նրա գործող օրենքներից դուրս հոչակված որեւէ մեկի անկախությունը աշխարհը չէր ճանաչելու, մինչդեռ որեւէ առարկություն չէր կարող ունենալ Հայաստանի դեպքում, որն այս հարցում պահպանում էր գործող օրենքի տառը[799]:

Ինչ վերաբերում է մյուս ընդդիմադիր ուժերին, ապա նրանց քաղաքական օգուտն այս դեպքում այլ բան չէր, քան այն, որ համաժողովրդական մեծ խանդավառություն խոստացող այս միջոցառումը եւ պատմականորեն կարեւորագույն այս քաղաքական ակտը՝ Հայաստանի անկախության ձեռքբերումը, հսկայական քաղաքական կապիտալի պիտի վերածվեր ՀՀՇ-ի համար:

Եթե արտահերթ նստաշրջան հրավիրելու՝ ընդդիմության նախաձեռնությունը չկայացավ, բնականաբար, այդ պահանջները հնչեցին Գերագույն խորհրդի սեպտեմբերի 9-12-ի հերթական նիստերում՝ պետական հեղաշրջման եւ դրան հաջորդած շրջանի իրադարձությունների մասին Գերագույն խորհրդի նախագահի ներկայացրած ընդարձակ ելույթի քննարկման ժամանակ: Մեղադրանքներից առաջինը վերաբերում էր հեղաշրջման օրերին՝ օգոստոսի 19-21-ին, ԳԽ նախագահության գրված դիրքին՝ այն համարելով զգուշավոր եւ իրավիճակին ոչ համարժեք: Սա կեղծ մեղադրանք էր, քանզի այդ երեք օրերի պաշտոնական դիրքորոշումները ձեւակերպվում եւ քայլերը կատարվում էին քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ ու համաձայնությամբ, եւ այդ ընթացքում ոչ մեկն ավելի արմատական ու համարձակ քայլերի մասին չէր խոսել: Նրանք, ովքեր ընդամենը մի քանի շաբաթ առաջ հանդես էին գալիս որպես անկախության դեմ պայքարող եւ միութենական պայմանագրի մոլի ջատագովներ, այժմ տրամագծորեն հակառակ դիրքերից մեղադրում էին Գերագույն խորհրդի նախագահին՝ 10+1-ի հայտարարությունը ստորագրելու համար եւ դեմ էին անցման շրջանի միութենական մարմինների աշխատանքներին մասնակցելուն: Առաջ քաշվեցին նաեւ այն պահանջնե-

[799] *Ինչ վերաբերում է Սահմանադրության եւ բանակի հարցերին, ապա, այդ գործերը սկսվել եւ արվում էին առանց ավելորդ աղմուկի:*

րը, որոնք հնչել էին օգոստոսի 31-ի հանրահավաքում: Բուռն քննարկումներից հետո Գերագույն խորհրդի ընդունած որոշումը նախատեսում էր.

ա) Անցման շրջանի ԽՍՀՄ պետական իշխանության մարմիններում ՀՀ մասնակցության, դրա ձեւերի ընտրության հարցը քննության առնել հանրաքվեի արդյունքներն ամփոփելուց հետո.

բ) նպատակահարմար համարել շարունակել մասնակցությունը միջհանրապետական տնտեսական կառույցներին.

գ) Գերագույն խորհրդի նախագահին լիազորել մասնակցելու ԽՍՀՄ Պետական խորհրդի նիստերին[800]:

Նշանակված հանրաքվեն ձախողելու այս հերթական անհաջող փորձից հետո, երբ ընդամենը 10 օր էր մնում համաժողովրդական քվեարկությանը, եւ գործնականում անհնար էր կանխել դրա իրականացումը, նոր միայն ՀՅԴ-ն, խույս տալու համար խիստ անբարենպաստ վիճակում հայտնվելու իրական հեռանկարից, հանդես եկավ սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցելու եւ «Այո» պատասխանելու կոչով[801]: Բայց ոչ միայն. նա անմիջապես էլ (ինչպես մեկ տարի առաջ Անկախության հոչակագրի առիթով) ձեռնամուխ եղավ անկախության դափնիները սեփականելու գործին: Այսպես, հենց այն օրերին, երբ ՀՀՇ-ի ողջ կառույցը մինչեւ վերջին մարդը լծված էր հանրաքվեի քարոզարշավին, ՀՅԴ-ն բացառիկ մի ցինիզմով սկսեց մեղադրել նրան անկախությունից եւ հանրաքվեից... երես թեքելու մեջ. «Եւ ահա բարձիթող եղած է սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, որ մինչեւ օգոստոսի կեսերը ՀՀՇ-ական իշխանության կողմե նախապայման կհոչակվեր միութենական որեւէ բանակցության մասնակցելու համար: ՀՀՇ-ական «ասպետները», որոնք անկախության տեսլականը նախ անջատումի տրամաբանության գերին դարձուցին, հիմա ալ կոնակ դարձուցած են հանրաքվեին «Այո» պատասխանը ապահովելու իրենց հանձնառությանը»[802]: Մինչ այդ այս կուսակցության գաղափարախոսները բազմաթիվ անգամ քամահրանքով ու ծաղրանքով էին արտահայտվել անկախության հանրաքվեի նկատմամբ: Ըստ այս կուսակցության գաղափարախոսներից է. Հովհաննիսյանի՝ «Միայն շատ միամիտներ կարող են ենթադրել, որ ժողովրդի կամքը կարող է որեւէ նշանակություն ունենալ իրա-

[800] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 17, հոդվ. 368:*

[801] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.09.1991:*

[802] **Պերպերյան Ն.**, *Ինչո՞ւ լռած են անկախության փերեզակները, «Դրոշակ», 25.09.1991:*

կան անկախություն ձեռք բերելու հարցում»[803]: Այժմ նույն կուսակցության բյուրոյի ղեկավարը հանրաքվեի նախօրյակին հայտարարում էր ճիշտ հակառակը. «Այս հանրաքվեում եթե առավելագույն քվեներ ապահովեն հօգուտ անկախության, ապա այն շատ կարեւոր մեկնակետ կլինի մեր ժողովրդի համար՝ անկախության գործընթացն ավելի ապահով ճանապարհի վրա դնելու համար»[804]: Ստիպված լինելով արձանագրել, որ «ազգային ոչ մեկ ուժ կրնա «ոչ» պատասխանել հանրաքվեին, ՀՅԴ-ն չէր մոռանում հատուկ պնդել, որ «Այո» պատասխանելու՝ հասարակության տրամադրվածությունն ամենեւին էլ ՀՀՇ-ի վաստակը չէ[805]: Իսկ հանրաքվեի իրականացումից եւ արդյունքների ամփոփումից հետո Դաշնակցության համար արդեն այն դարձավ շատ կարեւոր պատմական իրադարձություն. «Ժողովրդավարական ազատ կողմնորոշման առաջին իսկ առիթին՝ հայ ժողովուրդը գրեթե միաձայնությամբ վերահաստատեց ազատ ապրելու եւ սեփական պետության գերիշխանութենեն դուրս որեւէ հակակշիռ մերժելու իր վճռականությունը»[806]: Եւ, որպես կարեւոր պատմական իրադարձություն, այն, այս կուսակցության ղեկավար Հ. Մարուխյանի բերանով, թափանցիկ ակնարկով կապվեց 1918 թվականի, այսինքն՝ իրենց անվան հետ. «Սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը միահամուռ կերպով արտահայտեց իր պատրաստակամությունը կառչելու մայիսի 28-ի գաղափարական հրամայականներեն»[807]:

* * *

Հանրաքվեն ձախողելուն ուղղված՝ ընդդիմության «քաղաքական» պայքարը, թվում էր, թե ավարտվեց Գերագույն խորհրդի սեպտեմբերի 9-12-ի նիստերով եւ հանրաքվեին դիմագրավող վերջին ուժի՝ ՀՅԴ-ի՝ հանրաքվեին մասնակցելու ու «Այո» ասելու հրապարակային կոչով: Սակայն իրականում դա միայն արտաքին քողն էր, հակաանկախական ուժերի իրական նպատակը մնում էր նույնը՝ անկախության հանրաքվեն խոչընդոտելը, ինչին հասնելու համար, ընդհուպ մինչեւ հանրաքվեի նախօրյակը, նրանց կողմից զանազան միջոցներ գործադրվեցին: Հանրապետությունում իրավիճակի կտրուկ

[803] *«Ուրբաթ», թ. 27, 1991:*
[804] *«Երկիր», 20.09.1991:*
[805] *Տե՛ս «Դրոշակ», 11.09.91, խմբագրական:*
[806] *«Դրոշակ», 09.10.91,էջ 5:*
[807] *«Դրոշակ», 09.10.1991, էջ 16: Հիշեցնենք, որ 1918թ. մայիսի 28-ով թվագրված հայտարարության մեջ անկախության մասին ընդհանրապես խոսք չկար:*

ապակայունացման միջոցով հանրաքվեն խանգարելու հստակ միտում ունեին այդ օրերին Նախիջեւանի հետ սահմանային շրջաններում հրահրված դեպքերը Մեղրիի, Կապանի եւ Վայքի հատվածներում[808]: Գերագույն խորհուրդը ստիպված էր անդրադառնալ հանրաքվեի նախօրյակին իրադրության սրման ակնհայտ սադրիչ եւ ոչնչով չարդարացված այդ գործողություններին, որ հրահրվել էին սահմանամերձ շրջաններում: Պատգամավորական խմբեր ուղարկվեցին այդ շրջանները, տեղական ինքնակառավարման շրջանային մարմիններից պահանջվեց վճռական միջոցների դիմել վիճելի հարցերի կարգավորման համար, իսկ ՆԳ նախարարությանը հանձնարարվեց նյութեր նախապատրաստել «միջադեպերին մասնակցած մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու» համար: Այդ շրջանների բոլոր մակարդակների խորհուրդներին զգուշացվեց, որ իրավիճակը նույն օրը մինչեւ երեկո չկարգավորելու դեպքում դրանցում արտակարգ դրություն կմտցվի[809]: Ձեռնարկված կտրուկ միջոցառումների շնորհիվ սահմանային շրջաններում կայունությունը վերականգնվեց:

Եւ վերջապես, որպես հանրաքվեի բնականոն ընթացքը խաթարելուն ուղղված հուսահատ միջոց՝ ՀՅԴ-ի, ՍԻՄ-ի, ՀՀԿ-ի եւ ՀՔԴՄ-ի անունից սեպտեմբերի 19-ին հրապարակվեց «արցախցիներին» ուղղված հետեւյալ սադրիչ կոչը. «...հորդորում ենք ձեզ, որպես Հայաստանի քաղաքացիների, զենքը ձեռքից բաց չթողնելով, հնարավոր բոլոր միջոցներով ապահովել Արցախի հանրապետության մասնակցությունը Հայաստանի անկախության հանրաքվեին: Կեցցե Անկախ, Ազատ եւ Միացյալ Հայաստանը»[810]: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը եւ ղեկավարությունն, իհարկե, խոհեմ գտնվեցին եւ չգնացին նման քայլի:

Բառիս բուն իմաստով՝ միջոցների միջեւ խտրություն չդնելով՝ անկախության հանրաքվեի դեմ պայքարելու քայլերն ու միջոցառումները սրանով, հանրաքվեից ընդամենը երկու օր առաջ, կարծես թե, ավարտվեցին:

Անկախության հանրաքվեն ժողովրդավարական նոր իշխանության առաջին նմանօրինակ զանգվածային ընտրական միջոցառումն էր: Կազմակերպական եւ նախապատրաստական ամբողջ աշխատանքը ղեկավարել էր Հանրաքվեի կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որը ղեկավարում էր Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ

[808] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 13.09.1991:*
[809] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 17, հոդվ. 371:*
[810] *«Երկիր», 19.09.1991:*

Բաբկեն Արարքցյանը: Անկախության հանրաքվեն անցավ բացառիկ կազմակերպված եւ համաժողովրդական մեծագույն ոգեւորության պայմաններում: Մասնակիցների եւ առաջադրված հարցին դրական պատասխանողների թիվը գերազանցեց բոլոր սպասելիքները: Աշխարհի երկու տասնյակից ավելի երկրներից ու միջազգային կազմակերպություններից հրավիրված 117 դիտորդները միաձայն արձանագրեցին, որ Հայաստանը միակ երկիրն է, որ անկախության հանրաքվեն անց է կացնում օրինական, եւ ըստ այդմ էլ առաջնահերթ պետք է լինի նրա անկախության միջազգային ճանաչման հարցը[811]:

Ամփոփելով քվեարկության արդյունքները՝ Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը հրապարակեց դրա արդյունքների մասին հետեւյալ հաղորդումը.

«Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991թ. մարտի 1-ի որոշման համաձայն, 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե հետեւյալ հարցադրմամբ. «Համաձայն ե՞ք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն, ԽՍՀՄ կազմից դուրս»:

«Հայաստանի հանրապետության հանրաքվեի մասին օրենքի 31-րդ հոդվածին համապատասխան, Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը, ամփոփելով հանրաքվեի շրջանային եւ քաղաքային հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների արդյունքները,

Արձանագրում է

1. *Հայաստանի Հանրապետության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների թիվը՝ 2.163.967 մարդ:*
2. *Քվեարկության մասնակիցների թիվը՝ 2.056.758 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 95,4 %-ը:*
3. *«Այո» քվեարկած քաղաքացիների թիվը՝ 2.042.262 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 94,39 %-ը:*
4. *«Ոչ» քվեարկած քաղաքացիների թիվը 10.002 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,46 %-ը:*
5. *Անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը՝ 4129, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների թվի 0,19 %-ը:*

Հանրաքվեի հրապարակայնությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի, հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից հրավիրվել են 117 դիտորդ՝ 25 երկրներից: Հանրաքվեի անցկացման ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝ Բ. Արարքցյան»[812]:

Համաժողովրդական հանրաքվեի արդյունքները սեպտեմբերի 23-ին ներկայացվեցին Գերագույն խորհրդի նիստին, որն էլ այդ հիման վրա ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին իր պատմական որոշումը.

«Հավատարիմ մնալով Հայաստանի անկախության մասին հռչակագրին,

հենվելով մարդու իրավունքների եւ ազգերի ազատ ինքնորոշման նորմերի վրա,

նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ,

հիմք ունենալով 1991թ.-ի սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները,

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն»[813]:

Միաձայն (213 ձայնով) ընդունված այս որոշումը Գերագույն խորհրդի նիստում հանձնարարվեց հրապարակել պատգամավոր Արամ Մանուկյանին[814]:

---

[811] *Տես «Հայք», 25.09.1991, «Հայաստանի Հանրապետություն», 23.09.1991: Ահա Հայաստանի իրականացրած անկախության հանրաքվեին միջազգային մամուլում տրված գնահատականներից մեկը. «Այդ հանրաքվեն կարծես քաղաքական արվեստի փոքրիկ գլուխգործոց լինի. այն առաջինն է, որ անցկացվելու է խորհրդային սահմանադրության պահանջներին համաձայն, վեց ամիս առաջ այդ մասին նախազգուշացնելով Կրեմլին: Հետեւաբար, օրենքների դիկտատի մեջ հմտացած Կրեմլի ստրատեգների համար շատ ավելի դժվար է այն հաշվի չառնել (**Francis X. Clines**, «The New York Times», 15.04.1991. հայերեն թարգմանությունը՝ «Ազգ» օրաթերթ, 20.04.1991թ., հրատարակված նաեւ՝ «Գիտնականը եւ Նախագահը...», էջ 465-469):*

[812] *«Հայաստանի Հանրապետություն», 24.09.1991:*

[813] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 390:*

[814] *Ինչպես 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի անկախության հռչակագիրը, այնպես էլ այս որոշումը հրապարակելը Արամ Մանուկյանին հանձնարարելը*

Սեպտեմբերի 21-ը հայտարարվեց տոնական, ոչ աշխատանքային օր: Անկախության հռչակման առիթով Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, հայ ժողովրդին» ուղղված դիմում: Հատկանշական է, որ դիմումը շատ հեռու է նման առիթների համար բնորոշ եւ սովորական պաթետիկ ոճից ու բարձրագոչ արտահայտություններից: Հանրաքվեն գնահատելով հանդերձ որպես կարեւորագույն պատմական իրադարձություն՝ այն ավելի շատ ժողովրդի եւ երկրի առջեւ ծառացած ու սպասվող խնդիրների գիտակցումն ու արձանագրումն էր.

«Վերադարձ դեպի ինքնություն հեշտ չի լինելու, մենք դեռ նոր ենք սկսում քայլել ազատության ճանապարհով: Քաղաքակիրթ մարդկության անցած ուղին ցույց է տալիս, որ դա մեկ օրվա հարց չէ, եւ, հատկապես, դյուրին ճանապարհ չէ: Ուստի խոհեմաբար յուրացնելով առաջադեմ պետությունների փորձը, մենք պետք է կարողանանք պահպանել եւ հարստացնել մերը: Այո՛, մենք գնում ենք դեպի համայն մարդկության ընտանիք, բայց արդեն մեր դրոշի ներքո, մեր անկախ պետականության եւ մեր ազգային սեփական դիմագծով: Ազատության ճանապարհին մեզ սպասում են նոր փորձություններ: Դա ամենօրյա քննություն է լինելու մեզ համար: Պահպանե՛նք մեր ոգեւորությունը, բայց համակվենք իրապաշտությամբ, շարունակենք մնալ երազող, բայց սթափ դատողությամբ»[815]:

գ) Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները

Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին օրենքին համապատասխան՝ օգոստոսի 17-ից սկսվեց թեկնածուների առաջադրումը: Այս առիթով հրավիրվեց ՀՀՇ արտահերթ (երրորդ) համագումարը, որը օգոստոսի 27-ին կայացրած որոշմամբ (614 կողմ, 1 դեմ) հանրապետության նախագահի թեկնածու առաջադրեց ՀՀՇ անդամ, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Կազմվեց նաեւ նախընտրական աշխատանքների կազմակերպման նախընտրական շտաբ՝ Տեր-Հուսիկ քահանա Լազարյանի ղեկավարությամբ:

խորհրդանշական իմաստ ուներ՝ նկատի ունենալով Առաջին հանրապետության հայտնի նույնանուն գործչին:

[815] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 399:*

Լ. Տեր-Պետրոսյանի թեկնածությունն առաջադրեց նաեւ ՀՌԱԿ-ը՝ սեպտեմբերի 9-ին կայացած հանրապետական վարչության իր արտահերթ նիստում[816]: Պաշտպանելով Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը՝ ՌԱԿ կենտրոնական վարչությունը նրան բնորոշում էր իբրեւ «խիզախ անձնավորություն», «ռահվիրա Հայաստանի ժողովրդավարական շարժման եւ մանավանդ՝ նկատի ունենալով անոր խոհեմ ու վարչագետ քաղաքականությունը»: ՀՌԱԿ-ը համարում էր, որ վերջին մեկ տարվա բարդ իրադարձությունների մեջ «Լեւոն Տեր-Պետրոսյանը ցուցաբերեց հեռատես, խոհեմ եւ իմաստուն քաղաքականություն մը՝ ամրապնդելով Հայաստանի ժողովրդի վստահությունը անոր նկատմամբ եւ բարձրացնելով անոր վարկը միջազգային քաղաքական շրջանակներուն մեջ»[817]:

Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունն առաջադրվեց նաեւ քաղաքացիական նախաձեռնությամբ[818]:

ՀՅԴ-ն, չնայած նախագահական համակարգ հիմնելու նկատմամբ իր խիստ ժխտական վերաբերմունքին, այնուամենայնիվ՝ այդ պաշտոնի համար թեկնածու առաջադրեց դերասան Սոս Սարգսյանին[819]: ԱԺՄ-ն առաջադրեց Վազգեն Մանուկյանի թեկնածությունը: Ընդհանուր հաշվով առաջադրվել էր 17 թեկնածու: Սակայն թեկնածության առաջադրման համար հավաքված ստորագրությունների անբավարար լինելու կամ սահմանված պահանջները չբավարարելու հիման վրա, կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժեց վեցի գրանցումը, մի քանիսն էլ հանեցին իրենց թեկնածությունը: Գրանցված թեկնածուներն (իրենց փոխնախագահի թեկնածուներով) ութն էին.

Աշոտ Նավասարդյան (փոխնախ. Հրանտ Խաչատրյան)
Զորի Բալայան (փոխնախ. Հարություն Մարզպետյան)
Լեւոն Տեր-Պետրոսյան (փոխնախ. Գագիկ Հարությունյան)

---

[816] *«Ազգ», 14.09.1991:*

[817] *«Ազգ», 18.09.1991:*

[818] *Գործող օրենքով կար նման հնարավորություն՝ նախագահի թեկնածություն կարելի էր առաջադրել 200.000 քաղաքացիների ստորագրությամբ:*

[819] *Ընդամենը մեկ տարի առաջ՝ 1990-ի խորհրդարանական ընտրություններին իր չմասնակցելու փաստը ՀՅԴ-ն բացատրում էր նրանով, որ «հրապարակի վրա շատ աղտոտ փոշի կար» (տե՛ս «Դրոշակ», 16.01.1991, էջ 8): Պետք էր ենթադրել, որ մեկ տարվա ընթացքում իրենց կողմից այդքան շատ քննադատված նոր իշխանությունը կարողացել էր մաքրել այդ «աղտոտ փոշին»:*

Մյասնիկ Հակոբյան (փոխնախ. Հակոբ Առուստամյան)
Պարույր Հայրիկյան (փոխնախ. Ազատ Արշակյան)
Ռաֆայել Ղազարյան (փոխնախ. Սուրեն Զոլյան)
Սոս Սարգսյան (փոխնախ. Վահան Հովհաննիսյան)
Վազգեն Մանուկյան (փոխնախ. Դավիթ Վարդանյան)

Հասարակության տրամադրություններից ավելի քան ակնհայտ էր (այդ բանն անվերապահորեն հաստատում էին նաեւ անցկացված վիճակագրական հարցումները), որ Լեւոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը կասկած չի հարուցում: Նախընտրական քարոզարշավը, համաձայն օրենքի, սկսվեց ընտրությունից մեկ ամիս առաջ: Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ ինքը չի մասնակցի նախընտրական արշավին եւ կահմանափակվի միայն հեռուստատեսային մեկ ելույթով: Այս քայլը նա պայմանավորում էր այն հանգամանքով, որ ավելի քան երեքուկես տարի իր գործունեությունը եղել է բոլորի աչքի առաջ, իսկ քաղաքական ծրագրերը բազմիցս հասարակությանը ներկայացնելու առիթներ է ունեցել:

Վ. Մանուկյանը շուտով՝ սեպտեմբերի 25-ին, հանեց իր թեկնածությունը, միաժամանակ հրաժարվեց նաեւ վարչապետի պաշտոնից: Այս առիթով նրա տված բացատրությունը անառարկայական էր ու անհասկանալի. «Պրեզիդենտական պայքարը ապակայունացնում է մեր հանրապետության ներքին կյանքը, էապես ազդում է մեր տնտեսական համակարգի գործունեության եւ նույնիսկ քաղաքական որոշումների ընդունման վրա» : Նաեւ բողոքեց, թե իրեն զրպարտում են, իսկ որեւէ մեկը չի պաշտպանում[820]: Ավելի ուշ (1996թ) նա խոստովանեց իր այդ որոշման իրական երկու հիմնական պատճառները. առաջին՝ «հասկանալի էր, որ ժողովրդի համար Լեւոն Տեր-Պետրոսյանն ավելի գերադասելի էր», եւ երկրորդ՝ «իմ կողմնակիցների թիմը զգալիորեն կուժեղանար, եթե Դաշնակցությունը... պաշտպաներ իմ թեկնածությունը: Սակայն Դաշնակցությունն առաջադրեց Սոս Սարգսյանին...»[821]:

Ընտրարշավն ուներ իր յուրահատկությունը: Ինչպես վերը նշվեց, Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարվեց ընտրարշավին մասնակցելուց, իսկ մյուս բոլոր թեկնածուները միմյանց դեմ պայքարելու կարիք չունեին. նրանք բոլորն առաջադրվել էին պայքարելու համար Նախագահի հիմնական թեկնածուի դեմ: Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ էր համախմբվել, փաստորեն, ողջ ընդդիմադիր դաշտը. Աշոտ Նավասարդյանը եւ Հրանտ Խաչատրյանը ներկայացնում էին ՀՀԿ-ն եւ ՍԻՄ-ը, Պարույր Հայրիկյանը եւ Ազատ Արշակյանը՝ ԱԻՄ-ը եւ ՀՔԴՄ-ն, Սոս Սարգսյանը եւ Վահան Հովհաննիսյանը՝ ՀՅԴ-ն, Զորի Բալայանը ներկայացնում էր նախկին մտավորական նոմենկլատուրան եւ Հայաստանում ապրող ղարաբաղցիներին, Ռաֆայել Ղազարյանը «Ղարաբաղ» կոմիտեի անդամի իր հանգամանքով, ակամա, ձայներ պիտի խլեր հիմնական թեկնածուից եւ այլն: Եւ շուրջ մեկ ամիս նրանք բոլորը միասին Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ անպատասխան քննադատությամբ էին զբաղված:

ՀՀՇ-ի թեկնածուի դեմ նախընտրական պայքարի առաջամարտիկը Դաշնակցությունն էր: Նրա քարոզչությունը, բնականաբար, պետք է հենվեր հայդատական գաղափարախոսության վրա, եւ հենց առաջին օրը նա հանդես եկավ ընտրողներին ուղղված շատ բնորոշ, մեծադողրդ մի կոչով. «Համոզված ենք, որ չեք խաբվի նրանց կոչերով, ովքեր ժխտելով պահանջատիրությունը, հայ ժողովրդին տանում են դեպի նյութապաշտ կյանք, ուր մերժված եւ արհամարհված են նվիրումն ու զոհողությունը, ուր չկա Պայքար եւ Հաղթանակ»[822]:

Սկսած նախագահական պաշտոն հիմնելու մասին առաջին քննարկումներից՝ ՀՅԴ-ն ամենաբուռն ձեւով պայքարում էր դրա դեմ, ծաղրուծանակային գնահատում նախագահական կառավարման գաղափարը: Այժմ նրա ղեկավար մարմնի նույն պաշտոնաթերթը ներբողում էր իր երեկվա ծաղրի առարկան. «Հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրությունը պատմական առիթ մը պիտի ըլլա Հայաստանի եւ հայ ժողովրդի համար.... Հայոց Պետական տունը կարգի դնելու պատմական առիթը.... Պատմական քննութենե պիտի անցնի 70-ամյա ամբողջատիրության բեռը թոթափելու եւ հայ քաղաքական բյուրեղ ավանդները վերականգնելու ազգային հանձնառությունը, վճռականությունը....»[823]: Իսկ Դաշնակցության թեկնածուն՝ ժողովրդի կողմից հիրավի սիրված, Հայաստանում եւ ողջ ԽՍՀՄ-ում մեծ հռչակ վայելող տաղանդավոր դերասան Սոս Սարգսյանը, իր կողմից հայտարարում էր. «Հայ մարդը չի կարող դաշնակցական

[820] *Տե՛ս Մանուկյան Վ., Հայկական երազանքը, էջ 164:*
[821] *Նույն տեղում, էջ 301:*

[822] *«Երկիր», 17.09.1991: Եւ այս կոչն ուղղված էր այն բազմահազար մարդկանց, ովքեր ավելի քան երեքուկես տարի, իրոք մոռացած ամեն տեսակ նյութական կյանք, անմնացորդ նվիրումով եւ անբավ զոհողություններով պայքարել էին հանուն Լեռնային Ղարաբաղի, հանուն ազատության եւ անկախության, պայքարել էին առանց Դաշնակցության եւ ի հեճուկս նրա հարուցած խոչընդոտների:*
[823] *Տե՛ս «Դրոշակ», 25.09.1991:*

իդեալներից դուրս ապրել... Դաշնակցությունը որդեգրել է ժողովրդի իդեաները դեռ 100 տարի առաջ: Այսօր էլ անփոփոխ են այդ կարգախոսները, նրա գաղափարները»[824]:

Յուրահատուկ ձեւով էր տանում իր նախընտրական քարոզչությունը Պարույր Հայրիկյանը: Նա համարում էր, որ ի սկզբանե Շարժումը, ապա եւ՝ Հայաստանի իշխանությունները, գնում են հենց իր նախանշած ճանապարհով, պարզապես իրենից մի քանի քայլ ետ են մնում, որ՝ ի սկզբանե իրեն են պատկանում թե՛ անկախության, թե՛ Սահմանադրության, թե՛ ազգային բանակի, թե՛ նմանօրինակ այլ գաղափարները: Իսկ ՀՀՇ-ն դրանք իրենից «գողանում է»՝ խախտելով իր «հեղինակային իրավունքը»: Նա համարում էր, որ ինքն արդեն իսկ ընտրված նախագահ է. «Ազատ, ժողովրդավարական ընտրություններում... կարելի է ասել, որ ես արդեն հաղթել եմ», «ես Հայաստանի Նախագահն եմ», «...Նախագահ՝ նշանակում է մարդ, որը մշակում է քաղաքականությունը եւ իրականացնում է այն: Որպես քաղաքական կազմակերպության ղեկավար, ես ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ Հայաստանը գնում է իմ առաջադրած ճանապարհով»[825]: Մի այլ տեղում էլ մարգարեանում է. «կանցնեն տարիներ, եւ մեր զավակներից շատերը կզարմանան, որ այսօր որեւէ մեկը համարձակվել է իր թեկնածությունն առաջադրել Հայրիկյանի հետ: Մենք ընտրում ենք անկախության առաջնորդ, իսկ անկախության առաջնորդը վերջին 20 տարում եղել է Պարույր Հայրիկյանը»[826]:

Նախընտրական քարոզարշավում նախագահի թեկնածուները հատկապես շատ էին շոշափում Ղարաբաղի հարցը՝ սեփական անձին եւ իրենց կազմակերպություններին մեծ դեր վերագրելով Ղարաբաղի ինքնապաշտպանության գործում: Դա չափազանց դյուրին էր եւ գայթակղիչ. Հայաստանի պաշտոնական իշխանությունը, հասկանալի եւ հայտնի պատճառներով, ոչ միայն չէր թմբկահարում, այլեւ ժխտում էր Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանությանն իր ցուցաբերած հսկայական ռազմական եւ այլ կարգի օժանդակությունը: Իշխանության այդ օժանդակությունը, որ Հայաստանում բոլորին հայտնի փաստ էր, մնում էր մի տեսակ «անտեր», ուստիեւ կարելի էր հանգիստ յուրացնել: Այն յուրացնողների հայտարարությունները երբեմն կրում էին բացահայտ սադրիչ բնույթ՝

[824] *Տե՛ս «Ազգ», 21.09.1991:*
[825] *«Ազգ», 18.09.1991:*
[826] *«Հայք», 02.10.1991:*

վտանգելով խնդրի կարգավորման շուրջ նոր-նոր սկսված հայ-ադրբեջանական ուղղակի բանակցությունները: Հանրապետության օպերատիվ շտաբը ստիպված էր հանդես գալ այս մասին հայտարարությամբ եւ զգուշացնել, որ այդօրինակ գործողությունները հղի են ծայրահեղ բացասական հետեւանքներով եւ կարող են լրացուցիչ դժվարություններ ստեղծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործում[827]:

ՀՀՇ-ի «Հայք» թերթը միայն երբեմն անդրադառնում էր քարոզարշավին մասնակցող թեկնածուների արտահայտած «օրիգինալ» մտքերին եւ, փաստորեն, նույնպես չէր մասնակցում քարոզարշավին՝ հոգուտ իր թեկնածուի: Ռամկավարների «Ազգը» իր էջերը հավասարապես տրամադրում էր բոլոր թեկնածուներին: Սակայն, ահա, Ռամկավարների սփյուռքյան մամուլը («Պայքար») ստիպված էր արձանագրել. «....եպերելի միջոցներ այժմ կգործածվի Հայաստանի մեջ ծանոթ շրջանակի մը կողմե ընդդեմ Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի»: Եւ որպես այդ պարսավելի միջոցներին պատասխան՝ տալիս է հետեւյալ բնութագրումները. «Մենք պիտի գոհանանք պարզապես ըսելով, որ ո՛չ Պ. Հայրիկյան, ո՛չ Զ. Բալայան եւ ո՛չ Սոս Սարգսյան չունին ո՛չ պատրաստությունը, ո՛չ տարողությունը եւ ո՛չ ալ էական հատկանիշները երկրի մը ղեկավարության պատասխանատվությունը ստանձնելու: Պարույր Հայրիկյան, ի մասնավորի մեզի ծանոթ մտածելակերպով, դեռ իրարու հետ կշփոթե քաղաքականությունը եւ քաղաքական արկածախնդրությունը: Զորի Բալայան, Արցախի ազատագրության այդ ծանոթ ռահվիրան, օգտակար գործ կրնա կատարել իր հրապարակագրություններով, ուր հավանաբար կարելի չէ նույնացնել քաղաքական ակտիվիզմը քաղաքականության եւ դիվանագիտության հետ: Վերջապես Սոս Սարգսյան համակրելի անձ մըն է, որ նույնիսկ ի վիճակի չէ դառնալու Հ.Յ. դաշնակցության կամակատարը, թերեւս՝ ի պատիվ իրեն»[828]:

Ինչպես անկախության հանրաքվեի նախօրյակին, այնպես էլ այժմ, նույն քաղաքական ուժերը՝ ի դեմս նախագահության առաջադրված թեկնածուների, կրկին փորձեցին օգտագործել ղարաբաղյան խաղաքարտը: Նրանք հայտարարությամբ դիմեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ընտրություններին մասնակից դարձնել նաեւ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը[829]: Հանրապետության նախագահի թեկնածունե-

[827] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28.09.1991:*
[828] *Տե՛ս «Ազգ», 09.10.1991:*
[829] *Տե՛ս «Երկիր» 12.10.1991:*

րից որեւէ մեկը չնկատեց, որ այդ հայտարարությունը վիրավորական է արդեն իր անկախությունը հռչակած ԼՂՀ-ի համար, իսկ վերջինս էլ նրբանկատորեն որեւէ կերպ սրան չարձագանքեց:

Լեւոն Տեր-Պետրոսյանը նախընտրական միակ հեռուստաելույթով եւս մի անգամ հասարակությանը ներկայացրեց իր քաղաքական սկզբունքները, իր դավանած արժեքային համակարգը, պետականության հիմնադրույթների եւ քաղաքական հասկացությունների մասին իր պատկերացումները.

ա) Քաղաքականության մեջ մերժելի է բարոյախոսությունը. «միայն ու միայն գործով, իրական կյանքով է, որ կարող ես ժողովրդին համոզել քո ճշմարտությունը».

բ) Ազգի գերագույն նպատակը երջանիկ, բարեկեցիկ, ազատ ազգ դառնալն է, ինչի համար պետք է ազատվել պատմականորեն ձեւավորված կաղապարներից ու բարդույթներից, մերժել ամեն տեսակ «փրկչական» ծրագրերը, գործել նույն այդ նպատակին հասնելու համար միջազգայնորեն ընդունված ու կիրառելի խաղի կանոններով.

գ) Գերագույն նպատակին հասնել հնարավոր է միայն անկախ պետականության պայմաններում, դրա համար էլ ժողովուրդը որդեգրել է անկախ պետականության կերտման քաղաքականությունը եւ պատրաստ է այդ ճանապարհին կրել նաեւ անխուսափելի ու հնարավոր զրկանքներ.

դ) Քաղաքագետի պարտքն է անել ամեն ինչ՝ նվազագույնի հասցնելու համար պետականության կերտման ճանապարհին սպասվող զրկանքները եւ խաղաղ հանգրվանին հասնել հանդարտ, հավասարակշիռ միջոցներով.

ե) Որպես ելակետ պետք է ունենալ իրականությունը. միայն այս դեպքում է հնարավոր վարել քաղաքականություն, որովհետեւ՝ «կեղծ արժեքների վրա հենված քաղաքականությունը միշտ էլ կարող է սնանկ դուրս գալ, եթե ոչ վտանգավոր».

զ) Մենք սովորական ազգ ենք, իրական ժողովուրդ, որը գտնվում է իրական շրջապատում, եւ պետք է կարողանանք իրատեսական հարաբերություններ ունենալ արտաքին աշխարհի, առաջին հերթին՝ մեր անմիջական հարեւանների հետ[830]:

[830] *Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հեռուստաելույթի սղագրական տեքստը տե՛ս «Դրոշակ», 23.10.1991, էջ 9-12:*

Ելույթի մեջ բացակայում էր նախընտրական արշավի ամենաբնորոշ տարրը՝ չափազանցված խոստումները: Ներկայացվում էին միայն այն մեխանիզմներն ու սկզբունքները, որոնց կիրառմամբ պետք է կայացվեր անկախ պետությունը, եւ լուծվեին երկրի քաղաքական օրակարգում առկա բազմաթիվ խնդիրները: Որոշակի էր մի բան. այդ ամենը պետք է ծառայի երկրի քաղաքացիների ազատ, բարեկեցիկ, երջանիկ ու խաղաղ կյանքին: Նախագահական ընտրությունը, ըստ էության, երկրորդ մի հանրաքվե էր, որտեղ ժողովուրդը պետք է ընտրություն կատարեր, մի կողմից՝ հայ քաղաքական մտքի ավանդական՝ իռացիոնալ պատկերացումների եւ քաղաքական աճպարարության, մյուս կողմից՝ դրանց տրամագծորեն հակադրվող իրատես քաղաքականության, նոր, իրական արժեքային համակարգի միջեւ: Նախագահական ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ հայ քաղաքական մտքի ավանդական պատկերացումներին եւ քաղաքական աճպարարությանը տրամագծորեն հակադրվող քաղաքական մտածելակերպն ու նոր գաղափարներն ամենալայն պաշտպանությունը ստացան Հայաստանի քաղաքացիների կողմից:

Հոկտեմբերի 16-ին ընտրողների 2.155.698 ընդհանուր թվից քվեարկությանը մասնակիցների թիվը կազմեց 1.519.878: Եւ արձանագրվեցին հետեւյալ արդյունքները[831].

1. Լեւոն Տեր-Պետրոսյան 1.260.433 (83,028%)
2. Պարույր Հայրիկյան 109.438 (7,209 %)
3. Սոս Սարգսյան 65.757 (4,332%)
4. Զորի Բալայան 6899 (0,454 %)[832]
5. Ռաֆայել Ղազարյան 5941 (0,391 %)
6. Աշոտ Նավասարդյան 2467 (0,163 %)

Արդյունքներն անվիճարկելի էին բոլորի համար: Պ. Հայրիկյանն իր մի քանի տասնյակ համախոհներով անհասկանալի ու տարօրինակ մի «սգո ցույց» կազմակերպեց սեւ դրոշներով: Դաշնակցությունը հակասական բացատրություններ տվեց: Նրա գաղափարախոսներից մեկն իրենց թեկնածուի պարտությունը բացատրեց ժողովրդի «հոգնածությամբ». «մեր հոգնած ժողովուրդը կանգնած էր ճակատագրական ընտրության առջեւ. տառապանքների գնով ծառայել ազգին, թե՞ հանգստության՝ ազգային

[831] *Ըստ «Հայաստանի Հանրապետության» (22.10.1991) հրապարակման:*

[832] *Թեւ Զորի Բալայանն ընտրություններից առաջ հանել էր իր թեկնածությունը, սակայն նրա անունը մնացել էր քվեաթերթիկում:*

արժեքներից հրաժարվելու գնով: Մեր հոգնած ժողովուրդը ընտրեց երկրորդը»[833]: Իսկ նույն կուսակցության բյուրոյի ղեկավար Հ. Մարուխյանը, ոչ ավել, ոչ պակաս, Լեւոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը վերագրեց «հայկական մաֆիային» եւ սպառնաց. «Մենք շուտով ի վիճակի կլինենք բացահայտելու, թե ինչ կա ընտրություններու այս տոկոսին մեջ. փաստաթղթեր երեւան պիտի գան»[834]: Մեկ ուրիշն էլ (Հրաչ Տասնապետյան) հայտարարեց, թե «ընտրությունն ի վերուստ կանխորոշված ու կազմակերպված էր», որ՝ «Կենտրոնը չէր հանդուրժի ՀՅԴ-ի հաղթանակը նախագահական ընտրություններում»[835]: Ի պատիվ իրեն, ՀՅԴ-ի թեկնածուն՝ Սոս Սարգսյանը, արժանապատվությամբ եւ ջերմորեն շնորհավորեց Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ նրա տպավորիչ հաղթանակի առթիվ[836]:

Իրականությունն այն էր, որ ընտրությունն անցել էր բացարձակ անբասիր: Չնայած արդեն իսկ անցած մեկ տարվա ընթացքում ի հայտ եկած օբյեկտիվ, բայց էական դժվարություններին ու դրա հետեւանքով մարդկանց կենսամակարդակի անկմանը, չնայած տարբեր դիրքերից ընդդիմության զանգվածային ու հախուռն քննադատությանը եւ հնչեցրած մեղադրանքներին, չնայած ընդդիմադիր թեկնածուների մեկամսյա անպատասխան քարոզարշավին, ժողովուրդն ինչպես Անկախության հանրաքվեի, այնպես էլ նախագահական ընտրության միջոցով իր անվերապահ վստահությունն էր հայտնում ՀՀՇ-ի եւ նրա ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական ուղեգծին: Որպես այդպիսին, նախագահական ընտրությունները երկրորդ մի հանրաքվեի քաղաքական կշիռ ունեին:

---

833 *«Դրոշակ», 06.11.1991:*

834 *Տե՛ս «Ազգ», 02.11.1991:*

835 *«Երկիր», 24.12.1991: Մինչեւ Կենտրոնը (Մոսկվան) կերազեր Դաշնակցության հաղթանակը, այն կուսակցության, որը կոմունիստներից ավելի համառ եւ արդյունավետ պայքարել եւ շարունակելու էր պայքարել, որ Հայաստանը չգնա անկախության ճանապարհով, մնա ԽՍՀՄ կամ Ռուսաստանի կազմում:*

836 *«Մեծարգո պարոն Լեւոն Տեր-Պետրոսյան, անկեղծորեն շնորհավորում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու առթիվ: Համոզված եմ, որ Ձեր ողջ գործունեությամբ կնպաստեք հայ ժողովրդի հանճարի ծաղկմանը եւ առաջին հերթին նրա ազգային համերաշխությանը: Ի սրտե ցանկանում եմ Ձեզ քաղաքական հաջողություններ եւ անձնական երջանկություն: Կարող եք վստահ լինել, որ միշտ Ձեզ հետ եմ Հայոց պետականության կերտման գործում: Հարգանքներով Սոս Սարգսյան, Երեւան, 21.10.1991թ. («Գիտնականը եւ Նախագահը...», էջ 395):*



ՀՀ Առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի երդման արարողությունը 1991թ. նոյեմբերի 11-ին

Հանրաքվեի եւ Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքները եզակի էին նաեւ մեկ այլ կտրվածքով: Ետխորհրդային տարածքում օրինաչափությունն այն էր, որ ետկոմունիստական ժողովրդավարական իշխանությունները մեկ-երկու տարվա ընթացքում սպառում էին իրենց վարկանիշը, ընդհուպ՝ կորցնում իշխանությունը: 1990թ. խորհրդարանական ընտրություններում ՀՀՇ-ն միայն հարաբերական մեծամասնություն ստացավ խորհրդարանում (այսինքն՝ ձայների 50%-ից պակաս): Մեկուկես տարվա ընթացքում ՀՀՇ-ի իշխանության ու նրա ղեկավարի վարկանիշը ոչ թե տուժել, այլ առնվազն կրկնապատկվել էր: Սա նոր իշխանության գործունեության բարձրագույն գնահատականն էր հասարակության կողմից, ինչպես նաեւ՝ Հայկական ժողովրդավարական շարժման դպրոցն անցած նույն այդ հասարակության քաղաքական գրագիտության եւ ընկալունակության բացառիկ մի դրսեւորում էր: Շարժման չորս տարվա քաղաքական «բաց համալսարանը» հայ հասարակության մեծագույն մասին ազատել էր կեղծ հայրենասիրական, կեղծ ազգայնական, այսպես կոչված՝ «հայդատական»/պահանջատիրական տարածված պատկերացումներից, օժտել իրատեսական, բանական մտածողությամբ:

Պետականության ստեղծման ու կայացման այս երկու կարեւորագույն ակտերով՝ Անկախության հանրաքվեի եւ նախագահական ընտրությունների արդյունքներով Հայաստանի ժողովրդավարական իշխանությունը ստացավ համաժողովրդական վստահության այն անհրաժեշտ չափաբաժինը, ինչը շրջափակման, էներգետիկ ճգնաժամի, պատերազմի, սոցիալ-տնտեսական իրավիճակի անխուսափելի վատթարացման հաջորդ տարիները պատվով հաղթահարելու եւ հաղթանակով դուրս գալու կարեւորագույն ռեսուրսն էր:

Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը ստանձնելու պաշտոնական արարողությունը Գերագույն խորհրդի հատուկ նիստում, նշանակված էր նոյեմբերի 11-ին: Հանրապետության առաջին Նախագահն իր պաշտոնը ստանձնեց՝ երդվելով Մատենադարանում պահվող 7-րդ դարի ձեռագիր Ավետարանի («Վեհամոր Ավետարան») վրա: Հատուկ նիստին ներկա էին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն[837], որի սրտառուչ խոսքը նաեւ իմաստուն մի քաղաքական կանխատեսում-արձանագրում էր[838]:

Ճիշտ չի լինի համարել, թե Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ համաժողովրդական վստահությունը միայն Շարժման տարիներից եկած իներցիայի արդյունքն էր: Ընդհակառակը՝ արդեն շուրջ 14 ամիս նա հանրապետության ղեկավարն էր, կատարված ամեն ինչի պատասխանատուն: Փաստորեն՝ դա հենց այն միջին ժամանակամիջոցն էր, որ այլ հանրապետություններում բավարար էր եղել նոր իշխանությունների ղեկավարներից հասարակական հիասթափության առաջացման եւ քաղաքական ասպարեզից նրանց դուրս մղման համար: Այդպես եղավ Լիտվայում, Էստոնիայում, Վրաստանում, Ադրբեջանում: Այս ֆոնի վրա Հայաստանը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը, կարծես թե, միակ բացառությունն են: Սա նշանակում էր, որ նրա աշխատանքը բարձր էր գնահատում նաեւ հայաստանյան հասարակությունը: Այդ վստահությունը Լեւոն Տեր-Պետրոսյանը վաստակել էր արդեն որպես պետական գործիչ եւ երկրի ղեկավարի իր կատարած իրական գործնական աշխատանքով, ժողովրդի հետ բացառիկ անկեղծ լինելու իր անդավաճան սկզբունքով: Անշուշտ, կարեւոր դեր էր խաղացել նաեւ Շարժման քաղաքական դպրոցն անցած հասարակության քաղաքական ընկալման մակարդակը:

Որպես երկրի ղեկավար՝ նրա ելույթներում դժվար է գտնել խոստումներ, առավել եւս՝ ոչ իրատեսական խոստումներ, ինչը քաղաքական գործչի կարիերայի համար անգամ ընդունված եւ հանձնարարելի կարեւոր պայման է համարվում: Ընդհակառակը՝ հաճախադեպ են սպասվող խնդիրների ու դժվարությունների թվարկումները ու դրանց հաղթահարման ուղիների մատնանշումները: Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնի ստանձնման հետ կապված երդման արարողության կապակցությամբ իր ելույթում նա քաղաքական ու պետական գործչի իր հավատամքը ձեւակերպեց հետեւյալ կերպ. «Ես միանգամայն հեռու եմ մեր ժողովրդին հրաշքներ խոստանալու անհեթեթ մտքից: Ես երբեւէ սովորություն չեմ ունեցել դատարկ խոստումներ տալ, եւ այսուհետեւ էլ պա-

---

837 *Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն անկախ պետականության կայացման եւ Արցախի պաշտպանության գործում ունեցած հսկայական վաստակի համար 1994 թվականին առաջինն արժանացավ Հայաստանի Հանրապետության Ազգային հերոսի կոչման:*

838 *Դիմելով նորընտիր Նախագահին՝ նա, մասնավորապես, ասաց. «Այո՛, մենք Ձեզ զոհաբերում ենք Հայրենիքի պատարագի սեղանի առաջ: Մենք տարակույս չունենք, որ Դուք ավելի ստուգությամբ քան մենք, Ձեր հոգու աչքերով տեսնում եւ ապրում եք Գողգոթայի Ձեր ճանապարհը, պատրաստ դիմագրավելու ամեն վտանգ, ամեն տառապանք, սրբազան մի պարտականություն կատարելու ազնիվ տեսիլքով» («Էջմիածին», ԺԱ–ԺԲ, 11.11.1991թ.):*

տասխանատվության խորին զգացումով կտրականապես հրաժարվում եմ խոստումներից, հրաշքների գուշակումից: Ես մշտապես ձգտել եմ իմ եւ ժողովրդի առջեւ դնել թեկուզ փոքր, բայց միանգամայն իրականանալի խնդիրներ»[839]: Այս խոստումը հետագայում էլ նույնպիսի ուժ պետք է ունենար Հայաստանի Հանրապետության հիմնադիր Նախագահի համար, որքան սահմանված պաշտոնական երդումը:

ե) ՀՀՇ-ի իշխանության ընդդիմության յուրահատկությունները

Դասական առումով՝ քաղաքական ուժերը ձեւավորվում եւ իրենց գաղափարներն ու ծրագրերը մշակում են ժողովրդի եւ ազգային շահի իրենց ըմբռնումից ելնելով ու քաղաքական մեթոդներով պայքարում դրանց իրականացման համար: Սակայն իրական կյանքում, որպես կուսակցություններ՝ ձեւավորվում են խմբեր՝ տուրք տալով առաջին հերթին սեփական հավակնություններին: Այդպիսիք, որպես գործելակերպ որդեգրում են մարդկանց ազգային եւ հայրենասիրական զգացումների վրա խաղալու, տարածված պատկերացումների, մտածողության յուրահատկությունների մանիպուլյացիայի ճանապարհը: Նման գայթակղության կարող են տրվել ցանկացած երկրում, անգամ այս ճանապարհով իշխանության հասնել: Ետխորհրդային հանրապետությունների՝ քաղաքական կյանքի ու պայքարի փորձ չունեցող հասարակական մթնոլորտում դրա հնարավորությունները շատ ավելի մեծ էին: Մեր երկու հարեւան երկրներում նման ճանապարհով իշխանության եկան հենց նման ուժեր եւ գործիչներ՝ իրենց ժողովուրդների համար, եթե չասենք աղետալի, ապա՝ տխուր հետեւանքներով:

Հայաստանի առաջին ժողովրդավար իշխանությունը ուներ ոչ թե մեկ ընդդիմություն, այլ ընդդիմություններ, որոնք ձեւավորվել ու գործում էին ամենատարբեր հիմքերով: Դրանցից չորսը մի ընդհանրություն ունեին, այն է՝ **իշխանության առանձնաշնորհի իրավունքի համոզմունքը՝** յուրաքանչյուրն իր դեմքով:

ՀՀՇ իշխանության առաջին ընդդիմությունը, բնականաբար, պիտի դառնար իր 70-ամյա իշխանությունը կորցրած **Կոմունիստական կուսակցությունը**: Ոչ միայն այս կուսակցությունը, այլ նաեւ հայաստանյան հասարակությունն ամբողջությամբ, մինչեւ Համաժողովրդական շարժումը

[839] *Տեր-Պետրոսյան, Ընտրանի, էջ 259:*

(մի մասը նաեւ Շարժման տարիներին) կոմունիստների՝ **իշխանություն ունենալու առանձնաշնորհը** համարում էին բնական: Դա ամրագրված էր սահմանադրությամբ, դա էր քաղաքական իրականությունը, այդ պատկերացումը, որպես իրերի բնական դրություն, ամենօրյա քարոզչությամբ հասարակության մեջ ներարկվել էր տասնամյակներ շարունակ: Շատ կարճ ժամանակում այս ուժը հանկարծ զրկվեց իշխանության հավերժական թվացող այդ առանձնաշնորհից, ինչի հետ, մասնավորապես՝ նրա բարձր եւ միջին պաշտոնեությունը, չպիտի հեշտությամբ հաշտվեր:

Իր հայտնի, արդեն վարկաբեկված գաղափարախոսության հիմքերի վրա գործելու ու պայքարելու անարդյունավետությունից ելնելով՝ Կոմկուսը հենց Շարժման տարիներին սահուն անցում կատարեց դեպի «ազգային» ու «ազգայնական» դաշտ՝ փորձելով այդ կերպ պահել իր իշխանությունն ու ազդեցությունը: Միաժամանակ, նա պահպանեց ԽՍՀՄ կազմում մնալու հիմնական թեզը, որ ոչ միայն չէր հակասում «հայդատականության»/պահանջատիրականության տեսքով հայկական քաղաքական մտքի ավանդական պատկերացումներին, այլ նաեւ վերջինիս առանցքային գաղափարն էր: Վերեւում ներկայացված «Տեղեկանքից» հստակ երեւում է, որ նա ի սկզբանե, առանց միջոցների մեջ խտրություն դնելու, պայքարել է նորահաստատ ժողովրդավարական իշխանության դեմ՝ նրա ձախողումն ունենալով որպես միակ նպատակ: Ժողովրդավար նոր իշխանության վարած հանդուրժողականության, կարող կադրերի ծառայություններից օգտվելու պատրաստակամության մթնոլորտում, եթե ոչ այս կուսակցության հետ ամբողջությամբ, ապա անհատական մակարդակով նրա շատ ներկայացուցիչների հետ ստացվեց համագործակցությունը, եւ Կոմկուսը 2-3 տարվա ընթացքում դադարեց հիմնական ընդդիմադիր ուժ լինելուց:

Ոչ թե միայն Հայաստանում, այլ հայ ժողովրդի վրա ընդհանրապես՝ **իշխանության առանձնաշնորհի համոզմունք ուներ Հայ հեղափոխական դաշնակցությունը**: Ընդ որում, եթե Կոմկուսի դեպքում իշխանության առանձնաշնորհ ունենալու պատկերացման հիմքում իր 70-ամյա իշխանության փաստն էր, իշխելու իրավունքն էլ՝ ամրագրված խորհրդային սահմանադրությամբ, ապա այս կուսակցության՝ «Հայաստանի մայր կազմակերպություն»[840] լինելու, ողջ ազգի վրա իշխանության առանձնաշնորհ ունենալու իրավունքն ինքն էր իրեն շնորհել: Այդ «իրավունքի համար որ-

[840] *Տե՛ս «Դրոշակ» 02.01.1991, էջ 12 (այսօրինակ ինքնագնահատականները հարկաւոր են):*

պես հիմք էր ներկայացվում սեփական պատմության՝ ինքն իր համար կատարած հերոսականացումը: Իրեն հայ ժողովրդի «տերը» համարելով, ՀՅԴ-ն տեւական ու հետեւողական քարոզչությամբ այդ պատկերացումը կազմակերպության ներսում բարձրացրել էր ընդհուպ կրոնական հավատալիքի աստիճանի[841]:

Այնպես որ՝ Դաշնակցությունը մահացու վիրավորված զգաց իրեն, որ հայ ժողովրդի ամենամեծ մասի՝ Հայաստանի ճակատագրի հետ կապված քաղաքական ինչ-որ նախաձեռնություն է եղել (Ղարաբաղյան շարժում, անկախության խնդիր եւ այլն), առանց իր՝ այդ ժողովրդի «տիրոջ» հետ համաձայնեցնելու: Դա նրա մեջ բուռն ատելություն էր առաջացրել ՀՀՇ-ի նկատմամբ:

Դաշնակցության համոզմամբ, եթե կոմունիստական պարտադրված իշխանությունը Հայաստանում այլեւս չպիտի լինի, ապա այն պետք է անց-

[841] *Այս կուսակցության նախկին ոչ շարքային անդամ, ՀՅԴ պատմությանը, ներքին խոհանոցին ու մտածելակերպին քաջատեղյակ, պատմաբան, պրոֆեսոր Ժ. Լիպարիտյանը դա ներկայացնում է հետեւյալ կերպ. «ՀՅԴ-ն գտնում է, որ տարիքի, հերոսների եւ գաղափարների վսեմության համագրումը բացառապես եւ միայն իրեն է շնորհում հայոց շահերը սահմանելու եւ ռազմավարությունը որոշելու իրավունքը, ինչպես նաեւ ամենուր, բոլոր ժամանակներում, բոլոր հանգամանքներում, քվեարկությամբ կամ առանց քվեարկության հայ ժողովուրդը ներկայացնելու իրավունքը, քանի որ կուսակցությունն իրեն համարում է ազգի միկրոկոսմոսը» (**Լիպարիտյան Ժ.** Անկախության մարտահրավերը, էջ 107): Ազգի հետ իրեն նույնացնելու, նրա վրա իշխելու իր «բնական իրավունքի» անհեթեթության մասին՝ մի այլ հետազոտողի կարծիք. «Սկզբնավորման պահից դաշնակները մեկանգամընդմիշտ անվերապահորեն նույնացրել են իրենց ժողովրդի հետ, իրենց իրավունք վերապահել խոսել (եւ գատել այլ կերպ մտածողներին) նրա անունից, եւ ամբողջ հարյուր տարի կասկածի տակ չեն դրել իրենց այդ իրավունքը» (**Кубатьян Г.**, Благие намерения, очерки терроризма, в основном армянского, Ереван, 2003, с. 42): Մի այլ քաղվածք ՀՅԴ գործիչ Կայծ Մինասյանից. «Իրականում, դաշնակ ռեւիզիոնիզմը, ղեկավարվելով այն սկզբունքով, որ ինքն ավելի վաղ է գոյություն ունեցել, քան պետությունը, մերժում է վերջինիս լեգիտիմությունը, քանի դեռ Դաշնակցությունը պետության գլխին չէ... Կա՛մ դաշնակ ռեւիզիոնիստները վերահսկում են կազմակերպությունները, հասարակական-քաղաքական գործընթացները եւ հայկական հարցի օրակարգը, կա՛մ նրանք ոչնչացնում են այն ամենը, ինչը փորձում է իրենց տեղը զբաղեցնել... դաշնակ ռեւիզիոնիստները եւս խաղում են հուսկանության վրա՝ թիրախելով միլիտանտ նարցիսիզմն ու մնացած հայ բնակչության նկատմամբ «հոմո-դաշնակուսի» գերակայությունը (1in.am 16.02.2020, https://www.1in.am/2703185.html):*

ներ իր «բնական տիրոջը»՝ ՀՅԴ-ին: Հայաստանի ժողովուրդը խաթարել էր իրերի այս «բնական ու տրամաբանական» վիճակը: Բայց ոչ միայն, Համաժողովրդական պայքարի քաղաքական կառույց ՀՀՇ-ն հոչակել էր սկզբունքներ եւ անում էր քայլեր, որոնք խարխլում, ոչնչացնում էին Դաշնակցության գաղափարախոսության՝ «Հայ դատ»/պահանջատիրություն, «միացյալ ազատ, անկախ», «հավերժական ոսոխ», արտաքին ուժի «վճռական դերակատարության» հիմնապայները: Իսկ դրանով պիտի վտանգվեր մարդկանց ազգային եւ հայրենասիրական զգացումների մանիպուլյացիայի միջոցով իր ազդեցությունը, «ազգի վրա» յուրատեսակ իշխանությունը: ՀՅԴ-ն համարում էր, որ միայն ինքը իրավունք ունի եւ կարող է հասնել «ազգային խնդիրների» լուծմանը, իսկ դրա ճանապարհը տեսնում էր ԽՍՀՄ պահպանման մեջ ու նրա ուժերով: Եթե ՀԿԿ-ն իշխանությունը կորցնելու փաստով էր զրկվում նյութական բարեկեցությունից եւ հասարակական դիրքից, ապա ՀՅԴ-ն իր գաղափարախոսության հիմնապայուների այս փլուզմամբ էր զրկվում տասնամյակների ընթացքում, մասնավորապես, Սփյուռքում իր ձեռք բերած հասարակական դիրքից եւ այդ հիմքով ստացվող բարեկեցությունից[842]: Այս հանգամանքն արդեն մահացու վիրավորանքը վերածում էր մահացու թշնամանքի, ինչը նաեւ անձնավորվում էր[843]:

[842] *Ժ. Լիպարիտյանը այդ վիճակը գնահատում է այսպես. «ԽՍՀՄ լուծարումից հետո ՀՅԴ-ին հարկավոր էր իր ռազմավարությունն ու քարոզչությունը փոխել եւ համապատասխանեցնել նոր իրադրությանը: Դրա փոխարեն, «Ղարաբաղ» կոմիտեի կազմավորման օրից սկսած, կուսակցությունը խորը, լավ մշակված, տեւական ու բծախնդրորեն կիրառվող հակակրանք մշակեց ՀՅԴ ռազմավարության մեջ խզում առաջացրած շարժման՝ ՀՀՇ-ի եւ նրա ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ» (**Լիպարիտյան Ժ.** Անկախության մարտահրավերը, էջ 105):*

[843] *Դաշնակցության «Դրոշակում» ավանդական «մշտական ոսոխ» թեմային, շատ ավելի մեծ ծավալով ու շատ ավելի խիստ քննադատությամբ, որպես թիրախ, փոխարինել էին ՀՀՇ-ն, Հայաստանի նոր իշխանությունն ու, առաջին հերթին, նրա ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանը: Դարձյալ մեջբերենք իրերի վիճակին քաջածանոթ Ժ. Լիպարիտյանին. «Դաշնակցության քարոզչությունը նոր անկում նշանավորեց ատելության քաղաքականության մեջ: Հետեւողականորեն ու սիստեմատիկ կերպով անարգվում էր մի մարդ, որն ընտրվել էր Հայաստանի ժողովրդի ձայների 83%-ով: Դաշնակցական թերթերը նորանկախ հայրենիքի առաջին ազգընտիր նախագահին կոչում էին այնպիսի անուններով, որոնց չէր «արժանացել» ուրիշ ոչ ոք՝ բոլշեւիկներից սկսած մինչեւ երիտթուրքերը... Այդ ատելությունն ինչ-որ չափով ուղղված էր Հայաստանի, եւ լայն առումով, Հայաստանի ժողովրդի դեմ,*

Ինչպես «Ղարաբաղ» կոմիտեն, այնպես էլ Շարժման իշխանությունը, հակառակ Դաշնակցության ի սկզբանե բռնած, փաստորեն, թշնամական դիրքի, ամեն ինչ արել էին այս կուսակցության հետ համագործակցելու համար: Այսպես, չնայած տված բազմաթիվ առիթներին, հանրահավաքներում Դաշնակցության դեմ համարժեք որեւէ ելույթ չէր հնչել: ՀՅԴ-ն, ի թիվս այլ կազմակերպությունների, հրավիրվել էր մասնակցելու ՀՀՇ առաջին համագումարին: Հրավերը, բնականաբար, չէր ընդունվել: Դաշնակցական երկու հոգի, որպես մասնավոր անձ, մասնակցել էին համագումարին, ինչի մասին տեղեկատվությունը համագումարի պատվիրակները ընդունել էին հոտնկայս, ջերմ ծափահարություններով: Իշխանության գալուց հետո ՀՀՇ-ն ավելի առարկայական դրական ազդակներ ուղարկեց ՀՅԴ-ին: Հայաստանի անկախության հռչակագիրը հանձնարարվեց հրապարակել պատգամավոր Արամ Մանուկյանին՝ որպես յուրատեսակ խորհրդանշական քայլ, հարգանքի տուրք՝ Առաջին հանրապետության նույնանուն հայտնի գործչի նկատմամբ: Վերաբերմունքի մի այլ յուրատեսակ տուրք էր Առաջին հանրապետության դրոշի, զինանշանի եւ հիմնի ընդունումը՝ որպես նոր պետականության խորհրդանիշներ: 1991թ. նախագահական ընտրություններից հետո կառավարության մեջ որպես նախարարներ աշխատելու համար հրավիրվեցին ՀՅԴ անդամ երկու գործիչներ (այդ հրավերները մերժվեցին)[844]:

Այսինքն՝ ՀՀՇ-ի իշխանությունը, չնայած թափած անկեղծ ջանքերին, արած գործնական առաջարկություններին, այս կուսակցության հետ համագործակցության որեւէ եզր չկարողացավ գտնել ոչ միայն առաջին տարիներին, այլեւ հետագայում երբեւէ[845]:

Սփյուռքում գործող Հնչակյան, Ռամկավար կուսակցությունների անունով խորհրդարանում ձեւավորված ոչ մեծ պատգամավորական խմբերը իշխանության առանձնաշնորհի եւ բացառիկի հավակնություններ չունեին:

Իշխանություն ունենալու առանձնաշնորհի հիմքով ՀՀՇ-ի մյուս ընդդիմությունն առաջացավ իր ներսից եւ հիմքում ուներ «Ղարաբաղ» կո-

*որը հանդգնել էր ինքնագլուխ կերպով փոխել պատմության ընթացքը՝ առանց Սփյուռքին հարցնելու» (**Լիպարիտյան Ժ.** նշված աշխատությունը, էջ 175-176):*

*844 Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Լնտրանի, էջ 372-373:*

*845 Թե ինչո՞ւ՝ այդ հիմքերի մասին տե՛ս նաեւ **Լիպարիտյան Ժ.** Անկախության մարտահրավերը, էջ 104-107:*

միտեի առանցքային անդամներից մեկի՝ Վազգեն Մանուկյանի անձնական հավակնությունները: Նույն կոմիտեի անդամների հավաստմամբ, ընդհուպ մինչեւ 1990թ. օգոստոսի սկզբին Հանրապետության առաջին դեմքի՝ Գերագույն խորհրդի նախագահի թեկնածության հարցի քննարկումը, այս կառույցի ներսում երբեւէ նման հարց չէր քննարկվել, եւ որեւէ մեկը նման հավակնություն չէր ցուցաբերել: Հարցի քննարկումից հետո Կոմիտեն փակ քվեարկությամբ Գերագույն խորհրդի նախագահի թեկնածու առաջադրեց Լեւոն Տեր-Պետրոսյանին: Վ. Մանուկյանի անմիջապես ցուցաբերած ռեակցիայից եւ նրա հետագա քաղաքական վարքագծից ակնհայտ դարձավ, որ նա ի սկզբանե անվերապահ համոզմունք է ունեցել, որ ինքը պետք է լիներ **առանձնաշնորհյալ** այդ թեկնածուն: Ճիշտ է, նույն Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջարկով նա համաձայնեց ստանձնել կառավարության նախագահի, ավելի ուշ՝ պաշտպանության նախարարի պաշտոնները, սակայն նրա գործունեությունը ցույց տվեց, որ նա ոչ մի կերպ չի հաշտվել հանրապետության առաջին դեմք չլինելու փաստի հետ:

1991թ. ամռանը, լինելով կառավարության նախագահի պաշտոնում, Վ. Մանուկյանը ՀՀՇ-ի մի փոքր խումբ առանձնացնելով ստեղծեց նոր՝ «Ազգային ժողովրդավարների միություն» (ԱԺՄ) անվամբ կուսակցություն: Վ. Մանուկյանը մարդկանց ազգային եւ հայրենասիրական զգացումների վրա մանիպուլյացիա անելու ճանապարհին Դաշնակցությունից մի քայլ առաջ գնաց՝ հռչակելով հայ ժողովրդի **բացառիկ առաքելության**, նրանից **«համաշխարհային ազգ»** կերտելու եւ աշխարհաքաղաքական գործընթացների վրա ազդելու մի ծրագիր (եւ, բնականաբար, իրեն տեսնելով որպես այդ ծրագրի իրականացնող): Կարճատեւ մի շրջան գործադիր իշխանության ղեկավար, ապա՝ ՊՆ նախարար աշխատելուց հետո, Վազգեն Մանուկյանի հետ եւս համագործակցության հնարավորությունները սպառվեցին: Ինչպես Դաշնակցությունը, նա եւս ՀՀՇ-ական իշխանության եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ մնաց որպես անհաշտ հակառակորդ՝ համարելով, որ նրանց պատճառով է ինքը զրկվել իշխանության գալու, առաջին դեմք ու ազգի առաջնորդ լինելու առանձնաշնորհից կամ ինքն իրեն վերագրած «օրինական» իրավունքից[846]:

846 Անգամ 2007թ. աշնանը, երբ երկար ընդմիջումից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանը վերադարձավ ակտիվ քաղաքականություն, ի թիվս այլ ուժերի, համագործակցության առաջարկ արեց նաեւ Վ. Մանուկյանին՝ Հայաստանում հաստատված ավազակապետության դեմ պայքարելու, եւ մերժում ստացավ:

Ըստ էության՝ նույնպիսի՝ իշխանության, ավելի ճիշտ՝ Հանրապետության **առաջին դեմք լինելու առանձնաշնորհի անվերապահ իրավունքի** հավակնություն ուներ նաեւ խորհրդային տարիների այլախոհ Պարույր Հայրիկյանը: Նա համարում էր, որ այդ իրավունքը ձեռք է բերել անկախական պայքարի հիմնադրի եւ երկար տարիներ խորհրդային բանտերում ազատազրկված լինելու հանգամանքով: Նա լուրջ-լուրջ համարում էր, որ «հեղինակային իրավունք» ունի անկախության, բանակի, սահմանադրության գաղափարների նկատմամբ, եւ, որպես այդպիսին, միայն իրեն է վերապահված իրականացնել դրանք, մինչդեռ նոր իշխանությունը իրենից այդ գաղափարները գողացել ու իրեն զրկել է դրանք իրականացնելու մենաշնորհ-իրավունքից:

Պ. Հայրիկյանի քաղաքական վարքագծի հիմքում հնարավորինս շատ աղմկարարության գործելակերպն էր, իսկ «մարգարեի» նրա հավակնությունները հաճախ անլրջանում, հասնում էին զավեշտի աստիճանի: Սակայն այդ զավեշտը հասարակության մի մասը չէր զգում, եւ նրա գործողություններն ու նախաձեռնությունները մի քանի անգամ հատեցին պետության համար վտանգավորի սահմանը: Հայաստանյան հասարակության մեջ գտնվեց մի շերտ, որին հնարավոր եղավ այդ կերպ մանիպուլյացիայի ենթարկել, եւ այդ շերտը (ըստ 1991թ. հոկտեմբերին կայացած նախագահական ընտրությունների արդյունքների) երկու անգամ ավելին էր, քան Դաշնակցության հայդատականության/պահանջատիրականության քարոզչությանը հետեւողները: Ի տարբերություն Պ. Հայրիկյանի, խորհրդային այլախոհության հիմքով կազմավորված մյուս երկու ուժեր՝ Աշոտ Նավասարդյանի ղեկավարած ՀՀԿ-ն եւ Ազատ Արշակյանի գլխավորած ՀՔԴՄ-ն աստիճանաբար, իշխանության ձեռքբերումները եւ հաղթանակները գնահատելով, 1995թ. խորհրդարանական ընտրություններում նույն նախընտրական դաշինքի անդամ էին:

Իշխանության առանձնաշնորհի իրավունքի հավակնող այս չորս ուժերից առաջին երկուսը՝ Կոմկուսը եւ Դաշնակցությունը, ՀՀՇ-ին եւ նրա իշխանությանը անհաշտ ընդդիմություն էին որպես կազմակերպված ուժեր՝ առանց արտահայտված առաջնորդի, վերջին երկուսը՝ ԱԺՄ-ն եւ ԱԻՄ-ը անհատական հավակնությունների հարթության վրա էին՝ առանց լուրջ կազմակերպական ուժի:

Քաղաքական ուժը (լինի իշխող թե ընդդիմադիր) իշխանության համար իր պայքարում պետք է ունենա հստակ «կարմիր գծեր»՝ երբեւէ չհատի այն սահմանը, որից այն կողմ տուժում, վնասվում, վտանգվում է երկիրը, ժողովուրդը, պետությունը, մի խոսքով՝ ազգային շահը[847]: Սա է, որ կոչվում է նաեւ պետական մտածելակերպ: ՀՀՇ-ի իշխանության շրջանի ընդդիմությունը, ի դեմս Կոմկուսի, ՀՅԴ-ի, ԱԻՄ-ի եւ ԱԺՄ-ի, չի ունեցել «քաղաքական» բառի՝ այս իմաստով ենթադրվող որակը, եւ դա շատ բնական է. թշնամանքի հիմքով չի կարող լինել քաղաքական մտածելակերպ եւ գործելակերպ: Նրանց համար «կարմիր գծեր» ու «տաբուներ» չեն եղել իշխանության հասնելու իրենց գործելակերպում, խտրություն չի դրվել միջոցների ու մեթոդների միջեւ[848]: Հիմնական նպատակ ունենալով իշխանության ձախողումը՝ ո՛չ Հայաստանի ազգային շահերը, ո՛չ Լեռնային Ղարաբաղը վտանգելը նրանց համար զսպող հանգամանքի դեր չխաղացին երբեւէ[849]: Իշխանությունը լրացուցիչ ջանքերի գործադրմամբ՝ կարողացավ

---

847 *Նման բազմաթիվ օրինակներ տվել էր ՀՀՇ-ն դեռ կոմունիստական իշխանության տարիներին: 2007 թվականի աշնանից ծայր առավ Համաժողովրդական երկրորդ հուժկու շարժումը երկրում հաստատված ավազակապետական ռեժիմի դեմ, որը շարունակվեց 5-6 տարի: Շարժման առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը մի քանի անգամ քաղաքական պայքարի դադար հայտարարեց բոլոր այն դեպքերում, երբ ինչ-որ վտանգ էր սպառնում Լեռնային Ղարաբաղին կամ հակամարտության խաղաղ կարգավորմանը:*

848 *Կոմկուսի դեպքում այդ է վկայում վերեւում արդեն քննության առարկա դարձած «Տեղեկանքը»: Դաշնակցության դեպքում դա անընդհատ կրկնվող «Արցախյան պահանջատիրություն» հանգերգն էր, երբ ի սկզբանե հենց դա՝ հողային պահանջատիրությունն էր որպես Հայաստանին ուղղված մեղադրանք թափահարում Ադրբեջանը (քանի որ դա անընդունելի էր նաեւ միջազգային հանրության համար): ԱԻՄ-ն իր աղմկոտ գործողություններով վտանգում էր ներքաղաքական կայունությունը, ընդհուպ՝ խոչընդոտում բանակի կայացման տրամաբանական ընթացքը: Այս ուժերն էին, գումարած՝ ԱԺՄ-ն, որ պատերազմի ամենածանր տարիներին հաճախ ամենօրյա հանրահավաքներ էին կազմակերպում իշխանության դեմ՝ օգտվելով այն հանգամանքից, որ պատերազմը թեեւ իրական, բայց չհայտարարված էր, եւ երկրի ներսում չէր կարելի պատերազմական օրենքներ մտցնել:*

849 *Հայտնի են պատերազմի ամենածանր տարիներին նույն այս ուժերի կազմակերպած, հաճախ՝ ամենօրյա հանրահավաքները Նախագահի հրաժարականի պահանջով, իշխանության հացեին հերյուրանքների ու ստահոդ լուրերի տարածումը: Այն, որ նրանց վերաբերմունքն ու դիրքորոշումը ՀՀՇ-ի ու Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ ոչ թե ընդդիմադիր-քաղաքական էր, այլ հենց թշնամական, ցուցադրում է այն փաստը, որ այդ թշնամանքը մնաց ոչ միայն նրանց իշխանության շրջանում, այլեւ նույնությամբ պահպանվեց նաեւ դրան հաջորդած տասնամյակներում, երբ ՀՀՇ-ն եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը արդեն իշխանություն չէին: Մինչդեռ*

դիմակայել սրանց հարուցած փորձություններին, պահպանել երկրի ներքաղաքական կայունությունը, որ ծառացած ծանրագույն խնդիրների լուծման կարեւորագույն պայմանն էր:

զ) Պետական շինարարություն եւ միջազգային ճանաչմանն ուղղված նոր քայլեր

Արդեն 1989-1990թթ., դեռ կոմունիստական իշխանության շրջանում, Շարժման ճնշմամբ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը «օրենքների եւ որոշումների պատերազմ» էր վարում Կենտրոնի դեմ: ՀՀՇ-ի ու նրա գլխավորությամբ ժողովրդավարական ուժերի հաղթանակից եւ 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագրից հետո Հայաստանի Հանրապետությունը, փաստորեն, գործում էր որպես ինքնիշխան պետություն:

Օրենսդրության մեջ կատարվեցին լուրջ փոփոխություններ, սկիզբ դրվեցին տնտեսական ու հասարակական կյանքի ամենաարմատական վերափոխումների: Համաժողովրդական հանրաքվեի հիման վրա անկախության հռչակումից անմիջապես հետո Գերագույն խորհուրդն ընդունեց դրանից տրամաբանորեն բխող մի շարք փաստաթղթեր: Անկախության հռչակագիրն, այնուամենայնիվ, քաղաքական փաստաթուղթ էր, եւ շարունակում էր գործել ՀԽՍՀ Սահմանադրությունը: Պետական կյանքի վերակառուցման եւ անկախ պետականության կառույցների ստեղծման համար կարեւոր էր առավել ծանրակշիռ օրենսդրական հիմքերի ստեղծումը: Գործող Սահմանադրությունը չեղյալ չհայտարարվեց, սակայն սեպտեմբերի 25-ին ընդունվեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին սահմանադրական օրենքը»[850], ինչով սահմանափակվեցին գործող սահմանադրության իրավազորությունները: Մինչ այդ՝ արդեն իսկ խորհրդային Սահմանադրության շատ դրույթներ սահմանափակվել էին Անկախության հռչակագրի հիման վրա ընդունված այլ օրենսդրական ակտերով: Այժմ այս նոր օրենքը, որ ընդունվեց ձայների 2/3 մեծամասնությամբ եւ իրավական առումով, ըստ էության, Հիմնական օրենքի ուժ ուներ, սահմանում էր. «Մինչեւ Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրու-

առաջին շրջանում ընդդիմադիր մյուս քաղաքական ուժերը (ՌԱԿ, ՍԴՀԿ, Հանրապետական կուսակցություն, Քրիստոնեա-դեմոկրատական միություն եւ այն), արժեւորելով ՀՀՇ իշխանության ձեռքբերումները, հաջորդ՝ 1995թ. խորհրդարանական ընտրություններում նրա հետ մի նախընտրական դաշինքի մեջ էին:

[850] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ, 1991, 18, հոդվ. 402:*

թյան ընդունումը գործող Սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին եւ Հայաստանի անկախության մասին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին»[851]:

Սահմանադրական օրենքով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում էր որպես **անկախ ժողովրդավարական պետություն**, պետական իշխանության կրողը համարվում էր Հանրապետության ժողովուրդը: Այստեղ կրկնվեցին Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիմնական դրույթները, ինչով եւ վերջիններս սահմանադրական նորմի ուժ ստացան: Հռչակագրի համեմատությամբ, կապված կառավարման նախագահական համակարգի ներդրման հետ, նոր օրենքը արձանագրում էր նաեւ մի քանի փոփոխություններ: Սահմանվում էր, որ Հայաստանի Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության Նախագահն է, որը գլխավորում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը եւ ներկայացնում Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում: Գերագույն խորհուրդն այս համակարգում ստանում էր իր ավելի որոշակիացված օրենսդրական գործառույթը. «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն իրականացնում է օրենսդիր իշխանությունը եւ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին օրենքով սահմանված այլ իրավասություններ»[852]: Հանրապետության Նախագահի մասին օրենքն արդեն ընդունված էր, իսկ Գերագույն խորհրդի մասին օրենքն ընդունվեց քիչ անց՝ նոյեմբերի 19-ին[853]:

Պետական շինարարության այլ կարեւոր հարցերը լուծվեցին Հանրապետության Նախագահի հրամանագրերով: Իշխանությունը վերջնականապես իր վերահսկողության տակ վերցրեց ուժային կառույցները: Արդեն իսկ օգոստոսյան հեղաշրջման փորձից անմիջապես հետո ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը հանձնարարել էր Նախարարների խորհրդին առաջարկություններ նախապատրաստել՝ Հայաստանի ՆԳՆ-ը եւ ՊԱԿ-ը միութենական ենթակայությունից հանելու եւ դրանց հանրապետական են-

[851] *Սահմանադրական այս օրենքի, ինչպես նաեւ ՀՀ Նախագահի, ՀՀ Գերագույն խորհրդի մասին եւ մի քանի այլ օրենքների այն հիմնական դրույթները, որոնք կյանքում քննություն բռնեցին, հետագայում ընկան 1995թ. ընդունված Սահմանադրության հիմքում:*

[852] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 402:*

[853] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 462:*

թակայությունն ապահովելու վերաբերյալ[854]: Այժմ, ՀՀ Նախագահի հրամանագրով նախկին ՊԱԿ-ի շենքը, շինությունները, տեխնիկական ու կապի միջոցները, ռազմական գույքն ու հանդերձանքը, փաստաթղթերը, արխիվը եւ այլ նյութերը հայտարարվեցին ՀՀ սեփականություն եւ հանձնվեցին ՀՀ Ազգային անվտանգության կոմիտեի տնօրինությանը: Սահմանվեցին նրա գործունեության հիմնական ուղղությունները, իսկ ֆինանսավորումը վերցվեց հանրապետության կառավարության վրա[855]: ՊԱԿ-ի նախագահ նշանակվեց գեներալ-մայոր Հուսիկ Հարությունյանը:

Հերթական քայլերն արվեցին հանրապետության բանակի կազմավորման ուղղությամբ: «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ դեկտեմբերի 9-ին ընդունվեց զինապարտության մասին օրենքը[856]: Այն սահմանում էր ընդհանուր զինապարտություն ՀՀ զինված ուժերում ծառայելու համար եւ հայկական բանակի ստեղծման օրենսդրական հիմքն էր[857]: Ծառայության տեւողությունը, նախկինում գոյություն ունեցող 24 ամսվա փոխարեն՝ սահմանվում էր 18 ամիս, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների համար՝ 12 ամիս: Վազգեն Սարգսյանը նշանակվեց պաշտպանության նախարար, գեներալ Գուրգեն Դալիբալթայանը՝ գլխավոր սպայակույտի պետ, Լեւոն Ստեփանյանը՝ Հանրապետության զինվորական կոմիսար: Զինված ուժերի եւ երկրի սահմանների պաշտպանության եւ ազգային անվտանգության առաջնահերթ խնդիրների կարգավորմանն էին ուղղված ՀՀ նախագահի դեկ-

854 *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24.08.1991:*

855 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 24, հոդվ. 589:*

856 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 23, հոդվ. 484:*

857 *Հայկական բանակի ստեղծման գործում հսկայական նշանակություն ունեցավ նախագահներ Բ. Ելցինի եւ Լ. Տեր-Պետրոսյանի միջեւ կայացած պայմանավորվածության հիման վրա Ռուսաստանից, հիմնականում հայազգի, բարձրագույն սպայակազմի տեղափոխումը Հայաստան: Վերջնահաշվում Ռուսաստանի Զինված ուժերից Հայաստանի Պաշտպանության նախարարություն ծառայության փոխադրվեցին 1000-ից ավելի հայազգի եւ երկու օտարազգի բարձրաստիճան սպաներ, որոնց թվում՝ գեներալներ ու գնդապետներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Գուրգեն Դալիբալթայանը, Քրիստափոր Իվանյանը, Հրաչյա Անդրեասյանը, Յուրի Խաչատուրովը, Միքայել Հարությունյանը, Էնրիկո Ապրիամովը, Լեւոն Ստեփանյանը, Վլադիմիր Հայրապետյանը, Միքայել Գրիգորյանը, Վալերի Գրիգորյանը, Ոստանիկ Ադոյանը, Մուրազ Սարկիսյանը, Մկրտիչ Աբրահամյանը, Տիգրան Գասպարյանը, Արթուր Սիմոնյանը, Ղուկաս Ղուկասյանը, Անատոլի Ջինեւիչը, Իգոր Գորդիենկոն: Մանրամասները տե՛ս iLur.am, 13.06.2018թ:*

տեմբերի 19-ի հրամանագրերը: ՀՀ պետական սահմանի երկարությամբ ստեղծվեց երեք սահմանային տարածք՝ Հարավ-արեւմտյան, Հյուսիսային եւ Արեւելյան՝ արտաքին սահմանները պաշտպանելու համար[858]: Հայաստանի տարածքում տեղակայված ԽՍՀՄ զինված ուժերի 7-րդ բանակի զորամասերի եւ զորամիավորումների (որտեղ ծառայում էին նաեւ Հայաստանից զորակոչված զինվորները) հրամանատարություններին առընթեր նշանակվեցին ՀՀ գործադիր իշխանության լիազոր ներկայացուցիչներ[859]: Նախագահի հաջորդ հրամանագիրն ուղղված էր քաղաքացիների, կազմակերպությունների տրամադրության տակ հայտնված ապօրինի զենքի, զինամթերքի եւ մարտական տեխնիկայի հետ կապված խնդրի լուծմանը: Դա կարեւոր էր նաեւ ներքաղաքական կայունության ապահովման առումով, քանզի մեծանում էր զենքի գործադրմամբ կատարվող հանցագործությունների թիվը: Սահմանվում էր, որ 10-օրյա ժամկետում ապօրինի զենքը, զինամթերքը եւ տեխնիկան հանձնողները ազատվում են քրեական պատասխանատվությունից[860]: Նույն՝ 10-օրյա ժամկետը սահմանվեց նաեւ ծառայությունը ինքնակամ լքած զինծառայողների՝ զորամասեր վերադառնալու համար: Այդ ընթացքում իրենց զինվորական կոմիսարիատներ վերադարձողները նույնպես ազատվում էին օրենքով սահմանված պատասխանատվությունից[861]:

Նախագահի հրամանագրով նաեւ հանրապետության նոր բանկային համակարգի ստեղծման եւ գործունեության հիմքը դրվեց: Մինչեւ հանրապետության Ազգային բանկի մասին օրենքի ընդունումը ԽՍՀՄ պետական բանկի Հայկական հանրապետական բանկը վերակազմավորվեց Հայաստանի հանրապետության բանկի ու նրա վրա դրվեցին հանրապետության տարածքում վարկային ու դրամական պետական քաղաքականության իրականացման, բանկային գործունեության, ինչպես նաեւ օտարերկրյա արժութային գործառնությունների կարգավորման եւ արտոնագրման իրավասությունները[862]:

Հանրապետության Նախագահի ընտրությունից հետո պետք է կազմվեր նաեւ նոր կառավարություն: Մինչ այդ, սեպտեմբերի 26-ին Վազգեն

858 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 24, հոդվ. 583:*

859 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 24, հոդվ. 584:*

860 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 24, հոդվ. 585:*

861 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 24, հոդվ. 586:*

862 *Տեղեկագիր ՀՀ Գխ-ի, 1991, 24, հոդվ. 587:*

Մանուկյանի հրաժարականից հետո, Գերագույն խորհրդի որոշմամբ վարչապետի պաշտոնակատար էր նշանակվել ՀՀՇ անդամ Հրանտ Բագրատյանը: Հանրապետության նախագահի՝ նոյեմբերի 22-ի հրամանագրով վարչապետի պարտականությունները դրվեցին փոխնախագահ Գագիկ Հարությունյանի վրա, իսկ Հրանտ Բագրատյանը նշանակվեց փոխվարչապետ: Կառավարության կազմի հիմնական նշանակումները կատարվեցին դեկտեմբերի 5-ին[863]:

Հանրապետության նախագահը սկզբունքորեն ընդդիմանալով հանդերձ սփյուռքահայ որոշ գործիչների եւ ուժերի կողմից Հայաստանի քաղաքական կյանքին անհարկի միջամտելու եւ թելադրելու փորձերին, մյուս կողմից՝ պատրաստակամ էր լայնորեն օգտագործել սփյուռքահայության մասնագիտական ներուժը: Ընտրվելուց անմիջապես հետո նա եւս մեկ անգամ ներկայացրեց այս հարցում իր սկզբունքը. «...մի քանի սփյուռքահայեր նախարարներ կլինեն: Բացի այդ, բոլոր նախարարություններում, ընդհուպ մինչեւ փոխնախարարի պաշտոն, կընդգրկվեն սփյուռքահայ մասնագետներ: Սփյուռքի եւ Հայաստանի համագործակցության լավագույն ձեւը ես սա եմ համարում. Սփյուռքի կենդանի ներկայությունը Հայաստանում եւ ոչ թե հեռվից՝ հեռու հանձնարարականների ու ծրագրերի

[863] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 23, հոդվ. 507-528. Հրանտ Բագրատյան՝ փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար, Գրիգոր Արեշյան՝ պետական նախարար, Ռուբեն Զիքիքարյան՝ պետական նախարար, Գեւորգ Վարդանյան՝ պետական նախարար, Գագիկ Շահբազյան՝ պետական նախարար-գյուղատնտեսության նախարար, Աշոտ Եսայան՝ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարար, Արա Բաբլոյան՝ առողջապահության նախարար, Վահե Ստեփանյան՝ արդարադատության նախարար, Աշոտ Սաֆարյան՝ արդյունաբերության նախարար, Բաֆֆի Հովհաննիսյան՝ արտաքին գործերի նախարար, Վարդգես Գնունի՝ բարձրագույն կրթության եւ գիտության նախարար, Կարինե Դանիելյան՝ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նախարար, Գրիգոր Պողպատյան՝ կապի նախարար, Հակոբ Մովսես՝ մշակույթի նախարար, Վալերի Պողոսյան՝ ներքին գործերի նախարար, Գագիկ Մարտիրոսյան՝ շինարարության նախարար, Վազգեն Սարգսյան՝ պաշտպանության նախարար, Հենրիկ Քոչինյան՝ տրանսպորտի եւ հաղորդակցության նախարար, Սամվել Գեւորգյան՝ հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների պետական վարչության պետ, Ռոմեո Ջուլհակյան՝ ճարտարապետության եւ քաղաքաշինության պետական վարչության պետ, Լեւոն Դավթյան՝ պետական ռեգիստրի եւ վերլուծության պետական վարչության պետ, Վլադիմիր Մովսիսյան՝ փախստականների հարցերի պետական վարչության պետ:*

առաքումը»[864]: Ինչպես կառավարության մեջ, այնպես էլ պետական այլ կարեւորագույն պաշտոններում աստիճանաբար ընդգրկվեցին տասնյակ սփյուռքահայ մասնագետներ[865]:

Կազմավորվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը: Նախագահի հրամանագրերով Աշոտ Մանուչարյանը նշանակվեց Ազգային անվտանգության գծով Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական, իսկ Շահեն Կարամանուկյանը՝ Նախագահի աշխատակազմի ղեկավար: Նախագահի խորհրդականներ նշանակվեցին Կտրիճ Սարդարյանը, Վահան Փափազյանը եւ Ժիրայր Լիպարիտյանը: Ստեղծվեց Հանրապետության Նախագահին կից Ազգային անվտանգության խորհուրդ:

Խորհրդարանն, իր հերթին, դեկտեմբերի 24-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց Բաբկեն Արարքցյանին:

* * *

Հանրաքվեի անմիջապես հաջորդ օրերին ընդունվեցին Հայաստանի միջազգային ճանաչմանն ուղղված կամ նման հիմքեր նախապատրաստող

[864] *«Հայք», 23.10.1991:*

[865] *Այդ նշանակումների ոչ ամբողջական ցանկը. Բաֆֆի Հովհաննիսյան, ՀՀ ԱԳ նախարար, Սեպուհ Թաշճյան, ՀՀ պետնախարար, Էներգետիկայի նախարար, Միրոն Շիշմանյան, Էներգետիկայի նախարար, Ժիրայր Լիպարիտյան, ՀՀ ԱԳ նախարարի առաջին տեղակալ, ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, Նիկոլ Շահգալդյան, ՀՀ Նախագահի խորհրդական, Վարդան Օսկանյան, ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ (հետագայում ԱԳ նախարար), Իշխան Մարտիրոսյան, Գյուղատնտեսության փոխնախարար, Ալեքսանդր Վարդանով, «Արդշինբանկ»-ի կառավարիչ, Արմեն Աբաղյան, Հայկական ատոմակայանի վերագործարկման մշտական խորհրդատու, Ժակ Փանոսյան, Հայկական ատոմակայանի վերագործարկման մշտական խորհրդատու, Ասատուր Հաճյան, Հայկական ատոմակայանի վերագործարկման մշտական խորհրդատու, Քրիստիան Տեր-Ստեփանյան, ՀՀ ԱԳ աշխատակից, դարարաղյան բանակցություններում Հայաստանի ներկայացուցիչ (հետագայում Եւրոպայի խորհրդում ՀՀ մշտական ներկայացուցիչ), Շահեն Ավագյան, ԱԳՆ իրավաբանական բաժնի վարիչ (հետագայում գլխավոր քարտուղար, աշխատակազմի ղեկավար), Մաթեւոս Տեր-Մանվելյան, ՀՀ ԱԳՆ բաժնի վարիչ, Ռուբեն Մոզյան, Արգենտինայում ՀՀ դեսպանության քարտուղար, Արման Սարյան, ՀՀ փոխվարչապետ Վիգեն Զիթեչյանի խորհրդական, Հովսեփ Հովսեփյան, ՀՀ ՊՆ Հատուկ ստորաբաժանման հրամանատար, Մոնթե Մելքոնյան, ԼՂՀ Մարտունու պաշտպանական շրջանի շտաբի պետ, ՀՀ եւ ԱՀ ազգային հերոս:*

մի քանի կարեւոր որոշումներ: Հայաստանը միացավ Եւրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության ընդունած բոլոր փաստաթղթերին, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին[866], ինչպես նաեւ՝ Միջուկային զենքը չտարածելու մասին ՄԱԿ-ի պայմանագրին եւ ստանձնեց դրանցից բխող պարտավորությունները[867]: Այս հիմքի վրա էլ հատուկ մի հայտարարությամբ Հայաստանն արտահայտեց իր ցանկությունը՝ դառնալ Եւրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության մասնակից երկիր[868]: Արդեն որպես օրինական իրավական հիմքով անկախություն հռչակած երկիր՝ ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Միավորված ազգերի կազմակերպությանն ուղղված «Հայտարարություն»՝ արտահայտելով իր ժողովրդի ձգտումը դառնալու Միավորված ազգերի կազմակերպության անդամ[869]: Ընդունվեց նաեւ երկու դիմում. առաջինն՝ ուղղված աշխարհի երկրների խորհրդարաններին եւ կառավարություններին[870], եւ երկրորդը՝ ԽՍՀՄ Պետական խորհրդին[871]՝ ճանաչելու Հայաստանի Հանրապետության անկախությունը եւ նրա հետ իրավահավասար սկզբունքներով միջպետական հարաբերություններ հաստատելու համար:

Գերագույն խորհրդի որոշմամբ հետաձգվեց ԽՍՀՄ պետական իշխանության կառուցվածքներին Հայաստանի Հանրապետության մասնակցության հարցի քննարկումը[872]: Մեկ այլ որոշմամբ հանձնարարվեց Գերագույն խորհրդի եւ Նախարարների խորհրդի նախագահություններին՝ «աշխատանքներ սկսել ԽՍՀՄ կազմից Հայաստանի Հանրապետության դուրս գալու կապակցությամբ բանակցությունների նախապատրաստման ուղղությամբ»[873]:

1991 թ. վերջին ամիսներին Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրները երկուսն էին. առաջին՝ ակտիվորեն մասնակցել հոգեվարք ապրող ԽՍՀՄ-ում այն կառուցողական գործընթացներին,

[866] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 394:*
[867] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 393:*
[868] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 395:*
[869] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 405:*
[870] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 406:*
[871] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 407:*
[872] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1191, 18, հոդվ. 412:*
[873] *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 19, հոդվ. 419:*

որոնք պետք է ապահովեին կայսրության անվտանգ կազմաքանդումը, եւ երկրորդ՝ հասնել Հայաստանի անկախության միջազգային ճանաչմանը:

Ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, միջազգային հանրության համար այս խնդիրները սերտորեն փոխկապակցված էին, եւ ոչ միայն Հայաստանի առնչությամբ: Քանի դեռ ԽՍՀՄ-ը իրավական առումով գոյատեւում էր, խոշոր երկրները ձեռնպահ էին մնալու հանրապետություններից որեւէ մեկի անկախությունը ճանաչելուց: Բացառությունը մինչ այդ արվել էր միայն Մերձբալթյան հանրապետությունների համար, սակայն միայն այն բանից հետո, երբ նրանց անկախությունը ճանաչեց ԽՍՀՄ Պետական խորհուրդը: Արեւմտյան երկրների չափազանց զգուշավորության մասին վկայող բնութագրական օրինակ է անկախության ճանաչման խնդրով Հայաստանից ստացված պաշտոնական դիմումին Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի պատասխանը. «Ինչ վերաբերում է Հայաստանի անկախության ճանաչելու Ձեր խնդրանքին, Դուք գիտեք, թե որքան նուրբ հարց է դա: Մենք պետք է իմանանք Միության եւ նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների վերջնական սահմանադրական դիրքորոշումը»[874]:

Անկախության ճանաչման խնդիրը հիմնականն էր Հայաստանի Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի այցի ընթացքում Միացյալ Նահանգներ: Նոյեմբերի 14-ին Ջորջ Բուշի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ նա դրա անհրաժեշտությունը հիմնավորել էր մի քանի տեսանկյուններից: Առաջին՝ որ ԽՍՀՄ-ի քայքայմամբ ու հանրապետությունների անկախացմամբ խախտվել է աշխարհաքաղաքական վիճակը, եւ միջազգային հանրությունը կանգնած է այս նոր իրողությունները հաշվի առնելու եւ իրավականորեն ընդունելու անհրաժեշտության առջեւ: Երկրորդ՝ Հայաստանի դեպքում դա ավելի հրատապ է, քանզի Թուրքիայի կողմից Ադրբեջանի անկախությունը արդեն ճանաչած լինելու փաստով տարածաշրջանում նույնպես խախտվել է աշխարհաքաղաքական հավասարակշռությունը: ԱՄՆ-ը եւ Կանադան, լինելով ՆԱՏՕ-ի գծով Թուրքիայի դաշնակիցները, պարտավորություն ունեն վերականգնել այդ հավասարակշռությունը[875]: Զառարկելով հանդերձ այս փաստարկներին՝ Բուշն, ըստ էության, նույն

[874] *«Հայաստանի Հանրապետություն», 30.11.1991: Հրապարակված նաեւ «Գիտնականը եւ Նախագահը...» էջ 150: Սա Եւրոպական Միության ընդհանուր դիրքորոշումն էր, քանի որ նույն ձեւակերպումն էին պարունակում նաեւ եւրոպական մյուս երկրների դեկավարների՝ ՀՀ Նախագահին ուղղված պատասխան նամակները:*
[875] *Տես «Հայաստանի Հանրապետություն», 20.11.1991:*

պատասխանն էր տվել. «Բուշը կոնկրետ չի հայտարարել, թե ԱՄՆ-ը պատրաստ է ճանաչել Հայաստանը, բայց ասել է, որ ընդունում է ներկայիս ԽՍՀՄ-ի նախկին հանրապետություններում, այդ թվում նաեւ Հայաստանում տեղի ունեցող բնական գործընթացները, եւ Միացյալ Նահանգները պատրաստ է պաշտպանել եւ աջակցել այն բոլոր գործընթացներին, որոնք տեղի կունենան օրինական եւ սահմանադրական կերպով: ԽՍՀՄ հանրապետությունները պետք է նախ ձեւակերպեն իրենց նոր հարաբերությունները եւ հետո միայն միջազգային ճանաչում ակնկալեն»[876]:

Բուշի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի Նախագահը բարձրացրեց եւս երկու կարեւոր խնդիր: Նա հիմնավորեց, որ Արեւմուտքի կողմից Խորհրդային Միությանը տրամադրվող օգնությունը պետք է հասցեագրվի անմիջապես հանրապետություններին, ոչ թե Կենտրոնին, քանզի վերջինս դա օգտագործում է քաղաքական նպատակներով (գարնանը տրամադրված վարկը բաժանվել էր միայն այն հանրապետություններին, որոնք խոստացել էին ստորագրել միութենական պայմանագրերը): Եւ, իհարկե, Հայաստանի Նախագահն անդրադարձել էր նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ արձանագրելով, որ ԽՍՀՄ-ի քայքայման պայմաններում այն ներքին հարցից վերածվում է միջազգային հարցի, ուստի եւ ծագում է այստեղ միջազգային դիտորդներ ուղարկելու անհրաժեշտությունը[877]:

Թեեւ միջազգային հանրության կողմից Հայաստանի անկախության ճանաչումն առայժմ ուշանում էր, Հայաստանն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ շարունակում էր իրեն պահել որպես լիակատար անկախ ու ինքնիշխան պետություն: Սեպտեմբերի 12-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ճանաչեց Լատվիայի եւ Էստոնիայի անկախությունը, վավերացրեց Հայ-լիտվական եւ Հայ-վրացական միջպետական հարաբերություններ հաստատելու մասին պայմանագրերը: Այն հանգամանքը, որ Հայաստանն իր անկախությունը հռչակել էր ԽՍՀՄ Սահմանադրության եւ օրենքների տառին համապատասխան, ինչպես նաեւ ժողովրդավարական ու տնտեսական բարեփոխումների բնագավառում առաջ էր անցել բոլոր հանրապետություններից, անշուշտ, բարձրացնում էր նրա միջազգային քաղաքական վարկը[878]: Հենց այս փաստարկները վկայակոչելով՝ դեկտեմբերի 2-ին ԱՄՆ-ի Նախագահի առջեւ Հայաստանի անկախության առաջնահերթ ճանաչման հարց էր բարձրացրել սենատոր Բոբ Դոուլը[879]: Սակայն միջազգային հանրության զգուշավորությունը, գուցեեւ, հասկանալի ու արդարացված էր: Նա պիտի սպասեր ԽՍՀՄ կենտրոնական իշխանության կարգավիճակի վերջնական հստակեցմանն ու Ռուսաստանի կողմից մյուս հանրապետությունների անկախությունների նկատմամբ վերաբերմունքին:

Լեռնային Ղարաբաղն իր հերթին, 1991 թ. դեկտեմբերի 10-ին անցկացրեց անկախության իր հանրաքվեն: Ընտրելու իրավունք ունեցող 132 328 հոգուց քվեարկությանը մասնակցեց 108 736-ը (82,2 %): Մարզի աղրբեջանցի քաղաքացիները, չնայած նրանց տրված էր այդ հնարավորությունը, չմասնակցեցին քվեարկությանը: Անկախությանը «կողմ» քվեարկեց 108 615 (քվեարկողների 99,89 %-ը), «դեմ»՝ 24 (0,02 %) հոգի, 96 քվեաթերթիկ ճանաչվեց անվավեր:

Է) ԽՍՀՄ-ի վախճանը. Հայաստանը Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) եւ միջազգային հանրության լիիրավ անդամ

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների վերջին համագումարի ընդունած որոշումները ենթադրում էին, որ նոր միություն ԽՍՀՄ անվամբ, առավել եւս նման բովանդակությամբ, անհնար է այլեւս:

Ամենակարեւոր ու, թերեւս, ամենանուրբ բնագավառներից մեկը, որի վրա խիստ բացասաբար կարող էր անդրադառնալ կայսրության կազմաքանդման փաստը, տնտեսությունն էր: Ընդ որում՝ դրանից կարող էին տուժել բոլոր հանրապետությունները: Ուստի պատահական չէ, որ առաջին միջոցառումներից մեկը եղավ այս հարցով բոլոր հանրապետությունները

---

[876] *«Հայաստանի Հանրապետություն», 16.11. 1991:*

[877] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20.11.1991:*

[878] *ԱՄՆ-ի կողմից Հայաստանի անկախության ճանաչման առիթով կազմակերպված մի արարողության ժամանակ մասնակից կոնգրեսականների կողմից այսպիսի գնահատականներ տրվեցին. «Հայաստանն ավելի հառաջադեմ է, քան խորհրդային մյուս հանրապետությունները: Ագատ շուկայական տնտեսության մեջ հայերը երկու տարի ավելի առաջ են, քան մյուս հանրապետությունները», «Հայաստանը փաստեց, որ ժողովրդավարական կարգերը միայն Արեւմուտքի մենաշնորհը չեն, այլ կրնան գոյություն ունենալ նաեւ Կովկասի մեջ եւ աշխարհի որեւէ այլ մասի մեջ»: Կոնգրեսականներից մեկն էլ «Հայաստանի Հանրապետությունը գնահատեց որպես «գոհարը» խորհրդային նախկին հանրապետությունների մեջ» (տե՛ս **Գագանճյան Կ.**, Հայաստանի Հանրապետության առաջին տարիները, էջ 257):*

[879] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 05.12.1991:*

ների (Մերձբալթյան երկրներից բացի) ղեկավարների հանդիպումը հոկտեմբերի 2-ին Ալմա Աթայում: Այստեղ հավաքված 12 հանրապետություններ (առանց Կենտրոնի) ընդունեցին հայտարարագիր՝ 1991թ. տնտեսական միջհանրապետական համաձայնությունների կատարման եւ 1992թ. տնտեսական համաձայնագրերի կնքման, առաջին հերթին՝ վառելիքի եւ պարենի մատակարարումների մասին: Նախատեսվում էր ձեւավորել ընդհանուր տնտեսական տարածք, արագացված անցում կատարել շուկայական հարաբերություններին, կնքել միջհանրապետական համաձայնագրեր, համաձայնեցված քաղաքականություն վարել դրամա-վարկային բնագավառում, ազգային տարադրամի կիրառումն իրականացնել այնպես, որ վնաս չպատճառվի պետությունների համագործակցությանը: Սա, ըստ էության, դեռ մի քանի ամիս առաջ Հայաստանի առաջարկած այն քաղաքական բանաձեւի իրականացումն էր, որ կոչվում էր 15+0, այսինքն՝ ինքնիշխան պետությունների համագործակցություն՝ առանց Կենտրոնի, եւ յուրաքանչյուրի համար այդ ընկերակցությանը անդամագրվելու ձեւը որոշելու ազատություն: Հայաստանի առաջարկով տնտեսական միության անվանումը փոխվեց եւ կոչվեց Անկախ պետությունների ընկերակցություն (կամ՝ համագործակցություն)[880]:

Սակայն Միությունն ինչ-որ կերպ պահպանելու գաղափարն ինքնին մնում էր օրակարգում: Գորբաչովի նախաձեռնությամբ Նովո-Օգարյովոյում բանակցությունները շարունակվում էին արդեն նոր անվանմամբ՝ Ինքնիշխան Պետությունների Միություն ստեղծելու նպատակով: Թեեւ նախկին նախագիծն արմատապես վերանայվել էր, սակայն դրանում Կենտրոնին դեռեւս որոշակի դեր էր վերապահվում. նա պահպանում էր ընդհանուր պաշտպանական եւ որոշ ֆինանսական հարցեր տնօրինելու իրավունքներ, պետք է պահպանվեին Միության Նախագահի եւ կենտրոնական կառավարության նախագահի պաշտոնները, գոյություն ունենար երկպալատ խորհրդարան: Չնայած կատարված զիջումներին՝ անկախություն հռչակած հանրապետությունները խուսափում էին բանակցություններին մասնակցելուց: Նոյեմբերի 25-ին Նովո-Օգարյովոյում տեղի ունեցավ նրանց վերջին հանդիպումը, որից առաջ Գորբաչովը վստահ հայտարարեց, որ այդ օրը կստորագրվի Միության պայմանագիրը: Սակայն դա տեղի չունեցավ, եւ հանդիպումից հետո Գորբաչովն ստիպված էր հայտարարել, որ պայմանագիրը կստորագրվի հանրապետությունների օրենսդիր

[880] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 03, 04.10.1991:*

մարմինների կողմից հաստատվելուց հետո՝ դեկտեմբերի 20-ին: Իրականում տեղի էր ունեցել բանակցությունների լիակատար եւ վերջնական ձախողում[881]:

Դեկտեմբերի սկզբին Գորբաչովը արեց իր վերջին մի փորձը՝ դիմում հղելով «երկրի խորհրդարանականներին»: Իրավիճակը ամենեւին չէր բացառում հետադիմության նոր մի հեղաշրջման փորձի հնարավորությունը: Ուկրաինան իր վերջնական դիրքորոշումը կապում էր դեկտեմբերի 1-ին նշանակված հանրաքվեի արդյունքների հետ: Իսկ Ելցինը պնդում էր, որ ինքը միութենական որեւէ պայմանագիր չի ստորագրի առանց Ուկրաինայի: Վերջապես, Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հանրաքվեի արդյունքներն ամփոփելուց հետո ընդունեց մի հայտարարություն, որով իրեն ազատ էր համարում 1922թ. Միութենական պայմանագրից: Նույն օրը Ուկրաինայի նախագահ Կրավչուկը հայտարարեց, որ չի ստորագրի նոր միութենական պայմանագիրը: Իսկ հիմնական իրադարձությունը տեղի ունեցավ դեկտեմբերի 8-ին Մինսկում. 1922թ. Միութենական պայմանագիրը ստորագրած չորս սուբյեկտներից 3-ի ղեկավարները՝ Ռուսաստանի կողմից՝ Նախագահ Բորիս Ելցինը եւ պետական քարտուղար, կառավարության նախագահի տեղակալ Գենադի Բուրբուլիսը, Ուկրաինայի կողմից՝ Նախագահ Լեոնիդ Կրավչուկը եւ կառավարության նախագահ Վիտոլդ Ֆոկինը, Բելառուսի կողմից՝ Գխ նախագահ Ստանիսլավ Շուշկեւիչը եւ կառավարության նախագահ Վյաչեսլավ Կեբիչը, Բելովեժյան Պուշչայում ստորագրեցին հետեւյալ պատմական փաստաթուղթը.

«Մենք՝ Բելառուսի հանրապետության, Ռուսաստանի ֆեդերացիայի եւ Ուկրաինայի ղեկավարներս, ստորագրեցինք Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին համաձայնագիր.... Մենք՝ Բելառուսի հանրապետությունը, Ռուսաստանի ֆեդերացիան (ՌԽՖՍՀ), Ուկրաինան, որոնք ստորագրել են 1922թ. Միութենական դաշնագիրը, եւ այսուհետեւ կանվանվեն Բարձր պայմանավորվող կողմեր, արձանագրում ենք, որ ԽՍՀ

[881] *Այդ հավաքի մասին Ելցինը հիշում է. «Վավերացման մասին Գորբաչովի հայտարարությունը հանրապետությունների ղեկավարներին ստիպեց արմատական փոփոխություններ մտցնել պայմանագրի տեքստում.... Երբ Գորբաչովը հերթական անգամ փորձեց պնդել իր ձեւակերպման վրա, եւ մենք բոլորս համերաշխ, մեկ մարդու պես նրան մերժեցինք, նա չդիմացավ, վեր թռավ սեղանից եւ դուրս վազեց նիստի դահլիճից....»: Ըստ էության, դա էլ եղավ Նովոօգարյովյան փաստաթղթի դատավճիռը» (**Ельцин Б.**, Записки президента, Москва, 1994, с. 148-149):*

Միությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ եւ աշխարհաքաղաքական իրողություն դադարեցնում է իր գոյությունը»[882]:

Դեկտեմբերի 12-ին Ռուսաստանի Դաշնության խորհրդարանը վավերացրեց Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին դեկտեմբերի 8-ին կնքված պայմանագիրը եւ ուժը կորցրած ճանաչեց 1922 թ. ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը[883]:

Բելովեժյան փաստաթղթի ստորագրման հաջորդ իսկ օրը Հայաստանի Նախագահը նորաստեղծ ԱՊՀ-ին անդամագրվելու հայտ ներկայացրեց: Դեկտեմբերի 10-ին երեկոյան ռուսական հեռուստատեսությամբ հաղորդվեց Ելցինի կողմից Հայաստանի (եւ Ղազախստանի) անկախության ճանաչման հայտարարության մասին[884]: Դրանից անմիջապես հաջորդ օրերին Հայաստանի անկախությունը ճանաչեցին Ռումինիան, Թուրքիան: Հայաստանն, իր հերթին, դեկտեմբերի 18-ին հայտարարեց Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Ղազախստանի անկախությունը ճանաչելու մասին:

Դեկտեմբերի 29-ին Ռուսաստանը Հայաստանի հետ ստորագրեց «Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ անվտանգության համաձայնագիր» անվանումը կրող առաջին միջպետական պայմանագիրը: Այն, ինչ վերջին 300 տարվա համար ավանդաբար կոչվում եւ համարվում էր «հայ-ռուսական բարեկամություն», իսկ իրականում եղել էր վերադասի եւ ստորադասի հարաբերություն, այս փաստաթղթով առաջին անգամ իրավահավասարության հիմքի վրա իրական բովանդակություն եւ իրավական տեսք ստացավ: Եւ վերջապես՝ ԽՍՀՄ վախճանի վերջին ակորդը խփվեց դեկտեմբերի 21-ին՝ Ալմա Աթայում, նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների (բացի Մերձբալթյան երկրներից եւ Վրաստանից) ղեկավարների հանդիպման ժամանակ: Ընդունված հռչակագրում ազդարարվում էր ԽՍՀՄ գոյության ավարտը, եւ հայտարարվում էր Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին: Որպես ԱՊՀ բարձրագույն մարմիններ՝ պետք է գործեին պետությունների ղեկավարների խորհուրդը եւ կառավարությունների ղեկավարների խորհուրդը:

---

882 «Հայաստանի Հանրապետություն», 10.12.1991:

883 Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ-ի, 1991, 51, հոդվ. 1798, 1799:

884 Այս դրվագի մանրամասները տե՛ս «Левон Тер-Петросян в российской прессе», էջ 261: Ճանաչման պաշտոնական փաստաթղթերը ձեւակերպված են դեկտեմբերի 16-ի ամսաթվով:

Գորբաչովը պաշտոնապես տեղեկացվեց ԽՍՀՄ Նախագահի ինստիտուտի վերացման մասին եւ դեկտեմբերի 25-ին դադարեցրեց իր գործունեությունը ԽՍՀՄ Նախագահի պաշտոնում:

Նոր համագործակցությունը, փաստորեն, բավարարում էր այն հիմնական պայմանները, ինչ մինչ այդ՝ ամբողջ մի տարի, առաջ էր քաշում Հայաստանը, այն է՝ որեւէ Միություն կարող է լինել միայն առանց Կենտրոնի, եւ այդ Միության անդամները պետք է լինեն իրավահավասար եւ միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտներ: Դեկտեմբերի 26-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը փակ նիստում երկար քննարկումից հետո վավերացրեց ԱՊՀ ստեղծման համաձայնագրի արձանագրությունը[885]:

Նոր համագործակցությունը բավարարում էր նաեւ միջազգային հանրությանը, այն գնահատվեց որպես «պատմական իրադարձություն», բռնատիրությունից դեպի ժողովրդավարություն ճանապարհին տրամաբանական եւ «ճիշտ ուղղությամբ» արված վճռական քայլ: ԽՍՀՄ կազմաքանդման կառուցողական գործընթացն ավարտված էր[886], եւ ԽՍՀՄ-ը, որպես կայսրություն՝ այլեւս վտանգ չէր ներկայացնում: Դեկտեմբերի 25-ին ԱՄՆ-ը ճանաչեց նախկին ԽՍՀՄ առաջին հինգ հանրապետությունների, այդ թվում նաեւ Հայաստանի անկախությունը: Մինչեւ տարեվերջ Հայաստանի անկախությունը ճանաչեց 48 երկիր[887]:

ը) Շարժման հինգերորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները

1. Կենսագործելով Անկախության հռչակագրի դրույթները՝ Հայաստանի նոր իշխանությունը սկզբից եւեթ օրենսդրական եւ գործնական քաղաքական քայլերով ձեռնամուխ եղավ **արտաքին հարաբերությունների** հաստատմանը՝ գործելով որպես ինքնիշխան սուբյեկտ: Մոսկվայի հետ

---

885 Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 24, հոդվ. 573:

*886 Սա չափազանց կարեւոր եւ պատասխանատու գործընթաց էր: Խոսելով 1991թ. դեկտեմբերին Բելովեժյան համաձայնագրի մասին, Եգոր Գայդարը արձանագրում է, թե՝ «դրանով կարողացանք խուսափել մեծ արյունահեղությունից ու միջուկային ադետից» (**Գայդար Ե.**, Կայսրության կործանումը, էջ 29): Բելովեժյան համաձայնագիրը ԽՍՀՄ անվտանգ կազմաքանդման աշխատանքի եւ ջանքերի վերջին մի ակորդ էր, որոնք սկսվել էին օգոստոսի վերջից:*

887 Հայաստանի արտաքին գործերի նախարարության կազմած համապատասխան տեղեկանքը տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15.01.1992:

հարաբերություններում Հայաստանի իշխանությունը մերժեց ինչպես առճակատման գնալու, այնպես էլ ենթակայի վիճակում մնալու քաղաքականությունը: Հետեւողական աշխատանքով, ճկուն դիվանագիտությամբ հաջողվեց այդ հարաբերությունները աստիճանաբար տեղափոխել հորիզոնական՝ գործընկերային հարաբերությունների հարթություն: Զմիջնորդավորված, անմիջական կապեր հաստատվեցին ԽՍՀՄ այն հանրապետությունների հետ, որոնք ընթանում էին ժողովրդավարության ու անկախության ճանապարհով: Ակտիվ դիվանագիտական աշխատանք ծավալվեց տարբեր երկրների հետ հարաբերություններ հաստատելու հիմքեր դնելու ուղղությամբ: Արտաքին քաղաքականության մեջ հետեւողականորեն հետապնդվում էր Հայաստանը փաստական ու իրավական առումով միջազգային հանրության լիիրավ անդամ դարձնելու խնդիրը:

2. Օրենսդրորեն կարգավորվեցին եւ գործնականում ապահովվեցին **ժողովրդավարության** արմատավորման կարեւոր հիմքերը՝ խոսքի, մամուլի, խղճի ու կրոնական դավանանքի, քաղաքական գործունեություն ծավալելու ազատությունները եւ իրավունքները: Վերացվեց ինչպես հանրապետական իշխանության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների վրա կուսակցական վերահսկողության եւ ներգործության խորհրդային պրակտիկան, նոր իշխանությունը բոլոր մակարդակներում ստանձնեց Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքները եւ լիազորությունները: Հասարակությունն ազատվեց որեւէ գաղափարախոսական պարտադրանքից, ապաքաղաքականացվեցին իրավապահ մարմինները եւ զինված ուժերը: Հիմնարկներում եւ կազմակերպություններում արգելվեց կուսակցական կազմակերպությունների գործունեությունը, նրանց թույլատրվեց կազմակերպական կառույցներ ունենալ միայն տարածքային սկզբունքով: Օրենսդրորեն կարգավորվեց պետական անվտանգության կարեւորագույն հիմքերից մեկը՝ երկրի քաղաքական դաշտը եւ քաղաքական կազմակերպությունների գործունեության ոլորտը: Հենվելով քաղաքական կյանքի կազմակերպման միջազգային չափորոշիչների վրա՝ արգելվեց պետական կառույցներից ու արտասահմանից կուսակցությունների ֆինանսավորումը, նրանց ղեկավար մարմնի՝ հանրապետությունից դուրս գտնվելը, նրանց կազմում օտարերկրյա քաղաքացիներ ունենալը եւ այլն: Հաստատված բազմակուսակցական համակարգում քաղաքական ընդդիմությունը ստացավ գործունեության լիակատար ազատություն:

3. Ձեւավորվեց ՀՀՇ-ի իշխանության **քաղաքական ընդդիմությունն** իր երկու՝ հակաանկախական եւ «արմատական» դրսեւորումներով: Հիմնական՝ անկախության ուղեգծի հարցում իշխանության դեմ մինչեւ վերջ համառ պայքար էին մղում կոմունիստները եւ Դաշնակցությունը, որոնց ծրագրերի կամ գաղափարախոսությունների հիմքում դրված էր Հայաստանը ԽՍՀՄ-ի (կամ Ռուսաստանի) կազմի մեջ լինելու առաջնային ու պարտադիր պայմանը: Նույն հարցում «արմատականները» ներկայացնում էին մյուս ծայրահեղությունը՝ պահանջելով ԽՍՀՄ օրենքների անտեսմամբ եւ Կենտրոնի հետ առճակատմամբ հապշտապ եւ ցուցադրական քայլեր: Լեռնային Ղարաբաղի խնդրում «արմատական» ընդդիմությունը հենվում էր պահանջատիրության վրա՝ պաշտպանելով ինչպես Մոսկվայի, այնպես էլ Ադրբեջանի դեմ առճակատման քաղաքականությունը: Հակաանկախական թեւը Ղարաբաղի խնդրի լուծումը կապում էր անկախությունից հրաժարվելու եւ միութենական պայմանագիրը ստորագրելու հետ: Կոմունիստները եւ Դաշնակցությունը սոցիալիզմի գաղափարական հիմքերի վրա եւ «մեր ազգային առանձնահատկությունների» շահարկմամբ պայքարում էին ժողովրդավարական նորմերի ներդրման ու արմատավորման, ազատական տնտեսական վերափոխումների դեմ : Զնայած ընդդիմության «արմատական» եւ հակաանկախական թեւերը միմյանց հակառակ բեւեռներ էին, միմյանց դեմ չէին պայքարում եւ հաճախ սերտորեն համագործակցում էին իշխանության դեմ գործողություններում:

4. Հայաստանն առաջինը ձեռնամուխ եղավ **համակարգային բնույթի արմատական վերափոխումների**. ընդունվեցին սեփականության բոլոր ձեւերի իրավահավասարության, այլ խոսքով՝ մասնավոր սեփականության արտոնման, ազատ շուկայական հարաբերությունների անցման օրենքները, եւ կատարվեցին առաջին հեղափոխական բարեփոխումները: Հատկապես համարձակ, մյուս կողմից՝ լիովին արդարացված էր գյուղատնտեսության բնագավառում իրականացված բարեփոխումը: Տրվեց հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք: Փաստորեն՝ ամբողջ գյուղացիությունն ընդամենը մեկ տարվա ընթացքում իրացրեց հողի սեփականաշնորհման իրեն տրված հնարավորությունը՝ մերժելով կոլտնտեսությունների («կոլխոզ») ու գյուղատնտեսական պետական ձեռնարկությունների («սովխոզ») գոյություն ունեցող համակարգը: Հողի, գյուղատնտեսական տեխնիկայի եւ անասնագլխաքանակի սեփականաշնորհումը վերացրեց այս բնագավառի խրոնիկ վնասաբերությունը, կանխեց անվերահսկելի դարձող վատնումները եւ թալանը, հետագա դժվարին տարիներին հանդիսացավ սննդամթերքի դեֆիցիտը մեղմելու, կարելի է ասել, անխուսափելի սովը կանխելու կարեւորագույն ներքին ռեսուրս:

5. Նկատի ունենալով նոր իրողությունները, իրավիճակի որակական փոփոխությունները եւ քաղաքական գործընթացների զարգացման ուղղությունը՝ **Լեռնային Ղարաբաղի** խնդրում որդեգրվեց առճակատումներից խուսափելու, համաձայնությամբ ու փոխզիջումներով հարցը կարգավորելու քաղաքական ուղեգիծ: Դրա նպատակն էր խնդիրը դուրս բերել փակուղուց, խառնաշփոթ, անկանխատեսելի ու վտանգաշատ այդ շրջանում Ղարաբաղն ապահովել անվտանգության լրացուցիչ երաշխիքներով: Համաձայնության որոնման այս կոնտեքստում Հանրապետության ԳԽ նախագահը ձեռնարկեց լուծել Լեռնային Ղարաբաղի մարզային իշխանության սահմանադրական մարմինների գործունեության վերականգնման խնդիրը, ինչի շնորհիվ մարզը կազատվեր դրածո իշխանական մարմիններից, Հայաստանը Ղարաբաղում կունենար օրինական գործընկեր իշխանություն՝ կարեւորագույն հանգամանք՝ ամենատարբեր խնդիրների լուծման համար: Չնայած հետեւողական ջանքերի շնորհիվ հաջողվեց հաղթահարել կենտրոնական իշխանության եւ Ադրբեջանի խուսանավումները եւ մի քանի անգամ Կենտրոնի հետ հասնել մարզի սահմանադրական իշխանությունները վերականգնելու պայմանավորվածությունների, սակայն Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում որոշ ուժեր, ինչպես նաեւ Մոսկվայում առանձին պաշտոնյաներ կարողացան խափանել այդ ծրագիրը: Դա առավել հնարավոր դարձրեց 1991թ. ապրիլ-օգոստոս ամիսներին Մոսկվայի եւ Ադրբեջանի բացահայտ ագրեսիան Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ: Փոխզիջումների հիման վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ռազմավարությունն, այսպիսով, որդեգրվել է 1990 թ. օգոստոսից եւ անխաթար հետապնդվել ՀՀՇ-ի ամբողջ իշխանության ընթացքում, ներառյալ պարտադրված պատերազմի շրջանը:

6. Հայաստանի իշխանությունը հետեւողականորեն շարունակեց իրականացնել **պետական անկախության ձեռքբերման**՝ ՀՀՇ Ծրագրում ամրագրված դրույթը: Նա կարողացավ ներսում դիմակայել հակաանկախական ուժերի (Կոմկուս, Դաշնակցություն, նոմենկլատուրային մտավորականություն, քաղքենիություն եւ այլն) ճնշումներին, որոնք պարտադրում էին հրաժարվել այդ ուղեգծից եւ ստորագրել նախապատրաստվող Միութենական նոր պայմանագիրը: Նա տեղի չտվեց նաեւ իր քաղաքական ընդդիմության «արմատական» թեւին (ԱԻՄ եւ նրա շուրջ մանր խմբեր), որը պահանջում էր գնալ Կենտրոնի հետ առճակատման ճանապարհով, անմիջապես անկախության հռչակել՝ առանց հաշվի առնելու ԽՍՀՄ համապատասխան օրենքի պահանջները: Անկախության ընթացք

վերցրած հանրապետությունների մեջ Հայաստանը միակն էր, որը ելնելով հանրապետության ազգային միատարրության եւ իր կազմում ինքնավար կազմավորումներ չունենալու հանգամանքներից, անկախության իր գործընթացը տանում էր սահմանադրական անխոցելի ճանապարհով՝ կատարելով միայն ԽՍՀՄ համապատասխան օրենքով նախատեսված քայլեր: Դա իրադարձությունների ցանկացած զարգացման դեպքում ապահովելու էր խնդրի վերջնական լուծումը: Անկախության հռչակագրի ընդունումից հետո, հաջորդ քայլով Հայաստանը հրաժարվեց մասնակցել ԽՍՀՄ պահպանման խնդրով 1991 թ. մարտին կենտրոնական իշխանության կազմակերպած հանրաքվեին եւ նշանակեց անկախության սեփական հանրաքվեն՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին:

7. Նոր իշխանությունը կարողացավ դիմակայել նաեւ Կենտրոնի՝ անկախության գործընթացի դեմ ուղղված ռազմական ճնշմանը, հայտարարված փաստական պատերազմին: 1991թ. ապրիլի վերջերից սկսված, այսպես կոչված՝ **«Կոլցո» ռազմական գործողությունը** այլ բան չէր, քան իրական պատերազմի տեսքով պատժիչ գործողություն Հայաստանի դեմ: Մոսկվայի եւ Ադրբեջանի համատեղ ռազմական գործողություններով ծրագրված էր Ղարաբաղի հայ բնակչության տեղահանում դեպի Հայաստան: Ադրբեջանը հույս ուներ այդ կերպ լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը, Մոսկվայի նպատակն էր այդ միջոցով հանրապետությունում խորացնել սոցիալական լարումը, իշխանությունների նկատմամբ անվստահություն ստեղծել, դրանով հասնել անկախության սկսված գործընթացի խափանմանը եւ ստիպել Հայաստանին ստորագրել միութենական նոր պայմանագիրը: Կենտրոնի ռազմական այս ինտերվենցիայի հաջողության հաշվարկների հիմքում նկատի էր առնվել, մասնավորապես, Հայաստանի հակաանկախական ուժերի առկայությունը, որոնք, կա՛մ իրենց գաղափարախոսությունների, պատկերացումների, կա՛մ շահերի բերումով, միջոցների միջեւ խտրություն չդնելով, պայքարում էին անկախությանը ուղեգծի դեմ:

Հայաստանի անկախության գործընթացը խափանելուն ուղղված՝ Կենտրոնի վերջին մասշտաբային այս գործողությանը հակադրվեց, մի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաեւ Հայաստանից գործուղված կամավորականների հերոսական ինքնապաշտպանությունը, մյուս կողմից՝ Հայաստանի իշխանության ակտիվ դիվանագիտական աշխատանքն ու արտաքին քաղաքական արդյունավետ ձեռնարկումները: Սանձազերծված ագրեսիայի դեմ դիվանագիտական աշխատանքի շնորհիվ ստացվեց ինչպես Ռուսաստանի եւ այլ հանրապետությունների ժողովրդավարական

ուժերի, այնպես էլ միջազգային հանրության գործուն հակազդեցությունը: Կենտրոնական իշխանության կողմից դրված՝ Հայաստանի անկախության գործընթացը կասեցնելու խնդիրը տապալվեց: Կարեւոր նշանակություն ունեցավ նաեւ այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղը, թեեւ ուշացումով, հենց այս ընթացքում (մայիսի 16-ին), նույնպես ընդունեց առճակատման քաղաքականությունից փոխզիջումների քաղաքականության անցնելու եւ ԽՍՀՄ Սահմանադրության շրջանակներում խնդիրը կարգավորելու ծրագիրը:

8. Հայաստանի քաղաքական իշխանությունը կարողացավ ամուր կանգնած մնալ **իրատեսական քաղաքականության** իր որդեգրած ելակետի վրա: Նա չտրվեց իրադարձությունների խաբկանքին, կարողացավ Ճիշտ գնահատել ծավալվող քաղաքական գործընթացների ուղղվածությունը եւ իր մարտավարությունն ու ռազմավարությունը կառուցեց վերջինիս վրա: Ներքին քաղաքականության մեջ դա արտահայտվում էր ժողովրդավարական սկզբունքների, տնտեսական հարաբերություններում՝ ազատականության եւ ազատ շուկայական հարաբերությունների ներդրմամբ: Անկախության գործընթացում իշխանությունը զերծ մնաց գայթակղիչ ցուցադրականությունից, բայց նաեւ թույլ չտրվեց անկախության ուղեգծից որեւէ նահանջ, կատարվեցին ինքնիշխանության ամրապնդման հետեւողական քայլեր: Որպես անկախության գնացող երկիր հակադրվելով հանդերձ կենտրոնական իշխանությանը՝ Հայաստանը կարողացավ հասնել նրա հետ գործընկերային հարաբերությունների հաստատման: Նույն իրատես քաղաքականության եւ ճշգրիտ քաղաքական հաշվարկների շնորհիվ հաջողվեց, մի կողմից՝ թույլ չտալ, որ Լեռնային Ղարաբաղը դարձվի Հայաստանի անկախության գործընթացի կասեցման միջոց, մյուս կողմից՝ խափանել ու չեզոքացնել հայկական մարզը բռնագաղթի ենթարկելու՝ Մոսկվայի եւ Ադրբեջանի համատեղ ծրագրերը: Ի տարբերություն Ադրբեջանի, որը, գայթակղվելով Կենտրոնի հետադիմական ուժերի հետ համագործակցությամբ, կանգնած մնաց կոմունիստական ռեժիմի պահպանման եւ միութենական պայմանագրի ստորագրման ջատագովի դիրքերում, Հայաստանի ժողովրդավար իշխանությունը քաղաքական հեռատեսությամբ գնաց ճիշտ հակառակ ճանապարհով՝ ապահովելով առաջիկա իրադարձություններում իր հաջողությունների հիմքերը:

9. Մոսկվայում հետադիմական ուժերի կողմից կազմակերպված **պետական հեղաշրջման (ԳԿՉՊ)** վտանգաշատ օրերին Հայաստանի իշխանությունները կարողացան հաջողությամբ լուծել երեք կարեւոր խնդիր.

Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում չհաստատվեց նախատեսված հատուկ դրության ռեժիմը, կանխվեցին պատժիչ գործողությունների դիմելու հնարավոր առիթները, միաժամանակ՝ հնարավոր օժանդակություն ցուցաբերվեց Ռուսաստանի ժողովրդավարական ուժերին, որոնք եւ կարողացան ձախողել պետական հեղաշրջման փորձը: Հայաստանը շարունակեց մնալ ժողովրդավարական գործընթացների առաջամարտիկի իր դերում. Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ամենագործուն ու վճռական անձնական մասնակցությունն ունեցավ կենտրոնական իշխանության վերակենդանացման փորձերը կանխելուն, ԽՍՀՄ փլուզումը կարգավորված ու անվտանգ կազմաքանդման վերածելու կառուցողական գործընթացին՝ ոչ միայն ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի, այլեւ միջազգային ասպարեզում ճանաչվելով որպես դրա ճարտարապետներից մեկը:

10. Շարունակելով Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված քաղաքականությունը՝ հաջողվեց **որպես միջնորդներ ներգրավել Ռուսաստանի Դաշնության Նախագահ Ելցինին եւ Ղազախստանի Նախագահ Նազարբաեւին**: Նրանց միջնորդական ջանքերի շնորհիվ 1991թ. սեպտեմբերի 23-ին Ժելոզնովոդսկ քաղաքում տեղի ունեցավ քառակողմ հանդիպում, որին մասնակցեցին նաեւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները, ընդունվեց համատեղ հայտարարագիր: Ձեռք բերված պայմանավորվածությունները թեեւ, իրերի բերմամբ, մեծ մասամբ չկատարվեցին, սակայն իրավիճակը մեղմելու առումով այն որոշակի նշանակություն ունեցավ՝ միաժամանակ դառնալով Լեռնային Ղարաբաղի խնդրի միջազգայնացման, Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության կողմ եւ բանակցությունների սուբյեկտ դիտարկելու, ինչպես նաեւ խաղաղ կարգավորման ուղղությամբ ձեռնարկված առաջին լուրջ միջպետական միջոցառումը:

11. Լեռնային Ղարաբաղի հարցում, ինքնապաշտպանության կազմակերպումից զատ, որպես առաջնահերթ քաղաքական խնդիր՝ Հայաստանի իշխանությունը շարունակում էր հետամուտ լինել **ԼՂԻՄ իշխանության սահմանադրական մարմինների վերականգնմանը**: Առճակատումից հրաժարվելու եւ բանակցությունների միջոցով, փոխզիջումների հիման վրա հակամարտությունը կարգավորելու ուղեգիծը բխում էր նույն՝ ինքնորոշման իրավունքի սկզբունքից, ինչը դրված էր Շարժման գաղափարական սկզբունքների հիմքում ի սկզբանե: Իշխանության սահմանադրական մարմինների վերականգնումը հնարավորություն կտար Լեռնային Ղարա-

բաղում ունենալ իրավական քաղաքական գործընկեր, Լեռնային Ղարաբաղը, ի դեմս իր օրինական հայկական իշխանության, կարող էր բանակցություններում հանդես գալ որպես սուբյեկտ, իսկ առճակատումը շարունակվելու դեպքում ճանաչվել որպես հակամարտության կողմ: Դրա կարեւորությունն առավել եւս պետք է մեծանար կանխատեսելի ապագայում՝ ԽՍՀՄ փլուզմամբ խնդրի միջազգայնացման դեպքում: Երկար դիմադրելուց հետո, 1991թ. գարնանը այս ուղեգիծն իր պաշտպանությունը գտավ նաեւ Լեռնային Ղարաբաղում: Ցավոք, հարմար առիթներն արդեն բաց էին թողնված: 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ-ի հռչակումն ու դեկտեմբերի 10-ին անցկացված անկախության հանրաքվեն, անկասկած, իրավական առումով ավելի անխոցելի կլինեին, եթե այդ միջոցառումներն իրականացված լինեին ԼՂԻՄ ճանաչված սահմանադրական իշխանությունների գոյության պայմաններում ու նրանց կողմից:

12. Հայաստանի քաղաքական ղեկավարությունը, մինչեւ վերջ հավատարիմ մնալով անկախության ձեռքբերման իր որդեգրած ճանապարհին, հաղթահարելով Կենտրոնի ուժային ճնշումները, ինչպես նաեւ ներքին՝ հակաանկախական ուժերի դիմադրությունը եւ ընդդիմության «արմատական» թեւի արկածախնդրական ձեռնարկումներն ու ծուղակները, 1991թ. սեպտեմբերի 21-ին իրականացրեց **Անկախության համաժողովրդական հանրաքվեն**, որը, գործնականում, միաձայն հաստատեց Հայաստանի ողջ բնակչության՝ անկախ պետություն ունենալու վճռական որոշումը: Որպես քաղաքական արդյունք՝ այն ոչ միայն Հայոց համազգային շարժման իշխանության քաղաքական ուղեգծի ճշգրտության վկայություն էր, այլ նաեւ ժողովրդի կողմից նրա գործունեությանը տրված բարձրագույն գնահատականը: ՀՀ Գերագույն խորհուրդը հանրաքվեի արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն: Հայաստանը՝ ԽՍՀՄ հանրապետություններից միակը, իր անկախությունը հռչակեց գործող միութենական օրենքների սահմաններում եւ միջազգային չափանիշներին համապատասխան՝ դրանով իսկ ապահովելով իր անկախության ամենաանխոցելի՝ իրավական հիմքը:

13. Ըստ էության՝ երկրորդ մի հանրաքվեի քաղաքական իմաստ եւ նշանակություն ունեցավ նաեւ **հոկտեմբերի 16-ին անցկացված նախագահական ընտրությունը**: Չմասնակցելով պաշտոնական նախընտրական արշավին եւ բավարարվելով բազմիցս իր ներկայացրած քաղաքական ծրագրերին եւ գործունեությանը հասարակության տեղեկացվածությամբ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը նախագահության վեց թեկնածուների մեջ

ստացավ ձայների ջախջախիչ մեծամասնությունը՝ ավելի քան 83%-ը, եւ անվիճելի հաղթանակ տարավ: Ինչպես անկախության հանրաքվեի, այնպես էլ նախագահական ընտրությունների արդյունքները վկայում էին, որ Հայոց համազգային շարժման եւ նրա առաջնորդի ծրագրերի ու գործունեության նկատմամբ վստահությունը մնում էր անխաթար: Այդ արդյունքները վկայություն էին նաեւ այն բանի, որ հայաստանյան հասարակությունն իր մեծագույն մասով մերժել եւ լուսանցք էր մղել հայ իրականության մեջ տասնամյակներ շարունակ լայնորեն տարածված կեղծ հայրենասիրական պատկերացումները, պահանջատիրականությունը, փծուն ազգայնականությունը: Սա ինչպես Խորհրդային Միության հանրապետությունների, այնպես էլ Արեւելյան Եւրոպայի երկրների մեջ այն եզակի դեպքն էր, երբ հաղթած ժողովրդավարական ուժն ավելի քան մեկ տարի իշխանություն ունենալուց հետո շարունակում էր հասարակության մեջ պահպանել իր անվիճելի հեղինակությունը եւ արժանանալ անվերապահ վստահության:

14. Անկախության հանրաքվեից եւ Հանրապետության Նախագահի ընտրություններից հետո ընդունված նոր օրենսդրական ակտերով եւ գործնական քայլերով խորացվեց **իշխանությունների տարանջատման** եւ նրանց լիազորությունների հստակեցման սկզբունքը: Ավարտին հասցվեց հանրապետության լիակատար ինքնիշխանության հաստատումը: Հանրապետության ուժային կառույցները՝ ՆԳ նախարարությունը եւ Ազգային անվտանգության կոմիտեն, դուրս բերվեցին Մոսկվայի ենթակայությունից: Ընդունվեց ընդհանուր զինապարտության մասին օրենքը, եւ ԽՍՀՄ 7-րդ բանակի հիմքի վրա (որտեղ զինվորների մեծ մասը արդեն Հայաստանի քաղաքացիներն էին), կամավորական ջոկատների ներուժի օգտագործմամբ, խորհրդային բանակից հազարից ավելի հայազգի բարձրաստիճան սպաների ներգրավմամբ հիմք դրվեց հայկական բանակի կազմավորմանը: Ապագան, մասնավորապես՝ պարտադրված պատերազմում տարած հաղթանակները ցույց տվեցին, որ այս հարցում Հայաստանի իշխանությունը ոչ միայն չէր հապաղել (ինչում նրան անընդհատ մեղադրում էին), այլեւ ընտրել էր պետության կարեւորագույն այս կառույցի ստեղծման ճշգրիտ ժամանակը, ձեւը եւ մեխանիզմները:

15. ԳԿՉՊ-ի ձախողումից՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության վերակենդանացման առաջին եւ հիմնական փորձի ձախողումից հետո դեռեւս վերացած չէր Կենտրոնի գոյատեւման վտանգը, եւ պետք էր շարունակել համակարգի լիակատար եւ անվտանգ կազմաքանդման գործընթացը: Հայաստանը, ի դեմս Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետ-

րոսյանի, ամենաակտիվ մասնակցություն ունեցավ այդ գործընթացին նաեւ հետագա ամիսներին: 1991թ. դեկտեմբերի 8-ին Ռուսաստանը, Ուկրաինան եւ Բելառուսը (1922թ. ԽՍՀՄ ստեղծման հիմնադիր անդամներ) ստորագրեցին ԽՍՀՄ-ի՝ «որպես միջազգային իրավունքի սուբյեկտ եւ աշխարհաքաղաքական իրողություն», գոյության ավարտը եւ ստորագրեցին «Անկախ պետությունների համագործակցություն» ստեղծելու մասին համաձայնագիր: Հայաստանն առաջինը հայտ ներկայացրեց մտնելու նոր ստեղծված միջպետական այս համագործակցության մեջ: Ռուսաստանը, քիչ անց՝ նաեւ ԱՄՆ-ը, ճանաչեցին Հայաստանի անկախությունը: Դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի հետ ստորագրված «Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ անվտանգության համաձայնագրով» հայ-ռուսական 300-ամյա հարաբերություններում Հայաստանն առաջին անգամ հանդես էր գալիս որպես իրավահավասար եւ իրավազոր կողմ:

16. Հայաստանի ետկոմունիստական առաջին իշխանությունը, Հայոց համազգային շարժման գլխավորությամբ, հնարավոր ամեն ինչ արեց գոյություն ունեցող քաղաքական բոլոր ուժերի եւ գործիչների հետ համագործակցելու եւ միասնաբար դիմակայելու ամենածանր մարտահրավերներին: Այդ ջանքերը որոշակի արդյունքներ ունեցան, իշխանության մեջ կարեւոր պաշտոններում մարդիկ ներգրավվեցին ինչպես այդ ուժերից, այնպես էլ գիտության, արտադրության բնագավառից եւ Սփյուռքից: Որպես անհաշտ վերաբերմունք որդեգրած ընդդիմադիր ուժեր մնացին Կոմկուսը (մի մասով) ՀՅԴ-ն, ՀՀՇ-ից պոկված ոչ մեծ մի խումբ՝ Վ. Մանուկյանի գլխավորությամբ (ԱԺՄ) եւ Պ. Հայրիկյանի ԱԻՄ-ը: Վերջիններիս վարքագիծն ու գործունեությունը, մշտապես հենված հասարակության մեջ գոյատեւող ավանդական պատկերացումները, ազգային սնափառությունը եւ այլ զգացումներ մանիպուլյացիայի ենթարկելու վրա, երբեւէ իրական քաղաքական բովանդակություն չստացան: Դրանք վնասակար, հաճախ՝ օբյեկտիվորեն վտանգավոր էին դառնում ինչպես Հայաստանի, այնպես էլ Ղարաբաղի շահերի եւ ապահովության տեսանկյունից: Քաղաքական եւ տնտեսական այլ մարտահրավերների կողքին նոր իշխանությունը կարողացավ չեզոքացնել նաեւ այդ վտանգը:

17. ԽՍՀՄ փլուզումը 1991թ. վերջին ժողովրդավարական ուժերի պայքարի շնորհիվ հասավ իր տրամաբանական ավարտին: Այդ ուժերի մեջ Հայկական ժողովրդավարական շարժումը բռնապետական կայսրության փլուզմանը նպաստող ամենագործուն ուժերից էր, իր հզորությամբ, վաստակով ու հեղինակությամբ՝ առաջիններից մեկը: Ժողովրդավարական

ուժերի ջանքերի շնորհիվ ԽՍՀՄ փլուզումն իրականացավ անվտանգ կազմաքանդման ձեւով: Ժողովրդավարական Հայաստանն այդ կազմաքանդման ապահով իրականացման շրջանում շարունակեց մնալ նույն դիրքերում, ունեցավ իր գործուն ու կառուցողական մասնակցությունը այդ գործընթացին: Նաեւ երկրի ներքին՝ հասարակական-քաղաքական կյանքում եւ տնտեսության մեջ իրականացված արմատական ժողովրդավարական բարեփոխումներով Հայաստանն անվիճելիորեն առաջին տեղում էր: Այս հիմքերի վրա էր, որ նա միջազգային հանրության լիիրավ անդամ դարձավ բարձր վարկանիշով՝ տարածաշրջանում գնահատվելով որպես «ժողովրդավարության կղզի»: Հայաստանի քաղաքական այդ հաղթաթղթերը կարեւոր դեր պիտի խաղային տնտեսական խուլ շրջափակման պայմաններում, վերահաս սովի սպառնալիքի եւ Լեռնային Ղարաբաղի խնդրով փաստական պատերազմի մեջ ներքաշված երկրի իշխանության առջեւ ծառացած աննախադեպ ծանր խնդիրների լուծման համար: Խնդիրներ, որ 1991թ. վերջին, ամենալավատեսական հաշվարկներով անգամ, թվում էին անլուծելի:

18. Ընդունված է ասել, թե բոլոր կայսրությունները դատապարտված են կործանման: Եւ նույն կերպ սպասվում էր նաեւ Խորհրդային կայսրության կործանումը: Սակայն բոլոր կայսրությունները կործանվել են հենց այդ կայսրությունների կազմում անազատ եւ ճնշված վիճակում գտնվող ժողովուրդների ազատագրական պայքարի շնորհիվ: Այս առումով ԽՍՀՄ փլուզումը ներկայացնել որպես միայն նրա ոչ արդյունավետ տնտեսական եւ քաղաքական համակարգի հետեւանք, որպես ինքն իր մեջ ծավալվող գործընթաց, պատմականորեն սխալ է: Դրանք որքան էլ կարեւոր, բայց բավարար չեն կայսրության փլուզման համար: ԽՍՀՄ-ը փլուզվեց ժողովրդավարական շարժումների հզոր հարվածների տակ, եւ այդ հարվածներից առաջինը նրա հիմքերին հասցրեց Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական Շարժումը: Ամբողջ կես տարի միայնակ, իսկ այնուհետեւ՝ որպես ԽՍՀՄ-ում եւ Արեւելյան Եւրոպայում ծայր առած ժողովրդավարական շարժումների առաջատարներից մեկը, նա ամենավճռական դեր խաղաց ԽՍՀՄ փլուզման գործում՝ նվաճելով սեփական անկախությունը եւ կարեւորագույն վաստակ ունենալով մյուս ժողովուրդների անկախության եւ ազատության ձեռքբերման գործում: Որպես այդպիսին՝ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում ծավալված ժողովրդավարական շարժումը 1988-1991թթ. համաշխարհային պատմության ընթացքի վրա ազդող կարեւոր գործոն էր:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Իշխանափոխության ընթացքի վավերագրեր

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ընդունված 07.11.1989թ. 1-ին համագումարում)

Մուտք

Արցախյան շարժումը բնականորեն ընդգրկեց հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր հիմնահարցերը եւ վերածվեց համազգային շարժման՝ ներգրավված մասնակիցների քանակով ու առաջադրված խնդիրների բազմազանությամբ:

Նկատի ունենալով Շարժման ծավալը, Շարժմանը գործուն մասնակցելու՝ հասարակության ամենատարբեր խավերի պատրաստակամությունը, դեռեւս 1988 թ. Օգոստոսին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն անհրաժեշտ համարեց կազմակերպական ձեւ տալ համաժողովրդական շարժմանը եւ ձեռնարկեց Հայոց Համազգային Շարժում կազմակերպության ստեղծմանը: Կոմիտեն, որպես նախաձեռնող խումբ, ժողովրդի քննարկմանը ներկայացրեց Հայոց Համազգային Շարժման ծրագիրը, որի առաջադրած գաղափարական սկզբունքները որոշակիորեն նպաստեցին ազգային խնդիրների խոր ըմբռնմանը, պայքարի քաղաքական ճիշտ ուղիների ընտրությանը, ժողովրդական առողջ ուժերի առավել կազմակերպվածությանն ու համախմբմանը:

Շարժման քաղաքական սկզբունքները հիմնականում բխում են հայ ժողովրդի նախընթաց պատմաշրջանի փորձից: Հայ ազգի գոյատեւումն ու զարգացումը պայմանավորող այդ սկզբունքները ժամանակի մեր քաղաքական գործիչների մի մասը գիտակցեց մեծ զոհեր տալուց եւ անկախ պետականությունը կորցնելուց հետո: Նախորդ 70-ամյա արտաքին ճնշման եւ ազգի ինքնուրույն զարգացման հնարավորության բացակայության պայմաններում այդ սկզբունքներն օտարվեցին հայ ժողովրդի կենսական խնդիրների ոլորտից, դեր չխաղացին ազգային կյանքի մեջ: Վերջին մե-

կուկես տարվա փորձը մեկ անգամ եւս հաստատեց այդ սկզբունքների կենսական նշանակությունը մեր ժողովրդի համար: Շարժման նպատակն է՝ նպաստել ազգի քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր հզորացմանը, որի աստիճանով է միայն պայմանավորված ազգային կարեւոր խնդիրների լուծման հնարավորությունը:

Երբ ազգն իր խնդիրները լուծելիս ապավինում է արտաքին ուժի, ապա, ինչպես ցույց է տալիս մեր պատմական փորձը, դա ոչ միայն հաջողություն չի բերում, այլեւ ամեն մի անհաջողություն ու հարված թուլացնում են ազգի վճռականությունը, խարխլում հավատը արդարության նկատմամբ, հանգեցնում ճակատագրով դատապարտված լինելու գաղափարին եւ ի վերջո կազմալուծում ազգը: Իսկ սեփական ուժերին ապավինելը ավելի ամրապնդում է ազգի վճռականությունը, հզորացնում նրան: Արդարությունը չեն մուրում, արդարությունը նվաճում են:

Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքները

1. Հայ ժողովուրդը լավագույն ձեւով կարող է դրսեւորել իր ընդունակությունները եւ կարողությունները, լուծել ազգի առջեւ ծառացած խնդիրները եւ նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը՝ վերականգնելով իր անկախ պետականությունը: Ունենալով իր անկախ պետականությունը, ապրելով առանց արտաքին ճնշման, ժողովրդավարության պայմաններում՝ ազգն ինքնուրույն պետք է որոշի իր քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքի ձեւերը: Միայն այդպիսի պայմաններում է հնարավոր պահպանել յուրաքանչյուր անհատի ի ծնե տրված իրավունքները, որոնցից կարեւորագույններն են՝ կյանքի ապահովությունը, անձնական ազատությունը եւ երջանկության ձգտումը:

2. Պետության կառավարումը պետք է իրագործվի՝ առաջնորդվելով սոցիալական արդարության, խոսքի, մամուլի, խղճի ազատության, սեփականության ձեւերի բազմազանության, բազմակուսակցականության, որեւէ կուսակցության ղեկավար դերի բացառման, հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների ազատ գործունեության վրա խարսխված ժողովրդավարության սկզբունքներով: Պետական կազմավորման գերագույն իշխանությունը ժողովրդի կամքն է՝ արտահայտված համաժողովրդական հանրաքվեներով կամ ազատ ընտրություններով ստեղծված ներկայացուցչական խորհրդարանի վճիռներով:

3. Հայ ժողովրդի գոյատեւման ու հոգեւոր զարգացման երաշխիքը եղել ու մնում է հայոց լեզուն: Առանց մայրենի լեզվի հայ ազգը դատապարտված է կործանման:

4. Դարերով հայ ժողովրդի գոյության բարոյական ու հոգեւոր զարգացման մեջ վճռորոշ դեր է խաղացել քրիստոնեական հավատքը: Վերջին տասնամյակների փորձով հաստատվեց, որ հավատի կորուստը խարխլում է ազգի բարոյական հենքը եւ անխուսափելիորեն հանգեցնում ազգային արժեքների կորստյան:

5. Ժողովուրդն իր ազգային ծրագրերն իրագործելիս պետք է ապավինի իր ուժերին՝ հույս չդնելով ուրիշի հովանավորության վրա: Սրան հակառակ ամեն մի տեսակետ ժխտվում է պատմական փորձով եւ ակամա ծառայում է մեր ժողովրդին հոգեւոր ստրկության մեջ պահելուն:

Հայոց Համազգային Շարժումը մերժում է անբարոյական եւ մեր ազգի համար անպտուղ այն քաղաքականությունը, որը, մի կողմից, իբրեւ «դիվանագիտություն»՝ ենթադրում է հավատարմության անտեղի հավաստիացումներ այլ ժողովուրդների նկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշնամություն քարոզել ուրիշ ժողովուրդների կամ կրոնների դեմ:

6. Ժողովրդի պատմության մեջ արտաքին գործոնները, անշուշտ, կարեւոր դեր են խաղում, բայց վտանգավոր է, երբ ժողովուրդն իր հաջողությունների կամ անհաջողությունների պատճառը միայն իրենց դուրս է փնտրում: Դա կազմալուծում է նրան եւ տանում ազգային ինքնավերացման: Անբարենպաստ պայմանները, արտաքին ճնշումը ժողովրդին կարող են ստիպել նահանջել, բայց այն ազգերը, որոնք իրենց մեջ ապագայի նկատմամբ հավատ, բարոյական եւ հոգեւոր ուժ են պահպանում եւ դրանք դրսեւորում վճռական պահերին, ոչ միայն ապահովում են իրենց ազգային գոյությունը, այլեւ հասնում են իրենց ազգային իղձերի իրականացմանը:

7. Ազգի գոյատեւման եւ քաղաքական հաջողությունների գրավականը ժողովրդի հոգեւոր եւ նյութական հզորությունն է, ազգային բոլոր ուժերի համախմբումը: Հայ ժողովրդի քայլերը պետք է համաչափ լինեն իր ուժերին եւ հնարավորություններին, որոնց բազմապատկումը Հայոց Համազգային Շարժման գլխավոր նպատակներից մեկն է:

8. Շարժումն ուղղված չէ որեւէ ժողովրդի դեմ: Նրա սկզբունքն է՝ խաղաղ ու համերաշխ ապրել բոլոր ժողովուրդների հետ: Սակայն խաղաղությունն ու համերաշխությունը հնարավոր են միայն միջազգային իրավական չափանիշների վրա խարսխված արդարության պայմաններում, երբ չեն ոտնահարվում որեւէ ժողովրդի իրավունքները:

9. Հայոց Համազգային Շարժումը համերաշխ է բոլոր այն շարժումների հետ, որոնք հիմնված են ինքնորոշման, ժողովրդավարության եւ սոցիալական արդարության սկզբունքների վրա, մերժում է ազգային խտրականության ու ազգայնամոլության բոլոր դրսեւորումները:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց Համազգային Շարժումը (ՀՀՇ) հասարակական-քաղաքական կազմակերպություն է, որի նպատակը ազգային պետականության վերականգնումն է:

ՀՀՇ գործելակերպը

Հայոց Համազգային Շարժումը գործում է ժողովրդավարության սկզբունքներով՝ հիմնվելով միջազգային իրավունքի չափանիշների վրա:

ՀՀՇ-ն գործուն կերպով մասնակցում է պետական եւ հասարակական մարմինների բոլոր կարգի ընտրություններին՝ նպատակ ունենալով այդ ընտրություններում արտահայտել ժողովրդի կամքը:

Ժողովրդական լայն զանգվածների հետ հաղորդակցվելու եւ իր գաղափարները քարոզելու նպատակով ՀՀՇ-ն օգտագործում է իր լրատվական միջոցները (թերթեր, ամսագրեր, թռուցիկներ, տեղեկատուներ եւ այլն):

Շարժման ծրագրում առաջադրված խնդիրների լուծման համար ՀՀՇ-ն օգտագործում է ժողովրդական պայքարի այնպիսի ձեւեր, ինչպիսիք են հանրահավաքները, գործադուլները:

Ազգային խնդիրների լուծման նպատակով ՀՀՇ-ն պատրաստ է համագործակցել պետական եւ հասարակական կազմակերպությունների հետ:

ՀՀՇ անդամությունը

ՀՀՇ անդամ կարող է դառնալ 18 տարին բոլորած յուրաքանչյուր անձ, անկախ կրոնական համոզմունքներից, ով ընդունում է ՀՀՇ գաղափարական սկզբունքները, ծրագիրն ու կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է ՀՀՇ նպատակների ու խնդիրների իրագործմանը:

ՀՀՇ-ի մեջ մտնող հասարակական-քաղաքական կազմակերպությունների անդամները չեն կարող դառնալ ՀՀՇ անհատական անդամներ:

ՀՀՇ անհատական անդամագրումը կատարում են շրջանային խորհուրդները:

ՀՀՇ անդամությունից հեռացման հարցը վերապահվում է ՀՀՇ շրջանային խորհուրդներին: Շրջանային խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել շրջանային հանձնաժողովին:

ՀՀՇ անդամն իրավունք ունի՝

- Մասնակցել կազմակերպության բոլոր մարմինների ընտրություններին եւ ընտրվել դրանցում.
- Կազմակերպել եւ անցկացնել ՀՀՇ ծրագրին եւ կանոնադրությանը համապատասխան միջոցառումներ.
- Անարգել դուրս գալ ՀՀՇ-ից՝ գրավոր դիմում ներկայացնելով շրջանային խորհրդին.
- Մասնակցել ՀՀՇ բոլոր միջոցառումներին, առաջադրված հարցերի ու խնդիրների քննարկմանը եւ առաջարկություններ անել:

ՀՀՇ անդամն ունենում է հաշվառման թերթիկ, որը պահվում է ՀՀՇ խորհրդում, եւ ստանում է անդամատոմս, մուծում անդամավճար՝ ամսական մեկ ռուբլի:

Հավաքված գումարի 25%-ը տնօրինում է սկզբնական կազմակերպությունը, 25%-ը փոխանցվում է շրջանային կազմակերպությանը, 50%-ը՝ ՀՀՇ խորհրդին:

ՀՀՇ կազմակերպական կառուցվածքը

ՀՀՇ-ն իր կառուցվածքով տարածքային եւ հասարակական կազմակերպությունների միություն է:

ՀՀՇ անդամները ստեղծում են սկզբնական կազմակերպություն՝ ըստ մասնագիտության, նախասիրության եւ տարածքային սկզբունքով: Սկզբնական կազմակերպությունը պետք է բաղկացած լինի ոչ պակաս, քան 5 անդամից: Սկզբնական կազմակերպության ժողովը կամ համաժողովը ընտրում է Խորհուրդ: Այն ղեկավարում է կազմակերպության գործունեու-

թյունը ժողովների կամ համաժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում: Խորհրդի ընտրակարգը, անդամների քանակը եւ լիազորությունները որոշում է սկզբնական կազմակերպության ժողովը կամ համաժողովը (կոնֆերանսը): Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհուրդը գանձում է անդամավճար: Սկզբնական կազմակերպության ժողովը կամ համաժողովը ընտրում է շրջանային կազմակերպության համաժողովի պատգամավորներ: Ժողովն իրավազոր է, եթե ժողովին մասնակցում է կազմակերպության անդամների կեսից ավելին:

Այն հասարակական, քաղաքական կազմակերպությունները, որոնց ծրագիրն ու կանոնադրությունը չեն հակասում ՀՀՇ ծրագրի եւ կանոնադրության հիմնադրույթներին, կարող են ընդգրկվել ՀՀՇ մեջ՝ սկզբնական, շրջանային կամ քաղաքային կազմակերպության կարգավիճակով:

Շրջանային համաժողովն ընտրում է ՀՀՇ շրջանային խորհուրդ, որը ղեկավարում է շրջանային կազմակերպության գործունեությունը շրջանային համաժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում: Խորհրդի ընտրակարգը, անդամների թիվը եւ լիազորությունները որոշում է շրջանային համաժողովը: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է խորհրդի անդամների 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀՇ ծրագիրն իրականացնում են շրջանային եւ սկզբնական կազմակերպություններն իրենց ամենօրյա գործունեությամբ:

ՀՀՇ բարձրագույն մարմինը համագումարն է: Այն գումարվում է տարին մեկ անգամ: Արտակարգ համագումար հրավիրվում է, եթե այն պահանջում է շրջանային կազմակերպությունների առնվազն 1/3-ը կամ Խորհուրդը: Համագումարի պատգամավորներ ընտրվում են շրջանային կազմակերպության համաժողովում:

ՀՀՇ համագումարը՝

- Ընդունում է ՀՀՇ ծրագիրն ու կանոնադրությունը, փոփոխություններ կատարում դրանց մեջ.
- Քննարկում եւ որոշում է ՀՀՇ գործունեության կարեւորագույն խնդիրները եւ ուղղությունները.
- Ընտրում է ՀՀՇ վարչություն, վերստուգիչ հանձնաժողով.
- Լսում է ընտրված մարմինների հաշվետվությունները եւ տալիս է դրանց գործունեության գնահատականը.

- Հաստատում է ՀՀՇ բյուջեն.
- Ընտրում է իր պաշտոնաթերթի խմբագիր եւ խմբագրական մարմիններ.
- Հաստատում է ՀՀՇ մեջ ընդգրկված հասարակական, քաղաքական կազմակերպությունների կազմը:

ՀՀՇ համագումարը որեւէ որոշում ընդունում է առկա պատգամավորների ձայների 2/3-ով: Համագումարն իրավազոր է, եթե ներկա է պատգամավորների թվի առնվազն 2/3-ը:

ՀՀՇ խորհուրդը կազմվում է ՀՀՇ վարչությունից եւ շրջանային կազմակերպությունների կարգավիճակ ունեցող կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներից: Այն գործում է համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում, քննարկում եւ լուծում է ՀՀՇ գործունեության հետ կապված բոլոր խնդիրները, բացառությամբ համագումարին վերապահված խնդիրների:

ՀՀՇ Խորհրդում շրջանային կազմակերպության լիազոր ներկայացուցիչը ընտրվում է շրջանային կազմակերպության համաժողովում: Համաժողովն իրավասու է ետ կանչել իր լիազոր ներկայացուցչին եւ նրա փոխարեն ընտրել այլ ներկայացուցիչ:

ՀՀՇ Խորհուրդը՝

- Հրավիրում է ՀՀՇ համագումար եւ որոշում է կազմակերպությունների ներկայացուցչությունն այդ համագումարում.
- Հաստատում է ՀՀՇ մեջ ընդգրկված հասարակական, քաղաքական կազմակերպությունների կարգավիճակը.
- ՀՀՇ անունից Հայաստանի Հանրապետության խորհրդարան է ներկայացնում առաջարկություններ եւ օրինագծերի նախագծեր.
- Հաստատում է ՀՀՇ տնտեսական գործունեությունը եւ հաստիքները.
- Դադարեցնում է շրջանային խորհրդի գործունեությունը, լուծարքի է ենթարկում շրջանային կազմակերպությունը:

Խորհուրդը հրավիրվում է առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաեւ ՀՀՇ վարչության որոշմամբ:

Խորհուրդը որոշումներ է ընդունում այն դեպքում, երբ մասնակցում է անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: ՀՀՇ Խորհուրդը հաշվետու է համագումարին:

ՀՀՇ վարչությունը ընտրվում է համագումարում:

Վարչությունը ՀՀՇ մեջ է ընդունում հասարակական, քաղաքական կազմակերպություններ եւ ներկայացնում Խորհրդի հաստատմանը:

Վարչությունը կասեցնում է շրջանային խորհրդի գործունեությունը մինչեւ առաջիկա Խորհրդի որոշումը:

ՀՀՇ վարչությունը՝

- կազմակերպում է ՀՀՇ համագումարը եւ Խորհրդի որոշումների իրականացումը.
- Ստեղծում է աշխատանքային խմբեր, մասնագետների հանձնախմբեր եւ այլն.
- Տնօրինում է ՀՀՇ դրամական միջոցները բյուջեի շրջանակներում եւ հաշվետու է Խորհրդին եւ համագումարին:

Վարչությունը որոշումներ է ընդունում, եթե մասնակցում է անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Վարչության նիստերը տեղի են ունենում առնվազն ամիսը երկու անգամ: Ամենօրյա գործունեության համար վարչությունը ստեղծում է համապատասխան մարմիններ:

ՀՀՇ հանձնախմբերը մշակում են ՀՀՇ գործունեության հիմնական ուղղությունները: Նրանք կազմվում են Խորհրդի անդամներից, ՀՀՇ մեջ մտնող տարբեր միությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՀՀՇ հանձնախումբն իր աշխատանքներում կարող է ներգրավել մասնագետների եւ հասարակական ներկայացուցիչների:

ՀՀՇ հանձնախմբերը՝

- վարչության հետ միասին մշակում, Խորհրդի ու համագումարի քննարկմանն են ներկայացնում առաջարկություններ եւ որոշման նախագծեր.
- Մշակում են աշխատանքային ծրագրեր.
- Նախապատրաստում են օրենքների նախագծեր եւ այլ փաստաթղթեր պետական եւ հասարակական մարմիններին ներկայացնելու համար.
- Քննարկում են հասարակությանը հուզող տարբեր հրատապ խնդիրներ եւ իրենց կարծիքը ներկայացնում են վարչությանը:

ՀՀՇ վարչության ընտրությունները կատարվում են գաղտնի քվեարկությամբ: Ընտրությունը կայացած է համարվում ձայների պարզ մեծամասնության դեպքում:

ՀՀՇ գույքը եւ դրամական միջոցները

34. ՀՀՇ-ն ունի իր գույքը եւ դրամական միջոցները:

Այդ միջոցները կազմվում են՝

- անդամավճարներից,
- կազմակերպությունների եւ մասնավոր անձանց նվիրատվություններից,
- թերթերի, խորհրդանիշ կրծքանշանների, տարբեր հրատարակությունների վաճառքից,
- տարբեր միջոցառումներից գոյացած գումարներից:

ՀՀՇ դրամական միջոցները բյուջեին համապատասխան ծախսվում են ՀՀՇ տնտեսական, կազմակերպչական եւ այլ գործունեության ապահովման նպատակով:

ՀՀՇ վարչության ֆինանսական գործունեությունը վերահսկում է վերստուգիչ հանձնաժողովը, որը ընտրվում է համագումարում: Վերստուգիչ հանձնաժողովի անդամները չեն կարող լինել Խորհրդի կազմում:

ՀՀՇ իրավական կարգավիճակը եւ խորհրդանիշը

ՀՀՇ-ն եւ նրա շրջանային կազմակերպությունները ունեն իրավաբանական անձի իրավունք:

ՀՀՇ խորհրդանիշը հաստատում է համագումարը: Այդ խորհրդանիշն օգտագործվում է բացառապես ՀՀՇ վարչության թույլտվությամբ:

ՀՀՇ վարչությունը եւ շրջանային կազմակերպություններն ունեն կնիք՝ իրենց անվանումով:

Այն հարցերը, որոնք չեն կարգավորված կանոնադրությամբ, լուծում է Խորհուրդը եւ ներկայացնում համագումարի հաստատմանը:

ՀՀԱՆԱ, թղթ. 15/06.11.1989

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(1990թ. մայիսի 20-ի ընտրություններ)

Հայոց Համազգային Շարժման նախընտրական ծրագրի հիմնադրույթները բխում են Շարժման քաղաքական սկզբունքներից եւ նպատակներից, որոնցից կարեւորագույններն են՝ անկախ պետականության վերականգնումը, համակեցության միջազգային օրենքների վրա հիմնված ժողովրդավարական հասարակարգի ստեղծումը, ազգի հզորացումը:

Տնտեսական եւ քաղաքական ճգնաժամ ապրող կայսրությունը ազատագրական պայքարի ելած ժողովուրդներին կամովին անկախություն չի շնորհի: Բռնապետության հանկարծահաս փլուզումը դրան անպատրաստ ժողովրդի համար կարող է ճակատագրական լինել:

Նկատի ունենալով մեր պայքարի մի շարք կարեւոր առանձնահատկություններ՝ կապված աղետի գոտու գերխնդիրների, փախստականների առկայության, պարբերական շրջափակման եւ Հայաստանի տնտեսական ծանր վիճակի հետ, Հայոց Համազգային Շարժումը ներկայացնում է հետեւյալ ծրագիրը, որի նպատակն է՝ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ԱՆԿԱԽ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ՝ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ:

Քաղաքական բնագավառում

Ինքնիշխան Հայաստանում հաստատել իրավական, քաղաքացիական համակարգ.

Քաղաքացիական հասարակարգի ստեղծում.

Ա) Հասարակական կյանքի ապապետականացում.

Մինչեւ անհրաժեշտ նվազագույնի աստիճանը հստակորեն սահմանել բոլոր մակարդակների իշխանության եւ կառավարման մարմինների լիազորությունների շրջանակները, որոնցից դուրս գործում է անհատի եւ խմբերի միայն օրենքով սահմանվող նախաձեռնությունը,

Կտրուկ կրճատել կառավարման համակարգի աշխատողների քանակը եւ կառավարման ավելորդ կառուցվածքները (վերացնել ագրոարդը (ագրոարդյունաբերական համալիր), ժողվերահսկողության կոմիտեն,

ճյուղային մինիստրությունները եւ այլն), խոշորացնել հանրապետության վարչատարածքային միավորները:

Բ) Հասարակական կյանքի ապակուսակցականացում.

- իրավահավասար պայմաններ ապահովել բոլոր կուսակցությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության համար,

օրենքով արգելել կուսակցական պատկանելությունը վարչական եւ դատական մարմիններում պաշտոնները համատեղելու հետ,

կառավարության եւ իշխանության մարմիններում, հիմնարկ-ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում արգելել քաղաքական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը,

ԽՄԿԿ-ից առգրավել նրա սեփականության այն մասը, որը ձեռք է բերվել ոչ թե կուսակցական, այլ պետական կամ հասարակական միջոցների հաշվին:

Ամրապնդել Հայաստանի ինքնիշխանությունը.

Հանրապետության տարածքում գործում են միայն նրա Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքները, բացառվում է այնպիսի օրակների գոյությունը, որոնք ղեկավարվում են դրսից,

Ստեղծել Գերագույն խորհրդին անմիջապես ենթարկվող զորամիավորումներ, որոնց հիմքը պետք է կազմեն գոյություն ունեցող ինքնապաշտպանական ջոկատները,

Դիվանագիտական կամ այլ ներկայացուցչություններ ստեղծել արտասահմանյան երկրներում, ԽՍՀՄ հանրապետություններում, Ռուսաստանի տարբեր երկրաշրջաններում, ինչպես նաեւ միջազգային հեղինակավոր կազմակերպություններում:

Իրավական պետություն.

Տարանջատել օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների ֆունկցիաները, ապահովել օրենքի գերակայությունը քաղաքական, տնտեսական եւ այլ ոլորտներում,

Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները խստիվ համապատասխանեցնել միջազգային իրավունքի եւ քաղաքացիների հիմնական ազատությունների համընդհանուր ճանաչում գտած նորմերին:

Ժողովրդավարություն.

Երաշխավորել քաղաքացիների, քաղաքական կուսակցությունների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների խոսքի, մամուլի, միտինգների, ցույցերի ազատությունը,

1,5-2 տարի հետո անցկացնել իշխանության բոլոր մարմինների ընտրություններ ըստ կուսակցությունների պլատֆորմների եւ ցուցակների,

Հայաստանը բոլոր հայերի հայրենիքը դարձնելու նախապայմաններ ստեղծել՝ համապատասխան փոփոխություններ մտցնելով քաղաքական համակարգի եւ օրենսդրության մեջ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հանրապետության տնտեսական կարողությունները եւ տնտեսության զարգացումը ամբողջությամբ պետք է տնօրինի եւ իրականացնի Հայաստանի կառավարությունը: Անհրաժեշտ է լուծել հետեւյալ խնդիրները.

Ա) Հնարավորին չափ սեղմ ժամկետներում հանրապետությունում ստեղծել ազատ նախաձեռնության համակարգ: Դրա իրականացման առաջին քայլը՝ հողը հանձնել հողագործին:

Պետության տնօրինմանն են մնում այն ձեռնարկությունները, որոնք դուրս են ազատ նախաձեռնության համակարգից:

Բ) Մշակել եւ իրականացնել հանրապետության արտադրական ուժերի զարգացման ծրագիր, որը ներառում է երկու նպատակ.

1. արդյունավետ գործող համաշխարհային եւ ռեգիոնալ տնտեսությունների հետ ինտեգրացման հեռանկարով համալիրի կազմավորումը,

2. հանրապետությանը պարտադրված գաղութային տնտեսության համակարգի հաղթահարումը եւ միասնական ժողովրդատնտեսական համալիրի ստեղծումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սոցիալական անարդարության առկայության եւ հասարակական-քաղաքական ու տնտեսական վերափոխումների պայմաններում անհրաժեշտ է ստեղծել հասարակության անդամների սոցիալական պաշտպանվածության համակարգ, որը պետք է բավարարի ներքոհիշյալ պահանջները.

Ա) բնակչության նվազագույն եկամուտների հաշվարկում եւ բավարար կենսամակարդակի ապահովում,

Բ) սոցիալական ապահովվածության հատուկ երաշխիքներ անհատին եւ նրա ընտանիքի անդամներին, արժանապատիվ կյանքի եւ աշխատանքի պայմանների ստեղծում,

Գ) արդյունավետ զբաղվածության պետական հովանավորում, գործազուրկների համար սոցիալական երաշխիքների ապահովում,

Դ) բնակչության ցածր սոցիալական պաշտպանվածություն ունեցող շերտերի՝ կանանց, երեխաների, հաշմանդամների, թոշակառուների սոցիալական խնդիրների առաջնահերթ լուծում:

Սոցիալական նշված քաղաքականության իրագործմանը զուգահեռ անհրաժեշտ է նաեւ նպատակային ժողովրդագրական քաղաքականության մշակում եւ կիրառում:

ՀՈԳԵՒՈՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Երկարատեւ հոգեւոր ստրկությունը, ազգային իրավունքների եւ արժանապատվության ոտնահարումը, հոգեւոր-մշակութային սեփական արժեքներից ազգի բռնի օտարումը բացասաբար են անդրադարձել ժողովրդի բարոյական նկարագրին: Մեր հոգեւոր ապաքինման, անկախ գոյության, ուրեմն եւ՝ գոյատեւման նախադրյալն է վերադարձը ազգային արմատներին, հայեցի մտածողությանը, որը նաեւ մեր մտավոր կարողությունների դրսեւորման ու զարգացման հիմքն է:

Այսօր առանց հապաղելու անհրաժեշտ է իրագործել մի քանի կարեւոր խնդիրներ.

Ա) Հայաստանի պառլամենտը պետք է օրենք հրապարակի հայ երեխաներին պարտադիր հայեցի կրթություն տալու մասին: Հայաստանի ողջ տարածքում պաշտոնական գրագրությունը պետք է լինի հայերեն,

Բ) հայ ազգային դպրոցի վերականգնումը անհետաձգելի խնդիր է: Անհրաժեշտ է կարճ ժամկետում ստեղծել կրթության ազգային ծրագիր, կազմել հայերեն դասագրքեր հայերեն մտածողությամբ,

Գ) եկեղեցական գործերի խորհրդի վերացումով հայ եկեղեցին պետք է անջատվի պետությունից, եկեղեցուն վերադարձվի նրա ունեցվածքը,

Դ) ազգային մշակույթի, գիտության ու արվեստի զարգացման համար անհրաժեշտ է օգտագործել համայն հայության մտավոր ուժերը,

Ե) գործնական միջոցներ ձեռնարկել հանրապետության սահմաններում ու նրանից դուրս գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների պահպանության ու փրկության համար,

Զ) օգտագործել բոլոր հնարավորությունները՝ սփյուռքի հետ ամրապնդելու գիտական, մշակութային ու տնտեսական կապերը: Հայ գաղթօջախներին օգնել հայապահպանության գործում, ուղարկել Հայաստանում լույս տեսած գրականություն, դասագրքեր:

ԱՂԵՏԻ ԳՈՏԻ

Աղետի գոտու վերականգնումը համազգային խնդիր է, որի իրականացման համար պահանջվում է տնտեսական հատուկ քաղաքականություն.

Ա) հանրապետության կառավարությունը, որպես պատվիրատու, պետք է տնօրինի վերականգնման բոլոր աշխատանքներն ու նյութատեխնիկական միջոցների ապահովման հարցերը, բացառությամբ նվիրատվության կարգով կատարվող աշխատանքների,

Բ) կառավարությունը պետք է պայմանագրեր կնքի տուժած բնակչության, ավերված արտադրական ու սոցիալական կառույցների ներկայացուցիչների հետ՝ բնակելի տներն ու արտադրական շենքերը շահագործման հանձնելու մասին՝ նախատեսելով որոշակի փոխադարձ պարտավորություններ,

Գ) անհրաժեշտ է ապահովել աղետի գոտու բնակչության գործուն մասնակցությունը վերականգնման աշխատանքներին՝ աշխատանքային խմբերին եւ քաղաքացիներին տրամադրելով դրամ եւ նյութատեխնիկական միջոցներ:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ

Ելնելով հանրապետության արտադրական ուժերի, քաղաքական եւ տնտեսական զարգացման սկզբունքներից ու նպատակներից, անհրաժեշտ է մշակել փոքր քաղաքների եւ քաղաքատիպ ավանների զարգացման հեռանկարային ծրագիր, որը հնարավորություն կտա լուծելու փախստականների սոցիալ-տնտեսական պրոբլեմները, հաշվի առնելով այն իրողությունը, որ նրանց ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ են: Նրանց ժամանակավոր տեղաբաշխումն անհրաժեշտ է կատարել գյուղական այն վայրերում ուր նախատեսված են կառուցել նշված քաղաքներն ու քաղաքատիպ ավանները: Սա հնարավորություն կտա, որ փախստականներն իրենք կառուցեն իրենց տները, մասնակցեն այդ կենտրոնների զարգացման գործին:

Նրանց պետք է ցուցաբերվի համակողմանի օգնություն:

Հանրապետության կառավարությունը պետք է վճռական միջոցների դիմի, որպեսզի Ադրբեջանի կառավարությունը եւ կենտրոնական իշխանությունները (փախստականի կարգավիճակ ստանալու դեպքում) փոխհատուցեն բռնագաղթված ու թալանված հայ ժողովրդի այս հատվածի նյութական կորուստները:

Բոլոր նրանց, ովքեր միտումնավոր կերպով մոռացության են մատնել 1989թ. դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Արցախի Ազգային խորհրդի համատեղ պատմական որոշումը Արցախի եւ Հայաստանի վերամիավորման մասին.

Վերոհիշյալ բոլոր հիմնադրույթները վերաբերում են վերամիավորված Հայկական Հանրապետությանը:

«Հայք» 13.05.1990

ԿՈՉ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ

Սիրելի հայրենակիցներ,

Քաղաքական, սոցիալական, եւ տնտեսական խոր ճգնաժամի մեջ գտնվող խորհրդային երկիրն այսօր ունի զարգացման երկու հնարավոր ուղի: Առաջինը համակարգի անարյուն հեղաշրջման ցանկալի ուղին է, որով հաջողությամբ ընթացան Արեւելյան Եւրոպայի երկրներն ու Մերձբալթյան հանրապետությունները, իսկ երկրորդը՝ բռնի ուժի միջոցով ամբողջատիրական իրավակարգը փրկելու ձգտումը, որ դրսեւորվեց Չինաստանում եւ Ռումինիայում:

Իրադարձությունների ծավալման երկու հնարավոր դեպքերում էլ ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունն իր առջեւ ծառացած կենսական խնդիրներն ի վիճակի կլինի լուծել միայն ինքնուրույն քաղաքականություն վարելու ընդունակ ազգային իշխանության առկայության պայմաններում:

Յոթանասուն տարի շարունակ կայսրության տեղական դրածոները, անխնա կերպով վատնելով մեր ազգային հարստությունները, իլու հնազանդ ծառայել են օտարի շահերին՝ որպես հատուցում օգտվելով սեփական ժողովրդին կեղեքելու լիակատար իրավունքից:

Հասել է ժամը՝ թոթափելու գաղութային լուծը, ազատվելու սեփական հարստահարիչներից, վերագտնելու մեր ազգային արժանապատվությունը:

Հասել է ժամը՝ դնելու մեր անկախ պետականության հաստատման հիմքերը, արժանի տեղ զբաղեցնելու ազատ ժողովուրդների համերաշխ ընտանիքում:

Հասել է, վերջապես, ժամը՝ ստեղծելու այդ բաղձալի նպատակների իրականացման անհրաժեշտ նախապայմանը՝ մեր ազգային խորհրդարանը, որը պետք է դառնա համայն հայության շահերի հուսալի երաշխավորը:

Մեզանից յուրաքանչյուրն այսօր պետք է զգա այն ահռելի անձնական պատասխանատվությունը, որ կրելու է վաղվա խորհրդարանի գործունեության համար:

Մենք ենք մեր բախտի կողմները, եւ միայն մեր ճիշտ կողմնորոշումից է կախված մեր ժողովրդին արժանի իշխանության ստեղծումը:

Դրա համար անհրաժեշտ է ընդամենը գիտակցել մեկ պարզ ճշմարտություն. Ազգային խորհրդարանում չպետք է տեղ գտնեն անցյալի գործունեությամբ սնանկության մատնված իշխանության ներկայացուցիչները՝ կուսակցական-պետական բարձրաստիճան պաշտոնյաները, բյուրոկրատները, կաշառակերները եւ ծառայամիտ մտավորականները:

Խորհրդարանի ընտրությունները պետք է դառնան մեր երկամյա ազգային-ազատագրական պայքարի, մեր ժողովրդի քաղաքական գիտակցության ստուգատեսը:

Բոլորս դեպի ընտրություններ՝ հանուն հայ ժողովրդի իղձերի իրականացման:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«Հայք» 19.05.1990

ՄՈՍԿՎԱՅԻ ՈՃՐԱԳՈՐԾ ՍԱԴՐԱՆՔԸ

(30 մայիսի, 1990թ.)

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների առաջին փուլը պարզորոշ կերպով ցույց տվեց, որ Հայաստանը կարող է դառնալ Խորհրդային Միության չորրորդ հանրապետությունը, որտեղ կարող է ստեղծվել ինքնուրույն քաղաքականություն վարող ազգային իշխանություն: Դրանով փաստորեն մեր ժողովրդի առջեւ բացվում է յոթանասունամյա գաղութային լծի թոթափման եւ անկախ զարգացման շոշափելի ուղին, որ, հասկանալի է, ամենեւին չի մտնում կայսրության ու նրա տեղական կամակատարների հաշիվների մեջ:

Երկու տարի շարունակ փորձելով վարկաբեկել մեր արդարացի սահմանադրական շարժումը, բռնությունների, ձերբակալությունների միջոցով ջլատել նրա ուժերը, Կենտրոնին ու նրա դրածոներին այնուամենայնիվ չհաջողվեց կասեցնել այն բնական գործընթացը, որ սպառում է իր տրամաբանական վախճանին՝ ազգային խորհրդարանի ձեւավորմանը: Դրանով է բացատրվում այն հիվանդագին տենդը, որ Հայաստանում եւ Արցախում կայացած ընտրություններից հետո համակել է կենտրոնական ու տեղական իշխանություններին: Վերջին օրերս տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները ցույց են տալիս, որ ընտրությունների առաջիկա փուլերում դրությունը փրկելու համար նրանք պատրաստ են ցանկացած նողկալի քայլի, անգամ արյունահեղության, որի պերճախոս վկայությունն է դեպքերի հետեւյալ տրամաբանական շղթան.

Մայիսի 22–23-ին Հայաստանի բոլոր ղեկավարները՝ Վ. Մովսիսյանը, Հ. Ոսկանյանը եւ Վ. Մարգարյանցը կանչվում են Մոսկվա:

Մայիսի 23-ի երեկոյան Ստեփանակերտում չպարզված հանգամանքներում սպանվում է 17-ամյա մի հայ պատանի:

Մայիսի 24-ի առավոտյան Բաքվից Ստեփանակերտ ժամանած մի հանձնաժողով անօրինական ստուգումներ է կատարում քաղաքի բնակոցբանկում, առիթ տալով բնակիչների զայրույթին եւ ներքին զորքերի ստորաբաժանումների ու քաղաքացիների բախմանը:

Նույն օրը երեկոյան եւ հաջորդ օրվա լույս գիշերը ներքին զորքերի ստորաբաժանումները զրահամեքենաներով եւ ավտոմատային հրաձգությամբ լայնածավալ ահաբեկչական գործողություն են ձեռնարկում Ստեփանակերտի փողոցներում, որի հետեւանքով զոհվում է մեկ եւ վիրավորվում 9 մարդ: Պատասխան կրակից սպանվում է նաեւ մեկ եւ վիրավորվում 4 զինվոր:

Մայիսի 25-ին Երեւանի Ազատության հրապարակում տեղի ունեցած միտինգում խստորեն դատապարտվում է զորքերի սանձազերծած վայրագությունը Ստեփանակերտում եւ կոչ է արվում, հավատարիմ մնալով քաղաքական պայքարի մեթոդներին, պատրաստ լինել դիմագրավելու բռնության հետագա փորձերը:

Մայիսի 26-ին Երեւան են ժամանում միութենական իրավապահ մարմինների մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ԽՍՀՄ ներքին գործե-

րի մինիստրի տեղակալ Շիլովը, ներքին զորքերի հրամանատար Շատալինը, պետական անվտանգության կոմիտեից՝ Լուկինը եւ ուրիշներ:

Մոսկվայից ժամանած պաշտոնյաների եւ Հայաստանի ղեկավարության հետ նույն օրը կայացած մեր հանդիպումներից պարզվում է, որ նրանք իբր ահազանգ են ստացել, թե մայիսի 27–28-ին Երեւանում տեղի են ունենալու զանգվածային անկարգություններ, մասնավորապես փորձ է արվելու տապալել Լենինի արձանը, կազմակերպել անկախության օրվան նվիրված աշխարհազորային շքերթ, գրավել կառավարական շենքը եւ այլն:

Մայիսի 26-ի երեկոյան կենտրոնական ռադիոն եւ «ժամանակ» հեռուստատեսային ծրագիրը տարածում են սադրիչ հաղորդագրություններ, թե իբր նախորդ օրվա միտինգում հնչել են հակասահմանադրական գործողությունների դիմելու կոչեր, որոնց հետեւանքով Հայաստանում սպասվում են լուրջ իրադարձություններ:

Փորձից գիտենալով նման հաղորդագրությունների սադրիչ նպատակը, Հայոց համազգային շարժման վարչությունը անմիջապես իր բողոքն է հայտնում Մոսկվայից ժամանած պաշտոնական անձնավորություններին եւ ահազանգում օտար լրատվական գործակալություններին՝ Հայաստանում ծրագրվող պատժիչ գործողությունների հնարավորության մասին:

Մայիսի 27-ի առավոտյան Երեւանի երկաթուղային կայարանում լուրջ բախում է տեղի ունենում երկաթուղու զինվորական պահակախմբի եւ մի զինված ջոկատի միջեւ, որի հետեւանքով զոհվում է վեց քաղաքացի եւ վիրավորվում տաս զինվոր: Կայարանն անմիջապես շրջապատվում է զրահապատ մեքենաներով եւ ներքին զորքերի հոծ շղթայով: Աշխարհազորի եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ակտիվիստների միջամտության եւ քաղաքացիների զգոնության շնորհիվ միջադեպը հաջողվում է տեղայնացնել եւ զսպել կրքերը:

Կայարանամերձ հրապարակից հեռանալուց հետո զինվորականները, ստեղծելով լարվածության նոր օջախ, շրջապատում են Էրեբունի թաղամասի հիվանդանոցի դիահերձարանը, ուր տեղափոխվել էին զոհվածների մարմինները:

Զորքերի համալրումը խոչընդոտելու նպատակով զինված երիտասարդների մի խումբ փորձում է փակել Նուբարաշեն (Սովետաշեն) Երեւան խճուղին: Զրահապատ մեքենաները ճեղքում են շրջափակումը եւ, թափանցելով Էրեբունի թաղամաս, անկանոն կրակ են բացում բնակելի շենքերի վրա, որի հետեւանքով զոհվում է 17 եւ վիրավորվում շուրջ 40 քաղաքացի: Բախման ընթացքում զոհվում է նաեւ մեկ սպա: Հայոց համազգային շարժման ղեկավարների եւ աշխարհազորի մի շարք հրամանատարների ներդրած ահռելի ջանքերի գնով հաջողվում է դադարեցնել փոխհրաձգությունը եւ խուսափել ավելի մեծ արյունահեղությունից:

Էրեբունի թաղամասում տեղի ունեցող արյունալի միջադեպի ընթացքում եւ դրանից հետո էլ երկու զրահապատ մեքենա ակնհայտորեն սադրիչ նպատակով սուրում են Երեւանի կենտրոնական փողոցներում՝ հավանաբար պատրվակ փնտրելով ընդարձակելու միջադեպի սահմանները:

Նույն օրը երկու հսկայական զինվորական ավտոշարասյուն Կարմիրից եւ Իջեւանից շարժվում են դեպի Երեւան եւ Հոկտեմբերյան:

Բնակչության մեջ նոր գրգռություն չառաջացնելու նպատակով Հայոց համազգային շարժման ներկայացուցիչների եւ գեներալ Շատալինի միջեւ կայացած պայմանավորվածությամբ ավտոշարասյուները դադար են առնում Երեւանի մատույցներում, Սեւանի խճուղում:

Մայիսի 28-ի վաղ առավոտյան զինվորականների կամ խորհրդային բանակի համազգեստ հագած անհայտ մարդկանց կողմից գնդակոծվում է Հայոց համազգային շարժման շենքը եւ սպանվում գետաշենցի մի երիտասարդ, որը գիշերում էր շենքի առջեւ կանգնած մարդատար ավտոմեքենաներից մեկում:

Մայիսի 28-ի՝ լույս 29-ի ողջ գիշերը ռազմական զինավարժության պատրվակով գրգռիչ հրաձգություն է տեղի ունենում քաղաքի զինվորական կայազորում, որը կրկնվում է նաեւ հաջորդ գիշերը:

Դեպքերի նմանօրինակ զարգացումը ակնհայտորեն ցույց է տալիս, որ մենք գործ ունենք արհեստականորեն ստեղծված աժիոտաժի եւ բծախնդիր կերպով ծրագրված սադրիչ գործողության հետ, որ հետապնդում է միանգամայն անբարոյական եւ նենգ նպատակ, այն է՝ թափելով անմեղ մարդկանց արյունը, Շարժման դեմ տրամադրել մեր ժողովրդին եւ դրանով վիժեցնել դեմոկրատական ուժերի հաղթանակը հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններում:

Այսպիսով, զուտ քաղաքական նպատակով, ա.թ. մայիսի 23-28-ին, կենտրոնական եւ տեղական իշխանությունների որոշ շրջանակների հանցավոր համագործակցությամբ, հայ ժողովրդի դեմ կատարվել է հրեշավոր ոճրագործություն, որին նախնական տվյալներով զոհ է գնացել 26 եւ վիրավորվել շուրջ 60 մարդ:

Հանուն արդարության՝ բոլոր ոճրագործները պետք է նստեն մեղադրյալի աթոռին: Սակայն դրանով չէ, որ պետք է իմաստավորվի անմեղ

զոհերի թափված արյունը: Այդ արյունը կիմաստավորվի միայն այն ժամանակ, երբ մեր ժողովուրդը մի բռունցք դարձած՝ կվիժեցնի կայսերապաշտ ուժերի քաղաքական ծրագրերը եւ ազգային իշխանության հաստատմամբ կդնի մեր անկախ պետականության հիմքերը:

Ստորագրված՝ «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե,
Հայոց համազգային շարժման վարչություն»:

«Հայք», 30 մայիսի, 1990 թ.:
Հեղինակել է Լեւոն Տեր-Պետրոսյանը
(տե՛ս «Ընտրանի», էջ 93-96):

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(6 օգոստոսի, 1990թ.)

Սիրելի հայրենակիցնե՛ր:

Հայ ժողովրդի պատմության այս խռովահույզ, միաժամանակ հերոսական օրերին, դիմելով Ձեզ, ես իմ պարտքն են համարում գլուխ խոնարհել Ձեր հոգեկան կորովի, Ձեր զոհողությունների, Ձեր զգաստության առջեւ, որ Դուք դրսեւորեցիք մեր ազգային ազատագրական պայքարի ներկա փուլի հորձանուտում:

Ձեր բոլորանվեր ջանքերը, Ձեր կրած հալածանքները, զրկանքները, Ձեր վճռականությունն ու հաստատակամությունը նշանավորվեցին պատմական հաղթանակով, որ հաղթանակն է արդարության, դեմոկրատիայի եւ ազգային արժանապատվության:

Ես շնորհավորում եմ Ձեզ հայոց անկախ պետականության հիմնարկեքի առիթով՝ կիսելով Ձեր տոնական ցնծությունը եւ սեփական ուժերի նկատմամբ վերագտած վստահությունը, որ միակ հույսն է գալիք հաջողությունների:

Դրա հետ մեկտեղ, կոչ եմ անում սառնասրտորեն գնահատել մեր հանրապետության ներկա ճգնաժամային իրավիճակը, որից դուրս գալու

միակ գրավականը ժողովրդի համախմբումն է պետականության գաղափարի եւ նրա մարմնավորումը հանդիսացող ազգային խորհրդարանի շուրջ:

Ես վստահ եմ, որ մենք ի վիճակի ենք կարճ ժամանակամիջոցում սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքին վերաբերող բարդ խնդիրները եւ կարգավորելու ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը, պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը: Հիմք ունեմ ակնկալելու նաեւ, որ միութենական իշխանությունները ըմբռնումով կընկալեն մեր դիրքորոշումը:

Կոչ եմ անում բոլոր աշխարհազորայիններին՝ հավատարմության երդում տալ հանրապետության գերագույն իշխանության ատյանին եւ, մոռանալով ներքին հակասությունները, ձեռնպահ մնալ որեւէ անխոհեմ գործողությունից: Հարկադրված եմ հիշեցնել, որ մեր պետականության կայացումը վտանգող ոչ մի արկածախնդրություն չի ներվի ժողովրդի կողմից:

Կոչ եմ անում իրավապահ մարմիններին, հենվելով աշխարհազորի հիմնական մասը կազմող առողջ ուժերի վրա, ապահովել օրինականությունը հանրապետության տարածքում, որովհետեւ այսօր ոչ թե հռչակագրերով ու արմատական օրենսդրական նախաձեռնություններով, այլ իրադրությանը տիրապետելու կարողությամբ է, որ մենք աշխարհին պետք է ապացուցենք մեր ազգային իշխանության գոյությունը:

Եւ վերջապես կոչ եմ անում մեր ժրաջան աշխատավորությանը՝ ազգային-քաղաքական իղձերի իրականացման խնդիրները լիովին վստահել հանրապետության խորհրդարանին, վերագտնել իր հոգեկան անդորրը եւ լծվել խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, առանց որի սնանկ է ցանկացած ծրագիր, ցանկացած հեռանկար:

Մեզ սպասում է հուսալի ապագա, բայց այդ ապագան մե՛նք պետք է կերտենք:

ՀԽՍՀ ԳԽ Տեղեկագիր, 1990, 15, հոդվ. 229

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

«Կոլցո» ռազմական գործողություն եւ «ԳԿՉՊ»*

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Մ.Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

(22 ապրիլի, 1991)

ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս. Գորբաչովին, փոխպրեզիդենտ Գ.Ի. Յանաեւին, պրեմիեր-մինիստր Վ.Ս. Պավլովին, ՊԱԿ նախագահ Վ.Ա. Կրյուչկովին, պաշտպանության նախարար Դ.Տ. Յազովին, ՆԳ նախարար Բ.Կ. Պուգոյին, գերագույն խորհրդի նախագահ Ա.Ի. Լուկյանովին, անվտանգության խորհրդի անդամներ Ե.Մ. Պրիմակովին, Վ.Վ. Բակատինին, Ա.Ն. Յակովլեւին.— Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբադից, Ազատից, Կամոյից եւ այլ բնակավայրերից ողջ հայ բնակչության անպատիժ ու բռնի տեղահանությունը հանգեցրեց վերջին տարվա ընթացքում տարածաշրջանում հաստատված ստատուս-քվոյին: Ղարաբաղում եւ նրա շուրջ ստեղծված իրավիճակի կայունացման ցանկացած փորձ այսօր ապարդյուն կլինի, եթե ստատուս-քվոն խախտվի, նկատի ունենալով, առաջին հերթին, հայաբնակ Շահումյանի շրջանի, Գետաշենի ենթաշրջանի եւ Բերդաձոր գյուղի ճակատագիրը: Ստատուս-քվոյի խախտումն անխուսափելիորեն կհանգեցնի շղթայական ռեակցիայի եւ այնպիսի բարդությունների, որոնք գործնականորեն անհնար կդարձնեն կառուցողական երկխոսությունն ու հարցի քաղաքական լուծումը:

ԼՂԻՄ-ում եւ հարակից ադրբեջանական վարչական շրջաններում Արտակարգ դրության հաստատումը, թվում էր, թե տարածաշրջանի բնակչության պաշտպանության եւ անվտանգության ու դրանով՝ ստատուս-քվոյի պահպանման կոնկրետ նպատակ էր հետապնդում: Սակայն վերջին օրերին Գետաշենից, Մարտունաշենից եւ այլ բնակավայրերից հայ

---

* *Այս «Հավելվածի» փաստաթղթերը, ծանոթագրություններով հանդերձ, քաղում ենք «Գիտությունը եւ նախագահը. Լեւոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ» գրքից (Երեւան, Անտարես, 2020), էջ 507-519):*

բնակչության տեղահանման լայնամասշտաբ գործողությունները սկսեցին իրականացվել իրավապահ մարմինների մասնակցությամբ 1991թ. ապրիլի 16-ին տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում Մութալիբովի տված ցուցումներից եւ Պոլյանիչկոյի կողմից Գետաշենի ենթաշրջան կատարած այցելությունից անմիջապես հետո: Բնիկ հայ բնակչության տեղահանման սադրիչ գործողություններն, ինչպես երկու տարի առաջ, իրականացնում է ներքին զորքերի հրամանատար Յ.Վ. Շատալինը, ով իր հակահիրավական քայլերն արդարացնելու համար փաստերի կեղծմամբ ապատեղեկացնում է երկրի ղեկավարությանն ու հասարակությանը:

Ներկա պահին Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը, Բերդաձորը գտնվում են լիակատար շրջափակման մեջ, դադարեցված են նույնիսկ ուղղաթիռների թռիչքները, բնակչությանն էլեկտրաէներգիա, խմելու ջուր եւ սննդամթերք չի մատակարարվում: Անհնար է դարձել վիրավորների ու ծանր հիվանդների տեղափոխումը կենտրոնական հիվանդանոցներ:

Մինչեւ տարածաշրջանում կատարված հանցագործությունների հետաքննումը անհրաժեշտ է Գետաշենից ու Մարտունաշենից անմիջապես դուրսբերել ադրբեջանական օմոնականներին ու Ադրբեջանի ՆԳՆ ենթակայության տակ գտնվող բոլոր զինյալ կազմավորումները, եւ Գետաշենի ենթաշրջանը ենթարկել Արտակարգ դրության հրամանատարին: Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյան:

Ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 02/22.04.1991:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Մ.Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

(7 մայիսի, 1991)

ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս. Գորբաչովին.— Հարգելի Միխայիլ Սերգեեւիչ, ի պատասխան մեր հանդիպման արձանագրության ձեր առաջարկած նախագծի, հաղորդում եմ, որ, իմ կարծիքով, կոնֆլիկտի լուծման խնդրում դրական արդյունքների կարելի է հասնել՝ պահպանելով ներքոհիշյալ պայմանները.

1. ԽՍՀՄ սահմանադրությանը համապատասխան ԽՍՀՄ պրեզիդենտը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները ապահովելու Ադրբեջանական ԽՍՀ-ի Գետաշեն (Զայքենդ) եւ Մարտունաշեն գյուղերի բնիկ բնակչության անվտանգությունը եւ երաշխավորում, որ այդ բնակչությունը չի կարող տեղահանվել ոչ մի պարագայում:

2. Ապահովվում է սննդամթերք, դեղորայք եւ բուժօգնություն ցույց տալու համար մասնագետներ փոխադրող ուղղաթիռների անարգել վայրէջքը:

3. Գետաշեն եւ Մարտունաշեն բնակավայրերը ընդգրկվում են Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի կազմի մեջ, միաժամանակ դրանց վրա տարածելով ԼՂԻՄ-ի հատուկ շրջանի պարետի լիազորությունները:

4. Այս պայմանների ճշտիվ եւ անշեղ պահպանման դեպքում հայկական կողմը առավելագույն ջանքեր կգործադրի եւ իր տնօրինության տակ եղած բոլոր միջոցները կօգտագործի զինված դիմակայությունը դադարեցնելու համար:

Ես հաշվի եմ առնում ստեղծված իրադրության բարդությունը եւ, այդուհանդերձ, այն կարծիքին եմ, որ կոնֆլիկտի լուծմանը մասնակցող բոլոր կողմերի բարի կամքի առկայության դեպքում առաջարկված պայմանները միանգամայն իրագործելի են:

Ծանոթություն. Ծայրաստիճան տարակուսանք եմ հայտնում, որ Ձեր առաջարկած նախագծի տեքստում Մարտունաշեն գյուղն ամենեւին չի հիշատակվում: Դրանից արդյո՞ք պետք է այն հետեւությունն անել, թե Ադրբեջանական ԽՍՀ-ի Խանլարի շրջանի Մարտունաշեն գյուղն այլեւս գոյություն չունի: Հարգանքներով՝ Լեւոն Տեր-Պետրոսյան:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 07.05.1991թ.:
Ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 02/07.05.1991:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

(7 մայիսի, 1991թ.)

Խորհրդային Միությունը փաստորեն պատերազմ է հայտարարել Հայաստանի Հանրապետությանը: Խորհրդային բանակը շարունակում է իր պատժիչ գործողությունները Հայաստանի տարածքում: Ադրբեջանի տարածքում տեղաբաշխված ԽՍՀՄ զինված ուժերի 4-րդ բանակի ստո-

ռաբաժանումները այսօր հիմնահատակ ոչնչացրել են Հայաստանի Հանրապետության Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղը: Ավերվել են բոլոր տները, հրկիզվել մերձակա այգիներն ու անտառները: Կան տասնյակ սպանվածներ:

Ուղղաթիռներից գնդակոծվել են նաեւ Հայաստանի Գորիսի շրջանի մի քանի գյուղեր:

Անդրկովկասի զինվորական օկրուգի հրամանատար Գեներալ-գնդապետ Պատրիկեեւը Գեներալ-լեյտենանտ Պիշչեւի միջոցով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Աշոտ Մանուչարյանին հաղորդել է, որ այդ գործողությունը կատարել է ոչ թե խորհրդային բանակը, այլ ադրբեջանական իշխանություններին ենթակա ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 07.05.1991թ.:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Լ.Մ. ԿՐԱՎՉՈՒԿԻՆ

Մեծարգո Լեոնիդ Մակարովիչ, ինչպես Ձեզ հայտնի է, 1991 թվականի ապրիլի 25-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց հարց հարուցել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարի հրավիրման վերաբերյալ՝ Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանի որոշ հայաբնակ շրջաններում եւ Հայաստանի Հանրապետության՝ Ադրբեջանին սահմանակից գոտում ստեղծված արտակարգ իրավիճակը քննարկելու համար:

Դրա համար հիմք է ծառայել այն փաստը, որ ԽՍՀՄ ներքգործնախարարության ներքին զորքերը Ադրբեջանի միլիցիայի հատուկ ջոկատների հետ համատեղ խորհրդային բանակի ստորաբաժանումների աջակցությամբ, տանկերի եւ հրետանու, կիրառմամբ սկսել էին աննախադեպ լայնընդգրկուն ձեռնարկում, որի նպատակն է բռնությամբ տեղահանել հայ բնակչությանը Գետաշեն (Զայքենդ), Մարտունաշեն գյուղերից եւ այլ բնակավայրերից: ԽՍՀՄ ներքգործնախարարության ներքին զորքերի եւ ադրբեջանական հատուկ ջոկատների ստորաբաժանումները Գետաշեն (Զայքենդ) եւ Մարտունաշեն գյուղերում խաղաղ բնակիչների ջարդեր սարքեցին: Սպանվել է առնվազն 36 մարդ: Կան բազմաթիվ ծանր վիրավորներ, որոնց թույլ չեն տալիս բուժօգնություն ցույց տալ: Վերցվել են պատանդներ, որոնք ենթարկվում են բարբարոսական խոշտանգումների: Գյուղերում կողոպտվել եւ ոչնչացվել են պարենի պաշարները: Մարդկային զոհերի, վիրավորների, անհետ կորածների, քանդված եւ հրկիզված տների թիվը օրեցօր մեծանում է:

Ադրբեջանի ղեկավարությունը, օգտվելով կենտրոնի հովանավորությունից, ռուս, ուկրաինացի, բելառուս զինվորների ձեռքով փորձում է արյամբ լուծել իր քաղաքական հարցերը: Իսկ կենտրոնի համար դա մեր հանրապետությանը «պատժելու» լավ հնարավորություն է:

Այդ հանցագործությունների գաղափարական ղեկավարներն ու կազմակերպիչները մնում են ստվերում, անպատիժ: Շարունակվում է երկրի բնակչության ապակողմնորոշումը: Հարց է ծագում. էլ որքա՞ն ռուսների, ուկրաինացիների, հայերի եւ ադրբեջանցիների արյուն պետք է հեղվի, որպեսզի պետական բարձրագույն մարմինները ընդհուպ զբաղվեն այդ հարցով: Որքա՞ն կարելի է խայտառակել բանակը, նրան ստիպելով կատարելու պատժիչի, բռնացողի եւ ջարդարարների կամակատարի դերը:

Ըստ երեւույթին այդ պրակտիկան վարքի նորմա է դառնում երկրի ներկա ղեկավարների համար: Վերջին տարիների դեպքերը ցույց են տալիս, որ մյուս հանրապետությունների ակտիվ աջակցության եւ ըմբռնման բացակայությունը վաղ թե ուշ հանգեցնում է հենց այդ հանրապետություններում սցենարների կրկնությանը: Մենք գիտենք, որ Դուք նույնպես միանգամայն հակադիր տեղեկություններ ունեք ռեգիոնի իրադրության վերաբերյալ: Դրանից ելնելով, Ուկրաինայի Գերագույն խորհրդին խնդրում ենք պատգամավորական խումբ ուղարկել մեր ռեգիոն՝ իրավիճակն ուսումնասիրելու, սեփական կարծիք կազմելու եւ հետագա արյունահեղության դադարեցմանը նպաստելու նպատակով:

Առավել եւս, որ Ուկրաինայի խորհրդարանը որոշել է թույլ չտալ ուկրաինացի զինծառայողների մասնակցությունը ազգամիջյան կոնֆլիկտների լուծմանը:

Խնդրում ենք նաեւ նպաստել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար հրավիրելուն եւ այն հրապարակայնորեն անցկացնելուն: Լեւոն Տեր-Պետրոսյան:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 07.05.1991թ.:
Ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 02/07.05.1991:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Մ.Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս. Գորբաչովին. Պատճենները՝ Գլխավոր դատախազ Մ.Ս. Տրուբինին, ՊԱԿ նախագահ Վ.Ա. Կրյուչկովին, ՆԳ նախարար Բ.Կ. Պուգոյին.— Հարգելի Միխայիլ Սերգեեւիչ, ինչպես Ձեզ հայտնի է, հայ-ադրբեջանական սահմանագոտում եւ ԼՂԻՄ-ում տեղի ունեցած վերջին իրադարձությունների ընթացքում Խորհրդային Բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների կողմից ձերբակալվել եւ ադրբեջանական կողմին են հանձնվել ազգությամբ հայ հարյուրավոր քաղաքացիներ՝ խաղաղ բնակիչներ, ՆԳՆ աշխատակիցներ:

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը բազմիցս դիմել է Ձեզ՝ երկրի պրեզիդենտին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությանը, խորհրդային իրավապահ մարմինների ղեկավարությանը, պահանջելով ազատ արձակել պատանդներին, իսկ Ադրբեջանի մեկուսարաններում պահվող կալանավորներին հանձնել ԽՍՀՄ Դատախազության տնօրինությանը: Հարցի լուծումը, սակայն, չարդարացված կերպով ձգձգվում է:

Այնինչ ադրբեջանական կողմից կոպտորեն խախտվում են ԽՍՀՄ օրենքները, ինչպես նաեւ Խորհրդային Միության կողմից վավերացված ՄԱԿ-ի 1984թ. դեկտեմբերի 10-ի «Խոշտանգումների...» վերաբերյալ կոնվենցիան: Հայաստանի Հանրապետության Դատախազության կողմից արձանագրված են Ադրբեջանի բանտերում ազգությամբ հայ քաղաքացիների նկատմամբ դաժան վերաբերմունքի բազմաթիվ փաստեր:

Ահա վերջին դեպքը. 1991թ. հունիսի 6-ին ԼՂԻՄ Մարդակերտի շրջանում հայտնաբերվել է 1939թ. ծնված, Կիչան գյուղի բնակիչ Յուրի Հրանտի Ղուլյանի դին, ով 1991թ. մայիսի 14-ին ձերբակալվել էր զինվորականների եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից: Նրա մահվան կապակցությամբ հայտարարվել է, որ իբր Յ.Հ. Ղուլյանը վախճանվել է ստամոքսի խոցից: Սակայն կատարված փորձաքննության արդյունքում հաստատվել է, որ Յ.Հ. Ղուլյանի մահը վրա է հասել դաժան ծեծի պատճառով:...

Ձեր ուշադրությունը հրավիրելով անմարդկային այս բացառիկ դեպքի վրա, ինչը միանգամայն բնութագրական է Ադրբեջանի քննչական մեկուսարանների պարագայում, մենք կրկին պնդում ենք մեր խնդրանքը՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել ձերբակալվածներին ազատ արձակելու, քննության ենթակա անձանց «երրորդ կողմի» բանտեր տեղափոխելու եւ

բոլոր գործերը ԽՍՀՄ Դատախազության տնօրինությանը փոխանցելու համար: Լ. Տեր-Պետրոսյան:

Ռուսերեն բնօրինակը՝ ՀՀԱՆԱ, թղթ. 02/10.06.1991:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Վ.Ա. ԿՐՅՈՒՉԿՈՎԻՆ

ԽՍՀՄ ՊԱԿ նախագահ Վ.Ա. Կրյուչկովին. Պատճենները՝ ԽՍՀՄ փոխպրեզիդենտ Գ.Ի. Յանաեւին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Ա.Ի. Լուկյանովին, ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Տ. Յազովին, ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ.Կ. Պուգոյին, ԽՍՀՄ Անվտանգության խորհրդի անդամներ Ե.Մ. Պրիմակովին, Վ.Վ. Բակատինին, Ա.Ն. Յակովլեւին.— Հարգելի Վլադիմիր Ալեքսանդրովիչ, պարտք եմ համարում Ձեզ տեղեկացնել, որ եթե մոտակա օրերի ընթացքում Կենտրոնը չլուծի հայ պատանդների ազատ արձակման եւ տեղահանված ազգությամբ հայ քաղաքացիներին իրենց մշտական բնակության վայրեր վերադարձնելու խնդիրը, ապա ես ստիպված կլինեմ երկուշաբթի օրը, 1991թ. հունիսի 24-ին, հանդես գալ հետեւյալ հայտարարությամբ՝ այն տարածելով զանգվածային լրատվամիջոցներով, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում:

Հարգանքով՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյան. Երեւան, 20 հունիսի 1991թ.:

ՊԵՏԱԿԱՆ ՏԵՌՈՐ ԵՒ ՉՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄ՝ ՀՐԱՀԱՆԳՎԱԾ ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏԻ ԿՈՂՄԻՑ

(Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը)

1991թ. ապրիլի 30-ից մինչեւ մայիսի վերջ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս. Գորբաչովի անձնական հրահանգով, տրված «9+1»-ի ապրիլի 23-ին կայացած «Նովոգարյովյան» հանդիպման ժամանակ (ինչը հաստատում է Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը. «Выжка» օրաթերթ.

19.05.1991թ.), հայ ժողովրդի դեմ անցկացվել է լայնամասշտաբ ռազմական գործողություն՝ հետապնդելով զուտ քաղաքական նպատակներ, այն է՝ ահաբեկել հայ ժողովրդին, պատժել Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը՝ անկախ ժողովրդավարական պետության կառուցմանն ուղղված քաղաքական կուրսի համար, ինչպես նաեւ՝ ի հաճույս Ադրբեջանի կոմունիստական ռեժիմի, Ղարաբաղյան հիմնահարցը լուծել մարզի հայ բնակչության բռնի տեղահանման միջոցով:

Գործողությունն իրականացվել է Խորհրդային Բանակի, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի եւ Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ ՕՄՕՆ-ի ստորաբաժանումների կողմից՝ տանկերի, ծանր հրետանու եւ ուղղաթիռների կիրառմամբ: Այն անմիջականորեն ղեկավարել են ԽՍՀՄ Պաշտպանության նախարարի տեղակալ Գեներալ-գնդապետ Աչալովը եւ ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարի տեղակալ, ՆԳՆ Ներքին զորքերի հրամանատար Գեներալ-գնդապետ Շատալինը:

Անցկացված գործողության արդյունքում ԼՂԻՄ-ում եւ Ադրբեջանում սպանվել է 38 մարդ, վիրավորվել՝ 66-ը, պատանդ վերցվել՝ 274, ազատ է արձակվել նրանցից 189-ը, տեղահանվել է մոտ 5000 մարդ 20 բնակավայրերից: Նախկին հայկական գյուղերն այժմ բնակեցվում են ադրբեջանցիներով, պատանդներից երկուսն ավելի ուշ սպանվել են ադրբեջանական բանտերում:

Հայաստանի՝ Ադրբեջանին սահմանակից շրջաններում զինվորականության զանգվածային հրետակոծությունների եւ հակաօրինական այլ գործողությունների հետեւանքով (իրականացվել է 156 այդպիսի գործողություն) սպանվել է 35 մարդ, վիրավորվել՝ 44-ը, պատանդ վերցվել՝ 92-ը, որոնցից 28-ը ազատ արձակվել, վնասվել են տներ եւ կառույցներ 28 գյուղում, ավերվել են 10 գյուղերի ցանքատարածություններ եւ դաշտեր, գողացվել են 1000-ից ավելի անասուններ, ոչնչացվել է 16 հակակարկտային հրանոթ, հրկիզվել է 6 ավտոմեքենա, փչացվել՝ 11-ը, հափշտակվել եւ Ադրբեջան են տեղափոխվել 4 ավտոմեքենա, 3 տրակտոր եւ 1 սերմնացան, պայթեցվել է հակակարկտային ջոկատների 3 տնակ եւ հատուկ վաշտի շենքը, շարքից հանվել է 2 հեռուստավերահաղորդիչ, 2 պոմպակայան, Ղափանի օդանավակայանը (13 անգամ ենթարկված հրետակոծության), թալանվել է 3 գյուղերի շինանյութ եւ այլ ունեցվածք: Գործնականում կաթվածահար է արվել Գորիս-Կապան ավտոճանապարհը, վիժեցվել են գյուղատնտեսական աշխատանքները Նոյեմբերյանի, Տավուշի, Իջեւանի, Գորիսի, Ղափանի, մասամբ Արարատի շրջանի գյուղերում եւ Կարմիրի

շրջանի Արծվաշեն բնակավայրում: Հայաստանի սահմանամերձ տարածքներում շարունակաբար տեղի են ունենում ուղղաթիռային թռիչքներ, շատ դեպքերում կատարվում են անօրինական եւ նվաստացուցիչ խուզարկություններ, որոնք երբեմն ուղեկցվում են ծեծուջարդով եւ տնտեսությունների որսորդական հրացանների առգրավմամբ:

Հայաստանի Ֆինանսների նախարարության տվյալներով՝ Խորհրդային Բանակի պատժիչ գործողությունների հետեւանքով Հայաստանի Հանրապետությանը հասցված նյութական վնասը կազմել է 50 միլիոն ռուբլի:

Նշված իրադարձությունները քննարկվել են Ռուսաստանի եւ Ուկրաինայի խորհրդարաններում, Լատվիայի եւ Լիտվայի Գերագույն Խորհուրդների նախագահություններում, Լենխորհրդի եւ Լենմարզխորհրդի համատեղ նիստում, որոնցում ընդունված որոշումները դատապարտել են Խորհրդային Բանակի ստորաբաժանումների օգտագործումը խաղաղ բնակչության դեմ: Ի խախտումն Սահմանադրության՝ ԽՍՀՄ Հիմնական օրենքի, ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը մերժել է Հայաստանի Հանրապետության պահանջը՝ այդ խնդրի քննարկման նպատակով ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների արտահերթ Համագումար հրավիրելու մասին: Ավելին, ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը հրաժարվել է նաեւ անկախ խորհրդարանական հանձնաժողով ստեղծել՝ զինվորականների կողմից գործող օրենսդրության կոպիտ խախտման եւ մարդու իրավունքների ոտնահարման փաստերի հետաքննության նպատակով:

Իշխանության կենտրոնական մարմիններում պատասխան չեն գտել նաեւ Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի ղեկավարության կառուցողական առաջարկները՝ իրադրության կայունացման, պատանդների ազատ արձակման եւ տեղահանված հայերին իրենց մշտական բնակության վայրեր վերադարձնելու վերաբերյալ, ինչը կարող էր իրական պայմաններ ստեղծել բանակցությունների սկզբնավորման համար՝ նպատակ հետապնդելով վերականգնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի օրինական քաղաքական իշխանությունները, քանի որ միայն քաղաքական իշխանություններն են, որ ի վիճակի են երաշխավորել մարզի բնակչության քաղաքացիական իրավունքները, անկախ նրանց ազգային պատկանելությունից:

ՀՀԱՆԱ, թղթ. 02/20.06.1991: Ի պատասխան այս գրության, հունիսի 21-ին ԽՍՀՄ Պաշտպանության նախարար Դ.Տ. Յազովը կենտրոնական

մամուլի օրգաններից մեկում հանդես եկավ հակահայկական խեղաթյուրիչ մի հոդվածով: Սակայն հաջորդ օրը Կրյուչկովը հեռախոսով Գորբաչովի անունից Տեր-Պետրոսյանին խնդրեց չհրապարակել իր հայտարարությունը, միաժամանակ հավաստիացնելով, որ հրահանգված է լուծել պատանդների հարցը եւ դադարեցնել Լեռնային Ղարաբաղում անձնագրային ռեժիմի քողի տակ իրականացվող հետապնդումներն ու այլ ապօրինությունները: Բավարարված այդ հավաստիացումից, ՀՀ նախագահը ձեռնպահ մնաց հայտարարության հրապարակումից, իսկ կարճ ժամանակ անց Կենտրոնն իսկապես կատարեց իր խոստումը: Հայաստանի եւ Ղարաբաղի դեմ ԽՍՀՄ սանձազերծած պատերազմի այլ մանրամասներ տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, «Փրինթինֆո», 2006, էջ 207–215; Левон Тер-Петросян в Российской прессе, Москва, «Либеральная миссия», 2018, с. 53–68. Հարկ է ավելացնել, որ Տեր-Պետրոսյանն իր այս հայտարարության ոգով նույնաբովանդակ նամակներ է հղել նաեւ «Մեծ Յոթնյակի» պետությունների ղեկավարներ՝ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանին, Ճապոնիայի վարչապետ Տոշիկի Կայֆուին, Իտալիայի վարչապետ Ջուլիո Անդրեոտիին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորին, Կանադայի վարչապետ Բրայան Մալրունիին եւ Գերմանիայի կանցլեր Հելմուտ Կոլին. տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 02/27.06.1991:

ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԲԱՆԱԿԻ ԳԵՆԵՐԱԼ ՄԻԽԱՅԻԼ ՄՈՅԻՍԵԵՎԻ ՆԱՄԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Լ. Հ. Տեր-Պետրոսյանին.— «Քաղաքացիների զինվորական ծառայության հերթական զորակոչի մասին ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի 1991թ. մարտի 26-ի № 121 որոշումն» այս անգամ եւս պատշաճ աջակցության չի արժանանում Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից: ԽՍՀՄ Զինված Ուժերի շարքերը համալրելուն նպատակաուղղված զորակոչը երկու անգամ խախտվել է 1990 թվականին: Այժմ եւս հանրապետությունից ոչ մի զորակոչիկ, տարբեր պատճառաբանություններով, ԽՍՀՄ

Զինված Ուժերի շարքեր չի ուղարկվել: Դրա հետեւանքով Զինված Ուժերում, ՆԳՆ ներքին եւ ՊԱԿ-ի զորքերում առաջացել է անձնակազմի մեծ թերհամալրում: Մյուս հանրապետությունների քաղաքացիները հարկադրված են կրելու կրկնակի, իսկ երբեմն՝ եռակի ծանրաբեռնվածություն: Մինչդեռ տեղի զորակոչային քանակակազմն օգտագործվում է ոչ ֆորմալ զինված խմբավորումները համալրելու համար: Ծառայությունից խուսափող պատանիների նկատմամբ, դեպքերի մեծ մասում, ներգործության միջոցներ չեն կիրառվում:

Այս ամենը դժգոհություն ու վրդովմունք է առաջացնում մյուս հանրապետություններից զորակոչված զինծառայողների, եւ հատկապես, Հայաստանում իրենց ծառայությունն իրականացնողների մոտ: Ավելի ու ավելի հաճախակի պահանջներ են առաջ քաշվում, որպեսզի ԽՍՀՄ Պաշտպանության նախարարությունը Ձեր առջեւ հարց բարձրացնի՝ ծայրահեղ պայմաններում ծառայելու դիմաց դրամական փոխհատուցում ստանալու համար:

Այս կապակցությամբ ստիպված եմ Ձեզ տեղեկացնել, որ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի վերոհիշյալ որոշումը եւ ԽՍՀՄ Զինված Ուժերի համալրման նպատակով զորակոչի պլանը չկատարելու, ինչպես նաեւ 1990 թվականին զորակոչից խուսափած պատանիներին պատասխանատվության չենթարկելու դեպքում, Գլխավոր Շտաբն իրեն իրավունք է վերապահում, առանց բացառության, ցանկացած միջոց կիրառելու՝ ԽՍՀՄ կառավարության որոշումն անվերապահորեն կատարելու համար: Հարգանքով՝ Բանակի գեներալ Մ. Մոյիսեեւ. 24 մայիսի 1991թ.:

Ռուսերեն բնօրինակը տե՛ս ՀՀԱՆԱ, թղթ. 07/24.05.1991: Խնդիրն առաջացել էր այն իրողությունից, որ ՀՀ Գերագույն Խորհրդի 1990թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ Հայաստանում կասեցվել էր համընդհանուր զինապարտության մասին ԽՍՀՄ օրենքի գործողությունը, որից հետո, հատուկենտ կամավորներից բացի, ՀՀ քաղաքացիները չեն ծառայել ԽՍՀՄ Զինված Ուժերի Հայաստանի տարածքից դուրս գտնվող ստորաբաժանումներում: Ի դեպ, այդպիսի որոշումներ ընդունել էին նաեւ Բալթյան հանրապետությունները, Վրաստանը եւ Մոլդովան: Ավելորդ է, թերեւս, նշել, որ հավատարիմ ՀՀ Գերագույն Խորհրդի վերոհիշյալ որոշմանը, Հայաստանն ամենեւին չընկրկեց բերված նամակում հնչեցված սպառնալիքների առջեւ: Իսկ գեներալ Մոյիսեեւը, որը հայտնի էր որպես կոմունիստական ռեժիմի խիստ պահպանողական ներկայացուցիչներից մեկը, մի

քանի ամիս անց, 1991թ. տխրահռչակ հեղաշրջումից հետո, հեռացվեց իր պաշտոնից:

1991 Թ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆԻՆ

Հարգելի Բորիս Նիկոլայեւիչ, Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ամբողջապես ու լիովին պաշտպանում է Ձեր դիրքորոշումը, այսպես կոչված, ԳԿՊ-ի (Արտակարգ դրության պետական կոմիտեի) նկատմամբ: Նկատի ունենալով այն փաստը, որ Հայաստանի բացահայտ դիմակայությունը Խունտային կարող է հանգեցնել արյունալի սպանդի Ղարաբաղում, որտեղ վերջին օրերին խորհրդային բանակի ու ներքին զորքերի բարձր ակտիվություն է նկատվում, հանրապետական ղեկավարությունը առայժմ հակված է սպասողական դիրքորոշման՝ ձգտելով պահպանել հանրապետության սոցիալ-քաղաքական կայունությունը եւ իրավիճակը պահել օրինականորեն ընտրված իշխանությունների հսկողության տակ: Մեր հետագա գործողությունները Ձեզ հետ համաձայնեցնելու եւ կոորդինացնելու նպատակով Ձեզ մոտ եմ ուղարկում Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանին: Մեր ժողովուրդների համար այս դժվարին ժամին Ձեզ հավաստիացնում եմ, որ Հայաստանի ժողովուրդը կլինի Ռուսաստանի դեմոկրատական ուժերի կողքին: Անկեղծորեն՝ Ձեր Լեւոն Տեր-Պետրոսյան, 19 օգոստոսի, 1991թ.:

ՀՀԱՆԱ, թղթ. 02/19.08.1991: «Ղարաբաղին սպառնացող սպանդ» խոսքերի տակ Տեր-Պետրոսյանը նկատի է ունեցել հեղաշրջմանը նախորդող օրերին Հաթերք գյուղում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը, որի բորբոքման պարագայում, դժվար է ասել, թե ինչ ընթացք կստանար հեղաշրջումը Խորհրդային Միության տարածքում: Բավական էր, որ մի տեղ զինվորականները արյուն թափեին, եւ դա կարող էր տարածվել ողջ երկրով մեկ: Ֆելիքս Մամիկոնյանի հետ հանդիպման ժամանակ Բորիս Ելցինը ողջունել էր այդ դիրքորոշումը եւ խնդրել ՀՀ իշխանություններից՝ ամեն ինչ անել Հաթերքում ժողովրդի եւ զինվորականների միջեւ բախում թույլ չտալու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

Լեռնային Ղարաբաղի հետ կապված փաստաթղթեր

ԼՂԻՄ-Ի ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(16 մայիսի, 1991թ.)

Ժողովն արձանագրում է, որ մարզում տեղի են ունենում ողբերգական իրադարձություններ, որոնք ուղեկցվում են բռնություններով, կողոպուտով, ավազակային հարձակումներով ու սպանություններով, բնակավայրերի, դպրոցների եւ հիվանդանոցների հրկիզումներով, ապօրինի ձերբակալություններով, մարդկային արժանապատվության ոտնահարմամբ եւ իրենց օջախներից խաղաղ բնակչությանը վտարելով:

Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով, ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի աջակցությամբ Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՕՆ-ի ուժերով իրականացվող պատժիչ գործողություններն ուղղված են բացառապես հայ բնակչության դեմ:

Շարունակվող բռնությունները, ահաբեկչությունը, թալանը եւ սպանությունները, ինչպես նաեւ ԼՂԻՄ-ի հայ բնակչության բռնի տեղահանությունը մարզային խորհրդի գործադիր կոմիտեին ստիպեցին միջազգային մարմինների եւ արտասահմանյան պետությունների կառավարությունների առջեւ հարց բարձրացնել ինքնավար մարզի ողջ հայ բնակչությանը քաղաքական ապաստան տրամադրելու վերաբերյալ:

Հետագա արյունահեղությունից խուսափելու նպատակով ժողովը հայտարարում է.

Հավատարիմ մնալով սահմանադրական կարգին, ԼՂԻՄ-ը իր հետագա լիիրավ գոյությունը տեսնում է նորացվող ֆեդերացիայի կազմում.

Դիմում է ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմիններին՝ անհապաղ միջամտել եւ ապահովել հայ բնակչության կյանքի անվտանգության, արժանապատվության, տարրական իրավունքների պաշտպանությունը,

Գտնում է, որ արտակարգ դրության ռեժիմի իրականացումը հարկ է ապահովել բացառապես ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի ուժերով,

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Ադրբեջանական համայնքին՝ բանակցություններ սկսել իշխանության սահմանադրական մարմինների վերականգնման շուրջ, լուծել երկու համայնքների փոխհարաբերություններում կուտակված պրոբլեմները,

Կոնֆլիկտի մեջ ներգրավված բոլոր կողմերին՝ միմյանց միջեւ բանակցությունների հիման վրա վերանայել ԼՂԻՄ-ի վերաբերյալ ընդունված հակասահմանադրական որոշումները:

Քաղկոմի բյուրո
Քաղխորհրդի գործկոմ
Մարզխորհուրդ
Մարզխորհրդի գործկոմ
Կուսակցության մարզկոմի բյուրո
Ք. Ստեփանակերտ

«Հայաստանի Հանրապետություն», 17.07.1991

ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԸՆԿ. Մ Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

(17 հուլիսի, 1991թ.)

Հարգելի Միխայիլ Սերգեեւիչ

ԼՂԻՄ-ի հասարակայնության բոլոր խավերի ժողովը, վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ փաստագրեց, որ բոլոր մակարդակների կառավարման մարմինների բազմաթիվ սխալները Լեռնային Ղարաբաղի հարցը մտցրին փակուղի: Դրան մեծապես նպաստեց նաեւ փոխադարձ առճակատման քաղաքականությունը, երկխոսությունից հրաժարվելը:

Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը տվյալ փուլում միակ ընդունելին է համարում փոխպայմանավորվածությունների ուղին, Ղարաբաղի հարցի լուծմամբ շահագրգռված բոլոր մակարդակների, այդ թվում՝ միութենական, հանրապետական (Ադրբեջան, Հայաստան) եւ Լեռնային Ղարաբաղի քաղաքական ուժերի միջեւ բանակցությունները:

Առճակատման կուրսից երկխոսության ու բանակցությունների քաղաքականության անցնելու կապակցությամբ 1991թ. մայիս 16-ի հայկական համայնքի ներկայացուցիչների քաղաքական հայտարարությունը հետագայում արտացոլվեց մարզային խորհրդի գործադիր կոմիտեի ա.թ. հունիսի 19-ի հ. 1/63 որոշման մեջ:

Ցավոք, երկխոսության կոչն անտեսվեց ոչ միայն Ադրբեջանի ղեկավարության, այլեւ Միության կենտրոնական իշխանությունների կողմից:

Մենք դիմում ենք ձեզ խնդրանքով՝ կազմակերպել ճգնաժամի վերացմամբ շահագրգռված կողմերի բանակցությունները: Միաժամանակ խնդրում ենք՝ կողմերին սահմանադրական խախտումներ թույլ չտալու նպատակով միջնորդի դերը հանձնարարել իշխանության կենտրոնական մարմիններին:

Իր որոշման մեջ մարզխորհրդի գործադիր կոմիտեն հնարավոր է համարում որպես բանակցությունների հիմնական կոնցեպցիա ընդունել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի եւ ԽՍՀՄ կառավարության բոլոր որոշումները:

Բանակցությունների ընթացքում անհրաժեշտ ենք համարում լուծել հետեւյալ հարցերը.

Իշխանության մարմինների ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի որոշմամբ կասեցմամբ ֆունկցիաների վերականգնումը, ինչպես նաեւ բոլոր մակարդակների խորհուրդներում ընտրությունների հստակ ժամկետների սահմանումը:

ԼՂԻՄ-ին զուգահեռ, հարակից ադրբեջանական շրջանների ապառազմականացումը, տեղաբաշխելով ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումները մարզի սահմանի երկայնքով:

ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության ֆունկցիաների վերականգնումն ամբողջ ծավալով, նրա վրա դնելով մարզի տարածքում օրինակարգի պահպանության ապահովման պարտականությունը:

Անհապաղ դադարեցնել քաղաքական նկատառումներով մարդկանց հետապնդումը:

Վերացնել բոլոր կողմերի՝ ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող որոշումները:

ԼՂԻՄ-ի շրջակայքում բնակչության կենսապահովման օբյեկտների շուրջ ստեղծել անվտանգության գոտիներ:

Ապաշրջափակել Ստեփանակերտ-Գորիս ավտոճանապարհը, ապահովելով տրանսպորտային բոլոր միջոցների անվտանգ տեղաշարժը:

Մարզի տարածքից բռնագաղթված բոլոր քաղաքացիներին վերադարձնել մշտական բնակության վայրերը: Վերականգնել մարզում սահմանադրական ստատուս-քվոն:

Ապահովել Շահումյանի շրջանի բնակչության ֆիզիկական անվտանգությունը:

Կասեցնել զանգվածային լրատվության միջոցներում ազգամիջյան կրքերի բորբոքումը:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՍՀՄ Սահմանադրությանը չհակասող ընդունված որոշումների բոլոր կետերի անվերապահ կատարումը կարող է կայունացնել իրավիճակը տարածաշրջանում:

Շուրջ 3 հարյուրամյակ է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր բախտը կապել է Ռուսաստանի հետ եւ իր գոյությունը չի տեսնում ժողովրդավարության սկզբունքներով ձեւավորվող միութենական ֆեդերացիայից դուրս, անկախ Անդրկովկասում ձեւավորվող իրավիճակից:

Հուսով ենք, որ խաղաղ բանակցությունների հիման վրա Ղարաբաղի խնդրի լուծման ուղղությամբ ԼՂԻՄ-ի հայկական կողմի բարի կամքի դրսեւորման նախաձեռնությունը կարժանանա Ձեր հավանությանն ու համակողմանի աջակցությանը:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր՝ Հ. Պողոսյան

Ստեփանակերտի քաղգործկոմի նախագահ՝ Մ. Միրզոյան

Մարզգործկոմի նախագահի տեղակալ՝ Շ. Պետրոսյան

Մարզգործկոմի կազմակերպական բաժնի վարիչ՝ Կ. Բաբուրյան

Մարզգործկոմի փախստականների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչ՝ Լ. Մելիք-Շահնազարյան

Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի բաժնի վարիչ՝ Գ. Պետրոսյան

«Հայաստանի Հանրապետություն», 17.07.1991:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ն. ՄՈՒԹԱԼԻԲՈՎԻՆ

(19 հուլիսի, 1991թ.)

ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեն, քննարկելով ինքնավար մարզում իրավիճակի կարգավորման եւ սահմանադրական նորմերի վերականգնման հարցը, ընդունելի է համարում միութենական մարմինների եւ Ադրբեջանի հանրապետության իշխանությունների հետ առճակատումից երկխոսության անցնելու ուղին: Նշվել է նաեւ, որ մարզային, հանրապետական եւ միութենական պետական մարմինների, քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների հակասահմանադրական դիրքորոշումը փակուղի է մտցրել ծագած խնդիրը:

Լեռնային Ղարաբաղի դեպքերի սկզբից ի վեր, փոխանակ համաձայնություններ եւ պայմանավորվածություններ փնտրելու, կողմերը գնացել են ուժային ճնշումների ճանապարհով, ինչը հանգեցրել է խորը առճակատման՝ ողբերգական հետեւանքներով:

Ս/թ. հուլիսի 19-ին եւս մեկ անգամ քննարկելով Ինքնավար մարզի իրավիճակը, մարզգործկոմը հաստատեց առճակատումից երկխոսության անցնելու կուրսի ճշմարտացիությունը, նշելով, որ ամեն մի կորցրած օրը խորացնում է ճգնաժամը, կասկածի տակ դնում սպասվող երկխոսության ընթացքում դրական արդյունքների ձեռքբերումը: ԼՂԻՄ-ում իրավիճակի կարգավորման շահերը, ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների միջեւ բարիդրացիության վերականգնումը հակամարտության կարգավորման միջոցների համատեղ փնտրտուք է պահանջում:

Մենք հիմքեր ունենք հայտարարելու, որ նման քաղաքական ընթացքը համապատասխանում է ինքնավար մարզի բնակչության մեծամասնության տրամադրություններին:

Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը, էական չափով նաեւ Ադրբեջանի հասարակական-քաղաքական իրավիճակը կախված է բանակցությունների արդյունքներից, նրա մասնակիցների պատմական պատասխանատվությունից:

ԼՂԻՄ-ի կողմից որպես բանակցությունների մասնակից կարող են հանդես գալ միայն նրա պետական մարմինները՝ իրենց կողմից հաստատված անձանց դեմքով, ինչը անհրաժեշտություն է առաջացնում մին-

չեն բանակցությունները սկսելը վերականգնել ժողովրդական պատգամավորների Մարզային խորհրդի եւ նրա գործկոմի լիազորությունները:

Բանակցությունների հաջող անցկացման համար առաջնային պայման է միմյանց նկատմամբ ուժի կիրառման դադարեցումը, անհիմն ձերբակալությունների, քաղաքական շարժառիթներով կամ ըստ ազգային հատկանիշի հետապնդումների դադարեցումը:

Մենք համարում ենք, որ բանակցությունների արդյունավետ վարման համար, դրանց անմիջական մասնակցություն պետք է ունենան Կենտրոնի ներկայացուցիչները, եւ որ դրանք պետք է ընթանան ԽՍՀՄ եւ Ադրբեջանի սահմանադրությունների ԼՂԻՄ-ի մասին միութենական ակտերի հիման վրա:

Մեր տեսանկյունից, բանակցությունների ընթացքում պետք է քննարկվեն հետեւյալ հարցերը.

Մարզային բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների ընտրությունների անցկացման ժամկետների եւ մեխանիզմների որոշում եւ Ադրբեջանի կոմկուսի մարզային եւ շրջանային, քաղաքային կոմիտեների վերականգնում:

ԼՂԻՄ տարածքից բոլոր զինված կազմավորումների դուրսբերում, բացի տեղական մարմինների ներքին գործերի անձնակազմից, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի տեղաբաշխում մարզի սահմանների վրա:

Մարզի եւ Շահումյանի շրջանի տրանսպորտային եւ տնտեսական շրջափակման վերացում:

Տեղահանված բնակչության վերադարձ իրենց մշտական բնակության վայրեր:

Շահումյանի շրջանի վարչական տարածքային բաժանման վերականգնում:

Այս դիմումը կուղարկվի նաեւ ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա. Ի. Լուկյանովի հասցեներով:

Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ասկերանի շրջգործկոմի նախագահ Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

Հադրութի շրջգործկոմի նախագահ Է. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Մարդակերտի շրջգործկոմի նախագահ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Մարտունու շրջգործկոմի նախագահ Ս. ՍԵՅՐԱՆՅԱՆ

Ադրբեջանի կոմկուսի ԼՂ մարզկոմի կազմակերպական-կուսակցական եւ կադրային աշխատանքների բաժնի վարիչ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 4, ст. 54-55:

ՀՌԶԱԿԱԳԻՐ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանը,

արտահայտելով ժողովրդի կամքը, որն ամրագրված է փաստացի անցկացված հանրաքվեում եւ ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների 1988-1991թթ. որոշումներում, ազատության, անկախության, իրավահավասարության եւ բարիդրացիության նրա ձգտումը,

արձանագրելով Ադրբեջանի Հանրապետության կողմից «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման» հռչակման փաստը,

հաշվի առնելով, որ Ադրբեջանում տարվող ապարտեիդի եւ խտրականության քաղաքականությունը հանրապետությունում ստեղծել է հայ ժողովրդի նկատմամբ ատելության եւ անհանդուրժողականության մթնոլորտ, ինչը հանգեցրել է զինված բախումների, մարդկային զոհերի, խաղաղ հայկական գյուղերի բնակիչների զանգվածային բռնատեղահանման,

հիմնվելով ԽՍՀ Միության գործող Սահմանադրության եւ օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումներին եւ հավաքական բնակվող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը,

նշելով, որ Շահումյանի շրջանի տարածքը բռնի կերպով անջատվել է Լեռնային Ղարաբաղից եւ հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը համարելով բնականոն ու օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,

ձգտելով հայ եւ ադրբեջանական ժողովուրդների միջեւ բարիդրացիական հարաբերությունների վերականգնմանը՝ միմյանց իրավունքների փոխադարձ հարգանքի հիման վրա,

ուշադրության առնելով երկրում տիրող իրավիճակի բարդությունն ու հակասականությունը, ապագա Միության, իշխանության եւ կառավարման միութենական կառույցների ճակատագրի անորոշությունը,

հարգելով ու հետեւելով Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի եւ Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի, Քաղաքացիական, քաղաքական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի սկզբունքներին եւ ակնկալելով միջազգային հանրության ըմբռնումն ու աջակցությունը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ՀԱԿԻՐՃ՝ ԼՂՀ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն օգտվում է այն լիազորություններից, որոնք հանրապետություններին տրամադրվում են ԽՍՀՄ Սահմանադրությամբ ու օրենսդրությամբ եւ իրեն իրավունք է վերապահում ինքնուրույն որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը՝ երկրի եւ հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական խորհրդատվությունների եւ բանակցությունների հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում՝ մինչեւ ԼՂՀ Սահմանադրության եւ օրենքների ընդունումը, գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունը եւ օրենսդրությունը, ինչպես նաեւ ներկայումս գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին եւ Հանրապետության առանձնահատկություններին:

Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջան

2 սեպտեմբերի, 1991թ.

ք. Ստեփանակերտ

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

Այլ փաստաթղթեր

ՀՌՉԱԿԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(04 դեկտեմբերի, 1989թ.)

Նկատի ունենալով, որ երկրում ընթացող հակասական պրոցեսները՝ մի կողմից խորհրդային կարգերի դեմոկրատացմանն ուղղված միջոցառումները եւ մյուս կողմից՝ վարչահրամայական մեթոդներին հավատարիմ ուժերի ձեռնարկած հետադիմական քայլերը, ստեղծել են մի այնպիսի բարդ իրավիճակ, որ հղի է լայնամասշտաբ բռնությունների սանձազերծման վտանգով,

ելնելով այն իրողությունից, որ վերջին երկու տարիների ընթացքում հայ ժողովուրդը կենտրոնական իշխանությունների թողտվությամբ բազմիցս ենթարկվել է ադրբեջանական իշխանությունների եւ խորհրդային բանակի կողմից ձեռնարկված ահաբեկչական գործողությունների, որոնց նպատակն է բռնի ուժով ոտնահարել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման իրավունքը,

եւ համոզվելով, որ հայ ժողովրդի բնականոն զարգացումն ու նրա ազգային իղձերի իրականացումն ապահովելու համար պահանջվում են կայուն երաշխիքներ, որոնց առկայության դեպքում նրա բախտն այլեւս կախված չէր լինի անցողիկ քաղաքական հանգամանքներից ու հակամարտ ուժերի տեղաբաշխումից՝

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հաստատում է հանրապետությունում համամարդկային արժեքների, ազգերի ինքնորոշման, մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության սկզբունքների վրա հիմնված արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման

անհրաժեշտությունը՝ այդ ուղղությամբ որպես առաջին քայլ հռչակելով հետեւյալ կարեւորագույն միջոցառումների իրականացումը.

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխման հիման վրա, վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն:

Հանրապետության Սահմանադրությունից հանվում է կոմունիստական կուսակցության ղեկավար դերին վերաբերող 6-րդ հոդվածը: Հայաստանում թույլատրվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում նաեւ քաղաքական կուսակցությունների ազատ գործունեությունը:

Հանրապետությունում հաստատվում է խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն, արվեստի, գրականության եւ հասարակական գիտությունների բնագավառում վերացվում է գրաքննությունը:

Բոլոր նախկին քաղբանտարկյալներին եւ քաղաքական նկատառումներով հալածված անձանց շնորհվում է լիակատար արդարացում՝ հատուցելով նրանց կրած վնասները:

Հանրապետության ընտրական օրենքում նախատեսվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի եւ շրջանային ու քաղաքային խորհուրդների նախագահների ուղղակի համաժողովրդական ընտրություն, բացառվում է այդ եւ պետական-կուսակցական այլ պաշտոնների համատեղումը:

Հայկական ԽՍՀ տարածքում գործում են ԽՍՀՄ այն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, որոնք վավերացվում են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից:

Հայկական ԽՍՀ-ում վերացվում է Կենտրոնից կուսակցական եւ պետական պաշտոնյաներ նշանակելու գաղութատիրական պրակտիկան:

(**Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, էջ 65-67):

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացված՝ ՀՀՇ-ի այս Հռչակագիրը քննարկումից երկու շաբաթ հետո հրապարակեց «Երեկոյան Երեւան» թերթը (20 դեկտեմբեր, 1989)՝ ընդառաջելով 12 պատգամավորների անունով ստացված միջնորդություններին, եւ, հավանաբար, դրանում որոշ փոփոխություններ կատարելու նախապայմանով: Մասնավորապես՝ թերթային տարբերակում հանված է Հռչակագրի 1-ին կետն ամբողջությամբ եւ մեղմացված են որոշ որակումներ: Ամբողջական տեսքով, Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի հետ միասին, հրապարակվել է հետագայում (տե՛ս Դավթյան Վ., Առասպելի եւ իրականի սահմանագծին, Լեւոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին եւ քաղաքագետը, Եր., 1996, էջ 102–106):

«ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազգային զորամիավորումների վերականգնման խնդիրը Համազգային շարժման ծրագիր մտավ սումգայիթից հետո, երբ պարզ դարձավ, որ խորհրդային բանակը չի պաշտպանելու հայ ժողովրդին:

Գիտակցելով, որ այդ գործը պետք է իրականացնել պետական մակարդակով, Համազգային շարժումը գնացել է խորհրդային բանակի ղեկավարների հետ տեւական բանակցությունների եւ Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումներ ընդունելու ճանապարհով: Զուգահեռաբար «Ղարաբաղ» կոմիտեն ձեռնամուխ եղավ երկրապահ ջոկատների ստեղծմանը սահմանամերձ շրջաններում եւ Արցախում՝ իրադրության թելադրանքով:

Այդ ջոկատները մեկ նպատակ ունեին. պաշտպանել Հայաստանի եւ Արցախի սահմանները արտաքին վտանգից:

Ազգային զորամիավորումների ստեղծումը քաղաքական քայլ է քաղաքական քայլերի այն շղթայում, որը տանում է դեպի անկախ պետականության վերականգնում: Հայկական բանակը գործիք չէ անկախության հասնելու (այն սահմանադրական խնդիր է), ոչ էլ ոստիկանական ստորաբաժանում, այլ՝ վերականգնված պետականությունը պաշտպանելու միջոց:

Ազգային զորամիավորումները վերականգնելու քաղաքական քայլերի շարքում (զորակոչի դադարեցում, հայ զինվորների Հայաստանում ծառայելու պահանջ, պաշտպանության խորհրդի ստեղծում Գերագույն խորհրդով), այդ կանոնավոր շարքում բեկում եղավ Բաքվի ջարդերից եւ Երասխավանի կռիվներից հետո, երբ տարերայնորեն ստեղծված ջոկատներ ստեղծվեցին եւ զինվեցին:

Ժամանակ էր պետք համոզվելու համար, որ ոչ պետական կառուցվածքում այդ ջոկատների միավորման ջանքը ի սկզբանե էր դատապարտված ձախողման՝ բազմաենթակայության եւ ձեւավորման տարերային բնույթի պատճառով:

Ստեղծված ռազմաքաղաքական պայմաններում նման ցանուցիր ջոկատներից որեւէ մեկի ինքնուրույն, թեկուզեւ արդարացի վրեժի պոռթկումով թելադրված չնչին իսկ գործողությունը կարող է օգտագործվել (ինչպես օգտագործվեց) Հայաստանում ազգային իշխանություն հաստատելու հակառակորդների կողմից: Ջոկատների անջատ գոյության տեւականությունը հղի է ժողովրդին պառակտելու եւ վերջնականապես հուսալքելու վտանգով:

Իսկ այսօր, հայ ժողովրդի համար շրջադարձային ու բախտորոշ այս պահին, առավել քան երբեւէ, մեզ անհրաժեշտ է միասնություն եւ համախմբվածություն, ազգային խնդիրներն ամեն ինչից վեր դասելու քաղաքական լրջություն՝ մեր ժողովրդի սրբազան իղձերն ի կատար ածելու համար:

«Հայք», 10.06.1990

ԵՐԿՐԱՊԱՀ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

(1990թ. հունիսի սկիզբ)

Ներկա քաղաքական բարդ իրավիճակում, երբ չղեկավարվող ցանկացած գործողություն կարող է հանգեցնել մեր ժողովրդի համար ողբերգական հետեւանքների, մենք՝ երկրապահ ջոկատների լիազոր ներկայացուցիչներս, հայտարարում ենք.

Ղարաբաղյան շարժման որոշակի փուլում «Ղարաբաղ» կոմիտեի կոչով կազմավորված երկրապահ ջոկատները իրագործել են ազգային ինքնապաշտպանության խնդիրները սահմանամերձ շրջաններում եւ Արցախում: Սակայն վերջին շրջանում նոր, տարերայնորեն ստեղծված ջոկատների առկայությամբ զինված ընդհարումներն ու անկարգությունները հաճախակի են դարձել, որը դժվարացնում է երկրապահ ջոկատների հաջող գործունեությունը հին կառուցվածքով: Բացի այդ, այսօր արդեն բոլորին պարզ է, որ մենք կարող ենք հաջողության հասնել ոչ թե պարտիզանական անկազմակերպ պայքարով, այլ միմիայն ազգային պետականության ստեղծումով:

Ելնելով այս կարեւոր հանգամանքներից՝ երկրապահ ջոկատների լիազոր ներկայացուցիչների հանրապետական հավաքը որոշում է.

Բոլոր երկրապահ ջոկատները դնել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ստեղծած Պաշտպանության խորհրդի տրամադրության տակ:

Կոչ ենք անում մյուս բոլոր ջոկատներին՝ հանուն Հայաստանի պետականության գաղափարի, հետեւել մեր օրինակին, քանի որ դա այն հիմքն է, որի վրա ապագայում ստեղծվելու է հանրապետության միասնական պետական բանակը՝ համապատասխան ռազմական կառուցվածքով (ռազմական խիստ կարգապահությամբ, երդմամբ, համազգեստով եւ զինվորական գրքույկներով):

Ընդունելով այս հռչակագիրը՝ մենք առաջնորդվել ենք հետեւյալ սկզբունքով.

Բանակի կոչումը պետության անվտանգության ապահովումն է արտաքին սպառնալիքից:

Բանակի միջամտությունը ներքին քաղաքականության հարցերին անթույլատրելի է:

Հանրապետության հասարակական կարգի ապահովումը վերապահված է միմիայն իրավապահ մարմիններին:

Հայաստանի երկրապահ ջոկատների լիազոր ներկայացուցիչներ՝

Վազգեն Սարգսյան (Արարատ), Վահան Շիրխանյան (Աշտարակ), Մուշեղ Սաղաթելյան (Անի), Սարգիս Թամազյան (Հրազդան), Գեւորգ Բաղդասարյան (Իջեւան), Գարիկ Շառոյան (Նոյեմբերյան), Մարտիրոս Ղազարյան (Մեղրի), Սերգեյ Առաքելյան (Թալին), Ֆելիքս Մարգարյան (-Լենինյան շրջան), Ալեքսանդր Փիրումով Խորհրդային շրջան), Ռուստամ Աղաջանյան (Ջերմուկ), Վահան Վարդանյան (Եղեգնաձոր), Ռոբերտ Այվազյան (Մերգելյան ինստիտուտ), Աշոտ Մինասյան (Սիսիան), Գեւորգ Տեր-Գեւորգյան (26 կոմիսարների շրջան), Սանասար Ղուկասյան (Մաշտոցի շրջան), Արա Խուդավերդյան («Կոռնիձոր» ջոկատ), Լեւոն Հարությունյան (Սպանդարյան շրջան), Հովիկ Հայրապետյան (Մարմարաշեն եւ Այնթապ գյուղեր), Արմեն Ղանադյան (Կարմիրի շրջան), Գագիկ Գեւորգյան («Խալդի» ջոկատ), Հայրապետ Մարգարյան («Սպե» ջոկատ), Սամվել Շահինյան (Ալավերդի եւ Ստեփանավան), Ալիկ Պետրոսյան (Նաիրի), Ալֆրեդ Ներսիսյան («Սասունցիներ» ջոկատ), Սասուն Ղազարյան (Հոկտեմբերյան):

«Հայք», 10.06.1990

ՏԵՂԵԿԱՆՔ

Գործող քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների եւ ՀԿԿ-ի հետ նրանց համագործակցության ձեւերի մասին

(30 հոկտեմբեր 1990թ.)

(Սույն գաղտնի զեկուցագիրը, որ հավանաբար ներկայացվել է նաեւ Մոսկվային, վերցվել է ՀԿԿ ԿԿ-ի 1-ին քարտուղար Ս. Պողոսյանի գրասենյակից, գույքագրման ժամանակ: Վերջին՝ «Լրացումներ» բաժինը ձեռագիր է, հայերեն լեզվով – «Հայք»):

Հանրապետության ամենամասսայական եւ ուժեղ կազմակերպություններից մեկը՝ ՀՀՇ-ն իշխանության համար պայքարում հաջողության հասնելով՝ այժմ ծանր ժամանակներ է ապրում: ՀՀՇ-ին ոչ միայն չհաջողվեց ամրապնդվել հանրապետության շրջաններում, այլեւ հասնել Երեւանում աշխատանքի որակական բարեփոխման: Զգալի են նրա կորուստները Ղափանի, Կրասնոսելսկի, Մասիսի, Շամշադինի ու Ամասիայի շրջաններում, Լենինականում եւ այլն: Ամբողջությամբ հանրապետությունում ՀՀՇ-ի վարկն օրեցօր ընկնում է, եւ դա պայմանավորված է Հայաստանի Գերագույն Խորհրդում ՀՀՇ-ի աշխատանքից լայն խավերի մեծ հիասթափությամբ ու նաեւ հանրապետության տնտեսական դժվարությամբ: Բացի դրանից, ՀՀՇ-ի դեմ լայն քարոզչական աշխատանք են տանում մի շարք քաղաքական կազմակերպություններ, բացահայտ առճակատմամբ առանձնանում են տեղական «Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը, «Ազատ Հայքը», «Ազգային Միասնության ուխտը», «Միացյալ Հայաստան» կուսակցությունը եւ մի շարք այլ կազմակերպությունների դիրքորոշումները: Մի շարք սկզբունքային հարցերում իրենց անհամաձայնությունն են հայտնում նրա այնպիսի դաշնակիցները, ինչպիսիք են ԱԻՄ-ը («Ազգային ինքնորոշում միավորում»), ՍԻՄ-ը («Սահմանադրական իրավունք միություն»), «Հանրապետական կուսակցությունը», «Հայաստանի ազգային անկախության կուսակցությունը» եւ այլն: Ավելի հաճախ են լույս տեսնում համարձակ հրապարակումներ, որոնք քննադատում են ՀՀՇ-ի ուղին ու գործունեության տարբեր կողմերը՝ «Էպոխա», «Մունետիկ», «Գործ» եւ մի շարք ոչ պաշտոնական թերթերում: Ավելի անկախ են գործում ռադիոն եւ հեռուստատեսությունը:

Այս ամենն, անկասկած, չէր կարող չանդրադառնալ տեղական խորհուրդների նախընտրական միջոցառումների ընթացքի վրա: Հարկավոր է մանրազնին վերլուծել ընտրությունների արդյունքները՝ ուժերի եւ ժողովրդի վրա ազդեցության իրական հարաբերակցությունը պարզելու համար:

Արդեն կարելի է հաստատապես ասել, որ տեղական խորհուրդների ընտրություններում ՀՀՇ-ի պարտությունը կհանգեցնի հանրապետությունում քաղաքական լարվածության նոր փուլի:

ՀՀՇ-ի ներսում կուժեղանան դեռ այս տարվա գարնանը նկատելի տարաձայնությունները: Արտաքուստ դրանք կընթանան այն հարցի քննարկման հունով, թե արդյոք ՀՀՇ-ն պետք է ժողովրդական շարժո՞ւմ մնա՝ բոլորի համար բաց դռներով, թե՞ դառնա սոցիալ-դեմոկրատական տիպի կուսակցություն: Իսկ ներքուստ դրանք կընթագրվեն ներխմբային շահերով եւ հենց կազմակերպության մեջ իշխանության համար պայքարով:

ՀՀՇ-ի համախմբման եւ ժողովրդի մեջ հեղինակության բարձրացման համար նրա գաղափարական առաջնորդները նոր ուժով կհարձակվեն կոմկուսի վրա: Կոմկուսը հարմար օբյեկտ է դժվարությունների, հասարակական կոնֆլիկտների եւ այլնի մեջ մեղադրելու համար: Չի բացառվում նաեւ ներքաղաքական կամ արտաքաղաքական իրադրության ապակայունացմանը միտված գործողությունների կազմակերպումը, որոնց նպատակը կլինի կոմկուսի վարկաբեկումը եւ ՀՀՇ-ի հեղինակության բարձրացումը:

ՀՀՇ-ն մշակում է հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների ետկանչման մեխանիզմը, որի նպատակն է մի շարք «ոչ հարմար» կոմունիստ պատգամավորների ետկանչումը: Տեղական խորհուրդների ընտրությունների անբարեհաջող արդյունքի դեպքում, ընտրությունների մասին օրենքում (որը վերջնականապես ընդունված չէ) կարող են այնպիսի փոփոխություններ մտցվել, որոնք նոր ընտրությունների անցկացման անհրաժեշտություն կթելադրեն, ասենք, մեկուկես տարուց: ԳԽ-ի ճգնաժամի եւ կառավարության նկատմամբ կայուն անվստահության առաջացման դեպքում մշակված է պրեզիդենտական ընտրությունների տարբերակը, որը նախատեսում է այդ պաշտոնում «Ղարաբաղ» կոմիտեի առաջնորդներից մեկի ընտրությունը:

ՀՀՇ-ի ներկայացուցիչները մշտապես հանդիպում են զանազան կուսակցությունների եւ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, համագործակցության ուղիներ եւ հնարավորություններ փնտրում: Կազմակերպությունների ուժերը, միջոցները, ծրագրային խնդիրները, հնարավո-

րությունները եւ մոտակա նպատակները ամբողջությամբ պատկերացնելու համար ներթափանցում են դրանց մեջ (լրատուների յուրօրինակ ինստիտուտ)։ Բացի դրանից ի հայտ են բերվում պատրաստված, գրագետ եւ բանիմաց մարդիկ, որոնք բավականին ակտիվորեն ներգրավվում են կոնկրետ աշխատանքների մեջ։ Այժմ այդ աշխատանքները, առանձնապես կոմունիստների եւ մտավորականության շրջանում ավելի մեծ թափ են առել։ Մեծ աշխատանք է տարվում անկախ կուսակցությունների եւ կազմակերպությունների հետ (ԱԻՄ, ՍԻՄ, Հանրապետական կուսակցություն, ՀԱԱԿ եւ այլն) համագործակցությունը մեծացնելու, իսկ Հնչակների եւ Ռամկավարների հետ, որոնք դեռ նոր են հանրապետությունում գործունեություն ծավալում, բարեկամական հարաբերությունների հաստատման համար։ Զգալի են գործադրվող ջանքերը տեղական եւ արտասահմանյան Դաշնակցական կուսակցությունների տարաձայնությունները ընդհարման նպատակով օգտագործելու համար։

Եթե հանրապետության հասարակական-քաղաքական եւ տնտեսական կյանքի նշված միտումները զարգանան եւ խորանան, ապա ՀՀՇ-ն, որոշ կանխատեսումներով, իշխանության գլուխ մի տարուց ավելի չի մնա։

Հանրապետության քաղաքական ասպարեզում, չնայած զգալի հեղինակությանը, իր խոսքը դեռ չի ասել Դաշնակցական կուսակցությունը։ Այստեղ ավելի մանրամասն բացատրություններ են հարկավոր։ Բանն այն է, որ դեռ 60-ական թվականներին Դաշնակցական կուսակցության արտասահմանյան կենտրոնը (Աթենքում) հանրապետությունում անլեգալ խմբերի եւ կազմակերպությունների ստեղծման ընդհատակյա աշխատանք էր տանում։ Մի մասն այժմ էլ նույն կերպ են գործում։ Հանրապետությունում անլեգալ կենտրոն կա, որը բարենպաստ պայմանների դեպքում կուսակցության հանրապետական բյուրո կդառնա։ Բացի դրանից, Երեւանում Կենտրոնական բյուրոն իր բաժանմունքն ունի, որտեղ կուսակցության ազատ անդամագրում է կատարվում։ Նրան են հարում նաեւ վերջին տարիներս ձեւավորված այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են «Ազատ Հայք» եւ «Ազգային միասնության ուխտը», որոնք ժամանակին դիմել էին Աթենք՝ Կենտրոնական բյուրոյից պաշտոնական ճանաչում ստանալու համար։ Այստեղ է դիմել նաեւ Դաշնակցության տեղական կազմակերպությունը, որն առաջացել է ինքնուրույն, հետո՝ իր մեջ ներառել «ազգային անկախության միավորումից» անջատված մի խմբի, եւ համեմատաբար ինքնուրույն՝ երիտասարդական «Հայ երիտասարդների միություն» կազմակերպությունը։ Սակայն Կենտրոնական բյուրոն գտնում է,

որ այս բոլոր կազմակերպությունները պիտի հայտարարեն ինքնալուծարքի եւ նրանց անդամների Դաշնակցական կուսակցության մեջ կամավոր մտնելու մասին, որից հետո ընդհանուր հիմունքներով կկազմավորվի տեղական (կամ հանրապետական) բյուրո։ Եթե «Ազատ Հայքը» եւ «Ազգային միասնության ուխտը» Դաշնակցության հետ լուրջ տարաձայնություններ չունեն եւ ձեւական գոյություն են պահպանում (իսկ իրականում կուսակցության մեջ են), ապա տեղական դաշնակցականների եւ Կենտրոնական բյուրոյի միջեւ սուր տարաձայնություններ են առաջացել, առանձնապես զինված կազմավորումների եւ զանազան հրապարակային գործողությունների կապակցությամբ։

Ընդհանուր առմամբ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը (ե՛ւ տեղականը, ե՛ւ Հայաստանում ստեղծվող Կենտրոնական բյուրոն), բոլոր պրոդաշնակցական կազմակերպությունները հակադրվում են ՀՀՇ-ի քաղաքական ուղուն, եւ եթե նրանց հաջողվի հաղթահարելով բոլոր խոչընդոտներն ու տարաձայնությունները՝ միավորվել, ապա ՀՀՇ-ին կդիմակայի ուժեղ, բավականին կազմակերպված, ՀՀՇ-ին քանակով գերազանցող եւ ժողովրդի մեջ ավելի համակրանք վայելող մի կուսակցություն։ Մեր կարծիքով սա տեղի կունենա չորս-հինգ ամսվա ընթացքում։ Լեգալ վիճակի անցնելով, ՀՅԴ-ն արագ թափ կհավաքի եւ կմիանա իշխանության համար պայքարին։ Այստեղ պետք է վերապահում անել, որ ՀՅԴ-ն սոցիալիստական ընտրության կուսակցություն է, նրա տնտեսական քաղաքականության հիմքում ընկած է սոցիալիզմի եւրոպական մոդելը։ Կենտրոնական բյուրոն գտնում է, որ Հայաստանն անկախ գոյության պատրաստ չէ, որ ռուսական կողմնորոշումն այս պայմաններում ավելի է համապատասխանում Հայաստանի ազգային շահերին։ Չարժե մոռանալ, որ բոլոր արտասահմանյան հայկական կուսակցությունները արեւմտյան հատուկ ծառայությունների սեւեռուն ուշադրության առարկան էին։ Այնուամենայնիվ, իշխանության համար քաղաքական պայքարում, ասվածից ելնելով, ՀՅԴ-ն ըստ ամենայնի հանրապետության կոմկուսի հետ համագործակցության եւ կոալիցիայի կձգտի, որին պետք է մանրազնին նախապատրաստվել արդեն այսօր։

Ինչ վերաբերում է անկախ կուսակցությունների եւ կազմակերպությունների բլոկին՝ Հանրապետական կուսակցություն, ՀԱԱԿ, ԱԻՄ, ՍԻՄ եւ այն, ապա նրանք հետեւեցին ՀՀՇ-ին եւ նրա կողքին էին, քանի դեռ վերջինս հանդես էր գալիս գոյություն ունեցող կարգերի դեմ, բայց խորհրդարան հասնելով, այդ կազմակերպությունների եւ կուսակցությունների

ներկայացուցիչները սկսեցին «բնավորություն ցույց տալ», իրենց ինքնուրույն գիծը տանել: Կարծիք կա, որ Պարույր Հայրիկյանի Հայաստան վերադարձից հետո նրա ղեկավարության տակ նրանք նորից կմիավորվեն միասնական ազգային կամ ազգայնական կուսակցության մեջ: Բայց ավելի շուտ նոր ներխմբային պայքար կծավալվի՝ պայքար «առաջնորդ» լինելու համար, որից անպայման կօգտվեն ՀՀՇ-ն եւ ուրիշները: Նշված կազմակերպություններն այդ պրոցեսներին դիմակայելու բավականաչափ ու եւ ինտելեկտուալ կարողություններ չունեն:

Մնացած բոլոր հասարակական քաղաքական կազմակերպությունները թույլ են, փոքրաթիվ, ժողովրդի վրա ազդեցություն չունեն եւ, ըստ ամենայնի, ծավալվող քաղաքական պայքարում միշտ դեպի ուժեղը կկողմնորոշվեն:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ 1990-ին հանրապետության քաղաքական կյանքը միտինգային կրքերի եւ բացահայտ առճակատման փուլից անցել է (չնայած քաղաքական կուլտուրայի, խորհրդարանային պայքարի կուլտուրայի, իրազեկ եւ պատրաստված քաղաքագետների եւ այլնի բացակայությամբ պայմանավորված բազմաթիվ վերապահումների) քաղաքական կուսակցությունների մակարդակով խորհրդարանական պայքարի փուլին: Բազմաթիվ կազմակերպություններ, խմբեր եւ միություններ աստիճանաբար, ըստ քաղաքական հատկանիշների կլուծվեն համապատասխան կուսակցությունների մեջ: Եւ արդեն հաջորդ տարվա գարնանը հանրապետության քաղաքական կյանքում ի հայտ կգա խորհրդարանական պայքարի նոր փուլ, որը կապված կլինի սպասվելիք հասարակական–քաղաքական եւ տնտեսական ոլորտներում ճգնաժամի, հանրապետության կառավարության նկատմամբ բնակչության լայն խավերի աճող անվստահության հետ:

Այս կապակցությամբ ՀԿԿ-ն պետք է նախապատրաստի մի շարք անհետաձգելի ու նաեւ հեռանկարային միջոցառումներ:

Ա) Պետք է նախապատրաստվել կոմկուսի վրա հարձակումների նոր ալիքի, որը կհաջորդի տեղական խորհուրդների ընտրություններին: Ընդ որում՝ անհրաժեշտ է պասիվ պաշտպանության դիրք գրավել: Ժողովուրդը պետք է տեսնի, որ մեզ անտեղի են խփում եւ ցավակցի «թույլերին»: Կենտրոնում մեր պասիվությունը կարելի է փոխհատուցել շրջանային տեղական խորհուրդներում փոքրամասնություն կազմող ՀՀՇ-ականների դեմ ակտիվ պայքարով:

Ընդ որում, մի շարք առանձին սկզբունքային հարցերի կապակցությամբ Կենտրոնում անհրաժեշտ է ավելի վճռական եւ սուր հակահարված տալ ՀՀՇ-ի եւ այլ կազմակերպությունների, նաեւ մեր կուսակցության չափն ու սահմանն անցած նախկին անդամներին:

Շեշտը հատուկ պետք է դնել կառավարության տնտեսական քաղաքականության վրա, եւ աստիճանաբար սկսել դրա քննադատությունը՝ բնակչությանը պարենով մատակարարելու, փախստականների ու ձմեռվա շեմին աղետի գոտու վիճակի եւ այլ հարցերի վերաբերյալ համապատասխան հասարակական կարծիք ձեւավորելով:

Բ) Լուրջ ուշադրության է արժանի «Դաշնակցություն», «Ռամկավար» եւ «Հնչակ» կուսակցությունների հետ փոխհամաձայնության եւ հնարավոր համաձայնության հարցը: Նրանց ծրագրերի, գործողությունների ռազմավարության եւ մարտավարության, այն ամենի, ինչ մեզ միացնում կամ բաժանում է, նախնական քննարկումից հետո անհրաժեշտ է խորհրդարանական պայքարում նրանց հետ հնարավոր համագործակցության ձեւեր մշակել:

Այս կապակցությամբ հարկավոր է լայն քննարկման դնել բազմակուսակցության, այդ հիմքի վրա անցկացվելիք ընտրությունների, խորհրդարանական կուսակցական մեծամասնության կարգավիճակի կամ խորհրդարանում կուսակցական ֆրակցիաների հարցերը (չպետք է մոռանալ, որ ներկայիս շատ խորհրդարանականներ, հատկապես ՀՀՇ-ականներ, նախընտրական ժամանակաշրջանում իրական բազմակուսակցության բացակայությունը նկատի ունենալով, խոսում էին մեկուկես տարուց խորհրդարանի նոր ընտրությունների անցկացման անհրաժեշտության մասին):

Գ) Հասարակական կարծիքի համար պայքարի պայմաններում մեծ ուշադրության է արժանի կուսակցական մամուլի օրգանների համագործակցության հարցը: «Էպոխա», «Մունետիկ», «Հնչակ», «Անդրադարձ» եւ մի շարք այլ թերթերն ու ամսագրերը այդ պայքարում կարող էին ոչ վատ դաշնակիցներ հանդիսանալ:

Հարկավոր է մտածել սեփական կամ համատեղ ռադիո եւ հեռուստատեսային հաղորդումների հարցի մասին եւ այս ոլորտում ուրիշ կազմակերպությունների ու կուսակցությունների հետ համագործակցության համապատասխան ձեւերի մասին:

Դ) Հարկավոր է կշռադատել համատեղ զանգվածային միջոցառումների անցկացման մասին հարցը: Այսպես, հայտնի շատ կուսակցական եւ պետական, ինչպես նաեւ Խորհրդային Հայաստանի գիտության եւ մշակույթի գործիչներ ՀԿԿ ընդունվելուց առաջ վերոհիշյալ կուսակցությունն-

րի անդամ են եղել: Այստեղ հնարավոր տարբերակ է համատեղ հոբելյանական միջոցառումների անցկացումը: Հնարավոր է համատեղ գիտական, գիտապրակտիկ կոնֆերանսների անցկացումը հայկական միջավայրում եւ Հայաստանում մարքսիզմի տարածման վերաբերյալ, որին ժամանակին իրենց ակտիվ մասնակցությունն են բերել նշված (նկատի ունենք «Հնչակ» եւ «Դաշնակցություն») կուսակցությունները:

Ե) Պետք է փոխհամաձայնության ծրագիր մշակել մի շարք ուրիշ հասարակական կազմակերպությունների հետ, որոնք երբեմն քաղաքական հստակ դրույթներ չունեն: Դրանց մեծամասնությունն այսօր ընկնում է վերը նշված կուսակցությունների եւ ներառվում նրանց պրակտիկ գործունեության ոլորտի մեջ: Դրանք են «Հայ Դատ», «Գոյապահպանություն», «Հայկաշեն», «Եղեռնի դեմ պայքարի վետերանների միություն», «Արցախ», «Ամբերդ» եւ շատ ուրիշներ: Բանն այն է, որ սրանցից շատերը փոքրաքանակ են, բավականաչափ միջոցներ չունեն եւ սեփական գաղափարների եւ ծրագրերի իրականացման համար ուժեղ հովանավորի կարիք ունեն:

Զ) Ըստ երեւույթին ժամանակն է Գերագույն խորհրդում կոմունիստների ֆրակցիա կազմավորելու, խորհրդարանական պայքարի գործելակերպի ու սկզբունքային պաշտպանության հարցերի շրջանակը գծելու: Այդ կապակցությամբ հարկավոր է նշել, որ խորհրդարանում կան ուրիշ կուսակցությունների (հատկապես Դաշնակցության) ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող պատգամավորներ: Համատեղ աշխատանքի եւ համագործակցության ընթացքում նրանք ավելի «քաջ» ու ակտիվ կդառնան: Հետեւաբար իրավական եւ օրենսդրական նախաձեռնությունների համար համագործակցության ասպարեզ է բացվում:

Որպես վերջաբան կարելի է նշել, որ քաղաքական աշխատանքի ձեւերի արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված կլինի նրանով, թե մոտակա ժամանակներում ՀԿԿ-ն ինչպիսի՞ն կդառնա: Մեզ հետ կցանկանան գործ ունենալ, եթե իրական քաղաքական ուժ ներկայացնենք: Չնայած տեղական խորհուրդների ընտրություններում որոշակի հաջողություններին՝ ՀԿԿ-ն կանգնած է լուրջ փորձության առջեւ: Կուսակցության անդամ մտավորականության եւ բանվորների մեծ մասն սպասողական դիրք է գրավել՝ մինչեւ կուսակցության 29-րդ համագումարի արդյունքները: Շատերը երկյուղում են, որ չնայած վերին էշելոնի կադրերի հետ կապված զանազան կոսմետիկական միջոցառումներին, ՀԿԿ-ն կվերածվի նախկին նոմենկլատուրայի կուսակցության: Եթե այս երկյուղներն

արդարացված լինեն՝ կուսակցականներից շատ շատերը կհեռանան (որոշ հաշվարկներով՝ մինչեւ 60%-ը): Կուսակցության մեջ բեկում տեղի կունենա, հնարավոր է այն նորով փոխարինելը: Շատերը կարծում են, որ կադրերի կտրուկ բարեփոխությունները էլի կարող են հանգեցնել կուսակցական կառուցվածքների կազմալուծմանը, որոնք այժմ հիմնականում դիմանում են նոմենկլատուրայի ջանքերի շնորհիվ: Այդ պատճառով նրանք ավելի ճիշտ են համարում ԽՄԿԿ կազմից դուրս գալու եւ կուսակցության վերանվանման մասին (օրինակ՝ «Ժողովրդական» կամ «Սոցիալիստական ընտրությամբ», «Ժողովրդադեմոկրատական») հայտարարելը: Այնուհետեւ համագումարում նոր ղեկավարություն չընտրելով՝ նախաձեռնել կուսակցության վիճակի վերստուգումը կուսակցական ժողովների, կոնֆերանսների եւ այլնի միջոցով: Միաժամանակ հարկավոր է անցկացնել սկզբնականից մինչեւ կուսակցության կենտրոնի եւ նրա բյուրոյի համապատասխան բոլոր մակարդակների ղեկավարների ընտրություն:

Մանրամասների մեջ չխորանալով՝ նշենք, որ դա առաջարկվող ձեւերից միայն մեկն է: Բայց այն բանին, որ նախքան համագումարն անհրաժեշտ է շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ հնարավոր բոլոր տարբերակների քննարկում եւ հետազոտում անցկացնել, մենք չենք կասկածում: Կուսակցությունն իր ձեւի մեջ պահելն ինքնանպատակ չէ: Նրա ձեւափոխումն ու հանրապետության առողջ ուժերի՝ երկրում կատարվող դրական տեղաշարժերին մասնակցությունը, աշխատավորների շահերի, աշխատավորների շահերի ավելի համախմբված պաշտպանության իրականացումը նշանակալիորեն կամրապնդի կուսակցության ուժերն ու ժողովրդի վրա ազդեցությունը:

30.10.90.

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Ըստ լրացուցիչ տեղեկությունների, Պ. Հայրիկյանի՝ հանրապետություն վերադառնալու կապակցությամբ նկատելի է ԱԻՄ-ի, ՍԻՄ-ի, «Միացում»-ի եւ Հանրապետական կուսակցության մերձեցման եւ համատեղ գործունեության միտում:

Այս «կոալիցիան» մտադիր է մոտ օրերս առաջ քաշել եւ փորձել անցկացնել մի քանի հանձնաժողովների նախագահի միասնական թեկնածուների (օրինակ՝ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ա. Նավասարդյանը կամ Պ. Հայրիկյանը կարող են առաջ քաշվել որպես հանրապետության Պետականության վերականգնման հանձնաժողովի նախա-

գահ, Ս. Բաղդասարյանը՝ Արցախի հանձնաժողովի նախագահ եւ այլն): Լիարժեք համագործակցության դեպքում խմբավորումը կարող է հանդես գալ որպես կտրուկ փոփոխությունների կողմնակից օպոզիցիոն ուժ:

Մի շարք սկզբնական կուսակցական կազմակերպություններում, շրջանային կոմիտեներում առանձին կոմունիստների կողմից հարց է բարձրացվում ՀԿԿ 29-րդ համագումարում ընդունել միայն նոր կանոնադրությունը (որոշակի խմբագրական աշխատանքից եւ ճշգրտումներից հետո), իսկ Ծրագրի մշակումը հանձնարարել Հատուկ հանձնաժողովին (որը կստեղծվի նորընտիր քարտուղարության կողմից) եւ քննարկման դնել ավելի ուշ: Ըստ որում, առաջարկվում է համագումարում, մինչ Կանոնադրության եւ Ծրագրի հարցերին անցնելը, սկզբունքորեն լուծել Հայաստանի կոմկուսի կարգավիճակի հարցը. (1. ԽՄԿԿ-ի կազմում, 2. ԽՄԿԿ-ում՝ որպես ինքնուրույն հանրապետական կոմկուսների իրավահավասար անդամ, 3. ինքնուրույն, ԽՄԿԿ-ից դուրս եկած Հայաստանի կոմկուս):

Զգալի թվով սկզբնական կազմակերպությունների ինքնակազմալուծման պայմաններում լուրջ անհանգստություն է առաջացնում անկախ իրենց կամքից, մեխանիկորեն կոմկուսից դուրս մնացած բավականին մեծ քանակությամբ կոմունիստների կարգավիճակը: Բացի, թերեւս, Խորհրդային շրջկոմից, մնացյալները լուրջ աշխատանք չեն ծավալում այդ կոմունիստներին շրջկոմներում հաշվառման վերցնելու ուղղությամբ:

Թարգմանված է ռուսերենից, բոլոր ընգծումները, անվանումները եւ այլն համապատասխանում են բնագրին:

Հայք» 15.05.1991

ՑԱՆԿԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբյուրներ

Արխիվներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)
Հայաստանի Հանրապետության Առաջին նախագահի արխիվ (ՀՀԱՆԱ)

Պաշտոնական տեղեկագրեր
Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990-1991
Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1990
Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990-1991
Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ, 1990-1991
Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного совета СССР, 1991 (հուլիս-դեկտեմբեր)

Հրապարակված փաստաթղթեր
Գալստյան Հ., Չուղարկված նամակներ, Երեւան, 2013:
«**Գիտնականը** եւ նախագահը. Լեւոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ», Անտարես, Երեւան, 2020:
Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակը, փաստաթղթերի ժողովածու, կազմեցին՝ Բաբկեն Արարաքցյան, Աշոտ Սարգսյան, Գոհար Խաչատրյան, Երեւան, 2016)
Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է, հոդվածների ժողովածու Երեւան, 2002
Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատեւման փակուղում, Երեւան, 2002
Մինասյան Գ., Հանրաքվե, Երեւան, 1992

ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմէջէն (1988-1991) կազմեց Եղիա Գայայեան, Նիկոսիա, 2003

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնական օրենք), Երեւան, 1989

Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երեւան, 2006

Տեր-Պետրոսյան Լ., «Նախկին համակարգին վերադարձ չկա» (Los Angeles Times, 25.08.1991 հայերեն թարգմանությունը «Ազգ», 28.08.1991):

Абасов А., Хачатряан А., Карабахский конфликт, варианты решения: идеи и реальность, Москва, 2004,

Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 3, январь-декабрь 1990 года, Ереван, 1993.

Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 4, январь 1991- январь 1993, Ереван, 1994.

Ельцин Б., Записки президента, Москва, 1994

Левон Тер-Петросян в российской прессе, Москва, 2018, с. 324-325.

Сахаров А. Д., Выступление на сьезде народных депутатов 09. июня 1989г. https://www.youtube.com/watch?v=LGnqZ8HPv0g

Մամուլ

«Ազգ»
«Ազդակ»
«Ավանգարդ»
«Դրոշակ»
«Երեկոյան Երեւան»,
«Երկիր»
«Էջմիածին»,
«Հայք»,
«Հորիզոն»,
«Խորհրդային Հայաստան»
«Խորհրդային Ղարաբաղ»
«Հայաստան»

«Հնչակ Հայաստանի»,
«Յառաջ»,
«Պայքար»
«Ուրբաթ»,
«Аргументы и факты»
«Голос Армении»
«Известия»
«Комсомольская Правда»,
«Литературная Газета»
«Независимая Газета»
«Правда»
«Le Figaro»
«The New York Times»
iLur.am
1in.am

Գրականություն

Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Երեւան, 2003:

Բժեզինսկի Զ., Խորհրդային Միության անկումը, «Հայաստանի Հանրապետություն», 09.01.1991

Գազանճյան Կ., Հայաստանի Հանրապետության առաջին տարիները, Պեյրութ-Լիբանան, 1997

Գայդար Ե., Կայսրության կործանումը, Երեւան, Անտարես, 2019

Ջեյթունցյան Պ., Ցուլերը դեռ այնտեղ են, Երեւան, 1990:

Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երեւան, 1999

Հայասանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, 1990-1995, Երեւան, 1995

Հայոց Պատմություն, հ.4, գիրք երկրորդ, Երեւան, ՀՀ ԳԱԱ, 2016

Հայոց պատմություն, դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբագրությամբ Հր. Ռ. Սիմոնյանի, Երեւան, 2002

Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994) հանրագիտարան, Երեւան, 2004:

Պերպերյան Ն., Ինչո՞ւ լռած են անկախության փերեզակները, «Դրոշակ», 25.09.1991

Սարգսյան Ա., Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը», Երեւան, 2015

Սարգսյան Ա., Ղարաբաղյան շարժման պատմություն, 1988-1989, Անտարես, Երեւան, 2018

Քաջազնունի Հ., «Դաշնակցությունն անելիք չունի այլեւս», Երեւան, 1994, էջ 42:

Ուլոյան Հ. Հայաստանի շրջափակումը. Քարոզչական ստի հետքերով, մաս 1, «iLur.am.», 10.01.2020 http://www.ilur.am/news/view/79708.html, մաս 2, «iLur.am.», 13.01.2020 http://www.ilur.am/news/view/79738.html):

Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, Երեւան, 1997

Армения: Проблемы независимого развития, Российский институт стратегических исследований,
Москва, 1998.

Багратян Г., Земельная реформа, вопросы теории и практики. Ереван. 2003

Боффа Джузеппе, От СССР к России. История неоконченного кризиса, 1964-1994, М. 1996

Независимый Азербайджан: новые ориентиры, Российский институт стратегических исследований, т. 1, Москва, 2000, с. 14.

Кубатьян Г, Благие намерения, очерки терроризма, в основном армянского, Ереван, 2003.

Томас де Ваал, Черный сад, Москва, 2005.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբաղյան Արմեն 461
Աբասով Ա. 417
Աբգարյան Երջանիկ 59, 60, 174, 266, 352, 353
Աբրահամյան Դերենիկ 411
Աբրահամյան Խորեն 424
Աբրահամյան Մկրտիչ 458
Ադոյան Ոստանիկ 458
Ազարյան Ռուդիկ 42
Ազնավուր Շառլ 82
Ալեքսեեւսկի Կ.Մ. 355,
Ալիեւ Հեյդար 259
Ախրոմեեւ Սերգեյ 399
Ակաեւ Ասքար 260, 303
Ակնունի Էդվարդ 114
Ահարոնյան Ավետիս 114
Աղազարյան Հովիկ 286, 376
Աղաջանյան Ռոլես 42, 233
Աղաջանյան Ռուստամ 134, 529
Աղաջանյան Վալերի 26, 230
Ամիրյան Ռոբերտ 144
Այվազյան Աղասի 424
Այվազյան Ռոբերտ 134, 529
Այվազյան Սմբատ 353
Այվազյան Վիտյա 165
Անանիկյան Լեւոն 266
Անդրեասյան Հրաչյա 458
Անդրեեւ Վ. 128
Անդրեոտի Ջուլիո 514
Աչալով 328
Ապրիամով Էնրիկո 458
Առաքելյան Սարգեյ 134, 529
Առաքելյան Վարազ 424
Առուստամյան Հակոբ 438
Ասատրյան Բագրատ 266
Ավագյան Գրիգոր 204
Ավագյան Շահեն 461
Ավագյան Սեյրան 387
Ավետիքյան Հակոբ 292, 293
Արաբո Ա. 114
Արարքցյան Բաբկեն 44, 48, 82, 145, 149, 151, 169, 204, 266, 305, 338, 361, 401, 418, 435, 461
Արեշյան Գրիգոր 460
Արզումանյան Ալեքսանդր 224, 226
Արշակյան Ազատ 295, 438, 439, 454
Աֆանասեւ Ցուրի 70

Բ

Բաբախանյան Աշոտ 74,
Բաբայան Սեմյոն 51, 231
Բաբայան Վիգեն 42
Բաբլոյան Արա 460
Բաբուրյան Կարեն 520
Բագրատյան Հրանտ 114, 209, 210, 258, 266, 460

Բաղալյան Սերգեյ 413
Բաղամյանց Վալերի 70, 107, 127, 164, 166, 240
Բազիկյան Ռուբիկ 48
Բալայան Զորի 98, 131, 437, 439, 441, 443
Բալայան Կիմ 286, 426
Բակատին Վ. Վ. 42, 75, 159, 198, 324, 335, 413, 505, 511
Բաղդասարյան Ալբերտ 114, 174, 266
Բաղդասարյան Գեւորգ 134, 529
Բաղդասարյան Ռաշիդ 42
Բաղդասարյան Սեյրան 280, 286, 426
Բաղյան Գրիշա 138
Բատկին Լեոնիդ 42, 43, 48
Բարսեղյան Տարիել 203, 204
Բեզիրջյան Խաչատուր 74
Բեյքեր Ջեյմս 36
Բժեզինսկի Զբիգնեւ 244, 245
Բլեյան Աշոտ 46, 266
Բոֆֆա Ջուզեպպե 396
Բուդեյկին 355
Բուշ Ջորջ 36, 126, 354, 355, 396, 404 463, 464, 514
Բուրբուլիս Գենադի 467

Գ

Գաբրիելյան Վահան 361, 522
Գազանճյան Կ. 241, 465
Գաբրիելյան Մեխակ 153, 155, 342, 347
Գալոյան Գալուստ 70
Գալստյան Լեւոն 144, 164
Գալստյան Համբարձում 46, 54, 114, 149, 169, 196, 224, 266
Գամսախուրդիա Զվիադ 226, 259, 304, 321
Գայայեան Եղիա 110
Գայդար Եգոր 176, 469
Գասպարյան Գոհար 424
Գասպարյան Տիգրան 453
Գեղամյան Արտաշես 128, 129
Գենշեր Հ. 404
Գեոնջյան Արշավիր 291
Գեւորգյան Արտավազդ 203, 204
Գեւորգյան Գագիկ 134, 529
Գեւորգյան Համլետ 204
Գեւորգյան Սամվել 113, 149, 169, 258, 266, 460
Գզողյան Ֆելիքս 353
Գիրենկո Ա. 22, 25, 29
Գնունի Վարդգես 460
Գորբաչով Միխայիլ 27, 34, 37, 45, 50, 67, 68, 70, 71, 90, 145, 167, 217, 219, 222-226, 232, 235, 238, 242, 244, 245, 251, 256, 296, 305, 307, 319, 320, 322-324, 328, 334, 335, 338, 351-354, 359, 360, 364, 370, 389, 390-396, 403, 405-407, 409, 410, 414, 415, 421, 466, 467, 469, 505, 506, 510, 511, 514, 522,
Գորգիսյան Մովսես 48
Գորդիենկո Իգոր 458
Գորդմանիս Իվար 259

Գրիգորյան Ավետիք 42
Գրիգորյան Համլետ 232, 333
Գրիգորյան Միքայել 458
Գրիգորյան Ստեփան 426
Գրիգորյան Վալերի 458, 522
Գրիգորյան Վաչագան 131

Դ

Դալիբալթայան Գուրգեն 458
Դայան Վ. 81
Դանիելյան Կարինե 460
Դավթյան Լեւոն 460
Դավթյան Վարդգես 526
Դավիթ Անանուն 171
Դեմիրճյան Կարեն 106
Դիլանյան Թելման 149
Դիմիտրով Ֆիլիպ 5, 8
Դյումա Ռ. 338
Դոով Ռոբերտ 224
Դուրյան Օհան 424

Ե

Եգորյան Էդուարդ 114, 204, 266, 332
Ելցին Բորիս 70, 71, 222, 223, 226, 238, 244, 250, 251, 259, 303, 307, 337, 355, 356, 371, 390, 392-395, 397-400, 402, 403, 405, 407-409, 414, 415, 458, 467, 468, 475, 516,
Եղիազարյան Ազատ 97
Եսայան Աշոտ 460
Երին Վ. 126

Զ

Զաղոյան Դավիթ 258
Զարդարյան Հովհաննես 424
Զեյթունցյան Պերճ 97, 191
Զեյնալյան Գեւորգ 48
Զինեւիչ Անատոլի 458
Զոլյան Սուրեն 438
Զուռնաչյան Վարդան 204, 266

Է

Էլչիբեյ Աբուլֆազ 259

Թ

Թամազյան Սարգիս 134, 529
Թաշճյան Սեպուհ 461
Թոմաս դե Վալ 323, 357
Թորոսյան Ռուբեն 286
Թոքմաջյան Լեւոն 424

Ժ

Ժուկով 323

Ի

Իշխանյան Ավետիք 174, 266
Իշխանյան Ռաֆայել 114, 165, 266
Իսաղուլյան Գառնիկ 376
Իվանյան Քրիստափոր 458
Իվանս 47

Լ

Լազարյան Տեր-Հուսիկ 266, 436
Լանդսբերգիս Վիտաուտաս, 47, 221, 259

Լենին 500
Լեո 171
Լեւոնյան Տիգրան 424
Լիբերման Ջոզեֆ 8
Լիպարիտյան Ժիրայր 386, 450, 451, 452, 461
Լոբով Օլեգ 45, 70, 113, 374
Լուկին 500
Լուկյանով Ա.Ի. 324, 335, 395, 505, 511, 522

Խ

Խաչատրյան Ա. 417
Խաչատրյան Լյուդվիգ (Վարազդատի) 74, 305
Խաչատրյան Լյուդվիգ 387
Խաչատրյան Հրանտ 204, 295, 362, 437, 439
Խաչատրյան Մհեր 204
Խաչատրյան Վիգեն 151
Խաչատուրով Ցուրի 458
Խանզադյան Սերո 424
Խուդավերդյան Արա 134, 529
Խուրշուդյան Լենդրուշ 97, 99, 107, 114, 120, 121, 271

Կ

Կալեսնիկով 328
Կալուգին Օլեգ 94
Կայֆու Տոշիկի 514
Կապուտիկյան Սիլվա 97, 99, 104, 120, 121
Կարամանուկյան Շահեն 266, 461
Կարապետյան Հրայր 428
Կեբիչ Վյաչեսլավ 467
Կլեյբորն Պել 34
Կյուրեղյան Տիգրան 286
Կոլ Հելմուտ 224, 514
Կոսոլապով 39
Կրավչուկ Լեոնիդ 259, 331, 467, 508,
Կրյուչկով Վ.Ա. 251, 324, 328, 329, 335, 395, 396, 505, 510, 511
Կրուչինա Նիկոլայ 399
Կուբատյան Գեորգի 450

Հ

Հախվերդյան Լեւոն 97
Հակոբ Մովսես 460
Հակոբյան Ալեքսան 149, 169, 258, 266
Հակոբյան Հակոբ (նկարիչ) 424
Հակոբյան Հրանուշ 83
Հակոբյան Մյասնիկ 438
Հակոբյան Սմբատ 174, 266, 387
Հաճյան Ասատուր 461
Համբարձումյան Վիկտոր 131, 423, 424
Հայրապետյան Հովիկ 134, 529
Հայրապետյան Վլադիմիր 458
Հայրիկյան Պարույր 80, 149, 151, 199, 266, 268, 280, 295, 297, 348, 379, 380, 438-443, 454, 534, 537
Հարությունյան Գագիկ 151, 258, 271, 437, 460
Հարությունյան Լեւոն 134, 529

Հարությունյան Խոսրով 258
Հարությունյան Միքայել 458
Հարությունյան Սուրեն 70, 84, 85, 86, 87, 149
Հարությունյան Վահան 26, 28, 33, 40, 42, 78, 230, 320, 334, 361, 415, 522
Հովհաննիսյան Արամ 266
Հովհաննիսյան Գագիկ 376
Հովհաննիսյան Էդիկ (Էդուարդ) 306, 377, 431
Հովհաննիսյան Վահան 427, 438, 439
Հովհաննիսյան Վոլոդիա 204
Հովհաննիսյան Ռաֆֆի 460, 461
Հովսեփյան Հովսեփ 461

Ղ

Ղազարյան Մարտիրոս 134, 529,
Ղազարյան Ռաֆայել 13, 56, 60, 77, 149, 169, 266, 315, 426, 438, 439, 443
Ղազարյան Սամսոն 149, 169, 171, 387
Ղազարյան Սասուն 134, 149, 529
Ղազինյան Ռաֆիկ 376
Ղանադյան Արմեն 134, 529
Ղարագեբակյան Ստեփան 266
Ղուլյան Ցուրի 510
Ղուկասյան Արկադի 42
Ղուկասյան Ղուկաս 458
Ղուկասյան Սանասար 134, 529

Ճ

Ճգնավորյան Լորիս 424

Մ

Մաթեւոսյան Հրանտ 424
Մալրունի Բրայան 514
Մախկամով Կախար 260, 303
Մակաշով 331
Մամիկոնյան Ֆելիքս 400, 516
Մայիլյան Արամ 266
Մանասերյան Նորայր 286, 315, 376
Մանգասարյան Ռաշիդ 42
Մանթաշյան Գրիգոր 266
Մանսուրյան Տիգրան 424
Մանուկյան Արամ 153, 436, 451
Մանուկյան Վազգեն 44, 114, 129, 149, 151, 152, 160, 169, 192-194, 217, 258, 259, 297, 345, 347, 348, 380-387, 402, 416, 426, 437, 438, 453, 459
Մանուչարյան Աշոտ 46, 74, 129, 149, 159, 169, 221, 258, 266, 330, 461, 508
Մանուչարով Արկադի 80, 146
Մարգարյան Հայրապետ 134, 529
Մարգարյան Մարո 424
Մարգարյան Ֆելիքս 134, 529
Մարգարյանց Վլադիմիր 63, 70, 80, 81, 126, 192, 240, 499
Մարզպետյան Հարություն 437
Մարտիրոսյան Գագիկ 460
Մարտիրոսյան Իշխան 461
Մարուխյան Ալիս 168

Մարուխյան Հրայր 104, 285, 432, 444
Մելիք-Շահնազարյան Լեւոն 520
Մելքոնյան Մոնթե 461
Մեյջոր Ջոն 353 404, 512, 514
Մեսրոպյան Սեդա 4
Մինասյան Աշոտ 134, 529
Մինասյան Գագիկ 424
Մինասյան Կայծ 450
Միտերան Ֆրանսուա 125, 338, 353, 514
Միտչել 224
Միրզոյան Էդուարդ 424
Միրզոյան Մաքսիմ 360, 520
Միքայելյան Գեղազնիկ 165
Միքայելյան Վարդգես 96
Մոզյան Ռուբեն 461
Մոյիսեեւ Մ. 198, 514, 515
Մովսիսյան Յուրի 204, 266
Մովսիսյան Վլադիմիր 75, 86, 89, 126, 140, 144, 149- 151, 267, 460, 499
Մորիկյան Այդին 202
Մութալիբով Այազ 32, 230, 237, 239, 242, 303, 320, 322, 323, 324, 325, 355, 356, 361, 415, 506, 511, 521
Մուսինյան Արման 4
Մուրադյան Իգոր 153, 342, 363
Մուրադյան Սարգիս 286, 426

Յ

Յազով Դ.Տ. 42, 43, 49, 249, 324, 335, 351, 355, 395, 399, 505, 511, 513
Յակովլեւ Ա. Ն. 324, 335, 505, 511,
Յանաեւ Գ.Ի. 324, 328, 335, 395, 396, 505, 511
Յուզբաշյան Կարեն 153, 423

Ն

Նազարբաեւ Նուրսուլթան 226, 259, 303, 410, 414, 415, 475
Նավասարդյան Աշոտ 153, 204, 295, 362, 337, 439, 443, 454
Նավասարդյան Էմիլ 361, 522
Ներսիսյան Ալֆրեդ 134, 529
Նիյազով Սափարմուրադ 260, 303
Նժդեհ Գարեգին 114
Նիշանով Ռ. 22, 25

Շ

Շաբաղ Ա.Ե. 356
Շահբազյան Գագիկ 460
Շահգալդյան Նիկոլ 461
Շահինյան Սամվել 134, 387, 426, 529
Շահնազարյան Դավիթ 174, 266, 268
Շառոյան Գարիկ 134, 529
Շատալին Յու. Վ. 128, 164, 323, 325, 326, 500, 501, 506, 512
Շարաֆուդինով Սուրաբ 231
Շելով-Կովեդյաեւ 337
Շեյնիս Վ. Լ. 356
Շեւարդնաձե Էդուարդ 246, 259
Շիլով 128, 500
Շիշմանյան Միրոն 461

Շիրակ Ժակ 226, 404
Շիրխանյան Վահան 134, 258, 529
Շուշկեւիչ Ստանիսլավ 5, 8, 259, 303, 467
Շուքուրով Ռուստամ -231

Ո

Ոսկանյան Հրանտ 70, 126, 499
Ոսկանյան Աշոտ 204, 266

Չ

Չեքիջյան Հովհաննես 424
Չիֆթալարյան Ռուբեն 460
Չորմիսյան Լեւոն 171

Պ

Պալմ Վիկտոր 70
Պապայան Ռաֆայել 204, 412
Պասկեւիչյան Տիգրան 266
Պավլով Վ.Ս. 324, 395, 405, 505
Պատրիկեեւ Վ. 164, 330, 508,
Պետրոսյան Ալիկ 134, 529
Պետրոսյան Գեորգի 376, 520
Պետրոսյան Լեոնարդ 239, 361, 415, 416
Պետրոսյան Շահեն 114, 266
Պետրոսյան Շմավոն 360, 520
Պետրոսյան Ռազմիկ 42
Պետրոսյան Ռաֆիկ 204
Պետրոսյան Ռոբերտ 42
Պետրոսյան Վարդգես 424
Պետրոսյան Վլադիմիր 96
Պերես Դը Կուելյար 305, 329, 355
Պերպերյան Ն. 431
Պիշչեւ 330, 508
Պոլյանիչկո Վ. 25, 42, 323, 506
Պողոսյան Հենրիկ 239, 359, 520
Պողոսյան Ստեփան 82, 97, 273, 274, 530
Պողոսյան Վալերի 258, 460
Պողպատյան Գրիգոր 460
Պոնոմարյով Լ.Ա. 356
Պոպով Գավրիլ 70, 223, 392
Պրեստոն Լարի 34
Պրիմակով Ե.Մ. 29, 324, 335, 505, 511
Պուգո Բ.Կ. 323, 324, 326, 335, 352, 395, 399, 505, 510, 511

Ջ

Ջուլհակյան Ռոմեո 460

Ռ

Ռիժկով Նիկոլայ 63, 67, 135
Ռուբինյան Կարապետ 266

Ս

Սադոյան Արշակ 174, 204, 266, 387, 426
Սազանդարյան Տաթեւիկ 424
Սախարով Անդրեյ 70
Սահակյան Արա 152, 204
Սահակյան Արամայիս 286
Սաղաթելյան Մուշեղ 134, 529
Սաղումյան Երվանդ 48
Սայմոն Փոլ 34

Սավիսաար Էդգար 47, 259
Սարգսյան Աշոտ 4, 5, 10, 21, 35, 88, 95, 161, 212
Սարգսյան Արամ 274, 373, 41
Սարգսյան Ցուրի 204
Սարգսյան Սերժ (Սերժիկ) 401
Սարգսյան Սոս 97, 131, 438, 439, 441, 443, 444
Սարգսյան Վազգեն 48, 114, 133, 134, 164, 258, 266, 313, 361, 401, 458, 460, 529
Սարգսյան Վլադիմիր 42
Սարգսյան Տիգրան 266, 387, 426
Սարդարյան Կտրիճ 114, 258, 266, 461
Սարկիսյան Մուրազ 458
Սարյան Արման 461
Սաֆարյան Աշոտ 460
Սաֆարյան Խաչիկ 424
Սաֆարյան Ֆելիքս 101
Սաֆոնով Վ. 40, 79, 138
Սեդրակյան Հրաչյա 291
Սեյրանյան Սլավիկ 361, 522
Սեյան Միքայել 60
Սերոբյան Մարատ 48
Սիլաեւ Ի. 29, 222
Սիմոնյան Արթուր 458
Սիմոնյան Հրաչիկ 10, 13, 56, 77, 107, 149, 424
Սիրադեղյան Վանո (Վանիկ) 114, 129, 149, 169, 258, 266, 348, 383
Սլյունկով Ն. 29
Սնեգուր Միրչա 259
Սոբչակ Անատոլի 223, 392
Ստամբոլցյան Խաչիկ 266
Ստարովոյտովա Գալինա 159
Ստեփանյան Լեւոն 458
Ստեփանյան Վահե 204, 460
Սուրկով Մ. 44, 48, 129, 240

Վ

Վազգեն Ա կաթողիկոս 144, 198, 231, 446
Վարդանյան Գեւորգ 305, 460
Վարդանյան Դավիթ 46, 149, 170, 387, 416, 426, 438
Վարդանյան Կամո 266
Վարդանյան Վահան 134, 529
Վարդանյան Վարդան 161
Վարդանով Ալեքսանդր 461
Վարդերեսյան Վարդուհի 424
Վեզիրով Աբդուռահման. 22, 28, 32
Վիլսոն Փիթ 34
Վրացյան Սիմոն 114
Վուրալ Վոլքան 227

Տ

Տասնապետյան Հրաչ 444
Տեր-Գեւորգյան Գեւորգ 134, 529
Տեր-Գրիգորյան Նորատ 458
Տեր-Մանվելյան Մաթեւոս 461
Տեր-Պետրոսյան Լեւոն 8, 13, 30, 48, 56, 74, 75, 77, 82, 99, 114, 121, 124, 125, 149-151, 159, 160, 164, 167, 168, 170, 180, 192, 198, 204, 205, 217-221, 223-227, 229, 231, 235-239, 242, 246, 247, 258, 264, 266, 291, 302, 308, 312, 317, 318, 324, 328, 330, 331, 334, 335, 337, 338, 339, 342-344, 347, 350, 356, 357, 360, 361, 364, 370, 371, 376, 381, 389, 390, 400, 402, 404, 405, 407, 408, 411, 414, 415, 421, 424, 436-439, 441-444, 447, 448, 451-453, 455, 458, 463, 468, 475, 476, 502, 505, 506, 509-511, 514, 516, 526, 527
Տեր-Ստեփանյան Քրիստիան 461
Տրուբին Մ.Ս. 510

ՈՒ

Ուլոյան Հարութ 35
Ուլուբաբյան Բագրատ 97, 356

Փ

Փանոսյան Ժակ 461
Փափազյան Վահան 258, 266, 461
Փափազյան Վարանդ 107
Փիրումով Ալեքսանդր 134, 529

Ք

Քաջազնունի Հովհաննես 307
Քերի Ջոն 34
Քոչարյան Շավարշ 204, 266, 387
Քոչարյան Ռոբերտ 13, 56, 74, 77, 266
Քոչարյան Վիլեն 361, 522
Քոչինյան Հենրիկ 460

Օ

Օզալ Թուրգութ 307, 355
Օհանյան Հայկ 44
Օսկանյան Վարդան 461

Ֆ

Ֆաբիուս Լորան 36, 126
Ֆոկին Վիտոլդ 467
Ֆոտեեւ Վ. Կ. 25

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ցանկի մեջ ներառնված չեն առավել շատ հաճախ հանդիպող՝ Խորհրդային Միություն (ՍՍՀՄ, ԽՍՀՄ), Մոսկվա, Հայաստան (ՀՍՍՀ, ՀԽՍՀ), Երևան, Լեռնային Ղարաբաղ (ԼՂԻՄ, Արցախ), Ադրբեջան (Ադրբեջանական ՍՍՀ, ԽՍՀ) անվանումները:

Ա

Աբովյան (շրջան, քաղաք) 199
Ազատ (գյուղ) 26, 43, 44, 47, 56, 505
Ազատության հրապարակ 499
Ալավերդի 134, 529
Ալմա-Աթա 468
Ամասիայի շրջան 530
Ամարասի վանք 320
ԱՄՆ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 8, 33, 34, 36, 224-226, 233, 339, 354, 355, 390, 396, 404, 463, 464, 469, 478, 514
Այնթափ 134, 529
Անգլիա (տե՛ս Մեծ Բրիտանիա)
Անդրկովկաս 520
Անիի շրջան 134, 529
Աշտարակ, Աշտարակի շրջան 134, 529
Ասկերան 356
Ավստրիա 36, 225
Արարատ, Արարատի շրջան 48, 134, 512, 529
Արևելյան Եվրոպա 8, 34, 175, 209, 390, 477, 479, 497
Արևելյան Հայաստան 103, 104
Արևմտյան Հայաստան 103, 104
Արծվաշեն 332, 513
Արտաշատի շրջան 160

Բ

Բալահովիտ 199
Բալթիկա (տե՛ս Մերձբալթիկա)
Բալթիկ ծով 66
Բաքու 21, 25-29, 31, 32, 34, 36-39, 42, 45, 54, 75, 76, 78, 127, 131, 177, 230, 137, 139, 242, 320, 328, 355, 356, 361, 415, 499, 505, 527
Բելառուս 5, 8, 248, 251, 259, 303, 391, 396, 467, 478
Բելգիա 36
Բելովեժյան Պուշչա 467
Բեռլին 8
Բեսարաբիա 66
Բերդաձոր 240, 324, 370, 505, 506
Բրյուսել 404
Բուզլուխ 351, 352, 355, 356
Բուլղարիա 5, 8, 36

Գ

Գանձասարի վանք 320
Գետաշեն, Գետաշենի ենթաշրջան 25, 26, 30, 42, 43, 44, 46, 47, 51, 55, 58, 78, 163, 164, 177, 223, 230, 231, 240, 321, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 331, 335, 362, 370, 380, 505, 506, 507, 508
Գերմանիա 224, 249, 390, 395, 404, 514
Գորիս, Գորիսի շրջան 29, 37, 39, 45, 49, 79, 323, 330, 508, 512, 519,
Գուգարք 151

Դ

Դավոս 228

Ե

Եղեգնաձորի շրջան 48, 134, 529
Եղծահող 240
Երասխավան 48, 54, 131

Զ

Զարդախաչ 356

Է

Էջմիածին
Էստոնիա 47, 65, 67, 191, 244, 249, 304, 367, 368, 372, 391, 404, 447,
Էրեբունի (թաղամաս) 129, 500
Էրքեջ 351, 352, 355, 356

Թ

Թալինի շրջան 134, 529
Թբիլիսի 250, 361
Թուրքիա 11, 33, 88, 89, 102, 155, 220, 227, 246, 289, 293, 308, 310, 311, 318, 369, 375, 376, 385, 387, 419, 429, 463, 468
Թուրքմենստան 248, 260, 303, 396

Ժ

Ժելեզնովոդսկ 413, 415, 417, 475,
Ժնև 34,

Ի

Իմերեթ-Քերեվանդ 356
Իջևան 134, 418, 501, 512, 529
Իտալիա 225, 514
Իրան (Իրանի Իսլամական Հանրապետություն) 22, 33, 35, 220, 246

Լ

Լաչին 40, 41, 45, 79
Լատվիա 36, 47, 65, 67, 221, 222, 244, 249, 259, 304, 337, 367, 368, 371, 391, 404, 513
Լենինական 120, 530
Լենինգրադ 66, 223, 337
Լենինյան շրջան (Երևան) 134, 559
Լիտվա 36, 47, 65, 66, 67, 220, 221, 244, 249, 259, 304, 337, 367, 368, 371, 391, 404, 447, 513
Լոզան 11
Լոռի 151

Խ

Խանլար, Խանլարի շրջան 43, 47, 507

Խոզնավար 332
Խորհրդային շրջան (Երեւանի) 134, 529

Կ
Կալիֆորնիա 225
Կամո 43, 44, 47, 56, 505
Կանադա 226, 514
Կապան 336, 433, 512, 530
Կարաչինար 26, 351
Կարմիրի շրջան 134, 501, 512, 529, 530
Կասում-Իսմայլովսկ 320
Կենտրոնական Եւրոպա 5, 8
Կիչան 510
Կիպրոս 225
Կիրանց 332
Կիրովական 92
Կոռնիձոր 131, 332
Կովկաս 465
Կրասնովոդսկ 28
Կուբաթլի 41, 50
Կուզբաս 397
Կուչչի Արմավիր 25

Հ
Հադրութ 138, 331, 356, 370
Հաթերք 356, 401, 516
Հարավային Ադրբեջան 21
Հյուսիսային Ադրբեջան 21
Հյուսիսային Ամերիկա 226
Հյուսիսային Արցախ 45, 54, 56
Հոկտեմբերյանի շրջան 134, 501, 529
Հոռաթաղ 356
Հրազդան, Հրազդանի շրջան 134

Ղ
Ղազախ 164, 230, 418
Ղազախստան 191, 248, 251, 260, 303, 391, 396, 408, 414, 415, 416, 417, 418, 468, 475
Ղափան (տե՛ս Կապան)
Ղրիմ 395
Ղրղզստան 248, 260, 303, 391, 396

Ճ
Ճապոնիա 355, 514

Մ
Մանաշիդ 26, 351, 352, 355, 356
Մաշտոցի շրջան (Երեւան) 134, 529,
Մաղավուզ 356
Մասիսի շրջան 530
Մարմարաշեն 134, 529,
Մարդակերտ 510
Մարտունաշեն 25, 240, 323-325, 327, 328, 329, 331, 335, 370, 505-508,
Մեծ Բրիտանիա 33, 355, 390, 404, 514,
Մեծ Շեն 240,
Մեղրի 48, 134, 323, 433, 529,
Մերձբալթիկա, Մերձբալթյան հանրապետություններ 8, 10, 47, 65-67, 69, 103, 111, 112, 199, 221-223, 228, 244-246, 248-250, 303, 306, 319, 348, 354, 367, 379, 391-393, 409, 412, 423, 427, 462, 466, 468, 497, 515,
Մինսկ 467,
Մոլդովա 8, 36, 191, 199, 245, 248, 259, 304, 367, 368, 371, 391, 409, 412, 515,

Ն
Նախիջեւան 21, 22, 32, 128, 164, 177, 433,
Նախիջեւանիկ 356,
Նաիրիի շրջան 134, 529,
Նոյեմբերյան 134, 164, 330, 512, 529,
Նովո-Օգարյովո 322, 324, 370, 371, 372, 466,
Նուբարաշեն 129, 500,

Շ
Շահումյանի շրջան (ԼՂ) 25, 26, 30, 42-44, 58, 164, 223, 230, 231, 241, 320, 321, 323-328, 351, 352, 362, 363, 371, 380, 415, 418, 505-507, 520, 522, 523, 524,
Շամշադին 48, 49, 530
Շվեդիա 36
Շվեյցարիա 228, 310,
Շուշի 25, 41, 240, 331,
Շուռնուխ 50, 332,

Ո
Ոսկեպար 330, 333, 337, 508,

Զ
Զայքենդ (տե՛ս Գետաշեն)
Զարդախլու 233,
Զափար 356,
Չինաստան 33, 497,

Պ
Պառավաքար 332,
Պարսից ծոց 240, 250,
Պրահա 34,

Ջ
Ջերմուկ 134, 529,

Ռ
Ռիգա 46, 47,
Ռումինիա 468, 497,
Ռուսաստան 8, 66, 69, 96, 114, 140, 222, 223, 228-230, 232, 238, 244, 246, 248-251, 259, 169, 272, 301, 305, 306, 320, 337, 348, 354, 355, 371, 385, 392-394, 396-400, 402-404, 408, 412, 414-418, 429, 444, 467, 468, 471, 475, 478, 513, 516, 520,

Ս
Սանկտ Պետերբուրգ (տե՛ս Լենինգրադ)
Սեւանա լիճ 309
Սեւ ծով 66
Սեւանի խճուղի 501
Սիսիանի շրջան 134, 529
Սմոլենսկ 413

Սպանդարյանի շրջան (Երեւան) 134, 529
Սովետաշեն 500
Ստեփանակերտ 25, 38, 40, 42, 45, 51, 79, 127, 146, 233, 240, 241, 320, 333, 357, 358, 360, 415, 499, 518, 519, 524, 529
Ստեփանավան 134
Սումգայիթ 35, 110, 114, 328, 505

Վ
Վայքի շրջան 48, 433
Վարդենիս 138
Վենետո (մարզ) 225
Վերիշեն 351, 353, 355, 401
Վերին Աղջաքենդ 353
Վիլնյուս 221, 249
Վրաստան 36, 37, 112, 191, 199, 220, 221, 227, 228, 244-246, 248, 259, 304, 321, 322, 348, 367, 368, 371, 409, 412, 447, 468, 515

Տ
Տաշքենդ 231
Տաջիկստան 191, 248, 260, 303, 396
Տավուշ 332, 512
Տեղ 332

ՈՒ
Ուզբեկստան 248, 396
Ուկրաինա 8, 244, 248, 251, 259, 337, 354, 371, 391, 396, 408, 467, 468, 478, 509, 513

Փ
Փարիզ 82, 126, 338, 404

Քիշինյով 368,
Քսանվեց կոմիսարների շրջան (Երեւան), 134, 529

Օ
Օսմանյան կայսրություն (տե՛ս Թուրքիա)

Ֆ
Ֆինլանդիա 66,
«Ֆորոս» (հանգստյան տուն) 395,
Ֆրանսիա 33, 36, 81, 225, 310, 338, 353, 390, 514

RESTORATION OF ARMENIA'S INDEPENDENCE 1990-1991

At the end of 1989, having considered the possibility of resolving the Nagorno-Karabagh issue in the USSR utterly exhausted, the Armenian democratic movement reorganized the issues on its political agenda. Gaining independence became a priority. To achieve this goal, it was necessary to change the government and to replace the Soviet system with a democratic system.

This political agenda of the movement's political organization, the Armenian National Movement (ANM), met the opposition of the various forces interested in preserving the USSR. Unlike in other Soviet republics, the forces fighting against independence in Armenia did not have their ideological basis in communism, which had already been discredited. Their ideology was based on the so-called "Hay Dat" (Armenian Cause)/irredentism, having the claim over the historical Armenian lands as a priority.

Having overcome the various internal obstacles placed by the authorities and their allied counter- independence forces, the ANM gained significant advantage over the Communist party in the May 20 parliamentary election. On May 27, a bloody provocation was organized with the involvement of the Soviet army, in order to prevent the Movement's final victory in the next electoral phases. 26 individuals were killed and 60 injured as a result.

Nevertheless, the Armenian National Movement managed to receive a relative majority in the parliament in the next phases of elections. On August 4, the democratic movement's candidate, Levon Ter-Petrosyan, was elected as President of the Supreme Soviet.

On August 23, following the law on secession from the USSR, the new government adopted the Declaration of Independence on the basis of the ANM Program. Acting as a de-facto independent state, the new

government took decisive steps to neutralize the last provocations of the previous regime. In particular, it disbanded the illegal military structures controlled by the previous government and ensured proper governability in the Republic.

It got rid of the Soviet practice of party control and influence over the central and local governments, and assumed the powers and functions provided to it by the Constitution on all levels.

Given the new realities, the qualitative changes in the situation and the political developments, the government adopted a policy of avoiding confrontation and resolving the Nagorno-Karabagh conflict through reaching agreement and mutual compromise. The international reaction was widely positive. This policy of conflict resolution based on compromise was placed at the foundation of Armenia's foreign policy and was followed until 1998.

Based on the Declaration of Independence, some important changes were made in the Constitution to provide opportunities for Armenia to act as an independent state. The relationships with Moscow moved gradually towards more horizontal partnership. First relations with other states were established. Foundations of the army were laid.

Radical reforms were initiated to move from the Soviet system to a democratic one. Laws were adopted and enforced to establish the key foundations of a democracy freedom of speech, press, conscience and religion, political freedoms and rights. Laws were adopted to allow all types of ownership and the first steps towards privatization of the state property were taken. Armenia was the first country in the post-Soviet space to privatize land and to carry out the most radical agrarian reform. Free market began to develop.

The government succeeded in overcoming the resistance of forces resisting independence, which advocated joining a new union agreement. Armenia was the only republic that moved towards independence through a flawlessly legal process, taking only steps that were envisioned in the relevant Soviet legislation. The next step after adopting the Declaration of Independence was Armenia's refusal to take part in the

referendum organized by the central government in March 1991 in a bid to preserve the USSR. Instead, it scheduled a referendum on independence on September 21, 1991.

In late April 1991, Moscow started the so-called "Koltso" (Ring) operation in Nagorno-Karabagh and the border regions of Armenia, in an attempt to derail Armenia's march toward independence. Armenia managed to withstand this punitive action thanks to the voluntary self-defense units, as well as, and perhaps more importantly, the government's dexterous diplomacy. A referendum on independence took place on September 21, which practically unanimously confirmed the entire population's strong determination to have an independent state.

After the failed coup on August 19-21, 1991 in Moscow, Armenia retained its role as a pioneer of democratic change. Levon Ter-Petrosyan, President of the Supreme Soviet, played the most instrumental and decisive personal role in preventing attempts to revive the central government. He actively participated in the process of managing the collapse of the USSR into a structured and safe dissolution. He was recognized both in the USSR and internationally as one of the architects of the safe dissolution of the USSR.

Levon Ter-Petrosyan won in the presidential election on October 16, with 83.4% of the votes. The results of both the referendum on independence and the presidential election demosntrated that there was an unwavering trust towards the Armenian National Movement and its leader's programs and activities. This was the only case among the Soviet republics and Eastern European countries when a democratic movement retained its undisputed authority and trust after being in power for more than a year.

This political success was the result of the fact that the Armenian democratic movement subscribed to the principles of political realism and assiduously fought faux patriotism and phony nationalism that had been popular in Armenia's political discourse for decades.

At the end of 1991, the collapse of the USSR through its smooth dissolution reached its logical conclusion thanks to the efforts of

democratic forces. The Armenian democratic movement was the most instrumental of these forces, and one of the first in terms of its role and reputation. Armenia was also an undeniable leader in the radical democratic reforms in the sociopolitical life and the economy. This was the background with which Armenia became a full-fledged member of the international community and was recognized as an "island of democracy" in the region.

ВОССТАНОВЛЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ 1990-1991

В конце 1989 года Армянское демократическое движение, посчитав полностью исчерпанными возможности решения вопроса Нагорного Карабаха в рамках СССР, пересмотрело очередность приоритетов своей политической повестки. Первоочередной задачей стало обретение независимости, для чего было необходимо осуществить смену власти и вместо советской создать демократическую систему.

Против этого политического курса, избранного политической структурой движения Армянским Общенациональным Движением (АОД) выступили различные силы, заинтересованные в сохранении Советского Союза. В отличие от других советских республик в Армении идеологической основой противостоящих курсу на независимость сил являлась не дискредитировавшая себя идеология коммунизма, а иделогия так называемого «Армянского вопроса» (ирредентизма), ставящая в качестве первостепенной задачи требования по отношению к историческим армянским землям.

Преодолев ряд внутренних препятствий, чинимых властями и поддерживающих их силами из числа противников независимости, Армянское Общенациональное Движение получило значительное преимущество перед Коммунистической партией на очередных парламентских выборах, состоявшихся 20 мая 1990 года. С целью помешать его окончательной победе на последующих турах выборов, 27 мая была устроена кровавая провокация с привлечением сил советской армии, в ходе которой 26 граждан были убиты и 60 ранены.

Тем не менее в следующих турах АОД удалось получить относительное большинство в Парламенте, и 4-го августа выдвинутый

Демократическим движением Левон Тер-Петросян был избран Председателем Верховного Совета Республики.

Новый парламент, руководствуясь соответствующим законом о выходе из СССР, 23 августа принял Декларацию независимости, базирующуюся на Программе АОД. Действуя как де-факто независимое государство, новые власти решительными действиями нейтрализовали последние провокации предыдущего режима, в частности, расформировали действующие под его контролем незаконные вооруженные формирования и полностью обеспечили управляемость процессами в республике.

Была упразднена советская практика партийного контроля и воздействия как на республиканские власти, так и органы местного самоуправления; новые структуры власти на всех уровнях приняли на себя права и полномочия, закрепленные за ними Конституцией.

Принимая во внимание новые реалии, качественные изменения ситуации и развитие политических процессов, в вопросе Нагорного Карабаха был принят политический курс на избежание конфронтации и урегулирования проблемы путем достижения согласия и взаимных уступок, что получило широкий позитивный отклик в международных кругах. Этот политический курс, нацеленный на мирное урегулирование конфликта на базе компромисса лег в основу внешней политики Армении и последовательно осуществлялся вплоть до 1998 года.

В соответсвиии с Декларацией независмости в Конституцию был внесен ряд важных изменений, обеспечивающих Армении возможности действовать в качестве независимого государства. Взаимоотношения с Москвой стали постепенно переходить плоскость горизонтальных, партнерских связей. Были установлены первые межгосударственные отношения. Заложены основы создания армии.

Начали реализовываться коренные реформы по переходу от советской системы к демократической. Были законодательно закреплены и практически обеспечены важные основы укрепления демократии: права и свободы слова, прессы, совести, вероисповедания, а

также политической деятельности. В законодательном порядке были разрешены все виды собственности, предприняты первые шаги по приватизации государственной собственности. Армения первая на постсоветском пространстве приватизировала землю, осуществив тем самым самую радикальную аграрную реформу. Начал формироваться свободный рынок.

Властям удалось преодолеть сопротивление сил, противостояших идее независимости сторонников присоединения к новому союзному договору. Среди республик, избравших путь к независимости, Армения оказалась единственной кто осуществил этот процесс юридически неуязвимым путем предпринимая действия, предусмотренные исключительно соответствующим законодательством СССР. Следующим шагом, последовавшим за принятием Декларации независимости стало неучастие Армении в инициированном центральными властями в марте 1991 года референдуме по сохранению СССР; Армения назначила свой собственный референдум по вопросу независимости на 21 сентября того же года.

С целью срыва процесса достижения независмости Армении с конца апреля 1991 года Москва приступила к осуществлению так называемой операции «Кольцо» военных действий в Нагорном Карабахе и приграничных районах Армении. Сопротивлением добровольческих отрядов самообороны с одной стороны и, в большей степени, благодаря дипломатическим усилиям властей Армении, удалось успешно противостоять этим карательным действиям. 21-го сентября 1991 года прошел референдум о независимости который практически единогласно подтвердил твердое решение всего населения Армении иметь независимое государство.

После провала попытки государственного переворота в Москве 19-21 августа 1991 года Армения, как и прежде, продолжала играть ведущую роль в демократических процессах, оставаясь на передовых позициях демократических преобразований. Председатель Верховного Совета Левон Тер-Петросян лично принимал самое деятельное и решительное участие в предотвращении попыток центральных

властей реанимировать режим, активно участвовал в конструктивных процессах, направленных на обеспечение регулируемого и не представляющего угроз распада СССР. В таковом качестве Л.Тер-Петросян снискал признание как один из архитекторов безопасного распада СССР не только среди демократических сил Советского Союза, но и на международной арене

16-го октября состоялись выборы Президента, в которых с 83,4% голосов одержал победу Левон Тер-Петросян. Результаты как референдума о независимости, так и президентских выборов показали, что доверие к программам и деятельности Армянского Общенационального Движения и его лидера остается неизменным. Это явилось беспрецедентным как для республик Советского Союза, так и Восточной Европы случаем, когда победившая демократическая сила после более чем годичного пребывания у власти, продолжала сохранять бесспорный авторитет в обществе и безоговорочное доверие граждан.

Достигнутые политические результаты являлись также следствием того, что Армянское демократическое движение, руководствуясь принципом политики реализма, последовательными действиями смогло вытеснить из общественного сознания псевдо патриотические представления и ложный национализм, десятилетиями широко насаждаемые в армянской действительности.

В конце 1991 года благодаря борьбе демократических сил процесс распада СССР по безопасному сценарию дошел до своего логического конца. Армянское демократическое движение являлось наиболее активным среди этих сил и своим вкладом и авторитетом обеспечило себе место в ряду лидеров. Армения бесспорно занимала первые места и в плане осуществления радикальных демократических реформ во внутренней общественно-политической и экономической жизни страны. Именно на этом основании Армения стала полноправным, обладающим высоким рейтингом членом международного сообщества, заслуженно считаясь «островком демократии» в регионе.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ 5

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 16

Առաջին բաժին ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ, ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՎԱՐՏԸ 19

1. ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՀԱԳՆԱՑՈՂ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ 21

ա) Խորհրդա-իրանական պետական սահմանի ավերումը 21

բ) Պայքարն օրենսդրական դաշտում 23

գ) Իրավիճակի սրումը Լեռնային Ղարաբաղում 25

դ) Բաքվի հայ բնակչության ջարդերը եւ բռնագաղթը 27

ե) Հունվարյան իրադարձությունների արձագանքները 33

զ) Ճնշումների հետագա սաստկացումը, Ղարաբաղն արտակարգ դրության պայմաններում 38

է) Գետաշենի ենթաշրջանի գյուղերի դատարկումը 43

ը) Քաղաքական երկխոսության նախաձեռնություններ 45

թ) Կենտրոնի սադրանքները Հայաստանում 48

ժ) Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 3-րդ նստաշրջանում ... 50

ժա) Պաշտպանական խնդիրները Շարժման օրակարգում, հանրապետության ինքնիշխանության խորացումը 52

ժբ) «Նաիրիտի» խնդրի հետագա ընթացքը 61

2. ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԼԸ, ՀԱՅԿԱԿԱՆ «ԻՆՏԵՐՖՐՈՆՏԸ» 65

ա) Ընդհանուր իրավիճակը եւ զարգացումները ԽՍՀՄ-ում 65

բ) Շարժման գործողությունները ճգնաժամի խորացման պայմաններում 72

գ) Իրավիճակն իշխանության եւ Կոմկուսի ներսում 82

դ) Կոմկուսի ղեկավարի փոփոխությունը 85

ե) «Ազգային միասնությունը» որպես խայծ՝ ընտրությունները խափանելու համար 87

զ) Հանրապետության նախագահի պաշտոնի հիմնումը 90

է) Կոմկուսի նախընտրական քարոզչությունը եւ միջոցառումները 92

ը) Կոմկուսի դաշնակից նոմենկլատուրային մտավորականությունը 95

թ) Այլազան կազմակերպությունների եւ ուժերի աջակցությունը Կոմկուսին 100
ժ) Սփյուռքի կուսակցությունները, Կոմկուսին աջակցելու նրանց շարժառիթները 102
ժա) Հայկական «ինտերֆրոնտի» յուրահատկությունները 111
ժբ) ՀՀՇ-ի նախընտրական պայքարը եւ «Հայք» թերթը 113
ժգ) ՀՀՇ-ի նախընտրական ծրագիրը 115
ժդ) ՀՀՇ-ի կողմից պաշտպանվող պատգամավորության թեկնածուները ... 118
ժե) Մայիսի 20-ի ընտրությունները, արդյունքները, ընտրակեղծիքներ 119
ժզ) Սադրանքների սաստկացումը, մայիսի 27-ի պատժիչ գործողությունը .. 123
ժէ) Ջինված կազմավորումների համախմբման գործը 131

3. ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ 137

ա) Ընտրության հաջորդ փուլերը, նոր խոչընդոտների հաղթահարումը 137
բ) Նոր իշխանության առաջին՝ դժվարին, բայց վստահ քայլերը 141
գ) Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը, իշխանության հարցի վերջնական լուծումը 147
դ) Հայաստանի անկախության մասին հռչակագիրը 152
ե) Ներքաղաքական իրավիճակի կայունացման վճռական քայլերը, ՀԱԲ-ի լուծարումը 159
զ) Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի («Ղարաբաղ» կոմիտեի) պատմական դերը 169
է) Շարժման չորրորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները 177

Երկրորդ բաժին ԱՆԿԱԽ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿԵԶԸ 185

1. ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ 187

ա) Նոր իշխանության ստացած տխուր ժառանգությունը եւ ծանրագույն մարտահրավերները 187
բ) Կառավարության ձեւավորումը ու առաջին խնդիրները 192
գ) Տեղական իշխանության մարմինների ընտրությունները 194
դ) Բանակի կազմավորման սկիզբը, ներքաղաքական իրավիճակը եւ զարգացումները 196
ե) Ինքնիշխանության ամրապնդման օրենսդրական եւ գործնական քայլերը 201

զ) Տնտեսական բարեփոխումների սկիզբը, հողի սեփականաշնորհումը, տնտեսության վերակենդանացմանն ուղղված քայլեր 206

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶ 215

ա) Կենտրոնի հետ հարաբերությունները, Հայաստանը՝ ԽՍՀՄ անվտանգ կազմաքանդման ակտիվ դերակատար 215
բ) Այլ միջպետական հարաբերություններ, Հայաստանի ակտիվ դերակատարությունը ԽՍՀՄ ժողովրդավարական գործընթացներում եւ արժանապատիվ մուտքը միջազգային ասպարեզ 220
գ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ որպես ճնշման միջոց Հայաստանի վրա 228
դ) Լեռնային Ղարաբաղի հարցում առճակատումից դեպի փոխզիջումներով համաձայնության եւ խաղաղության հասնելու քաղաքական ուղեգիծը 232
ե) Կայսրության պահպանման համառ ջանքերը եւ Հայաստանը 244

3. ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ 253

ա) Ժողովրդավարության հաստատման առաջին արմատական վերափոխումը, բազմակուսակցական համակարգի հաստատումը 253
բ) Հայոց համազգային շարժումը՝ որպես իշխանություն, ՀՀՇ 2-րդ համագումարը 257
գ) Ընդդիմության առաջին պատկերը, դրա գաղափարախոսական, քաղաքական, սոցիալական հիմքերը 266
դ) Կոմկուսը խորհրդարանական ընդդիմության դերում 271
ե) Կոմկուսի գույքի ազգայնացումը 282
զ) ՀՅԴ «բացահայտման» եւ գործունեության գնահատականը քաղաքական հարթության վրա 284
է) Ռամկավար ազատական եւ Հնչակյան կուսակցություններ 290
ը) «Արմատականները» եւ Հայաստանի ներքաղաքական կայունության խնդիրը 294

4. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՒ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 299

ա) Անկախության հանրաքվեի մասին որոշման կայացման ընթացքը 299
բ) Անկախության գործընթացի դեմ քաղաքական արգելափակոց դնելու փորձ 306
գ) Սոցիալական իրավիճակի լարվածության աճին ուղղված քայլեր 309

դ) Երկրի ներքաղաքական կայունության խաթարմանն ուղղված այլ փորձեր ... 311
ե) Հայաստանի դեմ պատժամիջոցների նախապատրաստումը, իրավիճակը Լեռնային Ղարաբաղում ... 316
զ) Անկախության գործընթացի դեմ Մոսկվայի սանձազերծած պատերազմը. «Կոլցո» գործողությունը ... 322
է) Պատերազմը Հայաստանի սահմանամերձ շրջաններում ... 331
ը) Ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության օժանդակությունը ... 336
թ) Հանրապետության քաղաքական իրավիճակի եւ նրա կարգավորման մեխանիզմների քննարկումները Գերագույն խորհրդում ... 340
ժ) Կառավարման արդյունավետությանն ուղղված քայլեր ... 344
ժա) Հանրապետության Նախագահի պաշտոնի հիմնումը ... 348
ժբ) Ռազմական ճնշումների նոր փուլը Շահումյանի շրջանում, «Կոլցո» գործողության քաղաքական նպատակի ձախողումը ... 349
ժգ) Ղարաբաղի հարցում քաղաքական ուղեգծի ամրապնդումը: Հայաստանը արկածախնդրության մեջ ներքաշելու նոր փորձերի ձախողումը ... 357

5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՒՆ ԵՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ... 367

ա) ՀՀՇ-ն որպես իշխող քաղաքական ուժ ... 367
բ) Կոմկուս ... 372
գ) ՀՅԴ ... 374
դ) «Արմատականներ» ... 379
զ) ԱԺՄ ... 380

6. ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԵՒ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁ ... 389

ա) Օգոստոսի 18-ի պետական հեղաշրջումը Մոսկվայում ... 389
բ) Հայաստանի դիրքորոշումը ԳԿՉՊ-ի օրերին ... 399
գ) Կենտրոնական իշխանության փաստական վերացումը ... 402
դ) Ժելեզնովոդսկի հանդիպումը, Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնացման սկիզբը ... 413

7. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ ԵՒ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ... 419

ա) Իրավիճակը եւ հանրաքվեի նախապատրաստական միջոցառումները ... 419

բ) Վերջին խոչընդոտների հաղթահարումը, Անկախության հանրաքվեի իրականացումը ... 425
գ) Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները ... 436
ե) ՀՀՇ-ի իշխանության ընդդիմության յուրահատկությունները ... 448
զ) Պետական շինարարություն եւ միջազգային ճանաչմանն ուղղված նոր քայլեր ... 456
է) ԽՍՀՄ-ի վախճանը. Հայաստանը Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) եւ միջազգային հանրության լիիրավ անդամ ... 465
ը) Շարժման հինգերորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները ... 469

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ... 481

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Իշխանափոխության ընթացքի վավերագրեր ... 483
ՀԱՎԵԼՎԱԾ 2. «Կոլցո» ռազմական գործողություն եւ «ԳԿՉՊ» ... 505
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Լեռնային Ղարաբաղի հետ կապված փաստաթղթեր ... 517
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Այլ փաստաթղթեր ... 525

ՑԱՆԿԵՐ ... 539

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ... 541
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ... 545
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ... 554
RESTORATION OF ARMENIA'S INDEPENDENCE, 1990-1991 ... 559
ВОССТАНОВЛЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ 1990-1991гг. ... 563

Աշոտ Բագրատի Սարգսյան

Ծնվել է 1951թ. հունվարի 16-ին Հայկական ԽՍՀ Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղում:

Հայագետ-պատմաբան, քաղաքական գործիչ: Պատմական գիտությունների թեկնածու (1984թ.): Մատենադարանի (Հայ հին ձեռագրերի ուսումնասիրման գիտահետազոտական ինստիտուտ) աշխատակից (1976-ից), ավագ գիտաշխատող:

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի (1990-1995թթ.) եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (1995-1999թթ.) պատգամավոր: ՀՀ ԳԽ-ի Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքային խմբի կազմում մասնակցել է Սահմանադրության մշակման աշխատանքներին:

Հայոց Համազգային Շարժում (2013թ-ից՝ վերանվանված Հայ Ազգային Կոնգրես) կուսակցության հիմնադիր անդամ, 1995-ից ի վեր նույն կուսակցության ղեկավար մարմնի՝ Վարչության անդամ:

Հիմնադիր անդամ՝ «Արմատ» ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն հ/կ-ի:

Աշխատել է ՀՀ Առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի արխիվում, Հայաստանի Կառավարման ակադեմիայում դասավանդել է «Հայ քաղաքական մտքի պատմություն» առարկան: 2007թ. դեկտեմբերին ընդգրկվել է նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի կազմում:

1973 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1973-1976թթ. զբաղվել է մանկավարժությամբ: 1976թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան: 1984 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզը (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Գագիկ Սարգսյան):

Գիտական երկու աշխատությունները՝ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» եւ Մովսես Խորենացին», Երեւան, 1991,

եւ՝ Մովսէս խորենացի, Պատմութիւն Հայոց», քննական բնագիր եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան 1991, հրապարակվել են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյա հոբելյանի առթիվ:

Գիտական հետազոտությունների ուղղությունները.

- ✓ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրական եւ այլ հետքերը հետագա շրջանի հայ մատենագրության մեջ:
- ✓ Հին շրջանի հայ քաղաքական մտքի պատմություն:
- ✓ Հայաստանի նորագույն պատմություն՝ 1988 թվականից մինչեւ մեր օրերը:

Այս ուղղություններով մեկուկես տասնյակ գիտական հոդվածներից բացի, հրապարակել է եւս երկու գիրք. «Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998թթ.)» Երեւան, 2015; «Ղարաբաղյան շարժման պատմություն 1988-1989», Երեւան, Անտարես, 2018:

Կազմել կամ խմբագրել է շուրջ մեկ տասնյակ գրքեր:

Տպագիր եւ էլեկտրոնային մամուլում, 1990 թվականից ի վեր, հրապարակել է շուրջ 800 քաղաքական, վերլուծական, հրապարակախոսական հոդված:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1990–1991

Խմբագիր՝ Արման Մուսինյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ խմբագիր՝ Սեդա Մեսրոպյան
Էջադրումը եւ կազմը՝ «Անտարես» մեդիա հոլդինգի

«Անտարես» հրատարակչատուն
Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am